Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*http://www.armin.am

*Էլ. փոստ՝*info@armin.am



A PUBLICATION OF THE ARMENIAN CATHOLICOSATE OF CILICIA
1700-th ANNIVERSARY OF THE PROCLAMATION OF CHRISTIANITY IN ARMENIA

3

# SEAL OF FAITH

## OF THE HOLY UNIVERSAL CHURCH

FROM THE CONFESSIONS OF
OUR SPIRIT-FILLED ORTHODOX AND HOLY FATHERS

COMPILED
DURING THE PONTIFICATE OF

**CATHOLICOS KOMITAS (613-627)**

EDITOR

BISHOP KARAPET TER-MKERTCHIAN

(PHOTOSTATIC REPRINT)

ANTELIAS - LEBANON
1998

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ
1700-ԱՄԵԱԿԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

3

# ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՑՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԵԿԻՐ ՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ
ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ

ՑԱՒՈՒՐՍ

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ (613–627)

ՀԱՄԱՀԱՒԱՔԵԱԼ

Հրատարակութիւն

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՏԷՐ – ՄԿՐՏՉԵԱՆԻ

(ԼՈՒՍԱՏԻՊ ՎԵՐՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ)

ԱՆԹԻԼԻԱՍ – ԼԻԲԱՆԱՆ
1998

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ.Տ. ԱՐԱՄԱՅ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներկայ գործը՝ ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ (Seal of Faith, Sceau de foi) հաւաքածոյ մըն է հայ, յոյն եւ ասորի եկեղեցական հայրերու գրութեանց (florilegium)։

Հայագէտներ այս գործը ընդհանրապէս կը վերագրեն Կոմիտաս Կաթողիկոսի (611-620)։ Եթէ նոյնիսկ Կոմիտաս Կաթողիկոսի կողմէ չէ կազմուած այս հաւաքածոն, սակայն իր ժամանակ սկսած է ան պատրաստուիլ, եւ շատ հաւանաբար իր թելադրութեամբ ու անմիջական հսկողութեամբ, եւ աւելի ուշ ամբողջացած, քանի հոն կան այնպիսի գրութիւններ (օրինակ՝ Մայրավանեցի եւ Ստեփանոս Սիւնեցիի թարգմանած կիւրեղ Աղեքսանդրացիի գործերէն), որոնք Կոմիտաս Կաթողիկոսին յաջորդող ժամանակաշրջանին կը պատկանին։

Աստուածաբանական իմաստով հանք մըն է այս գործը, ուր քրիստոսաբանական խնդիրները ու անոնց առընչուած աստուածաբանական մտածողութիւնները, դաւանաբանական ուսուցումները եւ դաւանական կեցուածքները այնպիսի յստակութեամբ ու դասաւորումով պարզուած են, որոնք ամբողջական պատկերը կու տան այդ դարերու քրիստոնէական եկեղեցին յուզող դաւանական վէճերուն։ Եւ աւելին, հայ եկեղեցւոյ հակա-քաղկեդոնական կեցուածքին ամենէն զօրեղ արտայայտութիւնները եւ լուրջ հիմնաւորումները կը գտնենք այս հաւաքածոյին մէջ։

ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ առաջին անգամ հրատարակուեցաւ Կարապետ Եպսկ. Տէր-Մկրտչեանի կողմէ, Սուրբ Էջմիածնի մէջ, 1914-ին։ Կարապետ Եպիսկոպոս ինք գտած է ներկայ ժողովածուին ձեռագիրը 1911-ին Ատրպատականի (Պարսկաստան) Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին մէջ։ Նոյն գործը վերահրատարակուեցաւ 1974-ին Լուվէնի (Պելճիքա) մէջ։

Անհրաժեշտ չեմ տեսներ մեր եկեղեցական դասուն ու հայագէտներուն ներկայացնել այս հատորը, պարզելով անոր իւրայատուկ կարեւորութիւնը հայ եկեղեցւոյ ընդհանրապէս աստուածաբանական մտածողութեան ու մասնաւորաբար քրիստոսաբանա-

կան ուսուցումներուն ամբողջական ու ճշգրիտ հասկացութեան իմաստով: Ներկայ դարու մեր մեծագոյն բանասէրներէն ու աստուածաբաններէն՝ Կարապետ Եպսկ. Տէր-Մկրտչեանը գիտական լուրջ մօտեցումով եւ ընդարձակ ներածականով մը ինք արդէն իսկ կատարած է այդ աշխատանքը:

Արդարեւ, բանասէր Սրբազանը խօսելով ներկայ հաւաքածոյին մասին, կ՚ըսէ, թէ այս աշխատանքը կատարուած է «որպէսզի հարկաւոր դէպքում իբրեւ վկայութիւն բերուին՝ սուրբ հաւատի պաշտպանութեան եւ հերձուածողների մոլորութիւնները հերքելու համար» (էջ XI): Ու այսօր մեր ժողովուրդը ու յատկապէս մեր եկեղեցականութիւնը որքա՜ն կարիքը ունի իր հայրերու աստուածաբանական ուսուցումներն ու դաւանական կեցուածքները լաւ ճանչնալու, որպէսզի կարենայ նախ ինք ըմբռնել ու ներկայացնել իր պապերուն արիւնով իսկ պաշտպանուած իր ուղղափառ հաւատքը եւ ապա կարենայ ինքզինք պաշտպանել նոր օրերու հերետիկոսական շարժումներուն դէմ:

ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ է կոչուած այս ժողովածուն, որովհետեւ հոն գտնուող վկայութիւնները կնքուած են մէկ, ընդհանրական ու առաքելական եկեղեցւոյ ուղղափառ հաւատքով:

Հետեւաբար, նկատի ունենալով այս հատորին եզակի կարեւորութիւնը, ուզեցինք զայն հրատարակել 1700-ամեակին առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաստատած հրատարակչական շարքին մէջ:

Այս առիթով Մեր յատուկ գնահատանքն ու շնորհակալութիւնը կ՚ուզենք յայտնել Աթէնքի (Յունաստան) մէջ երկար տարիներու թեմական ու ազգային ծառայութեան վաստակ ունեցող ու մեր Ս. Աթոռի ջերմ բարեկամներէն Տէր եւ Տիկին Վարուժան եւ Անժէլ Գնունիին, որոնք սիրայօժար կերպով ստանձնեցին այս հատորին մեկենասութիւնը:

Թող նման արժէքաւոր գործերու հրատարակութեամբ առաւե՛լ ծաղկի մեր եկեղեցին իր կեանքով ու առաքելութեամբ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

***20 Մարտ, 1998***
***Անթիլիաս, Լիբանան***

*Սոյն հատորը կը հրատարակուի*

*Աթէնաբնակ* **ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ**

**ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ ԱՆԺԷԼ ԳՆՈՒՆԻԻ**

*ազնիւ մեկենասութեամբ*

# ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ**

*ՅՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ Ս. ՀՈԳԵԿԻՐ ՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ*

*ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ*

*ՅԱՒՈՒՐՍ*

## ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

*ՀԱՄԱՀԱՒԱՔԵԱԼ*

Հրատարակութիւն
**ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ**

Ծախիւք
*ՅՈՎՀԱՆՆՈՒ ՇԱՊՈՇՆԻԿԵԱՆՑ*
ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆՑՒՈՑ

*Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*
*Տպարան. Մայր Աթոռոյ*
*1914*

# ՆԱԽԱԲԱՆ

Այն ձեռագիրը, որից հրատարակուում է ներկայ «Կնիք հաւատոյ» ժողովածուն, գտել եմ Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում 1911 թ. նոյեմբեր 16-ին։ Ձեռագրի արտաքին կազմութեան, բովանդակութեան և գրական արժէքի մասին շտապեցի համառօտ տեղեկութիւն հաղորդել «Մշակ» լրագրին ուղղած մի թղթակցութեամբ, որ տպուեց նոյն թուականի 14 դեկտեմբեր № 255-ում։ Իմ ակնարկը, թէ ձեռագրի վրայի 210 համարը (որի հետ մակագրուած է նաև «Քարոզք և վարդապետութիւնք» սխալ վերնագիրը), մի՛ գուցէ Ս. Տէր Աւետիսեանի նշանակածը լինի, որ տարիներ առաջ ցուցակագրել էր Ս. Նախավկայի վանքի ձեռագիրները, առիթ եղաւ նորան «Մշակ»-ի 21 դեկտ. № 281-ի մէջ տպուած նամակով պարզելու, որ ձեռագրի այդ համարը իւր դրածը չէ և որ ինքն եւս 125 ձեռագիր միայն գտել է վանքում ու նոցա մասին մանրամասն զեկուցում տուել Մոսկուայի Կայս. Հնագիտական ընկերութեան Կովկասի ճիւղում, 1910 թ. մարտ 6-ին (տես. Кавказъ լրագիր № 54, 1910 г.)։ Սակայն նա եւս սխալուում էր՝ ենթադրելով, թէ յիշեալ համարը կարող էր հանգուցեալ Մեսրոպ արքեպ. Սմբատեանը դրած լինել. որովհետև Մեսրոպ արքեպ.-ի ծանօթ գրով մի ուրիշ թուղթ կայ կպցրած (յետոյ միջից պատռած) կազմի առաջին երեսի վրայ, մինչդեռ համարը նշանակած է տարբեր, հաւանականաբար ուրեմն աւելի հին՝ գրով ձեռագրի ետևի կողին կպցրած թղթի վրայ։

Իմ առաջնորդական զբաղումները Ատրպատականի թեմում թոյլ չէին տալիս անմիջապէս հետամուտ լինել հրատարակելու այս ժողովածուն. բայց Էրլանգէնի հա-

մալսարանի ուսուցչապետ Հ. Իորդանի խնդրանօք անցեալ 1912 թ.ի ամրանը արտագրեցի նորա միջից ս. Իրենէոսի անունը կրող 7 հատուածները և սոցա առաջին անգամ լոյս տեսնող 3-ի գերմաներէն թարգմանութեան հետ ուղարկեցի նորան։ Այդ հատուածները, ս. Իրենէոսի անունով մինչև այժմ յայտնի հայերէն ուրիշ հատուածների և բոլորի գերմաներէն թարգմանութեան հետ, մանրակրկիտ համեմատութիւններով և լուսաբանութիւններով՝ հրատարակուեցան մի քանի ամիս առաջ, հետևեալ վերնագրի ներքոյ. Armenische Irenäusfragmente, zum Teil erstmalig herausgegeben und untersucht von D. Hermann Iordan, Professor a. d. Univ. Erlangen (Texte und Untersuchungen, herausg. von Harnack und Schmidt. XXXVI, 3). Leipzig, 1913. Այստեղ, իմ հաղորդածների հիման վրայ, համառօտ տեղեկութիւն է տուած նաև «Կնիք հաւատոյ» ժողովածուի ամբողջութեան մասին՝ ինչ ինչ խորհրդածութիւններով, և յառաջ է բերած նորա բովանդակութիւնը կազմող հատուածների ցանկը (S. 108—120)։

Անցեալ 1912 թ.ի օգոստոսի վերջերին հրաժարելով առաջնորդական պաշտօնից՝ ես սկսեցի լրջօրէն զբաղուել ժողովածուի հրատարակութեամբ, և երբ մանաւանդ մի ամիս յետոյ, միւռոնօրհնութեան առթիւ ս. Էջմիածին ուխտի եկած, Մեծ. պ. Յ. Տապոշնիկեան բարի գտնուեց յանձն առնելու տպագրութեան ծախքը, կենտրոնացրի աշխատութիւնս այդ հրատարակութեան վրայ ու փութացի տպարան յանձնել արտագրածս։

Ժողովածուի ձեռագիրը թուղթ է, ութածալ, կաշեպատ տախտակի կազմով, սկզբում 2 թերթից մագաղաթէ պահպանակ՝ վրացերէն հին խուցուրի գրով, վերջում մի թերթ ցեցակեր մագաղաթի պահպանակ՝ հայերէն միջին երկաթագրով, որի խիստ եղծուած բովանդակութիւնն է. Ա. Պետ. Գ, 7 «կանանց, իբրև ժառանգակցաց . . . (16) յամաւթ լիցին, որք բամ. . .»։ Ինչպէս եր.



237 ծանօթութեամբ ակնարկած է՝ ձեռագիրը երկու տարբեր մասերից է բաղկացած, տարբեր ժամանակների գործ և տարբեր թուղթ, տարբեր գրով. p. 142 r. սկսուող երկրորդ մասը կարկատան է առաջին մասի։ Թէ երբ է տեղի ունեցել կարկատումը, այդ մասին բարեբաղդաբար տեղեկութիւն է տալիս ձեռագրի վերջում գտնուող յիշատակարանը, որի համաձայն Նորոգել է այն մի ոմն Պետրոս երէց ՌՀԸ=1629 թ.ին՝ մեծ աշխատութեամբ, յոյժ տրորեալ գտնելով բուն գրուածքը։ Ասել է թէ մի կերպ արտագրել է նա այն թերթերը, որ խիստ տրորուած էին և որ հնարաւոր չէր գտնում, համեմատաբար աւելի լաւ պահուածներին կցելով ամբողջ գիրք կազմել. իսկ ուր նկատել է թերթեր ընկած՝ տեղը մերկ թղթեր է թողել։ Առհասարակ նա իր գործը կատարել է զարմանալի բարեխղճութեամբ և հմտութեամբ, նիւթը շարայարել կանոնաւոր կերպով և, պէտք է ենթադրել, վերարտագրել է իւր առջև եղած օրինակը ըստ կարելւոյն ճշգրիտ և լրիւ։ Միայն մի տեղ (p. 229 r. = եր. 341) ակներև սխալ է գործել՝ «Եթէ չէ խառն ընդ արդարութեանն» հատուածը համարելով Սեբերիանոսի գործ և անմիջական շարունակութիւն նախընթացի. մինչ այդտեղ, անկասկած, ընկած է եղել իններորդ գլխի վերջին և տասներորդի առաջին մասը, և այս հատուածը մի ուրիշ հեղինակի գործ է եղել՝ տասներորդ գլխի մէջ մտած։ Այդպէս ընկած է եղել նաև երրորդ գլխի վերջին ու չորրորդի սկզբի մասը, բայց նորոգողն այդ նկատել է և ստորև լուսանցքում գրել. «մին տետր պակաս էր յօրինակէն». ուստի և մերկ թղթեր թողնելով՝ որոշել է երրորդ և չորրորդ գլուխների սահմանը, մինչ իններորդ և տասներորդ գլուխները մնացել են ձեռագրում իրար շարայարուած և շփոթուած։ Բացի այդ գլուխների պակաս մասերից և վերջում ընկած մի կամ մի քանի թերթերից, հաւանականաբար ամբողջ ժողովածուն մեր ձեռքն է հասել՝ նորոգողի խնամոտ աշխատութեան շնորհիւ։

Սակայն ձեռագիրը կազմուել է աւելի ուշ, երբ Նորոգողի ձեռքով գրած թերթերն էլ տեղ տեղ ցեց կերած ու փչացած են եղել, և կազմողը հարկադրուել է այդ էլ կարկատել։ Նա այնքան գրագէտ չի եղել, որ բոլոր թերթերը կանոնաւոր կերպով դասաւորել կարողանար, և խառնել է ոչ միայն հին, այլ մի քանի տեղ նաև նոր մասի թերթերը, որ և երկար աշխատութեամբ ու համեմատութիւններով հազիւ կարելի եղաւ կարգի բերել՝ տալ տպագրի մէջ իսկական շարայարութիւնը, իսկ լուսանցքում նշանակած երեսներով ձեռագրի թերթերի դասաւորութիւնը մատնանշել։

Յիշատակարանում չի որոշած նորոգութեան տեղը. բայց մի բարեպատեհ հանգամանք միջոց է տալիս այդ ևս որոշելու։ Մ. Աթոռի մատենադարանի Հ. 271=222 մագաղաթեայ բոլորգիր ծաղկազարդեալ աւետարանը վերջում ունի յիշատակարան, որի մէջ խնդրում է յիշել վերջին ստացող՝ «զմահդասի խօջայ Նազար Ջուղայեցին... և զկողակիցն իւր մահդասի Դշխուն, և զորդիքն իւրեանց՝ նախ զխօջա Սաֆար և զկողակից Խանզատէ և որդին Փանոսն և դուստրն Կատարինէ, և միւս խօջա Բաղդասարն և կողակիցն Մարան և որդիքն՝ Մաթոսն, Էլիազն, և դուստրն Աննայն. և խօջա Նազարի դուստրն Համասփուռն... և եղբարքն իւր՝ նախ զմահդասի խօջա Եղնազարն և կողակիցն Սալուինան և զորդին Նազա(ր)եթն, Գասպարն, և դստերքն՝ Աննայն, Մարիամ, Շահզատէն, Ասանէթն, Մէրջանն. և միւս եղբայր Առագելն, կողակիցն Սղմէլն, որդին Յոհան. և միւս եղբայրն մահդասի Մարութէն և կողակիցն Շիրին և որդին Ոսկան և Յարութէն ...» «Ծաղկեցաւ և կազմեցաւ ի թուականիս Հայոց ՌՀԸ»—«յիշատակ իւր (խօջայ Նազարին) և ծնօղաց իւրոց՝ հօրն մահդեսի Մաթէոսի և մօրն Մէրջանին և պապին Ամիրսաթին և Խանիկին Էլիփաշին ...»։

Կասկած չի կարող լինել, որ այս յիշատակարանի մէջ յիշուած Ջուղայեցի խօջայ Նազարի որդի Բաղդա-



սարն է մեր ձեռագրի նորոգել տուողն ու վերջին ստացողը, և հետևաբար նորոգութիւնը տեղի է ունեցել Նոր-Ջուղայում։ Առաքել Դաւրիժեցու պատմութեան ԻԴ. գլխում (Գ. տպ. Վաղարշապատ, 1896. եր. 309 չ.) պատմուած հանգամանքները հաւանական են դարձնում, թէ ինչու մեր ձեռագրի յիշատակարանի մէջ կաթուղիկոսի անունը չի յիշուել։ Յիրաւի նոյն տարին, որ գրուել է այդ յիշատակարանը, մեռած էր Շահաբաս Մեծը և թագաւորել էր նորա թոռ Շահսէֆին. Ջուղայեցւոց «քըրիստոսասէր մեծ իշխան խօջայ Նազարը» Սպահան էր հրաւիրել նշանաւոր Մովսէս վարդապետին (Տաթևացուն), որպէս զի միասին աշխատեն վերացնել ս. Էջմիածնի վրայ բարձուած 100 թուման հարկը, և Մովսէս վարդապետը 8 ամիս մայրաքաղաքում դեգերելուց յետոյ միայն յաջողել էր հարկը վերացնել տալ և կաթուղիկոսական իշխանութիւն ստացած՝ ս. Էջմիածին վերադառնալ։ Այդ ժամանակամիջոցում և գրի է առուել մեր ձեռագրի յիշատակարանը։ Այստեղ յիշուած խօջայ Նազարին նոյն չպիտի համարել «մեծ իշխան» խօջայ Նազարի հետ, որի որդու անունը Սաֆրազ է, մեծ եղբայրը Ջուղայեցւոց յայտնի տանուտէր խօջայ Սաֆարը։ Երկու յիշատակարանները՝ կատարելապէս համերաշխ միմեանց հետ և միմեանց լրացնելով, տալիս են Նոր-Ջուղայի մի ուրիշ ունևոր բազմամարդ ընտանիքի անդամների ցուցակը, որ ձեռք է բերել մեր ձեռագիրը այդ նշանաւոր գաղութի հիմնարկութեան շրջանում, նորոգել և կազմել տուել և խնամքով պահել գոնէ մինչև ՌՂԷ=1648 թ.ը, երբ մի երկրորդ յիշատակութեան համաձայն ոմն Տէր Յոհան նորանից արտագրել է մի ուրիշ օրինակ։ Այդ ժամանակ ձեռագրի ստացող Բաղդասարն արդէն վախճանած է եղել, տեղն իբրև գերդաստանի գլուխ անցել երևի ստորև յիշուող նորա որդի Մաթոսը։

Այդ ընդօրինակութիւնն է հաւանականաբար, որ մինչև այժմ պահուած կայ Նոր-Ջուղայի Ամենափրկչի

վանքի գրադարանում։ Լսել էի, թէ այդ գրադարանում ինչ որ բան կայ ս. Իրենէոսի գրուածներից. դիմեցի նամակով Արժ. Եսայի քահ. Տէր Յովհաննիսեանին, որի ձեռքի տակն է եղել երկար տարիներ նոյն գրադարանը, տեղեկութիւն խնդրեցի, թէ գրադարանի ո՞ր ձեռագիրը ի՞նչ գրուածք է պարունակում ս. Իրենէոսի կամ ուրիշ նախնի եկեղ. հայրերի անունով, և Տէր Հայրը բարի գտնուեց ընդարձակ հատուածներ արտագրելու և ուղարկելու ինձ մի ձեռագրից, որի վրայ՝ գրադարանի ձեռագիրները ցուցակագրելիս, ինքը դրել է 159 համարը և անուանել այն՝ «Հաւաքումն ի ճառից սրբոց հարց»։ Տէր Հօր նկարագրութեամբ այդ ձեռագիրը թղթեայ է, կաշէ կազմով, 15×10 մեծութեամբ, նօտր գրով, գրիչն ու գրութեան թուականը անյայտ. պարունակում է 325 թերթ, երեսը 19 տողից. ցեցակեր է, տեղ տեղ անընթեռնլի դարձած և վերջից թերթեր ընկած։ Կրկին դիմումով սկզբի, վերջի և մի քանի այլ հատուածներ ընդօրինակուած ստանալուց յետոյ՝ վերջնականապէս համոզուեցի, որ այդ ձեռագիրը հասարակ ընդօրինակութիւն է մեր ձեռքում գտնուած «Կնիք հաւատոյ» ժողովածուի և ոչինչ նոր բան չի պարունակում։

Արտագրողի առաջ եղել է մեր ձեռքի օրինակը բոլորովին նոյն դրութեամբ, ինչպէս այսօր է. այն տեղերում, ուր մեր օրինակը ծակոտիներ, պատառուածներ, կամ կազմելիս թղթի տակ մնացած բառեր ունի՝ նա էլ տառեր, բառեր, երբեմն ամբողջ նախադասութիւններ բաց է թողել. կրճատումներ արել է և վերնագիրների համար կարմիր թանաք գործածել բոլորովին նոյն ձևով, ինչ որ մեր օրինակի մէջ. պակաս տեղերն ինքն էլ պակաս է թողել և ուր թերթերն իրար են խառնուած, առանց կապակցութեան ուշադրութիւն դարձնելու՝ արտագրել է նոյն ձևով, ինչպէս մեր օրինակի մէջ հետևում է մի թերթը միւսին. այդպէս p. 131 v. «առն անարատի» բառերին (եր. 220) կցել է անմիջապէս p. 182 r. «կդ-



մարդն կուսածին» բառերը (եր. 153). p. 139 v. «որ ի վերն է» բառերին (եր. 166) անմիջապէս p. 140 r. «զի թէ հրաժարէր» բառերը (եր. 234), ևլն։ Պարզ է, որ այսպիսի ստրկական ընդօրինակութիւնից ոչ մի օգուտ չէր կարող քաղել ներկայ հրատարակութեան համար, ուստի այլ ևս հոգ չտարայ որև է կերպով մատչելի դարձնելու այդ ձեռագիրը և համեմատելու մեր օրինակի հետ։ Այնուամենայնիւ պարտական եմ խորին շնորհակալութիւնս յայտնել Արժ. Տ. Եսայի քահանային, որ իւր կրած նեղութեամբ արտագրութիւնների համար՝ միջոց տուաւ ինձ պարզելու երկու օրինակների առընչութիւնը։

Անհաւանական չէ, որ խոջայ Նազարի թոռ և Բաղդասարի որդի Մաթոսն ինքը մեր օրինակը նուէր ուղարկած լինի իւր նախնեաց սիրելի ուխտատեղի ս. Նախավկայի վանքին, որ նոյն այս ժամանակներում սկսում է շէնանալ և պայծառանալ. դորա համար և արտագրել է տուել երևի մի օրինակ ու պահել Նոր-Ջուղայում։ Այս երկրորդ օրինակի սկիզբը նոյն գլխակարգութիւնն է, որ գտնուում է մեր օրինակի սկզբում. միայն մէջը՝ մեր օրինակի p. 144 r. «Կենդանի եմ և ես վասն Հօր» նախադասութիւնից յետոյ (եր. 247) Հայր Եսային նկատում էր ու երկու թերթ ընկած է, և շարունակութիւնը բերում է՝ p. 145 v. «Ուրեմն և մի բնութիւն Աստուծոյ և մարդոյ գործեաց» նախադասութիւնից (եր. 243). իսկ ամբողջ ձեռագիրը վերջանում է մեր օրինակի p. 246 r. «Անձն ունողին բանական և մարմնոյ միաւորեալ՝ անճառա...,» բառերով (եր. 363), որից յետոյ շարունակութիւնը ընկած է։

Թէ երբ և ո՞րտեղ է գրուել ձեռագրի բուն, նախնական մասը՝ ոչ մի ցուցում այդ նկատմամբ չեմ գտնում և դժուարանում եմ որոշ կարծիք յայտնել։ Սկզբում ինձ թւում էր, թէ մինչև ԺԳ. դար կարելի է տանել այդ ձեռագրի հնութիւնը. բայց յետոյ ուշ դարձնելով գրութեան մէջ խիստ յաճախող բազմազան կրճատում-

ներին ու մի քանի առանձնայատուկ ձեւերին՝ հակուեցայ ընդունելու Տ. Գարեգին վարդապետի հետ, որ այս մասում առանձին հմտութիւն է ձեռք բերել, թէ հաւանականօրէն ԺԴ—ԺԵ դարերում գրուած պիտի լինի։ Յառաջ բերած 3 ցինկօտիպ ընդօրինակութիւնները՝ գըրուածքի վերնագրի, p. 83 r. նախնական մասի գրութեան և p. 186 r նորագոյն գրութեան, բաւականաչափ գաղափար կտան, յոյս ունիմ, ձեռագրում գործածուած գրերի ձեւի մասին, թէպէտ տարաբաղդաբար շատ աղօտ ելան լուսանկարները՝ թղթի սեւացած և կեղտի տակ մնացած լինելու պատճառով։ Վերնագրի երեսն է՝ 16,8×14 սնտմ., այն մասը, որ լուսանկարի մէջ է մտել 14+11,4 սնտմ., իսկ ցինկօտիպն է 12×10 սնտմ., p. 83 r. լուսանկարի մէջ մտած մասն է 13,5×12, իսկ ցինկօտիպը 13×11,3. p. 186 r. լուսանկարի մէջ մտած մասը 14×11,5, իսկ ցինկօտիպը 11 3×9 2։

Համեմատութիւնների համար ես կարող էի օգտուել միայն այն գրքերից, որ գտնուում են Մ. Աթոռի և Ճեմարանի մատենադարաններում։ Երբ աշխատութիւն սկսեցի, Մ. Աթոռի մատենադարանը շատ խառն դրութեան մէջ էր. ուստի պատահել է, որ առաջ ձեռքում չունեցած մի գիրք յետոյ գտնուել է. և որովհետև մինչ մի կողմից համեմատութիւններ էի կատարում, միւս կողմից տպագրութիւնը յառաջ էր գնում, ձեռագիրներ էլ քիչ չեն, որ սկզբում ի նկատի չեմ ունեցել այս կամ այն հատուածի համեմատութեան համար, և յետոյ ուրիշ նոր բան որոնած ժամանակ գտել եմ։ Յամենայն դէպս կարելւոյն չափ խնամքով աչքի եմ անցրել Մ. Աթոռի մատենադարանի բոլոր այն ձեռագիրները, որոնց մէջ կարելի էր մեր ժողովածուի նիւթերից որոնել, և չեմ կարծում, թէ շատ բան աչքից փախած լինի։ Ուստի, հնարաւորութիւն չունենալով ընդհանուր եկեղեցական հայրերի գրուածներից վերցրած նիւթերի համար բնագիրներին դիմելու և ստուգելու, թէ ո՛րը ի՛նչ հրատարակու-



թիւններից յայտնի է, որչափ հարազատութեամբ փոխադրուած կամ պահպանուած, և ո՛րը մինչև այժմ անյայտ էր մնացել,—կարողացայ, կարծում եմ, որոշել մօտաւորապէս, թէ հայ նախնի գրականութեան մէջ ի՛նչ տեղ են բռնում այդ նիւթերը և ի՛նչ մնացորդների հետ առընչութիւն ունին։ Այն դէպքում, երբ մի հատուածի համար համեմատութեան բազմաթիւ օրինակներ են եղել, ես բաւականացել եմ միայն մէկի հետ համեմատելով. որովհետև իմ նպատակն էր միայն ցոյց տալ, թէ ո՛րտեղից, ինչպէ՞ս են առնուել այդ հատուածները և ինչպէ՞ս պահուել։ Ընթերցողի համար դժուար չի լինի պատկերացնել, թէ այս սահմանների մէջ իսկ ի՛նչ աշխատութիւն պիտի նստէր նոցա բոլորի աղբիւրները որոնելն ու համեմատութիւնները կատարելը. աւելի ընդարձակել այդ աշխատանքը անտեղի համարեցի և աւելորդ ծանրութիւն՝ ո՛չ միայն ինձ, այլ նաև գրուածքի համար։

Քիչ ժամանակ չի խլել նաև ցանկերի, մանաւանդ «նիւթոց» ցանկի՝ պատրաստութիւնը։ Ով այդպիսի աշխատութիւն կատարել է, գիտէ, թէ որչափ դժուարութիւն է պատճառում բառերի նպատակայարմար ընտրութիւնը. և իմ կազմած ցանկի մէջ կան, անշուշտ, բառեր, որ կարող էին և մտած չլինել. կան ընդհակառակն կարևորներ, որ դուրս են մնացել. կան այնպիսիներ, որ կամ սկզբում մտցուել են, յետոյ անուշադիր մնացել, կամ գրքի մի որոշ մասից սկսած միայն ուշադրութիւն գրաւել և մտցուել ցանկի մէջ։ Յոյս ունիմ այնուամենայնիւ, որ խնդրապահանջներին անգամ բաւականութիւն կտան այդ ցանկերը։

Գրքի ճակատին դրի Կոմիտաս կաթուղիկոսի անունն՝ այն տեսակէտով, որ եթէ, ինչպէս ընդհանուր վերնագիրը վկայում է, այդ հայրապետի օրով է կազմուած ներկայ դաւանաբանական ժողովածուն՝ ո՛վ և լինի կազմողը, իբրև պաշտօնական վաւերագիր ժամանակակից Հայոց եկեղեցւոյ դաւանութեան՝ հրապարակ հանուած և

հեղինակութիւն տուած պիտի լինի այն ժամանակի հայրապետի անունից։ Այդպէս՝ շատ դաւանական թղթեր իրենց ժամանակի հայրապետի անունն են կրում. թէպէտ յայտնի է, որ նոցա իսկական հեղինակը եղել է ժամանակակից մի գիտնական վարդապետ։ Մանաւանդ Կոմիտաս կաթուղիկոսն ինքը մի աչքի ընկնող եկեղեցական հեղինակ լինելով՝ ոչ միայն պաշտօնական, այլ և գործունեայ ներկայացուցիչը մեր եկեղեցւոյ պատմութեան դաւանանքների զարգացման տեսակէտից կարևորագոյն մի շրջանի, անհաւանական է, որ կենդանի մասնակցութիւն ունեցած չլինի այս ժողովածուն կազմելու մէջ և իւր աստուածաբանական ըմբռնման կնիքը դրած նորա վերայ։

Ի վերջոյ՝ բոլորեքեան նոքա, որոնց աչքում արժէք կունենայ այս գիրքը, ինձ հետ միասին ջերմագին շնորհակալութիւն պիտի յայտնեն Պատուական պ. Յովհաննէս Շապոշնիկեանին, որի առատաձեռն դրամական օժանդակութեամբ հնարաւոր դարձաւ սորա հրատարակութիւնը։

Կ. Տմ.

30 Նոյեմբեր 1913
Ս Էջմիածին։

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ներկայացնում այս ժողովածուն և ի՞նչ պայմաններում է կազմուել՝ կաշխատենք որոշել մի քանի կարևոր պատմական վաւերագրերի օգնութեամբ, յենակէտ ընդունելով ժողովածուի ընդհանուր վերնագիրը։ Այստեղ պարզ ասած է, որ կազմուել է այն Հայոց Կոմիտաս կաթուղիկոսի օրով՝ ուղղափառ և Ս. Հոգւոյ շնորհօք առանձնապէս օժտեալ եկեղեցական հայրերի դաւանական գրուածներից յարմարագոյն կտորներ ընտրելով և ի մի հաւաքելով, որպէս զի հարկաւոր դէպքում իբրև վկայութիւն բերուին՝ սուրբ հաւատի պաշտպանութեան և հերձուածողների մոլորութիւնները հերքելու համար։ Իսկ կոչուում է «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ» երևի այն գիտակցութեամբ, թէ Ընդհանրական եկեղեցւոյ ընտրելագոյն ներկայացուցիչների այստեղ յառաջ բերած դաւանական տեսութիւնները կնիք են դառնում և հաստատում, որ ժողովածուն կազմողների պաշտպանած Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը նոյնն է, ինչ որ ընդունել է մի և անբաժան «Ընդհանուր սուրբ եկեղեցին», և որ խոստովանել պարտաւոր է ուրեմն նորա ամէն մի ճշմարիտ հաւատացեալ անդամը։

Այն ժողովական թուղթը, որ Ներսէս Գ. Շինող կաթուղիկոսի գլխաւորութեամբ Դուինում գումարուած ժողովը (հաւանականօրէն 648 թ. ին) ուղղել է Կոստանդ Բ. կայսեր և որ պահել է Սեբէոս (Պատմութիւն Ս. Պետերբուրգ, 1879. եր. 120), մի մասը նաև Ասողիկ (Պատմութիւն. Ս. Պետերբուրգ. 1885. եր. 91), յիշատակում է մի շարք բացառիկ հանգամանքներ, որոնց մէջ կաթուղիկոս է եղել Կոմիտաս և որոնց հետ կապուած է երևում նաև մեր ժողովածուի խմբագրութիւնը։ Պատմուում է այստեղ, որ Խոսրով Ապրուէզ թագաւորը Երուսաղէմը նուաճելուց յետոյ հրամայել է. որ Արևելքի և Ասորեստանի բոլոր եպիսկոպոսները արքունիք ժողովուին և Սմբատ Բագրատունի իշխանի ու արքունի բժշկապետի գլխաւորութեամբ, ինչպէս և գերի գնացած Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի ու յոյն իմաստասէրների մասնակցութեամբ՝ գումարած ժողովում քննեն, թէ իւր հպատակ զանազան դաւանութեանց քրիստոնեաների որի՞ դաւանու-

թիւնն է ուղիղը։ Ժողովին ներկայ են լինում Հայոց կողմից Կոմիտաս Մամիկոնէից և Մատթէոս Ամատունեաց եպիսկոպոսները, և երկար հարցուփորձից ու քննութիւններից յետոյ պարզւում է, որ ճշմարիտ է Հայերի դաւանութիւնը. ուստի Թագաւորն էլ հրամայում է, որ իւր իշխանութեան ներքոյ եղող բոլոր քրիստոնեաները Հայոց հաւատն ընդունեն։

Երուսաղեմի նուաճումը Պարսից կողմից տեղի է ունեցել 614 Թ. ին. ուրեմն յառաջ բերած վկայութեան համաձայն ժողովը պէտք է գումարուած լինի այդ թուականից աւելի ուշ։ Սակայն Ե. վ. Տէր Մինասեան 1907 Թ. «Արարատ»ի մէջ լոյս տեսած (փետրուար. եր. 179—195) իւր յօդուածով, որի վերնագիրն է «Այսպէս կոչուած Պարսից ժողովը» և որ նա ամբողջովին բերում է իւր «Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ» գրքի մէջ (ս. Էջմիածին. 1908. եր. 141 $_{2}$), հերքել է կամեցել բացայայտ վկայութիւնը և ապացուցանել, թէ յիշեալ ժողովը գումարուած պիտի լինի 613 Թ. ին։ Նա իւր փաստերն առնում է ասորական-նեստորական աղբիւրներից, որոնց ընծայում է այնպիսի, մեզ համար անհասկանալի՝ կարևորութիւն, մինչ նոցա մէջ յիշուած չլինելուն պատճառով սկզբից և եթ կասկածելի է համարում 615 կամ 616 Թ. ի ժողովի գոյութիւնը։ Ապա նա յառաջ է բերում 3 աղբիւրներ՝ «մի վիճաբանութեան մասին, որ եղել է Նեստորականների և հերձուածող միաբանների մէջ Խոսրով Պարուէզ արքայի հրամանով ու Գաբրիէլ Դուրուստպետի (բժշկապետի) դրդմամբ, բայց ոչ թէ 615-ին կամ 616-ին, այլ Խոսրովի ԻԳ. տարին, այն է 612-ին կամ 613-ին»։ Բայց «մի վիճաբանութեան մասին» անորոշ տեղեկութիւն կայ այդ աղբիւրներից միայն մէկի մէջ, որին նա ինքն իրաւամբ երկրորդական տեղ է տալիս. միւս երկու՝ պատմական տեսակէտից աւելի արժէքաւոր, մանրամասնութիւնների մէջ մտնող և վաւերագրերով խօսող աղբիւրները պատմում են միայն, որ Գաբրիէլ բժշկապետը Պարսից արքունիքում ձեռք բերած ազդեցութեամբ յաջողում է երկար տարիներ թափուր թողնել Նեստորականների կաթուղիկոսական աթոռը, մինչև սոցա գլխաւորները ժողովւում՝ արքունիք են գնում բողոքելու, և այստեղ նոցա առաջարկւում է. նախ ապացուցանել իրենց հաւատի ճշմարիտ լինելը. նոքա էլ գրաւոր կերպով ներկայացնում են իրենց դաւանութիւնը, իսկ Թագաւորը յայտնում է. «Քանի Նեստորի անունն են քարոզում, չեմ թոյլ տայ, որ գլուխ (կաթուղիկոս) ունենան»։ Այնուհետև նոցա գործ դրած բոլոր ջանքերն ի զուր են անցնում և նոցա գիտնական ներկայացու-



ցիչ Գէորգ Իզլացին բանտարկւում է ու խաչի մահուան դատապարտւում։

Արդ, ինչպէ՞ս է Նեստորականների 613 Թ. ին կաթուղիկոս ունենալու համար արած անյաջող փորձերից հետևում, թէ չի կարող 615 կամ 616 Թ. ին մի ժողով գումարուած լինել Պարսից արքունիքում, որ որոշէր ուղիղը Հայոց եկեղեցու դաւանութեան և քաղկեդոնականութեան մէջ՝ հրաժարւում ենք ըմբռնելուց։ «Շատ դժուար է ընդունել, գրում է Տէր Մինասեան, որ Խոսրով Պարուէզը այդքան երկար տարիներ զբաղուել է քրիստոնեաների դաւանութեան խնդրով և գումարել է տուել երկու ժողով, մէկը 612|613-ին, ինչպէս ցոյց են տալիս ասորական աղբիւրները, իսկ միւսը 614-ից յետոյ, ինչպէս դնում է հայկական աղբիւրը»։ Ընդունենք թէ դժուար է. բայց չէ՞ որ ասորական աղբիւրների մէջ ամենևին խօսք չկայ զանազան դաւանութեանց ներկայացուցիչներից կազմուած մի ժողովի մասին, և եթէ Գէորգ Իզլացու վկայաբանութիւնը «ճշմարտապատում» է, ինչպէս ինքը Տէր Մինասեան վկայում է, ապա պարզ երևում է նրանից, որ Նեստորականներին ոչ ոք չի հրաւիրել արքունիք, այլ նոքա իրենք են գնացել իբրև բողոքաւորներ, և իրենց դաւանութիւնը ներկայացրել են գրաւոր կերպով. ուրեմն և ոչ մի վիճաբանութիւն չի եղել միաբանների հետ, ինչպէս միտումնաւոր կերպով հաղորդում է ասորական ժամանակագրութիւնը. թէպէտ եղած էլ լինէր այդպիսի վիճաբանութիւն, ոչինչ չէր հետևի դորանից Ներսէս Շինողի թղթի նկարագրած ժողովի մասին։ Խնդիրը պարզ է. Պարսից արքունիքը առաջնորդւում է այն տեսակէտով, թէ տէրութեան մէջ եղող քրիստոնեաների միայն մի դաւանութիւնը կարող է պաշտօնապէս իբրև ուղիղ քրիստոնէական հաւատ ճանաչուել. և որովհետև ուղիղ պիտի համարուէր անկասկած Խոսրով Ապրուէզի ամենասիրելի Շիրին թագուհու և Գաբրիէլ բժշկապետի ու Սմբատ Բագրատունու նման ազդեցիկ պալատականների ընդունած դաւանութիւնը, բնականաբար պէտք է խոտուէին նոցա կողմից իբրև հերետիկոս նկատուած Նեստորականները։ Այսպիսի հանգամանքներում ոչ միայն ժողով գումարելու «միակ շարժառիթը Նեստորականների կաթուղիկոսութեան խնդիրը» չէր, այլ այդ խնդիրը ոչ մի ժողովի նիւթ էլ չէր կարող լինել։ Ասորական աղբիւրը վկայում է, որ Խոսրովի համար վճռուած հարց էր՝ ոչ մի ինքնուրոյն կազմակերպութիւն չճանաչել Նեստորի հետևողների համար, և նա ոչ մի պատճառ չունէր նոր վիճաբանութիւններ կազմակերպելու իւր վաղեմի հպատակ, ստրկական վիճակի մէջ գտնուող հա-

մայնքների օգտին. Նոցա հրապարակ գալը և Նեստորի անունը քարոզելը առիթ պէտք է լինէր միայն հալածանքի, ինչպէս և եղաւ։

Ուրիշ է դրութիւնը, երբ Երուսաղէմի նուաճումով քրիստոնէութեան օրրանը Պարսից ձեռքն է անցնում և յայտնւում է, որ պետութիւնն ունի այժմ բազմաթիւ ոչ նեստորական, բայց և ոչ Թագուհու դաւանակից քրիստոնեայ հպատակներ. ինչպէ՞ս վարուել սոցա հետ. Թագուհու և Գաբրիէլ բժշկապետի դաւանութիւ՞նն ուղիղ ընդունել, թէ քրիստոնէութեան ամենամեծ սրբութեան՝ խաչափայտի. հետ գերի գնացած Երուսաղէմի պատրիարքի դաւանութիւնը. Հայոց մեծ աշխարհի՞, թէ Վրաց և Աղուանից կիսանկախ՝ վերջին նուաճումներով կրկին Պարսից իշխանութեան ներքոյ մտած և տասնեակ տարիներից ի վեր դէպի քաղկեդոնականութիւն հակամէտ, երկրների՞ դաւանութիւնը։ Ահա այս կարեւոր հարցը քննելու, և ոչ թէ Նեստորականների կաթուղիկոսութեան խնդիրը վճռելու, կամ Նեստորականների ու միաբնակների մէջ վիճաբանութիւն յարդարելու նպատակով՝ գումարուած է ցոյց տալիս Ներսէս Շինողի Թուղթը Պարսից արքունիքի ժողովը։ Եւ երբ ի նկատի առնենք, որ այդ Թուղթը գրուած է Կոմիտասի մահից 20 տարի յետոյ միայն, յառաջ է բերուած ժամանակակից, ըստ ամենայնի արժանահաւատ՝ պատմիչի կողմից, իբրև Հայոց կաթուղիկոսարանի վաւերագիր, հանգամանօրէն նկարագրուած է, թէ ո՞վ էր ժողովը ղեկավարողը, ովքե՞ր էին մասնակցում, ի՞նչ խնդիրներ արծարծուեցան և ինչպէ՞ս եղաւ որոշումը, ապա աւելի և աւելի զարմանալի է դառնում, թէ ինչպէ՞ս կարելի է կասկածելի համարել այդ ժողովի գոյութիւնը, կամ ժամանակն ու նպատակը՝ ասորական յիշեալ աղբիւրների հիման վրայ։

Ընդունելով ուրեմն, որ ժողովը տեղի է ունեցել ուղիղ այն ժամանակ և այնպէս, ինչպէս նկարագրուած ենք գտնում Ներսէս Շինողի Թղթի մէջ, Տէր Մինասեանի յառաջ բերած ասորական աղբիւրներով պարզուած ենք տեսնում միայն այն հանգամանքը, թէ ինչո՞ւ սկզբից և եթ թոյլ չի տրուել Նեստորականներին մասնակցել ժողովին, և թագաւորը հրամայել է՝ «քննել զամենեցունց նոցա զեկեղեցիսն և սրով սատակել զնոսա, թէ ոչ դարձցին ի մոլորութենէն և ելանիցեն յարքայական պողոտայն», քննել միմիայն «զնիկիականն և զԿոստանդնուպաւլսին և զԵփեսոսին և զՔաղկեդոնին»։ Հասկանալի է դառնում նաև այն, թէ ինչու ոչինչ չկայ նոցա պատմական յիշատակարանների մէջ այս ժողովի մասին, որից նոքա կանխօրէն մերժուած ու արհամարհուած



էին։ Իսկ թէ հայ եպիսկոպոսները «միայն պատահմամբ են ընկել այս գումարման մէջ», զուր է ենթադրում դարձեալ Տէր Մինասեան, սխալ թարգմանելով բնագրի «դիպեցան անդ» բառերը, որ պարզապէս նշանակում է՝ գտնուեցան այնտեղ։ Եթէ «Վասն բանութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուսցեն թագաւորին»,—երկու եպիսկոպոսներ, և ոչ թէ նախարարներ կամ աշխարհական մարդիկ, և եթէ «ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի», կամ ինչպէս Ասողիկի օրինակի մէջ ասուած է,—«ունէին ընդ ինքեանս պատրաստական զպատմութիւնս սրբոյն Գրիգորի և այլ ևս վարդապետական պատմութիւնս»,—պարզ է ընդհակառակն, որ զուտ կրօնական խնդիրներ էին մտնում նոցա ծանուցման առարկայ եղող բանութեան մէջ և որ նոքա նախապատրաստուած էին պաշտպանելու որոշ հայեցակէտներ և իրաւունքներ այնպիսի մի ատեանի առաջ, որպիսին ներկայանում է Պարսից արքունիքի ժողովը։

Մեզ յայտնի է, որ յիրաւի կրօնական խիստ լուրջ խնդիրներ կային ժամանակի Հայոց եկեղեցւոյ վարիչների առջև։ Հազիւ 8—9 տարի անցել էր այն օրերից, երբ Աբրահամ Աղբաթանեցու կաթուղիկոսանալով՝ Հայոց եկեղեցու մէջ նորա նախորդի ժամանակ յառաջացած պառակտումը մասամբ վերացել էր, և երբ սակայն եկեղեցին ծանր հարուած էր կրել՝ օտար դաւանութեան յարող Վրացիներին, իւր գիրկը դարձնելու ապարդիւն փորձերից յետոյ, հարկադրուելով բանադրել և իրենից բոլորովին անջատուած հրատարակել։ Առկախ էր մնում դեռ նոյնպէս դէպի Քաղկեդոնականութիւն հակւող Աղուանից եկեղեցւոյ խնդիրը։ Աբրահամին կաթուղիկոս ընտրել տուողը և նախկին շրջանում քաղաքական հանգամանքների շնորհիւ եկեղեցուց բաժանուած հայ թեմերը կրկին նորա իշխանութեան ներքոյ միացնողը եղել էր գլխաւորապէս Վրկանայ մարզպան Սմբատ Բագրատունին, որ երևի կյաջողէր նաև Վրաց և Աղուանից եկեղեցիները հնազանդեցնել, եթէ ստիպուած չլինէր իւր պաշտօնին վերաբերեալ գործերով վաղաժամ հեռանալ Հայաստանից։ Այժմ, երբ Պարսից պետութիւնը իւր զօրութեան գագաթնակէտի վրայ էր, իսկ նա ամենաբարձր պաշտօնեաներից մէկը՝ ի՞նչ զարմանք, եթէ կամենար տարիներ առաջ իւր սկսած և թերի թողած գործը գլուխ հանել։ Եւ ահա Պարսից արքունիքում գումարւում է մի ժողով նոյն Սմբատ Բագրատունու գլխաւորութեամբ, որին մասնակցում են Հայոց աշխարհից յատկապէս ուղարկուած երկու եպիսկոպոսներ՝ դաւանական գրուածներ ձեռքներին, իբրև երկու վիճող կողմերից մէկը, » իսկ որք զՔաղկեդո-

նին՝ Իվերիոյ և Աղուանից կաթուղիկոսն, որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի, և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց, որ ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից»—ներկայանում են իբրև միւս կողմը. ապա պահանջուում է «յետկար ի կողմանցն երկոցունց». մի կողմը ճշմարիտ ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը, միւսը պաշտպանում է Քաղկեդոնի դաւանութիւնը. քննութիւն է լինում և հաստատուում է, որ իրաւունքն առաջին կողմինն է։ Միթէ չի հետևում այս բոլորից, որ թէ հայ եպիսկոպոսների արքունիք գալու և թէ ժողովի գումարման գլխաւոր նպատակն էր հաւանականօրէն՝ Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը իբրև պետութեան կողմից պաշտօնապէս ճանաչուած միակ ճշմարիտ քրիստոնէական դաւանութիւն հռչակել տալով, նախ միացնել ու հնազանդեցնել կրկին՝ նորանից քիչ ժամանակ առաջ անջատուած, կամ անջատուել ձգտող տարրերը, և ապա, եթէ կարելի էր, աւելի ընդարձակել նորա իրաւասութեան սահմանները։ Շատ կասկածելի է հարկաւ, որ Զաքարիա պատրիարքն իրեն վերագրուած խոստովանութիւնն արած լինի, կամ Քաղկեդոնի կողմնակիցներն առհասարակ սիրով համակերպէին ժողովի որոշումներին. բայց առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ վճռական դեր է կատարել այստեղ Կաւատ արքայի մատանիով կնքած Հայոց դաւանութեան գիրը։

Տէր Մինասեան բերում է (եր. 77) ասորի պատմիչ Բարհեբրէոսի վկայութիւնը, որ Շմաւոն անունով մի ասորի երէց Նեստորի դաւանութիւնը մերժող վաւերաթղթեր է վերցրել «յոյներից, հայերից և ասորիներից» և Կաւատ արքայի մօտ տանելով հաստատել տուել արքայական կնքով. և որովհետև այդ Շմաւոնը նոյն անձն է, որ յիշուում է Բաբգէն կաթուղիկոսի երկու թղթերի մէջ (Գիրք թղթոց եր. 41—51), ենթադրում է իրաւամբ, որ նորա հայերից վերցրած թուղթը 506 թ. ի Դուինի ժողովի դաւանական որոշումներն ամփոփող «հաւատոյ նամակը» պիտի լինի։ Սակայն նորա միւս ենթադրութիւնը, թէ Պարսից ժողովում մէջ բերուողն էլ նոյն Շմաւոնի հաստատել տուած թուղթն է, չի համապատասխանում Բարհեբրէոսի վկայութեան, որի համաձայն Շմաւոնը իւր հաստատել տուած վաւերագրերը հետը տարել և պահել է Տագրիտի եկեղեցում, մինչ այստեղ Հայոց «միաբանութեան հաւատոյ» գիրը հանում են արքունի գանձարանից։ Կաւատի արքունիքում ամէն մի հաստատուած թղթի պատճէնը չէին պահում հարկաւ, որ այս էլ Շմաւոն երէցի հաստատել տուած թղթի պատճէնը լինէր։ Բաբգէնի թղթի մէջ, փոքր ինչ անորոշ խօսքերով արտայայտուած՝ այն տեղեկութիւնն ենք գտնում, որ երբ, Նեստորականներից նեղուելով Շմաւոն երէցն ու իւրայինք Պարսից արքունիք են դիմել և արքայից արքային գանգատուել, նոցա ձեռքը հրաման են տուել, որ գան որոշ դիրք ունեցող քրիստոնեայ ազգերից վկայութիւն բերեն, թէ նոցա դաւանակից են, և ապա պաշտպանութիւն գտնեն. այդ նպատակով էլ նոքա Դուին են եկել։ Թուում է, թէ «Հոռոմոց» թիւրիմացութեամբ է գրուած այստեղ «Հայոց» անուան տեղ, քանի որ պետութեան հպատակ և որոշ արտօնութիւններ վայելող ազգերի վկայութիւնը միայն կարող էր արժէք ունենալ այսպիսի դէպքում. գրուածքի կապակցութիւնն էլ պահանջում է, որ լինէր. «Հաւատ յանձինս հաստատեսցի ըստ կանոնի և գիտութեան աշխարհին Հայոց, Վրաց և Աղուանից»։ Եթէ ուղիղ է այս ենթադրութիւնը, կմնայ պարզել, թէ ինչ արտօնութիւն կարող էին ունենալ Հայերն ու իրենց հարևան քրիստոնեաները։



Օտար աղբիւրներից յայտնի է, որ Կաւատի գահ բարձրանալուց յետոյ Վահան Մամիկոնեան մարզպանը ստիպուած է եղել կրկին զէնք առնել ձեռքը Պարսից դէմ և մնալ ապստամբ, մինչև որ նա, գահընկէց լինելուց և իւր եղբայր Զամասպին ձգելով կրկին գահի վրայ հաստատուելուց յետոյ՝ մի շարք արտօնութիւններով սիրաշահում է քրիստոնեաներին և խաղաղութիւն վերականգնում տէրութեան մէջ։ Թերևս հենց այս ժամանակ Վահան մի որոշ արտօնեալ դիրք է ձեռք բերել Հայոց եկեղեցու օգտին և դորա արտօնագիրը հաստատել տուել թագաւորի կնքով, Հայոց դաւանութիւնը պետութեան կողմից ճանաչուած և ազատօրէն պաշտուող կրօն դարձնելով՝ Հայերի հետ նաև Վրացւոց և Աղուանից համար, որոնք հաւանականօրէն Վահանի զինակիցներն էին ապստամբութեան միջոցին։ Այդ դէպքում աւելի հասկանալի կլինէր, թէ ինչու 606 թ. ին Բաբգէնի գումարած ժողովին մասնակցում են երեք եկեղեցիների ներկայացուցիչները և միահամուռ վստահութեամբ մերժում Նեստորականութիւնը, որ 7 տարի առաջ հաստատուն կազմակերպութիւն էր ընդունել Պարսկաստանում, յաճախ ազդեցիկ ներկայացուցիչներ էր ունենում արքունիքի մօտ և ակներև ձգտում էր բոլոր պարսկահպատակ քրիստոնեաներին իրեն ենթարկել։ Այդ դէպքում և Շմաւոն երէցն ու իւր ընկերները Դուինի ժողովից ստացած հաւատոյ գիրը ամենայն վստահութեամբ արքունիք կտանէին, որպէս զի հաստատել տալով որոշ ապահովութիւն ձեռք բերէին իրենց համար։ Յամենայն դէպս արքունի գանձարանից հանած և Պարսից ժողովում առաջ բերած

հաւատոյ գիրը ոչ միայն այն էր հաստատում ըստ երևութին, որ Կաւատ և իւր որդին Խոսրով ճանաչել են Հայոց դաւանութիւնը և վաւերացրել, այլ նաև, որ Վրացիք և Աղուանք նոյն դաւանութիւնն են ունեցել և այժմ, օտար ուսման հետևելով՝ հակառակ գնացած են լինում հայրենի աւանդութեան և Պարսից արքաների որոշումներին։ Այդպիսի բնաւորութիւն կարող էր ունենալ յատկապէս այն «պայման նամակը», որ ըստ Աբրահամ կաթուղիկոսի Գ. թղթի (Գիրք Թղթոց. եր. 183) կնքուել է Բաբգէնի ժողովում Հայերի, Վրացիների և Աղուանների մէջ։ Եթէ ենթադրենք, որ Վահանի ապստամբութեան վերջում միայն մի ընդհանուր քաղաքական համաձայնութիւն էր տեղի ունեցել, բայց Պարսից և Յունաց մէջ շարունակուող պատերազմի պատճառաւ 3 ազգերը միջոց չէին ունեցել իրենց փոխադարձ եկեղեցական յարաբերութիւնները և ընդունած դաւանական դրութիւնը պարզելու, այդ նպատակով և Բաբգէն ժողով է գումարել, որի որոշումները ամփոփուել են յիշեալ «պայման նամակի» մէջ, կարելի կլինէր մտածել, թէ այդ նամակն է, ի լրումն նախկին համաձայնութեան՝ արքունիք ուղարկուել և վաւերացուելով՝ պահուել արքունի գանձարանում։ Այսպէս թէ այնպէս՝ Հայերին յաջողուել է գանձարանից հանած թղթով լռեցնել քրիստոնեայ հարևաններին և ստիպել նորոգելու իրենց հետ նախկին միաբանութիւնը։

Վրացիների միացման մասին տեղեկութիւն չունինք. բայց պէտք է ենթադրել, որ առժամանակ ստիպուեցան գէթ առ երես հպատակուել արքայական հրամանին և «Հայոց հաւատն ընդունել», մինչև Հերակլ կայսեր յաղթական արշաւանքները և Հայոց ու Ասորւոց եկեղեցիներն իսկ Յունաց հետ միացնելու փորձերը ազատութիւն տուին նոցա՝ դառնալու կրկին Կիւրիոն կաթուղիկոսի բռնած ընթացքին։ Գոնէ համընթաց Աղուանից եկեղեցու խոտորումներին վերջ տալը և առ միշտ միացումը Հայոց եկեղեցւոյ հետ այդ ժողովից պիտի հաշուել։ Եւ որ ժողովի արդիւնքի մասին պատմուածը առասպել չէ, այլ նորանից յետոյ շատ ընդարձակուում են Հայոց եկեղեցու իրաւասութեան սահմանները՝ տեսնում ենք նաև ուրիշ յիշատակութիւններից։ Մեր ձեռագիրներում կայ Հայոց եկեղեցական ժողովների մի համառօտ պատմութիւն (տես. Հ. 530=500, p. 262 v.), որի մէջ Ներսէս Բ.ի համար՝ իբրև հետևութիւն 552 թ.ի Դուինի ժողովի, ասած է. «Բաժանեաց զՀայս ի Հոռոմոց և յԵրուսաղէմ գնալոյ». իսկ այդ ասացուածի միտքը պարզուում է Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի Աղուանից Աբաս կաթուղիկոսին ուղղած թղթով, որ ես



հրատարակել եմ իբրև յաւելուած «Արարատ»ի (1896, մայիս. եր. 252)։ Այստեղ հեղինակը, որ Երուսաղեմի պատրիարքութեան աթոռը բարձրացել է 574 թ.ին (տես. Արարատ, 1896. հոկտեմբեր, եր. 444), պարծենում է, թէ Հայոց ժողովի արձակած երկու գրութիւններին ծանօթանալուց և նոցա մէջ մոլար վարդապետութիւն գտնելուց յետոյ՝ հայերին հալածել է Երուսաղեմից, նոցա վանքն այրել և նոցա բողոքներն անուշադիր թողնելով՝ բացարձակապէս յայտարարել. «Յերկուս քաղաքս թագաւորականս յայտնի հերձուածողի ոչ տամք բնակել՝ յԵրուսաղէմ Երկնաւոր Թագաւորին և մերս երկրաւոր»։ Արդ, Սեբէոսի պատմութեան մէջ (եր 83–88) պահուած է Կոմիտաս կաթուղիկոսի մի նշանակալից թղթակցութիւնը Զաքարիա պատրիարքի գերութիւնից յետոյ Երուսաղեմում տեղապահի պաշտօն վարող Մոդեստոս երէցի հետ, որի համաձայն Հայերը, երկարժամանակեայ դադարից յետոյ՝ ոչ միայն սկսել են կրկին իբրև ուխտաւորներ երթևեկել Երուսաղէմ և հաստատուել այնտեղ, այլ և այնչափ բարձրացել են և կարևոր դիրք ընդունել 40 տարի առաջ իրեն նոյն իսկ Երկնաւոր Երուսաղեմի դռնապան համարող Յովհաննէսի ժառանգների աչքում, որ սոքա Հայոց կաթուղիկոսի պաշտպանութեանն են դիմում, նորա աչքը Երուսաղէմի վրայ քաղցր պահել ցանկանում, Երուսաղէմի աղքատների և Զարչարանաց տեղի վրայ շինուածք կառուցանելու համար օգնութիւն խնդրում։

Ամէնից որոշ և նշանակալից մնում է հարկաւ «Ասորեստանեայց կողմերի» կամ բուն Պարսկաստանի քրիստոնեաների միաբանութիւնը Հայոց հետ, որի համար բացի Ներսէս Շինողի թղթի յիշատակութիւնից՝ ունինք իմ հրատարակած 2 միաբանական թղթերի հաստատուն վկայութիւնը (տես. Արարատ, 1896. նոյեմբեր. եր. 531—536. առաջին թուղթը՝ թերի յառաջաբանով. նաև Գիրք Թղթոց. եր 212. իսկ երկրորդը՝ Սամուէլ քահ.ի Անեցւոյ՝ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893. եր. 290–291)։ Դժուար է ընդունել, թէ այն 10 եպիսկոպոսներն էլ, որոնք ըստ Ներսէս Շինողի թղթի Կամյիշով մետրապօլտի գլխաւորութեամբ միաբանել են Հայոց հետ և որոնցից 8-ը անուն անուն յիշած են առաջին միաբանական թղթի, 2-ը երկրորդի մէջ, հականեստորական եղած լինին։ Մի անգամ որ Խոսրով արքան հրամայել էր, «Եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են, հաւատ զՀայոցն կալցին», և այդ հրամանը չկատարողները հալածանքի էին ենթարկուում, հաւանականաբար համակերպեցան նորա հրամանին նաև բազմաթիւ այնպիսիները, որոնք առաջ աւելի կամ պակաս սերտ կերպով

կապուած էին Նեստորական եկեղեցու հետ, բայց այժմ չէին կամենում մերժուած ու հալածական վիճակի մէջ լինել։ Միաբանական Թուղթը տրուած է Կամյիշով (այստեղ Ցամբիշոյ դարձած) մետրապօլտին և իւր հետ միաբանող 8 եպիսկոպոսներին ժողովից անմիջապէս յետոյ, «առաջի բազում նախարարաց Հայոց և այլազգաց քրիստոնէից, որ ի դրան արքունի հասեալ էին, մանաւանդ առաջի մեծի տանուտեառն Խոսրով Շնումն կոչեցելոյ, որոյ ճանաչիւր անուն Սմբատ, յազգէ Բագրատունեաց», և ստորագրում է՝ «Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց». հետևաբար նա իբրև եպիսկոպոս ներկայանալով ժողովին՝ ելեր էր այնտեղից արդէն իբրև կաթուղիկոս։ Տէր Մինասեան հետևեցնում է սորանից (եր 160), որ արքունիք եկած 2 եպիսկոպոսների պատգամաւորութեան ամենագլխաւոր նպատակը եղել է նոր կաթուղիկոս հաստատել տալ, և հիմնում է այն սխալ հաշուի վրայ, իբր Աբրահամ Աղբաթանեցին վախճանել է 611 թ. ին, Հայոց Հայրապետական Աթոռը (ընդունելով 613-ը Պարսից ժողովի թուական) մօտ 2 տարի թափուր է մնացել, մինչև որ Հայաստանում «որոշում են պատգամաւոր ուղարկել Խոսրով Պատուէզի մօտ՝ երկրի ծանր դրութիւնը նկարագրելու համար»։ Սակայն Սեբէոսի պատմութեան գլ. ԻԳ. էջ 77—78, որտեղից նա հանում է Աբրահամ կաթուղիկոսի մահուան թուականը և որ նորա կարծիքով «ուրիշ կերպ հասկանալ կարելի չէ», երբէք կարելի չէ այնպէս հասկանալ, ինչպէս նա հասկացել է։ Այստեղ պատմուած է միայն, որ Խոսրով իւր թագաւորութեան ԻԱ. տարին, այսինքն 611 թ. ին, հրամայել է գերի տանել նուաճուած Կարին քաղաքի բնակիչներին և բնակեցնել «Ահմատեան շահաստանում». սոցա հետ գերի է տարուել նաև հակաթոռ Յովհան կաթուղիկոսը, որ վախճանել է գերութեան մէջ. բայց չի ասած, թէ երբ է վախճանել։ Ուստի, երբ յետոյ աւելացրած է, թէ նորա հետ նոյն տարին վախճանել է նաև Աբրահամ կաթուղիկոսը, մենք ոչինչ իմացած չենք լինում դորանով Աբրահամի մահուան թուականի մասին։

Ապա. թէպէտ Բարհեբրէոսի տուած այն տեղեկութիւնից, թէ Խոսրով «թոյլ է տալիս», որ միաբնակ Եդեսացիք նոր եպիսկոպոս ընտրեն, չի կարելի առանց այլևայլութեան եզրակացնել, թէ նա «ընդհանուր արգելք է դրած եղել՝ առանց իւր գիտութեան կաթուղիկոսի ընտրութիւն չկատարել», բայց ընդունենք, թէ այդպէս եղել է. ինչն էր ստիպում այնուամենայնիւ 2 տարի Հայրապետական աթոռը թափուր և այդ պատճառով «երկիրը ծանր դրութեան մէջ թողնել», վերջն էլ յատուկ պատգամաւորութիւն ուղարկել



Պարսկաստան, քանի որ, ինչպէս Տէր Մինասեան ինքն էլ ընդունում է, «Սմբատ Բագրատունու և Գաբրիէլ բժշկապետի միջոցով շատ հեշտութեամբ» կարելի էր նոր կաթուղիկոսի հաստատութեան հրաման առնել։ Երբ ի նկատի ունենանք մանաւանդ, որ մեր վերև առաջ բերած պարզաբանութիւնների համաձայն՝ Պարսից ժողովը չի կարող Երուսաղեմի նուաճումից առաջ գումարուած լինել, պէտք կլինէր ենթադրել, որ Հայր. աթոռը ոչ թէ 2, այլ առնուազն 3—4 տարի թափուր է մնացել, եթէ Աբրահամ կաթուղիկոսը 611-ին վախճանած լինէր. իսկ այդ ոչ մի դէպքում ընդունելի չէ։

Ժողովի թուականը մօտաւոր ճշտութեամբ որոշելու համար բաւական հաստատուն կռուան է ընծայում այն տարեթիւը, որ նշանակած է վերոյիշեալ 2 միաբանական թղթերից երկրորդի մէջ։ Այդ թղթի վերնագրում ասուած է, որ թուղթը ներկայացնող Ասորեստանի կողմի 2 եպիսկոպոսները «հասին ի մայրաքաղաքն Հայոց ի Դուին» Խոսրով Ապրուէզի ԻԷ. տարին, այսինքն 617 թ. ին։ Պարզ է, որ սոքա ևս Պարսից ժողովի որոշման համաձայն էին եկել Հայոց հետ միաբանելու, բայց ժողովի ժամանակ ներկայ չէին եղել արքունիքում, որպէս զի առաջին թղթում յիշուած եպիսկոպոսների հետ իրենք էլ «յետկար» տային ու առնէին, այլ յետոյ, երբ ժողովի արդիւնքն իրենց յայտնուել է. կամ գուցէ ուղղակի արքայական հրաման է եկել, ելեր եկել են, և Հայոց նորընտիր կաթուղիկոսին այլ ևս Պարսից մայրաքաղաքում չգտնելով՝ ետևից հասել են Հայոց մայրաքաղաքը։ Ապա ուրեմն ժողովի և նոցա Դուին գալու մէջ մի քանի ամսից աւելի երկար ժամանակ չի կարող անցած լինել. և եթէ նոքա Դուին եկան 617 թ. ին, ժողովն էլ տեղի պէտք է ունեցած լինի՝ եթէ ոչ նոյն, գոնէ ամենավաղը նախորդ 616 թուականին։ Տէր Մինասեան նկատելով, որ այսպիսի եզրակացութիւն բոլորովին հակառակ կլինէր ժողովի թուականը որոշելու համար կազմած իւր հաշիւներին, կարևոր է համարում ենթադրել, որ Խոսրովի թագաւորութեան ԻԷ. տարին «աւելի ճիշտ կլինի ԻԵ. կարդալ». բայց այդ կամայական վճռով նորա հաշիւը չի ուղղուում ի հարկէ, որովհետև ժողովի համար նորա որոշած 613 թ. ի և այդպէս կարդացուած թղթի թուականի մէջ մնում է այնուամենայնիւ 2 տարուայ ժամանակամիջոց, մինչդեռ 2 միաբանական թղթերի ակներև սերտ կապը թոյլ չի տալիս այդպիսի անջրպետ ընդունել։

Որ կողմը և դարձնենք ուրեմն խնդիրը՝ բոլոր պատմական տուեալները (ուշադրութեան առնելով նաև թագաւորների իշխանութեան տարիների և փրկչական թուականի բոլորովին զուգըն-

թաց չլինելը) բերում են մեզ այն եզրակացութեան, որ Պարսից ժողովը տեղի ունեցած, հետեւաբար և Կոմիտաս Հայրապետական աթոռ բարձրացած պիտի լինի 616 թ ին։ Պատճառ չկայ ապա Աբրահամ Աղբաթանեցու վախճանն եւ այդ դէպքից շատ վաղ եղած համարելու։ Կարելի էր համաձայնել Տէր Մինասեանի հետ այն կէտում, թէ «շատ հաւանական է, որ Կոմիտասը իբրև եպիսկոպոսների ու իշխանների կողմից արդէն ընտրուած՝ գնացել է Ամատունեաց եպիսկոպոսի հետ Պարսից Դուռը, որպէս զի պէտք եղած հաճութիւնն ու հաստատութիւնն ստանայ Խոսրով Պարուէզի կողմից», և թէ ուրեմն այդ էլ կարող էր «պատգամաւորութեան» նպատակներից մէկը լինել. բայց տեսանք, որ յամենայն դէպս այդ չէր «ամենագլխաւոր նպատակը»։ Առանձին ուսումնասիրութեան նիւթ է, թէ արդեօք ինչ ժամանակներում և որչափ միջամտութիւն է գործել Պարսից արքունիքը Հայոց Հայրապետական Աթոռի իրաւասութեանց և նոր կաթողիկոսներ կարգելու խնդրի մէջ. ակնարկներ կան յիրաւի, որ արդէն Ե. դարում, ս. Սահակի և Գիւտ կաթողիկոսի օրերից ի վեր, այդպիսի միջամտութեան դէպքեր եղել են. որ, օրինակ, Ներսէս Բ. ինչ ինչ քաղաքական արտօնութիւններ է վայելել և աշխարհական գործերի մէջ խառնուել. բայց որ կաթողիկոսների հաստատութեան որոշ օրէնք եղած լինի, կամ արգելք՝ առանց արքայից արքայի հաճութեան երբէք նոր կաթողիկոս հայրապետական աթոռ չբարձրացնել. այդ չենք տեսնում։ Ըստ Սեբէոսի պատմութեան Կոմիտաս կաթողիկոսն էլ յաջորդել է Աբրահամ Աղբաթանեցուն անմիջապէս՝ առանց որ և է միջադէպի։ Ճիշտ է, նորա Պարսից արքունիք իբրև եպիսկոպոս գնալը և իբրև կաթողիկոս վերադառնալը նշան կարող էր համարուել, որ նա թագաւորից հաստատուելու համար է գնացել, մանաւանդ որ բացառիկ մի հանգամանք կար այս դէպքում, և գուցէ Սեբէոս առանց դիտաւորութեան չէ յիշել հակաթոռ Յովհանի և Աբրահամի միաժամանակ վախճանելը, գուցէ հարկաւոր էր պաշտօնապէս հաստատել, որ հակաթոռութիւնը վերանում էր և Կոմիտաս ամենայն Հայոց ընդհանրական հայրապետ էր ճանաչւում՝ ստանալով նաև Յովհանի հետ գերութիւն տարած «եկեղեցւոյ սպասները». այնուամենայնիւ ազատ տեղ է մնում մտածելու, թէ կարող էր հաստատութեան ոչ մի կարիք էլ եղած չլինել, այլ Կոմիտասի Հայաստանից մեկնելուց յետոյ Աբրահամ կաթողիկոս վախճանել է, և այդ լուրի հետ նորան յայտնել են, որ հայ հոգևորականների ու իշխանների ժողովը նրան է ընտրել կաթողիկոս. կամ նոյն իսկ, ինչպէս շատ անգամ նման դէպքեր եղել են, արքունիքում



գտնուող «բազում հայ նախարարների» ժողովը Սմբատ Բագրատունու գլխաւորութեամբ բարձրացրել է նորան հայրապետական աթոռ։

Այսպէս թէ այնպէս, եթէ Կոմիտաս և Մատթէոս եպիսկոպոսները Հայր. Աթոռի վերաբերեալ կամ Պարսից մարզպանի ու գործակալների կողմից տեղի ունեցած ուրիշ որ և է բռնութիւն վերացնելու յանձնարարութիւն էլ ունեցել են՝ նոցա գլխաւոր հոգսը եղել է, ինչպէս պարզւում է մեր յիշած վաւերագրերից, վերացնել Հայոց եկեղեցուց ծանր և քայքայիչ հետևանքները այն բռնի միջոցների, որոնց սկիզբը դրել էր Մօրիկ կայսրը և որոնց ենթակայ էր եղել մեր եկեղեցին մի քանի տասնեակ տարիների ընթացքում։ Տեսանք, որ նոքա, գուցէ ակնկալածից շատ աւելի՝ յաջողութիւն ունեցան. ոչ միայն Հայոց եկեղեցու վարչական իրաւասութիւնը նախկին սահմաններում վերականգնուեց. ոչ միայն 40 տարիներից ի վեր Երուսաղէմից հալածուած Հայերը հնարաւորութիւն ստացաւ համարձակ ուխտի գնալ Երուսաղէմ և դեռ այնտեղ էլ պաշտպան կանգնել հալածուածներին. այլ և մի մետրապօլտութիւն 10 նոր թեմերով մտաւ Հայոց հայրապետի իշխանութեան ներքոյ, և Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը պետութեան համար միակ ընդունելի և պաշտպանութիւն վայելող քրիստոնէական հաւատ հռչակուեց Պարսկաստանի ընդարձակ սահմաններում, ուր այդ ժամանակ դեռ շատ բազմաթիւ էին քրիստոնեաները։

Արդ, երբ մի կողմից տեղեկանում ենք, որ այսպիսի կարևոր հանգամանքներում Պարսից արքունիք գնացած հայ եպիսկոպոսները իրենց ձեռքին պատրաստ ունէին «վարդապետական» գրուածներ՝ անշուշտ, այնտեղ գտնուած յոյն «իմաստասէրների», քաղկեդոնականութեան և այլ դաւանութեանց ներկայացուցիչների առաջ իրենց դաւանութեան ճշմարտութիւնը պաշտպանելու և հիմնաւորելու նպատակով. միւս կողմից մեր առջևն ունինք դաւանաբանական մի ժողովածու, որի ակներև նպատակն է փաստեր մատակարարել՝ աւելի օտարազգի հայրերի երկերից քաղած վկայութիւններով, Հայոց դաւանութեան ճշմարտութիւնը պատճառաբանելու, իրաւունք չունինք ենթադրելու, թէ այս ժողովածուն իւր կազմութեամբ սերտ կապ ունի Պարսից ժողովի հետ։ Արդեօք նոյն ժողովածուի վերնագրի մի քանի յատկանիշ բառերը չեն հնչում Կոմիտաս կաթողիկոսի առաջին միաբանական թղթի հետևեալ տողերի մէջ. «Եւ մի՛ յուլացեալ լքայց՝ զոգիտութիւնս բաղբաղելով, և մի՛ քան զեղեալն օտարաձայնեալ, այլ որպէս բանս է՝ թէ հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ունի

զկնիխ գայս. քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ, և հաստատեալն եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել եւ զդաւանութիւնս ուղղափառութեան հաւատոյ»։ Հարկաւ անտեղի կլինէր պնդել, թէ Կոմիտասի և իւր ընկերոջ ձեռքում պատրաստ եղել է նոյն այս ժողովածուն, որի նիւթերն ըստ վերնագրի ի մի են հաւաքուել նորա կաթուղիկոսութեան օրով, և ոչ թէ առաջ. բայց այդ նիւթերի մի մասը, կամ՝ այնպիսի գրուածներ, որոնցից նոքա քաղուած են, կարող էր առաջուց ժողով տանելու համար պատրաստուած լինել. և յետոյ, ժողովի տուած փորձառութիւնից եւ օգտուելով և տեսնելով, թէ օտար դաւանութեանց ներկայացուցիչների հետ վիճելիս աւելի ինչ նիւթեր են պէտք գալիս՝ լրացրած, ամփոփած և ապագայ գործածութեանց համար կազմուած լինել բուն «Կնիք հաւատոյ» ժողովածուն։ Գոնէ այդ ժողովածուի հիմնական նիւթերից մէկը՝ Գրիգոր Սքանչելագործի «Հաւատոյ հանգանակը», որ երկու անգամ բերուած է նորա մէջ (եր. 17 և 71), գտնում ենք ամբողջովին նաև Կոմիտասի միաբանական թղթում, միայն արտագրողների, թէ ուրիշ ինչ թիւրիմացութեամբ՝ Գրիգոր Աստուածաբանին վերագրած։

Թէ Կոմիտաս կաթուղիկոսի անունով ինչ որ դաւանաբանական գրքեր յայտնի են եղել հնում, այդ մասին հետաքրքրական տեղեկութիւն ենք ստանում կասկածելի ծագումն ունեցող մի աղբիւրից։ Narratio de rebus Armeniae լատիներէն վերնագրով և յունարէն լեզուով Migne, Patrologia, t. 132, col. 1237—1258 հրատարակուած գրութիւնը, որի «նաև հայերէնը եղած է երբեմն» ըստ Հ. Ն. Ակինեանի (Կիւրիոն կաթուղիկոս Վրաց. Վիեննա, 1910. եր. 290) և որ, քաղկեդոնական ոգով՝ աղաւաղուած համառօտ մի նկարագիր է տալիս Դ—Է դարերի Հայոց եկեղեցւոյ շուրջ անցած եղելութեանց, Կոմիտաս կաթուղիկոսի մասին ասում է. ὃς καὶ λόγους πολλοὺς πεποίηκε τῷ ἰδίῳ ὀνόματι τοῦ ἁγίου Ἰσαάκ. ἐνὶ βιβλίῳ το ὄνομα ἐστὶν Ἀμαρτανὰκ κατὰ τὴν Ἀρμενίων διάλεκτον. «Որ և բանս բազումս արար յանուն իւր սրբոյն Սահակայ. մատենին միում անուն է Ամարտանակ ի բարբառ Հայոց»։ Արդ, որոնք են Կոմիտասի բազմաթիւ ճառերը և ինչ է եղել այն գրքի անունը, որ աղաւաղուելով «Ամարտանակ» է դարձել այստեղ։ «Կնիք հաւատոյ» լինել չէր կարող ի հարկէ. աւելի շուտ «Արմատ հաւատոյ» կամ «Հաւատարմատ», որպիսի անուն տրուել է, ինչպէս կասենենք, թէ մեր ժողովածուին և թէ ուրիշ նման դաւանաբանական հաւաքածուների։ Բայց ինձ աւելի հաւանական է թւում, որ այդ լինի աղաւաղումն «Հաւատոյ նամակ» բառի, ինչպէս կոչուել է ըստ Ստ. Օրբէլեանի (Պատմութիւն տանն Սիսական.



Մոսկվա. 1861. եր. 208) Անանիա Մոկացի կաթուղիկոսի ժողոված «Թղթոց գիրքը»։ Հ. Ակինեան իւր վերև յիշուած աշխատութեան մէջ (եր. 42) ասում է, թէ տպագրութեամբ ծանօթ և այստեղ մի քանի անգամ վկայութեան բերած Թղթոց գրքից տարբեր է Անանիայի «Թղթոց գիրքը», «զոր հրատարակեց Գ. Տէր Մկրտչեան Արարատի մէջ վերջերս»։ Բայց Գ. Տէր Մկրտչեան ոչ թէ «Թղթոց գիրք» է հրատարակել 1897 թ. ի «Արարատ»ի մէջ, այլ Անանիա Մոկացու թղթերը՝ առնելով Մ Աթոռի մատենադարանի 2 «Թղթոց գիրք» կոչուած, բայց իրարից տարբեր կազմութիւն ունեցող ձեռագիրներից, և այս մատենադարանում կան դեռ ուրիշ մի քանի «Թղթոց գրքեր» էլ, նոյնպէս տարբեր տարբեր բովանդակութեամբ։ Ինչպէս ինքը Հ. Ակինեան նկատել է (եր. 38), արդէն Ուխտանէս Ժ. դարում վկայում է (Պատմութիւն. Վաղարշապատ, 1871), որ Թղթոց գրքի զանազան բովանդակութեամբ ձեռագիրներ կային։

Այստեղ հետաքրքրականն այն է, որ եթէ Անանիա Մոկացու կազմած օրինակը «Հաւատոյ նամակ» էր կոչւում, ոչինչ չի արգելում ընդունելու, թէ այդպէս կոչուել է նաև այն հնագոյն օրինակը, որ ըստ Հ. Ակինեանի կազմում է Անտոնեան միաբանութեան ձեռագրից տպուածի հիմնական մասը։ Իսկ այդ մասը, որ վերջում պահուած յիշատակարանի համաձայն արտագրուել է Գրիգոր Վկայասէրի միայն այդչափը պարունակող օրինակից, պէտք է ուրեմն առաջ մի առանձին ամբողջութիւն եղած լինի, և պատահականութիւն չէ անշուշտ, որ վերջանում է Կոմիտաս կաթուղիկոսի վերև յիշուած միաբանական թղթով։ Հ. Ակինեան՝ հերքելով տպագրեալ Թղթոց գրքի յառաջաբանի մէջ յայտնուած այն կարծիքը, թէ ինչպէս որ «Կանոնագիրքը առաջին անգամ Ս. Յովհան Օձնեցի Իմաստասէր հայրապետին ձեռքով կազմուեցաւ», այնպէս էլ հաւանական է, որ նոյն հայրապետն առաջին անգամ Թղթոց գիրք կազմած լինի, ինքը դաւանական թղթեր ի մի ամփոփելու և այդպիսով Թղթոց գրքի առաջին ժողովածուն կազմած լինելու պատիւը վերագրում է Վրաց բաժանման վէճերի մէջ (Է. դարի սկզբում) մասնակցող Մովսէս Ցուրտաւի եպիսկոպոսին (Կիւրիոն, եր. 37—44)։ Բայց Սրբ. Օրմանեան Ազգապատումին մէջ (էջ 608) դորա դէմ առարկում է. «Գիրք Թղթոց Հայոց հայրապետանոցին մէջ սկսած պաշտօնական հաւաքածոյ մըն է, և անկէց է որ Մովսէս կը ստանայ և կ'ընդօրինակէ, անկէց է որ իր պակասներն ալ կ'ուզէ, հետևաբար ինքն չէ անոր առաջին հեղինակը... այլ պէտք է ընդունել թէ հետզհետէ կազմուած է Դըւնայ կաթուղիկոսարանին մէջ, իբրև դիւան հայրա-

պետանոցի. և հետզհետէ բարդուելով իւր կանոնաւոր լրումը ստացած է Օձնեցիին ձեռքով»։ Առարկութիւնն ըստ ինքեան իրաւացի համարելով՝ եզրակացութեան համար պիտի նկատենք. ինչն է ստիպում ընդունել, թէ Թղթոց գիրքը «իւր կանոնաւոր լրումը ստացած է Օձնեցիին ձեռքով», քանի որ պարզ տեսնում ենք, թէ նա իր լրումը ստացել է իրօք Կոմիտաս կաթուղիկոսի թըղթով և քանի որ նոյն կաթուղիկոսի օրով ամէնից աւելի հարկ զգացուած պիտի լինի այդ տեսակ ժողովածուներ կազմելու։

Ինձ թուում է. թէ Գիրք Թղթոցի յիշեալ հիմնական մասը ոչ միայն ամփոփուել և մի որոշ ժողովածու է դարձել Կոմիտաս կաթուղիկոսի ձեռքով կամ օրով. այլ թէ այդ իսկ ժողովածուն կոչուել է «Հաւատոյ Նամակ». ինչպէս «Հաւատոյ Նամակ» է կոչուում Բաբգէն կաթուղիկոսի թուղթը և նորա վկայութեամբ (Գիրք Թղթոց եր. 47) ամէն մի գրուածք. որի մէջ մի որոշ դաւանութիւն է պարզուում,—և թէ այդ «Հաւատոյ Նամակն» է De rebus Armeniae գրուածքի մէջ աղաւաղուած ձևով յիշուող Համարտանակը։ Դորա ապացոյց համարում եմ նոյն գրուածքի այն օտարոտի յիշատակութիւնը, թէ Կոմիտաս բաներ է հրատարակել ս. Սահակի անունով, որի համար դժուար կլինի ուրիշ բացատրութիւն գտնել, բայց եթէ այն, որ Թղթոց գիրքը սկսուում է ս. Սահակի և Պրոկղ ու Ակակ եպիսկոպոսների մէջ տեղի ունեցած թղթակցութեամբ։ Հարց է այժմ, թէ արդեօք «Կնիք հաւատոյ» ժողովածուն էլ ի նկատի չի՞ առուել Կոմիտաս կաթուղիկոսին ընծայուած «բազում բանից» մէջ, որոնք քաղկեդոնական գրուածքում առանձնապէս յիշուում են այն պատճառով, որ Հայերի կողմից գործ էին ածուում քաղկեդոնականների հետ վիճելիս։

Այս ժողովածուի՝ նոյնութեամբ, ինչպէս որ մեր ձեռքն է հասել, Կոմիտաս կաթուղիկոսի օրով կազմուած լինելու նկատմամբ սկզբից և եթ կասկած էր յարուցանում այն հանգամանքը, որ նորա մէջ հատուածներ կան՝ Կոմիտասի ժամանակակից, բայց նրանից բաւական երկար ապրած, թէպէտ այստեղ իբրև վախճանեալ նկատուած՝ Յովհան Մայրագոմեցու անունով։ Այդ հանգամանքը իմ «Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի» շարադրութեան մէջ (Շողակաթ, 1913. ս. Էջմիածին. եր. 104.) աշխատել եմ բացատրել նորանով, որ ժողովածուի բուն կազմողը եղել է Մայրագոմեցին, և իւր անունը կրող հատուածները կամ ինքն է բերել ի պաշտպանութիւն այս կամ այն դաւանական կէտի, իսկ մի ուրիշը յետոյ վերնագիրները դրել, կամ մի երկրորդ խմբագրութեան ենթարկուած միջոցին աւելացրել է



նորա համախոհներից մէկը՝ Սակայն յետոյ ժողովածուի կազմութիւնը կրկին և կրկին անգամ ուշի ուշով դիտելով՝ եկայ այն եզրակացութեան, որ ուրիշ ակներև նշաններ ու ապացոյցներ կան, թէ նոյն դրութեամբ չէ մնացել, ինչպէս խմբագրուած պիտի լինէր Կոմիտաս կաթուղիկոսի ժամանակ, այլ փոփոխութեան է ենթարկուել, և նոր նիւթեր են աւելացել վրան։ Պարզ նկատելի է, որ իւրաքանչիւր գլխի սկզբում նիւթերը դասաւորուած են մի որոշ, թէպէտ ոչ բոլորովին ճշգրիտ, ժամանակագրական կարգով. նախ յետ-առաքելական շրջանի և հին եկեղեցւոյ հայրեր, ապա Դ. և Ե. դարերի, ապա մեր եկեղեցւոյ հայրեր (բացառութեամբ ս. Լուսաւորչի, որ նախնի հայրերի շարքում է դրուում)։ Այս կարգը խանգարուում է միայն այն գլուխներում, ուր Մայրագոմեցու անունը կրող հատուածներից յետոյ ուրիշ նիւթեր կան։ Այդպէս՝ առաջին իսկ գլխում Մայրագոմեցու հատուածից յետոյ գալիս է (եր. 56) Սեբերիանոս, որ Ոսկեբերանի ժամանակակիցն է և որի ճառերից բերած վկայութիւնները շարունակութեան մէջ էլ կամ զուգորդուած են Մայրագոմեցու հատուածների հետ, կամ նոցա պէս սահման են կազմում և գլուխների վերջում դրուում։ Այդ վկայութիւնը գոնէ Եզնիկ Կողբացու հատուածից առաջ պիտի դրուած լինէր, ինչպէս և Նիկիոյ ժողովի «Սահմանք հաւատոյ»ն նոյն ժողովի միւս «Սահմանք»ի մօտ (եր. 17), եթէ նոքա սկզբնական ժողովածուի մասերը լինէին։ Ապա տարակուսանքի առիթ է տալիս ս. Աթանասի Եպիկտեա եպիսկոպոսին գրած թուղթը. որ «Թուղթ հերձուածողաց» է համարուել այստեղ. եթէ բուն կազմողն է բերել այն ժողովածուի մէջ, չէր կարող այդպիսի կասկած ունենալ նորա մասին. բայց յետոյ էլ աւելացրած լինել չէին կարող, եթէ այդպէս կասկածէին. կմնայ ուրեմն ենթադրել, որ ժողովածուի մէջ այս թուղթը վկայութիւն բերողն ու վերնագիրը դնողը տարբեր անձինք են, կամ որ յամենայն դէպս սկզբնական դրութեամբ չի մնացել այն։ Պակաս անհասկանալի չէ նաև թէ ինչու ժողովածուն կազմողը Գրիգոր Սքանչելագործի անուամբ երկու հատուածներ սկզբում կբերէր (եր. 15—17), իսկ ուրիշ հատուածներ նոյն գլխի տարբեր տեղում (եր. 71—78), այն ևս կրկնելով նոյն «Հաւատամք»ը՝ առաջին տեղում անմիջապէս կցուած իբրև շարունակութիւն մի օտար հատուածի, իսկ երկրորդ տեղում առանձին վերնագրով։ Իրենց տեղում չեն նաև ս. Բարսեղի անունը կրող հատուածները, մանաւանդ որ կասկածելի ծագում ունեցող և այնքան երկար «վիճաբանութիւնը» ամենևին յարմար նիւթ չէր այնպիսի մի ամփոփ ժողովածուի համար, ինչ-

պիսին եղել է ըստ երևութին նախնական «Կնիք հաւատոյ»ն։

Բ. գլխում ևս Մայրագոմեցու անուան հատուածից յետոյ (եր. 146) գալիս են ընդարձակ հատուածներ ս. Լուսաւորչի վարդապետութիւնից, որ շատ առաջ պէտք է գրուած լինէին, եթէ նախնական ժողովածուի մաս կազմէին։ Ապա հետևում են ընդարձակ հատուածներ Կիւրեղ Աղէքսանդրացուց, յետոյ Ոսկեբերանից, յետոյ դարձեալ Կիւրեղ և կրկին Կիւրեղ, այն ևս մեծագոյն մասը քաղուած Տիմոթէոսի հակաճառութիւնից (եր. 167—210), որ արդէն «Կնիք հաւատոյ»ից առաջ հայ եկեղեցականների ձեռքում դաւանական վէճերի մէջ խիստ գործածական մի ձեռնարկ էր, և հասկանալի չէ, թէ ինչու այդքան խոշոր մասեր կվերցուէին նորանից մի նոր ժողածու կազմելու համար, և ինչու մէջ կբերուէին այստեղ՝ Տիմոթէոսից ու Հայոց եկեղեցական հայրերից էլ յետոյ։ Գ. և Դ. գլուխները թերի և իրար հետ խառնուած լինելով՝ նոր նիւթ չեն տալիս յիշեալ տեսութեան համար։ Ե. գլուխը վերջանում է Մայրագոմեցու, Զ.ը Սեբերիանոսի հատուածով. ուրեմն եթէ մի նոր բան աւելացել է՝ պէտք է միայն այս վերջին հատուածները լինին։ Նոյնը պիտի ասէինք նաև Է. գլխի մասին, որ վերջանում է Մայրագոմեցու և Սեբերիանոսի հատուածներով միանգամայն. բայց Ը. գլխի վերջում նկատուող մի երևոյթ տարակոյսի մէջ է ձգում նաև այս գլխի նիւթերի նկատմամբ։ Այնտեղ Մայրագոմեցու հատուածից յետոյ ամէնից վերջում (եր. 389) գրուած է մի հատուած Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքից, որի իբրև թարգմանիչ մեզ յայտնի է Ը. դարի նշանաւոր հեղինակ Ստեփաննոս Սիւնեցին։ Նիւսացու այդ գրուածքը մեր ձեռագիրներում սովորաբար կից է և նախադասուած՝ թիւրիմացութեամբ նորան վերագրուող, բայց իսկապէս Նեմեսիոսի գործ՝ «Յաղագս բնութեան մարդոյ» գրուածքին, որ հրատարակել են Վենետիկի Մխիթարեանք (Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ՝ Յաղագս բնութեան մարդոյ. Վենետիկ 1889—91) և որի մասին շահեկան ծանօթութիւններ կարելի է գտնել Հ. Տաշեանի Մանր ուսումնասիրութեանց մէջ (Ազգային մատենադարան ԺԶ. Վիեննա, 1895)։ Սովորաբար այս երկրորդ գրուածքից, բայց մի քանի ձեռագիրներում էլ առաջինից յետոյ (օր. Հ. 453=416 և Հ. 460=421) յիշատակարան ենք գտնում, որի մէջ որոշ կերպով ասած է, թէ այդ գրքերը թարգմանել է «Ստեփաննոս քահանայ և քերթող աշակերտ Տեառն Մովսիսի Սիւնեաց եպիսկոպոսի», և գրուած են մի քանի իրար չյարմարուող թուականներ, որոնց մէջ ճիշտը, ինչպէս Հ. Տաշեան ստուգում է, պիտի լինի 716 կամ 717 թ. ը։



Օրբէլեան ևս վկայում է (Պատմութիւն տանն Սիսական. եր. 98) Ստեփաննոս Սիւնեցու մասին թէ՝ «Թարգմանէ և զգիրս քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ՝ զԲնութեան և զԿազմութեան»։ Արդ, մինչդեռ Դիոնիսիոս Արիսպագացուց մեր ժողովածուի մէջ բերած հատուածները տարբեր թարգմանութիւն են, քան նոյն Սիւնեցու կատարած և բազմաթիւ օրինակներով մեր ձեռքը հասած թարգմանութիւնը, Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքի երկու հատուածներն էլ (մէկը Է. գլխում. եր. 207) նոյն թարգմանութիւնն են, ինչ որ Սիւնեցունը։ Անկասկած ուրեմն նոքա չէին կարող Է. դարի սկզբում կազմուած ժողովածուի մէջ գտնուել, այլ պէտք է յետոյ աւելացուած լինին։

Նոյնը հետևում է ըստ ինքեան Կիւրեղ Աղէքսանդրացու ԺԲ. նզովքների և նոցա մեկնութեանց համար (եր. 229), որ վերցուել են դարձեալ Ստ. Սիւնեցու թարգմանած Պարապմանց գրքից, մինչդեռ այս նոյն գրքի մէջ մտնող ուրիշ հատուածներ (եր. 348 և 349) տարբեր թարգմանութեամբ են, ինչպէս և նորան կից թարգմանուած Աթանասի առ Եպիկտետ թուղթը։ Եթէ նայենք վերև յառաջ բերած տեսութեան, թէ վերջին խմբագրողը այն հատուածներն է միայն աւելացրել, որ Մայրագոմեցու հատուածներից յետոյ են գրուած, կմնայ բացատրել, թէ հապա ինչպէ՞ս Մարդակազմութեան հատուածներից մէկը (Է. գլխում) իւր յարմար տեղում է դրած՝ Մայրագոմեցուց և ուրիշ ժամանակակից կամ աւելի ուշ ժամանակի հայրերից առաջ։ Բացատրութիւններ կարելի է գտնել հարկաւ. մտածել օրինակ, որ նոր խմբագրողը հնի մէջ նոյն տեղում մի ուրիշ հատուած է գտել Գրիգոր Նիւսացու անունով, կամ նոյն հատուածի մի մասը (ինչպէս և Տօնականների մէջ մի մասն է միայն բերուում), իսկ ինքը դրել է իւր հաւանած ամբողջը նոր թարգմանութեամբ. բայց եթէ ընդունենք իսկ, թէ նա ոչ միայն գլուխների վերջում է նոր նիւթեր աւելացրել, այլ տեղ տեղ նաև միջում, դարձեալ ժողովածուի կազմութեան ակնարկուած յատկանիշները մնում են ուշադրութեան արժանի. մանաւանդ որ շարունակութեան մէջ էլ նման երևոյթներ ենք նկատում։ Ինչպէս դիտուեցաւ արդէն նախաբանում, ժողովածուիս Թ. գլխի վերջը պէտք է համարել թ. 229 r. (եր. 341) «ոչ զիւր ստեղծուածն պատժէ, այլ զմեղսն սրբէ» նախադասութիւնը, որից յետոյ եթէ շարունակութիւն եղել է, ընկել է, ինչպէս և Ժ. գլխի սկիզբը. իսկ յաջորդ «Եթէ չէ խառն ընդ արդարութեանն» հատուածը թիւրիմացութեամբ է Սեբերիանոսի անուան տակ մտել, այլ մասն է ամենայն հաւանականութեամբ Ժ. գլխի և Նիկիական կամ նախնական շրջանի

հայրերից մէկի գրուածքից վերցրած, քանի որ Նիկիական հայրերի վկայութիւններից առաջ է դրուած։ Այսպիսով Թ. գլուխը վերջացած ենք տեսնում դարձեալ Մայրագոմեցու և Սեբերիանոսի Էբար կից հատուածներով. իսկ Ժ. գլխի վերջում Մայրագոմեցու հատուածից յետոյ գտնում ենք մի հատուած Կիւրեղ Աղէքսանդրացու, որ սպասելի էր նոյն հեղինակից բերած ուրիշ հատուածների հետ իւր տեղում (եր. 355), եթէ նախնական խմբագրութեան պատկանէր, և «Հաւատամք»ի մեկնութիւն, որ եթէ նախնական ժողովածուի համար իբրև վերջաբան չի ծառայել և այդ պատճառով այստեղ ես վերջում դրուել, հարկ կլինի փոխել իմ սորա մասին առաջ յայտնած կարծիքները (Տողակաթ. եր. 103—104)։

«Հաւատամք»ի այս մեկնութիւնը գտնելով մի ձեռագրի մէջ իբրև «Հաւատոյ արմատ» անուն գրքից վերցուած մի դրուագ, այն եզրակացութիւնն էի հանել, թէ ուրեմն «Կնիք հաւատոյ» ժողովածուն, որի մէջ է այդ դրուագը, կոչուել է նաև «Հաւատոյ արմատ», և որովհետև իբրև հեղինակ «Հաւատարմատ» անունով մի գրուածքի յայտնի է Կոմիտաս կաթուղիկոսի ժամանակ վարդապետութեամբ փայլող և նորա մօտ մեծ վարկ ունեցող (Ասողիկ. Տիեզ. պատմութիւն Պետերբուրգ, 1885. եր. 87) Յովհան Մայրագոմեցին, ուստի ընդունեցի այդ իբրև մի նոր զօրեղ փաստ վերև յիշած այն կարծիքի, թէ Մայրագոմեցին է եղել ժողովածուն կազմողը, որով և նա գրած պիտի լինէր «Հաւատամք»ի մեկնութիւնը և վերջաբան դարձրած ժողովածուի համար։ Այժմ, եթէ յետոյ աւելացրած համարենք բոլոր այն նիւթերը, որոնք ժողովածուի մէջ Մայրապոմեցու անունը կրող հատուածներից յետոյ են գալիս, այդ մեկնութիւնն էլ դուրս կմնայ նախնական ժողովածուից և Մայրագոմեցու գործ չի լինի։ Բայց տեսանք, որ այս տեսութիւնը կէտ առ կէտ չի ճշտուում, և ինչպէս որ Նիւսացու Ը. դարում թարգմանուած երկի հատուածը Է. գլխի մէջ է մտել, այնպէս էլ «Հաւատամք»ի մեկնութիւնը կարող էր նախնական ժողովածուի մէջ եղած լինել, և համուել վերջը դրուել, որովհետև մի տեսակ ամփոփումն է նախընթաց վկայութիւնների։ Ցամենայն դէպս՝ թէ նախնական ժողովածուն «Հաւատոյ արմատ» կոչուած լինի, թէ յետոյ խմբագրուածն ու մեր ձեռքը հասածը, տեսնում ենք, որ այդպէս կոչուել է նոյնը, ինչ որ նաև «Կնիք հաւատոյ» է կոչուում. եթէ միայն աւելի հեռու չգնանք և չհամաձայնենք Պրոֆ. Իորդանի յայտնած այն կարծիքին (Arm. Irenäusfragmente, S. 163), թէ նախնականն է իսկապէս «Հաւատոյ արմատ» կոչուել, որ և ընդհանուր աղբիւր է եղել ինչպէս Ներկայ «Կնիք հաւատոյ» ժողովածուի, այնպէս և ուրիշ միջնադա-



րեան «հաւատարմատների», որոնց մասին յետոյ խօսք կլինի։ Այդ դէպքում աւելի հաստատուած կլինէր այն ենթադրութիւնը, թէ նախնական ժողովածուն եղել է Յովհան Մայրագոմեցու «Հաւատարմատ»ը. բայց ինձ թուում է, թէ «Կնիք հաւատոյ» անունը աւելի հին է և սկզբնական, իսկ «Հաւատոյ արմատ» կամ «Հաւատարմատ» միջնադարեան աւելի ժողովրդական անունն է, որ մի անգամ ընդհանրալուց յետոյ որոշ տիպի գրուածների համար՝ կարող էր տրուել նաև նոյն տիպի այնպիսի մի ժողովածուի, որ նախկին դարերում «Կնիք հաւատոյ» է կոչուել. ուստի անունների տարբերութիւնը ամենևին չի դժուարացնում, ինչպէս ենթադրում է Պրոֆ. Իորդան (եր. 119), «Կնիք հաւատոյ» անունը կրած դէպքում էլ ժողովածուի խմբագիր Մայրագոմեցուն համարել։

Վերև յիշուած աշխատութեանս մէջ բերելով «Ցառաջագիր թղթոցն Խրատ վարուց» վաւերագիրը (Տողակաթ եր. 118), որի համաձայն Մայրագոմեցին 24 թուղթ պիտի գրած լինի «Ի խրատ հաւատոց», ենթադրում էի (եր. 103), թէ հաւանականաբար այդ թղթերից են քաղուել այն հատուածները, որ «Կնիք հաւատոյ»ի մէջ Մայրագոմեցու անունն են կրում և որոնց վերնագրների մէջ պահուած է երևում նոյն թղթերից 3-ի վերնագիրը՝ «Բան վասն տնօրէնութեան Փրկչին», «Բան հաւատոյ», «Բան վասն չարչարանաց ևլն.»։ Յայտնել էի նաև այն կարծիքը, որ եթէ Մայրագոմեցին մի կողմից ժողովածու է կազմել եկեղեցական հայրերի վկայութիւններից և միւս կողմից ինքը մի շարք ճառեր կամ թղթեր գրել հաւատոյ խնդիրների վերաբերեալ՝ հաւանական է, որ վերջիններս եղած լինին առաջինների համար այնպիսի պարզաբանող յաւելուածներ, ինչպիսինները տուել է Տիմոթէոս Կուզը իւր Հակաճառութեան մէջ, որ անկասկած շատ բաներում օրինակ է եղել մեր ժողովածուն կազմողին՝ մատակարարելով նաև նորա նիւթի մի խոշոր մասը։ Պատճառ չեմ գտնում այժմ ես յետ կանգնելու այդ ենթադրութիւններից, այլ կաւելացնեմ միայն, թէ գուցէ, ինչպէս ժողովածուն Կոմիտասի անունով է մեր ձեռքը հասել՝ նորան կից ճառերն էլ հրատարակուած են եղել պաշտօնապէս նոյն կաթուղիկոսի անունով, և այդ է ակնարկում De rebus Armeniae-ի հեղինակը՝ ասելով Կոմիտասի մասին, թէ «Բանս բազումս արար»։

Արդեօք սկզբնական ժողովածուն նոյն գլուխների բաժանումն է ունեցել, ինչ որ մեր ձեռքը հասածը, և Մայրագոմեցու սեփական ճառերից իւրաքանչիւրը ամէն մի գլխին առանձին կցուած է եղել, թէ բոլորը մէկտեղ վերջումն էին դրուած՝ դժուար է մի որոշ բան ասել։ Ուշադրութեան արժանի է այս նկատմամբ

Թ. գլխի մէջ գտնուող ծանօթութեան (եր. 327) այն կէտը, թէ Փիլիքսիանոսից բերած վկայութիւնը, որ այլ ևս չի ուզում կրկնել, պէտք է որոնել վերև՝ ի «ԻԵ. բանէն»։ Մատնանշած տեղում ԻԵ. բանի նշան չկայ, և կարելի է մտածել, թէ սկզբնական ժողովածուի մէջ է այդ հատուածը «ԻԵ. բանի» մասը կազմել և թէ գուցէ այդչափ շատ բաժանմունքներ ունենալուն համեմատ է, որ Մայրագոմեցու համար յիշուում են 24 թղթեր գրած «ի խրատ հաւատոյ». բայց չեմ կարծում. աւելի հաւանական է, որ 10 գլուխների բաժանումն սկզբից և եթ եղած լինի և միայն վերոյիշեալ արտաքին փոփոխութիւններին ենթարկուած։ Ցամենայն դէպս երկրորդ խմբագրողի առաջ ժողովածուի հետ եղել են նաև Մայրագոմեցու թղթերը, և նա նպատակ դնելով երեւի եկեղ. հայրերի վկայութեանց մի զուտ հաւաքածոյ տալ, Մայրագոմեցուն էլ համարելով այդ հայրերից մէկը՝ նորա բուն գրուածները մի կողմ է թողել և նոցանից իւր աչքում կարևորագոյն երեւցած հատուածները միայն քաղելով կցել միւսներին։ Գուցէ Սեբերիանոսի ճառերը նորան առանձնապէս սիրելի և ընտանի մի գրուածք են եղել, որ նոցանից քաղած վկայութիւններն էլ կցել է Մայրագոմեցուց վերցրածներին, կամ գլուխների վերջում դրել։ Իսկ այն հանգամանքը, որ յաւելեալ մասերի մէջ տեսնում ենք ընդարձակ հատուածներ Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» և Կիւրեղ Աղէքսանդրացու «Պարապմանց» գրքերից՝ երկուսն ևս թարգմանութիւն Ստեփանոս Սիւնեցու, և որ նոյն Սիւնեցին բերում է Գ. Տէր Մկրտչեանի հրատարակած իւր գրուածքի մէջ (Արարատ, 1902. եր. 392) մեր ժողովածուի Մայրագոմեցու անունը կրող հատուածներից մէկը (եր. 253) իբրև «Ցոհան Իմաստասէր»ի խօսք, ըստ ամենայնի համամիտ գտնուելով նորա դաւանական տեսութիւններին՝ ենթադրել է տալիս, թէ նա ինքը եղել է հաւանականաբար ժողովածուի երկրորդ խմբագրողը։ Ըստ այսմ, մօտաւոր ճշտութեամբ որոշած համարելով սահմանը սորա կողմից աւելացրած նիւթերի և նախնականի մէջ՝ տեսնենք թէ եկեղեցւոյ ո՞ր հայրերի ի՞նչ գրուածները վկայութեան են բերուած այստեղ և ընդհանրապէս ի՞նչ ունի պահած մեր նախնի գրականութիւնը այդ հայրերից։

---

Առաջին տեղը բռնում են Դիոնիսիոս Աթենացին և նորա ենթադրական ուսուցիչ Ցեռոթէոս փիլիսոփան, որոնք մեր եկեղեցում տօնուող ընդհանրական եկեղեցւոյ երկոտասան վարդապետների շարքում ևս առաջին տեղն են բռնում, որովհետև իբրև



Գործք ԺԷ. 34 յիշուած Պօղոս առաքեալի աշակերտն է նկատուել այս Դիոնիսիոսը. իսկ նորա Ցունաց արիոպագից վերցրած Արիոպագացի կոչումն էլ շատ հին ժամանակներից ի վեր տառասխալով է գրուել մեզնում և դարձել է Արիսպագացի։ Ներկայումս իբրև ստուգուած ու հաստատուած մատենագրական ճշմարտութիւն պէտք է համարուի, որ այդ անունը կրող գրուածների հեղինակը կարող է ապրած լինել միայն Ե. դարի վերջերում և որ նա վերցրել է ուրեմն իւր վրայ Դիոնիսիոս Արիոպագացու անունը՝ իւր երկասիրութիւնների համար վարկ ստեղծելու նպատակով։ Առաջին անգամ վկայութեան են բերել այդ գրուածները Սևերեանները՝ Քաղկեդոնականների դէմ վիճելիս, Զ. դարի երկրորդ քառորդին. բայց շուտով հակառակորդներն էլ սկսել են ճանաչել նոցա հեղինակութիւնը։ Ընդունելութիւն գտան ու մեծ կարևորութիւն ստացան նոքա ընդհանուր եկեղեցւոյ մէջ մանաւանդ Է. դարու վերջերին, երբ Միակամայից դէմ 2 կամքի վարդապետութեան եռանդուն ջատագով Մաքսիմոս Խոստովանողը (+ 662 թ.) պաշտպանեց նոցա վաւերականութիւնը և գրեց նոցա մեկնութիւնը։ Ինչպէս տեսնում ենք, մեզանում էլ այդ գրուածները շատ վաղ են մուտ գործել և հեղինակութիւն ձեռք բերել. բայց եթէ մեր ժողովածուի հատուածները Է. դարի սկզբում անմիջապէս յունարէնից չեն թարգմանուել, այլ կեղծ Արիոպագացու այս կամ այն գործի հայերէն թարգմանութիւնը կար արդէն, հաւանականաբար բոլոր գրուածների ամբողջական թարգմանութիւն չի եղել, որ Ստեփանոս Սիւնեցին Ը. դարում կարիք է զգացել ամբողջը թարգմանելու։ Բազմաթիւ ձեռագիրներում ունինք այժմ այդ թարգմանութիւնը, որի վերջում նոյնպիսի յիշատակարան կայ, ինչպէս Նիւսացու գրուածների թարգմանութեան վերջում. բայց այդտեղ ոչինչ չի ասուած մեկնութեան մասին. մինչդեռ ըստ Օրբէլեանի (Պատմութիւն տանն Սիսական եր. 98) Սիւնեցին «թարգմանէ զգեղեցիկ գիրս սրբոյն Դիոնիսիոսի, և ինքն դնէ դժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան»։ Իմ աչքի անցրած բազմաթիւ ձեռագիրներից միայն մէկի մէջ (Հ. 70=51) մեկնութիւնները պակասում են. միւս բոլորի մէջ նոքա հատուած առ հատուած հետևում են բնագրին՝ երբեմն նոյն, երբեմն տարբեր գրով։ Ստեփանոս Իլովացին, որ ԺԷ. դարում լատիներէնից թարգմանել է կրկին Դիոնիսիոսի բոլոր գրքերը՝ հին թարգմանութիւնը շատ տեղ դժուարիմաց և բնագրին անհամապատասխան գտնելով, իւր յառաջաբանի մէջ ասում է, թէ նախկին թարգմանութեան կցուած մեկնութիւնները Սիւնեցու գործ չեն այլ Մաքսիմոսի, այն ևս թերի.

ինքը տալիս է լրիւ թարգմանութիւնը, իւր կողմից էլ «իւրաքանչիւր մասին ընդարձակ մեկնութիւն» շարադրում, ուրիշ տեղերից ևս բերում «Բազում բանս մեկնողականս» (Տես. Զարբհ. Հայկ. Թարգմանութիւնք նախնեաց. Վենետիկ, 1889. եր. 391)։ Առանց մեկնութեան գտնուած օրինակը մնացել է, կարծես, վկայելու, թէ Սիւնեցին չէ թարգմանել Մաքսիմոսի մեկնութիւնը, որին բոլորովին հակառակ էր նա իւր դաւանաբանական հայեացքներով, այլ թէ հաւանականաբար յետոյ մի ուրիշը թարգմանել է այն և կցել նորա աշխատութեանը։ Բայց հնումն էլ այդ մեկնութեամբ չեն բաւականացել, այլ ԺԴ. դարի սկզբին վարդապետաց վարժապետ նշանաւոր Եսայի Նչեցին իւր «Հոռոմի այրեցի» մի աշակերտի ձեռքով (բնագիրը, մեկնութիւնը և լուծմունքը) սիւնեակ սիւնեակ գրուած և միր մատենադարանում պահուած Հ. 67=107 ձեռագրի լուսանցքներում գրել է իւր ձեռքով՝ լուծմունս «դժուարալոյծ բանիցն» Դիոնիսիոսի։ Այնուհետև դարեր շարունակ Արիսպագացին մի կարևոր դասագիրք է եղել Նչեցու դպրոցում և նորանից ճիւղաւորուած վարդապետարաններում, և նորանոր լուծմունք գրել են՝ Գրիգոր Տաթևացին (Նչեցու աշակերտ Յովհան Որոտնեցու աշակերտը), նորա աշակերտ Գէորգը, Դաւիթ և Յակոբ վարդապետներ. իսկ սոցա լուծմանց և մեկնութիւնների հաւաքածուն կազմել է մի Աբրահամ վարդապետ ՌՃՁԲ թ. ին. այնպէս որ մի բարդ գրականութիւն է յառաջացել կեղծ Դիոնիսիոսի գրուածների շուրջը, որ բաւական ընդարձակ տեղ է բռնում հայերէն ձեռագրերի մատենադարաններում և որի նախնական նմոյշներն է ընծայում ահա մեր ժողովածուն։ Ինչ որ այստեղ գտնում ենք Ցեռոթէոս (կամ ըստ մեր տօնացոյցի՝ Ռեթէոս) փիլիսոփայի անունով՝ վերցուած են նոյն Դիոնիսիոսի գրուածներից, որոնց մէջ մի քանի խրթին տեսութիւններ նա ինքը վերագրել է իւր մտացածին և երբէք գոյութիւն չունեցած ուսուցչին՝ հարկաւ կեղծիքը աւելի ևս թանձր վարագոյրի տակ դնելու նպատակով։ Կեղծ Դիոնիսիոսին վերագրուած կրկնակի կեղծ գրուածներ էլ կան, նաև հայերէն թարգմանուած ու հրատարակուած. ինչպէս և նորա կեղծ ինքնակենսագրութիւնը յաճախակի պատահում է մեր ձեռագրերում (Հրատ. տես. Հանդէս Ամսօրեայ, 1913. նոյեմբեր. եր. 642 շ. շ.)։

Երկրորդ տեղը մեր ժողովածուի հեղինակաւոր հայրերի մէջ, բայց ժամանակագրական կարգով իսկապէս առաջինը՝ բռնում է քրիստոնէութեան Բ. դարու ամենից աչքի ընկնող հեղինակ, Լուգդունումի (Լիոնի) պատկառելի եպիսկոպոս և նահատակ, ս. Իրենէոսը, որի գրուածներից մինչև վերջին ժամանակներս յայտնի էր միայն, լատիներէն թարգմանութեամբ, «Ընդդէմ հերձուածոց» 5 գրքից բաղկացած բազմաբովանդակ երկասիրութիւնը։ Ես գտայ հայերէն թարգմանութեամբ սորա Դ. և Ե. գրքերը (հրատ. Ե. Տէր Մինասեան. Irenäus. Gegen die Häretiker, Leipzig 1910) ու այլ ևս մի անյայտ մնացած երկը՝ «Ցոյցք առաքելական քարոզութեանն», որ հրատարակեցինք Ե. Տէր Մինասեանի հետ գերմաներէն թարգմանութեամբ (Des heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung. Leipzig, 1907), որ և շուտով լոյս կտեսնէ անգլիերէն թարգմանութեամբ Patrologia orientalis ժողովածուի մէջ Փարիզում (Ռուսերէն թարգմանութիւնը գերմաներէնից, պրոֆ. Սագարդայի աշխատութեամբ՝ տպուած է Христiанское чтенiе ամսաթերթում, 1907)։ Ինչպէս յիշեցի, մեր ժողովածուի մէջ գտնուած 7 հատուածները հրատարակել է արդէն պրոֆ. Իորդան՝ գերմաներէն թարգմանութեամբ և լուսաբանութիւններով։ Սոցանից առաջինը (եր. 101), ինչպէս իւր տեղում ցոյց է տուած, վերցուել է Տիմոթէոսի Հակաճառութիւնից, որից առնելով նախօրօք հրատարակել էի «Արարատ»ի մէջ (1897. մայիս. եր. 204). առաջ ևս կար հրատարակուած մի Վենետիկեան ձեռագրից, մեր մատենադարանի մի քանի ձեռագիրներում էլ առանձին գտնուում է (Հ. 921=948, 911=966, 943=1525), բոլորը նոյն թարգմանութեամբ, բայց աւելի ու աւելի սրբագրած և հայացրած՝ բազմաթիւ տարբեր ընթերցուածներով։ Բ. հատուածը վերցուել է «Ցոյցք»ից, ինչպէս ցոյց եմ տուել իւր տեղում (եր. 243). նոյնը գտնուում է «Արմատ հաւատոյ» միջնադարեան քաղուածքի մէջ, որի մեր մատենադարանի Հ. 1946 ձեռագրից վերցնելով հրատարակել եմ նախորդի հետ «Արարատ»ում. առաջ էլ կար հրատարակած փարիզեան մի ձեռագրից։ Նոյնը վկայութիւն է բերուած Ստեփանոս Իմաստասիրի, Գագիկի և այլ դաւանաբանական թղթերի մէջ։ Գ. հատուածի նկատմամբ իւր տեղում (եր. 243) տուած ցուցումների վրայ պրոֆ. Իորդան աւելացնում է, որ «Բանզի թե մարդ—ընդունել անապականութեանն» պատառիկն էլ առնուած է «Ընդդէմ հերձուածոց» Գ. գրքից և միայն սորա նախընթաց տողերի աղբիւրն անյայտ է մնում։ Ե. հատուածի առաջին 6 տողերը ինչ ինչ տարբերութիւններով կրկնուում են Զ. ի մէջ (եր. 295. տող 3—8). ամբողջն ըստ Իորդանի Իրենէոսի մի վաւերական գրուածից պիտի վերցուած լինի, բայց որից՝ յայտնի չէ։ Զ. և Է. հատուածները (եր. 293—299) նա ցոյց է տալիս յերիւրած ըստ մեծի մասին Իրենէոսի մեզ յայտնի երկերի պատառիկներից, և այն սակաւ

մասերն էլ, որոնց աղբիւրը չի գտնում, վաւերական է համարում։ Զ. ի վերնագրի «Սատորնին» բառը նորա կարծիքով աղաւաղումն է Բ. դարու ամէնից աչքի ընկնող Գնոստիկեաններից մէկի՝ Սատորնինի կամ Սատորնիլի անուան. ուրեմն և այդ հատուածը, որի մէջ ժամանակակից ուրիշ գնոստիկեաններ էլ յիշուում են, առընչութիւն պիտի ունենայ նոյն հերձուածողի դէմ ուղղուած մի գրութեան հետ։ Իսկ այն Կողարբոսը, որ յիշուում է Է. հատուածի վերնագրում, նոյնպէս Բ. դարու գնոստիկեաններից է, որի անձի և ուսման մասին շատ քիչ բան է յայտնի, գոյութիւնն իսկ կասկածելի էր ոմանց համար։ Ներկայ հատուածն ըստ Իորդանի բաւական լոյս է սփռում նորա վրայ և կարող է այս կազմութեամբ էլ Իրենէոսի մի առանձին գրուածքը լինել, և ոչ թէ նորա միւս գործերից քաղուած։

Գ. ը մեր ժողովածուի «հոգեկիր» հայրերից, ժամանակագրական կարգով Հիպպողիտոն է, ս. Իրենէոսի աշակերտը, ամենաբեղմնաւոր մի հեղինակ Գ. դարում, վախճանած 236 կամ 237 թ. ին։ Լաւ չի պարզուել դեռ, թէ ինչու նա «Բոստրացի» է ասուում շատ տեղ, մինչդեռ եղել է իրօք հակաթոռ եպիսկոպոս Հռոմում։ Ժողովածուի մէջ նորա անունը կրող միակ հատուածի մի մասը՝ առնելով մեր մատենադարանի Գ. 95=2678 ձեռագրից, հրատարակել եմ, և այդ առթիւ կենսագրական ու մատենագրական տեղեկութիւններ տուել՝ «Արարատ»ի մէջ (1896, փետրուար, եր. 58)։ Հատուածի ամբողջութիւնից պարզուում է այժմ, ինչպէս մասնաւոր նամակում դիտել էի և Իորդան յիշում է իւր գրքի մի ծանօթութեան մէջ (եր. 112), որ Հիպպողիտի գործ լինել չի կարող, քանի որ մէջը յիշուած են Դ. դարում հանդէս եկող արիոսականները։ Մ. Աթոռի մատենադարանում Հիպպողիտի անուամբ կայ «Ի յարութիւնն Ղազարու» հատուածը Հ. 911=966, 915=944, 937=1523, 943=1525, 945=996 ձեռագիրներում. «Վասն Կատարածի աշխարհի» Թ. դարու կեղծիքը Հ. 915=944. Գ. 483, Գ. 485 և այլ ձեռագիրներում. «Ի յարութիւնն Քրիստոսի» Հ. 940=993 ձեռագրում (p. 473 v). բոլորն էլ յայտնի են ու հրատարակուած, ինչպէս նաև մի քանի ուրիշ հատուկտորներ «Արմատ հաւատոյ» քաղուածքից և ուրիշ տեղերից։ Ըստ նոր ցուցակի № 4066 ձեռագրում (p. 334 r.—349 v.) գտնուում է Հիպպողիտի «Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցս» (ՉԼԲ=1283 թ. ին արտագրուած Ներսէս Լամբրոնացու օրինակից), որը պատրաստում է հրատարակութեան համար Տ. Գարեգին վարդ. և որի մասն է «Ի յարութիւնն Քրիստոսի» հատուածը։ Ես հրատարակելու պատրաստ ունիմ Գ. 482=3795 ձեռագրից



(p. 5 v.) արտագրած՝ «Մեկնութիւն Թագաւորութեանն, որ վասն Դաւթի և Սաւուղա և կործանելոյն Գողիաթի՝ Յոհաննու Ոսկեբերանի և Եփրեմի և Հիպպոլիտեա ասացեալ» մի բոլորովին անծանօթ հատուած։

Դ. տեղը նոյն կարգով պատկանում է Աղեքսանդրեայ ականաւոր հայրապետ ս. Դիոնիսիոսին, որ ծնուած պիտի լինի Բ. դարի վերջերին հեթանոս ծնողներից, իսկ վախճանել է 265 թ. ին՝ բազմակողմանի բեղմնաւոր գործունէութեամբ։ Նորա գրուածներից, որոնց թւում յիշում է Եւսեբիոս իւր Եկեղեցական պատմութեան մէջ մի թուղթ Հայոց Մեհրուժան եպիսկոպոսին ուղղած, մնացել են միայն հատուկտորներ, այն ևս շատը կասկածելի վաւերականութեամբ։ Մեր ժողովածուի 2 հատուածներից մէկի համար իւր տեղում (եր. 104) ցոյց է տուած, որ Տիմոթէոսի Հակաճառութիւնից է վերցուել. իսկ միւսն ըստ Իորդանի (եր. 115. ծան. 5.) առընչութիւն ունի Pitra, Analecta Sacra. Bd. IV (1883), p. 176 հրատարակուած հայերէն հատուածի հետ։ Այդ հրատարակութիւնը աչքի տակ չունիմ. բայց մեր մատենադարանի Հ. 943=1525 ձեռագրում p. 75 v. կայ «Գրեալ է թէ այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ» սկզբնաւորութեամբ մի հատուած, որի մէջ մտնում է ժողովածուի եր. 105, տող 21 «և ծնաւ ի նմանէն մարդ կատարեալ» խօսքից մինչև վերջը, և շարունակուում դարձեալ 3½ էջ. գրեթէ նոյնչափ է նաև յիշեալ նախադասութեան նախընթաց մասը։ Յայտնի ու հրատարակուած հատուածներից մեր մատենադարանում գտնուում են՝ «Կալան Հրեայքն զՅիսուս» Հ. 945=996, «Յարեաւ այսօր ի մեռելոց» Հ 911=966. p. 280 v. և Հ. 940=993, p. 473 v., «Եհան Յիսուս զաշակերտսն ի Բեթանիա» Հ. 943=1525, p. 403 v. և «Ի վերայ յովանակի նստաւ» Հ. 921, p. 276 ձեռագիրներում։

Ե. Ս. Գրիգոր Սքանչելագործ, մօտ 213 թ. ին Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքում հեթանոս ընտանիքից ծնուած, 233—238 թ. ներին Պաղեստինի Կեսարիա քաղաքում ժամանակի ամենամեծ գիտնական Որոգինէսին աշակերտելով քրիստոնէութիւն ընդունած և իւր բազմարդիւն կեանքը 270 թ. ին կնքած Պոնտոսի առաքեալը, որի մասին կենսագրական և մատենագրական տեղեկութիւններ հաղորդել եմ «Արարատ»ում (1895, ապրիլ, եր. 111), հրատարակելով մեր մատենադարանի Հ. 920=940=993 ձեռագրից նորա անուամբ մի ճառ և 2 հատուած։ «Արարատ»ում հրատարակել եմ նաև (1896, փետրուար, եր. 60) Սքանչելագործի «Հաւատամք»ը, որ, ինչպէս վերև յիշուեց, 2 անգամ բերած է մեր ժողովածուի մէջ։ Նոյնը գտնուում է, բացի համե-

մատածներից. մեր մատենադարանի Հ. 541=580 ձեռագրում (p. 298 r.)։ Հաւանականաբար վաւերական է մեր ժողովածուի առաջին տեղում «Հաւատամք»ին կցած «Այլ անխուզելի» հատուածը (եր. 15), մինչդեռ երկրորդ տեղում (եր. 71—78) կցուած «Ցաղագս Երրորդութեանն» և յաջորդ հատուածները, ԺԲ. նզովքներն ու նոցա մեկնութիւնները ապացուցուած անվաւեր են, յայտնի հերձուածող Ապողինար Լաւոդիկեցու գրած, մօտ 380 թ. ին։ Բոլոր 12 նզովքները մեկնութիւնների հետ՝ նոյն թարգմանութեամբ, բայց բաւական տարբեր ընթերցուածներով և կրճատումներով, գտնուում են Գ. 102=2679 նշանաւոր ձեռագրում. իսկ սոցա «Խոստովանութիւն հնգից թուով» հատուածը, տարբեր թարգմանութեամբ, որ մէկն է վերոյիշեալ «Արարատ»ում տպուածներից, գտնուում է նաև Հ. 945=996 և Հ. 937=1523 ձեռագիրներում։ Նոյն տեղն «Արարատ»ում հրատարակած «Լուսաւորեաց Երուսաղէմ» ճառը գտնուում է նաև Գ. 404=2715 ձեռագրում. իսկ «Էր Աստուած և եղև մարդ» հատուածը Հ. 921=948 ձեռագրում (p. 286)։ «Արարատ»ում (1895, սեպտեմբեր, եր. 366) իմ հրատարակած մի ուրիշ ճառը՝ «Յորժամ յիշեմ զծնւայի սունգանելն», որ պրոֆ. Կոնիբիր անգլիերէն թարգմանելով՝ հարազատ է համարում (The Expositor, 1896. Jun.), գտնուում է Հ. 943=1525 (p. 39) և Հ. 945=996 (p. 101) ձեռագիրներում։ Սքանչելագործի անուամբ յայտնի և հրատարակուած ուրիշ ճառերից՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի» (միակ հարազատն այս շարքի մէջ, որ համեմատութիւններով և պարզաբանութիւններով հրատարակել է կրկին Հ. Ա. Վ. «Հանդէս Ամսօրեայ», 1912, օգոստոս, էջ 469—476. համմտ. յուլիս, էջ 392—398), գտնուում է Հ. 945=996, 940=993, 937=1523, 938=1524 և Գ. 493=2786 ձեռագիրներում. «Այսօր հրեշտակական դասուք» Հ. 940=993, 937=1523, 943=1525 և Գ 493=2786 ձեռագիրներում. «Զամենայն տաւնս և զաւրհներգութիւնս» Հ. 911=966, 940=993, 937=1522. 943=1525 և 945=996 ձեռագիրներում. «Բանն Աստուած մարմնացեալ» Հ. 937=1523, 940=993 և Գ. 493=2786 ձեռ. «Բանն Աստուած անքննին» Հ. 937=1523 և 940=993 ձեռ. «Արդարութեան այսաւր ծագեաց արեգակն» Հ. 945=996 և 1799=1798 ձեռ. «Հրաշափառ և ծայրագոյն աստուածայնոց» Հ. 940=993. p. 695 v։

Զ. Ս. Պետրոս Աղեքսանդրիոյ հայրապետը, որ նահատակուել է 311 թ. ին, ընդարձակ գրական աշխատութիւններ չի թողել և եղածներից միայն հատուկտորներ են մնացել՝ յունարէն, լատիներէն և ասորերէն լեզուներով, կամ ուրիշ եկեղեցական հարց գրուածների մէջ։ Ինչպէս մեր ժողովածուի հատուածը (եր. 103) Տիմոթէոսի Հակաճառութիւնից է վերցրած, այնպէս և նոյն Հակաճառութիւնից (եր. 3 և 5) 2 փոքրիկ հատուածներ յառաջ բերած գտնում ենք Գ. 102=2679 ձեռագրում (p. 302 r.)։

Է. Փիլիկէս Հռովմայ եպիսկոպոսապետի ով լինելը դժուարանում է որոշել պրոֆ. Իորդան. բայց հաւանականաբար այստեղ խօսքը Ֆելիքս Ա. ի մասին է, որ Հռովմի եպիսկոպոս է եղել 269—274 թ. ներին և որի անունով Աղէքսանդրիոյ Մաքսիմոս եպիսկոպոսին ուղղուած մի թուղթ կարդացուել է Եփեսոսի Գ. տիեզ. ժողովում, բայց այժմ համարուում է Ապօղինարեան կեղծիք։ Այդ թղթից և վերցուած պիտի լինի մեր ժողովածուի հատուածը (եր. 102), որ գտնուում է բաւական տարբեր ընթերցուածներով նաև Գ. 102=2679 ձեռագրում (p. 302 r.), «նա» վերտառութեամբ 2 մասի բաժանած, ինչպէս է նոյն հատուածը Տիմոթէոսի Հակաճառութեան մէջ (եր. 2)։

Ուիտալէս Հռովմայ եպիսկոպոսապետին էլ (եր. 106), որ Տիմոթէոսի Հակաճառութեան մէջ արդէն վկայ բերուած լինելով՝ 657—672 թ. ներին պապ եղած Վիտալիանոսը լինել չի կարող, Իորդան շփոթած է համարում Վիտալիս Անտիոքացու հետ (մօտ 363 թ.)։ Ինչպէ՞ս է յառաջացել այդ շփոթութիւնը և ո՞վ կարող է լինել մեզ անյայտ Երեքթէոս Անտիոքացին (եր 107), պարզել է Cavallera (Bulletin de litt. eccles 1909, p. 358, 352), որ ընդհանրապէս Տիմոթէոսի մեր հրատարակած Հակաճառութեան վկայութիւնների աղբիւրներն աշխատել է որոշել։ Գ. 102=2679 ձեռագրում Ուիտալէսի անունը կրող մեր ժողովածուի հատուածին կցած է՝ «նո(րին)» վերտառութեամբ, մի գրեթէ նոյն մեծութեամբ հատուած, որի սկզբնաւորութիւնն է՝ «Որպէս զի նզովեալ եղիցի», և դարձեալ մի պատառիկ՝ «Եւ է Աստուած ճշմարիտ անմարմինն ի մարմնի» սկզբնաւորութեամբ. սոցա և Տիմ. ի Հակաճառութեան եր 191 հատուածի մէջ որոշ առընչութիւն նկատուում է, բայց նոյնը չեն։

Ը. Աղէքսանդր՝ Նիկիոյ Ա. տիեզ. ժողովի ժամանակակից և իւր Աթանաս սարկաւագի հետ (յետոյ իւր յաջորդ Աթանաս Մեծ) նոյն ժողովում ամենակարևոր դերը կատարող Աղէքսանդրիոյ եպիսկոպոսից 2 շրջաբերական թղթեր կան մնացած և մի քանի հատուածներ յունարէն, այլ և մի ճառ ու բազմաթիւ հատուածներ ասորերէն։ Իսկ հայերէն՝ բացի մեր ժողովածուի 2 փոքր (եր. 247) և Տիմոթէոսի բերած 8 հատուածներից, գտնում ենք Հ. 102=2679 ձեռագրի մէջ p. 222 v. մի հատուած 6 տողից, որի սկիզբն է՝ «Վասն այսորիկ տուան մեզ աւրէնքն», p. 225 v.

մի ուրիշը 5 տողից. սկիզբը՝ «Որ ոք տացէ զարութիւն իւր չորքոտանւոյ», p. 226 r. 2 հատուած՝ մէկը 7 տողից, սկիզբը՝ «Զի յաւուրն Ը. ուղի վախճանէ զորբեալն Մովսէս», և միւսը 17 տողից, սկիզբը՝ «Արդարացուցեալ յԸ. որդ աւուրն»։

Թ. Ս. Եփրեմ, որին մեր ժողովածուի մէջ երրորդ տեղն է տուած Դիոնիսիոս Արիսպագացու և ս. Իրենէոսի շարքում, ծնուել է իսկապէս 306 թ.-ից յետոյ և վախճանել 373 թ.-ին։ Այդպէս նախապատուելու պատճառը այն մեծ յարգանքն է երևի, որ նա վայելել է ամբողջ քրիստոնեայ արևելքում, ինչպէս և մեր նախնեաց մօտ։ Ասորինների համար մանաւանդ՝ իբրև պարծանքն ու ամենամեծ գիտնական ներկայացուցիչը ասորական եկեղեցւոյ ու գրականութեան, նա «Տիեզերաց վարդապետ է, Ասորւոց մարգարէ, ս. Հոգւոյ քնար եղև»։ Մանուկ հասակում նա վայելել և Յակովբ Մծբնայ հայրապետի առանձին խնամքը, որ նոյնպէս յայտնի է թէ ինչքան մեծ յարգ ունի մեր եկեղեցում և որ ըստ աւանդութեան տարել է նրան հետը Նիկիոյ Ս. ժողովը և ապա կարգել վարիչ Մծբնի նշանաւոր դպրոցի։ 363 թ.-ին, երբ Մծբինը Պարսից ձեռքն ընկաւ, Եփրեմ ևս քրիստոնեայ բնակչութեան մեծ մասի հետ գաղթել է Եդեսիա, ուր և գրել է իւր երկասիրութիւնների գլխաւոր մասը։ 370 թ-ին նա գնացել է Կապադովկիոյ Կեսարիա քաղաքը, ուր ըստ աւանդութեան սարկաւագ է ձեռնադրուել ս. Բարսեղ Կեսարացուց։ Այս աւանդութեան հետ կապուած ընդարձակ պատմութիւններ կան մեր ձեռագիրներում, որոնք հոգևոր հաղորդակցութեան մէջ են դնում եկեղեցւոյ 2 ժամանակակից մեծ հայրերին։ Յամենայն դէպս ս. Եփրեմ սարկաւագութիւնից բարձր եկեղեցական աստիճան չի ստացել. ուստի թիւրիմացութիւն պիտի համարուի մեր ժողովածուի հատուածներից մէկի վերնագրում (եր. 257) նորան ընծայուած «եպիսկոպոս» կոչումը։ Իսկ «Խորին ասորի» կոչման համար միակ ընդունելի բացատրութիւնը Նորայր Բիւզանդացու տուածն է (Կորիւն վարդապետ և Նորին թարգմանութիւնք. Տփխիս, 1900. եր. 403), որով և որոշուած է լինում նորա հայրենիքը՝ Խորին Ասորիք կամ Coelésyrie։ Ս. Եփրեմ թողել է անհագին քանակութեամբ գրուածներ՝ մեկնութիւններ, ճառեր, հոգևոր բանաստեղծութիւններ, ոտանաւորով գրած բոլորը՝ բացի մեկնութիւններից, որոնց մի կարևոր մասը հայերէն թարգմանութեամբ է յայտնի դարձել քրիստոնեայ—գիտնական աշխարհին (ս. Եփրեմի մատենագրութիւնք, 4 հատոր, Վենետիկի Մխիթարեանց հրատ. 1836 թ.-ին,)։ Ընդհանրապէս ս. Եփրեմի գրուածոց հայերէն թարգմանութիւնները համարուում են ոսկեդարեան և մեծ ազդեցութիւն են գործել



մեր հայրերի հոգևոր կեանքի և մեր նախնի գրականութեան վրայ։ Բացի հրատարակուածներից, մեր մատենադարանի ձեռագիրներում շատ ճառեր ու մեկնաբանական հատուածներ կան ս. Եփրեմի անունով, որ մասամբ ուրիշների գործ են (օր. մինչև այժմ Մանդակունու համարուած Մայրագոմեցու ճառեր), բայց եթէ մանրակրկիտ հետազօտութեան ենթարկուին՝ անծանօթ մնացած վաւերական աշխատութիւններ ևս կգտնուին անկասկած։ Առանձնապէս հետաքրքրական են «Կցորդք» կոչուած ճառերը՝ իսկապէս բանաստեղծական մի գրուածք, Հ. 962=922=821 ձեռագրում, որի ընդօրինակութիւնը գտնուում է Վենետիկի Մխիթարեանց մօտ (տես. Հայկ. Թարգմանութիւնք եր. 466), բայց դեռ չի հրատարակուել. բաղկացած է եղել 51 հագներգութիւններից, բայց առաջին 14-ը ընկել են ձեռագրից և 15-րդը թերի է մնում։ Բովանդակութեանը նայելով՝ ենթադրել կարելի է, որ Մծբնի պաշարման ժամանակ (338—346 և 350) ս. Եփրեմի արտասանած քաջալերականներից լինի այս և ուրեմն պատմական տեսակէտից էլ արժէքաւոր, մանաւանդ որ մէջը մի քանի յայտնի հերետիկոսներ քննադատուում են։ Բացի այս հրատարակել պէտք էր Հ. 1226=1256=1239 ձեռագրում գտնուող ԺԲ. մարգարէից մեկնութիւնը, որի նորոգութեան թուականն է միայն Զարբհանալեանի յիշած 1593 թ.-ը (Հայկ. Թարգմանութիւնք, եր 460), մինչդեռ միջին մասը (Ովսէ—Աբդիու) ԺԳ—ԺԴ դարերի բոլորգիր է։ Ս. Եփրեմի մեկնութիւններից շատերն էլ միջին դարերում զուգորդել են ուրիշ հեղինակների (յատկապէս Ոսկեբերանի) մեկնութեանց հետ և ուսուցման նիւթ դարձրել մեր վարդապետարաններում. այդպէս և պահուել են բազմաթիւ ձեռագիրներում։ Այնուամենայնիւ, ինչպէս ընթերցողը կտեսնէ, մեր ժողովածուի մէջ նորա անունը կրող հատուածներից մի քանիսի համար միայն յաջողուեց ուրիշ օրինակ գտնել, այն ևս ոչ թէ նորա ամբողջական գրուածներում, այլ նման հատուկտորներով։ Մնում է ենթադրել, որ տպագրուած ու ձեռագիրներում պահուած նորա գործերից զատ ուրիշներն էլ եղել են հայերէն թարգմանութեամբ, որ մեզ չեն հասել, կամ դեռ անյայտ են։ Այդպէս, օրինակ, Գր. Մագիստրոսի մի նամակից (Գրիգոր Մագիստրոսի Թղթերը. Աղէքսանդրապոլ. 1910, երես 3) իմանում ենք, որ Պետրոս Գետադարձը Բճնիում բանտարկուած ժամանակ կարդում էր ս. Եփրեմի «Հաւատոյ» գիրքը, որից և վերցուած են գուցէ մեր ժողովածուի մի քանի հատուածները, բայց այժմ չկայ մէջտեղ։

Ժ. «Եկեղեցւոյ սիւն» ս. Աթանաս աւելի ևս մեծ հեղինակութիւն է, մանաւանդ դաւանական խնդիրներում, ամենահոյա-

կապ դէմքերից մէկը ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ։ Ծնուած լինելով 295 թ. ին՝ նա արդէն կարևոր դեր էր կատարել, ինչպէս յիշուեց, Նիկիոյ ս. ժողովում՝ Աղէքսանդր եպիսկոպոսի սարկաւագի և քարտուղարի պաշտօնով. իսկ նորա մահից յետոյ, 328 թ. ին, ժառանգելով Աղէքսանդրիոյ եպիսկոպոսական աթոռը՝ 5 անգամ աքսոր գնաց, արիոսականների դէմ Նիկիոյ ուղիղ դաւանութիւնը աննկուն կերպով պաշտպանելուն համար, մինչև որ յաղթանակեց և վախճանեց խաղաղ իւր աթոռի վրայ 373 թ. ին։ Քանի որ նորա ամբողջ կեանքն անցել է դաւանաբանական վէճերի մէջ, նորա գրուածներն էլ առհասարակ դաւանաբանական-վիճական կամ ջատագովական բնաւորութիւն ունին, որոնց մէջ կարևոր տեղ է բռնում Կորնթոսի Եպիկտետ եպիսկոպոսին գրած և մեր ժողովածուի յառաջ բերած թուղթը։ Իւր տեղում (եր. 57) ցոյց է տրուել, որ այդ թղթի մի ուրիշ թարգմանութիւն կցուած կայ Կիւրեղ Աղէքսանդրացու Պարապմանց գրքին. բայց յետոյ գտայ նոյն թարգմանութեամբ տպուած՝ Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք գրքում, որ հրատարակուել է 1899 թ ին Վենետիկում և ամփոփում է մինչ այդ ս. Աթանասի անունով յայտնի եղած բոլոր հայերէն թարգմանութիւնները։ Ինչպէս այդ հրատարակութեան սկզբին «Զեկուցման» մէջ յիշուում է, Եպիկտետին ուղղած թուղթը, մեր ժողովածուի պարունակած օրինակով, ս. Աթանասի այն գործերից մէկը պիտի լինի, որ մի ձեռագրի վկայութեան համաձայն թարգմանել են մեր առաջին թարգմանիչները. իսկ նորա հերձուածողների վերագրուելու պատճառն այն է երևի, որ արդէն Կիւրեղ Աղէքսանդրացու մի գրուածքի մէջ հերձուածողների ձեռքով նորա փոփոխած և եղծուած լինելու մասին կասկածներ են յայտնուել։ Վերև այս թղթի տեղի և վերնագրի մասին յայտնած տարակուսանքը փարատել կարելի է, կարծում եմ, նորանով միայն, որ բուն ժողովածուն կազմողը բերած լինի այն Ա. գլխի վերջում, իսկ երկրորդ խմբագրողը, որին ծանօթ էին նորա վաւերականութեան մասին յայտնուած կասկածները՝ դժուարանալով հանել, ներկայ ձևով փոխած լինի վերնագիրը և այժմեան տեղում դրած։ Եթէ երկրորդ խմբագրողը Ստ. Սիւնեցին էր և ինքն աւելացրած լինէր՝ սպասելի էր, որ իւր թարգմանած Պարապմանց գրքին կից թարգմանութեամբ գտնէինք թուղթը նաև այստեղ։ Իրօք, ս. Աթանասի մեծ հեղինակութիւնից օգտուելով՝ Ապօղինարեանք և ուրիշները նորա անունով են հրատարակել իրենց մի քանի գրուածները կամ կեղծել նորա բուն երկերը. կան նաև թիւրամացութեամբ նորան վերագրուած



գործեր. այնպէս որ հայերէն թարգմանութեամբ նորա անունը կրող գրուածների մի մասն էլ անվաւերական է։ Այս վերապահութեամբ պիտի յիշենք, որ մինչդեռ նորա մեկնաբանական գրուածներից հատուկտորներ միայն մնացել են օտար լեզուներով և ոչ մի տեղ յիշատակութիւն չենք գտնում Կաթուղիկեայց թղթերի մեկնութեան մասին, մեր մատենադարանի Հ. 1394=1408 ձեռագիրը ներկայացնում է անցման երկաթագրով գրած և ՊՀԲ. թ. ին մի Սիմէոն վարդապետի ձեռքով սկիզբն ու վերջը բոլորգրով լրացրած Կաթուղիկեայց թղթերի մեկնութիւն, որ առաջին իսկ (Յակոբայ) թղթի վերնագրի համաձայն «Սրբոյն Աթանասի Աղէքսանդրի» գործը պիտի լինէր։ Ս. Աթանասի անունը կրկնուում է նաև Պետրոսի Ա. և Բ. թղթերի վերնագիրներում. միւսների վերնագիրներն էլ «նորին» վերտառութեամբ նոյն հեղինակն են յիշեցնում։ Սակայն արդէն ձեռագրի լուսանցքներում գտնուող «Եփ», «Ո(ս)կ», «Նա», «Ստ» և լն. մակագրութիւնները ցոյց են տալիս, որ ամբողջական գործ չէ սա, այլ քաղուածք զանազան հեղինակների (Եփրեմ, Ոսկեբերան, Նանա, Ստեփանոս) աշխատութիւններից. իսկ ս. Աթանասի անունը կրում է երևի նորա համար, որ՝ ինչպէս լուսանցքում յաճախ կրկնուող «Ա.թ» մակագրութիւններն էլ ցոյց են տալիս, կարևոր տեղ են բռնում նորա մէջ Աթանասի, կամ նորան վերագրուած՝ մեկնութիւնից քաղուած կտորները։ Ուշադրութեան արժանի է ձեռագրի թ. 15 ր. կիսատ երեսի ստորև կարդացուող հետևեալ մակագրութիւնը. «Սուրբ վարդապետն Սարգիս, որ և Կունտ ասի, այսչափ էր գտել ի կարգին»։ Այդ Սարգիս Կունտ վարդապետը նշանաւոր Յովհաննէս Սարկաւագ վարդապետի աշակերտներից է, ԺԲ. դարու հեղինակ, որի անունով յայտնի են Ղուկասու և Յովհաննու աւետարանների խմբագրական մեկնութիւններ (տես. Հայկ. Հին դպրութիւն. Վենետիկ. 1886. եր. 597)։ Հաւանականաբար ուրեմն ներկայ հաւաքածուն էլ նորա կազմածը, կամ գոնէ Սարկաւագ վարդապետի դպրոցի գործ՝ պիտի լինի։ Կաթուղիկեայց թղթերի մի ուրիշ շատ կարևոր խմբագրական մեկնութիւն ունինք զանազան ձեռագիրներում, որի մէջ գլխաւոր տեղը բռնում է Սևերոս Անտիոքացին, բայց ուրիշ հին և նշանաւոր հայրերի շարքում (սկսած Որոգինէսից) 2 հատուած ևս ս. Աթանասից է բերուում (Տես. Տաշեան, Ցուցակ ձեռագրաց. Վիեննա, 1895. եր. 238)։ Անհրաժեշտ է հրատարակել այս երկու գործերն էլ, որով միջոց կտրուի մանրագէտներին պարզելու, թէ ս. Աթանասի իսկական աշխատութիւն կա՞յ արդեօք սոցա մէջ և որքան։

ԺԱ. Յուլիոս Հռովմի եպիսկոպոսը (337—52) Ս. Աթանասի հեղինակաւոր ժամանակիցներից մէկն է, նոյնպէս ջերմ պաշտպան Նիկիական դաւանութեան, որի անունով հատուածը (եր. 341) մեր ժողովածուի մէջ՝ առնուած լինելով Տիմոթէոսի ՚Հակաճառութիւնից, նորութիւն չի բերում։

Նորա յետնորդ Դամասոսի (366—84) անունը կրող հատուածի մի մասը հրատարակել եմ «Արարատ»ում (1896, փետրուար, եր. 61). Մնացածը նորութիւն է։

ԺԲ. Ս. Կիւրեղ Երուսաղէմացին մի ուրիշ նշանաւոր ժամանակակիցն է ս. Աթանասի, Երուսաղեմի եպիսկոպոս ձեռնադրուած 347—48 թ.ին, իբրև հակարիոսական 3 անգամ աքսոր գնացած, մասնակցած Կ. Պոլսի Բ. տիեզերական ժողովին և վախճանած 386 թ.ին։ Նորա Կոչումն Ընծայութեան գիրքը, որից առնուած է մեր ժողովածուի մի հատուածը (եր 22), եկեղեցական մատենագրութեան ամենարժէքաւոր գործերից է և մէկը մեր հնագոյն ոսկեդարեան թարգմանութիւններից (տպուած Կ. Պոլիս, 1728 թ.ին և Վեննա, 1732-ին)։ Մեր մատենադարանի Հ. 911=866 ձեռագրում կայ «Պարծանք Սրբութեան կաթուղիկէ եկեղեցւոյ» սկսուածքով մի ճառ (գովեստ խաչի) ս. Կիւրեղի անուամբ. բայց մէջը չեն մտնում մեր ժողովածուի միւս 2 հատուածները (եր. 264 և 306), որ ըստ վերնագրին առնուած են՝ «ի բանէն Պարծանք սրբութեան»։ Նորա «առ Կոստանդիանոս արքայ» (որդի Մեծն Կոստանդնի) ուղղուած թուղթը կարդացւում է մեր եկեղեցում Երևման խաչի տօնին։ Բաւականաչափ ուրիշ ճառեր կան մեր ձեռագիրներում նորա անուամբ, մի քանիսը շատ տեղ կրկնուած, մեծ մասն անհարազատ. կան նաև այնպիսիները, որ Զարբհանալեան չի յիշել (Հայկ. Թարգմ. եր. 524—229)։

ԺԳ. Եւսեբիոս Եմեսացին եւս ժամանակակից է յիշեալ հայրերին, բայց աւելի վաղ է վախճանել (մօտ 359 թ. ին)։ Մեր ժողովածուի մէջ նորա անունը կրող 2 ընդարձակ հատուածների (եր 323—327) աղբիւրը չգտայ. բայց մեր մատենադարանի Հ. 911=966 ձեռագրում կայ մի ճառ «Փութացուք ի խաչն Քրիստոսի» սկզբնաւորութեամբ և մի ուրիշը Տ. 43=3771 ձեռագրում (ք. 403), որի սկիզբն է. «Իսկ զչարչարանաց լռել ոչ պարտիմք»։ Եմեսացու բազմաթիւ գրուածները ոչնչացել են ընդհանրապէս, մի քանիսն էլ շփոթուել ուրիշ Եւսեբիոսների գործերի հետ։ Մեր ձեռագիրներում մի քանի ճառ կայ «Եւսեբիոսի եպ. ի» կամ «Սեբիոսի եպ. ի» անունով, որոնց համար դժուար է որոշել, թէ ո՞ր Եւսեբիոս է ի նկատի առուած։



ԺԴ. Երեք Մեծ Կապադովկացիները՝ ս. Բարսեղ Կեսարացին, իւր մտերիմ ընկեր ս. Գրիգոր Աստուածաբանը և իւր եղբայր Գրիգոր Նիւսացին, ինչպէս որ ընդհանուր եկեղեցւոյ համար առաջնակարգ հեղինակութիւն են դաւանական խնդիրներում, այնպէս և կարևոր տեղ են բռնում մեր ժողովածուի մէջ։

Ս. Բարսեղ (ծն. 331 — վախճ 379 ք.), որի վարուց և գործունէութեան վերարտադրութիւնը պատկերացրել է Փաւստոս Բիւզանդ յանձին նորա ժամանակակից մեր Մեծն Ներսէսի. որ ս. Աթանասից յետոյ ամենազօրեղ ջատագովն է հանդիսացել Նիկիական դաւանութեան և ս. Անտոնից յետոյ գլխաւոր հիմնադիրն ու կանոնադիրը արևելեան վանականութեան, — դեր է կատարել աւելի գործնական կեանքի մէջ և մեծ ազդեցութիւն ունեցել իւր ժամանակի եկեղեցական-քաղաքական խնդիրներում, բայց թողել է նաև բաւական թուով դաւանաբանական ու մեկնաբանական գրուածներ, ճառեր ու թղթեր, որոնցից շատերը թարգմանուած են հայերէն՝ մի քանիսը ոսկեդարեան ընտիր թարգմանութեամբ։ Նորա երկերի, ինչպէս և միւս 2 Կապադովկացիների և Դիոնիսիոս Արիսպագացու (այլ և Փիլոնի, Եւագրի ևն.) գրուածոց ամենամփոփ ժողովածուն է մեր մատենադարանում Մխիթար Այրիվանեցու նշանաւոր ճառընտիրը Հ. 944=1500. բայց ուրիշ ընտիր ձեռագիրներում էլ կրկնւում են նոքա՝ յաճախագոյն մանաւանդ ճառերը, որոնց մի քանիսը կարդացւում են մեր եկեղեցում և որոնց մէջ կան նաև Զարբհանալեանի չյիշածներ (Հայկ. Թարգմ. եր. 325—344)։ Առանձին ուշադրութեան արժանի է Հ. 1366=1315, ք. 21 և Հ. 1798, ք. 331 ձեռագիրներում գտնուող դաւանաբանական գրուածքը, որի վերնագիրն է. «Ծաւաք Բարսլի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւոյ՝ ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառս Որդւոյն Աստուծոյ քան զՀայրն և իջուցանեն զՀոգին Սուրբ ի հնազանդութիւն և հաւասեն ընդ հաւասարութիւն արարածոց», սկսուածքը. «Գովեցի ես զփոյթ յօժարութեան ուսումնասիրութեան քո»։ Ս. Բարսեղի միայն գլխաւոր մեկնաբանական գրուածքը՝ «Ճառք վասն վեցօրեայ արարչութեան», տպուել է մինչև այժմ (Վենետիկ, 1830), և «Վասն մկրտութեան» ճառը, որ թիւրիմացութեամբ մտել է Սեբերիանոսի ճառերի մէջ (Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի՝ Ճառք. Վենետիկ, 1827. եր. 183)։ Մեր ժողովածուի մէջ բերած վկայութիւններից կասկածելի է միայն, ինչպէս յիշուեց, Ապօղինարի հետ վիճաբանութեան ծագումը։

Ս. Գրիգոր Աստուածաբան (ծն. 330 թ.), Նազիազանցի եւս կոչուած այն քաղաքի անունով, ուր եպիսկոպոս էր իւր հայրը

և ուր ինքն ևս մէջ ընդ մէջ կառավարել է թեմը՝ Աթէնքում իւր ուսումնակից եղած ս. Բարսեղից բաւական երկար ապրեց, 379 թ. ին Կ. Պոլիս հրաւիրուելով՝ ձեռք բերեց մեծ ճարտասանի և աստուածաբանի հռչակը, 381 թ. ի Բ. տիեզերական ժողովում մայրաքաղաքի պատրիարք ընտրուեց, բայց դեռ ժողովը չվերջացած հրաժարուեց, առանձնական կեանք վարեց այնուհետև և վախճանեց 389 կամ 390 թ. ին։ Նա թողել է 3 կարգի գրուածներ՝ ճառեր, թղթեր, հոգևոր բանաստեղծութիւն։ Վերջին կարգի՝ ոտանաւոր, գրուածներից, որ Օրթոդոքս եկեղեցւոյ ժամասացութեան մէջ մեծ տեղ են բռնում, թերևս մեր եկեղեցւոյ հոգևոր բանաստեղծութեան մէջ ևս որոշ հետքեր յայտնուէին, եթէ կանոնաւոր ուսումնասիրութիւն տեղի ունենայ. Թղթերից քչերն են հայերէն թարգմանուած, բայց ճառերը՝ 45 թուով, բոլորը թարգմանուած են։ Այրիվանեցու ճառընտրում սոքա բաժանուած են 4 խմբերի, որոնք կոչւում են իւրաքանչիւր խմբի առաջին ճառի սկսուածքով. ա) «Քրիստոս ծնեալ» ԺԲ. ճառ, բ) «Յաղթեցայ» Ը. ճառ, գ) «Առ որս» ԺԵ. ճառ, դ) «Որք յեգիպտոս» Ժ. ճառ։ Այս խմբերից ամենայարգին եղել է մեր մէջ «Առ որս» կոչուածը, որ յատկապէս աստուածաբանական բովանդակութիւն ունի, շատ անգամ արտագրուել է և ընտիր ձեռագիրներով պահուել, Գլաձորի, Տաթևի, Սեպուհ լերան և այլ վարդապետարաններում գործ ածուել իբրև ձեռնարկ աստուածաբանական բարձրագոյն ուսման։ Մեր ժողովածուի եր. 31, 287 և 352 հատուածները «Քրիստոս ծնեալ» խմբից են, եր. 36—40, 276, 309 և 349—352 «Առ Որս» խմբից։ Մեր մատենադարանի ձեռագիրներում Գր. Աստուածաբանի անունով ևս բաւականաչափ նիւթեր կան, որ Զարբհանալեան չի յիշել (Հայկ. Թարգմ. եր 340—848)։ Տարօրինակ է, որ նորա այնչափ գրուածներից մինչև այժմ միայն մի ճառ կայ պատահմամբ տպուած հայերէն (Գիրք և ճառ հոգեշահ, Կ. Պոլիս, 1722)։

Գրիգոր Նիւսացին իւր եղբայր ս. Բարսեղից շատ փոքր էր հասակաւ. 371 թ. ին նորանից եպիսկոպոս է ձեռնադրուել Կեսարիոյ ստորադրեալ Նիւսա աննշան քաղաքի, բաւական ժամանակ հալածուել արիոսականներից, ապա մեծ դեր կատարել 381 թ. ի Կ. Պոլսոյ տիեզ. ժողովում. վերջին անգամ յիշւում է 394 թ. ին՝ իբրև անդամ Կ. Պոլսոյ մի ուրիշ մասնաւոր ժողովի։ Նա թողել է ստուար մեկնաբանական և աստուածաբանական գրուածներ ու բաւական թուով ճառեր, որոնք բոլորն աչքի են ընկնում խոր, վերացական, փիլիսոփայական տեսութիւններով. այդ պատճառով և նոցանից հայերէն թարգմանուածները այդպէս կոչուած «նուրբ» գրեանց շարքի մէջ են մտել, բարձր աստուածաբանական ուսման նիւթ եղել մեր վարդապետարաններում, յաճախ արտագրուել և Դիոնեսիոսի գրուածների նման լուծմունքներով ճոխացուել։ Մեր ժողովածուի եր. 24 հատուածը յետոյ գտայ ամբողջութեամբ Ար. 14=4207 և Գ. 95=1678 ձեռագիրներում, ուր բաւականաչափ տարբեր ընթերցուածներ կան։ Զարբանալեան յիշում է (Հայկ. Թարգմ. եր. 370), որ նորա «Երգ Երգոց»ի մեկնութեան հայերէն թարգմանութեան մէջ պակաս է ԺԵ. ճառը, ինչպէս և պակաս է յիրաւի Այրիվանեցու ճառընտրի և մեր մատենադարանի ուրիշ ձեռագիրների մէջ. բայց կայ (Ջխգ. թ. ի) Հ. 1139=1013 ձեռագրում, սկիզբը. «Ո՞ւր գնաց եղբաւրորդին քո», և վերջը. «Փախիր, եղբաւրորդի՛ իմ, և նմանեաց այծեման կամ որթոց եղանց ի վերայ լերանց խնգաբերաց»,—որչափ հարազատ արդեօք, հնարաւորութիւն չունիմ ստուգելու։ Այսպէս և Հ. 656=620 ձեռագրում «Յորդորումն մանկանց ի կուսութիւն» գրուածքի վերջը մի երեսով (p. 103 v.—104 r) աւելի է Այրիվանեցու ճառընտրի օրինակից. շարունակում է «Եւ յայտ է, թէ ոմանք առին զխաչս իւրեանց» խօսքով և ստորև ունի հետևեալ մակագրութիւնը. «Ի մի օրինակն այս է գրոց վերջքն. թէ է ի գրոցս և թէ չէ՝ ո՛չ գիտեմ, թողութիւն արա»։ Նիւսացու գրուածներից ևս միայն մի ճառ կայ տպուած յիշեալ «Խրատ և ճառ հոգեշահ» գրքում։

ԺԵ. Մի առանձին տիպ է եկեղեցական հայրերի շարքում ս. Եպիփան՝ Կիպրոսի Կոստանդիա կամ Սաղամիս քաղաքի եպիսկոպոսը, որ իննսնամեայ հասակում Կ. Պոլսից իւր աթոռը վերադառնալիս նաւի վրայ վախճանեց 403 թ. ին. սահմանափակ մտաւոր կարողութեան, բայց անսպառ եռանդի տէր մի անձն, որ նշանաւոր է դարձել բազմակողմանի գիտութեամբ, կրօնաւորական խիստ վարքով և ամէն կարգի՝ իսկական թէ ենթադրեալ, հերետիկոսների դէմ վարած նախանձայոյզ պայքարով։ Մեր ժողովածուի մէջ 2 հատուած նորա անուամբ ըստ վերնագրին վերցուած են՝ «ի Պարունակաց» (եր. 265) կամ «ի Պարունական խօսից», ասել է թէ ս. Եպիփանի ամէնից նշանաւոր գրուածքից, որ կոչւում է «Պանարիոն» կամ 'Դեղատուփ և ուղղուած է 80 աղանդների դէմ (այդ հաշւում նաև 20 հեթանոսական փիլիսոփայական դպրոցներ) իբրև հերքում։ Քանի որ նոյն գրքից վերցուած մի ուրիշ հատուած էլ մեր ճառընտիրներում կայ (տես. Հայկ. Թարգմ. եր. 416. Մ. Աթոռի մատենադարանում՝ Հ. 940=993, 943=1525, p. 169 v և Գ. 130. p. 57) և Միաբանի հրատարակած «Գիրք հերձուածոց»ը (Արարատ, 1892) ըստ Հ. Տա-

շեանի նոր համեմատութիւններով ու ծանօթութիւններով ընծայած ուսումնասիրութեան (Ազգային մատենադարան ԺԶ. Վիեննա, 1895. եր. եր. 76—146) նոյն «Պարունակաց» կամ «Ընդդէմ հերձուածոց» գրքի «Ցանկի թարգմանութիւնն» է. կարելի է հաստատուած համարել այդ ուսումնասիրութեան մէջ յայտնուած կարծիքը, թէ Եպիփանի այս կարեւոր գործի ամբողջական թարգմանութիւնը եղել է հայերէն։ Թուցէ կարող ենք նոյն իսկ աւելի առաջ գնալ և ընդունել Հ. Տաշեանի սորա հետ մէկտեղ յայտնած այն կարծիքն ևս, որ նա հիմնում է Զարբհանալեանի յիշած մի խառն վերնագրի վրայ (Հայկ. թարգմ. եր. 418), թէ հայերէն թարգմանութեամբ եղել է նաև ս. Եպիփանի միւս նշանաւոր գրուածքը՝ «Անկիւրոտոսը» կամ խարսխեալը. որի վերջում գտնում է մեր եկեղեցու մէջ շատ վաղ մուտ գտած և մինչև այժմ գործածական Հաւատոյ հանգանակը (Գաթրճեան, Հանգանակ հաւատոյ. Վիեննա, 1891) և որից, թւում է, առուած պիտի լինի մեր ժողովածուի եր. 26 հատուածը՝ այնքան ընտիր թարգմանութեամբ։ Պրոֆ. Կարլ Հոլլ, որ Բերլինի Ակադեմիայի յանձնարարութեամբ պէտք է Եպիփանի երկասիրութեանց նոր հրատարակութիւն տայ՝ ուզել էր ինձնից սորա անուամբ հատուածները մեր ժողովածուի մէջ, որ և ուղարկեցի. անշուշտ նա կպարզէ իւրաքանչիւրի առընչութիւնը բնագրի հետ։

Սակայն Հ. Տաշեան սխալւում է՝ կարծելով. թէ «Հերձուածոց գրոց պատմական նկարագիրն եղած է պատճառ, որ Եպիփան իբրև պատմագիր կը յիշուի» մեր մի քանի ժամանակագրութեանց մէջ. աւելի մօտ է ճշմարտութեան կասկածով յայտնած նորա միւս ենթադրութիւնը, թէ «Թերևս այս անուանակոչութեան պատճառն է Եպիփանու անուամբ հայ ձեռագրաց մէջ գտնուած նախապետաց գրուցախառն պատմութիւնը»։ Պրոֆ. Կոնիբիր հրատարակելով այդ գրուածքի մի քանի հատուածների անգլիերէն թարգմանութիւնը Վենետիկի Մխիթարեանց ձեռագրից («The Gospel Commentary of Epiphanius» and «Epiphanius on the Baptism». Zeitschrift für die Neutestamentliche Wissenschaft, *1906*, p. *318—332* und *1907*, p. *221—225*), հաւանական է համարում, որ ս. Եպիփանի գործը լինի այն, բայց փոփոխուած և յաւելումներ ընդունած հայ գրչակների կողմից։ Մխիթարեանց ձեռագիրը, ինչպէս նա յիշում է, գրուած 1750 թ. ին՝ որքան կարելի է եզրակացնել տպուած մասերի հարևանցի համեմատութիւնից և Զարբհանալեանի գլխակարգութիւնից (Հայկ. թարգմ. եր. 402 շ.) համապատասխան պիտի լինի մեր մատենադարանի Գ. 285=2619 նոյնպէս յետնադարեան (1630 թ. ի) ձեռագրին



(Համտ. նաև Հ. 926=871). բայց այստեղ կայ նաև Հ. 925=822 ընտիր երկաթագիրը ՈԼԶ=1187 թ. ին գրած, որ ոչ միայն խիստ շատ տարբեր և անհամեմատ գերադասելի ընթերցուածներ ունի, այլ նաև ընդարձակ գլուխներ՝ հետաքրքրական բովանդակութեամբ, որ պակասում են բոլոր մնացած ձեռագիրների մէջ։ Եթէ ուղիղ է Կոնիբիրի ենթադրութիւնը, այս օրինակը պէտք է համարուի ս. Եպիփանի իսկական գործի աղաւաղումներից աւելի (թէպէտ ոչ բոլորովին) ազատ և լրիւ հայերէն թարգմանութիւնը։ Եւ ահա այս գրուածքը, որ Տ. Ցուսիկ վարդապետի հետ ձեռնարկել էինք պատրաստել հրատարակութեան համար, և առ այժմ թերի մնաց, ձեռագրի վերջի յիշատակարանում (p. 301 v.) անուանած է «աստուածահրաշ պատմաբանութիւն, որ ի ծոց իւր իբրև զշարս մարգարտաց յեռեալ մի զկնի միոյ՝ քարշելով առաջնորդականին, խարսխեալ յԱստուածն անհասանելի». քիչ վերև էլ յորդորում է. «ամենայն ոք, որ ընթերցցի, ի միտ առցէ զբարւոք գրեալս ի ստոյգ և ի ճշմարտապատում պատմաբանն և ի ծաղկաւէտ բուրաստանէ»։ Ի՞նչ կասկած այլ ևս, որ մեր ժամանակագիրները ս. Եպիփանի անունը կրող այս՝ ճառերի ձևով, բայց ըստ մեծի մասին արևելեան տիպի բազմազան ճոխ աւանդութիւններից հիւսած, գործն են ունեցել աչքի առաջ, որ նորան պատմաբաններն շարքում են դրել. իսկ թէ «խարսխեալ» բառը սորա յիշատակարանում պատահաբար է արդեօք գործածած, թէ ս. Եպիփանի «Անկիւրոտոսի» հետ որ և է առընչութիւն ունենալուն համար՝ կարող են որոշել և գրուածքի վաւերականութեան չափը ստուգել հրատարակութիւնից յետոյ նոքա միայն, որոնց ձեռքի տակ կայ ամբողջ Եպիփանեան գրականութիւնը։

Զարբհանալեան, հետևելով Կարինեան ցուցակի սխալ ցուցման՝ Մ Աթոռի մատենադարանի Հ. 1991=1111=1097 ձեռագիրը համարել է (Հայկ. թարգմ. եր. 414) ս. Եպիփանի «Մեկնութիւն գրոցն Թագաւորութեանց»։ Այդ ձեռագրի սկզբում կայ միայն մի հատուած 2 թերթից, որի վերնագիրն է. «Ցաճախապատում ԻԲ. արարչագործութեանց և ԻԲ. նահապետացն և ԻԲ. ալփաբետացն և ԻԲ. կտակարանացն հնոց՝ Տեառն Եպիփանու ասացեալ» ապա p. 3. «Առաջաբան Թագաւորութեանց». իսկ p. 4 v. հետևում են ուրիշ նիւթեր։ Այդպէս և նոյն Կարինեանի ցուցակի մէջ Հ. 1199=1228=1204 ձեռագիրը (գրուած ՈՁ=1231 թ. ին), որ Զարբհանալեան չի յիշել, բերած է իբրև Եպիփանի՝ Մեկնութիւն սաղմոսաց, բայց միայն p. 16 r.—50 r. Սաղմոսաց մեկնութեան մի կարևոր հատուած է, որի սկիզբը կազմում է նորա անուամբ ծանօթ և տպուած յառաջաբանի (Սաղմ. ս. Դաւ-

թի, Կ. պօլիս, 1801. եր. 55) մի մասը՝ աչքի ընկնող տարբերութիւններով, ապա հետեւում են մերթ համառօտ, մերթ բաւական ընդարձակ բացատրութիւններ Ա, Ե, Զ, Ը, ԺԸ, ԻԲ, ԻԳ, ԻԸ և ԽԴ սաղմոսների մասին։ Անկախ այդ ձեռագրից մեր ձեռագիրներում կան սաղմոսի մեկնութեան ուրիշ հատուածներ էլ ս. Եպիփանի անուամբ, որ Զարբհանալեան չի յիշել։

ԺԶ. Ս. Յովհան Ոսկեբերան՝ ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան ամենապատկառելի և ամենահամակրելի դէմքերից մէկը (ծն. 344 կամ 347 թ.-ին. վախճ. 407-ին). բոլոր եկեղեցական հայրերից աւելի ընդարձակ տեղ է բռնում մեր նախնի գրականութեան մէջ։ Երբ նա Կ. Պոլսի պատրիարքութեան աթոռից ձգուեց՝ իւր պանծալի քարոզների մէջ նաև աշխարհի մեծերի վատութիւնն ու անիրաւութիւնը աներկիւղ կերպով կշտամբելու համար, և աքսոր ուղարկուեց (403 թ.-ին), նորա աքսորավայրը Փոքր Հայքի Կուկիսոն քաղաքն էր, և այդ պատճառով մի շարք հայկական աւանդութիւններ ևս յառաջացել են նորա անուան շուրջ։ Նորա անթիւ ճառերից շատերը թարգմանուել են հայերէն՝ գրերի գիւտից անմիջապէս յետոյ, պահուած կան ամենընտիր ձեռագիրներում (յատկապէս Հ. 886=906=988 Պետրոս Գետադարձի 1045 թ.-ին գրել տուած նշանաւոր երկաթագրի մէջ) և ցրուած ամէն տեսակ ճառընտիրներում՝ իբրև ամենասովորական նիւթ եկեղեցական հրահանգութեան։ Որչափ և ընդարձակ տեղ է բռնում այդ ճառերի ցուցակը Զարբհանալեանի Հայկ. Թարգմ. գրքում (եր. 581—616), այնուամենայնիւ մեր մատենադարանի ձեռագիրներում կան բազմաթիւ այնպիսիները, որ նա չի յիշել։ Հարկաւ դոցա մէջ քիչ չեն անհարազատներ՝ միտումով կամ թիւրիմացութեամբ նորան վերագրած, կամ այնպիսիներ, որ վերցուել են նորա ընդարձակ մեկնաբանական գործերից. բայց եթէ բազմակողմանի հետազօտութեամբ մի նոր քննական հրատարակութիւն լինի՝ միայն ճառերը թերևս մի ամբողջ հատոր աւելացնեն Մխիթարեանց հրատարակածների վրայ։ Նոյնչափ հին ընտիր թարգմանութեամբ են, և իբրև ս. Գրքի լաւագոյն ուսուցիչ աւելի իսկ արժէքաւոր քան ճառերը՝ Ոսկեբերանի մեկնութիւնները, որոնցից շատերն էլ ճառական բնաւորութիւն ունին։ Բացի Մխիթարեանց հրատարակածներից մեր մատենադարանում ունինք դեռ չտպուած Գործի առաքելոց-ի մեկնութեան 2 ընտիր օրինակ՝ Հ. 1330=1336=1315 և 1331=1367=1316, որոնցից առաջինը սակայն ՇԻԵ. թ.-ին չի գրուած, ինչպէս սխալմամբ յիշում է Զարբհանալեան (եր. 595) Կարինեան ցուցակի հետևութեամբ՝ շփոթելով թարգմանութեան տա-



րին արտագրութեան հետ, այլ բազմերախտ Յովհաննէս արքայեղբօր պատկանած ձեռագիրներից մէկը լինելով՝ ԺԴ դարու գործ է. նա և Թեսաղոնիկեցւոց 2 թղթերի մեկնութիւն Հ. 1407=1321, անցման երկաթագրով՝ սկզբից Ա. Թես. պատճառք և մի քանի տուն, ինչպէս և վերջից մի երկու տուն մեկնութիւն միայն պակաս։ Ինչպէս վերև ակնարկուել է, Ոսկեբերանի մի շարք մեկնութիւններ ևս պահուած կան ուրիշ հայրերի նման երկերի հետ զուգորդուած. այլ և բազմաթիւ հատուածներ այնպիսիներից, որոնք կամ ամբողջութեամբ չեն պահուած, կամ համապատասխան չեն հրատարակուած ամբողջական գործի նոյն մասերին (օր. Մատթ.-ի մեկնութեան շատ հատուածները)։

Մեր ժողովածուի Ոսկեբերանեան հատուածներից մի քանիսի համար, ինչպէս իրենց տեղում տեսնում է, համեմատութեան աղբիւր չգտայ. իսկ Եսայեայ մեկնութեան հատուածը (եր. 318) համեմատել չկարողացայ, որովհետև մեր մատենադարաններում չգտնուեց Մխիթարեանց հրատարակութիւնը (Վենետիկ, 1880)։

ԺԷ. Ինչպէս մեր ժողովածուից երևում է, շատ վաղ և լաւ ընդունելութիւն են գտել մեզանում Ոսկեբերանի երկու ժամանակակիցների գրուածները, որոնցից մանաւանդ նորա հակառակորդ Սևերիանոսը շատ էլ լաւ անուն չի թողել եկեղեցւոյ պատմութեան մէջ։ Սա Լաւոդիկէի մօտիկ Գաբաղա քաղաքի եպիսկոպոսն է եղել (վախճ. 408 թ.-ից յետոյ), կոչւում է նաև Եմեսացի ու այդ պատճառով շփոթւում երբեմն Եւսեբիոս Եմեսացու հետ. յայտնի է դարձել իբրև ճարտար քարոզիչ, գրել է նաև մեկնութիւններ. բայց միայն սակաւաթիւ ճառերն են մնացել։ Նորա անունով Մխիթարեանք հրատարակել են 15 ճառեր՝ նախ Աւգերեանի լատիներէն թարգմանութեան հետ (1827 թ.) և ապա միայն հայերէն։ Այդ ճառերը համարւում են ոսկեդարեան ընտիր թարգմանութիւններից. նոցանից 10-ը միատեղ ամփոփ ժողովածու են կազմում ձեռագիրներում, իսկ մնացածը ցրուած են բազմաթիւ ճառընտիրներում։ Միայն 2-ը այդ բոլորից գտնւում են նորա անունով յունարէն պահուած վաւերական ճառերի մէջ, մի քանիսը տեղ տեղ շփոթւում են Ոսկեբերանի ճառերի հետ, իսկ 10-րդը, ինչպէս յիշուեց, ս Բարսեղի ճառերից է։ Մեր ժողովածուի պարունակած հատուածները տպագրի հետ համեմատելիս, ինչպէս տեսնում ենք, ամենամեծ չափով տարբեր ընթերցուածներ են ընծայում։ Շատ զգալի է նմանապէս տարբեր ընթերցուածների առատութիւնը, երբ Գ. 1011=

3156 ձեռագրի 10 ճառերը համեմատում ենք տպագրի հետ։

Միւս ժամանակակից Յովհաննէս Բ. Երուսաղեմի եպիսկոպոսը (386—417 թ.) յայտնի է եղել դաւաբանական վէճերի մէջ իբրև Որոգինէսի ջերմ հետևողներից մէկը։ Տպագրութեամբ ծանօթ են միայն նորա հաւատոյ հանգանակը և մի քանի հատուկտոր ասորերէն լեզուով. իսկ հայերէն՝ Զարբհանալեան յիշում է միայն (եր. 580) մեր մատենադարանի Հ. 920=940=939 ձեռագրում եղած ներբողեանը՝ «Ի սուրբ եկեղեցին տէրունեան». կայ նաև մի քանի հատուկտոր «Արմատ հաւատոյ» և ուրիշ դաւանական գրուածների մէջ։ Մեր ժողովածուի նորա անուամբ հատուածները նորութիւն են ուրեմն։

ԺԸ. Ս. Կիւրեղ Աղէքսանդրացու երկերից քաղուած վկայութիւնները ամէնից ընդարձակ տեղն են բռնում մեր ժողովածուի մէջ, և այդ հասկանալի է, քանի որ, իբրև Եփեսոսի Գ. տիեզ. ժողովի նախագահ և Մարդեղութեան խորհրդի այդ ժողովում վերջնականապէս ձևակերպած դաւանական սկզբունքների թելադրողը՝ ամէնից մեծ հեղինակութիւնը պիտի լինէր նա բնականաբար Եփեսոսի ժողովից յետոյ ոչ մի նոր ժողով և դաւանական որոշում չընդունող մեր եկեղեցւոյ համար։ Օրթոդոքս եկեղեցու մէջ ևս ս. Աթանասից յետոյ միայն Կիւրեղ Աղէքսանդրացու գրուածներն են կանոնական հեղինակութիւն ստացել։ Այդ գրուածներից յատկապէս «Պարապմանց» և «Գանձուց» գրքերը շատ յարգի են եղել մեզանում, յաճախ արտագրուել, ուսուցման և լուծմանց առարկայ եղել, և մի քանի ճառերի ու Տաթևացու լուծմանց հետ տպուել Կ. Պոլսում, 1717 թ. ին (Աստուածատուր կաթուղիկոսի մակագրութեամբ և կնքով վաւերացրած մի յետնադարեան ձեռագրից, որ պահուում է մեր մատենադարանում)։ Ո՛չ պակաս նշանաւոր են ս. Կիւրեղի մեկնաբանական ամբաւ գրուածները, որոնցից բաւական թուով կան թարգմանած՝ ընդհանրապէս ոսկեդարեան ընտիր հայերէնով. բայց Եբրայեցւոց թղթի մեկնութիւնը, որից ընդարձակ հատուածներ բերուել են մեր ժողովածուի մէջ (եր. 156—167 և 364—366), չգտայ ձեռագիրներում։ «Հաւատամք»ի մեկնութեան (եր. 211) և «Գանձուց» հատուածների համար (եր. 279) իրենց տեղում տուած ծանօթութիւններից հետևում է, որ ս. Կիւրեղի մի քանի գրուածները կրկին անգամ են հայերէն թարգմանուել, և երկրորդ թարգմանութիւնը անկախ չի եղել հաւանականօրէն, այլ նախկինը սրբագրելով։ Թէպէտ մնացած հատուածների մեծ մասն էլ ս. Կիւրեղի անուամբ մեր ժողովածուի մէջ Տիմոթէոսի Հակաճառութիւնից է վերցուած, այնուամենայնիւ դեռ բաւական



շատ բան կայ պահուած մեր ձեռագիրներում նորա երկերից՝ թէ ամբողջական և թէ հատուածաբար։ Խորենացու պատմելով (Պատմութիւն, Դպ. Գ. գլ. ԿԱ. Վենետիկ. 1827. եր. 522) Եփեսոսի ժողովից յետոյ ս. Կիւրեղ ևս թուղթ է գրած եղել ս. Սահակին և ս. Մեսրովբին. բայց որ Թղթոց գրքի մէջ չի պահուել այն, ինչպէս պահուած են Պրոկղի և Ակակ Մելիտենացու թղթերը, կասկածելի է դարձնում նորա վկայութիւնը։

ԺԹ. Կիւրեղ Աղէքսանդրացու ժամանակակիցն էր, նորա նման խիստ հակառակորդ Նեստորի՝ Պրոկղը, որ Եփեսոսի ժողովից յետոյ, 434 թ. ին, Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեց և վախճանեց 446-ին։ Նորա անուամբ յայտնի են 25 ճառեր, մի քանի թղթեր և հատուածներ. բայց այն թղթերի և ճառերի մէջ, որ հայերէն են թարգմանուել և որ յիշում է Զարբհանալեան (Հայկ. թարգմ. եր. 662—666), չգտայ մեր ժողովածուի 3 հատուածները։ Զարբհանալեան պատմելով, որ Պրոկղ 2 թուղթ է գրել ս. Սահակին և որ նորա երկրորդ թուղթն է Թղթոց գրքի սկզբում տպուածը, առաջինի մասին ասում է, թէ նորա «հայկական թարգմանութեան դեռ հանդիպած չէ»։ Ահա այդ առաջին թղթի մասն է ամենայն հաւանականութեամբ մեր ժողովածուի մէջ (եր. 109) բերուածը։ Սակայն միւս թղթի մի հատուածն էլ գտնուում է մեր ժողովածուի մէջ, ինչպէս ակնարկած է իւր տեղում (եր. 130), Եզնիկ Կողբացու անուան ներքոյ։ Արդ, որոշելու համար, թէ երկուսից որն է այդ հատուածի իսկական հեղինակը, կարելի է ի նկատի առնել հետևեալ հանգամանքները։ Ա) Պրոկղի թղթի վերնագրի համաձայն ուղղուած է այն 2 անձի՝ ս. Սահակին և ս. Մաշտոցին. բայց թղթի սկզբին դիմումը լինում է մի անձի, եզակի արտայայտութիւններով, մինչդեռ վերջում բոլոր դիմումները յոգնակի են։ Բ) Թղթի սկզբում գրողը այնպիսի խոնարհութեամբ է դիմում թղթակցին, ներկայացնում իրեն մեղաւոր նորա առաջ, ցանկանում լինել մէկը նորա վարձկաններից, որ բոլորովին սպասելի չէր քաղաքակիրթ յոյն աշխարհի կենտրոն մայրաքաղաքի խրոխտ պատրիարքի կողմից դէպի մի խոնարհ «բարբարոս» ժողովրդի հովուապետ և չի համապատասխանում այն ծանօթ պայմաններին (տես. Հայկ. թարգմ. եր. 664), որոնց մէջ պիտի գրուած լինի այդ թուղթը. մանաւանդ որ թղթի վերջում հեղինակը իսկական խրատտուի և ուսուցանողի դերում է և զգալ է տալիս, թէ ինչքան բարձրից է նայում դիմացինի վերայ։ Գ) Այնտեղ, ուր Պրոկղի թղթի մէջ վերջանում է Եզնիկի հատուածը, հետևում են անկապ դարձուածներ և շարունակութիւնն ամենևին չի յարմարում նախընթացին.

մի անգամից փոխուում է գրութեան թէ ոճը և թէ բովանդակութիւնը։ Այս դիտողութիւններից իրաւունք եմ համարում եզրակացնել, որ Պրոկղի Թղթի մէջ նորա իսկական գրուածի ու Եզնիկի Թղթի մասերն իրար հետ խառնուած են, և որ Եզնիկին է պատկանում նաև մեր հատուածի նախընթաց կտորը Պրոկղի Թղթի մէջ։ Կ. Պոլսի պատրիարքի գրչի տակ խորթ հնչող բառերն այնքան յարմար են գալիս Եզնիկին՝ դէպի իւր բազմերախտ և սիրելի վարդապետն ուղղուած, որ թուում է թէ այստեղ արտայայտուած մեղայականը կապ ունի Խորենացու այն յիշատակութեան հետ (Պատմութիւն, Դպր. Գ. գլ. Կ. Վենետիկ, 1827 եր. 520), թէ Եզնիկ և իւր ընկեր Յովսէփը «առանց հրամանի վարդապետաց» Եդեսիան թողել՝ Բիւզանդիոն են գնացել։ Եզնիկի Թուղթը ուղղուած էր միայն ս. Մաշդոցին և դորա համար էլ դիմումը եզակի է. արդեօք Պրոկղի Թուղթը ս. Սահակին և ս. Մաշդոցին էր ուղղուած, թէ «Մեծաց Հայոց եպիսկոպոսներին», ինչպէս նորա մի Թղթի համար յիշում է Զարբհանալեան, կամ միայն ս. Սահակին, ինչպէս մեր ժողովածուի հատուածի վերնագրի մէջ է,—կարելի կլինի ստուգել և ամբողջ խնդիրը պարզել նոյն Թղթի յունարէն բնագրի և ասորերէն թարգմանութեան համեմատութեամբ, որ դժբաղդաբար չունինք ձեռքի տակ (տես. Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները. եր. 63)։ Գուցէ Եզնիկը որ և է դեր է կատարել Պրոկղի Թուղթը Հայաստան հասցնելու գործում, կամ նորա և Պրոկղի Թղթերը մի ժողովածուի մէջ, իբրև նոյն խնդրին վերաբերեալ նիւթեր՝ իրար կցուած են եղել, և այդ պատճառով արտագրելիս թերթերն իրար հետ շփոթուել են («մարդ կատարեալ» բառերի միջնորդութեամբ, որ երկուսի մէջ էլ լինելով, կարող էին արտագրողի աչքը մէկից փախցնել միւսի վրայ)։

Ի. Յետ-եփեսոսեան շրջանից մեր ժողովածուի մէջ վկայութեան են բերուած բնականաբար միայն հակաքաղկեդոնական՝ ընդհանուր եկեղեցւոյ կողմից չճանաչուած, հայրեր՝ Դիոսկորոս և Տիմոթէոս Կուզ Ե. դարու և միայն Փիլոքսէնոս Զ. դարու։ Դիոսկորոս՝ Կիւրեղ Աղէքսանդրացու յաջորդը Աղէքսանդրիոյ պատրիարքական աթոռի վրայ (444 թ. ից), որին Քաղկեդոնի ժողովը ձգեց աթոռից, բայց չվստահացաւ մեղադրել մոլար ուսմանց համար իբրև հերետիկոսի, այլ պատճառանօք ինչ ինչ վարչական զեղծումներ միայն բարդեց վերան, վախճանել է աքսորի մէջ Գանգրայում 454 թ. ին։ Գրաւոր մեծ երկասիրութիւններ նա չի թողել, եղածից էլ վերջերս միայն ասորերէն հատուկտոր յիշատակարաններ են երևան եկել։ Ինչ որ հայերէն թարգմանու-



թեամբ յայտնի է՝ յառաջ է բերած Տիմոթէոսի մեր հրատարակած Հակաճառութեան հետ, որից առուած են մեր ժողովածուի 2 հատուածները։

Դիոսկորոսի ջերմ կուսակից և նորա հակաքաղկեդոնական պայքարը շարունակող Տիմոթէոս Կուզի Հակաճառութիւնը, որի հրատարակութեան յառաջաբանի մէջ հեղինակի մասին ևս կարևոր տեղեկութիւնները հաղորդուած են, ոչ միայն առատ նիւթ է մատակարարել մեր ժողովածուին, այլ և, ինչպէս նկատուեցաւ, ամենայն հաւանականութեամբ նորա կազմութեան համար իբրև օրինակ ծառայել։ Առանձին ուշադրութեան արժանի է եր. 260 հատուածը, որ Հակաճառութիւնից չի առուած. հազիւ թէ առուած լինի նաև սորա Բ. կամ Գ. գրքից, եթէ այդպիսիները, ինչպէս Հ. Ակինեան ենթադրում է (Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ. Վիեննա, 1909. եր. 7 շ.), եղել են հայերէն թարգմանութեամբ. որովհետև այս հատուածի մէջ Հակաճառութեան բնորոշ ոճի ոչ մի արտայայտիչ նշանը չկայ. աւելի շուտ կարող է նորա յիշատակած (նոյն եր. 8) «առ Լևոն» գրքից լինել, որ Տիմոթէոսի Լևոն Ա. կայսեր ուղղած և նոյն իսկ հակառակորդների գովաբանած մի կարևոր դաւաբանական Թուղթն է։

Փիլոքսէնոս (Քսենայաս) Մաբուգի կամ Հիերապոլսի եպիսկոպոսը, որ Զ. դարի սկզբի ամենագիտուն դաւանաբաններից ու գործիչներից մէկն էր և կարևոր դեր է կատարել Անաստաս կայսեր իշխանութեան օրերում Քաղկեդոնի ժողովի դէմ մղած զօրեղ պայքարով (սպանուել է աքսորում հաւանականօրէն 523 թ. ին), De rebus Armeniae գրուածքի մէջ յիշուում է Տիմոթէոս Կուզի հետ՝ իբրև զոյգ հեղինակներ, որոնց հակաքաղկեդոնական երկերը հայերէն են թարգմանուել Ներսէս Բ. ի օրով և 554 թ. ի Դուինի ժողովի դաւանական որոշումների համար նիւթ մատակարարել։ Նա համարուում է այժմ ասորական լեզուի ամենագեղեցիկ ոճ գործածողներից մէկը, կատարել է ս. Գրքի մի նոր արժէքաւոր թարգմանութիւն յունարէնից, գրել է աւետարանների մեկնութիւն, քարոզներ, ճառեր, 2 ընդարձակ և բազմաթիւ մանր վիճաբանական-դաւանաբանական գրուածներ, թղթեր ևլն։ Որ և է դաւանաբանական ամբողջ գրուած Փիլոքսէնոսի անունով հայերէն թարգմանութեամբ դժբաղդաբար մինչև այժմ չի գտնուել, բայց անշուշտ եղել է, ինչպէս և նորա աւետարանի մեկնութիւնը և ճառերի գոնէ մի մասը. այդ երևում է մեր ժողովածուի 2 հատուածների վերնագիրներից (եր. 253 և 260)։ Նորա անունով հատուածներ կան նաև «Կաթուղիկեայց թղթերի» ու այլ խմբագրական մեկնութիւնների, «Արմատ հաւատոյ» քաղուածքի և

դաւանական թղթերի մէջ։ Գ. 493=2786 ձեռագրում գտնուում է Զարբհանալեանի յիշած (Հայկ. Թարգմ. եր. 734) «Վասն տեսլ. ս. ժողովոյն Եփեսոսի» համառօտ գործը, որ յամենայն դէպս «ի խնդրոյ տեառն Կոմիտասայ Հայոց կաթուղիկոսի» շարադրուած լինել չի կարող, եթէ Փիլոքսէնէսը լինէր նորա հեղինակը. բայց նոյն գրուածքն ուրիշ տեղ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի անունով է (Տես. Զարբհ. Հայկ. Հին դպրութիւն. Վենետիկ, 1386. եր. 389)։ Բոլորովին զուր տեղը Զարբհանալեան մի ուրիշ Փիլաքսիանոսի գործ է համարում (Հայկ. Թարգմ. եր. 734) «Վասն սկզբն առնելոյ ելանելոյ յաշխարհէս յայսմիկ» կրօնաւորական գրուածքը, որ գտնուում է մեր մատենադարանի Հ. 413=526=777 ձեռագրում (անցման երկաթագիր), Յովհաննէս Սարկաւագ վարդապետի երկերի հետ և տպուել է Հարանց վարքի մէջ. Փիլոքսէնոսի այդ բովանդակութեամբ երկեր ասորերէն բնագրով ևս կան պահուած (տես. В. Райтъ. Краткій очеркъ исторіи сирійской литературы. С. Петербургъ, 1902. ст. 51—53)։

ԻԱ. Ընդհանուր եկեղեցական գրականութիւնից մեր ժողովածուի բերած հատուածների մէջ մնում է յիշել Զենոն կայսեր նշանաւոր Հենոտիկոնը և նորա յաջորդ Անաստասի թուղթը, որոնցով 482 թ.-ից մինչև 518 թ. Քաղկեդոնի ժողովը լռելեայն դատապարտութեան էր ենթարկուում բոլոր կայսերական երկրներում և որոնք ուրեմն մի տեսակ վկայական են եղել հակաքաղկեդոնականների ձեռքում, թէ ինչպէս լոկ պատմական հանգամանքների շնորհիւ նոյն ժողովի որոշումները յետոյ հաստատութիւն են գտել։ Մեր մատենադարանի Գ. 267=3078 ձեռագրում կան այդ 2 թղթերը՝ նոյն չափով, ինչ որ «Գիրք թղթոց»ի մէջ (եր. 269 և 277). բայց Անաստասի թղթի մասին պատմութեան կամ գրականութեան մէջ ոչ մի տեղ յիշատակութիւն չենք գտնում, և կասկածելի պիտի համարենք վաւերականութիւնը։

ԻԲ. Մեր եկեղեցու հայրերից ժողովածուի բերած վկայութիւնների մէջ արժէքաւոր են. ա) Եզնիկ Կողբացու անուամբ 2 հատուածը, որոնցից մէկի մասին վերև խօսուեց. միւսը բոլորովին նոր է։ Զարբհանալեան յիշում է, թէ «Ճառընտրոց մէջ կը գտնուին երկու հատուածք ճառից՝ խորագիր կրելով. Եզնկայ առ սուրբն Մաշտոց». դոցանից մէկը տպուած է Բազմավէպ 1889 Խէ, եր. 321, ունի մեր եր. 51 հատուածի նման դաւանաբանական բովանդակութիւն և հրատարակողի կարծիքով վաւերական է. ապացուցանում է յամենայն դէպս, որ Եզնիկի առ Մաշտոց ուղղուած մի գրութիւն գոյութիւն ունեցել է և ուրեմն



եր. 130 հատուածն էլ այդ գրութիւնից է և ոչ թէ Գրոկղի թըղթից։ բ) Յովհան Մանդակունու անուամբ եր. 130 հատուածը, որ առնուած է, ինչպէս յետոյ նկատեցի և ցոյց տուի ուրիշ տեղ (Շողակաթ եր. 92 շ.). «Գիրք թղթոց»ի մէջ (եր. 29) տպուած «Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի՝ Ապացոյց» թղթից, որով և պարզուում է Մանդակունու բռնած դիրքը ժամանակի դաւանական խնդիրների մէջ։ Միւս հատուածը, որի տպուած օրինակը սկզբում փախել էր ուշադրութիւնիցս (Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի՝ Ճառք. Վենետիկ, 1860. եր. 212), գտայ յետոյ նաև Հ. 940=993 ձեռագրում և հրատարակեցի նոյն տեղում (Շողակաթ եր. 114), իրեն կից մի մեկնաբանական հատուածի հետ։ գ) Յովհան Մայրագոմեցու անունը կրող բոլոր հատուածները, որոնց նկատմամբ արդէն մի անգամ ինչ ինչ խորհրդածութիւններ արել եմ (Շողակաթ եր. 103 շ.) և որոնք գըլխաւորապէս միջոց պիտի տան մեզ պարզելու, թէ ի՞նչ էր Է. դարի սկզբում Հայոց եկեղեցու դաւանութիւնը՝ առ ի պահպանութիւն որոյ պիտառեցաւ «Կնիք հաւատոյ» ժողովածուն։

---

Ի՞նչ է եղել Հայոց եկեղեցու ընդունած դաւանական դրութիւնը և կերպաւորման ի՞նչ աստիճաններ է անցել իւր զարգացման առաջին՝ հիմնական, շրջանում, կարելի է առանձնապէս որոշ կերպով պատկերացնել վկայութիւնների այն շարքից, որ մեր ժողովածուի Բ. գլխում և զուգահեռաբար Թղթոց գրքի մէջ բերուած է մեր եկեղեցւոյ հայրերից։ Ս. Սահակի և ս. Մեսրովբի գործունէութեան օրերն՝ ինչպէս մեր եկեղեցական—ազգային կեանքի ուրիշ կողմերի համար դարագլուխ են կազմում, այնպէս և դաւանանքների պատմութեան համար։ Երբ Հայոց գիրը գործածութեան մէջ մտաւ, և մէկը միւսի ետևից թարգմանուում էին յոյն և ասորի առաջնակարգ եկեղեցական հայրերի գրուածները. երբ ս. Մեսրովբ—Մաշտոցի աշակերտները ասորի և յոյն դպրութեան մի քանի գլխաւոր կենտրոններն այցելեցին իբրև ուսանողներ և հոգևոր հաղորդակցութեան մէջ մտան այնպիսի եկեղեցական շրջանների հետ, որոնց մօտ դաւանաբանական խնդիրներն ամենակենդանի հետաքրքրութեան ու վէճի առարկայ էին,—չէր կարող նոցա գիտակցական ուշադրութեան չենթարկուել գրական ու պատմական նիւթերի այն ահագին զանգուածը, որ 4 երկար դարերի ընթացքում ամբարուել էր ս. Երրորդութեան և Մարդեղութեան գաղափարների շուրջը, զբաղեցրել Ընդհանուր եկեղեցւոյ մէջ բոլոր մտածող գլուխներն ու

հաւատացող հոգիները։ Այն հանգամանքը մանաւանդ, որ ս. Սահակի և ս. Մեսրովբի կենդանութեամբ տեղի ունեցած Գ. տիեզերական Եփեսոսի ժողովը, Մարդեղութեան խորհուրդի ուղղափառ դաւանական հիմունքները որոշելով իրապէս վերջնական ձեւակերպութիւն տուած եղաւ քրիստոնէական դաւանանքին, և որ մեր եկեղեցւոյ այդ հեղինակաւոր հայրերը յօժարութեամբ ընդունեցին իրենց եղած առաջարկութիւնը՝ ժողովի որոշումներին հպատակելու և հակառակ տեսութիւնները մերժելու,—պաշտօնապէս առիթ դարձաւ մեր եկեղեցւոյ համար՝ իւրացնելու այն ամէնը, ինչ որ մինչ այդ յառաջ էր տարուել դաւանական տեսակէտից Ընդհանուր եկեղեցւոյ մէջ՝ դէպի Եփեսոսի ժողովի սկզբունքներն առաջնորդող ուղղութեամբ։ Ս. Սահակի և ս. Մեսրովբի Կ. Պոլսոյ պատրիարք Պրոկղին ուղղած թուղթը բաւականաչափ պարզում է դրութիւնը։ Նոցա զբաղեցնում էր գլխաւորապէս իրենց ժողովրդին քրիստոնէութեան տարրական հասկացողութիւնները մատակարարելու և նորան բարոյապէս կրթելու հոգը. ուստի աւելի ջանադիր էին թարգմանութեամբ իրենց հօտին մատչելի կացուցանել եկեղեցական հայրերի այնպիսի գրուածներ, որ խրատական բնաւորութիւն ունէին, քրիստոնէական հոգի էին ներշնչում և վեհ բարոյական սկզբունքներով դաստիարակում. Նոցա աչքին խորթ է երևում յոյն փիլիսոփաների խորաքնին տեսութիւններով «արբեցեալ» և «մոլորեալ» այն անձանց արարքը, «որք աւելի քան զինքեանս չափն ջանան և նկրտին ըմբռնել զանհասն՝ առանց ըմբռնելոյն»։ Դաւանաբանական նրբութիւնների վերայ նոքա նայում են ուրեմն այնպէս, ինչպէս նայել էր, օրինակ, արևելքի քրիստոնէութեան մեծ ուսուցիչ ս. Եփրեմը մեր ժողովածուի Ա. գլխի երկրորդ հատուածում. այդ նրբութիւնների մէջ մտնելու տրամադրութիւն չունէին ամենևին, այլ դաւանում են ամենայն ուղղամտութեամբ հաւատոյ այն էական կէտերը, որ Հայոց մեծ Լուսաւորչի օրով Նիկիոյ ս. ժողովը որոշել էր և որ այժմ առ միշտ պարզաբանել ու հաստատել էին Եփեսոսում գումարուած Ընդհանրական եկեղեցւոյ հայրերը. ուստի և պատրաստ էին ամենայն խստութեամբ մերժելու և հալածելու նոցա, որոնք կգային իրենց մօտ՝ մնոտի գիտութեամբ մոլորութիւններ սերմանելու նպատակով։ Դաւանութեան այն կէտը, որ առաջնակարգ կարևորութիւն ունէր նոցա ժամանակի համար և որ նոքա ընդունելով՝ որոշեցին նաև եկող սերունդների բռնելիք ուղղութիւնը յաջորդ դարերում, կազմում է հենց «Կնիք հաւատոյ» ժողովածուի Բ. գլխի վերնագիրը. Յիսուս Քրիստոս իւր մարմնով մէկտեղ անբաժանելի միութիւն է՝



աստուածայինն ու մարդկայինը միանգամայն յատուկ նորան, և աններելի՝ որ և է երկուութեամբ բաժանել այդ միութիւնը։ Ապա, քանի որ ս. Սահակ և ս. Մեսրովբ, ոչ միայն Եփեսոսի ժողովի դաւանութիւնն ընդունելով, այլ և «Թէոդորոս Մամուեստացու» բոլոր աշակերտեալներին հալածել յանձն առնելով՝ կռիւ էին յայտարարել Անտիոքի դպրոցի դէմ, որ ամէն տեսակ երկուութեան ուսմանց աղբիւրն էր՝ այդ կռիւն և յատկանշանական է դառնում յաջորդ դարերի մեր եկեղեցւոյ պատմութեան համար։

Ամէնից վաղ սկսուեց և ամէնից աւելի յամառ ու երկարատև եղաւ հակառակութիւնը Քաղկեդոնականութեան դէմ։ Ես առիթ եմ ունեցել արդէն ցոյց տալու (Շողակաթ եր. 89—93), որ Հայոց մէջ քաղկեդոնական վէճերի սկսուելու մասին մինչև այժմ տիրող հայեացքը պէտք է փոխուի հիմնովին և Յովհան Մանդակունին նկատուի իբրև առաջին մերժողը Քաղկեդոնի ժողովի։ Մեր ժողովածուի եր. 130 հատուածը նորա անունով ակներև է կացուցանում այդ և հերքում, առանց այն էլ ոչնչի վերայ հիմնուած՝ կասկածները Գիրք Թղթոց եր. 29 «Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի» գրութեան մասին (Հ. Ն. Ակինեան. Կիւրիոն կաթ. Վրաց. եր. 44 և Ասոնց. Христ. востокъ, 1913 եր. 176), որի մի մասն է այդ հատուածը։ Պատմական այդպիսի յիշատակարանների վաւերականութիւնն ու անվաւերականութիւնը մեր ճաշակով կամ մեր կազմած տեսութիւններով չի որոշուում, այլ միայն պատմական տուեալներով. իսկ այնպիսի տուեալ չկայ ամենևին, որ յիշեալ գրութեան վաւերականութեան դէմ վկայէր։ Այն փաստը, որ Հ. Ակինեան բերում է (Տիմոթէոս Կուզ. եր. 41) դորան կից Թղթոց գրքում գտնուող (եր. 22) «Մեծի Վերթողահաւրն Մովսէսի Խորենացւոյ» գրութեան վաւերականութեան դէմ՝ առարկելով, որ այստեղ յիշուած Երեքթէոս եպիսկոպոսի անունն ու ճառը Տիմոթէոսի Հակաճառութեան հայերէնի ծանօթութիւն են ցոյց տալիս, ինքնին վերանում է Հ. Գ. Տէր Մկրտչեանի բերած (Շողակաթ եր. 154 շ.) նոր ապացոյցներով, թէ Հակաճառութիւնը թարգմանուած պիտի լինի 480—484 թ.ներին։ Նորա ապացոյցների վերայ կաւելացնեմ այն դիտողութիւնը, որ «Յովհաննու եպիսկոպոսապետի» գրութիւնը գործ է ածում Տիմոթէոսի Հակաճառութեան միայն յատուկ բառեր ու դարձուածներ (այլ ոմն զՅիսուսն զոլով ախտակրելի, և այլ զՔրիստոսն՝ անախտ և անչարչարելի. զուգանանապատճառութիւն, ախտակիր, աստուածվայելչաբար, անբաժ, տնտեսութիւն եւն.) և գաղափարներով էլ պտտւում է նորա դաւանաբանական ըմբռնմանց շրջանակի մէջ։ Թէ Մանդակունու և թէ Մովսէս Խորենացու (որ

անշուշտ Ղազար Փարպեցու թղթի մէջ յիշուած «երանելի փիլիսոփոս Մովսէսն» է) այդ գրուածները «յետնագոյն դարուց տիպն կերեւցնեն վրանին» միայն այնպիսի նախապաշարեալ մտքերում, որոնք հակառակ ակներև փաստերի շարունակում են պնդել, թէ յունաբան գրուածներ և թարգմանութիւններ չեն կարող Ե. դարից մնացած լինել. (արդեօք Մանդակունու գրութեան վերջում՝ «Փախիցուք ի սատանուն գիտութենէ նորաձայն բանից նոցա» խօսքը ակնարկ չէ՞, որ նորա աչքի առաջ կար նաև Իրենէոսի գրուածների հայերէն թարգմանութիւնը). կամ թէ Մխիթարեանների կողմից գնահատուած ու փառաբանուած եկեղեցական հայրեր իրաւունք չունին իբրև հակաքաղկեդոնական հանդէս գալու։ Ով ազատ է այդպիսի նախապաշարումներից՝ պէտք է ընդունէ այժմ, որ ինչպէս Տիմոթէոսի Հակաճառութեան թարգմանութիւնը, այնպէս և յիշեալ երկու գրութիւնները Ե. դարու ութսունական թուականների ծնունդ են, միմեանց հետ սերտ կապ ունեցող վաւերագրեր, որ լաւ պարզում են, թէ ի՞նչ էր այդ ժամանակ Հայոց եկեղեցու ընդունած դաւանական դրութիւնը։

Մանդակունին մնում է իսկապէս այն տեսակէտի վրայ, որով առաջնորդուած գտանք եկեղեցւոյ առաջին մեծ վարդապետներին՝ ս. Սահակին և ս. Մեսրովբին. «Եթէ Հոգւով Սրբով է գիտութիւն վայելչապէս խոստովանողացն զՔրիստոս», ապա անտեղի է ամեն մի յանդուգն ձեռնարկութիւն Աստուծոյ էութեան և տնօրէնութեանց խորքը քննելու. այն խորութեան մէջ սուզուողը «վաղվաղակի հեղձամղձելով մատնի սատակման», ճշմարիտ քրիստոնէին բաւական են ս. Գրքի ցուցմունքները, որոնք միայն մի Քրիստոս գիտեն, և ոչ մի բաժանում, ոչ մի երկուութիւն. ինչպէս և Նիկիոյ ժողովը, հաստատելով մի անգամ ընդ միշտ, որ Քրիստոս Հօր հետ նոյն բնութիւնն ունի, կտրել է արմատից երկու կամ աւելի բնութիւնների մասին դատելու ամէն տրամադրութիւն։ Քաղկեդոնի ժողովն այս գրութեան մէջ չի յիշուած, բայց նորա ամբողջ բովանդակութիւնից պարզ է, որ այդ ժողովի յանձին Քրիստոսի չարչարելի ու անչարչար բնութիւններ որոշելու դաւանական տեսութիւնն է ի նկատի առուած, և միայն այդ տեսութիւնը, առանց ոևէ ակնարկի Զ. և յաջորդ դարերին յատուկ մի նոր բացատրութեան։ Նոյն սահմանների մէջ մնում է նաև Մովսէսի թուղթը, բայց աւելի խոր դիտողութիւններով՝ արդէն Ապողինար Լաւոդիկեցու Դ. դարի վերջում յարուցած, այն առարկութեան դէմ, թէ 2 կատարեալ մի կատարեալ լինել չեն կարող. և այնպիսի պարզ փիլիսոփայական տրամաբանութեամբ, որ ըստ ամենայնի վայել է Փարպեցու գոված



փիլիսոփոսին. ամբողջ գրութիւնը՝ Հակառակ Հ. Ակինեանի կարծեաց, «թէ բովանդակութեամբն և թէ լեզուովն» արժանի է Թղթոց գրքի մէջ բռնած իւր պատուաւոր տեղւոյն։

Դժուարացել էի առաջ (Տողակաթ, եր. 93) ճշտիւ որոշել, թէ ի՞նչը կարող էր առիթ եղած լինել Մանդակունու Քաղկեդոնի ժողովի դէմ զինուելուն. բայց եթէ ի նկատի առնենք ժամանակի բոլոր հանգամանքները, ամենահաւանական առիթը պիտի համարուի Զենոնի հենոտիկոնի հրատարակութիւնը, որ տեղի է ունեցել 482 թ. ին, ուրեմն Վահանանց ապստամբութեան օրերում. իսկ այդ ապստամբութեան փառքով ու խաղաղութեամբ վերջանալու ժամանակամիջոցը յարմարագոյնը պէտք է համարուի նաև դաւանական խնդիրների Հայոց մէջ արծարծուելուն համար։ Ինչպէս Հենոտիկոն («գիր միաւորութեան» թարգմանուած Գիրք Թղթոց եր. 269) անունն էլ ցոյց է տալիս, Զենոն կայսեր նպատակն էր Ընդհանուր եկեղեցւոյ միջից վերացնել բոլոր դաւանական խտրութիւնները և իւր գայիսոնի տակ միացնել յատկապէս Քաղկեդոնի ժողովի պատճառով բաժանուած ու խռովթացած արևելքի քրիստոնեաներին։ Ամենևին զարմանալի չէ ուրեմն, որ այդ հրովարտակը կողմնակի կերպով Հայաստան ևս ուղարկուած լինի՝ Հայոց եկեղեցու իրաւասութեան ներքոյ գտնուողներին գրաւելու ի նպաստ նոյն միութեան, և այդ պատճառ եղած լինի, որ Հայոց կաթողիկոսը որոշէր իւր եկեղեցւոյ դիրքը եղած առաջարկութեան և Քաղկեդոնի ժողովի նկատմամբ։ Պարզ պատահմունք չէ հաւանականաբար, որ «Պատճառք Դ. ժողովոյն» գրութեան մէջ (Գիրք Թղթոց, եր. 126) Զենոնի Հենոտիկոնն ու «Թուղթ Յովհաննու եպիսկոպոսապետին» յիշուում են միատեղ և Տիմոթէոսի Հակաճառութեան, Անաստաս կայսեր թղթի և ուրիշ մի քանի գրուածների հետ համարուում են, Է. դարի սկզբում, Քաղկեդոնի ժողովի հերքման համար կարևորագոյն վաւերագրեր։ Եւ իրօք Մանդակունին, որ վաղուց ուրեմն յայտնի էր իբրև Քաղկեդոնի ժողովի ախոյեան, ինչպէ՞ս անուշադիր թողած կլինէր իւր ժամանակի ամբողջ քրիստոնեայ աշխարհում աղմկող Զենոն կայսեր թուղթը։ Նորա գրութիւնն իսկ համապատասխան է ըստ ամենայնի այդ թղթի ոգւոյն՝ դատապարտել Քաղկեդոնի ժողովը, առանց նորա անունը տալու և հերքելով հիմնովին երկու բնութեանց ուսումը։ Յամենայն դէպս Բաբգէն կաթողիկոսի երկրորդ թղթի մէջ (Գիրք Թղթոց եր. 43) որոշ վկայութիւն ենք գտնում, որ «Զենոն բարեբանեալ թագաւորի» թուղթը արդէն Զ. դարի սկզբներում պաշտօնապէս ճանաչուած էր Հայոց կողմից իբրև ուղղափառ դաւանութեան վաւերագիր, և օտարներին

*իսկ յայտնի էր այդ (տես. Արարատ, 1908. եր. 701)։ Սակայն հետևեցնել դորանից, թէ Բաբգէն ինքն է ընդունել Հենոտիկոնը (տես. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները. եր. 65) այն ժամանակ միայն անհրաժեշտ էր, երբ կարծում էինք, թէ առաջին անգամ նորա օրով է տեղի ունեցել Քաղկեդոնի ժողովի լսելեայն դատապարտութիւնը. մինչ այժմ, երբ տեսնում ենք, որ այդ տեղի է ունեցել Մանդակունու օրով՝ ոչինչ չի արգելում Հենոտիկոնի ընդունելութիւնն ևս նորան վերագրել։*

*Ն. Ադոնց իւր վերև յիշուած յօդուածի մէջ (*Христ. востокъ, *1913, եր. 175), առանց որ և է լուրջ փաստի՝ կասկածների ենթարկելով Թղթոց գրքի նոյն իսկ նախնական մասը, որ իբրև թէ «իւր բովանդակութեամբ ոչինչ նորութիւն չի ներկայացնում» (ուրեմն Բաբգէնի և Ներսէս Բ.ի թղթերն էլ նորութիւն չեն), համարում է ամբողջ յիշատակարաններ յետոյ աւելացրած, կամ ինչ ինչ յիշատակարանների այս և այն մասը յետոյ մտցրած, ի միջի այլոց Բաբգէնի Բ. թղթի այն կտորը, որի մէջ յիշուում է Զենոնի Հենոտիկոնը։ Այդ ցոյց տալու համար նա դիմում է զարմանալի ծայրայեղ վարկածների։ Ո՛չ միայն ենթադրում է, այլ և իբրև «անկասկած» ընդունում, որ այդտեղ յիշուած* Կոստանդինուպալսի բարեպաշտ և աստուածասէր երէց Անատոլիոս *Աղեքսանդրիոյ պատրիարք Տիմոթէոս Կուզի եղբայր և նորա հետ աքսոր գնացած Անատոլիսն է. իսկ «մեծն Ամպեղիս եպիսկոպոս Քերսոն քաղաքի, ճշմարիտ հաւատոյ սիրաւղ և սպասաւոր», որի՝ Կիւրեղ Աղեքսանդրացու ԺԲ. նզովքները հետը կցած, գրուածքին յիշեալ Անատոլիս երէցը Զենոնի հենոտիկոնը յարակցելով՝ քրիստոնէական ուղիղ դաւանութիւնը պարզաբանող մի կարևոր վկայաթուղթ է կազմել, ուրիշ մէկը չէ, բայց եթէ նոյն ինքն Տիմոթէոս Կուզ, որի երկրորդ աքսորատեղին էր Քերսոն, որին Զաքարիա Հռետորը «Մեծ» մակդիրն է տուել և որ ուրեմն այստեղ կարող էր յիշուած լինել իբրև «Մեծն եպիսկոպոս Քերսոն քաղաքի». մի գրչակ լուսանցքում կգրէր նորա եղբօր անունը, և փոխանակ «Անատոլիսի», ասորերէնից առուած ձևով «Անտեղիս». այդ* Անտեղիսը *յետոյ կմտնէր բնագրի մէջ ու կդառնար* Ամպեղիս։ *Ապա՝ որովհետև* Միաբան *Գ. Տէր Մկրտչեանը սխալուում է և Տիմոթէոս Կուզի հակաճառութիւնը, որ ծանօթ է եղել Բաբգէնի թղթի այս կտորը գրողին, ինչ ինչ յետոյ բացատրուելիք լեզուագիտական տեսութեանց հիման վերայ չի կարող Զ. դարի վերջերից առաջ թարգմանուած լինել, և որովհետև Տիմոթէոսի եղբայր Անատոլիսը Զենոնի հենոտիկոնը հրատարակուելուց շատ առաջ է վախճանել, ուրեմն թղթի այս մասերը ուշ ժամանակի*



*յաւելումներ պիտի համարուին։ Սակայն ուր կհասնենք այսպիսի վարկածներով և ինչ պատմական իրողութիւն կմնայ այլ ևս, որ կարելի չլինի ըստ հաճոյից հերքել կամ հաստատել։*

*Տեսնենք, աւելի լաւ է, թէ ինչ է ասուած Բաբգէնի թղթի մէջ Ամպեղիս եպիսկոպոսի, Անատոլիս երէցի և Զենոնի թղթի մասին՝ ինչ նպատակով։ Թուղթը գրելու պատճառ եղել է «Սիմոն երէց աշխատասէր և անձանձրոյթ յամենայն ժամ ի խնդիր հաւատոյ»,—վերև յիշուած Բեթ-Արշամացին, որ Բաբգէնի առաջին թուղթը Պարսկաստան տանողներից մէկն էր և կրկին վերադառնալով տեղեկութիւն էր բերել, թէ նեստորականները Հայոց թղթին էլ կարևորութիւն չեն տուել և շարունակում են եկեղեցին ալեկոծեալ վիճակի մէջ պահել՝ «ի ժողովոյն Քաղկեդոնի զաւրացեալ»։ Այս յիշատակութիւնն արժանի է առանձին ուշադրութեան։ Բաբգէնի Ա. թղթի մէջ ասուած է, որ նեստորականները աշխատում էին ամէնքին հաւատացնել, «թէ Հոռոմք և Հայք և Վիրք և Աղուանք զնոյն կանոն և զհաւատ ունին, զոր մեքս ունիմք». Բ. թղթից երևում է, որ ինչպէս Հայերը մեզ ծանօթ Ա. թուղթը Սիմէոն Բեթ-Արշամացու և նորա ընկերների ձեռքը տալով, այնպէս և նոցա հետ միաբան Դուինի ժողովում գտնուող Վրացիք և Աղուանք «իւրաքանչիւր աշխարհի գրով» հերքել էին այդ ստութիւնը։ Ի՞նչ զարմանք, եթէ նեստորականները շարունակէին պնդել այնուհետև էլ, թէ «Հոռոմք» այնուամենայնիւ իրենց դաւանակից են, թէ Քաղկեդոնի ժողովը, որ Ա. թղթում չէր յիշուել, բանադրել է Նեստորի, Դիոդորի, Թէոդորոս Մոպսուեստացու և Թէոդորետի ծայրայեղ հակառակորդ Եւտիքէսին, որ նոյնպէս չկայ յիշուած Ա. թղթում և որի հետևող էին ներկայացնում այժմ երևի Հայերին, Վրացիներին ու Աղուաններին,—և հաստատել իրենց քարոզած 2 բնութեան վարդապետութիւնը։ Եւ ահա Բ. թղթի մէջ թէ Եւտիքէսն է բանադրուում և թէ Քաղկեդոնի ժողովի ստութիւնը Նեստորի հետ հաւասարապէս մերժուում. որ գլխաւորն է՝ թղթին կցուում են Ամպեղիս եպիսկոպոսի և Անատոլիս երէցի գրերը, որոնց առաջինն ըստ երևութին ապացուցանում էր, թէ Քաղկեդոնի ժողովը չարաչար հակասութեան մէջ էր ընկել՝ ս. Կիւրեղի ԺԲ. նզովների հետ ուղղադաւան ճանաչելով նոցա հակառակորդ Նեստորի ուսումնակից Թէոդորետին, իսկ երկրորդը, թէ* Հոռոմոց *կայսր Զենոնը իւր հրովարտակով դատապարտել էր՝ առաջին 3 տիեզերական ժողովների վարդապետութեան սահմանից ելնող ուրիշ ամէն մոլար ուսմանց հետ, նաև Քաղկեդոնի ժողովի ընդունած 2 բնութեան դաւանութիւնը։*

*Ադոնց մեղադրում է որոշ չափով այն անձանց, որոնք Բաբգէնի Թղթերով զբաղուել են, բայց ամենևին հետամուտ չեն եղել որոշելու Խերոսնի եպիսկոպոս Ամպեղիսի անձնաւորութիւնը։ Ես գոնէ, որ առաջին անգամ հրատարակել եմ Թղթերը և աշխատել նոցա պատմական նշանակութիւնը պարզելու, չէի կարող այդպիսի հետազօտութիւն կատարել՝ նախ որովհետև այն կարծիքին չեմ, թէ նախնի գրականութեան մէջ ամէն տեղեկութիւն կարելի է գտնել, իսկ չգտնելու դէպքում բռնազբօսիկ բացատրութիւններ տալ. և երկրորդ՝ իմ ձեռքի տակ այնպիսի մատենադարան չկար, բազմակողմանի ճոխ աղբիւրներով, որ կարողանայի գոնէ եղած տեղեկութիւնները որոնել։ Բայց Ադոնց ինքն էլ, որ առանձնապէս զբաղուել է այս խնդրով, որոնել է և չի գտել, չի երևում, թէ իւր տրամադրութեան ներքոյ եղող շատ աւելի առատ աղբիւրներից ըստ հարկին օգտուած լինի. ապա թէ ոչ այնպիսի աներևակայելի սխալ չէր անի, ինչպէս է՝* Ցակոբիկ *անուանել 506 թ. ի ժողովին մասնակցող Սիմէոն Բեթ-Արշամացուն և նորա դաւանակիցներին, մինչդեռ Յակոբ Բարադէոս կամ Ծանծաղոս, որի անունից է Սևերեան դաւանութեան հետևողների* Ցակոբիկ *կոչումը, ասպարիզի վրայ երևացել է առաջին անգամ 527—528 թ. ին և վախճանել 578-ին (տես.* Райтъ, ст. *60—61 և այլուր)։ Ինձ մատչելի տեղեկութիւններով՝ իբրև փոքր ի շատէ հաւանական ենթադրութիւն կարող եմ ներկայացնել այն, թէ Ամպեղիս գուցէ նոյն Ամփիղոքիոս եպիսկոպոսն է, որ երբ Լևոն Ա. կայսրը գրաւոր կարծիքներ պահանջեց իւր պետութեան մէջ գտնուող եպիսկոպոսներից և նշանաւոր վանականներից Քաղկեդոնի ժողովի և նորա դէմ եղած բողոքների մասին՝ սակաւաթիւ հակառակ Քաղկեդոնի կարծիք յայտնողներից մէկն եղաւ* (Real—Encyklopädie, Band X, 2-te Ausgabe, Art. Monophysiten, S. *237)։ Վերև յիշուել է, որ այս նոյն առթիւ Տիմոթէոս Կուզի կայսեր ուղղած Թուղթը հաւանականաբար հայերէն թարգմանուած եղել է. ինչու չմտածել ուրեմն, որ միաժամանակ թարգմանուել է նոյն նպատակին ծառայող մի ուրիշ Թուղթ՝ արժէքաւոր Հայերի աչքում յատկապէս նորանով, որ Անատոլիս անունով Կ. Պոլսի մի երէց այդ Թղթի հակաքաղկեդոնական բովանդակութիւնը լրացրել էր թարգմանութեան օրերում առաջնակարգ կարևորութիւն ունեցող Զենոնի հրովարտակով և պատշաճ բացատրութիւններով։ Յայտնի է, օրինակ, որ Սևերոս Անտիոքացին էլ տուել է Հենոտիկոնի բացատրութիւն այն իմաստով, թէ նա դատապարտում է Քաղկեդոնի ժողովը (տես.* Patrologia orientalis, tome II, p. *273)։ Պէտք է ենթադրել, թէ նոյնպիսի մի բացատրութիւն*



*էր Անատոլիսի գրածը, որ իբրև Կ. Պոլսի երէց է յիշուում, և ոչ թէ Աղէքսանդրիոյ, և որին Տիմոթէոս Կուզի յայտնի եղբօր հետ նոյնացնելու ոչ մի բանաւոր հիմք չկայ։ Անատոլիոս խիստ սովորական անուն է Յոյների մէջ, և նոյնքան անտեղի կլինէր պնդել, թէ չի կարող Կ. Պոլսում Ե. դարի վերջին այդ անունով մի երէց եղած լինել, որի գրութիւնը մեզ չի հասել, որքան տարօրինակ՝ երևակայել, թէ բոլոր Անատոլիոսները մեզ յայտնի են, կամ ով յայտնի չէ՝ պէտք է նոյնացուի յայտնիների հետ։ Աւելացնենք նաև այն, որ Բաբգէնի Բ. Թղթի հետ գրի առնել և Պարսկաստան ուղարկել կարելի էր միայն մի փոքրիկ գրուածք, ինչպիսին էր հաւանականաբար Անատոլիսի Ամպեղիսի Թղթին կցուած շարադրութիւնը՝ ս. Կիւրեղի և Զենոնի հեղինակաւոր վկայութիւններով, և ոչ թէ Տիմոթէոսի Հակաճառութեան ահագին գիրքը։ Թող որ Տիմոթէոս շատ անգամ յիշուած լինելով Թղթոց գրքում՝ ոչ մի տեղ մեծ մակդիրը չի կրում (ինչպէս և «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ), և Հայերը չէին կարող իմանալ, թէ Զաքարիա Հռետորն այդպէս է կոչել նորան, և առանց անուան իսկ՝ «մեծն եպիսկոպոս» միայն կարդալով, հասկանալ, թէ նորա մասին է խօսքը, այն ևս նորա աքսորավայրին շփոթելով նորա աթոռանիստ քաղաքի հետ, թէպէտ շատ լաւ գիտէին, որ նա նշանաւոր Աղէքսանդրիոյ մի նշանաւոր եպիսկոպոսն է եղել։*

*Ադոնց անեղծ պահպանուած չի համարում նաև Բաբգէնի Ա. Թուղթը՝ այն հիման վրայ, որ Աբրահամ Աղբաթանեցու Գ. Թղթի մէջ յիշուում են Բաբգէնի գումարած ժողովին մասնակցող Վրաց կաթուղիկոսն և եպիսկոպոսները՝ իբրև ստորագրողներ այն «պայման նամակի», որ ապստամբութեան ժամանակ (երևի 571—72 թ. ներին) կորել էր և յետոյ թարգմանուել յունարէնից. մինչդեռ մեզ յայտնի Թղթի մէջ Վրաց եպիսկոպոսների անուններ չկան, և եթէ թարգմանութիւն է՝ իսկականի արժէքը չի կարող ունենալ այն։ Սակայն ով ասաց, թէ Հայոց, Վրաց, Աղուանից և Սիւնեաց՝* միաբանութեամբ Քաղկեդոնի ժողովն ու Լեւոնի տումարն անիծող *«պայման նամակը» նոյն մեր ձեռքը հասած «հաւատոյ նամակն» է, որ Հայոց կաթուղիկոսը հայ եպիսկոպոսների և իշխանների հետ Պարսկաստանից իրենց դիմող քրիստոնեաների ձեռքն է տուել։ Եւ ի՞նչն է ստիպում ենթադրել, թէ Բաբգէնի գումարած ժողովում միայն մի Թուղթ է գրուել։ Արդէն ուրիշները (Տէր Մինասեան, Արարատ. 1908. եր. 706. Օրմ. Ազգապատում, եր. 507) մատնանիշ են արել, որ Բաբգէնի Բ. Թղթում պարզ ասած է, թէ նորան դիմող Պարսկաստանի քրիս-*

տոնեանների ձեռքը առաջին անգամ առանձին առանձին թուղթ է տրուել՝ «Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով», և այդ թղթերն ստացող Սիմէոն Բեթ-Արշամացին ինքն էլ ուրիշ տեղ վկայել է (տես. Արարատ, եր. 701), որ իրեն ծանօթ է՝ ինչպէս 32 հայ եպիսկոպոսների, այնպէս և 33 վրացի եպիսկոպոսների դաւանագիր. ուստի Բաբգէնի Ա. թղթի մէջ Վրաց եպիսկոպոսների անունները չյիշուելը հասկանալի կլինէր, եթէ նոյն համարէինք անգամ Աբրահամ կաթուղիկոսի յիշած «պայման Նամակի» հետ. բայց ոչինչ իրաւունք չի տալիս մեզ նոցա նոյնութիւնն ընդունելու։ Այդպէս ընդունելով՝ Ադոնց մի հետաքրքրական երևոյթ է համարում, որ «Դուինի ժողովից մի դար յետոյ նոյն իսկ այդ ժողովի զբաղման առարկան մթնացել էր ապրող սերունդի գիտակցութեան մէջ և հակնեստորականութիւնը դարձել էր հակաքաղկեդոնականութեան հաւասարազօր մի ըմբռնում։ Աբրահամի հասկացողութեամբ ժողովը մերժել էր Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տոմարը. մինչդեռ լաւ յայտնի է, որ ժողովը բացառապէս Նեստորականութեան դէմ էր ուղղուած»։ Ժամանակ է սակայն ձեռք քաշելու առհասարակ մեր հայրերի տգիտութեան մասին օտարների սնուցած և մեր ամենայն բարեմտութեամբ ընդունած (հմմտ. Հայոց եկ․ոյ յարաբերութիւնները, եր. 80) անհիմն մեղադրանքներից։ Աբրահամ կաթուղիկոսի ժամանակ էլ, առաջ էլ, յետոյ էլ (ի բաց առեալ մեր ամենագիտուն դարը) Հայոց մէջ բաւականաչափ գիտուն վարդապետներ միշտ եղել են, որոնք իմանային, թէ ի՛նչ է Նեստորականութիւնը և ի՛նչ քաղկեդոնականութիւնը։ Ես ինքս էլ Բաբգէնի թղթերը հրատարակելիս այն կարծիքն եմ յայտնել (Արարատ, 1898. եր. 435), թէ Դուինի ժողովի զբաղման բուն առարկան Նեստորականութիւնն է եղել, որի դատապարտութիւնից յետոյ կողմնակի կերպով եզրակացութիւն են հանել նաև Քաղկեդոնի ժողովի դատապարտութեան մասին. բայց բոլոր հանգամանքները նորից ուշի ուշով կշռելով՝ տեսնում ենք, որ սխալ է այդ կարծիքը։ Բաբգէնի Ա. թղթի մէջ որոշակի ասուած է, որ նա՝ «Հայոց եպիսկոպոսապետ, ամենայն եպիսկոպոսաւք և վանականաւք և նախարարաւք» արդէն ժողովուած էին Դուինում, երբ նոցա մօտ են գալիս Պարսկաստանի քրիստոնեաները, իրենց ո՛վ լինելը և ի՛նչ նպատակով գալը բացատրում. հետևաբար ժողովը գումարուած էր բոլորովին անկախ նոցանից և իւր տարբեր նպատակն ունէր։ Աբրահամի թղթերի մէջ պահուած ակնարկները ո՛չ թէ շփոթում են, այլ միջոց են տալիս փոքր ի շատէ պարզելու, թէ ի՛նչ կարող է եղած լինել նորա գումարման բուն շարժառիթն ու նպատակը։



Իւր առաջին թղթում արդէն Աբրահամ յիշում է, որ Կաւատ արքայից արքայի օրով հաւատոյ վերաբերեալ խնդիրների քննութիւն է տեղի ունեցել, Հայերն ու Վրացիները մերժել են Քաղկեդոնի ժողովը, և նոցա միաբանութեան գիրը պահուած եղել է իւր օրերում։ Վերև ենթադրութիւն եղաւ, որ այդ քննութիւնը կարող է կապ ունեցած լինել Վահան Մամիկոնեանի երկրորդ ապստամբութիւնից յետոյ հաւանականաբար Հայերի ու նոցա հարևան քրիստոնեայ ազգերի—և Պարսից արքունիքի մէջ հաստատուած մի դաշինքի հետ, որով նոցա միաբան խոստովանութեամբ ընդունած քրիստոնէութիւնը ամէն պաշտպանութիւն պիտի վայելէր Պարսից թագաւորների կողմից։ Յայտնի է ապա, որ յոյն-պարսկական պատերազմի 505 թ. ին դադարելուց անմիջապէս յետոյ Անաստաս կայսրը սկսաւ ամենայն եռանդով հետամուտ լինել իւր նախորդ Զենոն կայսեր Հենոտիկոնն ամբողջ քրիստոնեայ աշխարհում ընդունել տալու և այդպիսով դաւանական միութիւն հաստատելու եկեղեցւոյ մէջ. որ միաժամանակ Փիլոքսէնոս Մաբուգի նշանաւոր եպիսկոպոսը Կ. Պոլիս գնաց և թէ այնտեղ, թէ մանաւանդ վերադարձին արևելքում մեծ յուզումներ յառաջ բերաւ՝ աշխատելով աւելի առաջ անցնել և որոշակի բանադրել տալ Քաղկեդոնի ժողովը։ Անաստաս կայսեր թուղթը, ինչպէս նկատուեց, հազիւ թէ վաւերական լինի, քանի որ պարզ կերպով նզովում է Քաղկեդոնի ժողովը, մինչդեռ Անաստաս առհասարակ խոյս է տուել դորանից և կամեցել է Հենոտիկոնի գծած սահմաններում մնալ. այլ և վկայութիւն է բերում զ«Թուղթն երանելոյն Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի», որով ակնարկուում է երևի Յովհաննէս Բ. ի Սևերոսին գրած թուղթը (513—15 թ. ին. տես. Patrologia orientalis, tomus I. p. 450) և ուրեմն Անաստասի թուղթն էլ 515-ից յետոյ գրած համարուում, մինչ այդ ժամանակ տեղի էր ունեցել արդէն Վիտալեանի ապստամբութիւնը և կայսրն աշխատում էր ընդհակառակն մօտենալ քաղկեդոնականներին ու մի կերպ հաշտուել Հռոմի հետ։ Սակայն որ Անաստասի նոյն թղթի մի հատուածը «Կնիք հաւատոյ»ի մէջ Հենոտիկոնի հետ միատեղ իբրև «Բարեպաշտ թագաւորի» կանոնական արժէք ունեցող վկայութիւն է բերուում (Գիրք թղթոց եր. 278. լուսանցքի յիշատակութիւնը ցոյց է տալիս, կարծես, թէ Զ. դարի վերջում է թարգմանուել այդ թուղթը) և որ նոյն ժողովածուի մէջ (եր 133) Բաբգէն կաթուղիկոսի համար էլ շեշտուում է, թէ «էր յաւուրս Անաստասայ ուղղափառ թագաւորի», աւելի ևս հաւանական է դառնում, եթէ ո՛չ այդ կայսեր անմիջական յարաբերութիւնը, գոնէ նորա օրով կայսե-

թութեան սահմաններում յուզուած դաւանական խնդիրների որոշ առընչութիւնը Հայերի հետ։ Արդ, այսպիսի դիտողութիւններից յետոյ, երբ տեսնում ենք, որ Դուինում մի մեծ ժողով է գումարուել, հենց Յոյների և Պարսիկների մէջ խաղաղութիւն հաստատուած տարուայ ընթացքում, և նորան մասնակցել են օրինակը չեղած բազմութեամբ հարևան քրիստոնեայ եկեղեցիների ներկայացուցիչներ,—եթէ կողմնակի տեղեկութիւններ էլ չունենայինք, պիտի ենթադրէինք, որ այդ ժողովը Պարսկաստանի հեռաւոր գաւառների մի խումբ քրիստոնեաներին նեստորականների հանդէպ հովանաւորելու համար գումարուած չէր լինի, այլ աւելի կարևոր նպատակ պիտի ունենար և պէտք է ըստ ինքեան հետաքրքրուէր նոյն ժամանակ ամբողջ քրիստոնեայ աշխարհը զբաղեցնող դաւանական խնդիրներով։

Մեզ յայտնի չէ, թէ արդեօք ս. Սահակի և Մանդակունու օրով Հայոց եկեղեցու բռնած ընթացքը դաւանական խնդիրներում որչափ ազդեցութիւն էր գործել հարևան Վրացիների և Աղուանների վերայ. բայց հարկաւոր էր վերջապէս, որ նոքա էլ մի որոշ դաւանական դրութիւն ընդունէին, և Բաբգէնի ժողովը գումարուում էր այդպիսի ձեռնարկութեան համար ամենայպատեհ ժամանակում։ Ուղի՞ղ է արդեօք վերև բերուած ենթադրութիւնը, որ նոցա հարկաւոր էր միևնոյն ժամանակ ձևակերպել իրենց կրօնական միութիւնը Հայերի հետ և ապահովել տիրող այլակրօն իշխանութեան հանդէպ, թէ չէ՞, յամենայն դէպս մեր եկեղեցու ոգին և ժամանակի պարագաներն ի նկատի առնելով պիտի մտածենք, որ ժողովականների ընդհանուր տրամադրութիւնը պիտի լինէր—միութիւն հաստատել երանելի հայրերի՝ ս. Գրիգորի, ս. Սահակի և նմանեաց աւանդած սկզբունքների հաւատարիմ մնալու գրաւականով, ընդունել այն միայն իբրև ճշմարիտ դաւանութիւն, որ ընդունել էր անբաժան, ընդհանրական եկեղեցին, մերժել այն ամէնը, ինչ որ պառակտում և նորամուծութիւն էր բերում եկեղեցւոյ մէջ, գովել վերջին երկու բարեպաշտ կայսրների ջանքերը. որ ձգտում էին պառակտումը վերացնել և միութիւնը վերականգնել։ Ի՞նչն է ստիպում ուրեմն չհաւատալու Աբրահամ կաթուղիկոսի վկայութեանը, թէ այս իսկ հիման վերայ քոյր եկեղեցիները «պայման Նամակ» են կազմել և միաբանութեամբ մերժել Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տումարը։ Ուշադրութեան արժանի է նաև նորա այն յիշատակութիւնը, թէ մինչ այդ «պայման Նամակի» հայերէն օրինակը կորել է, յունարէն օրինակը պահուած է եղել նոյն այն Ուռհա քաղաքում, ուր իւր ուսումն է ստացել Փիլոքսէնոս Մաբուգացին և որ դա-



ւանական շարժումների կարևոր կենտրոններից մէկն էր։ Չի՞ հետևում արդեօք դորանից, որ ժողովը յարաբերութեան մէջ է եղել իրօք դրսի Յունական աշխարհում մի բնութեան դաւանութիւնը պաշտպանողների հետ և ուղարկել է նոցա իւր կազմած «պայման Նամակը»՝ ի վկայութիւն այն հղրակացութեան, որին յանգել էր։ Ամէն պարագային պէտք է կրկնել, որ հիմք չկայ այդ «պայման Նամակը» նոյն համարելու Բաբգէնի առաջին թղթի հետ. որ Դուինի Ա. ժողովի բուն նպատակը եղել է հաւանականաբար Հայոց, Վրաց, Աղուանից և Սիւնեաց՝ եկեղեցական փոխադարձ յարաբերութիւնները ճշտել և բոլորի կողմից ընդունելի դաւանական դրութիւնը պարզել. որ ժողովն այդպիսով թէ Քաղկեդոնականութեան վերաբերեալ խնդիրներն է ի նկատի առել ու նզովել Քաղկեդոնի ժողովը և թէ, Պարսկաստանի քրիստոնեաների դիմումը յարգելով՝ զբաղուել է Նեստորականութեամբ և Նեստորի հետ նզովել նորա ժամանակակից Անտիոքի դպրոցի ներկայացուցիչներին, ու նոցա հետևողներին Պարսկաստանում։

Յիրաւի առանց այդ դիմումի էլ Հայոց եկեղեցին ստիպուած էր վաղ թէ ուշ հաշիւ տեսնել Նեստորականութեան հետ։ Բաբգէնի Ա. թղթի մէջ հարևանցօրէն միայն ակնարկուած են, բայց այդ թղթի վաւերականութիւնն անվիճելի դարձնող ձևով այն հանգամանքները, որոնց շնորհիւ Նեստորականութիւնը տարածուել և տիրապետող էր դարձել Պարսկաստանի քրիստոնեաների մէջ։ Զենոն կայսրը 489 թ ին փակել տուաւ Եդեսիայի դպրոցը, որ Անտիոքի դպրոցի հետևողների գլխաւոր կենտրոնատեղին էր դարձել, և հալածեց կայսրութեան սահմաններից. նոյն դպրոցի ուսմամբ՝ բոլոր 2 բնութեան դաւանութիւն պաշտպանողներին։ Սոքա ապաստան գտան Պարսկաստանում, ուր առաջ էլ ընդարձակ գործունէութիւն էին ցոյց տուել նոյն դաւանութեան եռանդուն քարոզիչները, յատկապէս Եդեսիոյ դպրոցի ամէնից աչքի ընկնող ուսուցիչ Բարծուման, որ յետոյ Մծբինի եպիսկոպոս էր դարձել։ Ինչպէս վերև ակնարկուեց, 499 թ. ին Սելևկիոյ Բաբէ եպիսկոպոսը. որ յաւակնութիւն ունէր համարելու իրեն ամբողջ Պարսկաստանի քրիստոնեաների կաթուղիկոս, մի ժողով գումարեց, ուր Անտիոքի դպրոցի ուսումն ամենալայն Նեստորական ըմբռնմամբ իբրև պաշտօնական դաւանութիւն ընդունուեց, և այնուհետև աւելի բազմակողմանի գործունէութեամբ առաջ տարուեց Պարսից սահմաններում եղող քրիստոնեաներին նոյն դաւանութեան և Սելևկիոյ կաթուղիկոսի իշխանութեան հպատակեցնելու ձգտումը։ Ահա այդ ձգման չհամակերպողներն

*էին, որ Դուին եկան և աշխատում էին Հայոց օգնութեամբ պահել իրենց ինքնուրոյնութիւնն ու նախնական աւանդութիւնները։ Հաւանականաբար ո՛չ միայն Բարծուման և գործակիցներն ու յաջորդները ջանքեր էին գործ դրել Հայոց մէջ էլ իրենց ուսումը քարոզելու (տես. Հայոց եկ. ոյ յարաբերութիւնները, եր. 80 շ.) այլ դեռ նեստորականութեան տարածուելուց շատ առաջ Սելևկիոյ կաթուղիկոսները ձգտել էին գերիշխանութիւն ձեռք բերել Հայոց եկեղեցու վերայ։ Այս նկատմամբ երևի մի ուրիշ անգամ առիթ կլինի ինձ հանգամանօրէն ուսումնասիրելու և բացատրելու, թէ ինչո՞ւ ս. Սահակի հայրապետական աթոռից ձգուելուց յետոյ «յարքունուստ» ուղարկուած Բրքիշոյին և Շամուէլին համարում եմ Սելևկիոյ կաթուղիկոսի գործակալներ, որոնք Հայաստան էին եկել նոյնպիսի «տանուտիկնոք» (տես. Փարպեցի, պատմութիւն. Վենետիկ, 1891. եր. 80), որպիսիներից մէկ մէկ կարող էին ըստ Բաբէի ժողովի Բ. կանոնի ունենալ իւրաքանչիւր պատրիարք, եպիսկոպոս, երէց ու վանական. կամ թէ չէ՝ նոյն կաթուղիկոսի ստորադրեալ իշխանաւորներ, որոնք պիտի տարածէին նորա իշխանութիւնն այս երկրի վերայ։ Սակայն Վարդանանց ու Վահանանց պատերազմները ինչպէս այդ տեսակ ձեռնարկութեանց առաջը փակեցին, այնպէս և Քաղկեդոնականութեանն ու Նեստորականութեանը միջոց չտուին մուտք գործելու և խլրտումներ յառաջ բերելու Հայոց մէջ, մինչև որ խաղաղութեան տարիներում հրապարակաւ պայքար սկսուեց նախ մէկի, ապա և երկուսի դէմ միանգամայն։*

*Հաւանականաբար այդ պայքարը խուլ կերպով շարունակուել է նաև Բաբգէն կաթուղիկոսի յաջորդների օրով. բայց որովհետև 518 թ. ին կայսրութեան սահմաններում կրկին գլուխ բարձրացրած Քաղկեդոնականութիւնը սահմանի միւս կողմում ճնշումներ գործ դնել չէր կարող, իսկ Նեստորականութիւնն այնքան ոյժ չունէր, որ բացարձակ կռիւ հրատարակէր Հայոց եկեղեցւոյ, ինչպէս տեսանք նաև Կաւատի յաջորդ Խոսրով Նուշիրվանի կողմից ճանաչուած ու վաւերացուած՝ դաւանութեան դէմ, ուստի կարող էին միայն գաղտնի ոտնձգութիւններ տեղի ունենալ, որոնց հանդէպ պաշտօնական պատնէշ էին կազմում Յովհան Մանդակունու հակաքաղկեդոնական պարզաբանութիւնները և Դուինի Ա. ժողովի որոշումները։ Նոր կերպարանք ստացաւ խնդիրը Ներսէս Բ. կաթուղիկոսի օրով։ Այս հայրապետը գումարել է Դուինի Բ. ժողովը 554 թ. ին, և այդ ժողովում հաստատուած* Միաբանութեան ուխտի գիրը *և նորա յարակից 2 գրութիւններ (Գիրք թղթոց եր. 72, 70, 76) վկայում են, որ Խու-*



*ժաստանի կողմից իբրև վաճառական եկող նեստորականներ 7 տարի առաջ Գրիգոր—Մանաճիհր Ռաժիկի նահատակութեան տեղում վանք են հաստատել, միաբանել են ըստ երևութին՝ արդէն Դ. դարի սկզբներից Հայաստանում բոյն դրած և 444—45 թ. ի Շահապիվանի ժողովի կողմից բանադրուած ու հալածուած, Մծղնէից կամ Մեսսալեան աղանդաւորների հետ, սկսել են կազմակերպուել և զանազան հրապոյրներով իրենց համայնքի մէջ գրաւել բազմաթիւ հայերի, մինչև որ Հայոց կաթուղիկոսն իմացել է, և յիշեալ ժողովով որոշուել է աւերել նոցա վանքը, հալածել նոցա և ծանր բանադրանքի սպառնալեաց ներքոյ արգելել Հայ եկեղեցւոյ անդամներին՝ որ և է հաղորդակցութիւն ունենալ նոցա հետ։ Խնդիրն այստեղ ուրեմն զուտ նեստորականութեան մասին չէ այլ նեստորական ազդեցութեան ներքոյ նոր կազմակերպութիւն ստացած մի աղանդի մասին, որի վերաբերմամբ առաջին անգամ յիշւում է* Պաւղիկեանց *անունը և որ ուրեմն նոյնանում է Միջին դարերում թէ մեր և թէ ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ շատ կարևոր դեր կատարած և նոյն անունով յայտնի աղանդի հետ (տես. իմ աշխատութիւնները.* Die Paulikianer. Leipzig, *1913. Արարատ, 1900. եր. 328—334 և Հայոց եկեղեցւոյ պատմութիւն. Վաղարշապատ, 1908. եր. 207)։*

*Սակայն, ինչպէս ուրիշ անգամ էլ աշխատել եմ պարզել (Հայոց եկ. պատմութիւն. եր. 208), որոշ պատմական վկայութիւններ ցոյց են տալիս, որ Դուինի այս երկրորդ ժողովն ևս առաջինի նման, բացի յիշեալ «Նեստորական» աղանդաւորներից, ուրիշ եկեղեցական երևոյթներ ևս ի նկատի պիտի ունեցած լինի և զբաղուած նորից յատկապէս քաղկեդոնականութեան խնդրով։ Վերև յիշուեց արդէն Ժողովոց համառօտ պատմութեան այն կէտը, որով այս ժողովին վերագրուում է՝ արգելք Հայերի Երուսաղէմ գնալու և Հռոմոց հետ հաղորդակցութիւն ունենալու դէմ, այլ և Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը, որ այս ժողովն է համարում սկիզբ Հայերի հակաքաղկեդոնական դիրք ընդունելուն և Յունաց եկեղեցուց բաժանուելուն։ Ասողիկ ևս, ժողովի պատմութիւնն անելով (եր. 83), ասում է. «Հայք յայդմ ամի և յայդմ ժամանակի ի բաց կացին ի Յունաց հաղորդութենէ», և մի քանի պարագաներ բերում է ճիշտ այն ձևով, ինչպէս գտնում ենք* De rebus Armeniae *գրուածքի մէջ։ Այստեղ ժողովի մասին ասուած է. «Նզովեցին զս. ժողովն Քաղկեդոնի իբրև զնեստորեան . . . Սահմանեցին նզովիւք՝ ի բաց կալ ի հաղորդութենէ Երուսաղեմի և նորոց Հռովմայեցւոց և այնոցիկ, որք խոստովանին երկուս բնութիւնս*

զինի մարդանալոյ Տեառն մերոյ»։ Զգէտք է զարմանանք, թէ ինչու այս որոշումները չեն մտել յիշեալ «Ուխտ»ի գրի մէջ, որ իւր յատուկ նպատակն ունէր. բայց հազիւ թէ մի ուրիշ նման կանոնական գրութիւն էլ այդ որոշումների համար կազմուած լինի, որ ամենացանկալի նիւթ պիտի համարուէր թէ Թղթոց գրքի և թէ «Կնիք հաւատոյ» ժողովածուի համար, և դուրսը չէր մնայ. Քաղկեդոնի ժողովը բանադրելը նորութիւն չէր Հայերի համար, ինչպէս տեսանք, և հարկ չկար նոր ուխտով հաստատելու այն գրութիւնը, որի մէջ գտնուում էր Հայոց եկեղեցին առնուազն 70 տարիներից ի վեր։ Իսկ եթէ օտարներին թուացել է, թէ այս ժողովից է սկսում Հայոց բաժանումը Յոյներից՝ պատճառը հասկանալի է։ Յովհան Մանդակունու և Բաբգէն կաթողիկոսի օրով Հայերը Հենոտիկոնն ընդունելով և Քաղկեդոնի ժողովը լռելեայն կամ բացարձակապէս բանադրելով համակերպում էին այն գրութեան, որ իշխող էր նաև կայսերութեան սահմաններում։ Միայն 518 թ.ից յետոյ, երբ Յուստին Ա. կայսրը Քաղկեդոնի ժողովն ընդունելը կրկին պարտաւորեցուցիչ դարձրեց իւր հպատակների համար և հակառակորդներին հալածեց, Հայերն իբրև հակաքաղկեդոնական՝ հակառակ բանակ կազմել կարող էին. բայց սահմանի միւս կողմում գտնուելով նոքա դեռ առիթ չէին ունեցել իրենց պահպանած դիրքը հրապարակաւ ցոյց տալու։ Կայսերութեան սահմաններում եւս տատանումները դեռ շարունակւում էին. մանաւանդ Յուստինիանոսի ինքնակալ լինելու և Թէոդորա կայսրուհու ազդեցութեան զօրանալու հետ աւելի ու աւելի մեծ զիջումներ էին լինում մի բնութիւն դաւանողներին, հալածուած Սեւերոս Անտիոքացին կանչւում էր կրկին անգամ մայրաքաղաք գնալ և պատիւներ վայելել, բաւական ժամանակ անորոշ էր մնում, թէ այդ զիջումները մինչև ուր կհասնեն և ինչ ելք կունենայ կայսեր ձգտումը՝ որ և է գնով միութիւն վերահաստատել եկեղեցւոյ մէջ, մինչև որ 553 թ. ին Կ. Պոլսում գումարուած Ե. տիեզերական համարուող ժողովը մի որոշ ելակէտ յանգեց այդ խնդրում։

Պրոֆ. Լոոֆս պարզապէս կերպով ցոյց է տալիս (Leontius von Byzanz. Leipzig, 1887. յատկապէս § 4. S. 37ff.), թէ ինչպէս տասնըվեց տարուան ընթացքում Լեւոնդիոս Բիւզանդացին իւր գործակիցների հետ յաջողել է վերականգնել Արիստոտելեան փիլիսոփայութեան բառերով Քաղկեդոնի 2 բնութեան ուսման տալ Կիւրեղ Աղեքսանդրացու կամ Աղեքսանդրեան դպրոցի քարոզած մի բնութեան վարդապետութեան յարմարուող մեկնութիւն, որով և հնարաւոր է դարձել 553 թ-ի ժողովում 3 գլուխները, կամ Թէ-



տիոքի դպրոցի ներկայացուցիչներին ու նոցա մի շարք գրուածներ դատապարտելով՝ Քաղկեդոնականութեան հետ հաշտուելու ճանապարհ բանալ արևելքի քրիստոնեաների համար, որոնք այդ գրուածների մէջ անսեթևեթ նեստորականութիւն էին գտնում և նոցանից չխորշող քաղկեդոնականներին նեստորական համարում։ Ի՞նչ զարմանք, եթէ այդ ժողովի որոշումներն ի նկատի առած լինի յաջորդ տարին Դուինում գումարուած Հայոց ժողովը և ընդունելով այն իբրև պարիսպ առելի քաղկեդոնականութեան վերջնականապէս ամրացման՝ իւր կողմից եւս վերջնական որոշումներ տուած լինի կտրելու ամէն յարաբերութիւն քաղկեդոնականների հետ։ Այդ մտքով երևի յիշեալ ժողովոց պատմութեան աւելի ընդարձակ օրինակը, որ Յովհան Օձնեցու անունն է կրում և աւելի յաճախ պատահում մեր ձեռագիրների մէջ՝ Դուինի Բ. ժողովի մասին նկատում է. «Զայս ժողով արար Տէր Ներսէս հակառակ ժողովոյն Քաղկեդոնի. վասն զի էր ախտ պղտորման խոստովանութեան Քաղկեդոնի յաճախապէս յաւելեալ»։ Յամենայն դէպս Ներսէս Բ. Աշտիշատցու ձեռնադրութեան առթիւ Ասորիներին ուղղած (Գիրք Թղթոց եր. 55) և «Կնիք Հաւատոյ»-ի մէջ էլ վկայութիւն բերած (եր. 135) թղթում որոշակի նզովւում է թէ Լևոնի տումարը և թէ Քաղկեդոնի ժողովը։ Նորա յաջորդ Յովհաննէս կաթողիկոսն եւ Սիւնեաց Վրթանէս եպիսկոպոսին ուղղած թղթի մէջ՝ սորա նախորդ Պետրոս եպիսկոպոսի և իւր մասնակցութեամբ գումարուած Դուինի Բ. ժողովի մասին ասում է. «Միաբանութեամբ զպիղծ Նեստորիանոսս և զՔաղկեդոնիտս և զայլ հերձուածողս ի մեր սուրբ եկեղեցւոյս նզովիւք հալածական արարաք, և սուրբ և փառաւորընկալ սեղանոյս և կենարար սուրբ աւետարանիս և Փրկչական սուրբ խաչիս առաջի պայման արարաք՝ ամենևին հեռանալ ի հաղորդութենէ նոցա և չլսել բանից նոցա մահաբերաց»։ Այսպիսով բոլորովին հաստատւում են վերև բերած վկայութիւնները Դուինի Բ. ժողովում Նեստորականութեան հետ նաև Քաղկեդոնականութեան բանադրուելու մասին, թէպէտ դարձեալ անորոշ է մնում, թէ արդեօք որ և է գրաւոր յիշատակարան թողուել է այդ նկատմամբ և ձրալխին։

De rebus Armeniae գրուածքը, որից վերցրել է Փոտ պատրիարքը Հայոց Զաքարիա կաթողիկոսին ուղղած թղթի պատմական տեղեկութիւնները, Դուինի Բ. ժողովին է վերագրում նաև «Խաչեցար» ի յաւելումը «Ս. Աստուած»ի վերայ։ Սակայն արդէն Ներսէս Բ.ի Ասորիներին ուղղած վերոյիշեալ թղթի մէջ, որ անկասկած ժողովից առաջ է գրուել, «Ս. Աստուած»ը երգւում է ամբողջութեամբ և «Խաչեցար»ով. ուրեմն և աւելի վաղ

էր ընդունելութիւն գտել Հայոց մէջ այդ յաւելումը. Երբ— դժուար է ասել։ Ինչպէս վերև յիշուեց, Գիրք Թղթոց եր. 126 «Պատճառք Դ. ժողովոյն» գրութեան մէջ Տիմոթէոս Կուզի գրքից և Յովհան եպիսկոպոսապետի թղթից յետոյ Քաղկեդոնի ժողովը մերժող ուրիշ վաւերագրերի անուն եւս տրուում է, որոնց թւում՝ «Թուղթն Պետրոսի Անտիոքացւոյ»։ Հայր Ակինեան հաւանական է համարում (Կիւրիոն կաթուղիկոս, եր. 272), որ այդ թուղթը լինի Գիրք Թղթոց եր. 99 յառաջ բերուածը և սորա հեղինակ՝ Անտիոքի յայտնի Պետրոս Թափիչ պատրիարքը (475—488), ինչպէս իրենից առաջ նոյն կարծիքն է յայտնել սորա մասին Նորայր Բիւզանդացին։ Ցիրաւի թղթի բովանդակութեան մէջ ոչ միայն ոչինչ չկայ հակառակ այդ կարծիքի, այլ և՝ «Ուսաք և որ ի Մծբին կաթոռն ունի եպիսկոպոսութեան՝ յայտնապէս զՆեստորին գովել անամաւթաբար զամպարշտութիւն»—նախադասութիւնը կարող է այդ հաստատող փաստ համարուել, իբրև ակնարկ Բարծումայի գործունէութեան, որ Պետրոս Թափիչի ժամանակակիցն էր Մծբինի եպիսկոպոսական աթոռի վերայ։ Այլ և, իբրև մի բնութեան դաւանութեան առաջնակարգ ջատագով, Կիւրեղ Աղեքսանդրացու հետ Ակակ Մելիտինէի եպիսկոպոսի յիշուիլը, «որ ի Հայոց աշխարհին քահանայապետ եղելոյ» բացատրութեամբ՝ հաւանական է դարձնում թղթի դրսի մի հեռաւոր տեղից Հայաստան ուղարկուած լինելը, այնպիսի մի ժամանակակիցի հասցէին, ինչպիսին կարող էր հեշտութեամբ լինել Յովհան Մանդակունին, կամ մանաւանդ Յունաստանում կրթութիւն ստացած Մովսէս Քերթողահայրը (Թափիչն ինքը Կ. Պոլսի յայտնի Ակոյմէտների վանքից էր յառաջացել)։ Թղթի վերնագիրը չի հակասում այս տեսութեան նորանով, որ հեղինակն իրեն «ողորմելի Պետրոս» է անուանում, դիմացինին «Հաւատարմագոյն, իմաստնագոյն և աստուածասիրագոյն եղբայր». Թող թէ Անտիոքի պատրիարքն էլ կարող էր իրեն այսպէս անուանել մի վաղեմի բարեկամի ուղղած մասնաւոր նամակի մէջ, որպիսի բնաւորութիւն ունի այս թուղթը, Թափիչը պատրիարք լինելուց առաջ էր սկսել իւր եռանդուն գործունէութիւնը և պատրիարք լինելուց յետոյ էլ մի քանի անգամ հալածանքի է ենթարկուել և «ողորմելի» վիճակի մէջ ընկել. այդ ժամանակամիջոցներից մէկում և գուցէ գրել է։ Ցամենայն դէպս, քանի որ իբրև «Խաչեցար»ի յաւելումն առաջին անգամ «Ս. Աստուած»ի վրայ գործածող Թափիչն է յայտնի Եկեղ. պատմութեան մէջ, եթէ ընդունենք այսպիսով, որ նա թղթակցութիւն է ունեցել Հայոց եկեղեցւոյ իւր ժամանակակից



մի ներկայացուցչի հետ, կհետևի ըստ ինքեան, որ այդ ժամանակից էլ, այսինքն Յովհան Մանդակունու օրերից արդէն՝ Հայոց եկեղեցին ընդունել է «Խաչեցար»ի յաւելումը։

Սակայն Ներսէս Բ.ի օրով միայն նախկին շրջաններում արծարծուած դաւանական խնդիրները չեն վերակենդանացել, և արդէն ծանօթ եկեղեցական կուսակցութիւնների և աղանդների դէմ եղած պայքարը նորոգուել, այլ հարկը պահանջել է հաշուի առնել հարևանութեան մէջ յառաջացած մի նոր եկեղեցական կազմակերպութիւն՝ առանձնայատուկ դաւանական դրութեամբ, և որոշել Հայոց եկեղեցու դիրքը նորա հանդէպ։ Բացի Ներսէս Բ.ի վերոյիշեալ թղթից, որ Ասորիներին է ուղղուած՝ Աբդիշոյին եպիսկոպոս ձեռնադրելու առթիւ, Թղթոց գրքի մէջ պահուած կան՝ Ասորիների այն թուղթը, որի պատասխանը նա գրել էր, Աբդիշոյի 2 թղթեր և 2 դաւանաբանական հատուածներ նորա անունով. այս ամբողջ թղթակցութիւնն ահա ուղեցոյց պիտի լինի մեզ՝ պարզելու նոր խնդրի էութիւնը։ Այստեղ ամէն անգամ ուրիշ հերձուածողների շարքում նզովւում են «զՍևերիոս և զգիրս իւր ապականութեան», և յատկապէս Աբդիշոն իւր առաջին թղթում (եր. 59) զգուշացնում է Ներսէս Բ.ին և նորա աթոռակիցներին, թէ «արդ ասեն Սևերիանոսքն, թէ մեք ի Հայս երթամք և զկաթուղիկոսն և զեպիսկոպոսսն ուսուցանեմք և ի նոցանէ թուղթս բերեմք, թէ հաւատ այդ (այսինքն ըստ քիչ առաջ բերած բացատրութեան—«Մարմինն Տեառն ապականացու էր ի խաչին» ասելը) արդար է»։ Խօսքն այստեղ Սևերոս Անտիոքացու մասին է ի հարկէ, որ 512 թ.ին, Փիլոքսէնոսի նախաձեռնութեամբ քաղկեդոնական Փլաբիանոս եպիսկոպոսի աթոռից ձգուելուց յետոյ՝ նորա տեղը Անտիոքի եպիսկոպոս ընտրուեց և 518 թ.ին, Յուստին կայսրից հալածուելով՝ Եգիպտոս ապաւինեց,—և նորա հետևողների մասին, որ յիշեալ թղթակցութիւնը տեղի ունեցած ժամանակ մի նոր ասորական եկեղեցի կազմակերպելու վրայ էին։ Աղեքսանդրիայում Սևերոս վէճի բռնուեց Յուլիանոս Հաղիկառնացու հետ, որ նոյնպէս իբրև աքսորեալ հակաքաղկեդոնական այնտեղ էր ապաւինել։ Սա վկայութեան բերելով Առաքեալի խօսքը՝ «Խայթոց մահու մեղք են» (Ա. Կորնթ. ԺԵ. 56), հետևցնում էր, թէ ուր ուրեմն մեղքը խայթել չի կարող՝ մահն առանց ներգործութեան է մնում, գործելու երևոյթ ունենալով հանդերձ, և քանի որ Քրիստոս առանց մեղաց էր՝ ազատ պիտի լինէր մահուան ներգործութիւնից։ Ըստ այսմ և գրում էր Քրիստոսի մասին. «Նա որ ըստ իւր զօրութեան տէր էր չարչարուելու կամ չչարչարուելու, թէպէտ կարող էր

չչարչարուել, և մարմինն էլ անչարչարելի էր, կամաւ չարչարելի եղաւ մեզ համար» (տես. Patrologia orientalis. tome. II. p. 251)։ Մի խօսքով նա ընդունում էր, թէ Քրիստոս մարդեղութեամբ արդէն ունէր անապական մարմին. որ այլ ևս կրից կամ չարչարանաց ենթարկուել չէր կարող, իսկ Սևերոս պնդում էր, թէ Քրիստոս մեզ նման ապականացու և մարդկային ամէն կրից ենթակայ մարմին ունէր մինչև յարութիւն, և յարութիւնից յետոյ միայն անապական է դառնում մարմինը։ Երկուսն էլ ունեցան իրենց կողմնակիցները, որոնք դարձեալ նոր կուսակցութիւնների բաժանուեցան առժամանակ (Ակտիստներ, Ագնոյետներ, Աղիաֆորիտներ). Յուլիանոսի կողմնակիցները նոյն իսկ գերակշռող դիրք գրաւեցին մի քանի տարի Աղէքսանդրիայում և Սևերոսի կողմնակից Թէոդոսիոսի հակառակ պատրիարքական աթոռ բարձրացրին Գայանոսին. բայց այն մշտական պայքարը, որ մի բնութիւն դաւանողները պէտք է մղէին կայսրութեան հպատակ երկրներում Քաղկեդոնականութեան և նորա պաշտպան քաղաքական իշխանութեան դէմ, ստիպում էր նոցա իրենց ուժերը հաւաքել և միանալ (տես. Patrologia Or. tomus I. p. 45 ff.). դաւանական նրբութիւնները հետզհետէ կորցնում էին իրենց կարևորութիւնը և պատմական, ազգային, աշխարհագրական պայմաններով իրարից անջատուած տարրերը աշխատում էին կազմակերպուիլ իրենց մէջ և աւելի գործնական պատնէշներ կանգնել հակառակորդների հանդէպ, այնպէս որ որոշ ժամանակից յետոյ այդ այլ և այլ դաւանական կուսակցութիւնների անունները այլ ևս չեն լսուում։ Վերև յիշուած Յակոբ Բարադէոսը կամ Ծանծաղոսը 542 թ. ին Աղէքսանդրիոյ Սևերեան Թէոդոսիոս պատրիարքից Եդեսիոյ եպիսկոպոս ձեռնադրուելով՝ ամբաւ եռանդ գործ դրեց հակաքաղկեդոնական համայնքները հալածանքի հանդէպ քաջալերելու և զօրացնելու, նոցա համար եպիսկոպոսներ ձեռնադրելու և զանազան թեմերի մէջ կապ պահպանելու. մինչև կեանքի վերջն (578) անընդհատ ճանապարհորդութիւններ էր անում այդ նպատակով և մեռաւ վերջին անգամ դէպի Աղէքսանդրիա ճանապարհորդած միջոցին, որի և Անտիոքի աթոռի մէջ սերտ յարաբերութիւն էր հաստատել։ Այսպէս կազմակերպուեց Սևերեան կամ Յակոբիկ եկեղեցին, որ իւր մէջ առաւ հետզհետէ կայսրութեան սահմաններում գտնուած գրեթէ բոլոր հակաքաղկեդոնականներին. ունեցաւ իւր առանձին եպիսկոպոսները արևելքի բոլոր կարևոր կենտրոններում և 2 պատրիարքներ Անտիոքում և Աղէքսանդրիայում, հակառակ կայսեր հրամանով նշանակուած եպիսկոպոսների և պատրիարքների,



որոնք իրենց հովուած համայնքների հետ Մելքիտներ կոչուեցան։

Ահա այս հանգամանքներում, երբ Յակովբ Բարադէոս և իւր գործակիցներն աշխատում էին, անշուշտ, իրենց ազդեցութեան ենթարկել նաև Պարսկաստանի քրիստոնեաներին՝ յատկապէս մի բնութիւն դաւանող ասորիներին, և առնել նոցա նոր կազմակերպուող Սևերեան—Ասորական եկեղեցւոյ մէջ, Հայոց կաթուղիկոսին են դիմում այն ասորիները, որոնք խնդրում էին Աբդիշոյին իրենց եպիսկոպոս ձեռնադրել։ Եւ որովհետև այդ ասորիները արդէն մարդեղութեամբ անապական մարմին առած էին դաւանում Քրիստոսին և բանադրում՝ «զՍևերոս և զգիրս իւրեանց ապականութեան», իսկ ըստ Տէր Մինասեանի «Զ. դարում ասորական արևելքում Սևերոսին դատապարտել և նզովել՝ նշանակում է անպատճառ Յուլիանոս Հալիկառնացու հետևողներ լինել» (Հայոց եկ. ոյ յարաբերութիւնները, եր. 97), ուստի նա կասկածից դուրս է համարում, որ «այս ասորիները Յուլիանիտներ են» և հետևաբար նոցա ընդունող Հայերն էլ «Յուլիանեան կամ Հալիկառնեան» են դառնում։ Այդ բաւական չէ, նա մի քանի անգամ կրկնում է, թէ իբր իւր գիրքը լոյս տեսնելուց յետոյ ես էլ, որ առաջ տարբեր հասկացողութիւն եմ ունեցել Հայոց դաւանութեան մասին, սկսել եմ տատանուել, համոզուել եմ, «թէ եւ տարօրինակ կերպով առանց յիշելու» (իւր գրքից օգտուած լինելս), որ Աբդիշոն և իւրայինք Յուլիանիտ են, և ընդունել՝ «թէ և մի քիչ մութն արտայայտուած և որոց անունները տալուց խոյս տուած», որ Հայերն էլ նոցա հետևելով Յուլիանեան դաւանութիւն են ընդունել։

Սակայն, թող որ Տէր Մինասեանին ամէնից լաւ յայտնի է, թէ ինչ պայմաններում տպագրուեց վկայութեան բերած իմ «Հայոց եկեղեցւոյ պատմութիւնը» և թէ ինչու ես չեմ յիշել ընդհանրապէս այդտեղ ի նկատի առնուած հեղինակներին, աւելորդ չի լինի մէկ տեսնել, թէ ինչպիսի գաղափար ունի նա հեղինակների միմեանց տեսութիւններ իւրացնելու մասին։ Իւր գրքի եր. 65 վկայութեան բերելով իմ 1893 թուին տպուած Die Paulikianer գրուածքը՝ նա ինձ դնում է այն մոլորեալների շարքում, որոնք ընդունում էին, «թէ Բաբգէն կաթուղիկոսը 491 թուին Վաղարշապատում ժողով է գումարել, և գլխաւորապէս Քաղկեդոնականութեան դէմ». ապա Բաբգէնի թղթերի հիման վերայ պարզելով, որ ժողովը եղել է Դուինում, 506 թուին, և զբաղուել այլ խնդիրներով՝ իբրև աղբիւր այդ տեսութիւնների մատնացոյց է անում (եր. 70) «Արարատ»ում 1908 թ. ին տպուած իւր յօդուածը. մինչդեռ Բաբգէնի 2 թղթերը (և ոչ առաջինը միայն, ինչպէս սխալմամբ յիշում է նա եր. 66) ես եմ առաջին անգամ

տպել 1898 թ. ի «Արարատ»ում և այդտեղ էլ (եր. 431—436), ուրեմն իւր յօդուածը լոյս տեսնելուց 10 տարի առաջ՝ պարզաբանել, թէ ի՛նչ պայմաններում և ի՛նչ խնդիրների համար գումարուած պիտի լինի Բաբգէնի ժողովը՝ 506 թ. ին, Դուինում, և ոչ թէ 491 թ. ին Վաղարշապատում, ինչպէս ընդունում էին առաջ։ Այդպէս և, եր. 88, վկայութեան բերելով միշտ իմ նոյն Die Paulikianer շարադրութիւնը՝ Տէր Մինասեան ինձ մեղադրական է կարդում այն սխալ կարծիքի համար, թէ միաբնակ կոչուած արեւելեան եկեղեցիները հետեւում են Եւտիքէսին, և յայտնում է, որ բոլոր միաբնակներն անխտիր դատապարտում են նրան, և ես այլ ևս չպիտի կարողանամ պաշտպանել իմ նախկին կարծիքը, «քանի որ մինչև անգամ մեր միասին հրատարակած Տիմոթէոս Էլուրոսի Հակաճառութիւնից երևաց, որ նոյն իսկ առաջին մոնոֆիզիտները կամ միաբնակները նզովել են Եւտիքէսին»։ Բայց ես հնար չունէի ի հարկ է 1908 թ. ին հրատարակուած «Հակաճառութիւն»ից օգտուելով ուղղել իմ կարծիքը 1893 թ. ին տպուած գրքի մէջ, թէպէտ այդ «Հակաճառութիւն»ը ես լոյս աշխարհ եմ հանել արդէն 1897 թ. ին և այն ժամանակ էլ, առանց Տէր Մինասեանի գործակցութեան, իմացել, թէ նա ինչպէս է նայում Եւտիքէսի վերայ։ Բայց դեռ «Հակաճառութիւնը» չգտնուած՝ 1896 թ. ապրիլ «Արարատ»ում (եր. 157) ես պարզ ասել էի բոլոր միաբնակների մասին, թէ «նոցանից ոչ մէկը հետեւող չէ եղել Եւտիքէսի, ինչպէս սխալմամբ կարծում են շատերը». ուրեմն Տէր Մինասեանի 1908 թ. ին ուսուցած ճշմարտութիւնը գիտէի 12 տարի առաջ՝ այն ժամանակ, երբ Եկեղեցական պատմութիւն էի դաս տալիս Ճեմարանում նորան և իւր ընկերներին։ Արդ, ի՞նչ է այն «Բոլորովին նոր ըմբռնումն Հայոց եկեղեցու ընդհանուր դիրքի մասին դաւանական խնդրում», որ ես սովորել եմ նորա գրքից, համոզուել, և չեմ կամեցել խոստովանել։

Տէր Մինասեան այնքան օգտէտ չէր համարի ինձ, յոյս ունիմ, դաւանանքների պատմութիւնից. որ իր սովորեցնելուց առաջ չիմանայի, թէ ո՛վ է Սեւերոսը. կամ որ արդէն 1898 թ. ին, Բաբգէնի թղթերի հրատարակած ժամանակ. ձեռքի տակ ունենալով Անտոնեանց «Թղթոց գրքի» մեր մատենադարանում չգտնուող բոլոր թղթերի ընդօրինակութիւնները (ի միջի այլոց Ներսէս Բ. ի հայրապետութեան բոլոր թղթակցութիւնը, որ պիտի շարունակէի հրատարակել, բայց Պոլսից ազդարարութիւն ընդունելով, թէ ամբողջ ժողովածուն պիտի հրատարակուի, բաւականացայ միայն «Ուխտ»ի գիրը մասնաւոր առթիւ լոյս ընծայելու). որ, ինչպէս յիշուել է վերև. 1896 թ. ի «Արարատ»ում (եր. 531) հրատարակած լինելով Կոմիտասի թուղթը, և շատ պարապած առհասարակ Զ—Է դարերի դաւանական վէճերով՝ աչքերս խուփ անցնէի և չնկատէի, թէ ինչպէ՛ս Հայոց եկեղեցին բանադրել է Սեւերոսին և Քրիստոսի անապական մարմին դաւանել։ Բայց թէ արդէն առաջուց վճռուած է եղել, որ նա անպատճառ մոնոֆիզիտների մի կուսակցութեան պէտք է յարէր, և թէ «Սեւերոսին դատապարտել և նզովել նշանակում է անպատճառ Յուլիանոս Հալիկառնացու հետեւող լինել»,—ահա այդ նոր ըմբռնումները ես այսօր էլ՝ Տէր Մինասեանի գիրքը 15 անգամ կարդալուց յետոյ, նոյնքան հակառակ եմ գտնում իմ համոզման, որքան 20 տարի առաջ։ Այլ և իմ «Հայոց եկեղեցւոյ պատմութեան» այն հատուածները, որ նա յառաջ է բերել (եր. 99 և 102), խիստ հեռու են նորա ցանկացած խոստովանութիւններն անելուց. ընդհակառակն, կարծես նա ինքն իմ տուած բացատրութիւններից համոզուելով՝ կարևոր է համարում տողի վերևում (եր. 97) բերած բացարձակ բանաձևը տողի ներքևում (եր. 100) մեղմել, չափաւորել և տալ գրեթէ հակադիր մի միտք. «որ Յուլիանեա պատմական գրականութեան մէջ պայմանական անուն է և նշանակում է ո՛չ թէ անպատճառ Յուլիանոսի հետեւող՝ նրանից սովորած լինելու մտքով, այլ աւելի նոյն վարդապետութիւնն ունեցող»։ Սորան էլ զուր տեղն անմիջապէս կցում է իմ «Հայոց եկեղեցւոյ պատմութեան» հատուածից բղխող այն ազդարարութիւնը, թէ «Զգէտք է մոռանալ, որ անապականութիւն ընդունողները երբեք իրենք իրենց Յուլիանոսի հետեւող չեն համարել, այլ այդպէս կոչել են նրանց հակառակորդները՝ Հալիկառնացուն համարելով հերետիկոսապետը»։ Աւելացնենք այդ խոստովանութիւնների վերայ Տէր Մինասեանի համաձայնութիւնը պրոֆ. Հառնակի յայտնած կարծիքին, թէ «Յուլիանիստների ըմբռնումը միանգամայն համապատասխան է եկեղեցու կլասիկական հայրերի հասկացողութեանը» (եր. 76), կամ ինչպէս ինքը Հառնակ՝ հիմնուելով այս կէտում Եկեղեցւոյ պատմութեան նշանաւոր հեղինակ Գիզլէրի հետազօտութեանց վրայ, եզրակացնում է, թէ «անապականութեան ուսումը հետեւողական կերպաւորումն է յունական փրկագործութեան վարդապետութեան» (Dogmengeschichte, Band II, zweite Auflage, S 389),—և տեսնենք ի՛նչ է հետեւում այդ բոլորից։

Անապականութիւն ընդունել և Սեւերոսին նզովել «նշանակում է անպատճառ Յուլիանոս Հալիկառնացու հետեւող լինել», բայց «ոչ թէ անպատճառ Յուլիանոսի հետեւող՝ նրանից սովորած լինելու մտքով, այլ աւելի նոյն վարդապետութիւնն ունեցող»։

Ընդունենք, թէ այս երկու բացատրութիւններն իրար չեն հակասում, այլ մէկը լրացնում է միւսի իմաստը։ Այնուամենայնիւ, եթէ բոլոր անապականութիւն դաւանողները պէտք է հետևող լինեին Հալիկառնացու և «Յուլիանեան» կոչուէին, կամ ինչպէս Տէր Մինասեան սիրում է անուանել՝ «Յուլիանիտ», «Յուլիանիստ», իսկ «կլասսիկական հայրերը»՝ Աթանաս, Մեծ Կապադովկացիները, Կիւրեղ Աղէքսանդրացին ևլն, եթէ հետևողական մնային իրենց քարոզած դաւանական սկզբանց մէջ, անապականութիւն պիտի ընդունէին անպատճառ, և ընդունել են, երբ առիթ եղել է, ինչպէս օրինակ՝ «Կնիք հաւատոյ»ի մէջ, ապացուցանելու համար, «եթէ պարտ է անապական խոստովանել զմարմինն Քրիստոսի՝ անդստին յարգանդէ կուսական Աստուածածնին Մարիամայ», վկայութեան են բերուած Իրենէոս, Գրիգոր Սքանչելագործ, ս. Եփրեմ, Աղէքսանդր, Աթանաս,—ապա ուրեմն սոքա բոլորեքեան պիտի համարուէին «Յուլիանեան» և նկատուէին իբրև հետևողներ Հալիկառնացու։ Ամէն ոք կասէ ի հարկէ, որ այդ անհեթեթութիւն է. Բ. Գ. Դ և Ե. դարում ապրող հայրերը չեն կարող Զ. դարում ապրող մարդու հետևողներ լինել։ Բայց գուցէ առարկողներ կլինին, թէ յիշեալ հայրերը «ապականութիւն» և «անապականութիւն» բառերն ուրիշ իմաստով են գործածել, քան Հալիկառնացին. թէ բերած այս կամ այն վկայութիւնը վաւերական չէ. թէ անապականութեան ուսումը յիշեալ հայրերի գրուածներում այնպէս որոշ կերպով արծածուած չենք գտնում, ինչպէս Հալիկառնացու և աւելի ուշ ժամանակի գրուածներում։ Չէ՞ որ յամենայն դէպս Տէր Մինասեան ինքը պնդում է, թէ նոյն ուսումը, և Հալիկառնացու յար և նման եղանակով՝ քարոզել է Փիլոքսէնոս. իսկ սա այն ժամանակն էր արդէն յայտնի ամբողջ եկեղեցական աշխարհին իւր գրուածներով, երբ Հալիկառնացու անունը քչերը գիտէին և երբ դեռ տեղի չէր ունեցել սորա և Սևերոսի նշանաւոր վէճը։ Ուրեմն գոնէ Փիլոքսէնոսը պէտք է համարուէր Հալիկառնացու հետևող, չնայելով որ հին է նորանից ժամանակաւ։ Այդպէս և, եթէ մէկը (օրինակ մի Սբդիշոյ) աշակերտել էր Փիլոքսէնոսին և իւրացրել նորանից անապականութեան ուսումը, պէտք է համարուէր «Յուլիանիտ», թէպէտ և Հալիկառնացու ոչ մի գրուածքը կարդացած չլինէր կամ գաղափար անգամ չունենայ նորա մասին։ Բայց միթէ պակաս անհեթեթութիւն է այս. պարզ չէ՞ միթէ, որ Փիլոքսէնոս, կամ նորա մի աշակերտը, Հալիկառնացու հետևող չի կարող համարուել և «Յուլիանեան» կոչուել միմիայն նորա համար, որ անապականութիւն է ընդունել։ Ինչև ուրեմն, պէտք է այդպէս համարուի և այդպէս



կոչուի Զ. դարու երկրորդ կիսի կամ Է. դարու սկզբի Հայոց եկեղեցին, որ անապականութեան դաւանութիւնը հաստատելու համար վկայութիւն է բերում նախնի հայրերին և Փիլոքսենոսին, և ոչ մի նշանով ցոյց չի տալիս, թէ որև է ծանօթութիւն ունեցած լինի Հաղիկառնացու մասին։ Կամ եթէ անպատճառ հարկաւոր է մեր եկեղեցին մէկնումէկի հետևող անուանել այս խնդրում, ինչու անպատճառ Հաղիկառնացու, և ոչ Փիլոքսէնոսի, քանի որ նոյն իսկ De rebus Armeniae գրուածքի հեղինակը, ինչպէս տեսանք, կամենալով Աբդիշոյին Հայոց մոլորեցուցիչ դարձնել և մեղադրել սոցա իբրև աղանդաւորների՝ Տիմոթէոս Կուզի և Փիլոքսէնոսի գրուածներն է համարում մոլորութեան աղբիւր, ոչ թէ Հաղիկառնացու, որով պարզ ցոյց է տալիս, թէ իւր ունեցած տեղեկութեանց համաձայն այդ հեղինակների գրուածները միայն ծանօթ են եղել Հայերին և հարկ եղած դէպքում նոցանից են վկայութիւն բերել. ինչպէս և ճշտուում է «Կնիք հաւատոյ» ժողովածուի և ուրիշ վկայութիւններով։

Յիրաւի ես շատ հաւանական եմ համարել (Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, եր. 204), որ Հայոց հետ միաբանող ասորիները, և մանաւանդ Սբդիշոն՝ ծանօթ լինէին Աղէքսանդրեան վէճերին և Հաղիկառնացու հայեացքներին, բայց միայն հաւանական, և ոչ թէ հաստատուած իրողութիւն, այն ևս վերապահութեամբ, թէ այդ դէպքում իրենց չէին համարի նորա հետևող, այլ նորան իրենց նման նախնաւանդ վարդապետութիւնն ուղիղ բացատրող մէկը։ Պատմական ոչ մի փաստով չի արդարանում Տէր Մինասեանի այն որոշումը, «որ ամբողջ ասորական եկեղեցին Ե. դարի վերջից և Զ. ի սկզբից երեք մեծ հատուածների է բաժանուում Նեստորական, Սևերեան և Յուլիանիստ»։ Տեսանք, որ Նեստորական վէճերի հետևանօք Ե. դարի վերջին Պարսկաստանում կազմակերպուեց Պարսկա-ասորական Նեստորական եկեղեցի, որ մինչև այժմ էլ գոյութիւն ունի. տեսանք, որ Զ. դարի կէսերին Անտիոքի և Աղէքսանդրիոյ կայսերահպատակ թեմերում կազմակերպուեց Ասորական Սևերեան—Յակոբիկ եկեղեցի, որ մինչև այժմ էլ գոյութիւն ունի. բայց թէ Զ. դարի քսանական թուականներին Եգիպտոսում յառաջացած Սևերեան-Յուլիանեան դաւանաբանական վէճը նաև մի նոր Յուլիանեան եկեղեցական կազմակերպութեան սկիզբ դրած լինի՝ ամենևին չենք տեսնում. գոնէ ինձ յայտնի չէ, թէ Գայանեանների Աղէքսանդրիայում Սևերեաններին ցոյց տուած ժամանակաւոր ընդդիմադրութիւնից յետոյ որ և է տեղ մի Յուլիանեան համայնք փոքր ի շատէ երկարատև գոյութիւն պահած լինի։ «Չպէտք է մոռանալ (կրկնենք

Տէր Մինասեանի խօսքերով), որ անապականութիւն ընդունողները երբէք իրենց Յուլիանոսի հետեւող չեն համարել» (եր. 100). որ նոյն իսկ հակառակորդների կողմից «Յուլիանեան» կոչուող ասորինները՝ Հայոց եկեղեցուն յարած լինելուն համար, դեռ Ը. դարի սկզբում իրենք իրենց անուանում էին «Գրիգորեան» (եր. 94 և 118). որ անապականութեան ուսումը ամենայն ընդարձակութեամբ քարոզուել է Հաղիկառնացու ասպարէզ գալուց առաջ։ Ովքե՞ր են ուրեմն իսկապէս «Յուլիանիտ»ները և ո՞վ է «պատմական գրականութեան մէջ» մի այդպիսի անօրինակ որոշումն արել, որ Յուլիանիտ «պայմանական անունով» կոչուեն անպատճառ անապականութիւն ընդունողները, թէկուզ Յուլիանոսից դարեր առաջ ապրած լինին, կամ նորա անունը լսած չլինին և տեղեկութիւն չունենան նորա մասին։

Այն բացատրութիւնը, որ Փիլոքսէնոս տալիս է «Կնիք հաւատոյ» եր. 260 վկայութեան մէջ, թէ Քրիստոս՝ «ոչ օրինակաւ մարմնոյ միայն նմանութեան, որպէս կարծեցին Եւտիքէս և Մարկիոն, Մանի և Վաղենտիանոս, այլ մարմին ճշմարիտ» ընդունած լինելով, մարդկային կրից ենթարկուել է ազատ և «կամաւորութեամբ, և ոչ որպէս հնազանդեալ ի բնութենէ», «ըստ տեսչութեանն համարեալ, և ոչ ըստ բնութեան մարմնոյ», — Գիզլէրի վերոյիշեալ հետազօտութեանց համաձայն «հաւատոյ հնագոյն համոզումների ուժեղ արձագանգն է»։ Դ. և Ե. դարերի դաւանական վէճերի ժամանակ եկեղեցական հայրերը ստիպուած են եղել ըստ կարելւոյն զգոյշ արտայայտութիւններ գործածել, բայց եթէ հարկը պահանջէր, Փիլոքսէնոսից տարբեր կերպով չէին տայ նոյն բացատրութիւնը. «Որովհետև Բանը նորա համար ընդունեց մեր բնութիւնը, որ ազատէ այն ապականութիւնից. եթէ ուրեմն Քրիստոսի մարդկային բնութիւնը ապականութեան ենթակայ լինէր, փրկագործութեան խորհուրդը կխախտուէր հիմքից» (Harnack's Dogmengeschichte. II Band. S. 388)։ Հետեւում է այսպիսով, որ ով հաւատարիմ էր մնում քրիստոնէական հաւատոյ հիմնական համոզումներին՝ Բ, Գ. Դ և Ե. դարերում ընդհանուր եկեղեցւոյ, յատկապէս Աղէքսանդրեան դպրոցի մէջ մշակուած՝ դաւանական սկզբունքներին, պէտք է անպատճառ Քրիստոսի մարմնոյ անապականութիւնն ընդունէր, երբ այդ խնդիրն իւր առաջ դրւում էր, թէկուզ մի Յուլիանոս Հաղիկառնացի ամենևին գոյութիւն ունեցած էլ չլինէր. և Հայոց եկեղեցին, երբ ընդունեց անապականութեան դաւանութիւնը, ոչ Միաբնակ և ոչ Յուլիանեան դարձաւ դորանով, այլ մնաց միայն հաւատարիմ այն նախնեաց դաւանական սկզբունքներին, որ



ընդունել էր արդէն ս. Լուսաւորչի օրով, վերջնական ձևակերպութեամբ իւրացրել ս. Սահակի օրով։

Տէր Մինասեան հեգնում է (եր. 87) իմ դեռ ևս Die Paulikianer շարադրութեան մէջ յառաջ բերած և պրոֆ. Հառնակի ու պրոֆ. Լօօֆսի նման հեղինակութիւնների ընդունած այն տեսութեանը, թէ իրաւացի չէ Հայոց եկեղեցին միաբնակ անուանել, որովհետև այդպէս կոչել են հակառակորդները Քաղկեդոնական վէճերի հետեւանօք պետական եկեղեցուց բաժանուած և ազգային կազմակերպութիւն ընդունած արևելքի եկեղեցիները, մինչդեռ Հայոց եկեղեցւոյ ինքնուրոյն ազգային կազմակերպութիւնը ոչ մի կապ չունի այդ վէճերի հետ, շատ աւելի հին է և փոփոխութիւն չի կրել Զ. և յաջորդ դարերի շփումներից։ Բայց ես այժմ էլ նոյն կարծիքին եմ և ամենևին չեմ շփոթւում այնպիսի անտեղի առարկութիւններից, ինչպէս՝ «տարբեր բաներ են եկեղեցու ծագումը և նրա դաւանանքը». կամ՝ «Եթէ այդպէս դատելու լինինք, այն ժամանակ ասորական եկեղեցին իբրև շատ աւելի հին եկեղեցի, քան թէ հայկականը, աւելի դժուարութեամբ պիտի միաբնակ լինէր»։ Ես ի հարկէ այդ անմիտ բանը չէի կարող ասել, թէ որքան հին լինի մի եկեղեցի, այնքան հեռու պիտի համարուի միաբնակութիւնից. այլ նկատել եմ միայն, որ միաբնակ բառի նման արտայայտութիւնների իսկական նշանակութիւնը պէտք է որոշուի այն պատմական հանգամանքներով, որոնց ծնունդ են նոքա, և ոչ թէ այն դաւանական բովանդակութեամբ, որ նոցա տալիս ենք։ Իսկ թէ այդ ուղիղ է, թէ դաւանական ինչ ինչ կէտերի նմանութիւնից չի կարելի որև է գրուածքի կամ անձի կամ հաստատութեան համար առանց այլևայլութեան հետեւցնել այս ու այն անունը կրող եկեղեցական կուսակցութեան պատկանելը՝ տեսանք արդէն «Յուլիանեան» անուան մասին տուած բացատրութիւններից։ Ինչպէս այնտեղ բոլոր անապականութիւն ընդունողներին Յուլիանեան համարելը տանում է անհեթեթ հետեւութեան և Փիլոքսէնոսն ու Մեծն Աթանասն էլ Յուլիանեան են դառնում, այնպէս և բոլոր մի բնութիւն քարոզողներին միաբնակ համարելը այն հետեւութեան կտանէր, թէ ուրեմն Կիւրեղ Աղէքսանդրացին ու նորա նախորդ Աղէքսանդրեան դպրոցի ներկայացուցիչներն էլ միաբնակ են։ Այդ բաւական չէ, եկեղեցական պատմութիւնից շատ օրինակներ կարելի է բերել, որ իրար հակառակ տեսութիւն ունեցողներ նոյն բանակին պատկանող են համարուել, և նոյն տեսութիւն ունեցողներ՝ հակառակ բանակի։ Տեսանք, օրինակ, թէ ինչպէս կեղծ Դիոնիսիոսի գրուածները, որ ելեր են մի բնութիւն դաւանողների շրջանից և սկզբ-

բում գործ են ածուել նոցա դաւանական սկզբունքները պաշտպանելու համար, յետոյ իւրացուել են հակառակորդների կողմից և նոյնպէս վկայութեան բերուել վէճերի ժամանակ։ Յայտնի է, որ Ե. տիեզերական կոչուած Կ. Պոլսի ժողովը իւր հիմնական տեսակէտներով աւելի մօտ է հակաքաղկեդոնականների պաշտպանած դաւանութեան, քան քաղկեդոնականների, բայց քաղկեդոնականների ժողով է՝ նոցա համար սուրբ, հակառակորդների համար անիծեալ։ Յայտնի է, որ շատ եկեղեցական հայրեր կանգնած են Որոգինէսի հսկայ ուսերի վերայ և նորանից են առնում իրենց տեսութիւնները, բայց բանադրում են նորան իբրև հերետիկոսի. որ մի շարք ապօղինարեան գրուածներ այս և այն եկեղեցական հօր անուան ներքոյ ուղղափառ են համարուել և նոյն իսկ ապօղինարեանների դէմ վկայութեան բերուել։

Սակայն Հայոց եկեղեցին միաբնակ անուանել անհիմն կլինէր նաև այն տեսակէտից, որ Քաղկեդոնականներն այդ անուան ներքոյ դնում են՝ Եւտիքէսի հետևողութիւն, Քրիստոսի երևութական մարմին ընդունել ևլն. և որ այդպէս անուանել են նոքա Յակոբիկներին, որոնց դաւանակից չեն Հայերը։ Այլ և անհիմն է Տէր Մինասեանի առարկութիւնը, թէ ասորական եկեղեցիներն աւելի հին են քան հայկականը. այո, ասորիներն աւելի հին քրիստոնեաներ են, քան հայերը, բայց ոչ թէ ասորական եկեղեցիներն են հին։ Մինչև Ե. դար գոյութիւն ունէր միայն մի ընդհանրական եկեղեցի, որ Հռովմէական կայսրութեան սահմաններում ընդունել էր պետական կազմակերպութիւն և որի հետ ներքին, հոգևոր կապերով միացած համայնքները Պարսկաստանի սահմաններում դեռ որոշ կազմակերպութիւն չէին ստացել. իսկ Հայաստանում գտնուող հատուածը տեղական քաղաքական, ազգագրական ևլն. պայմանների համեմատ ստացել էր զուտ ազգային կազմակերպութիւն։ Ե. դարի վերջում, երբ այս ազգային եկեղեցին, իւր ինքնուրոյնութեան մկրտութիւնն ընդունած՝ ոչ թէ դաւանական վէճերի, այլ Վարդանանց ու Վահանանց կրօնական պատերազմների մէջ, այնուամենայնիւ դաւանական վէճերի ասպարէզ ելաւ և շփումն ունեցաւ ընդհանրական եկեղեցւոյ զանազան հատուածների հետ, Պարսկաստանում կազմակերպուել էր Նեստորական եկեղեցին, իսկ կայսրութեան սահմաններում քաղկեդոնական վէճերի շնորհիւ Պետական եկեղեցւոյ կազմը քայքայուել. շուտով խոշոր հատուածներ բաժանուեցան նորանից և հետզհետէ կազմակերպուեցան իբրև Ասորական և Կոպտական ազգային եկեղեցիներ՝ Սևերեան դաւանութեամբ. Մնացած զանգուածից էլ կազմուեց Քաղկեդոնական եկեղեցի, որ դարեր շարունակ ջանք էր թափում բաժանուած մասերը կրկին իւր գիրկը վերադարձնելու, բայց փոխարէնը իւր մէջ պառակտումը գնալով մեծանում էր, մինչև յառաջ եկան Արևմտեան-Հռովմէական-Կաթոլիկ և Արևելեան-Բիւզանդական-Օրթոդոքս բաժիններ։ Հայոց եկեղեցին այդ բոլոր կազմակերպութիւնների վերայ նայեց իբրև Նախնական-Ընդհանրական եկեղեցւոյ մաքուր աւանդութիւններից և սկզբունքներից հեռացած խորթ մարմինների վերայ և մէկը միւսի ետևից մերժեց, ինչպէս տեսանք, թէ՛ Նեստորականութիւնը, թէ՛ Քաղկեդոնականութիւնը և թէ՛ Սևերեան վարդապետութիւնը։ Այդպիսով նա յիրաւի՝ «Կիւրեղ Աղէքսանդրացու քրիստոսաբանութիւնը» լիակատար կերպով ընդունելուց յետոյ, միևնոյն կէտի վերայ անշարժ կանգնած չմնաց, այլ իւր մասնակցութիւնն ունեցաւ դաւանական զարգացման յաջորդ աստիճանների ստեղծած շարժումների մէջ, բայց միշտ հաւատարիմ մնալով Կիւրեղեան քրիստոսաբանութեանը, նորա ոգւով պարզաբանելով իւր առաջ դրուած նոր խնդիրները և մերժելով այն ամէնը, ինչ որ շեղուում էր նորանից ու նորմուծութիւն բերում։



Հայոց եկեղեցին Սևերեան վարդապետութիւնը մերժեց ուրեմն ոչ թէ Հաղիկառնացու, ոչ իսկ Փիլոքսէնոսի հետևողութեամբ, այլ որովհետև հակառակ էր գտնում Կիւրեղեան-Եփեսոսեան դաւանութեանը՝ այդ դաւանութեան հիմք կազմող փրկագործութեան գաղափարին։ Կասկած չի կարող լինել, որ Լօօֆս և նորա նման մտածողները սխալուում են, երբ Սևերոսի վարդապետութիւնը աւելի մօտ են համարում Կիւրեղին, քան անապականութեան ուսումը։ Իրօք դա աւելի հեռու է նոյն իսկ, քան այնպէս բացատրուած Քաղկեդոնականութիւնը, որ կամենում էր պաշտօնական դաւանութիւն դարձնել Յուստինիանոս կայսրը իւր իշխանութեան վերջին տարիներում, երբ ձգտում էր 553 թ. ի Կ. Պոլսի ժողովի որոշումներն աւելի մօտեցնել Կիւրեղեան դաւանութեան՝ անապականութիւն ընդունելով։ Նորա մէջ թագնուած է Անտիոքի դպրոցի այն հին խմորը, որ Որդեգրական վէճերից և Պօղոս Սամոսատացու օրերից սկսած անընդհատ նորանոր յուզումներ էր յառաջ բերել եկեղեցւոյ մէջ և գրեթէ բոլոր պառակտումների պատճառը եղել, որ և է եղանակաւ շեշտելով միշտ Քրիստոսի մէջ մարդկային կողմը և անջատելով մարմնեղէն բնութիւնը աստուածայնից. մինչդեռ փրկագործութեան խորհուրդը՝ ինչպէս ըմբռնուել էր այն յունական գիտութեամբ սնուած քրիստոնեայ աշխարհում, պահանջում էր սերտ միութիւն մարդկայնի և աստուածայնի՝ ըստ կարելւոյն կատարեալ ենթարկումն մարմնոյ աստուածային բնութեան ազդեցութեան, որպէս զի մեզ մարդոցս համար ճա-

նապարհ բացուած լինի անմիջական շփումն ունենալու աստուածային հետ և հաղորդակից լինելու յաւիտենական կեանքի ու անմահութեան։ Այս տեսակէտից երբէք ընդունելի չէր, որ Քրիստոսի մարդանալուց յետոյ մարմինը անհաղորդակից մնար աստուածային բնութեան յատկութիւններին և պահէր իւր ապականացու յատկութիւնները, մինչ այդ նոյն մարմնի հաղորդութեամբը մենք յոյս ունինք անապականութիւն և անմահութիւն ժառանգելու։ Խոստովանել մի բնութիւն՝ աստուածային և մարդկային բնութիւնների կատարեալ միութեամբ, և այնուամենայնիւ թողնել ապականացու մարդկային բնութիւնը մարդեղութիւնից յետոյ, ինչպէս Սևերեաններն են անում՝ նշանակում էր ակներև հակասութեան մէջ ընկնել, որից պէտք է խուսափէր անպայման ով հաւատարիմ էր մնում Եփեսոսեան դաւանութեան. և Հայերը խուսափեցին՝ անապականութիւն ընդունելով։

Սակայն ոչ Ներսէս Բ.ի և ոչ նորա անմիջական յաջորդների դաւանական թղթերի մէջ չենք նկատում առանձին ուշադրութիւն նուիրած այս խնդրին։ Սևերեանների հետ մօտիկ շփում չունէր դեռ մեր եկեղեցին, բաւականացաւ ըստ երևութին բացասական վերաբերմունք ցոյց տալով դէպի նոցա բացատրութիւնները Մարդեղութեան մասին, և առիթ չունեցաւ խորասուզուելու հակառակ վարդապետութեան մէջ։ Նորան շարունակում էր զբաղեցնել մի կողմից Քաղկեդոնականութիւնը, և միւս կողմից Նեստորականութիւնը։ Վերջինս չէր դադարում գաղտնի գործակալներով գայթակղեցնելու և կողմնակիցներ գրաւելու թէ նորա անմիջական իրաւասութեան ներքոյ եղող թեմերում և թէ մանաւանդ Աղուանից ու Վրաց երկրներում։ Տեղեկութիւն ենք գտնում նոյն իսկ այն մասին, որ Նեստորականների կաթուղիկոսը փորձել է Խոսրով Նուշիրվանի իշխանութեամբ ճնշում գործ դնել ոչ-Նեստորական պարսկահպատակ քրիստոնեաների վերայ, բայց չի յաջողել (Die Kirchen—Geschichte des Johannes von Ephesus, München, 1862, S. 247)։ Դորա փոխարէն, երբ 571 թ.ին Հայերը, Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ Դուինի կրակարանը կործանելով՝ Բիւզանդական կայսեր օգնութեանը ապաւինեցին, լայն դուռ բացուեց քաղկեդոնական ազդեցութեանց համար։ Ականատես Յովհաննէս Եփեսացին պատմում է (l. c. S. 65), որ Յովհաննէս Բ. Գաբեղենցի կաթուղիկոսի հետ Կ. Պոլիս գնացած հայ եպիսկոպոսներն ու իշխանները սկզբում միամտօրէն անխտիր յաճախում էին Յունաց եկեղեցիներն և հաղորդւում, իսկ յետոյ խիստ ազդարարութիւններ ընդունելով հայրենիքից, որոնց մասին ինքը խոհեմութիւն է համարում լռել, զգուշացան և յետ կեցան հաղորդակցութիւնից։ Հայերի այդ միամտութիւնը տարօրինակ չպիտի երևայ, չնայելով որ Յովհաննէս Գաբեղենցին, ինչպէս իւր թղթերը (Գիրք Թղթոց, եր. 78 և 81) վկայում են, Քաղկեդոնի ջերմ հակառակորդներից էր. որովհետև նոքա մինչև այժմ թղթի վէճ էին ունեցել միայն և գործնական կեանքի մէջ դեռ չէին ընդհարուել Յոյների հետ. իսկ երբ, կրակապաշտների հալածանքից փախած՝ քրիստոնեայ աշխարհի կենտրոնում էին գտնւում, բնական է որ դաւանական վերացական խնդիրներ մոռացուէին և հաւատակցութեան զգացումը գերիշխէր, ինչպէս դարեր յետոյ էլ շատ անգամ գերիշխող է եղել մահմեդական լծի ներքոյ մաշուած հայ մարդու համար, որքան և բազմադիմի անիրաւութիւնների ենթարկուէր Յոյների կողմից։ De rebus Armeniae գրուածքի համաձայն յետոյ ժողով է եղել և Հայերը համոզուել ու նորից հաղորդուել են Յոյների հետ, դարի վերջում էլ Վարդանի անխտիր հաղորդակցութիւնը օրինակ է բերուել ուրիշ խորշողների համոզելու համար. բայց այստեղ ակներև շփոթութիւն է նկատւում Կ. Պոլսոյ Ե. տիեզ. ժողովի հետ. և արդէն այն հանգամանքը, որ Յովհաննէս Եփեսացին ոչինչ չի յիշում այդպիսի մի ժողովի ու կրկին հաղորդակցութիւն հաստատելու մասին, աւելի քան կասկածելի է դարձնում այդ տեղեկութիւնները։ Հասկանալի չէ, թէ Հ. Ակինեան ինչի՞ վերայ հիմնուած է գրում. «Յովհաննէս Եփեսացի կը պատմէ այս թուականիս ի Կ. Պոլիս Հայոց ժողով մը» (Կիւրիոն կաթուղիկոս, եր. 115). մի՞թէ—nun bildeten sie eine eigene Versammlung խօսքի վերայ (Ioh. von Ephesus. S. 65)։ Ընդհակառակն ամենայն հաւանականութեամբ Յովհաննէս կաթուղիկոսի այնուհետև ամէն հաղորդութիւնից հրաժարուելն էր պատճառ, որ ըստ երևութին նորան չթողին այլ ևս հայրենիք վերադառնալ, և նա Եփեսացու վկայութեամբ 2 տարի մայրաքաղաքում մնալով այնտեղ էլ վախճանեց։



Ինչպէս երևում է, հենց այս ժամանակ Յոյների աչքը բացուեց Հայոց դաւանական խորութեան հանդէպ, և սկսուեցին դարեր շարունակուող այն կորստաբեր քաղկեդոնական հալածանքները, որի մի փոքրիկ նմուշը տալիս է Եփեսացին՝ պատմելով (S. 237), թէ ինչպէս, կրակապաշտների ձեռքից հաւատակիցներին ազատելու համար՝ քրիստոնեայ կայսեր (Յուստին Բ.ի) Հայաստան ուղարկած քաջարի զօրականները խաչ ու աւետարանով իրենց դէմ ելնողներին ամէն անարգանք հասցնում էին, անմեղ մանկանց նիզակների վերայ շամփրելով զուարճանում. դորա համար էլ վերջը չարաչար պարտութեամբ պատժուեցան։ Երու-

սաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի հալածանքն ևս ընկնում է Հայերի Յունաց կողմից այսպիսի սրտաճմլիկ հովանաւորութիւն վայելելու շրջանում, որի կարճատև լինելը դորանով և աւելի հասկանալի է դառնում. ինչ զարմանք, որ հայ նախարարները օգտուելով Պարսից Թագաւորի առաջին իսկ հրաւէրից՝ կրկին նորա իշխանութեան ներքոյ մտան (l. c. S. 238) և գէթ առժամանակ ազատ մնացին քաղկեդոնական շնորհներից։ Բայց երբ Մօրիկ կայսրը 591 թ. ին Որմզդի որդի պատանի Խոսրովին (Ապրուէզ) իւր հօր գահը ժառանգելու օգնելով՝ Հայաստանի ու Վրաստանի մեծ մասին տէր դարձաւ, ընդարձակ ասպարէզ բացուեց Հայերին քաղկեդոնական դարձնելու ձգտմանց համար։ De rebus Armeniae դոցա սկիզբը դնում է վերև յիշուածի նման մի դէպք. որ Մուշեղ Մամիկոնեան զօրավարը Կ. Պոլիս գնալով՝ Ս. Խաչի տօնի օրը իւր զօրականների հետ մէկտեղ հրաժարուում է Յունաց տօնախմբութեան մասնակցելուց և հաղորդուելուց. խնդիրը ժողովով քննելու համար մայրաքաղաք է հրաւիրուում Մովսէս կաթուղիկոսը, բայց նա պատասխանում է. «Զեմ անցնի Ազատ գետը (Կայսերութեան նոր տիրած երկրների արևելեան սահմանը). ո՛չ փուռն հաց կուտեմ և ո՛չ ջերմուկ (ջրախառն տաք գինի) կըմպեմ»։ Ապա Յունաց բաժնի հայ եպիսկոպոսները գալիս են Կ. Պոլիս, ժողով է լինում, և նոքա ստորագրում են միաբանութեան թղթին։ Վերադարձին Մովսէս նոցա չի ընդունում, և Մօրիկ նոցա վերայ կաթուղիկոս է կարգում Յովհաննէս Բագարանցուն (Համտ. Կիւրիոն կաթուղիկոս. եր. 115—121)։ Ուրիշ տեղ ցոյց եմ տուել (Շողակաթ. եր. 106—107), թէ ինչպէս հայկական յիշատակարանները հաստատում են այս վերջին տեղեկութիւնը և վկայում, որ Յունաց կողմից միայն Ներսէս Երացեղին հաւատարիմ է մնացել իւր եկեղեցուն և Մովսէս կաթուղիկոսի կողմն անցել. իսկ սա խստիւ արգելել է իւր մասի հայերին որև հաղորդակցութիւն ունենալ Յոյների հետ։ Տեսանք, թէ ինչպէս Յունաց բաժնի հայ եպիսկոպոսներն էլ Աբրահամ կաթուղիկոսի օրով կրկին մերժեցին քաղկեդոնականութիւնը և միացան մայր եկեղեցու հետ. իսկ առ միշտ քաղկեդոնական մնաց միայն Վրաց եկեղեցին։ Անաչառ պատմագէտի համար կասկած չի կարող լինել, որ Վրաց բաժանումը ամէն բանից առաջ Մօրիկ կայսեր վարած քաղաքականութեան՝ գործ դրած քաղաքական ճնշումների և հրապոյրների, արդիւնքն էր, և զուր են Հ. Ակինեանի ջանքերը, քանիցս յիշած իւր գրքով՝ իբրև մի հանճարեղ անձն, իւր ազգի բարերար և հերոս ներկայացնել բաժանման պարագլուխ Վրաց Կիւրիոն կաթուղիկոսին։ Նախնեաց աւանդու-



թիւններին դաւաճանելու, աշխարհի զօրեղների առաջ գլուխ ծռելու և սնոտի փառասիրութեամբ ու մարդահաճոյ արարքներով իւր ուխտը դրժելու համար հանճարի և հոգւոյ մեծութեան բոլորովին հակառակ յատկութիւններ են պահանջուում.

Այս վերջին հակաքաղկեդոնական ու հականեստորական պայքարի միջոցին դաւանաբանական տեսակէտից հազիւ թէ մի զգալի նորութիւն կամ փոփոխութիւն մուտ գործած լինի մեր եկեղեցւոյ մէջ։ Աչքի ընկնող դաւանագէտ-վարդապետն այդ շրջանում Վրթանէս Քերթողն էր, որի գրածն է ըստ վերնագրի նաև Աբրահամ կաթուղիկոսի ու հայ եպիսկոպոսների կողմից Ամարասի Մխիթար եպիսկոպոսին ուղղուած թուղթը (Արարատ, 1896. հոկտեմբեր, եր. 477. Գիրք Թղթոց, եր. 196)։ Այդ թղթի մէջ, բաւական մութ կերպով, շօշափուում են այնպիսի հարցեր. որ կարելի է կարծել, թէ բացի վերև ինկատի առուածներից ուրիշ ժամանակակից աղանդաւոր շարժումներ ևս ազդեցութիւն են գործել Աղուանից կաթուղիկոսութեան թեմերում, ինչպէս օրինակ Եռաստուածեան աղանդը (Iohannes von Ephesus, S. 196 ff. und 267 ff.)։ Բայց կարող ենք նաև մտածել, որ եկեղեցական գիտութիւնը Զ. դարի ընթացքում նոր նոր տարածուելով այդ հեռաւոր քրիստոնէաբնակ վայրերում՝ հոգևոր կենդանութիւն և վհետաքրքրութիւն էր յառաջ բերել. այդ տեսակ հարցերը ինքնաբերաբար վարթնում էին, մտքերի փոխանակութեան դրդում և վէճերի առիթ տալիս։ Շատ ափսոս, որ Մայրագոմեցու բոլոր դաւանաբանական գրուածները չեն մնացել, կամ գոնէ մի ամբողջական գործը. «Կնիք հաւատոյ»ի մէջ պահուած մասերից երևում է, որ նա հաւատոյ հանգանակի բոլոր կէտերը իւր տեսութեանց նիւթ դարձրած և մի ինքնուրոյն, բազմակողմանի ու լրիւ դաւանաբանութիւն ընծայած պիտի լինի, որ գլխաւորում՝ ամփոփում էր իւր մէջ նախորդ դարերի եկեղեցական յարաբերութեանց, վէճերի ու յուզումների միջոցին մեր եկեղեցւոյ իւրացրած դաւանական հայեցակէտները, իսկ մի քանի հարցերում առանձնայատուկ շաւղով ընթանում։ Նոյն դերը կատարում է մասամբ «Կնիք Հաւատոյ» ժողովածուն, որի նկատմամբ վերև յայտնած ենթադրութիւնները եթէ ուղիղ են՝ ապա Մայրագոմեցին, իբրև ժողովածուի կազմողը, իւր տեսութեանց համեմատ և նիւթ պիտի ընտրած լինի եկեղեցական հայրերի երկերից ու դասաւորած։ Բաւական է աչքի անցնել ժողովածուի գլխակարգութիւնը միայն՝ տեսնելու համար, որ Երրորդութեան և Մարդեղութեան գաղափարները Առաջին և Երկրորդ, յիրաւի ընդարձակագոյն՝ գլուխներում պարզելուց յետոյ, մնացած 8 գլուխները

գրեթէ ամբողջովին նուիրուած են Անապականութեան գաղափարին, որն ուրեմն առաջնակարգ կարևորութիւն է ունեցել կազմողի համար։ Այս հանգամանքը կարող էր մինչև իսկ մտածել տալ, թէ ժողովածուն կազմուած կամ ձևափոխուած կլինի Կոմիտասի մահից յետոյ. Քրիստափոր Բ. կաթուղիկոսի օրով, երբ Հայերի և Սևերեան ասորիների մէջ հաւատոյ միութիւն է տեղի ունեցել ու միաբանութիւն հաստատուել, իսկ Մայրագոմեցին հակառակել է (Շողակաթ, եր. 107—109). բայց մեզ յայտնի չէ, թէ արդեօք Կոմիտասի օրով էլ, կամ նորանից առաջ՝ Աբրահամ կաթուղիկոսի օրով՝ կենդանի յարաբերութիւն տեղի չի՞ ունեցել Հայերի և Սևերեանների մէջ. որ առիթ լինէր ժողովածուի այսչափ ընդարձակ մասեր այդ յարաբերութեան խնդիրներին նուիրելու։ Ցամենայն դէպս այստեղ կատարելապէս հասունացած և հնաւոր հետևութիւններով պարզուած ենք գտնում Անապականութեան խնդիրը, և մի կողմ թողնելով կրկին եկեղ. հայրերի վկայութիւնները, որոնք միայն երկրորդական ծառայութիւն կարող էին մատուցանել, Մայրագոմեցու բացատրութիւններով կաշխատենք ծանօթանալ նորա հիմնական գծերի հետ։

Արդէն պակաս հետաքրքրութիւն չի ներկայացնում սորա ս. Երրորդութեան վերաբերեալ հատուածը (եր. 52)։ Այստեղ նա զարմանք է յայտնում Ճարտարաց Յունաց անխորհուրդ ձեռնարկութեան մասին, «որք ասեն զՍուրբ Երրորդութիւնն դիմօք և առանձնաւորութեամբ բաժանեալ ի միմեանց, և աստուածութեամբն միաւորեալ». կամենալով դէմ առնել «Սաբելի խանգարմանն»՝ յոյն գիտունները դորանով այնպիսի անջատողական են մտցնում անբաժանելի Երրորդութեան մէջ, որ երբէք թոյլատրելի չէ։ Ինքը՝ Ս. Սահակի և Մանդակունու նման, կարևոր է համարում հետևել առաքելական սկզբունքին. «Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ», որով Որդին աշխարհի վրայ եղած ժամանակն իսկ հաւասար է Հօր և անբաժան, ինչպէս և Ս. Հոգին ի Հօրէ ելանելով՝ մնում է միշտ անբաժան և հաւասար, և խօսք չպէտք է լինի բաժանեալ առանձնաւորութեան մասին։ Գուցէ Մայրագոմեցին էլ Եռաստուածեանների աղանդն ի նկատի ունենալով այս բացատրութիւնները տուել է. բայց սոքա կարող են վերաբերուել պարզապէս ժամանակակից Յունական աստուածաբանութեան մէջ ընդունուած և շատ սովորական դարձած բանաձևերին, ինչպէս և հասկացել է Յովհան Օձնեցին, որ «Ընդդէմ երևութականաց» ճառի մէջ (Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք. Վենետիկ. 1833. եր. 62), յառաջ է բերում Մայրա-



գոմեցու ճիշտ վերև յիշած արտայայտութիւնը և պախարակում եկեղեցւոյ սուրբ Հայրերին Ճարտարք Յունաց անուանելը և նոցա ուղիղ վարդապետութիւնը քամահելը։

Բ. գլխի կրկին հատուածների մէջ (եր. 142 և 143) Կիւրեղեան վարդապետութեամբ պարզաբանուած Մարդեղութեան խորհուրդի հետ գտնում ենք արդէն Անապականութեան գաղափարը, և առանձնապէս ուշագրաւն այստեղ այն է, որ Մայրագոմեցին խոյս է տալիս ամէն կերպ՝ Քրիստոսի մարմնին երևութական բնաւորութիւն տալուց, և շեշտում է, որ «թէպէտև յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին, ինքն միշտ անապական ասի». ընդունում է ուրեմն, որ Քրիստոս ըստ ամենայնի կատարեալ մարդկային մարմին է զգեցել, որ այդ մարմինը աստուածային բնութեան հպումով միայն անապական դարձաւ և «զմեզ անապական գործեաց՝ զծնեալս վերստին յանապականութեան սերմանէն կենդանի և մշտնջենական Բանին Աստուծոյ»։ Այդպիսով մարմնացեալ Բանը «թէպէտև ստեղծական և ստացական մարմին գոյացոյց ինքեան», ոչ մի նկատմամբ երկաբուն չպիտի ասուի, «այլ մի անձն և մի բնութիւն». և ամէն մի խօսք բնութեանց թուի ու բաժանման մասին՝ չարի թելադրութիւն պիտի համարուի, տիեզերքը հաւատից խախտելու առիթ։ Սակայն Ե. գլխի կրկնակի հատուածներում (եր. 253 և 254) նա բացատրում է, որ Քրիստոս, իբրև Նոր Ադամ՝ ոչ թէ Ադամայ մեղօք զառածեալ մարմինն է ընդունել, այլ աստուածազգեստ փառազգեստ Ադամի նախ քան պատուիրազանցութիւնն ունեցած մարմնի համեմատ մարմին. և դորա համար է առաքեալը ասում, թէ նա եկաւ «ի նմանութիւն մարմնոյ մեղաց», որով և հաստատում է, թէ նա մեր մեղաւոր մարմնի նմանութիւնը միայն ունէր, բայց ոչ նոյն հին մարմինը, այլ մեղքից ազատ, սկզբնական և անապական։ Այնուամենայնիւ «ճշմարիտ հաւատացեալք ի Քրիստոս ոչ նմանութեամբ զճշմարտութիւնն ուրանան և ոչ ճշմարտութեամբ զմարդեղութիւնն խոտեն». այսինքն Քրիստոսի ճշմարիտ մարդ լինելը և իսկական մարմին առնելը չի ժխտւում, երբ ասում ենք թէ՝ եկն «ի նմանութիւն մարմնոյ մեղաց», այլ միայն «մեղաց մարմին» առած լինելը. թէ չէ նա ճշմարիտ մարմին առաւ և «կամեցաւ լինել մարդ և մարդեղութեամբն փրկել զարարածս», ինչպէս և յաճախ «զինքն Որդի Մարդոյ հաստատեալ անուանէր». «և որ զնմանութիւնն հաստատէ և ճշմարտութեանն ոչ հաւանի՝ ուրացող է ընդ Հրէիցն»։

Շատ աւելի հեռու է գնում Մայրագոմեցին եր. 327 և 363 հատուածների մէջ, ուր կամենալով հաստատել Քրիստոսի համար

թէ՝ «Զամենայն կեանս մարմնականս՝ ի ցաւղակերպ իջիցն մինչև ի նստելն ընդ աջմէ Հաւր, ամենակար զաւրութեամբն է տեսանել՝ ըստ Աստուածային Գրոց, և ոչ տկարութեամբ», մերժում է նաև երկիւղը իբրև տկարութիւն, և չի կարող թոյլ տալ, որ Քրիստոս մահուան հանդէպ սրտմութիւն և երկիւղ զգացած լինի, մանաւանդ թէ «արենաքիրտն» եղած. իսկ այդ նշանակում է, որ չի ընդունում Ղուկ. ԻԲ. 43—44 վաւերականութիւնը և այդտեղ նկարագրուած «տագնապի» դէմ է ուղղում իւր պատճառաբանութիւնները։ Խիստ հետաքրքրական է այս նկատմամբ De rebus Armeniae գրուածքի յիշատակութիւնը, թէ Մայրագոմեցին աւետարանի այդ խօսքերի վաւերականութիւնը ժխտելով՝ համարում էր Սատոռնիլ աղանդապետի ներմուծութիւն (հմմտ. Irenäusfragmente, S. 141)։ Որտեղից էր վերցրել նա այդ կարծիքը, դժուար է ասել. եթէ ուղիղ է Իորդանի վերև բերուած ենթադրութիւնը, թէ «Կնիք հաւատոյ» եր. 293 Իրենէոսի վկայութեան վերնագրի Ստոռնին բառը Սատորնին պէտք է կարդալ և յիշեալ աղանդապետի համար հասկանալ, ապա ամենայն հաւանականութեամբ Մայրագոմեցին այդ հատուածի «իսկ որ զտասներորդ վիճակ դեպիսկոպոսութեան յառաքելոցն ընկալեալ» խօսքն էլ Սատորնինի համար է հասկացել, և ընդունել. որ նա «զՂուկա աւետարանն կրճատեալ»՝ իւր կողմից էլ աւելացրել է ԻԲ. 43—44 պարբերութիւնը։ Դժբաղդաբար ձեռքի տակ չունինք Փիլոքսէնոսի աւետարանների մեկնութիւնը, կամ նորա և Յուլիանոս Հալիկառնացու ուրիշ մեզ հասած գրուածներ, որպէս զի կարող լինէինք ստուգել, թէ նոքա էլ աւետարանի այդ պարբերութեան վաւերականութիւնը մերժե՞լ և Քրիստոսի համար երկիւղ ու տրտմութիւն չե՞ն ընդունել. ինքնուրոյն է արդեօք Մայրագոմեցին այս կէտում, թէ հետևող մի ուրիշի։

Յամենայն դէպս Թէոդորոս Քռթենաւորը իւր ճառի մէջ (Յով՛. Իմաստասիրի մատենագրութիւնք, եր. 147), որ ուղղուած է ամբողջովին Մայրագոմեցու այս տեսութեան դէմ՝ «Նորահրատրոց» կամ «Նորածին դառնութիւն» է անուանում այն և մի յայտնի աղանդաւորից փոխառած չի համարում, որ անշուշտ չէր խնայի շեշտել, եթէ այդպէս համոզուած լինէր։ Նա հերքում է միայն այն կարծիքը թէ՝ «Երկիւղ ոչ է ի սկզբնեղութիւն բնաւորեալ, և ոչ է Աստուծոյ գործած, այլ վերջապարուկ ներգործեալ յարանայ ախտ», և հաստատելով, որ երկիւղի տրամադրութիւնը ամէն մի կենդանի և բանական էակի մէջ կայ ու պակասութիւն չէ ամենևին. այլ իւր կարևոր դերն ունի բարոյական կեանքի մէջ, եզրակացնում է Քրիստոսի համար. «Եթէ ոչ եր-



կեաւ առեցելոյն, յայտ է թէ և ոչ մարդացաւ». բայց որ արժանի է առանձին ուշադրութեան, ինքն իսկ հրաւիրում է՝ խոստովանել «զառ ի Կուսէն ծնեալն Աստուածն Բան՝ ճշմարիտ առեալ մարմին անփոփոխ աստուածութեամբ, և եզակի դէմ, անբաժ ի կրից, անապական մարմնով, մաքուր ի մեղաց, անեղծ ի չարչարանս, և չարչարեալ իսկապէս». ընդունում է ուրեմն Քրիստոսի մարմնի անապականութիւնը՝ մարդեղութիւնից ի վեր։ Վէճն այդպիսով աւելի տեսական—գրական բնաւորութիւն ունէր, քան երկու տարբեր դաւանական դրութիւններից էր յառաջանում։ Մայրագոմեցին չի ընդունում Քրիստոսի «արենաքիրտն լինել»ը՝ համարելով այդ «արտաքոյ ամենայն բնութեանց». նա այնպէս է դատում, թէ արիւն քրտնելն մի անբնական բան է, որ «ոչ յԱստուած յարի և ոչ ի մարդութիւն». ուստի Քրիստոսին վերագրել չենք կարող, որչափ և «ըստ տեսակին և ըստ տարրական գոյացութեանն հաւաստեաւ գիտեմք՝ և ճշմարիտ մարդ է, և վասն Հօր և Հոգոյն սքանչելեացն, զոր արար, հաւատամք, եթէ նոյն ինքնն և Աստուած ճշմարիտ է»։ Թէոդորոս դորա դէմ առարկում է. «Գրումն աւետարանին որպէս արեան տարացուցաբանութեամբ քիրտն, այլ ոչ թորումն անզինահար արեան», այսինքն թէ՝ աւետարանի մէջ խօսքը ոչ թէ իսկական արիւն հոսելու մասին է, այլ քրտինքի կաթիլների արեան հետ ունեցած արտաքին նմանութեան։ Մէկը չի կամենում դնել «զպարսաւ երկիւղի և զանկատարելութեան ի վերայ Քրիստոսի», միւսը ամենևին պարսաւ և անկատարելութիւն չի համարում երկիւղը, այլ «մահուանն երկիւղին ազատումն»։ Մայրագոմեցին պահանջում է՝ «խոնարհութեան իջմանն հաւատալ և զզօրութիւն աստուածութեանն ոչ փակել ի խոնարհմանն, այլ յամենայն ժամ հաւատով ճանաչել զնա՝ և՛ ի ցաւղակերպ էջսն և յղացմանն անքննելի, և ի մարմնանալն անճառապէս և յառնուլն զկերպս ծառայի . . . և ի քաղցնուլն և ի ծարաւելն, և ի ննջելն և ի տրտմելն և յարտասուելն, և ի մատնութիւնն, և ի տխրելն և ի հոգալն . . . և ի թքանելն և ի խայտառակելն անհնարին ձաղանաւք . . . և ի բևեռելն ոտիւք և ձեռօք ի փայտ խաչին, և ի ծարաւելն՝ առ յըմպել զքացախ և զլեղի, և յաւանդել զոգին ...»։ Թէոդորոս էլ ըստ էութեան շատ տարբեր բան չի ուսուցանում՝ ասելով. «Զորս զաստուածականսն դաւանեսցուք բնութեամբ, և զանօրինականս կամաւոր յանձնառութեամբ». «սա ոչ նուազ աստուածութեամբն, և անմեկին տնօրինեալ բնութեամբ. սա ամենից կամաւորութեամբ համբերեալ տարաւ, զի բոլորումն գործեսցէ փրկութիւն մարդոյն»։

Մայրագոմեցին յիրաւի, անապականութեան ուսումը իւր կատարեալ լրութեամբ պաշտպանելով՝ ծայրայեղ եզրակացութիւնների է յանգում, և գուցէ աւելի առաջ գնում, քան նոյն իսկ Յուլիանոս Հալիկառնացին. բայց սորա առանձնայատուկ բանաձևերը չենք գտնում իւր բացատրութեանց մէջ (օրինակ, նա ոչ մի անգամ չի գործածել անչարչարելի արտայայտութիւնը Քրիստոսի մարդկային բնութեան համար) և շօշափելի փաստ չենք տեսնում, որ սորա հետևողութեամբ իւր տեսութիւնները պարզած լինի. ինչպէս և Թէոդորոս չի մեղադրում նորան իբրև Հալիկառնացու հետևողի։ Այլ և «Հայոց գրականութեան մէջ» ուրիշ ոչ մի տեղից յայտնի չէ, Փոտ պատրիարքն էլ ամենևին չի վկայում, ինչպէս պնդում է Տէր Մինասեան, թէ «Մայրավանեցու Յուլիանիտ լինելու նկատմամբ ոչ մի կասկած լինել չի կարող» (Հայոց եկ. ոյ յարաբերութիւնները, եր. 227 շ.)։ Փոտ իւր տեղեկութիւններն առնում է, ինչպէս յիշուեց, De rebus Armeniae գրուածքից։ Այստեղ բոլորովին այլ կերպ է նկարագրած Մայրագոմեցու յարաբերութիւնը Եզրի հետ, քան մեզ ծանօթ է հայ պատմիչներից։ Եզրի Կարնից վերադառնալուց յետոյ՝ Մայրագոմեցին աշխատում է իւր կողմը գրաւել և նորա հաղորդութիւնից հեռու պահել Գարդմանի Ստեփանոս և Սիւնեաց Մաթուսաղա եպիսկոպոսներին, և երբ չի յաջողում, ինքը միակ հակառակորդը մնալով՝ մի կողմ է քաշւում։ Ապա, իբրև թէ յոյս է ունենում հայ մեծամեծների օգնութեամբ կաթուղիկոս ընտրուելու Եզրի մահից յետոյ, և երբ այդ ևս չի յաջողում, ինչպէս չէր յաջողել Քրիստափորից յետոյ, սկսում է Ներսէս Գ. Իշխանեցուն մեղադրել, թէ Եզրի հետևող է և քաղկեդոնական կայսեր հետ է հաղորդւում. որով շփոթութիւն է յարուցանում, մինչև Ներսէս՝ հայ նախարարների, եպիսկոպոսների և վարդապետների ներկայութեամբ, յանդիմանում է նորան, և ժողովը որոշում է նորա և հետևողների ճակատին աղուեսադրոշմ դնել ու դէպի Կովկաս աքսորել. բայց նորա աշակերտները յետոյ բազմանում են ու հանդէս գալիս Սահակ կաթուղիկոսի օրերում, երբ սա Կ. Պոլիս է կանչւում և քաղկեդոնականութիւն ընդունելով՝ վերադարձին կրկին մերժում։ Ոչ մի յիշատակութիւն չկայ այդ նկարագրութեան մէջ Յուլիանոս Հալիկառնացու մասին։ Իսկ Փոտի և հայ պատմիչների այն տեղեկութիւնը, թէ Մայրագոմեցու աշակերտ Սարգիսը թարգմանել է Հալիկառնացու գրուածները՝ աւելի է հաստատում ընդհակառակն, ինչպէս ցոյց եմ տուել (Շողակաթ, եր. 112), որ Մայրագոմեցին Հալիկառնացու հետևող չի եղել և առաջին անգամ նորա աշակերտի թարգմանութիւններով է սա յայտնի դարձել Հայերին։



Այն հանգամանքը, որ Հալիկառնացու անունը մինչև Է. դարի վերջը Հայոց ոչ մի դաւանական գրուածի մէջ չի յիշւում, ոչ թէ ապացուցանում է, ինչպէս Տէր Մինասեանն է ցանկանում, որ Հայերը մինչև այդ ժամանակ ուղղափառ են ճանաչել Յուլիանոսին ու նորա վարդապետութիւնն ընդունել, իսկ Մանազկերտի ժողովից սկսած անհետևողականութեամբ դատապարտել նորան՝ Սևերոս Անտիոքացու և ուրիշների հետ, իբրև հերետիկոսի, այլ որ նա, ինչպէս տեսանք, ծանօթ չի եղել և հարց ու խնդիր նորա մասին ամենևին տեղի չի ունեցել. ուստի և երբ հրապարակ է բերուել նորա անունը՝ առանց տատանուելու հերետիկոս են համարել ու բանադրել, հաստատ մնալով հանդերձ անապականութեան դաւանութեանը։ Այսպիսով Մայրագոմեցին, ինչպէս վերև Ներսէս Բ. ի ժամանակակիցների համար նկատուեց, կարող է գուցէ Փիլոքսէնոսի հետևող համարուել, որին անկասկած «երանելի» ուղղափառ հայրերի շարքում է դրել և որից Ստեփանոս Իմաստասիրի գրութեան մէջ բերուած վկայութիւնները (Արարատ, 1907, եր. 379), ինչպէս և «Կնիք հաւատոյ» եր. 253, ցոյց են տալիս, թէ նորա հետևողութեամբ է Քրիստոսի առած մարմինը Ադամի «աստուածաստեղծ» մարմնին համեմատել. բայց «Յուլիանիտ» կարելի էր նորան այն դէպքում միայն անուանել, երբ Տէր Մինասեանի հետ Փիլոքսէնոսին ընդունէինք իբրև «նշանաւոր Յուլիանիտներից» մէկը (Հայոց եկ. ոյ յարաբերութիւնները, եր. 220). որ, ինչպէս բացատրել ենք, կատարեալ անտեղութիւն է և կնշանակէ հօրը որդու շառաւիղ դարձնել։

Եթէ հրաժարուենք այն նախապաշարումներից, որ մուտ են են գործել եկեղեցական պատմութեան մէջ՝ մինչև վերջին ժամանակներս գրեթէ բացառապէս քաղկեդոնական գրուածների յայտնի լինելու և Ե. ու Զ. դարերի դաւանական շարժումները նոցանով միայն բացատրելու շնորհիւ, պարզ պիտի լինի, որ անհիմն է Դիոսկորոսի, Տիմոթէոս Կուզի, Փիլոքսէնոսի պաշտպանած դաւանական դրութիւնը «Կիւրեղեան» վարդապետութիւնից կամ Նիկիական-Եփեսոսեան դաւանութիւնից տարբեր, մի նոր «միաբնակ» աղանդաւոր երևոյթ համարել. որ սոքա իրապէս ոչինչ չեն փոխել, ցանկութիւն գոնէ չեն ունեցել փոխելու, այլ միայն իրենց ժամանակի և միջավայրի պահանջների համեմատ ջանացել են պարզաբանել հայրերի աւանդածը։ Հայոց եկեղեցու մէջ ևս, նոցանից իւրացրած տեսութիւններով, մինչև Մայրագոմեցին կանոնաւոր ու անսայթաք կերպով յառաջ է գնացել դաւանական զարգացումը և յանձին նորա ունեցել իւր վերջին ինքնուրոյն ներկայացուցիչը։ Քաղաքականապէս պաշտպանուած լինելով Պարս-

կաստանում արտաքին ճնշումներից՝ հայերն աշխատել են անանվթար պահել Նիկիական-Եփեսոսեան դաւանութիւնը և նորանից հետևականօրէն բղխող բացատրութիւններով պատսպարել ամէն տեսակ նորմուծութիւնների, շուրջը եռացող աղանդաւոր յուզումների դէմ։ Ճիշտ է, Մայրագոմեցին շատ առաջ է գնացել իւր հետևութիւնների մէջ. ինչպէս տեսանք, նոյն իսկ Երրորդութեան գաղափարի նկատմամբ հակառակել է եկեղեցական ամենանշաւոր հայրերի ընդունած մի տեսութեան և դէմքերի ու առանձնաւորութեանց բաժանումը մերժել, բայց թուում է, թէ այդպէս վարուել է ինքնաբերաբար՝ աստուածային բնութիւնը ըստ կարելւոյն բարձր պահելու եռանդից և հաւատոյ խնդիրները նուրբ փիլիսոփայական զննութիւնների նիւթ դարձնելու հակակրութիւնից մղուած. գուցէ նաև այն պատճառով, որ իրեն կաշկանդուած չի զգացել մեր եկեղեցւոյ մէջ պաշտօնական բնաւորութիւն ստացած տեսութիւններով, կամ չափած ու կշռուած բանաձևերով, ինչպէս իւր ժամանակի Յունաց եկեղեցւոյ մէջ էր։ Հանգամանքները շատ փոխուեցան Կոմիտաս կաթուղիկոսի մահից յետոյ, դեռ ևս Մայրագոմեցու կենդանութեամբ, երբ Հերակլ կայսեր բարոյական ճնշումների և քաղաքական ազդեցութեանց ներքոյ միաբանութեան փորձեր եղան՝ նախ Սևերեան ասորիների և ապա Քաղկեդոնական յոյների հետ (Համմ. Շողակաթ, եր. 107 շ.), և մեր եկեղեցին առժամանակ կորցրեց հաւատարակշռութիւնը դաւանական խնդիրներում։ Յաջորդ ամբողջ դարը, Է. ի քսանական թուականներից սկսած մինչև Ը. դարու քսանական թուականները՝ շատ հարուստ է եկեղեցական կեանքի բազմազան երևոյթներով և առանձին ուսումնասիրութեան նիւթ պիտի լինի. համարելով այն դուրս «Կնիք հաւատոյ» նախնական ժողովածուի համար գծուած շրջանակից՝ նորա վերաբերմամբ մանրազննին հետազօտութեանց մէջ չենք մտնի, որ շատ հեռու կտանէր, այլ կբաւականանանք մի հարևանցի գաղափար կազմելով այն մասին, թէ ի՞նչ բովից պիտի անցած լինի ժողովածուն Է. դարի ընթացքում և ի՞նչ պայմանների մէջ երկրորդ խմբագրութեան ենթարկուած։

Դժուար է հաւատալ (տես. Շողակաթ, եր. 111) De rebus Armeniae-ի տեղեկութեանը, որ Մայրագոմեցու պէս մեծ վարկ ունեցող վարդապետի աղուէսադրոշմով պատժէին ու իբրև մի ամենադէշ աղանդաւորի դուրս քշէին երկրից։ Ինչպէս այդ գրուածքը հերքում է նորան Եզրի հրամանով «մուրցացի տանջելու» պատմութիւնը (Յովհ. պատմագիր, Թիֆլիս, 1912, եր. 79), այնպէս և իւր Ներսէս Իշխանեցու մասին պատմածը հերքւում է



այն դիտողութեամբ, որ եթէ Մայրագոմեցին սորա օրով կենդանի մնացած լինէր, ամենապատկառելի զառամեալ հասակի մէջ պիտի գտնուէր, և եթէ յոյս էր ունեցել հայ իշխանների օգնութեամբ կաթուղիկոսանալու, մի անգամից անարգութեան այդ աստիճանին չէր հասնի։ Տարբեր է խնդիրը նորա հետևողների նկատմամբ, որոնք մեզ հասած բոլոր պատմական վկայութիւնների համաձայն հետզհետէ առանձնացել են եկեղեցւոյ ընդհանրութիւնից, այլևայլ ծայրայեղութիւնների մէջ ընկել և աղանդաւոր կերպարանք ընդունել. ուստի և լուրջ հալածանքի ենթարկուել կարող էին արդէն Ներսէս Գ. ի օրով։ Ասորւոց և Յունաց հետ մի անգամ միաբանութիւն հաստատելուց յետոյ՝ ինչքան էլ Հայերը դժկամակութեամբ համակերպեցան ստեղծուած դրութեան, Ներսէս Գ. ի կաթուղիկոսութեան առաջին շրջանում բացարձակ կերպով մերժեցին կրկին Քաղկեդոնի ժողովը, և հարկ եղաւ, որ Կոստանդ Բ. կայսրն անձամբ Հայաստան գայ և նորից հաղորդակցութեան ստիպէր, այնուամենայնիւ եկեղեցական կեանքի անիւը դուրս էր եկել իւր շրջագծից, և այլ ևս կարելի չէր նախկին պարզութեամբ նախնեաց աւանդութեան կառչած մնալ։ Այսպէս երերեալ վիճակ ունեցաւ մեր եկեղեցին մինչև Է. դարի վերջերը. Յոյները մերթ երկրի մի մասին, մերթ ամբողջին տիրելով՝ իրենց ազդեցութեան ենթակայ շրջաններում հարկադրում էին վերանորոգել Եզրի օրով հաստատուած միաբանութիւնը. ապա գալիս էին Արաբները, և նոցա իշխանութեան ներքոյ կրկին գլուխ էր բարձրացնում դժկամակութիւնն ու հակակրութիւնը այդ միաբանութեան դէմ. մինչև որ մի կողմից 680—81 թ. ի Զ. տիեզերական կոչուած ժողովը Կ. Պոլսում՝ դատապարտելով Միակամայից վարդապետութիւնը, որի հիման վերայ տեղի էր ունեցել միաբանութիւնը Հայերի և Ասորիների հետ, և 2 կամքի ու 2 ներգործութեան ուսումը դաւանութեան մէջ մտցնելով՝ ըստ ինքեան վերացրած եղաւ միաբանութեան բոլոր փորձերի հիմքը. միւս կողմից արաբական իշխանութիւնը վերջնականապէս հաստատուելով Հայաստանում՝ միջոց տուաւ առանց արտաքին ճնշումների, առանձին եղանակաւ, անցեալում յառաջացած շփոթութիւններին վերջ դնել և պաշտօնապէս կարգաւորել դաւանական խնդիրները։

Հայոց մէջ կատարուել էր մօտաւորապէս այն, ինչ որ կայսերութեան սահմաններում Քաղկեդոնի ժողովից յետոյ, և յառաջ էր բերել նման երևոյթներ ու հետևանքներ։ Երբ իրար հակառակ դրութիւններ բռնի կերպով համաձայնեցնել են աշխատում, դաւանական զարգացման կանոնաւոր ընթացքը կանգ է առնում և

դաւանանքը դադարում է հաւատոյ անմիջական արտայայտութիւն լինելուց. հոգևոր հետաքրքրութիւնն ու ուշադրութիւնը բուն նիւթից դառնում է ապա մտքի այն գործողութիւնների՝ իմաստասիրութեան այն օրէնքների և բանաձևերի վերայ, որոնցով կարելի պիտի դառնար ծայրերն իրար մօտեցնել, սրութիւնները հարթել, անըմբռնելին ապացուցանել։ Դաւանական բանակցութիւնների միջոցին, երբ Հայերն իրենց պարզ հաւատով հանդէս եկան մտքով սրուած Յոյների հանդէպ. կամայ ակամայ պահանջ պէտք է զգային գործադրելու իմաստասիրական բանաձևերի այն զէնքը, որ դիմացինները ճարպիկութեամբ գործադրում էին, և ահա սկսւում է մի նոր հոսանք դէպի Յունաստան, բայց ո՛չ, ինչպէս Ե. դարում՝ ս. Գիրք և եկեղեցական հայրերի գրուածներ թարգմանելու, այլ արտաքին գիտութիւններ ձեռք բերելու նպատակով։ Թարգմանւում են նոյն ժամանակ Յունաց մէջ ամէնից աւելի ընթացիկ Նոր—Պղատոնական դպրոցի վերջին շառաւիղների և վերակենդանացող Արիստոտէլի ու նորա մեկնաբանների գրուածները. և Հայերը շուտով ունենում են իրենց անյաղթ փիլիսոփան, որ ամենայն յաջողութեամբ վիճում է յոյն իմաստասէրների հետ և բոլորին լռեցնում։ Հրապարակ է իջնում Անանիա Շիրակացին իւր տոմարական գիտութիւններով և ապացուցանում, որ Հայերի յունուարի 6-ին Աստուածյայտնութեան տօն կատարելը շատ աւելի հիմնաւոր է, քան Յոյների դեկտ. 25-ի Ծննդեան տօնը։ Եւ ինչպէս Լևոն Բիւզանդացին կարողացաւ Կիւրեղ Աղէքսանդրացու վարդապետութիւնը հաշտեցնել 2 բնութեան դաւանութեան հետ, այնպէս էլ Խոսրովիկ Թարգմանչի նման հայ գիտնականներ կարողանում են, անապականութեան դաւանութիւնը պաշտպանելով՝ բանադրել Մայրագոմեցու հետևողներին, և դատապարտելով Սևերոսի վարդապետութիւնը՝ միութիւն հաստատել Սևերեան ասորիների հետ։

Այսպիսի պայմաններում ահա գումարուեց Մանազկերտի նշանաւոր ժողովը 726 թ.-ին, որ կարող ենք ամենայն իրաւամբ Հայոց եկեղեցւոյ դաւանական զարգացման առաջին-դասական շրջանի սահմանը համարել։ Այդ ժողովում Ասորիների Հայոց հետ միաբանելու մի գլխաւոր նպատակը ըստ Տէր Մինասեանի այն էր (եր. 227), որ չկարողանալով երկու դարից ի վեր Հայոց եկեղեցու մէջ հաստատուած բանադրանքը Սևերոսի դէմ վերացնել, կամեցել են «գոնէ Յուլիանոս Հալիկառնացուն էլ դատապարտել տալ»։ Սակայն թող որ տարօրինակ կլինէր նոցա կողմից այդպիսի նպատակով միութիւն հաստատել մի եկեղեցւոյ հետ, որ իրենց եկեղեցւոյ հիմնադրին և նորա վարդապետութեան



հիմնական կէտերը դատապարտում էր, ո՛չ մի փաստից չի երևում, թէ Հայերը որ և է պատճառով դժուարացած լինէին Յուլիանոսին բանադրելու։ Ընդհակառակն նոյն իսկ Տէր Մինասեանի Միքայէլ Ասորուց բերած տեղեկութիւնները Մանազկերտի ժողովի մասին (եր. 179 շ.) ցոյց են տալիս, որ առաջին ձայն բարձրացնողը Յուլիանիստների դէմ Հայոց Յովհաննէս կաթուղիկոսն է եղել, և որ ուրեմն սխալ է դարձեալ այն տեսութիւնը. թէ Հայոց եկեղեցին մինչև այդ կապեր է ունեցել Հալիկառնացու հետ. սխալ նաև այն կարծիքը, թէ սորան «նզովելու առիթը եղել է Հայերի սերտ յարաբերութիւնը Յուլիանիստ ասորիների հետ» (եր. 171)։ Պէտք է կրկնենք, որ պատմական ո՛չ մի վկայութիւնից չի երևում այդպիսի ասորիների մի համայնքի գոյութիւնը Պարսկաստանում Հալիկառնացու օրերից ի վեր. այլ Մանազկերտի ժողովի մասին պատմուածները և Յովհան Օձնեցու ու Խոսրովիկի գրուածները բերում են միայն այն եզրակացութեան, որ Է. դարի միաբանութեան փորձերից յետոյ, երբ Հայոց հետ միաբանած ասորիների մի մասը Սևերեանների հետ հաշտուեց և Անտիոքի պատրիարքի հովանաւորութեան ներքոյ մտաւ, մի մասն էլ Մայրագոմեցու ջերմ հետևող հայերի պէս յամառեց մնաց առանձնացած դրութեամբ և իրեն հեռու պահեց միաբանողներից։ Այդ ասորիների մէջ հաւանակաբար տարածուեցին հետզհետէ Հալիկառնացու գրուածները և նորա ծայրայեղ հետևողների (Ակտիստների) հայեացքները. իսկ նոցանից անցան Մայրագոմեցու աշակերտ վիճակակից հայերին։ Խառն ասորի և հայ աղանդաւոր այդ շարժումն է ուրեմն, որ ի նկատի պէտք է առուած լինի Մանազկերտի ժողովի բանակցութեանց մէջ։

Ժողովի բուն շարժառիթը. ինչպէս Տէր Մինասեանն էլ ընդունում է (եր. 227), մերձեցման այն պահանջն էր, որ թէ Հայերը և թէ Ասորիները պիտի զգային՝ նման պայմանների մէջ Քաղկեդոնականութեան դէմ վարած երկարատև մաքառումներից յետոյ, պատսպարուած զգալով իրենց արաբական իշխանութեան ներքոյ. բայց նաև հարկադրուած կենտրոնացնելու քրիստոնէութեան ոյժերը մի աւելի ծանր պայքարի համար՝ իրենց երկրներում այժմ տիրապետող մահմեդական նոր կրօնի դէմ։ Որ միութիւնը գլուխ է եկել բացառապէս Ասորիների զիջելով վիճելի դաւանական կէտերում՝ շատ պարզ է ո՛չ միայն ժողովի կանոններից, այլ նաև այն եղանակից, որով Խոսրովիկ Թարգմանիչը ժողովից յետոյ Անտիոքի Աթանաս եպիսկոպոսին գրած թղթի մէջ ամենայն միամտութեամբ մեղադրում է պատրիարքի ներկայացուցիչ Թէոդորոս եպիսկոպոսին, թէ ինչպէս նա ժողովի մէջ

լութիւն է պահպանել, և ապա վիճելիս Քրիստոսի մարմնի համար միայն յարութիւնից յետոյ անապականութիւն ընդունել (տես. Խոսրով Թարգմանիչ և երկասիրութիւնք նորին. Վաղարշապատ, 1903. եր. 97, 101 շ.). իբրև թէ պատրիարքը բոլորովին տեղեկութիւն չունենար այդ տեսութիւնից և ուրիշ կերպ դաւանելիս լինէր: Զարմանալ միայն կարելի է Տէր Մինասեանի կարծիքի վերայ, թէ «ասորիներն էլ անհաւատարիմ չեն գտնուել իրենց դաւանութեան նկատմամբ», մինչդեռ իր համար ևս, անշուշտ, կասկածից դուրս է, որ եթէ Մանազկերտի ժողովի արձանագրութիւնը, յատկապէս Զ. նզովը՝ նոյն իսկ ասորիների աւանդած խմբագրութեամբ, առաջարկուէր Սևերոս Անտիոքացուն կամ Յակովբ Բարադէոսին ստորագրելու, բանադրանք թափելով կհրաժարուէին: Զենք հասկանում, Սևերեան վարդապետութիւնից ինչ է մնում այլ ևս, երբ նորա հետևողները յօժարում են նզովել ամէն մէկին, որ Քրիստոսի համար «կարծիցէ թէ յարգանդէ մօր մինչև ցյարութիւնն ապականացու էր, անփառաւոր և անկատար, և թէ զառաջինն յետ յարութեանն անապական, փառաւոր և կատարեալ եղև». և ինչ է փոխում այս իմաստից ակներև կերպով յետոյ աւելացրած միջանկեալ խօսքը. «յայլ միտս, քան որով ի մարգարէից, ևլն.»: Անհետևողականութիւն ուրեմն այս ժողովի և նորան յարակից յարաբերութեանց մէջ միայն Ասորիների կողմից է նկատուում, ոչ երբէք Հայերի, և այդ կարելի է բացատրել ըստ իս նորանով, որ Ասորիները վաղուց իջել էին իրենց փառքի գագաթնակէտից և թէ քաղաքականապէս և թէ եկեղեցականապէս շատ աւելի թոյլ տարր էին ներկայացնում մահմեդական աշխարհում, քան Հայերը, որոնք իրենց նախարարական կազմով դեռ պատկառելի ոյժ էին և հոգևոր կեանքով էլ դեռ զարգացման ճանապարհի վրայ էին գտնուում: Ուստի միութեան հետամուտ աւելի Ասորիները պիտի լինէին, և նոքա են Հայերի մօտ գալիս: Դաւանական նրբութիւնները երևի կորցրել էին նոցանում իրենց կարևորութիւնը և տեղի տուել իրական կեանքի պահանջներին. գուցէ և Անտիոքի դպրոցին յատուկ ս. Գրքի հմտութեան տեղ վաղուց վերացական դաւանաբանական վարժութիւններ բռնած լինելով՝ յառաջ էին բերել նոցա մէջ ևս այնպիսի տրամադրութիւն, որ ապականացու բառի գործածութիւնն անգամ, Քրիստոսի մարդկային բնութեան համար՝ խորթ էր հնչում ականջի, և առանց դժուարութեան կարող էին թոյլ տալ, որ այդ անյարմար արտայայտութիւնը վերանար իրենց դաւանութեան միջից: Այս կէտում նոցա անհաստատ լինելը երևում է նորանից ևս, որ Փիլոքսէնոսին յարգում էին իբրև եկեղեցւոյ երանելի հայրերից



մէկի, թէպէտ չէին կարող սորա անապականութեան վարդապետութեան պաշտպան լինելը չիմանալ:

Զուր չէ ընդհակառակն, որ Օձնեցու մասին մեզանում շատ յեղյեղուել է այն աւանդութիւնը, թէ մեր աշխարհը մաքրեց քաղկեդոնական խմորից և եկեղեցւոյ ուղիղ դաւանութիւնն ու կարգերը վերականգնեց: Ինչպէս Մանազկերտի ժողովի կողմից Ասորիներին տուած «Հաւատոյ դաւանութեան» (տես. Հայոց եկ. ոյ յարաբերութիւնները, եր. 195), այնպէս և հայկական խմբագրութեամբ ժողովի նզովների մէջ (նոյն, եր. 198. Խոսրովիկ, եր. 77. Սամուէլ Անեցի. եր. 187) ոչ քաղկեդոնականութեան հետք կարելի է գտնել և ոչ Սևերեաններին արած զիջման . Օձնեցու բոլոր նախորդները, միութեան փորձերից առաջ և յետոյ, կարող էին առանց այլևայլութեան ստորագրել նոցա ներքոյ. նոյն իսկ Յովհան Մայրագոմեցին: Միայն ս. Երրորդութեան երեք դէմք որոշելն լսկապէս համաձայն չէ Մայրագոմեցու բացատրութեան, որ, ինչպէս նկատեցինք, պէտք է համարուի արդիւնք աւելորդ նախանձախնդրութեան՝ Երրորդութեան անհաս և անբաժանելի լինելը շեշտելու: Բայց ուշադրութեամբ որ քննենք, նորա բացատրութիւնն աւելի բառախաղ է, քան սովորականից տարբեր նոր տեսութիւն. որովհետև Սաբելի ըմբռնման և հայրերի բացատրած Նիկիական դաւանութեան մէջ այնպիսի մի երրորդ միջին ճանապարհ գտնել կարելի չէ, որպիսին նա է որոնում: Նա ինքը «երեք անձնաւորութիւնք» որոշում է. ուստի երբ մէկը նորա առաջ պարզէր, որ դէմքերի և առանձնաւորութեանց որոշումն էլ տարբեր բան չէ, որ «Կնիք հաւատոյ»ի մէջ վկայութիւն բերուած բոլոր հայրերն այդ որոշումն արել են և Ընդհանրական եկեղեցին վաղուց ընդունել է այն իբրև Նիկիական դաւանութեան հիմնական կէտերից մէկը՝ ոչինչ չպիտի ունենար առարկելու: Ըստ երևութին Մայրագոմեցու տեսութեանց դէմ է նաև Գ. նզովքը. բայց իրօք ոչ նա, ոչ Փիլոքսէնոս չեն ասել, թէ Քրիստոս «յանմեղ, յանմահ և յանապական բնութենէն, զոր ունէր նախաստեղծն յառաջ քան զյանցանսն» մարմին առաւ. այլ թէ նորա մարդկային բնութիւնը համեմատ կամ նման էր Ադամի աստուածաստեղծ բնութեան: Պէտք է յիշեցնենք, որ Մայրագոմեցին յատկապէս շեշտել է թէ՝ «յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին», և եր. 288 հատուածի մէջ էլ ախտերի և ապականութեան համար ասում է. «Զամենայն ի լինելն իւրում մարմին սպան յանձին իւրում»: Ուստի թէ այս նզովքը ներկայ ձևակերպութեամբ և թէ մանաւանդ Բ. Դ. Է. Ը. նզովքը, ինչպէս նաև «Ընդդէմ Երևութակա-

նաց» ճառն ու Խոսրովիկի մի շարք առարկութիւնները կարող են վերաբերել միայն Մայրագոմեցու այն հետեւողներին, որ նորա տեսութիւններն ընդարձակելով, կամ օտար աղանդաւորների հետ շփուելով՝ նորանոր ծայրայեղութիւնների մէջ են ընկել։

Այսպէս, ոչ մի դէպքում Մայրագոմեցուն չեն կարող վերաբերել ոչ Բ. Նզովքի՝ «ասիցէ կարծեաւք և նմանութեամբ երեւեալ զՔրիստոս», և ոչ Դ. Նզովքի՝ «այլ է կամ ըստ բնութեան մի բնութիւն և կամ եթէ ըստ շփոթութեան և ըստ փոփոխման մի բնութիւն» խօսքերը։ Նոյնպէս «Ընդդէմ Երեւութականաց» ճառի մէջ հերքուող առաջին իսկ մոլար կարծիքը՝ «Այլ և ոչ ի Կուսէն, ասեն, մարմնանալ, այլ ի Կուսին» (Յովհաննու Իմաստասիրի երկասիրութիւնք, եր. 49), բոլորովին ուրիշ մարդոց ի նկատի ունի անկասկած, քանի որ Մայրագոմեցին եր. 143 հատուածի մէջ ճիշտ հակառակն է գրել. «Ինքն Միածին Որդին Հօր՝ լրութեամբ աստուածութեամբն էջ, և անճառաբար և անպարփակապէս անքննելի միութեամբ եղև մարմին ի Կուսէն». կամ եր. 145. «Անեղապէս ի Հօրէ և եղելութեամբն ի Կուսէն»։ Աւելի ևս հեռանում են Մայրագոմեցուց նոքա, որոնք ըստ Խոսրովիկի (եր. 175) «ասեն զԲանն մարմին և զմարմինն բան». կամ (եր. 177) «թէ միանալով մարմինն ի Բանն, անեղ եղև և ինքն. եղև այնուհետև և որ ինչ Բանին, նոյն և մարմնոյն»։ Եթէ այդպիսիներն իրօք եղել են Հայաստանում, և ինքը Խոսրովիկ, ինչպէս յաճախ պատահում է դաւանաբանական վէճերի մէջ, չէ վերագրում հակառակորդներին նոցա չունեցած կարծիքները, ապա այդ մոլորութիւնները կարող են առուած լինել միայն ծայրայեղ Յուլիանեան-Ակտիստների աղանդից։ Օձնեցին ու Խոսրովիկ են յիշում նաև առաջին անգամ Յուլիանոս Հաղիկառնացուն իբրև հերձուածողի, որ ըստ Խոսրովիկի (եր. 166) «զմարմին Քրիստոսի յերկնից ի հրեշտակական բնութենէն ասաց գոլ»։ Նոքա, կարելի է ասել, իրենց գրուածներում և Մանազկերտի ժողովի որոշումներում մաղում են անցեալ ժամանակի բոլոր դաւանական ձևակերպութիւնները, որոնց հետ այս կամ այն կերպով հաշիւ պիտի տեսնէր Հայոց եկեղեցին, աշխատում են մաքրել հեռացնել դրսից բերած որոմը և պահել հայրերից ժառանգած մաքուր սերմը միայն։ Է. դարու դաւանական բանակցութեանց մէջ տեղի ունեցած շփումները և յոյն իմաստասէրների դպրոցում ձեռք բերած հմտութիւնը նոցա դարձրել էին աւելի մանրակրկիտ և զգուշաւոր. մի դար առաջ Մայրագոմեցու գործած համարձակ արտայայտութիւններն ու հանած անկաշկանդ եզրակացութիւնները հնարաւոր չէին այլ ևս. այժմ ամէն ինչ չափուում էր սքոլաստիքական բանավարութեան խստապահանջ կշռով և ամէն մի կասկա-



ծաւոր դարձուած մի կողմ էր նետուում։ Այս կերպով գուցէ նաև քաղկեդոնական ազդեցութեամբ դաւանական գրուածների մէջ մտած ինչ ինչ հետքեր վտարուեցան. բայց վերև յիշուած Քաղկեդոնական խմոր, ինչպէս այլևայլ պատմական վկայութիւններ ցոյց են տալիս, վերաբերում է իսկապէս մի քանի ծէսերի, որ Հայերի մէջ մուտք էին գործել Յոյների աւելի երկարատև տիրապետութեան ենթակայ եղած շրջաններում։ Յամենայն դէպս Օձնեցին՝ Խոսրովիկի և Գրիգորիս Արշարունեաց քորեպիսկոպոսի նման գործակիցների հետ, շատ փառաւոր կերպով լուծել է իւր առաջ դրուած խնդիրը—տալ Հայոց եկեղեցուն՝ նախնեաց աւանդութիւններին ըստ ամենայնի հաւատարիմ, բայց որոշ կերպով ձևակերպուած, պատճառաբանուած և կասկածաւոր տարրերից զտուած դաւանանք ու կարգեր։

Բոլորովին տարբեր ընթացք պիտի ունեցած լինին ըստ Գ. Տէր Մկրտչեանի Ստեփաննոս Սիւնեցին և Թէոդորոս Քռնունեաց եպիսկոպոսը, որոնց նա, Սիւնեցու գրութեան կցած դիտողութեան մէջ (Արարատ, 1902. եր. 368), համարում է «Երեւութականների» պարագլուխներ և Օձնեցու հակառակ կուսակցութեան ներկայացուցիչներ։ Նորան հետևում է Տէր Մինասեան և իւր ծանօթ տեսութեամբ ոչ միայն Յուլիանիստերի մէջ է դնում նոցա, այլ և ծայրայեղ Յուլիանիտ անուանելով Սիւնեցուն (եր. 210) և նորա վաւերական գործը համարելով Գիրք Թղթոց եր. 323 «Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի», որի մէջ իբրև «սուրբ» է յիշած Յուլիոս Ակորնացին, յաղթանակաւ ներկայացնում է այս վկայութիւնն իբրև «փակուած աչքերն անգամ բաց անող» փաստ (եր. 229), հայերի մինչև Ը. դար Հաղիկառնացու բացարձակ համակրող լինելն ապացուցանելու համար։ Սակայն ոչ մէկը և ոչ միւսը նեղութիւն չեն կրել իրենց առջևի գրուածները միմեանց հետ՝ դաւանանքների պատմութեան կշռի վերայ, համեմատելու. ապա թէ ոչ իրենք պէտք է տեսնէին այդ բոլոր ենթադրութիւնների անհիմն լինելը։ Ի՞նչու պէտք է Օձնեցու հակառակորդը դառնայ Քռնունեաց Թէոդորոս եպիսկոպոսը, որ Մանազկերտի ժողովին մասնացողներից ու նորա որոշումներն ստորագրողներից է. ինչպէ՞ս կարող էր սուրբ անուանել, իւր եկեղեցւոյ մէջ արդէն իբրև հերետիկոս ճանաչուած և բանադրուած՝ Հաղիկառնացուն մի Ստեփաննոս Սիւնեցի, որ իբրև Հայոց եկեղեցւոյ մեծ վարդապետ նորա հայրապետի և եպիսկոպոսների կողմից թուղթ է գրել Գերմանոս պատրիարքին, Սիւնեաց առաջնակարգ աթոռի եպիսկոպոս ձեռնադրուել և սուրբի ու հեղինակաւոր ուղղափառ վարդապետի հռչակով վախճանել։ Յիշեալ «պա-

տասխանին» արդէն վերնագրի մէջ մատնում է իւր կեղծ լինելը. յայտնի չէ՝ ո՞վ է Անտիոքի եպիսկոպոսը, որին ուղղուած է այն, և ի՞նչ դաւանութեան տէր է, երբ թղթի առարկութիւնները քաղկեդոնականների դէմ են ուղղուած։ Սորա գրողը ո՛չ Յուլիոս Աղկորճացու մասին գաղափար ունի, որին Անաստասիսի, Ստեփանոսի (°) և Տիմոթէոսի հետ՝ իբրև ժամանակակիցների, նզովել է տալիս նախ քան նորա ծնունդը վախճանած Յոբնաղից (ինչպէս և Պետրոս Անտիոքացուն Քաղկեդոնի ժողովից փախստական համարում), ո՛չ էլ Հաղիկառնացու ուսման մասին, երբ Քրիստոսի համար ասում է՝ «Զարչարելի մարդկութեամբն»։ Այդ «պատասխանին» առ Գերմանոս պատրիարք ուղղեալ պատասխանւոյն անյաջող կերպով նմանեցրած, միջնադարեան առասպելներով խճողած, Աւետեաց տօնի, Առաջաւորաց պահոց և նման ուշ ժամանակի վիճաբանական խնդիրներ արդէն ի նկատի առնող մի յերիւրանք է, ինչպէս «Զրոյցք Կոմիտասայ» և «Բանք խրատականք» ( գիրք Թղթոց եր. 484 և 510), որ ո՛չ Ը. դարում կարող է գրուած լինել և ո՛չ երբէք Ստեփանոս Իմաստասիրի գործ, այլ միւս կեղծ միջնադարեան թխուածքների հետ ապացուցանում է, որ ծայրայեղ Յուլիանիստների կամ Մայրագոմեցու աշակերտ Սարգսի հետևողների աղանդաւոր շարժումը բաւական երկարատև գոյութիւն է ունեցել և մի շարք գրաւոր յիշատակարաններ թողել (հնագոյնը դոցանից կարելի է համարել՝ «Անանուն ժամանակագրութիւն». հրատ. Վենետիկ, 1904. որից օգտուել է նաև վերոյիշեալ «պատասխանին»), որոնք իրենց հակաքաղկեդոնական բնաւորութեան համար միամիտ յետնորդների կողմից սիրով հիւրընկալուել են Թղթոց գրքերի մէջ։

Իսկ թէ որչափ դժուար է մեր եկեղեցւոյ հայրերի հարազատ գրուածներում իսկական Յուլիանականութիւն գտնել, հաստատում է Տէր Մինասեան մի վերջին անգամ իւր գրքի «յաւելուածով» (եր. 289)։ Հիմնուած միշտ այն սխալ տեսութեան վերայ, թէ ուր անապականութեան գաղափարը կայ, այնտեղ նաև յուլիանականութիւն է գտնուում՝ Ը. և յաջորդ դարերի մեր եկեղեցւոյ ներկայացուցիչների, Յուլիանոսին նզովելով հանդերձ, Յուլիանիստ լինելն իբր ցոյց տալուց յետոյ, նա այստեղ ի մի է ամփոփում մի քանի հեղինակների հայեացքները անապականութեան խնդրի մասին և համեմատում—Փիլոքսէնոսի հայեացքների հետ, և եզրակացնում է նոցա նմանութիւնից, «թէ Հայոց եկեղեցին, չնայելով Յուլիանոսի դատապարտութեան, նրա վարդապետութիւնն հաստատուն պահել ու պաշտպանել է մինչև վերջ»։ Այդպէս վարուում է և Փիլոքսէնոսին նորից Յուլիանիստ անուանում՝



«ոչ թէ այն մտքով, որ նա Յուլիանոսից է սովորել իւր վարդապետութիւնը, այլ այն, որ նա առանց կասկածի Յուլիանոս Հաղիկառնացու նման է մտածում բոլորովին»։ Ձեռքի տակ բաւականաչափ նիւթ չունիմ՝ ստուգելու համար, եթէ արդեօք Փիլոքսէնոս յիրաւի՞ «Հաղիկառնացու նման է մտածում բոլորովին». բայց եթէ նա սորանից չի սովորել, այլ սա՝ իբրև ժամանակով կրտսեր, աւելի աննշան մտածող, հեղինակ և գործիչ գուցէ նրան հետևել, ինչո՞ւ նա է Յուլիանիստը և ո՛չ սա Փիլոքսէնիստը՝ մինչև վերջն էլ մնում է անբացատրելի, ինչպէս ինձ, այնպէս էլ, կարծում եմ, ուրիշների համար։ Եթէ բոլոր խնդիրն ապացուցանել էր, թէ մեր հայրերը անապականութեան մասին նոյն են ուսուցել, ինչ որ Փիլոքսէնոս, հա՞րկ կար դորա համար մեծ աշխատութիւն գործ դնելու. բաւական էին մի քանի հեղինակաւոր գրուածների նորանից բերած վկայութիւնները, որ յայտնի լինէր, թէ նա «մեծ հեղինակութիւն է վայելել Հայոց եկեղեցում» և նորան համարել են այստեղ երանելի ուղղափառ հայր։ Բռնի կերպով նորան և նորա պէս դատող հայրերին Յուլիանական դարձնելը չի արդարանայ այն առարկութեամբ, թէ այդպէս սովորական է անուանել անապականութիւն ուսուցանողներին. որովհետև այդ սովորութիւն մտցնողները Յուլիանականներին համարել են Եկեղեցւոյ ուղղափառ, Նիկիական—Եփեսոսեան դաւանութիւնից խիստ հեռու գնացած աղանդաւորներ և վերագրել նոցա մոլորութիւններ, որոնց տէրը ո՛չ Փիլոքսէնոսն է, և ո՛չ մեր եկեղեցին. հետևել այդ սովորութեանը՝ կնշանակէ ուրեմն անտեղի կերպով աղանդաւոր երևոյթ ընծայել մեր եկեղեցուն և առիթ տալ միայն սխալ գաղափար կազմելու նորա ընդունած դաւանական դրութեան մասին։

Իրօք, Ստեփանոս Սիւնեցին էլ՝ Փիլոքսէնոսին վկայութեան բերելով, անապականութեան գաղափարը պաշտպանելու համար նոցա դէմ, «որք ասեն թէ՝ Որ աճէ և նուազէ ապականացու է», նոյնչափ պակաս Յուլիանական է դառնում, մանաւանդ թէ ծայրայեղ Յուլիանիստ, որչափ ուրիշ անապականութիւն ուսուցանողներ. և նորա գրուածքի մէջ ամենևին նշան չկայ երևութականութեան։ Այդ ակներև դարձնելու համար բաւական է հետևեալ պարբերութիւնը. «Ապա ի նորոգումն Ադամայ Աստուած զՈրդին առաքեաց, և եկեալ՝ առ մարմին ի սրբոյ Կուսէն Մարիամայ և եղև ճշմարիտ մարդ. ո՛չ ինքն յապականութիւն դարձաւ, այլ զապականեալն անապական գործեաց. ո՛չ յամեաց յապականելի մարմնի, այլ անդէն և անդ՝ ընդ առնուլն զիւր անձն, անապական գործեաց»։ Ճշմարիտ է հաւանականաբար այն միայն,

որ մինչ Օձնեցին Թէոդորոսի աշակերտ լինելով՝ արդէն դպրոցում սնուած երևի Մայրագոմեցուն ընդդիմադիր ոգւով, կաթուղիկոս լինելուց յետոյ աշխատել է նսեմացնել նորա վարկը, խիստ է վարուել նորա հետևողների հետ և Մանազկերտի ժողովում գուցէ դիտմամբ խտացրել սոցա տեսութիւնները մերժող որոշումները, Սիւնեցին ընդհակառակն ձգտել է վերականգնել նորա պատիւը, մաքրել նորա անունը աղանդաւորութեան կասկածների արատից, տարածել և յարգի դարձնել նորա գրուածները՝ իբրև եկեղեցւոյ մի պատկառելի, բազմահմուտ և ուղղափառ հօր։ Տարիներ Յոյների մէջ դեգերելուց յետոյ՝ իւր ձեռք բերած արտաքին գիտութեանց հետ Սիւնեցին միացրել էր այն եռանդն ու նախանձախնդրութիւնը հայրենի աւանդութեանց համար, որ ըստ երևութին Դուինի կաթուղիկոսարանում ժառանգութիւն թողած Մայրագոմեցու ոգին նորան ներշնչել էր մանկութիւնից, և ինչպէս տեսնում ենք Օրբելեանի նորա մասին պատմածներից (Պատմութիւն տանն Սիսական, եր. 95—105 գլուխ) և նորա կատարած թարգմանութիւններից՝ նա մեծ ջանք է գործ դրել զինելու իւր եկեղեցին Քաղկեդոնականութեան և այլ հակառակ վարդապետութեանց հերքման համար կարևոր գրուածներով. գուցէ և կամեցել է մի քայլ էլ առաջ գնալ Մանազկերտի ժողովից, «քաղկեդոնական խմոր»ի ամէն մնացորդ դուրս վտարել ու վերադառնալ ըստ կարելւոյն Եզրից առաջ Հայոց եկեղեցու պաշտպանած դաւանական դրութեան։ Գ. Տէր Մկրտչեանի հրատարակած գրութեան մէջ նա ոչ միայն մեր յիշած՝ «Զնոյն և Յոհան Իմաստասէր ասէր» սկզբնաւորութեամբ վկայութիւնն է բերել Մայրագոմեցուց, այլ և վերջում իւր կողմից կցած բացատրութեանց մէջ (եր. 397—398) ընդարձակ պարբերութիւններ քաղել է «Կնիք հաւատոյ» եր. 144—145 հատուածից. բայց նա այստեղ էլ վերջում Մայրագոմեցու նման շեշտում է՝ «Ցապականութենէ մարդկան խոստովանել պարտ է զմարմինն և ապականացու ոչ ասել». իսկ Գերմանոսին գրած թղթի մէջ վկայութեան է բերում Աթանասի խօսքը Փրկչի մասին, որ «երկնչէր ի մահուանէ», և աւելացնում՝ «Զաւրացեալ լինի ի հրեշտակէ փոքր մի խոնարհեալն քան զհրեշտակս». ուրեմն պարզ կերպով խոյս է տալիս Մայրագոմեցու այնպիսի ծայրայեղութիւններից, որոնք Ընդհանրական եկեղեցւոյ մեծ հայրերի վկայութեանց հանդէպ դիմանալ չէին կարող։ «Սկիզբն հաւատոյ ի Քրիստոս յանապականութենէն է և ի մի բնութենէն»—ասում է նա, և նախնեաց գրականութիւնից վերարտադրում, նոր թարգմանութիւններով և մեկնութիւններով աւելացնում է այնպիսի գրուածներ, որ այդ հիմնական



սկզբանց պարզաբանութեան և պաշտպանութեան համար պիտի ծառայէին։ Նորա այդպիսի գործունէութեան մի ամենակարևոր արդիւնքն ըստ իս ներկայացնում է ահա՝ Մայրագոմեցուց ժառանգած և յաւելեալ վկայութիւններով ճոխացրած, «Կնիք հաւատոյ» ժողովածուն, կոթող Հայոց եկեղեցու ընդունած այն դաւանական դրութեան, որ իւր կատարեալ զարգացման աստիճանին հասել է Է. դարի սկզբում, երկարատև պայքարից և երերումներից յետոյ վերահաստատուել Ը. դարի սկզբում։

Մնում է մի հարևանցի ակնարկ այն մասին, թէ «Կնիք հաւատոյ» ժողովածուն ինչ տեղ է գրաւել, ինչ ազդեցութիւն և հետքեր թողել մեր մատենագրութեան մէջ։ Տեսանք արդէն, որ յամենայն դէպս ծանօթ էր Ստեփանոս Իմաստասիրին, նորա աչքի տակ եղել և զանազան մասերից վկայութիւններ ընձեռել այն գրութիւնը շարադրելիս, որ քանի անգամ յիշել ենք։ Բայց ժողովածուն ծանօթ էր, անշուշտ, նաև Ժ. դարու նշանաւոր Գ. 102=2679 ձեռագիրը պատրաստողին, որից հրատարակուած է յիշեալ գրութիւնը։ Ինչպէս իրենց տեղում ցոյց է տուած՝ եր. 4 և 8 հատուածների որոշ մասեր գտնուում են այդ ձեռագրում, և եթէ ուշադրութեամբ քննենք, ուրիշ վկայութիւններ էլ կգտնենք։ Հետաքրքրական է, որ այդ ձեռագրում, Իմաստասիրի գրութիւնից 2½ էջ յետոյ՝ բերուում են երկու փոքրիկ հատուածներ «Ընդդէմ Մայրագոմեցւոյն» վերտառութեամբ, բայց Քաթենաւորի յայտնի ճառից չեն առուած և Մայրագոմեցու տեսութեանց աւելի համեմատ, քան հակառակ բովանդակութիւն ունին։ Արդեօք վերնագրից մի բառ ընկած չէ՞, և իսկապէս Մայրագոմեցու գրածը չե՞ն դոքա՝ ընդդէմ մի ուրիշի, քանի որ այդ ձեռագիրը պարունակում է ընդհանրապէս անապականութեան ուսումը ջերմօրէն ջատագովող նիւթեր, ի միջի այլոց վերև յիշատակուած «Անանուն ժամանակագրութիւնը»։ Իսկ 2 հատուածների վկայութեամբ ժողովածուի ծանօթ լինելը ձեռագիրը պատրաստողին նորա համար հաւաստի եմ համարում, որ նոյն հատուածները գտնուում են նաև Գ. 95=2678 և Ար. գր. 14=4207 ձեռագիրներում, որոնք, ինչպէս և Գ. 172=2607 և Հ. 541=580 ձեռագիրները, յառաջ են բերում նաև ժողովածուի եր. 24 ս. Լուսաւորչի անուան հատուածից սկսած մինչև եր. 26 Դամասոսի անուան հատուածի մի մասը (տես. Արարատ, 1896. եր. 61.) ամբողջովին և նոյն կարգով (միայն Գ. 172=2607 ձեռա-

գրից թուղթ է ընկած)․ այնպէս որ ոչ մի կասկած լինել չի կարող, թէ այս ժողովածուից են վերցրել։ Հարկաւ այդ չի նշանակում, թէ բոլոր յիշեալ ձեռագիրներն արտագրողներն էլ աչքի առաջ են ունեցել մեր ժողովածուն․ այլ երևի մի որ և է «Թղթոց գրքի» մէջ այդ մասը արտագրուելուց յետոյ, բոլորեքեան օգտուած կլինին նորանից կամ միմեանցից։ Հաւանականաբար ուրիշ ձեռագիրներ և դաւանաբանական գրուածներ էլ, որոնց մէջ ժողովածուի այս և այն վկայութիւնը գտնում ենք, օգտուել են նորանից, բայց նոյնչափ հաւաստի նշաններ մատնացոյց անելու համար խիստ մանրակրկիտ հետազօտութիւն կատարել պէտք կլինէր։ Իորդան ժողովածուից օգտուած է համարում (Irenäus-fragmente. S. 120) յատկապէս Անանիա վարդապետի «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց «և Պօղոս Տարօնեցու Թուղթն առ Թէոփիստէ (տպուած Կ. Պոլսում, 1752 թ.)։ Առաջինի նկատմամբ այդ դիտողութիւնն անկասկած ստոյգ է, երկրորդի համար հաւանական․ որովհետև սորա օգտուելը ժողովածուի վկայութիւններից կարող է նաև միջնորդաբար եղած լինել։

Եթէ, չնայած այն մեծ պահանջին, որ մեր հայրերը պիտի զգային այսպիսի մի հարուստ ժողովածուի համար՝ դարերի ընթացքում շարունակ պարբերաբար կրկնուող դաւանական վէճերի մէջ, նորա գործածութեան հետքերն աւելի որոշ ու աւելի առատ չեն, և բազմաթիւ օրինակներ արտագրուած պահուած չեն նորանից, գլխաւոր պատճառը պէտք է համարել այն, որ նորա օրինակով յետոյ կազմուել են, ժամանակի պէտքերի համեմատ՝ նոր ձևով և նոր նիւթերով, վերև յիշուած «Հաւատարմատ» կամ «Արմատ հաւատոյ» հաւաքածոները։ Հնագոյնը դոցանից մեր ունեցած ծանօթութեամբ այն «Հաւատարմատն» է, որ Ուխտանէսի պատմելով (Պատմութիւն, եր. 11), խօսել է «Ի խորհուրդ հաւատոյ» «Ընդդէմ երկաբնակաց» Ժ. դարու նշանաւոր հեղինակ, Նարեկայ դպրոցի հիմնադիր, մեծ վարդապետ Անանիա Նարեկացին, և նուիրել Հայոց Խաչիկ Ա. կաթուղիկոսին։ Պրոֆ. Իորդան, բերելով Ա. Տէր Միքէլեանի այն սխալ տեղեկութիւնը (Armenische Kirche, S. 81. Anm. 5), թէ Մ. Աթոռի մատենադարանի Հ. 1500=1538=2080 ձեռագրում գտնուող «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ» վերնագրով հաւաքածոն Անանիայի Հաւատարմատի ընդօրինակութիւնն է, իմ նամակից առած ծանօթութիւններով պարզում է․ որ այս հաւաքածոն չի կարող նորա գործ լինել, որովհետև սորա Բ. և Գ. բաժիններում նորանից յետոյ ապրող հեղինակների վկայութիւններ են բերած, և կասկածի տակ է թողնում, թէ գուցէ Ա. մասը Անանիայինն է․



սակայն այս հաւաքածոն մի անքակտելի ամբողջութիւն է, և նորա ոչ մի կտորը չի կարող Անանիայի գործ լինել։ Ինձ թուում է, թէ սոսկ թիւրիմացութիւն պիտի համարուի, որ վերոյիշեալ՝ «Անանիայի Հայոց վարդապետի բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց»՝ գրութիւնը Անանիա Սանահնեցու երկասիրութիւն է համարուում, և ոչ «Անանիա Նարեկացու», նորա համար միայն, որ վերնագրի այդ խօսքերին հետևում է՝ «զոր գրեաց հրամանաւ Տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի»։ Ինքը հեղինակը գրուածքի վերջում իւր խօսքն ուղղում է առ «Գերագարդ և ամենիմաստ հանճարով առլցեալ Տէր Խաչիկ վերադիտող Հայոց Մեծաց, փոխանորդ Մեծի Լուսաւորչին՝ պետ», և նորան է նուիրում «ըստ աղքատատուր տառապելապետ այրոյն այնորիկ» իւր այդ «զսակաւ տուրս երկուց լումայիցդ» (տես. Ձեռ. Գ. 56=2751, եր. 164). և քանի որ Ուխտանէս որոշ կերպով վկայում է Անանիա Նարեկացու «Ընդդէմ երկաբնակաց» գրուածքը Խաչիկ կաթուղիկոսին նուիրած լինելը, պարզ է, կարծում եմ, որ այս «Հակաճառութիւնը» պիտի լինի Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»ը և որ այս գրուածքի սկզբում յիշուող ու երկաբնակների դէմ ճառաբանելու հրամայող «Տէր հովուապետն» էլ նոյն Խաչիկ կաթուղիկոսն է․ իսկ Պետրոս կաթուղիկոսի անունը մի ուրիշը սխալմամբ կամ միտումով մտցրել է վերնագրի մէջ։ Գուցէ իբրև մի կողմնակի փաստ ևս այս կարծիքի հաստատութեան համար կարելի է բերել ստորև յիշուող Վարդանի «Հաւաքման» այն կէտը, որ «Ի մեծափառ հաւատոյ գրոցն Անանիայի Հայոց վարդապետի» վերցուած վկայութիւններին անմիջապէս հետևում են «Գրիգորի Նարեկացւոյ Հայոց վարդապետի» վկայութիւններ (Հ. 565=512 p. 190v. և 191r.)։ Ըստ այսմ՝ Անանիա Նարեկացին իւր «Հաւատարմատ»ը գրելիս յիրաւի աչքի առաջ է ունեցել «Կնիք հաւատոյ» ժողովածուն և նորանից պարզապէս արտագրել է շարքով «ուղղափառ և սուրբ հայրապետաց» այն վկայութիւնները, «որ վկայեն անապական մարմնոյն»։ Բայց Անանիայի առաջ զուտ դաւանական խնդիրների հետ կային արդէն բազմաթիւ ծիսական խնդիրներ՝ «Վասն պատկերապաշտութեան», «Վասն մեռոնին», «Վասն բաղարջին», «Վասն տօնի ծննդեանն Քրիստոսի», վասն խաչեցարին ևն. և եթէ նորա «Հաւատարմատի» հետ համեմատենք Պօղոս Տարօնեցու գրուածքը, կտեսնենք, որ այդպիսի ծիսական և զուտ վիճական խնդիրները հետզհետէ աւելի ու աւելի ընդարձակ տեղ են բռնում դաւանաբանական ճակաճառութիւնների մէջ, հայրերից բերած վկայութիւններն աւելի ու աւելի մանրանում են և դառնում՝ ոչ թէ իսկապէս

խնդրի էութիւնը պարզելու, այլ հեղինակի գիտնականութիւնը, բազմակողմանի հմտութիւնը և սրամտութիւնը հաստատելու միջոց։

Ահա այս ուղղութեամբ առաջ գնացած, բացատրական մասերի հետզհետէ նուազելով և նախնի հեղինակների մասին պարզ գիտակցութեան պակասելով, վկայութեանց նորանոր կրճատումներով, խտացումներով և անխտրական յաւելումներով՝ մուրացածոյ պատառիկների ծաղկաքաղ դարձած հաւասարմասի նորագոյն վերջին տիպը ներկայացնում է յիշեալ «Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ» հաւաքածոն։ Բարեբաղդաբար ես կարող եմ այժմ այդ հաւաքածոյի բուն աղբիւրը ցոյց տալ և որոշել, թէ ով է եղել նորա կազմողը։ Մեր մատենադարանի Հ. 565=512 ձեռագրում, p. 164 կարդում ենք. «Համառօտ հաւաքումն սրբոց վարդապետաց յաղագս դաւանութեան ամենասուրբ Երրորդութեանն՝ ընդդէմ հերձուածողաց հակաճառութիւն», և այս վերնագրի ներքոյ, մի համառօտ նախաբանից յետոյ, գտնում ենք «Արմատ հաւատոյ» հաւաքածոյի առաջին և երկրորդ բաժինները՝ աւելի հին ձևով և աւելի հարուստ վկայութիւններով. իսկ վերջում p. 196 r. «Եւ ես ողորմելիս Վարդան, որ հաւաքեցի զայս աստուածային և լուսափայլ մարգարիտս հաւատոյ, մեծաւ ցանկութեամբ յուսոյ և սիրոյ՝ հետևելով աստուածազան և ուղղափառ հարցն ուղիղ դաւանութեան...»։ Այս խօսքերին հետևում է մի բաւական ընդարձակ խոստովանութիւն հաւատոյ՝ գլխաւորապէս Մարդեղութեան խորհուրդի շուրջ, և վերջում, p. 197 v. «Դարձեալ եկ, բաղձալի, և բեր զմիտս քո, զխնամակալութեամբ Հոգւոյն Աստուծոյ, հաւաքեսցուք և այլ վկայութիւնս, որ կարի ես պիտանացու է մերս եկեղեցւոյ կարգաց և օրինաց ....». իսկ դորանից յետոյ՝ «Վկայութիւնք վասն ծննդեանն . . .» վերնագրի ներքոյ դարձեալ նոյն հաւաքածոյի երրորդ բաժինը, ապա և հետզհետէ միացած բաժինները՝ կրկին աւելի լրիւ ու աւելի հարուստ վկայութիւններով, մանաւանդ վերջում անհամեմատ ընդարձակ»։ Իսկ p. 209 «Խոստովանութիւն մեղաց և խայտառակութեան անձին ինքնայօժար կամօք եղկելոյս Վարդանայ, և որ առէ յիւր կողմն՝ լսէ Աստուած»—վերնագրով մի երկար ոտանաւոր կայ, որի վերջում, p. 219 v. «Եւ է սա երկոտասան գիրք, գրեալ և փոխեալ յառաջին օրինակէն, ձեռամբ մեղապարտիս Վարդանայ, և առաքեալ զպսակ ուղղահաւատ եկեղեցւոյ Հայաստանեայց, որպէս և այլքն, որ յառաջ քան զսա, թողեալ յիշատակ բարի մեզ և ծնօղաց և եղբարց մերոց և ազգիս մերոյ . . . Եւ գրեցաւ սա ի Գարվաւանի, ՈՄԸ մերոյ թուիս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սրբոյ



նշանիս, յառաջնորդութեան Տեառն Մանուելի սրբասնեալ եպիսկոպոսի . . . »։ Այսպէս ուրեմն մեզ ծանօթ հաւաքածոն բաւականաչափ կրճատուած մի օրինակն է միայն այս աշխատասիրութեան, որ կատարել է Վարդան անունով մէկը ՈՄԸ=1209 թ. ին։

Հարց է այժմ, թէ ով պէտք է եղած լինի այս Վարդանը։ Նորա երկասիրութեան թուականը ստիպում է ամէնից առաջ յիշել այն Վարդանի մասին, որին Կիրակոս Գանձակեցին դնում է (Պատմութիւն. Մոսկուա, 1858. եր. 99) Զաքարիա Սպասալարի Լօռւոյ ժողովին հրաւիրած նշանաւոր վարդապետների շարքում. «Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք, որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հեզ, և վարդապետն ուսմամբ հռչակեալ Իգնատիոսն, և Վարդան, և Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, և այլն»։ Հ. Ակինեան «ի Հաղբատայ» բառն այստեղ՝ ինչպէս Քոբայրեցու, այնպէս և Վարդանի համար ասուած նկատելով, նոյնացնում է իւր նկարագրած (Հանդէս ամսօրեայ, 1908. եր. 232) Վարդան վարդ. Հաղբատացու հետ. բայց որովհետև վերջինս իւր հաշուով վախճանած պիտի լինի 1195 թ. ից առաջ, մինչ Լօռւոյ ժողովը տեղի է ունեցել 1204 թ. ին (տես. նոյն, եր. 140), կամենում է, որ «Գանձակեցւոյ խօսքերն հոս անձուկ իմաստով» հասկացուին. այսինքն Վարդան միայն նորա համար յիշուած համարուի նշանաւոր վարդապետների շարքում, որ ստորագրած է եղել Հաղբատեցիների Գրիգոր Տղային ուղղած թղթին։ Սակայն Գանձակեցու խօսքերը շատ պարզ են, և ոչ մի անձուկ իմաստով կարելի չէ տասը տարի առաջ վախճանած մարդուն ժողովի անդամ դարձնել։ Երկուսից մէկը. կամ Հ. Ակինեանի յառաջ բերած յիշատակարանի տեղեկութիւնը ուղիղ չէ, ու Վարդան Հաղբատացին 1901—4 թ.ներին վախճանած չի եղել, կամ Լօռւոյ ժողովին մասնակցողը Հաղբատացին չէ։ Ջալալեան, Սանահնի վանքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ՝ «ի կողմն հիւսիսոյ ի վերայ որմոյ խորանին», կարդացել է հետևեալ արձանագրութիւնը ՈԿ=1211 թուով. «Ես Վաչէ ծառայ Զաքարէի շինեցի զխորանս և ետու զիմ ոսկետուփ աւետարանն և զսուրբ Նշանն և կգործ մեծածախիւք ի սուրբ Աստուածածինս առաջնորդ սուրբ ուխտիս Հայր Վարդան վարդապետ Գրիգոր միաբանօք . . . . » (Ճանապարհորդութիւն. Մասն Ա. 1842. Տփխիս. եր. 24)։ Ուրեմն դեռ 1211 թուին եղել է Սպասալարի իշխանութեան սահմաններում մի Վարդան՝ Սանահնի նշանաւոր ուխտի առաջնորդ, որ և կարող էր թէ Լօռւոյ ժողովին մասնակցողը լինել և թէ մեր հաւաքածոն կազմողը։ Սորա յիշատակա-

րանի «ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և Սրբոյ Նշանիս» խօսքն էլ շատ յարմար է գալիս Սանահնի արձանագրութեան. բայց ինչձև Սանահինը «Գարվաւան» պիտի կոչուէր (գուցէ սխալ ընթերցուած Սանահնի մօտիկ «Նորավանք»-ի). կամ եթէ մի ուրիշ վայր է այս՝ ծրտեղ է արդեօք և ծվ է առաջնորդ Մանուէլ եպիսկոպոսը,—որևէ ցուցում՝ պատասխան տալու այդ հարցերին, չեմ գտնում։

Պարզ է յամենայն դէպս, որ մեր հաւաքածոն կազմողը չէր կարող յայտնի Վարդան պատմիչը լինել՝ կէս դար աւելի ապրած յիշատակարանի Թուականից (տես. Շողակաթ. Զագավանից ժողովը, եր. 29—33)։ Բայց մեր մատենադարանի Տ. 9 = 4139 ընտիր տօնապատճառի կիսեղծ յիշատակարանում կարդում ենք. «Ցորոց մի գոլով ի լրացելոց Հոգւոյն՝ երջանիկ հայր մեր և հասարակաց վարդապետն Վարդան. առաջին հեղինակացն ի մերումս բացափայլեալ ժամանակի՝ յամենեցունց ոգիս արեգակնածագ փայլմամբ Նշողիւք լուսաւորել . . . և այսպէս երկար ժամանակի ծերութեան հասեալ պայման, բարի քաղաքավարութեամբ կեցեալ ըստ կամացն Աստուծոյ՝ ի զարդ եկեղեցւո և ի պարծանս ուղղափառ հաւատացելոց, փոխեցաւ ի հանգիստն արդարոց. յիշատակ Նորա աւրհնութեամբ եղիցի առաջի Աստուծոյ։ Վասնորոյ հոգ տարեալ սա յոյժ եկեղեցւո և Նորին մանգանց՝ վերածնելոց ի Քրիստոս, և բազում ինչ բան Թիւրեալ ի սուրբ Գրոց ուղղեաց՝ ի մեկնչաց սրբոց, Նաև զսաղմոսսն գլխովին, և զերկարութիւնն յայլ և այլ մեկնչաց ի մի վայր ժողովել, կարճ և համառաւտ բանիւ սեփականել դիւրահաս ընթերցողաց։ Որպէս և զայս մեծ հոգևոր բուրաստանս ամենալիր ծաղկոցացս՝ պատճառս տաւնից տէրունականաց և հաւաքմունք սուրբ բանասիրաց . . . որով և ես իսկ յամենայնի անարժանս և անպիտանս, որ Տիրացու անուանեցայ՝ ի Նորին աշակերտացն, որ և ի սա աշակերտեցա և ըստ կարի իմ ջանացա . . . հռչակաւոր սուրբ ի յաստուած . . . Հաղբատ ի Թուականութեանս Հայոց ԶԺԶ, ընդ հովանեաւ տիեզերալոյս տէրունական աստուածընկալ սուրբ Նշանիս . . . Աստուածածնիս և այլ սրբոցս, յաթոռակալութեանն Տեառն Ցովհաննիսի մեծի հռետորի և սուրբ վերադիտողի . . .»։ Այստեղ յիշուած Վարդանն էլ Պատմիչը չէ, ի հարկէ, որովհետև 1267 Թ. ին արդէն վախճանած էր, իսկ Պատմիչը վախճանել է 1271 Թ. ին (Զարբհ. Հին դպրութիւն, եր. 718)։ Երկու Վարդանների գործերն ակներև կերպով իրար հետ շփոթած են. քանի որ յիշատակարանի համաձայն այս Վարդանն է Սաղմոսաց և այլ մեկնութիւններ գրել, մինչդեռ Վարդանի անուն կրող բոլոր մեկնու-



թիւնները ցայժմ ընծայուում էին Վարդան Պատմիչին կամ Արևելցուն (նոյն, եր. 720)։ Առհասարակ ԺԲ—ԺԳ դարերում ապրող Վարդանների անձնաւորութիւններն ու գործերը պարզ կերպով միմեանցից որոշելը մի կարևոր խնդիր է, որը լուծելու համար դեռ փորձեր են եղել միայն (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1862. Ցառաջաբան. Н. Марръ. Сборники притчъ Вардана. часть I. С. Петербургъ 1899. ст. 283. глава шестая. Հանդէս ամս. 1908, եր. 232 և յն.) և վերջնական եզրակացութեան չեն յանգել։ Ներկայ պայմաններում մնում է Տօնապատճառի յիշատակարանում յիշուած Վարդանին, որ Այգեկցին էլ լինել չի կարող՝ նոյնացնել մեր հաւաքածոն կազմողի հետ, և ընդունել ապա, որ Հաղբատ և Սանահին վանքերի շրջանում՝ Շնորհալու ժամանակակից Վարդան Հաղբատացուց կրտսեր և Վարդան Արևելցուց ու Վարդան Այգեկցուց երէց ժամանակով, մի ուրիշ Վարդան ևս եղել է, որ զբաղուել է աւելի զանազան կարգի ժողովածուներ կազմելով՝ դաւանաբանական, մեկնաբանական, տօներ ու եկեղեցական կարգեր բացատրող բովանդակութեամբ, որ և 1209 Թ. ից յետոյ բաւական ժամանակ էլ կարող էր ապրած լինել և ունենալ դեռ 1267 Թ. ին կենդանի մի աշակերտ Տիրացու անունով։ Բայց ուրիշ ելք չկա՞յ արդեօք։

Ափսոս որ վերոյիշեալ «Խոստովանութիւն մեղաց» երկար ոտանաւորի մէջ հեղինակը իւր մասին գրեթէ ոչինչ չի պատմում, որից կարելի լինէր աւելի որոշ գաղափար կազմել Նորա անձի և գործունէութեան նկատմամբ։ Բայց խիստ ուշագրաւ է այդ ոտանաւորի նմանութիւնը այն «Տաղ գերեզմանական»ի հետ, որ տպուած է Բազմավէպում (1873. եր. 264) իբրև Գրիգոր Վկայասիրի ժամանակակից մի այլապէս անյայտ Վարդան Հայկազնի գործ։ Ինձ Թուում է, Թէ Թիւրիմացութիւն է՝ ինչպէս այդ Վարդանի Հայկազն կոչումը, այնպէս և Նորան Վկայասիրի ժամանակակից համարելը։ Ըստ երևութին «Հայկազն» անունը հանած է ոտանաւորի հետևեալ տողերից. «Նա փոխեցաւ ի Կոչողէ յահեղ կամացն ի հրամանէ, ու ի հետ տարաւ զոր յարենէ զիւր հարազատ վեհն ի մօրէ. զայն Նահապետ մեծն ի տանէ, զարմ ի քո բունըն շինողէ. քաջն ի մեծաց քաջաց տոհմէ, հեզն ի հեզուցըն Հայկազնէ։ Այս քեզ երկու բօթ յաճախէ և երկու կորուստ հասեալ է»։ Հրատարակիչները ծանօթութեան մէջ այդ խօսքերն ակնարկ են համարում, «զի ի նմին կամ ի մերձաւոր ամի մահուան Գրիգորի Վկայասիրի մեռաւ և եղբայր մի Նորա իշխանաւոր, գուցէ Փիլիպպէ»։ Բայց այստեղ խօսքը Վկայասիրի մի «համամայր» աննշան եղբօր մասին չէ, այլ մօր կողմից ազ-

գական մի նշանաւոր Հայկազն իշխանի մասին։ Նախ քան որոշելը, թէ ով կարող էր լինել այդ իշխանը, պէտք է կարդալ, կարծում եմ, շարունակութեան մէջ հետևեալ տողերը. «Աւացի՜ն թ՚է անդ զետեղաւոր օտար հողով օտարաւոր. զիս վա՜յ, թէ դու, իմ թագաւոր, աստուածային տէր հոգևոր, յայդ գերեզմանդ անճահաւոր շիրիմ չունիս պատշաճաւոր. այլ հողդ չէր արժանաւոր ծածկել զլոյսդ արփիաւոր. ո՛չ շէնդ անշարժ և բնաւոր, այլ քակելոց ապտակաւոր. միտք իմ այսու թշուառաւոր, ու ես այդ խոցովդ եմ վիրաւոր»։ Արդ, Սամուէլ Անեցին պատմում է (Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893. եր. 139), որ Գրիգոր Տղայն Հռոմկլայում հոյակապ եկեղեցի շինելով այնտեղ առանձին հանգստարան է պատրաստում Գրիգոր Գ. Պահլաւունու ու Շնորհալու համար, և փոխադրում, նոցա մօտ է տեղաւորում Վկայասէրի նշխարները։ Վկայասէր թաղուած էր Կարմիր վանքում, ուր և թաղուեց մի քանի տարի յետոյ նորա հովանաւոր և մտերիմ Գող Վասիլ մեծ իշխանը։ Գրիգոր Տղայի ժամանակ այդ վանքը գտնւում էր օտար իշխանութեան ներքոյ, օտար և հայութեան համար խորթացած հողի վերայ։ Այդ պատճառով էլ երևի Գրիգոր Տղան Վկայասէրի նշխարներն այնտեղից հանում բերում է. և այդ դէպքն է ակնարկուած ըստ իս ոտանաւորի վերև բերուած տողերի մէջ։ Հեղինակը Վկայասէրին չի տեսել նորա մահուան օրը, ինչ նա օծուել է երկրորդ օծումով, և չի համբուրել նորա աջը «ի վերջին մեծն ողջունի». բայց պատահել է նորա մահարձանին, նորա «սուրբ թաղմանը խնկելի» անուշ կնդրուկ է պատրաստել և յետին հարկը հատուցանելով՝ գերեզմանի քար կոփել ու կափարիչ հաստատել իւր քերթողական լացովը։ Այս դիտողութիւններից յետոյ կարելի է ենթադրել, կարծում եմ, որ հեղինակը ներկայ է գտնուել Վկայասէրի նշխարները փոխադրելուն և երկրորդ թաղմանը, յիշել է նորա աստանդական բազմարդիւն կեանքը և տխուր խորհրդածութիւններ ունեցել այն մասին, թէ ինչպէս վիճակուած է եղել նորան օտար հողի մէջ ամփոփուել, ինչպէս այդ հողն անարժան է հանդիսացել նորա սուրբ նշխարքը պահելու և ինչպէս հարկը ստիպել է նորա յաւիտենական հանգստի «անշարժ և բնաւոր» շէնը քակել. ապա և, եթէ մանաւանդ Տօնապատճառի Վարդանի հետ նոյն անձն է սա, առանձնապէս յարգող լինելով տօնասէր և վկայասէր Հայրապետի յիշատակին, նուիրել է նորան իւր յարգանաց և վիրաւոր մտքի արգասիքը, հետն էլ յիշել գերեզմանի մէջ նորան վիճակակից եղած Հայկազն իշխանների վերջին նշանաւոր մի շառաւիղ Գող Վասիլին, որի Վկայասէրի հետ ազգակցութիւն ունենալը երևի



նորան մի տեղից յայտնի էր։ Այն հանգամանքն և, որ Գերեզմանական տաղի հեղինակը Վկայասէրին ուշ ժամանակի զրոյցների հիման վերայ «ի հետիոտս» սուրբ քաղաք ուխտի գնացած և (սխալմամբ) ՇՄԷ թուականին վախճանած է համարում, ցոյց է տալիս, որ ժամանակակից մէկը չէ. իսկ որ իւր կարօտը նորա հրաշալի տեսոյն մի վերջին անգամ արտայայտելուց յետոյ աւելացնում է. «Վա՜յ թէ անդէն հայնց պատահի ինձ՝ որ ի քէն լինիմ հեռի», կարելի է մտածել՝ թերևս նա ուրիշ տեղից եկած լինելով՝ ի նկատի ունէր, թէ մի օր կրկին իւր տեղը կվերադառնայ և հեռու կլինի Վկայասէրի գերեզմանից։

Այսպիսի խորհրդածութիւններով ստիպուած ենք գալ նորից այն կարծիքին, թէ գուցէ և մի սխալի արդիւնք է Վարդան Հաղբատացու աշակերտի յիշատակարանի 1195 թիւը (Հանդէս. 1908. եր 234), որից եզրակացւում է, թէ Հաղբատացին վախճանած է եղել այդ թուին, մինչդեռ նա իրօք կենդանի էր յաջորդ դարի սկզբին, և ինքն է, որ Կիլիկիա ճանապարհորդելով՝ դեգերել և մնացել է այնտեղ մինչև Գրիգոր Տղայի օրերը, գրել գերեզմանական տաղը. յետոյ կրկին Հաղբատ եկել, Լօռւոյ ժողովին մասնակցել. Սանահնի վանահայր եղել, Տօնապատճառի նիւթեր տուել, «Համառօտ հաւաքումն» կազմել և գրել սորա վերջի «Խոստովանութիւն մեղաց» ոտանաւորը։ Նախ՝ Դաւիթ Քոբայրեցու «յորմէ մինչ եհասան առ մեզ» խօսքից (Հանդէս, եր. 143) չի հետևում, թէ Վարդան Հաղբատացին Ներսէս Շնորհալու մահից անմիջապէս յետոյ է Կիլիկիայից Հաղբատ վերադարձել, ինչպէս եզրակացնում է Հ. Ակինեան. նա կարող էր մի քանի տարի էլ Գրիգոր Տղայի օրով մնացած, Վկայասէրի նշխարաց փոխադրութեան հանդիսատես եղած և ապա մեկնած լինել։ Երկրորդ՝ Քոբայրեցու վկայութիւնը, թէ Վարդան վարդապետի ցուցմամբ է Գրիգոր Աստուածաբանի ճառերի մեկնութիւնը գրել, և նորա մեկնութիւնների Վարդան վարդապետի գրածների շարքում յիշեալ Տօնապատճառի մէջ գտնուիլը մի զօրեղ ապացոյց է, որ նոյն իսկ այս Տօնապատճառի յիշատակարանում յիշուած Վարդանն է նորա ուսուցիչը, և ուրեմն Հաղբատացին։ Տօնապատճառի p. 301 r. կարդում ենք. «Ցաղագս նաւակատեաց եկեղեցւոյ, որ զկնի Պենտակոստէին ի Ի. տրէ ամսոյ, զոր Հայաստանեայց տաւնէ եկեղեցի. ի Դաւթա շարագրեալ զաւանդս իմաստնոց։—Ի բազմաց զանազանից կարծեաց . . .». այստեղ բերուած է ուրեմն այն ճառը, որ Հ. Ակինեան իրաւամբ Քոբայրեցու երկ է համարում (Հանդէս, եր. 146). որովհետև p. 227 v. էլ բերած է Քոբայրացու՝ «Պատճառ Ի պահոց իմում կացից ճառ.—Երանելի սուրբ հայրապետն Գրիգոր

Աստուածաբանն» (Հմմտ. Տաշեան՝ Ցուցակ ձեռագրաց. եր. 755), և p. 30 r. «Պատճառ Քրիստոս ծնեալ ճառին». Թէպէտ սոցա վերնագրերում չի յիշած հեղինակի անունը, որ կայ դարձեալ p. 279 v. «Պատճառք տաւնի աշխարհամատրանն, եթէ վասն Էր յայսմ աւուր կատարի. սուղ ինչ ի Դաւթա յաւելուած յառաջնոցն բանս»։ Այն հանգամանքն էլ, որ Տօնապատճառի կազմողը Վարդանի գրածների վերնագրում ասում է. «Սուրբ վարդապետին Վարդանայ», «Հայրն Վարդանա վարդապետի». ուրիշների համար՝ «Գերահրաշ վարդապետ Տեառն Լամբրաւնոյ», «Գէորգայ մեծի գիտնականի՝ Կաղն կոչեցելոյ», իսկ Դաւթին պարզ անունով է միայն յիշում, ցոյց է տալիս նորա իւր աշակերտակից լինելը։ Տօնապատճառի նիւթերի մանրամասն քննութիւնը, մանաւանդ Վարդան վարդապետի անունով եղածների համեմատութիւնը նոյն անունը կրող ուրիշ գրուածների հետ՝ շատ բան կպարզէր, անշուշտ. բայց այդ արդէն մի առանձին բանասիրական աշխատութեան առարկայ պիտի լինի։ Ես կարող եմ աւելացնել այն դիտողութիւնը միայն, որ «Խոստովանութիւն մեղաց» ոտանաւորի մէջ՝ «Ի գլուխ չարեաց ժամանեցի, զհարիւրաւոր թիւն լցի» տողը մի ակնարկ է կարծես այն մասին, որ հեղինակը հարիւր տարի ապրել է. և զուգընթացաբար Տօնապատճառի յիշատակարանն էլ վկայում է, թէ Վարդան վարդապետն՝ «այսպէս երկար ժամանակ ի ծերութեան հասեալ...». զարմանալի չէ ուրեմն, որ նա Շնորհալու ժամանակ Կիլիկիայում գեղերելուց և Հաղբատ վերադառնալուց յետոյ մինչև 1210—15 թուականներն էլ ապրած լինի։ Աւելորդ չեմ համարում աւելացնել այս նկատմամբ հետևեալ դիտողութիւնն էլ։ Մինչդեռ Սանահնի ս. Աստուածածնի վերև բերած արձանագրութեան մէջ յիշւում են՝ «Առաջնորդ ուխտիս Հայր Վարդան վարդապետ Գրիգոր միաբանօք», մեծ գաւթի խաչի ՈԿԴ=1215 թուի արձանագրութեան մէջ (Ջալալեան, նոյն. եր. 26) կարդում ենք. «Հայր վարդապետ Գրիգոր և Վարդան և ամենայն միաբանքս». եթէ այս ընթերցուածը սխալ չէ, կամ պատահական, կարելի է կարծել, որ Վարդան վարդապետն իւր կեանքի վերջին տարիներում այնքան զառամեալ է եղել, որ վանահայրութեան պաշտօնն անցել է իրապէս՝ մի քանի տարիներից ի վեր (գոնէ 1211 թ. ին) երևի նորա օգնական եղած, Գրիգոր վարդապետին։ Այս էլ կմնայ ստուգել, երբ տեղի ունենայ «Համառօտ հաւաքումն» հաւաքածոյի խիստ կարևոր հրատարակութիւնը՝ իւր վերջաբանը կազմող ոտանաւորի հետ։

Մի փոքր քաղուածք «Համառօտ հաւաքման» p. 189 v. ս.



Գրիգոր Լուսաւորչի վկայութիւններից և p. 168 r. ս. Աթանասի վկայութիւններից գտնում ենք Գ. 95=2678 ձեռագրում, p. 229, որի ստորև լուսանցքում ծանօթութիւն՝ «Վկայութիւնք, զոր հաւաքեալ է Վարդան վարդապետի». իսկ վերնագիրն է. «Հաւաքումն բանից յաւէտ երանելեաց մերոցն հարանց և ուղղափառ վարդապետաց՝ յաղագս մարդեղութեան Բանին Աստուծոյ, յերկուցն մի եղեալ բնութիւն, անշփոթելի և անպատումն ամենայնի. ընդդէմ Երկաբնակաց և Մանիքէանոսաց և Արիանոսաց և այլոց բազմաց աստուածամարտ հերձուածողաց»։ Ապա, առանձին ուշադրութեան արժանի են երկու իրար կից դաւանաբանական-խրատական գրուածներ Հ. 543=582 ձեռագրում, որոնց վերնագիրն է՝ p. 92 r. «Սուրբ Վարդանայ խրատք հաւատոյ և դաւանութիւն սուրբ Երրորդութեանն, յամենայն աստուածաշունչ գրոց հաւաքեալ ի պէտս հաւատացելոց՝ առհասարակ ամենեցուն, քահանայից և ժողովրդոց, արանց և կանանց, ի յուսումն փրկութեան և ի վարժումն աստուածպաշտութեան», և p. 102 r. «Դարձեալ խրատ վարուց առաքինութեան՝ ի սուրբ Գրոց, համառաւտ աստուածպաշտութեան և սրբութեան, ի պէտս քահանայից և ժողովրդոց՝ նոյն Վարդան վարդապետի, որ բարեկամն է եկեղեցւոյ և հարսնածու Երրորդութեանն»։ Սոցանից առաջինը՝ տարբեր վերնագրով, գտնւում է զանազան ժողովածուների մէջ և դրուել է մինչև այժմ Վարդան Արևելցու երկասիրութեանց շարքում (Տաշեան, Ցուցակ ձեռագրաց. եր. 188, 847, 996, 1004. Զարբհ. Հին դպրութիւն, եր. 722). բայց մեր ձեռագրից բերած վերնագրի մէջ պարզ նկատելի է այս խրատի առընչութիւնը «յամենայն գրոց հաւաքեալ» մի տարբեր նիւթի հետ, որով և աւելի քան հաւանական է դառնում երկու խրատների հեղինակի և վկայութիւններ հաւաքող Վարդանի նոյն անձն լինելը։ Միւս կողմից նոյն վերնագիրը շատ կենդանի կերպով յիշեցնում է «Կնիք հաւատոյ» ժողովածուի վերնագիրը. իսկ «Խրատ հաւատոյ» և «Խրատ վարուց» անունով երկու ճառեր՝ իրար կից, նոյն հեղինակի գործ, կամայ ակամայ մտածել են տալիս, որ նոցա համար իբրև օրինակ պէտք է ծառայած լինեն իմ հրատարակած «Ցառաջագրի» մէջ յիշուող «Խրատ հաւատոց» և «Խրատ վարուց» թղթերը (Տողակաթ, եր. 119)։ Այսպիսով գալիս ենք այն եզրակացութեան, որ ԺԳ. դարի սկզբում ապրող մի հեղինակ՝ Վարդան վարդապետ անունով, կամեցել է հանդիսանալ իւր ժամանակի Յովհան Մայրագոմեցին և ընծայել ժամանակակիցներին՝ իւր կարողութեան և նոցա ճաշակի ու պահանջների համեմատ, նոյնպիսի երեք գրուածներ, որպիսիք, եթէ ուղիղ են իմ բացատրութիւններն ու ենթադրութիւններն

այս ներածութեան սկզբում (Համմտ. Շողակաթ, եր. 95—100. 103—104), թողել էր Մայրագոմեցին. «Համառօտ հաւաքումն» իբրև զուգակշիռ «Կնիք հաւատոյ» ժողովածուի, «Երատ հաւատոյ» և «Երատ վարուց»՝ նոյնանուն թղթերի։ Մինչև իսկ Տօնապատճառի համար նորա օրինակը կարող է եղած լինել դարձեալ Մայրագոմեցու «Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և որ ի նմա յօրինեալ կարգաց» գրուածքը (տես. Շողակաթ, եր. 106 և 131)։ Սորանից հետևում է ի հակառակէն, որ զուր տեղը չեմ ես՝ առանց ծանօթ լինելու Վարդան վարդապետի երկասիրութիւններին, սերտ կապ նկատել յիշեալ բոլոր գրուածների մէջ և ինչպէս Մանդակունու անունով հրատարակուած ճառերի ժողովածուն Մայրագոմեցու «Երատ վարուց» գիրքը, այնպէս և «Կնիք հաւատոյ» ժողովածուն նորա «Հաւատարմատը» համարել։ Տեսնում ենք նաև, որ «Հաւատարմատ» ընդհանուր անունով անուանել են ուրիշները որոշ տիպի դաւանաբանական գրուածներ, մինչ իրենք հեղինակները զանազան վերնագիրներով են հրատարակել նոյն գրուածները։

Արդեօք Վարդան վարդապետը Մայրագոմեցու բոլոր գործերը լրութեամբ ունեցե՞լ է ձեռքի տակ և ինչպէ՞ս է օգտուել նոցանից, կամ «Կնիք հաւատոյ»ն ներկայ կազմութեամբ է եղել նորա աչքի առաջ, թէ աւելի նախնակա՞ն ձևով,—այդ մասին մի որոշ բան ասելու համար դարձեալ շատ մանրակրկիտ աշխատութիւն պէտք կլինէր գործ դնել։ Պրոֆ. Իորդանի կարծիքը, թէ Վարդանի «Համառօտ հաւաքումն»ից քաղուած «Արմատ հաւատոյ»ն, Իրենէոսի բոլոր վկայութիւնները «Կնիք հաւատոյ»ից վերցրած չլինելով ունեցել է գուցէ մի ուրիշ, երկուսի համար ընդհանուր՝ աղբիւր, հաւանականաբար նախնական «Արմատ հաւատոյ» ժողովածուն (Irenäusfragmente, S. *163*),—շատ խախուտ հիմք ունի։ Տեսանք որ «Հաւատարմատ»ները երկար պատմութիւն են անցել, մինչև որ «Կնիք հաւատոյ» ձևից «Համառօտ հաւաքման» կամ «Արմատ հաւատոյ» ձևին են վերածուել, և Վարդան վարդապետն անշուշտ ունեցել է մի քանի «հաւատարմատ»ներ ձեռքի տակ, քաղել է նոցանից և իրար խառնել իւր նիւթը. և եթէ մեզ հասած բոլոր այդպիսի դաւանաբանական գրուածները ի մի բերենք և ուշադրութեամբ համեմատենք, գուցէ կյաջողուի նորա նիւթի մեծագոյն մասի աղբիւրները գտնել և ցոյց տալ, որ ինչպէս Իրենէոսի, «Կնիք հաւատոյ»ից չվերցրած, այնպէս և այլ նախնի հայրերի վկայութիւնների համար նա օգտուել է մի միջնադարեան մատչելի գրուածքից, և ոչ թէ հնագոյն աղբիւրից։ Ցամենայն դէպս մատենագրական տեսակէտից էլ Վարդան վարդապետի ժողոված վկայութեանց նախնական և աւելի դերադասելի օրինակը պէտք է համարուի Հ. 565=512 ձեռագրի ընծայածը, և ոչ Հ. 1538=2080 կամ նորան յար և նման Փարիզի Ազգային մատենադարանի Cod. 85=153 ձեռագիրը։ Ինչպէս Իորդան յիշում է (նոյն S. 161), այս վերջին ձեռագրից, որ ես արդէն 1894 թ. ին առ տեղեան աչքի էի անցրել, մի քանի թերթի լուսանկարներ ուղարկել էր և ես Հ. 1538=2080 ձեռագրի հետ համեմատելով գտայ, որ մերը համեմատաբար աւելի լաւ է պահուած և աւելի ուղիղ ընթերցուածներ ունի։ Բայց այս մեր ձեռագիրն էլ վերջին դարերի նօտրգիր է, և նորա հետ կազմած, թէպէտ տարբեր գրով, ՌՃԿԲ=1713 թուականի շարագրութիւններից պէտք է ենթադրել, որ այդ թուականից շատ առաջ չի գրուել. մինչդեռ Հ. 565=512 ձեռագիրը վերջում յիշատակարան ունի, որի համաձայն նորա նիւթերն ի մի ամփոփողն ու գրի առնողը եղել է Գրիգոր Տաթևացու յայտնի աշակերտ Մատթէոս քահանան՝ Հայոց 844, ուրեմն Փրկչական 1395 թուին, Լէնկթեմուրի աւերածութեանց ժամանակ, Տաթևի վանքում։ Մեր մատենադարանի Հ. 544=583 և Գ. 436=2543 ժողովածուներում կայ նոյն հաւաքածոյի մի մասը՝ «Վկայութիւնք վասն ծննդեանն Քրիստոսի և մկրտութեան» բաժնից սկսած մինչև վերջը, միակերպ և Հ. 565=512 օրինակին շատ աւելի մօտ խմբագրութեամբ, քան Հ. 1538=2080 օրինակը։ Այդ երկու ձեռագիրներն էլ անթուական են, բայց արտաքին նշաններից դատելով աւելի վաղ ժամանակի, քան վերջին ձեռագիրը. և աւելի ուշ, քան Հ. 565=512։ Իսկ հաւաքածոյի առանձին բաժիններ, մանաւանդ «Վկայութիւնք ծննդեանն», կրկնուում են վերջնադարեան շատ ձեռագիրներում (տես. Տաշեան. Ցուցակ ձեռագրաց, եր. 722, 768 և լն), և ուրեմն աւելի մատչելի ու աւելի գործածական նիւթ լինելով քիչ չեն նպաստել անկասկած «Կնիք հաւատոյ» ամբողջական ժողովածուի և առանձին հատուածների մոռացութեան տալուն։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Երես.

Նախաբան . . . . . . . I—X
Ներածութիւն . . . . . . XI—CXIX
Իսկատիպ ընդօրինակութիւնք p. *2* r., p. *83* r. և p. *186* r.
Գլխակարգութիւն համահաւաքչին . , . . *1—2*
Խորագիր մատենին . . . . . . *3*


## Նախասացութիւն յանճառութեան սուրբ Երրորդութեան.


Դիոնիսի Աթենացւոյ, առ Տիմոթէոս, Խորհրդ. աստուածաբանութեանց, ի Դ. գլխոց . . . *4*
Եփրեմի Խորին Ասորւոյ՝ յԱնհասութիւն . . . *4—7*
Հիպողիտեայ Բոստրացւոյ՝ ի սուրբ Երրորդութիւնն, հարցումն և պատասխանի . . . . *7—15*
Գրիգորի Սքանչելագործի՝ Յաղագս հաւատոյ ի սուրբ Երրորդութիւնն . . . . . . *18—18*
Սահմանք հաւատոյ ՅԺԸ. իցն . . . . *17—18*
Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի՝ ի Յաճախապատումն ճառիցն. խոստովանութիւն ի ս. Երրորդութիւնն . *18—22*
Կիւրղի Երուսաղեմացւոյ՝ ի բանէն. Բազում մասամբք և բազում աւրինակաւք . . . . . *22—24*
Գրիգորի Նիւսացւոյ՝ յԵրրորդութիւնն . . . *24—25*
Դամասու եպ. ին Հռովմայ . . . . . *15—26*
Եպիփանու Կիպրացւոյ . . . . . *26—31*
Գրիգորի Աստուածաբանի՝ յԱ. ճառէն, որ ի Յայտնութիւն Տեառն . . . . . . . *31—33*
Նորին՝ յԵրկրորդ ճառէն . . . . . *33—34*
» յԵրախայիցն . . . . . . *34—36*
» Խաղաղականէն. Ջերմ է նախանձ . . *36—37*
» » Արձակէ ինձ լեզու . . *37—38*

Նորին՝ ի բանէն. Յորժամ տեսանեմ այժմ . . 38—39
» » Զոր ինչ ախտանան . . . 39—40
Յովհաննու Կ. Պոլսոյ եպիսկոպոսի՝ ի ս. Երրորդութ. . 40—51
Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի ս. Երրորդութիւնն. . 51
Եզնկայ Կողբացւոյ . . . . . . »
Յովհաննու Մանդակունւոյ . . . . . 52
Յովհաննու Մայրագոմեցւոյ . . . . 52—55
Սեբերիանոսի Գաբեղինից եպ. ի՝ յԳ. ճառէն . . 56
Սահմանք հաւատոյ. բացատրութիւն ժողովոյն Նիկիոյ առ Պաւղոս Սամոստացի . . . . . 56—57
Թուղթ հերձուածողաց (ս. Աթանասի թուղթ առ Եպիկտետ) . . . . . . . 57—70
Ս. Գրիգորի Սքանչելագործի՝ Հաւատամք . . 71
Նորին՝ Յաղագս Երրորդութեանն . . . . 71
» Մեկնութիւն հաւատոյ . . . . 72
» Ճառք ԺԲ. գլխոց նզովից և մեկնութիւնք . 73—78
Ս. Բարսղի եպ. ի Կեսարու՝ Յաղագս ս. Երրորդութեանն 78—83
Բարսղի և Ապօղինարի վիճաբանութիւն . . . 84—98
Սեբերիանոսի՝ ի բանէն. Ոչխարք իմ ձայն իմ լսեն . 98

Բան Բ.—Յաղագս մին գոլ զՏէր մեր եւ զՓրկիչն Յիսուս՝ հանդերձ իւրով մարմնովն, եւ նմա առբաշխել զամենայն աստուածավայելուչս եւ զմարդկայինս, եւ զի յերկուս բնութիւնս բաժանեն զնա ամպարիշտք։

Յեռոթէոսի փիլիսոփայի՝ յԱստուածաբանականացն Ստիքերոնացն . . . . . . 99—100
Դիոնէսիոսի Արիսպագացւոյ՝ Առ Գայիոս . . 100—101
Երանոսի Հետեւողին առաքելոց . . . . 101—102
Փիլիկեայ եպիսկոպոսապետին Հռովմայ՝ ի թղթոյն որ առ Մաքսիմոս . . . . . . 102—103
Պետրոսի եպ. ին Աղեքսանդրի . . . . 103—104
Դիոնէսեայ եպիսկոպոսապետին Աղեքսանդրեայ՝ Գ. թղթոյն, որ առ Փուստոս . . . . 104
Նորին՝ ի լուծմանէ Ժ. բանին, որ առ Սամոստացին . 104—106
Ուիտաղեայ եպիսկոպոսապետին Հռովմայ՝ Յաղագս հաւատոց . . . . . . . 106—107
Երեքթեայ եպիսկոպոսապետին Անտիոքայ . . 107—108
Պրոկղի եպիսկոպոսի . . . . . . 109—112



Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու՝ Առ միայնակեացսն ի Հենատոն գրեցեալ թղթոյն . 112—114
Տիմոթէոսի եպ. ի Աղեքսանդրացւոց՝ ի Հակաճառութենէ Ա. գլխոյն . . . . . . 114—121
Նորին՝ Գ. գլխոյն . . . . . . 121—123
» Ընդդէմ Լեւոնի գլուխք ԽԲ. հեգնելով . . 123—196
Ի թղթոյն Զենոնի, որ կոչի Հենատիկոն . . 126—127
Ի թղթոյն Անաստասայ թագաւորի . . . 128
Ս. Սահակայ և Մեսրոպայ՝ ի թղթոյս, որ առ երանելին Պրոկղ պատասխանի . . . . . 129
Ի թղթոյն Եզնկայ Կողբացւոյ առ Մաշտոց . . 130
Յովհաննու Մանդակունւոյ՝ ի հակաճառութենէ Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց . . . 130—133
Բաբգենի Հայոց կաթուղիկոսի՝ յԱ. թղթոյն ի Պարսս 133—135
Ներսիսի Հայոց կաթուղիկոսի՝ ի պատասխանւոյ թղթոյն, որ ի Միջագետս Ասորւոց . . . 135—136
Յովհաննու Հայոց կաթուղիկոսի՝ ի թղթոյն, զոր գրեաց առ Աղուանից եպիսկոպոսն . . . 136—139
Աբրահամու Հայոց կաթուղիկոսի՝ յԳ. թղթոյն, զոր գրեաց առ Կիւրիոն . . . . . 139—142
Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ ի բանէն, որ վասն անօրէնութեան Փրկչին . . . . . 142—146
Ս. Լուսաւորչին Գրիգորի՝ ի Վարդապետութենէ, ի Ծընընդեան կարգէն . . . . . . 146—155
Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի մեկնութենէ Եբրայեցւոց թղթոյն . . . . . . . 156—167
Յովհաննու եպիսկոպոսապետին Կոստանդնուպոլսի՝ ի մեկնութենէ աւետարանին, որ ըստ Մատթէոսի . 167—169
Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի մատենէն, որ առ Թագուհին . . . . . . . . 170—177
Նորին՝ Ըստ Ղուկայ . . . . . . 177—183
» Ըստ Յովհաննու աւետարանին . . . 183—189
» ի Բոլորակաց թղթոյն Յակովբայ . . . 189
» ի Պետրոսի Ա. թղթոյն . . . . 189—191
» » Բ. թղթոյն . . . . 191—192
» ի Յովհաննու Ա. թղթոյն . . . . 192—194
» ի թղթոյն Յուդայ . . . . . 194—195
» ի Հռովմայեցւոց թղթոյն . . . . 195—196
» յԱ. թղթոյն Կորնթացւոց . . . . 196—197
» յԲ. թղթոյն Կորնթացւոց . . . . 197—198

» յԱռ Գաղատացիս թղթոյն . . . . 198—202
» ի Կողոսացւոց թղթոյն . . . . 202—205
» ի բանէն, որ յաղագս Ներմարդութեանն. . 205—210
» ի Շրջանական թղթոյն, որ զՆեստորէ . . 210—211
» Մեկնութիւն հաւատոյ, որ ՅԺԸ. իցն . . 211—229
» Երկոտասան նզովք . . . . . 229—241
Սեբերիանոսի եպ. ի Գաբաղոնից՝ յԳ. ճառէն, որ ի Ջատիկն . . . . . . . . 242

Բան Գ.—Եթէ պարտ է անապական խոստովանել զմարմինն Քրիստոսի՝ անդստին յարգանդէ կուսական Աստուածածնին Մարիամայ։

Երինոսի Հետևողի առաքելոց . . . . 243—244
Եփրեմի՝ ի բանէն, որ ի սուրբ Կոյսն . . . 245—246
Նորին՝ ի բանէն, որ յաղագս մարգարէին . . 246
Աղեքսանդրի եպ. ին Աղեքսանդրու՝ ի բանէն, որ ի Տնօրէնութիւնն . . . . . . 247
Աթանասի եպ. ին Աղեքսանդրու՝ ի բանէն, որ յԵրգս երգոցն . . . . . . . »
Նորին՝ ի բանէն, որ ի Չարչարանս . . . 248

---

Յովհաննու եպիսկոպոսապետին Կ. Պօլսի . . 248
Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի՝ ի Վարդապետութեան կարգէն . . . . . . . 248—249
Եպիփանու՝ Հարցումն և պատասխանի . . . 249—251

Բան Ե.—Եթէ պարտ է զմարդեղութիւնն Քրիստոսի ըստ նախաստեղծին Ադամայ խոստովանել՝ յառաջ քան զյաւիտեանսն։

Յեռոթէոսի փիլիսոփայի՝ յԱստուածաբանական Ստեքերոնացն . . . . . . . 252
Աթանասի եպ. ի՝ ի բանէն. Օրինակ բարեպաշտութեան 252—253
Յովհաննու Երուսաղեմի՝ յարտադրութիւն հաւատոյ . 253



Փիլոքսենոսի եպ. ին Արբոգ քաղաքի՝ ի ԺԷ. որդ ճառէն »
Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ ի բանէն, որ ի տնօրէնութիւնն Քրիստոսի . . . . . . 253—256

Բան Զ.—Յաղագս մարմնական կրիցն Քրիստոսի, եթէ ո՛չ է ինքնութիւն ակամայ եւ հարկաւոր եւ կարեկցութեամբք, այլ ի վեր քան զկարիս երկրաւորս եւ զմարդկային բնութիւնս։

Յեռոթէոսի փիլիսոփայի՝ յԱստուածաբանական Ստիքերոնացն . . . . . . . 256
Դիոնէսեայ Աթենացւոյ՝ Սակս մարդանալոյն Քրիստոսի 256—257
Եփրեմի Խորին Ասորւոյ՝ ի բանէն, որ վասն շնորհացն 257—258
Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ ի Վարդապետութենէն . 258
Աթանասի Աղեքսանդրացւոյ՝ ի բանէն. Օրինակ բարեպաշտութեան . . . . . . 259
Բարսղի եպ. ի Կեսարու՝ ի բանէն. Յաղագս գոհութեան 259—260
Տիմոթէոսի եպ. ին Աղեքսանդրու . . . . 260
Փիլիքսիանոսի Նաբուկայ եպ. ի՝ Ի մեկնութենէ աւետարանին ըստ Յովհաննու . . . . 260—261
Սեբերիանոսի՝ ի Ե. ճառէն . . . . . 261—262

Բան Է.—Եթէ ո՛չ է պարտ անգիտութիւն ասել Քրիստոսի ըստ մարդկութեանն, թէ պարտ է եւ ուրեք ձեւանալ անգիտանալ յաղագս իմիք պատճառի։

Երանիանոսի Հետևողի առաքելոց՝ ի բանէն, որ յաղագս տնօրէնութեան Փրկչին . . . . . 262—263
Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ ի չարչարանսն Քրիստոսի . 263
Աթանասի եպ. ի Աղեքսանդրու՝ ի թղթոյն, որ առ Եւսեբիոն . . . . . . . 264
Կիւրղի Երուսաղեմացւոյ՝ ի Պարունակաց . . 265—266
Նորին՝ ի բանէն, որ յաղագս ս. Երրորդութեանն . 266—267
Գրիգորի (Նիւսացւոյ), եղբօր Բարսղի, որ առ յարութիւնն . . . . . . . 267—276
Գրիգորի Աստուածաբանի՝ յԳ. ճառէն, ի բանէն. Նոցա անգիտութեանն . . . . . . 276
Յովհաննու Երուսաղեմացւոյ՝ ի բանէն. Զորօրինակ ձագ ծիծառանց . . . . . . . 277—278

Յովհաննու եպ. ի Կոստանդինուպոլսի՝ ի Փարիսացւոց գրոց . . . . . . . 278
Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի Գանձէն . . . 279—280
Տիմոթէոսի եպ. ի Աղեքսանդրու՝ ի Հակաճառութենէն 280—281
Յովհաննու Մայրագոմեցւոյ . . . . . 281
Սեբերիանոսի եպ. ի Գաբաղենից՝ յԱ. ճառէն . 281—285

Բան Ը.—Երբ ոչինչ յախտից ընկալաւ Քրիստոս յերեւել մարմնովն յաշխարհի, որ յետ յանցանացն մտին ի մարդն, եւ թէ երկիւղ յախտից է, եւ երբ յառաջ քան զյանցանելն ո՛չ էր ի Նախաստեղծն երկիւղ։

Աթանասի եպ. ի Աղեքսանդրացւոց՝ ի բանէն. Օրինակ բարեպաշտութեանն . . . . . 285—286
Փիլիքսիանոսի եպ. ի Նաբբուկայ . . . . 286
Բարսղի եպ. ի Կեսարու՝ ի բանէն. Ո՛չ է պատճառ չարեաց Աստուած . . . . . . 287
Նորին՝ ի խաւսիցն. Բարի է, որ դիւրահաւանութեան են վարձք . . . . . . . »
Գրիգորի Աստուածաբանի՝ ի բանէն. Նաւակատիք պատուեսցին . . . . . . . »
Յովհաննու Երուսաղեմացւոյ՝ ի բանէն՝ Ընդէ՞ր փայտ ճանաչելոյ բարւոյ և չարի . . . . 278
Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ ի Հաւատոյ բանէն . »
Գրիգորի Նիւսացւոյ՝ Յաղագս անասնականաց ի մեզ ախտից . . . . . . . 289—293

Բան Թ.—Երբ պարտ է մարմնացելոյ Բանին եւ մարդացելոյ Տեառն մերոյ՝ Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, վասն փրկութեան արարածոց կամաւորութեամբ գալ ի չարչարանս, եւ ո՛չ առնել երկիւղ ի մահուանէ, եւ ո՛չ արեան քիրտն լինել, եւ ո՛չ ի հրեշտակէ զօրանալ։

Երանոսի Հետևողի առաքելոց՝ ի բանէն, որ զՍտորնին 293—297
Նորին՝ ի բանէն, որ ընդդէմ Կողաբբոսի . . 297—299
Եփրեմի Խորին Ասորւոյ՝ ի բանէն. Որ հանապազ անարգէ զՈւռհա . . . . . . 299—300
Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ ի Վարդապետութենէն . 300—302
ՅԺԸ. սուրբ հարցն ի Նիկիայ ժողովոյն՝ յԵրախայից վարդապետութենէն . . . . . 308—303



Ագաթանգեղեայ Հռոմայեցւոյ՝ զվարուց ս. Գրիգորի . 303—304
Աթանասի եպ. ի Աղեքսանդրու՝ ի բանէն, որ յաղագս խաչին . . . . . . . 304—305
Նորին՝ Ի Ծնունդն և ի Չարչարանսն . . . 305—306
Կիւրղի Երուսաղեմացւոյ՝ ի բանէն. Պարծանք սրբութեան . . . . . . . 306—703
Եպիփանու Կիպրացւոյ՝ ի Պարունական խօսիցն . 308—309
Գրիգորի Աստուածաբանի՝ ի բանէն. Ա՛րք եղբարք . 309
Նորին՝ յԳ. ճառէն . . . . . . 309—310
Յովհաննու եպ. ի Երուսաղեմի՝ ի Կենագրութենէն . 310—318
Յովհաննու Ոսկեբերանի՝ ի մեկնութենէ Եսայեայ մարգարէի . . . . . . . 318—319
Նորին՝ ի Սաղմոսաց մեկնութենէն . . . 319
» ի մեկնութենէ աւետարանին Մատթէոսի . 319—323
» ի մեկնութենէ Եբրայեցւոց թղթոյն . . 323
Եւսեբեայ եպ. ի Եմեսացւոյ՝ ի բանէն. Իսկ զչարչարանացն լսել ինչ պարտիցիմ . . . . 323—325
Նորին՝ ի բանէն. Մի՛ ոք ասիցէ . . . . 326—327
Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ ի Հաւատոյ բանէն . 327—330
Սեբերիանոսի՝ ի ճառէն. Յորժամ մեզ, եղբարք . 333—341

---

«Եթէ չէ խառն ընդ արդարութեանն» . . . 341
Յուլեայ եպ. ին Հռոմայ՝ ի թղթոյն, որ առ Պրոսդոկիոն 341—342
Նորին՝ Յաղագս աստուածային մարմնաւորութեանն . 342—345
Աթանասի եպ. ին Աղեքսանդրու՝ ի Տօնականացն . 345—346
Նորին՝ Յաղագս խաչին . . . . . 346—347
» Ի բանէն որ զԱրիանոսացն . . . 347—348
Գրիգորի Նիւսացւոյ՝ Առ ի մարդանալն Տեառն . . 348
Բարսղի եպ. ի Կեսարու՝ ի բանէն, որ յաղագս Հոգւոյն 349
Նորին, որ ի վկայն Յուղիտեայ . . . . »
Գրիգորի Աստուածաբանի՝ յԱ. Բանէն, որ զՈրդւոյ . 349—352
Նորին, որ ի սուրբ Պասքայ . . . . 352—353
Յովհաննու եպ. ի Կոստանդնուպոլսի՝ ի Թարգմ. աւետարանին Յովհաննու . . . . . 353—354
Նորին՝ Առ Կորնթացիս յԱ. գլխոյն . . . 354
» ի բանէն. Այսուհետև, եղբա՛րք իմ . . »
» ի Ներբողեան խաչին . . . . 355
Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի մեկնութենէ Կորնթացւոց Ա. Գլխոյն . . . . . . . 355—356

Նորին՝ ի մատենէ, որ առ Թագուհին . . . 356
Պրոկղի եպ. ի Կիւզիկեայ՝ ի խօսիցն, որ յԱնթիմեայ եկեղեցւոջն է . . . . . . 356—357
Դիոսկորոսի եպիսկոպոսապետի Աղէքսանդրու՝ ի Թղթոյն առ Սիկենդոնան . . . . . . 357—358
Տիմոթէոսի եպ. ի Աղէքսանդրու՝ ի Հակաճառութենէն 358—363
Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ ի բանէն, որ վասն չարչարանաց և աներկիւղ մատնել զանձն . . 363—364
Կիւրղի Աղէքսանդրացւոյ՝ յԵբրայեցւոց գլխոյն . . 364—366
Մեկնութիւն ի յայտարարութիւն և կշտամբանք հերձուածոցն . . . . . . . 366—371
Յիշատակարանք՝ նորոգողին և ընդօրինակողին. . 372


---


Ցանկ յատուկ անուանց . . . . . 373—380
Ցանկ նիւթոց . . . . . . . 381—421
Ցանկ վկայութեանց ս. Գրոց . . . . 422—432
Ցանկ ձեռագիր և տպագրեալ մատենից բաղդատութեան 433—434
Ներածութեան և նիւթի ուսումնասիրութեան համար գործածուած գրքեր . . . . . 435—436




p. 2 r.



p. 83 r.



p. 186 r.

## (Գլխակարգութիւն համառաւտին):

Բան Առաջին․ Խոստովանութիւն ի սուրբ Երրորդութիւնն։ 1r.

Բան Երկրորդ․ Յաղագս մի գոլ զՏէր մեր Յիսուս Քրիստոս Հաւր՝ հանդերձ մարմնով իւրով, եւ նմա առաքաւխել զաստուածավայելուչն եւ զմարդկայինս, եւ զի յերկութիւնս ո՛չ բաժանել զնա։

Բան Երրորդ․ Մ(եզ) պարտ է անայլայական խոստովանել զՓրկիչն մարմնով՝ անդստին յարգանդէ սրբոյ կուսին Մարիամայ Աստուածածնի։

Բան Չորրորդ․ Եթէ նմանապէս ըմփաւսեցաւ ի մարմնանալ Որդին Աստուծոյ, եւ ո՛չ պարտ է յաղագս ըմփաւսութեանն եւ կերակրոց եւ ըմպելեաց եւ չարչարանաց ապականացու ասել զմարմինն Քրիստոսի։

Բան Հինգերորդ․ Եթէ պարտ է զմարդկութիւնն Քրիստոսի քան զնախաստեղծին Ադամայ խոստովանել՝ յառաջ քան զյանցանսն։

Բան Վեցերորդ․ Եթէ ո՛չ ինքնութիւնական եւ հարկաւոր եւ կարեկցութեամբ, այլ ի վեր քան զկարիս հարկաւորս եւ զմարդկային բնութիւնս։ 1v.

Բան Եւթներորդ․ Եթէ ո՛չ է պարտ անգիտութիւն ասել Քրիստոսի քան զշնորհութեանն, թէպէտեւ ուրեմն ձեւանայ անգիտանալ քան ի մեծ պատճառի։

Բան Ութերորդ. Եթէ ոչինչ յախտից ընկալաւ Քրիստոս յերեւելն մարմնով աշխարհի, որ յետ յանցանաց մտին ի մարդն, եւ երկիւղ յախտից է․ եթէ յառաջ քան զյանցանելն ո՛չ էր ի նախաստեղծն երկիւղ։

ԿՆԻՔ ՀԱՅԱՍՏՈՅ

Բան Իններորդ· Երբ պարտ է մարդացելոյն Աստուծոյ կամաւորութեամբ գալ ի չարչարանս, եւ ո՛չ ասել երկիւղ ի մահուանէ, եւ ո՛չ արենաքրտնութիւն եւ ի հրեշտակէ զօրանալ։

Բան Տասներորդ· Երբ պարտ է Քրիստոսի զչարչարանս եւ զմահն, զոր կամաւ յանձն էառ՝ խոստովանութեան մարմնացելոյն Աստուծոյ, Տեառն Յիսուսի Քրիստոսի։

# ԿՆԻՔ ՀԱՒԱՏՈՅ 3r.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ,

*ՑՈՒՂԱՓԱՌ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԵԿԻՐ ՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ՝*

առ ի պահպանութիւն սուրբ հաւատոյ,
համահաւաքելով,

զի սովաւ լուծցեն զամենայն հայհոյչացն միաբանութիւն՝ եղծագործ կործանմանցն հերձուածողացն,

եւ հաստատեսցեն ի ճշմարիտ սուրբ խոստովանութիւն Երրորդութեանն,

աներկբայութեամբ ընթանալ զկնի կոչաւղիս այսորիկ, հոգեւոր սերմանաւղիս՝ զաստուածաշունչ գրոց ասեմ,

## ՈՐ ՅԱՒՈՒՐՍ ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՀԱՒԱՔԵԱԼ

պիտառեցաւ առ ի պահպանութիւն սրբոյ հաւատոյս՝ քրիստոսաւոր աւանդութեանս:

## Նախասացութիւն յանհասութեան սուրբ Երրորդութեանս:

*Դիոնեսիսի Աթենացւոյ, առաջին եպիսկոպոսի Արիսպագոսի, առ Տիմոթէոս եպիսկոպոս՝ խորհրդական աստուածաբանութեանց, ի Չորրորդ գլխոց*:*

*Ասեմք՝ որ ամենեցուն պատճառն է, և ի վեր քան զամենայն գոլով, ոչ գոյ է, ոչ[ա] անգոյ, ոչ անբան, ոչ անմիտ.* 2v. *ոչ մարմին է, || ոչ ձև, ոչ տեսակ, ոչ ճշգրտութիւն, ոչ (նմա)նութիւն. ոչ ծանրութիւն ունի, ոչ ի տեղւոջէ ոչ երևի, ոչ շաւշափումն ունի զգայական, ոչ...[բ], ոչ զգայական[գ] է, ոչ անկարգութիւն է, կամ խռովութիւն՝ վրդովեալ[դ] առ հիւթական ախտից. ոչ անզաւր՝[ե] ի ներքոյ անկեալ զգայականաց ...[զ], ոչ կարաւտութիւն է լուսոյ, ոչ այլայլութիւն[է] կամ ապականութիւն, կամ բաժանումն, կամ պակասութիւն, կամ երևումն[ը], և ոչ այլ ինչ է[թ] զգայականացս՝ ոչ է և ոչ սա։ |*

*Երանելւոյն Եփրեմի խորին Ասորւոյ եպիսկոպոսի՝ յանհասութիւն։* **)

*Կամիմ մերձենալ, և երկնչիմ. հեռացայ, զի ժպիրհն, որ մերձենայ ի քննել, և առաւել հեռանայ, և որ մերձենա չափով՝ ոչ մերժէ զնա անարժանն։ Մի՛ մերձեսցուք, զի մի հեռասցուք. մի՛ հեռասցուք, զուցէ կորիցուք. մի՛ խառն մատիցուք չափով յիսկութիւնն, որ ոչ չափի. զի ոչ են պիտոյ երկեայնքն՝ ասացից կարճառաւտիւք։* 3r. *Քանի՞ իրաւ է հող անարգ || պատմել զԱրարիչն իւրմէ. շնորհ ստեղծ զհող՝ լինել պատկեր Արարչին իւրոյ։ Երկիցուսցէ զնա սուտգութիւնն, զի ժպրհեսցէ առ Հաստիչն իւր. Հաստիչն ետ գիտել անաւթոյ զանձն իւր. ոգորեցաւ ստեղծեալն ընդ Ստեղծչին քննութեամբ, զլացաւ շնորհն։ Կշռով տացուք զլուրն. այսու ուսանի չափով. դիցուք կշիռս ի միջի, կշռեսցուք, առցուք և տացուք։ Լուար, թէ Աստուած աստուած է, ծանի՛ր զանձն քո իբր զմարդ. լուար, թէ Աստուած | արարիչ է, ստեղծուած. զիմրդ քննես զնա։ Լուար. թէ Աստուած[ա] հայր է, հայրութեամբ[բ] ծանի՛ր զԾնունդ նորա. զի Որդին[գ] իւր ծնաւ յինքենէ. զի մի Ծնունդ նորա Միածին է, մի՛ բաժանեսցին հարցուածք քո։ Լուար զպարկեշտութենէ Որդոյ, մի՛ ազտեղեն[դ] զնա խնդրուածք[ե] քո։ Լուար զՀոգւոյ[զ], եթե Հոգի Սուրբ է. անուանեա յանուանն[է], յոր կոչեցին զնա։ Լուար զանուն նորա, խոստովանեա և մի՛ քններ, զի չես համարձակ քննել զբնութիւն նորա[ը]։ || Լուար զՀօրէ և* 3v. *զՈրդւոյ և զՍուրբ Հոգւոյն[թ], անուամբ[ժ] ստացի՛ր զանձինսն. ոչ եթե անուամբք[ժա] լոկ են, ճշմարիտ երեք են[ժբ]. եթե խոստովանիցես յանձինս նոցա, եղեր անուանն երկրպագու, բայց արդեանցն ուրացող. քանզի ուր չիք անձն, անուն լոկ եդեալ է ի միջի։ Ինչ, որոյ չիք անձն, և յորջորջումն իւր դատարկ է, անձն զայն ուսուցանէ քեզ. եթե ինքն ճշմարտութիւն է, ինքն գիտէ. իսկ եթե ինչ գիտացաք, եթե որպիսի ինչ է՝ ոչ գի|տացաք։ Ո՞չ զի գիտացեր, թէ է, եթե զիարդ է՝ հասեր, և մի՛, զի ոչ գիտացեր նմա, ուրասցիս, եթե ոչ է նա. զի հայհոյութեան են երկոքին՝ և մեայն և քննելն։ Ծով մեծ է. եթէ քննես զնա, յորդութիւն ալեաց նորա յածէ զքեզ. մի ալի կարէ առնուլ զքեզ և տանել հարկանել զքարի։ Շատ է քեզ. ո՛ տկար, եթէ ի մէջ նաւի շահեսցես զանձն քո։*

Յետ Սակաւուց. *Սիրեա զշնորհս Հօր և մի՛ քններ[ժգ] զիսկութիւն նորա. սիրեա զերանութիւն || Որդւոյ և մի՛* 4r. *քններ զծնունդ նորա. սիրեա զգրգումն[ժդ] Հոգւոյն Սրբոյ և մի՛ մերձենար ի քննումն[ժե]։ Հայր է և Որդի և Հոգի*

* Հմմտ. Ձեռ. № 944. p. 569 v. նույն, որ տարբեր թարգմանություն է. մինչ այս նույն ժողովածուից արտագրված է երևում Գ. ձեռ. 172, p. 353, որի հետ էլ համեմատել ենք։

**) Հմմտ. Գ. ձեռ. 102, p. 353. ուր կան միայն այն հատվածները, որ համեմատել ենք. շարունակաբար բերված։

ա) եւ ոչ  բ) զգայ  գ) զգայական  դ) վրդովիար  ե) անզաւր է  զ) շրջմանց . է) այլայլութիւն է  ը) հասումն  թ) ի

ա) Չաւարթ է, Աստուած է.  բ) հայրութեամբն  գ) Որդի  դ) աղտեղեր  ե) խնդրուածաւք  զ) զՀոգւոյն  է) յանուն  ը) քննել զնա  թ) եւ զՀոգւոյն Սրբոյ  ժ) անուամբքն  ժա) անուանքն  ժբ) երեքին  ժգ) սիրեր  ժդ) զգրգումն կենդանի  ժե) ի քննելն.

*Սուրբ. անուամբք իւրեանց հաւասարին. մի՛ ոգորիր ընդ ան-
ձինս նոցա, հայեաց յանձինս[ա] նոցա, եթէ քննես զանձ-
նաւորու(թիւնն)[բ]. եթէ հաւատասցես՝ կեցցես։ Անուն
Հաւր սահման եղիցի[գ] քեզ. մի՛ անցաներ քնն|ել զբնու-
թիւն նորա։ Անուն Որդւոյ պարիսպ լիցի քեզ. մի՛ ան-
ցաներ քննել զծնունդ նորա։ Անուն Հոգւոյն ցանգ եղի-
ցի[դ] քեզ. մի՛ մտաներ ի քննութիւն նորա։ Եղիցի քեզ
անուանքն սահմանք. կարճեա զհարցուածսդ անուամբք
այսուէ։*

*Լուար դու զանուանսդ և զճշմարտութիւն, դարձ դու
առ պատուիրանս։ Լուար դու զաւրէնս և զպատուիրանս,
դարձ դու առ վարսդ։ Կատարեցեր զվարսդ այսուհետև,
դարձ դու առ խոստումն։ Մի՛ խափաներ ի պատուիրե-*

4v. *լեացն և աշխատ || իցիս յոչ գրեալսն։ Լուար ճշմարտու-
թիւն յայտնեալ, մի՛ սահիր առ ի ծածուկսն։ Ցայտնին
խաւսեցաւ Տմաւոքն, եւ ճշմարտութիւն և առ զերանու-
թիւնն. տես, զի մի խաւսեցաւ Տմաւոն. մի՛ սահիր դու
ընդ բազումն. գրեալ է՝ Ճշմարտութիւն կարճառաւտիւք.
մի՛ երկայներ դու զքննութիւնս։ Զի գոյ Հայր ամենա-
գէտ. թէ[ե] զիմրդ իցէ, ոչ գիտեմք։ Եթէ գոյ Որդի, ամե-
նեքեան խոստովանեցաք. եթէ զիմրդ և ծրչափ, ոչ գի-
տեցաք[զ]։ | Ի Հոգին Սուրբ խոստովանիմք ամենեքեան.
քննութեան[է] նորա ոչ ոք բաւէ։ Զի է Հայր, խոստովա-
նեաց[ը]. եթե բովանդակի, մի՛ խոստովաներ[թ]։ Եւ զի է
Որդի, հաւատայ[ժ], եթե քննեսցես[ժա], մի՛ հաւատար։ Եթե
Հոգի է Սուրբ, հաւատա, և թէ բովանդակի, մի՛ հաւատար.
զի մի են, հաւաստեաւ և ստոյգեայ[ժբ], և զի երեք են՝ մի՛
բաժաներ։ Առ[ժգ] առաջին է Հայր, հաւատա. զի երկրորդն[ժդ]
է Որդի՝ ստոյգեայ. զի[ժե] երրորդ է Հոգին Սուրբ, մի՛ բա-*

5r. *ժաներ։ Ոչ ոք հրամայէ || անդրանիկ Հաւր, զի նա է հրա-
մայիչ։ Ո՛չ երբեք առաքեաց Հոգի զՈրդի, զի նա է առաքիչ
նորա։ Որդի, որ նստի ընդ աջմէ, զտեղի Հաւր ոչ յա-
փշտակէ։ Ո՛չ յափշտակէ զտեղի Որդւոյ Հոգին Սուրբ,
որ ի նմանէն առաքի։ Ուրախ է Որդի, զի մեծ է Ծնաւղ
իւր; և Հոգին Սուրբ, զի մեծ է Սիրելին իւր. ուրա-*

ա) հայեա յանուանս  բ) եթէ քննեսցես, զանձն կորուսցես  գ) լիցի  դ) Հոգւոյ ցանկ լիցի  ե) եթէ  զ) բաւեցաք  է) ի քննութիւն  ը) խոստովանեա  թ) եթէ բովանդակի, մի՛ խոստովանիր  ժ) խոստովանեա  ժա) քննիցի  ժբ) հաւատայ եւ ստուգեա  ժգ) չ.  ժդ) երկրորդ  ժե) ստուգէ, եւ զի



*խութիւն է անդ և միաբանութիւն և խառնումն՝ յաւ-
րինուածով հանդերձ։ Հայր գիտէ զծնունդ Որդւոյ. Որդի
գիտէ զակնարկել Հաւր։ Հայր ակնարկէ, Որդի գիտէ,
գործք Հոգւոմն կատարին. չիք բաժանումն ի միջի, չիք
շփոթումն ի խառնմանն, զի յաւրինուած մեծ է անդ։ Եւ
վասն զի խառն են, մի՛ կարծեր[ա] շփոթութիւն. և մի՛, վասն
զի որիշ են՝ կարծեր[բ] բաժանումն. խառն են, իբրև չէ[գ]
շփոթեալ, և որիշ են, իբրև չէ բաժանեալ։ Ո՞ խառնէ զո-
րոշումն նոցա, Ո որոշէ զխառնուած[դ] նոցա. ինքեանք
զինքեանս և եթ[ե] գիտեն. փախիր առ լռութիւնն, ո՛ տկար,
և տուր || փառս[զ] Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն[է], այժմ* 5v.
*և միշտ և յաւիտեանս։*

*Հիւպոդիտեայ եպիսկոպոսի Բոստրացւոց՝ ի սուրբ
Երրորդութիւնն, հարցումն եւ պատասխանի։*

Վասն զի՝ մի՞ երեսս պարտ է իմանալ սրբոյ Երրոր-
դութեանն, երե երիս, իբրեւ զերիս անձինս։

Պատասխանի.—*Ըստ երկրպագութեանն մատուցանե-
լոյ՝ մի երեսս. բայց ըստ անձանց ի միմեանց երևելոյ՝
երիս, իբրև զերիս անձինս։*

Երե մարդկա՞ւրէն երեսս պարտ իցէ իմանալ Ասօաւ-
ծականին. բաց այնմ երե՝ Արասցուք մարդ ըստ պատկերի
մերում եւ ըստ նմանութեան [1])։ |

*Ցամենայն յաւդապատ կերպարանացս ի վեր է աս-
տուածական էութիւնն, քանզի պարզ և տարած և նուրբ
և նստակ քան զամենայն լուսաւորութիւնն. և ըստ պատ-
կերին և ըստ նմանութեանն առնել զմարդն՝ ոմանք ի
հարցն, ըստ իշխանութեանն, զոր ետ մարդոյն՝ առին, և
ոմանք ըստ անմեղութեանն, և ոմանք՝ թէ ըստ այնմ
պատկերի, զոր Որդին զգենլոց էր. այլ զի ոչ ըստ այնմ
ասել՝ անտի յայտ է, եթե՝ Արասցուք ըստ պատկերի մե-
րում. քանզի ոչ եթե Հայր և Հոգի առին մարմին, այլ Որդի։*

Վասն զի բե՞ կամա՞ւ ծնեալ Հայր զՈրդի, երե ակամայ։

*Եթե || ուղիղ մտաւք ոք հարցանիցէ, մարթ է ասել՝
կամաւ. ապա եթե գեղիւ ոք հարցանիցէ, ոչ կամաւ պարտ*

ա) մի՛ կարծես  բ) կարծես  գ) չեն  դ) զխառնուածս  6r.
ե) չ. եւ եթ  զ) փառս տուր  է) Հոգւոյն Սրբոյ

1) Ծննդ. Ա. 26։

է առել և ոչ ակամայ. զի մինն բնութեամբ է և միւսն սկիզբն առնելոյ կարծիք։ Այլ միշտ Հայր, և մշտնջենակից Որդի. զի չէր Հայր երբէք, յորժամ չէր Հայր, և չէր երբէք, յորժամ Որդի չէր Որդի։ Բայց ոմանք ի հարցն ի վեր քան զժամանակս և զյաւիտեանս ետուն Որդւոյ սկիզբն զՀայր, այնու զի պատճառ է ծննդեան նորա. այլ սերտ այն է՝ անսկ||իզբն Հաւր անսկիզբն Որդի։

Զի Որդի եւ Հոգի ի Հաւրէ են, ընդէ՞ր ոչ ասին եղբարք միմեանց. *)

Զի միութիւն Սրբոյ Երրորդութեանն՝ այն ի զաւրութեանցն յայտ է. Ի սկզբանէ արար Աստուած Հայր զերկին[ա] և զերկիր [1]. և Բանիւ Տեառն երկինք հաստատեցան՝ Որդովն, և Հոգով բերանոյ նորա՝ Սուրբ Հոգովն, ամենայն զաւրութիւնք նորա [2]։ Բայց զի պայման գոյութեան[բ] նորա այլևայլ է, և այն չէ ծածկեալ յիմաստնոցըն[գ], այնու, զի Հայր չծնեալ[դ] և ծնաւղ է, և Որդի չծնաւղ[ե] և ծնունդ է, և Հոգի ոչ ծնաւղ[զ] և ոչ ծնունդ, այլ ելաւղ,
6v. ըստ այնմ թէ՝ Հոգին ճշմարտութեան, || որ ի Հաւրէ ելանէ [3]։ Եւ ոչ ասի եղբայր Որդւոյ, քանզի չէ ծնունդ, և ոչ աւտար յԱստուծոյ, քանզի ի Հաւրէ ելանէ. որպէս և ոչ Եւայ և Հաբէլ եղբարք ասին միմեանց, թէպէտ և երկոքինն յԱդամայ են, մինն առաւելութեամբ և միւսն ծնընդեամբ. և ոչ Ադամ հայր Եւայի ասի, թէպէտև ի նմանէ կողն։ Եւ ոչ երկիր հայր Ադամայ, թէպէտ և ի նմանէ ստեղծաւ կաւն։ Ըստ նմին օրինակի՝ թէպէտև յԱստուծոյ են Որդի և Հոգի, ոչ ասին եղբարք միմեանց, զի յայտնի են միմեանց պայմանք իւրաքանչիւր|գոյութեանցն ի միոջէ էութենէ Հաւր։

Վասն զի՝ թէ ընդ Երրորդութիւնն երեքանձնեայ է՞ր ասէր. Ես եմ Աստուած, եւ չիք այլ բաց յինէն [4]։

Ոչ վասն անձին ինչ միայնոյ խորհելոյ[է] զաստուածութիւնն ասէր թէ՝ Ես եմ Աստուած, և չիք այլ ոք[ը], այլ

* Այս եւ յաջորդ երկու հատուածները հմմտ. Գ. ձեռ. 102, p. 353 v.

ա) զերկինս  բ) գոյութեանն  գ) յիմաստնոց  դ) չէ ծնեալ  ե) չէ ծնաւղ  զ) Հոգին ոչ ծնաւղ է  է) չ.  ը) եւ այլ ոք չիք

[1]) Ծննդ. Ա, 1.  [2]) Սաղմ. ԼԲ, 6.  [3]) Յովհ. ԺԵ, 26.  [4]) Հմմտ. Ես. ԽԳ, 11.



վասն անջրպետ և խտրոց ի մէջ իւր և չաստուածոցն արկանելոյ։ Բայց զի Որդւոյ և Հոգւոյ աստուածութիւնն և ի հնումն ճառէր՝ յայտ է, որ ասէն[ա]. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան [1]. և դարձեալ թէ՝ Ըստ պատկերի Աստուծոյ արար զնա Աստուած [2]. և դարձեալ. Եկայք իջցուք, խառնակեսցուք[բ] || զլեզուս նոցա 7r. [3]. և դարձեալ թէ՝ Տեղաց Տէր հուր և ծծում ի Տեառնէ յերկնից [4][գ]. և դարձեալ. Ես եմ Աստուած Աբրահամու[դ], Աստուած Սահակայ և Աստուած Յակոբայ [5]։ Եւ Եսայի ասէ. Տէր Աստուած առաքեաց զիս, և Հոգի նորա [6]։ Բազում և այլ այսպիսի գտանեմք յաւրէնս և ի մարգարէսն[ե]։

Վասն բնա՞ւ Երրորդութեանն եթէ ասին երեք աստուածք։

Զի Աստուած Հայր[զ] կատարեալ է և Որդի Աստուած բովանդակ[է] է և Սուրբ Հոգին[ը] Աստուած բաւական[թ]. այս գրեալ է իսկ[ժ] յաւրէնս և ի մարգարէս և ի Նոր կտակարանս։ Բայց եթէ ընդէ՞ր երեք աստուածք չասացին, այլ|մի աստուածութիւն[ժա], և խնդրելի է։ Զասին երեք Աստուած[ժբ], քանզի ոչ եթէ այլևայլութիւն[ժգ]։ Զասի դարձեալ և միութիւն, զի մի ի հրէական և ի Սաբելի միտսն անկանիցէք[ժդ]։ Հաւատամք յերեքանձնեայ Երրորդութիւնն, և չասեմք[ժե] երիս աստուածս, զի մի հեթանոսաբար բազմաստուածք լիցիմք[ժզ]։

Վասն զի թէ՝ ընդէ՞ր գոնեա սակաւ ինչ երեց չասի Հայր քան զՈրդի եւ քան զՍուրբ Հոգին։

Զերիցութիւն և զկրսերութիւն աւուրք և ժամանակք ընտրեն, և ուր այն չիցէ, երիցութիւնն և կրսերութիւն ոչ երևի։

ա) յայտ այն է, զոր ասէր  բ) եւ խառնակեսցուք  գ) Տեղեաց Տէր ի Տեառնէ հուր եւ ծըծումբ յերկնից ի վերայ Սոդոմայ  դ) Աբրահամու եւ  ե) ի մարգարէս  զ) Հայր Աստուած  է) բաւանդակ  ը) Հոգին Սուրբ  թ) բաւական է  ժ) այսպէս գրեալ իսկ է  ժա) չ.  ժբ) աստուածք  ժգ) այլեւայլութիւն է  ժդ) անկանիցիմք  ժե) աստուածք  ժզ) լինիցիմք

[1]) Ծննդ. Ա, 26.  [2]) Ծննդ. Ա, 27.  [3]) Ծննդ. ԺԱ, 7.  [4]) Ծննդ. ԺԹ, 24.  [5]) Ելք. Գ, 6. հմմտ. Մատթ. ԻԲ, 32 եւլն.  [6]) Ես. ԽԸ, 16.

Զի մի տեսչութիւն է՝ ընդէ՞ր ո՛չ Հոգի առաքեցաւ, այլ Որդի։

7v. *Որդի ‖ յիւրում ժամանակի առաքեցաւ և Հոգի յիւրում, ըստ այնմ եթե՝ Առաքեսցէ ձեզ Հայր զՀոգին ճշմարտութեան յանուն իմ [1]), և որ այլ ևս։ Եւ առաքելութիւն աստուածականին յայտնութիւն է, և ոչ ի տեղւոջէ ի տեղիս փոփոխումն։*

Վասն զի բէ՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին ի տնտեսութեան ժամանակի պա՞րտ է ի Կուսին եւ ի մարմնի իմանալ, յաղագս անճառ եւ առանց բաժանելոյ էութեանն։

*Թէ կամակցութեամբ՝ այո, բայց եթե անձնաւորութեամբն՝ ոչ։ Զի այսպէս զծնաւղութիւնն Հաւր և եթ իմանամք, և զծնելութիւնն Որդւոյ,|և զելողութիւնն Հոգւոյն Սրբոյ առանձին. Նոյնպէս և զառաքելութիւնն Հաւր միայնոյ, և զերկրորդ ծնունդն ի կուսէն Որդւոյ առանձին, և սրբել զարգանդն և կազմել տաճար Հոգւոյն միայնոյ է։ Քանզի ոչ եթե միապէս՝ մի երես, իցէ Սուրբ Երրորդութիւնն, այլ Գ. անձնեայ է ճշմարտութիւնն։*

Վասն զի բէ՝ մե՞ծ պարտ իցէ իմանալ զՀայր քան զՈրդի, ըստ այնմ՝ Հայր իմ մեծ է քան զիս [2])։

*Որ ասացն եթե՝ Հայր, որ առաքեաց զիս, մեծ է քան զիս, վասն ի միջոյ զկարծիս Հրէիցն բառնալոյ, եթե*
8r. *հակառակ ինչ Աստուծոյ նոցա իցէ։ ‖ Նոյնպէս թէ՝ Ես և Հայր իմ մի եմք [3])։ Եւ դարձեալ՝ Որ ետես զիս ետես զՀայր իմ [4])։ Բայց և այլ ազգ, ուր տեղիք ի միջի չիցեն՝ աւագութիւն և փոքրութիւն ի միջի ոչ երևի, և ոչ որպէս արիանոսքն ասեն, եթե վասն այնորիկ ասէ Հայր մեծ քան զինքն, զի չէ ի Հաւրէ էութենէն, որ քաւ և մի լիցի ասել. զի մեծին Հօր մեծ Որդի է, ըստ այնմ եթե՝ Մեծ է Տէր և մեծ է զօրութիւն նորա [5]). և ըստ առաքելոյն թէ՝ Ակնկալցուք յայտնութեան մեծին Աստուծոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի [6])։*

---

1) Յովհ. ԺԴ, 26. 2) Յովհ. ԺԴ, 28. 3) Յովհ. Ժ, 30. 4) Յովհ. ԺԴ, 9. 5) Սաղմ. ՃԽԶ, 5. 6) Տիտ. Բ, 133



Այլ եթե ծնաւ, ասեն, Հայր|զՈրդի, ապա եւ կարիս կրեաց. զի չէ մարթ ծնանել, եւ ո՛չ ընդ կարեաւք լինել։

*Ասասցուք, թէ այդպէս իցէ, թէ արար իսկ՝ աշխատութիւն կրեաց. քանզի չէ մարթ, եթե գործիցէ ոք, և ոչ աշխատիցէ։*

Այլ արար ասեն եւ ո՛չ աշխատեցաւ։

*Թէ այդպէս իցէ, և ծնաւ՝ ոչ կրեաց կարիս. քանզի յանդիմանեն զնոսա Գիրք, ուստի յայտ է, թէ Աստուծոյ ծնունդն ի նորին էութենէ նոյնպիսի է։ Քանզի աստուածաբար ծնաւ, և ոչ մարդկաւրէն, ժամանակաւ՝ միջնորդութեամբ և կարեաւք, որ հեռի է յԱստուծոյ. այլ յիս-*
*տակութեամբ ‖ և պարզութեամբ, որպէս յԱստուծոյ վա- 8v.*
*յելել ծնանելն. Նոյնպիսի՝ որպէս զինքն, որպէս արեգակն զլոյս և աղբիւրն զջուրն։*

Վասն զի Աստուած Որդո՞յ պարտ է իմանալ զՀայր՝ այն, զոր ասեն. Ելանեմ ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր, եւ Աստուած իմ եւ Աստուած ձեր [1])։

*Զայս ինքն իսկ մեկնէ. քանզի ոչ ասաց՝ առ Հայր մեր և առ Աստուած մեր, այլ՝ Առ Հայր իմ և առ Հայր ձեր, զի ցուցցէ, թէ այլազգ նորա, և այլ ազգունակ նոցա. Նորա բնութեամբն Հայր է, և նոցա շնորհիւ. Նոցա բնութեամբ Աստուած է, և նորա վասն տնօրէնութեանն յանձն առնելոյ՝ ըստ այնմ, զոր Դաւիթ հոգով երգէր թէ՝ Աթոռ քո, Աստուած, | յաւիտեանս յաւիտենից [2]). և զիջեալ խոնարհութեամբ ասէ. Վասն այսորիկ աւծ զքեզ Աստուած՝ Աստուած քո [3])։ Նախ ուսուցանէ, թէ Աստուած է և աթոռ յաւիտենական ունի, և ապա ճառէ զտնտեսութենէն եթե՝ Աւծ զքեզ Աստուած, Աստուածն քո. որպէս զի ասիցէ, թէ զքեզ Աստուած աւծանելոց է՝ Հայր քո, վասն տնտեսութեանն, ոչ իւղով՝ ըստ աւրինացն, այլ Հոգով Սրբով. որպէս և ինքն իսկ մարգարէիւն ասէ. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և աւծ իսկ զիս, զի աւետարանել աղքատաց առաքեաց [4])։ Արդ, ասելովն եթե՝*
*Երթամ ես առ Հայրն իմ, և առ Հայր ձեր, ‖ և Աստուած 9r.*
*իմ, և Աստուած ձեր՝ դնէ զմինն խտրոց ի միջի, եթե ոչ*

---

1) Յովհ. Ի, 17. 2) Սղմ. ԽԴ, 7. 3) Սղմ. ԽԴ, 8.
4) Ղուկ. Դ, 18. Ես. ԿԱ, 1.

որպէս իմ՝ նոյնպէս ձեր, և որպէս ձեր արարիչ՝ նոյնպէս և իմ իցէ. որպէս զի ասասցէ, թէ իմ Աստուած Հայր է ըստ ծնաւղութեանն, և ձեր ըստ մարդասիրութեանն. և վասն զի ոչ գարշեցայ զձեր կերպարանացս առնուլ, կոչեմ և ինձ վասն ձեր զՀայրն իմ Աստուած, զի և զձեզ ընդելականս արարից կոչել զնա Աստուած: Եւ այսպիսի մտաւք ամենայն խոնարհագոյնքն ասացեալք ի Տեառնէ ի մեր դէմս իմանին, և ոչ ի նորա: Ըստ այնմ, զի կամեցաւ զիւր անձնն գլուխ եկեղեցւոյ|առնել, և որպէս գլուխն ընդ ամենեցուն անդամոցն խաւսի, նոյնպէս և նա փո|խանակ եկեղեցւոյ ինքն խաւսի: Ըստ այսմ աւրինակի և առաքեալն ասէ. Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հայր փառաց [1]. և զոր Դաւիթ ասէ. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս [2]. և այն, զոր Պետրոս առաքեալն ասէ. Ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի Տէր և օծեալ զնա Աստուած արար [3]. այլ ոչ եթե արարած ցուցանէ զնա, այլ եղեալ զնա ի տնտեսութեան. քանզի դնելոյ և առնելոյ մի զաւրութիւն է յոյն լեզուի:

Վասն զի՝ երկ իցէ՞ մարթ զմի եւ նոյն Միածին եւ անդրանիկ իմանալ:

9v. Առ մարդկան բնութեամբ ոչ երբէք, բայց առ ի յԱստուծոյ և անդրանիկ ի մէջ եղբարցն. զի որ ոչն գարշեցաւ առնուլ զկերպարանս ծառայի՝ լինել մարդ, ոչ գարշեցաւ ծառայս իւր ինքեան եղբարս անուանել. և անդրանիկ նոցա կոչի, վասն նորոգ ճանապարհ նորա արարածոցն հորդելոյ: Ուստի ոմանք անդրանիկս յայս միտս առին, թէ նորոյ արարածոյս է անդրանիկ, ըստ այնմ եթե՝ Ամենայն, որ ինչ Քրիստոսի, նոր արարած է. զի որ հինն էր անցեալ, արդ նոր եղև [4]: Եւ ըստ այն աւրինակի, զի Անդրանիկ ի մեռելոց [5] կոչի, որպէս զի նախ նա յարեաւ ի մեռելոց, որում|մահ ոչ տիրէ [6]: Իսկ այլ՝ Անդրանիկ ամենայն արարածոց [7], ի պատուականութիւն առին, թէ վասն զի պատուական է, իբրև զՈրդի կոչի անդրանիկն. այլ ճշմարիտ միտաց այն է, վասն զի նախ է

[1] Եփես. Ա, 17. [2] Սաղմ. ԻԲ, 2. Համտ. Մատթ. ԻԷ, 46. Մկ. ԺԵ, 34. [3] Գործք Բ, 36. [4] Բ. Կորնթ. Ե, 17. [5] Կող. Ա, 18. [6] Համտ. Գործք Բ, 24. [7] Կող. Ա, 15.



ծնեալ ի Հաւրէ՝ կոչի անդրանիկ, որ յոյն լեզուի նախածին ասի: Անդրանիկ ի Հաւրէ՝ վասն նախածնութեանն յառաջ քան զամենայն արարածս. անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց՝ ըստ նորոյ արարածոյս, անեղբաւրն բազում եղբարս ստանալոյ. անդրանիկ ի մեռելոյ, ըստ նորոգ ճանապարհ յարութեան մեռելոց հորդելոյ. որպէս և ասէ իսկ առաքեալն. Զի եղիցի || ինքն ամենայնի յա- 10r.
ռաջեալ [1]. և եղիցի՝ գոցի իմանալի է: Եւ որ անդրանիկն է՝ առաւել այնու զատի յարարածոց, զի Միածին է:

Եթէ զՀա՞յր միայն Աստուած ճշմարիտ է իմանալ՝ այնու, զոր ինքն Տէրն ասէ. Տո՛ւր նոցա, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած [2]:

Որպէս լուաք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, լուիցուք և զմիւսն, եթե և՝ Զոր առաքեր զՅիսուս Քրիստոս [3]: Այլ՝ զՅիսուս Քրիստոսն, ասեն, և ոչ զԱստուած, կամ զՏէր Յիսուս Քրիստոս: Նախ զայն ասասցուք, թէ ամենայն, որ ոչ է ճշմարիտ՝ նախ սուտ է. արդ, յորժամ գտանիցուք ի Գիրս սուրբս զՈրդի Աստուած| քարոզեալ, մի՞թէ սուտ Աստուած պարտիմք կարծել, և ոչ ճշմարիտ: Նախ՝ Մովսէս ասէ, եթե Գ. արք յայտնեցան Աբրահամու, և զի մի ի նոցանէ դատաւոր ամենայն երկրի անուանէր, և թէ երևեցաւ հրեշտակն Տեառն Մովսիսի ի մորենոջն ի բոցոյ հրոյ, և իբրև մերձեցաւ տեսանել, կոչեաց զնա Տէր ի միջոյ մորենոյն, և յետ սակաւ միոյ ասէ. Ես եմ Աստուած Աբրահամու [4]. և արդ, չի՞ցէ Աստուած ճշմարիտ, և Աստուած Սահակայ անուն ինչ սուտ իցէ, և Աստուած Յակովբայ պիտակ ինչ յորջորջումն: Եւ Ես || այի յայտնագոյն ասէ. Ահա կոյս յղասցի 10v.
և ծնցի զէմմանուէլ [5], զոր հրեշտակն թարգմանեաց՝ ընդ մեզ Աստուած [6]: Եւ դարձեալ եթե՝ Մանուկ ծնաւ ձեզ, և կոչի անուն նորա հրեշտակ մեծի խորհրդոց, սքանչելի, Աստուած հզաւր [7]: Եւ բարուք ասէ. Սա է Աստուած մեր, ընդ որում ոչ համարձակեսցի, այլ յետ այսորիկ յերկրի երևեսցի և ընդ մարդկան շրջեսցի: Եւ աւետարանիչն Յովհաննէս. Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ

[1] Կող. Ա, 18. [2] Յովհ. ԺԷ, 3. [3] Յովհ. ԺԷ, 3. [4] Ելք Գ, 6. [5] Ես. Է, 14 [6] Մատթ. Ա, 23. [7] Ես. Թ, 6.

Աստուած, և Աստուած էր Բանն [1]։ Եւ առաքեալ ասէ․ Յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենայնի, Աստուած օրհնեալ յաւիտեանս [2]. և դարձեալ․ Ակն ունիմք երանելի յուսոյն և յայտնութեան մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի [3]։ Տեսանես, զի Աստուած նախապետաց է, և Աստուած մեծ և Աստուած հզաւր քարոզի Որդի ի Գրոց սրբոց։ Արդ, ասելն եթէ՝ Ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ, ոչ ի զրկումն ինչ աստուածութեան Որդւոյ է․ քանզի և ի Կաթողիկէին ասէ․ Սա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք [4]. այլ վասն անջրպետ ի ներքս արկանելոյ ընդ ինքն և ընդ անուանսն։ Եւ զիա՞րդ չիցէ Աստուած, որ ասէն․ Ես եմ
11r. ճշմարտութիւն և կեանք [5]. ապաքէն ի ճշմարտութենէ || անտի ճշմարիտն իցէ, որպէս ի կենդանութենէ անտի կեանք․ և ձայր գալստեան սպասեցուք, եթէ ոչ Որդւոյ և մեծին Աստուծոյ․ և մեծ Աստուած Որդի է, և Հզաւրին Որդի, Աստուած հզաւր։

**Վասն զի թէ ընդէ՞ր ... հր(եշտակ)աց աթոռք, տէ-րութիւն եւ պետութիւն եւ սերովբէք եւ քերովբէք ասիցին։**

Այլ և այլ անուանքն ոչ բնութեան են նշանակիչք, այլ պատուոյ և իշխանութեանց․ բնութիւն մի է ամենեցուն և պատիւք ըստ իւրաքանչիւր ար(ժանաւոր)ութեան ունել ընդ ինքեանս յիւրաքանչիւր|գնոտի, որչափ կամք հրամայեցին Հրամանատուին։ Բայց խնդիր վասն քրիստոնէիցն և աթոռոցն․ զի հնումն որչափ և աղաւթսք մատուցանէր, ասէր․ Որ նստիդ ի քէրովբէս [6], նայեաց և լո՛ւր։ Եւ առաքեալն աթոռս կոչէ, բայց եթէ զքերովբէիցն ասէ և եթէ զայլոց կարգաց, չառնէ յայտ։ Արդ, ոմանք ասեն, թէ վասն այսորիկ կոչին աթոռք, զի ի սոսա առաւել հանգուցեալ են կամք Աստուծոյ, և որչափ կամաւորք են, այնչափ պատուականագոյնք են․
11v. ուստի և առաքելոյն || ի թիւ արկեալ զկարգ վերնոյն, նախ ի սոցանէ սկիզբն առնէ․ Եթէ աթոռք, ասէ, եթէ պետութիւնք [7], և զայլն ևս մի ըստ միոջէ։

---

1) Յովհ. Ա, 1. 2) Հռովմ. Թ, 5. 3) Տիտ. Բ, 13. 4) Ա. Յովհ. Ե, 20. 5) Յովհ. ԺԴ. 6. 6) Ես. ԼԵ, 16. Դ. Թագ. ԺԹ, 15. 7) Կող. Ա, 16.



Արդ, հրեշտակք ասի վասն առաքելութեանն, և պետութիւնք և իշխանութիւնք և տէրութիւնք՝ վասն հրամանաց յաւրինաւորին իշխել խոնարհագունիցն քան զինքեանս․ և զաւրութիւնք՝ յաղագս ըստ իւրաքանչիւր բաւական լինելոյ սպասաւորութեանն․ և սերովբէք սրբասացք, որք հրեղէն լեզուք թարգմանին յեբրայեցոցն։ Բայց զքերովբէսն ոմանք կեն|դանիս ասեն և ոմանք ոչ կենդանիս, որպէս զքերովբէսն, որ յԱստուծոյ կարգեալ շր(ջ)էր շուրջ զդրախտաւն, չէր զաւրութիւն ինչ կենդանի, այլ տեսիլ հրոյ առաջաւք՝ զարհուրեցուցիչ Ադամայ, առ ի չժտել հպել ի դրախտն։ Իսկ որ կենդանիսն ասեն զքերոբէսն, զաթոռսն համարեն զնոսա, զորոց երանելին առաքեալն ճառէ․ ուստի և կենդանիս պարտ է իմանալ զքերովբէսն։

**Վասն զի, թէ առաջին լոյսն, որ յառաջնում աւուրն արար՝ իցէ՞ յարեգակն եւ ի լուսին եւ յաստեղս։**

Հարքն զնոյն լոյս ասեն, որպէս զի թէ յաւուր չոր- 12r.
րորդի զամենայն արար և ժողովեալ արկ ի նոսա զցան և զտարած լոյսն․ իսկ այլք ասեն, թէ զհուր արարեալ յաւուրն առաջնում և զայն կոչեաց լոյս։

*Գրիգորի Սքանչելագործի, եպիսկոպոսի Նէոյկեսարու՝ Յաղագս հաւատոյ ի սուրբ Երրորդութիւնն, առ այնոսիկ, որք զխոտորութիւն ասացին ջանին հայցեն զննել․*

Այլ անխուզելի ամենևիմբ ծնելութիւն Որդւոյ և ելաւղութիւն Հոգւոյն ի մի և նոյն պատճառէ, և անհետազաւտելի,|որպէս և անսկզբնութիւն կամ պատճառութիւն նոյն ինքն Հաւր։ Քանզի արտաքո համման ամենայն իրաւք ունի զորպիսութիւն այն, որ արտաքո էիցս ունի զընութիւն եղելոյն, և բնաւի ոչինչ յայսցանէ, զոր ի ձեռն առեալ և մերձեցեալ հանդիպութեան, որպէս թէ անըմբռնելին ընդ այնմ ընդհարցի և հաւաստի առ ըմբռնումն եկեսցէ մերոցս, որ ի ձեռն հաւատոյ միայն բնաւորեալ է գալ դիւրաւ ծանաւթանալ բարեպաշտիցս․ բայց թէ մտադիւրութեամբ զմիոյն չընկալեալ յաւրինակէն՝ զայլն
ի բաց ընկեցցիս ||․ Արդ, խորհուրդ և բան ի մէջ եդի 12v.
քեզ ի մտաց, ապաքէն և աւրինակ իմն․ սոքա առանձնա-

ցեալք, և սակայն ոչ եղբարք միմեանց. և ոչ դարձեալ աւտարոտիւք ի միմեանց, և մի են բոլանդակ հոգի. և տես սակայն երկոցունց դոցա ոչ որպէս ի միջէ դունել. քանզի ծննդեամբ անա մտաց բանդ արտաբերի և ի ձեռն հնչման գործոցդ տառիւք ձևացեալ, և լսելեաց անցցէ իսկ խորհուրդդ նոյն մտաց՝ առանց ծննդեան, այլ իմն գունակն բացածագեալ ինքնանա, և աներևութաբար յա|տուկ ներգործութեամբ իրագործեալ առ տեսութիւնն։ Գայցէ այսպիսի ինչ և անդ ընդ միտ ածել, ոչ կարի շատ արժանոյն վկայեսցիս, ծնելութիւն և ելօղութիւն ի միջէ երկուց անձանց, որով ծնիցեալն յինքենէ հարըստին հայցէ ծնանիլն. Բանն մարմին եղեալ փրկագործել. իսկ բխեցեալն, և ոչ ծնիցեալն, ոչ ծնունդ յինէ ծնցի, այլ վերստին ծնցի զիս հոգովացուցանել, և յինէ վերստին բխեսցի՝ ի միւսն արբուցանել կենդանութեան առոգս։ Արդ, յատուկ սոցա ինքնութիւնք և յատուկ ի միոյ

13r. պատճառէ յառաջտուութիւնք, || յատուկ և առանձնակի այդպիսի ներգործութիւնք ըստ այդոցիկ, և այդպէս քեզ հաւատարմացին յատուկ և անշփոթ անձինք, ըստ ինքեանցն կատարեալք և աներկբաանալիք՝ Որդի և Սուրբ Հոգի։

Առ. այս՝ Որք երիցութիւն բաց ճա.խ(ակարգ)ութեան Որդոյ առ Հոգի կարծեն։

Իսկ երիցութեան բան առ Որդի և առ Հոգի և ոչ մի առդատեսցի իրաւացեալ. զի ոչ երբէք Որդի առանց Հոգոյ, և ոչ Հոգի առանց Որդւոյ ի Հաւրէ, ոչ երբէք Հայր առանց Որդւոյ իւրոյ և Սուրբ Հոգւոյն. քանզի ոչ անկատար Երրորդութեան|թուոյ երբէք Աստուածութեանն բնութիւնն, որպէս ոչ կատարեալ միտք առանց խորհրդոյ և բանի։ Իսկ դասաւորութիւն սուրբ և կենդանարար անուանցդ, որ ըստ մկրտեցէք՝ յանուն Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն. ըստ նախապատճառութեան ապաքէն իրաւ արդար արկեր զՀայր անուն նախաձայնել. իսկ Որդի ոչ երիցութեամբ ըստ Հաւրա ասիցէ, այլ ոչ դասեցաւ ըստ Հոգւոյ, և երրեակ, զի մի՛ այնու յերկոցունց՝ ի Հաւրէ և ի Հոգւոյն, կարծիցի ծնիցեալ Որդի, զհետին նոցա դասելով զդասս, որ ոչն է յերկոցունց ծնիցեալ, այլ

13v. || զկնի միայն ծնաւղին կարգաւորէր՝ զմինն Միածին առնմին դասել զՈրդի. իսկ զՀոգոյն անուն իբրու կնիք մի-



ութեան ստանօր ի վերայ բերեալ՝ սոցա երրորդ լցցէ զթիւ։ Ցաղագս այդորիկ նախ Հայր և երկրորդ Որդի և երրորդ Հոգի դասեցաւ։ Այսպէս զսոսա ի միասին փառաւորիւ դասու իրաւացուցեալ. այլ ըստ միաբուն զօրութեան սուրբս այս ամենակատար Երրեակս բազում անգամ ի սուրբ Գիրս իբրու կարակնահատ ինչ բոլոր ըստ ամենայն դիմաց ի միմեանս նախադասիցի։ Ապա ուրեմն| Երրորդութիւն բնութեան Աստուածութեանն՝ մի լոյս երեքանձնեայ, այսպէս կերպարանեալ. իսկ միութիւնս անըսկզբնութիւն և մշտնջենաւորութիւն անփոփոխ միասնական թագաւորութեանն երից միաբուն անձանց։

Մի է Աստուած*, Հայր կենդանի Բանին, էակն իմաստութեան և զաւրութիւն կերպարանին իւրոյ. կատարեալ ի[ա] կատարելոյ ծնաւղ, Հայր Որդւոյ Միածնի։ Եւ մի Տէր ի միայնոյ[բ], Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր Աստուածութեանն. Բան գործաւոր, իմաստութիւն պարառական՝ ամենեցուն ընդ լինելութեան անկելոցս[գ] և զաւրութեան || բոլորիցս[դ] արարաւղ Որդի ճշմարիտ ճշմարտին, անապական՝ անապականին, անմահ՝ անմահին, մշտնջենաւոր[ե]։ Մի Հոգի Սուրբ՝ Աստուծոյ զէութիւնն ունելով և Որդովն երևեալ յայտնապէս մարդկան[զ], կատարեալ կատարելոյ, պատճառ կենդանեաց, սրբութեան շնորհաւղ, որով ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդի Աստուած[է], որով ամենայնք։ Երրորդութիւն կատարեալ՝ փառաւք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ, անբաժանելի և անաւտարելի. ոչ ստեղծական ինչ և ոչ|ծառայական ինչ յԵրրորդութեանն, և կամ ի ներքս ածական, որպէս թէ յառաջագոյն ոչ[ը], զկնի ի ներքս ածաւ։ Զի ոչ երբէք նուազեաց Որդի ի Հաւրէ, և ոչ ի Հօրէ և յՈրդւոյ Հոգին Սուրբ. այլ անփոփոխելի և անայլայլելի Երրորդութիւն[թ] միշտ։ 14r.

## Սահմանք հաւատոյ ՅԺԸ. հցն**։

Այսպէս խոստովանիմք և հաւատամք[ժ] և երկրպա-

---

* Հմմտ. այս հատուածը մատյն՝ Գ. ձեռ. 172, թ. 351 v.

** Հմմտ. նոյն ձեռագիր. թ. 352 v. ՅԺԸ. սրբոց հարցն։

ա) չ. բ) Տէր միայնոյ գ) ընդ լինելութեամբ անգելոցս դ) բոլոր էիցս ե) մշտնջենաւոր մշտնջենաւորին զ) երևեալ մարդկան յայտնապէս է) Աստուծոյ ը) չէք թ) Երրորդութիւնն ժ) հաւատամք և խոստովանիմք

զեմք սուրբ Երրորդութեանն ի միաւորութիւն անդ՝[ա] առանց խառնակութեան, նոյնպէս և զսուրբ Միա-
14v. ւորութիւնն յերրորդութիւն անդ[բ], անհատաբար և անսկզբնաբար և անբաժանաբար։ Քանզի որպէս || անխառն[գ] է սուրբ Երրորդութիւնն, այսպէս անբաժանելի[դ]. անխառնելի[ե] յաղագս իւրաքանչիւր յատուկ առանձնաւորութեանցն, իսկ անբաժանելի՝ վասն զի ամենակալ է[զ] Հայր, ամենակալ է Որդի, ամենակալ է[է] Սուրբ Հոգին՝ անորոշաբար, մշտնջենաւոր[ը]։ Քանզի երեք անձնաւորութիւնք մի են ի սուրբ Երրորդութեանն՝ անարարք[թ], անխառնք, անհատք, անբաժանելիք, անսկզբունք, մշտնջենաւորք, համագոյականք, անհասանելիք. որպէս և գրեալ է. Մեզ մի է Աստուած՝ Հայր, յորմէ ամենայն[1]. նմա փառք[ժ]։

## Սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի՝ || յիմաստապատումն քաղցրունոյ ... պատումն ճառիցն. խոստովանութիւն ի սուրբ Երրորդութիւնն*:

Հաւատամք ի մին իսկութիւն անձին[ժա], յէութիւն[ժբ] անսկիզբն, մշտնջենաւորութիւն անսահման, ի[ժգ] ճշմարտութիւնն անփոփոխ, ի կեանս կեցուցիչ[ժդ] ամենայն կենդանեաց, ի Հայրն և յԱրարիչն[ժե], ի հաստիչն Աստուած, ի մինն, ի բարերարն բնութեամբ[ժզ] և կամաւք, ի յանպատճառն[ժէ], որ ամենեցուն պատճառն[ժը] է՝ աներևութից և աներևելեացս[ժթ], Որդւոյ և Հոգւոյ՝ ծննդեամբ և բխմամբ։ Իսկին անծնի զէն անսկիզբն ծնեալ, մշտնջե-
15r. նաւորութեանն անսահմանի || զճշմարտութիւնն անփոփոխ ծնեալ, կենացն կենարար զկեանսն[իա] կենսատու ծնեալ, լուսոյն կենդանւոյն[ա] զկենդանի լոյսն լուսատու[բ] ծնեալ, բարւոյն զբարերարն ծնեալ[գ], Արարօղին զարարիչն[դ], այլ այլոց ամենեցուն՝ աներևութիցն հոգևորաց[ե] և երևելեացս երկրաւորացս[զ], արարչութեամբ լիապէս[է] երկնից և երկնաւորացն, երկրի և երկրաւորացս[ը], ջուրց և ամենայն որ է[թ] ի նոսա։ Կատարեալն[ժ], որ զամենայն լնու և ինքն ոչ թերանա. ոչ[ժա] նորոգի, զի ոչ հնանա. ոչ[ժա] լնու, զի ոչ պակասի. զի ինքն նոյն է ի լիութեան իւրում և յանբաւ|ութեան, և չիք ուստեք եկամուտ կամ յաւելուած յայն յանբաւ և յանսահման, յանհաս[ժբ] և ի կատարեալ բարերարութիւնն, որում ոչ բաւեն կարծիք մտաց և ոչ ընթացք հրեշտակաց. զի հրեշտակք իբրև զմիտս մարդոյ[ժգ] երագունք են, ուր ակնարկեն կամք նորա, և չեն լեալ բաւական, յորմէ հետէ արարեալ[ժդ] են և հաստեալ, թէ յերկնից ի վեր[ժե] ցո՞ր[ժզ] վայր է Տէրն՝ Հայրն և Արարիչն[ժէ], կամ յայնկոյս ծովուն ցո՞րբ[ժը], կամ երկրիս ներքոյ ցո՞ր[ժթ] վայր։ Զի որպէս երկինքս այս ի հրամանէ[ի] || նորա հաստատեալ կան, առանց որմոց և[իա] 15v.
սեանց, այսպէս և երկիրս ըստ հրամանի նորա հաստատեալ կա առանց զաւդուածոյ[իբ] օգնականութեան՝ լերամբ և ծովաւք[իգ], հանդերձ գետաւք և աղբերբք, և չիք[իդ] ինչ յարարածոց քան զերկին և[իե] զերկիր արտաքոյ, բայց ինքնութիւն տէրութեանն[իզ], որ է յիստակ և պարզ ամենակալ զօրութիւնն[իէ], որ աւէն[իը] և լինի, կամին և հաստատի[իթ]։ Ցանմահութեան ամենայնի ինքն է կանուխ, գիտութեան անվրէպ, անզեղջ իմաստութիւն[լ]. ինքն կեանք է և կեցուցիչ, անբաւ է և անհաս և ան-



* Տես. Սրբոյ Հօրն մերոյ, Երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի՝ Յաճախապատում ճառք լուսաւորք. Ս. Էջմիածին, 1894. եր. 10.

ա) անդր բ) յերրորդութեան անդր գ) անխառնակելի դ) այսպէս եւ անբաժանելի է ե) անխառնակելի զ) չ. է) է եւ ը) մշտնջենաւոր թ) անարարք ժ) եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն. նմա փառք, ամէն։ ժա) Մի է ինքնութիւն գոյութեանն, որ իւր ինքնութիւնն յիւրմէ գոյութենէ անտի. իսկութիւնն անծին ժբ) էութիւնն ժգ) չ. ժդ) կեանքն կեցուցիչք ժե) Հայրն եւ Արարիչ ժզ) մին բարերարութեամբն ժէ) անպատճառն ժը) պատճառ ժթ) աներեւութիցն եւ երեւելեաց ի) եւ Որդւոյ իա) կենարարաց զկեանս

1) Ա. Կորնթ. Ը, 6.

ա) կենդանւոյ բ) կուսածին գ) չ. բարւոյն զբարերարն ծնեալ դ) Արարիչին զարարիչն ծնեալ ե) են հոգեւորաց զ) տարրաւորաց է) լեալ պատճառ ը) երկնաւորաց թ) չ. ժ) լի կատարեալն ժա) եւ ոչ ժբ) եւ յանհաս ժգ) մարդկան ժդ) եղեալ ժե) եւ ի վեր ժզ) յո՞ր ժէ) Տէրն եւ Արարիչն ժը) կամ թէ յայնկոյս ծովուց ծ՞րբ ժթ) յո՞ր ի) ի հրամանէ իա) եւ առանց իբ) սեանց եւ առանց զանդուածոյ իգ) զետովք, եւ չիք իդ) զերկիրս եւ քան իե) տէրութեան իզ) զօրութիւն իէ) ասէ իը) կամի եւ հաստատէ լ) հաստատէն ի վերոյ քան զերկինս երկնից, եւ ի ներքոյ քան զերկիր, եւ արտաքոյ քան զծով։ Ամենայնի ինքն անբաւ է, կանխագիտութիւն եւ անզեղջ իմաստութիւն.

ճառ[ա]. սէր է՝ կենդանի եր|անութեամբ[բ] լցեալ։ Ինքն է լոյս[գ] կենդանի, մտաւոր, անեղ, անմատոյց. ամենայնիւ[դ] ինքն գթութիւն է՝ խնամօղ, ինքն[ե] ողորմութիւն է՝ բարերար շնորհաւքն. ամենայնիւ ինքն երկայնմտութիւն[զ] է՝ դարմանելով, ներելով և խնայելով. ամենայնիւ[է] ինքն սրբութիւն է՝ ամբիծ, անարատ, ազատելով[ը] և լուսաւորելով. ամենայնիւ ինքն ճշմարտութիւն է՝ անփոփոխն, յանդիմանելով խրատու սաստկութեամբն, հատուցմամբն, բարկութեամբ[թ] և սրտմտութեամբ իրաւանց[ժ], անշէջ հրով։ Եւ պսակելով փառօք ամենաշահ կեցուցիչ, գըրգուանքն ժառանգելով ի հանգիստն խնա || 16r. մոյ սուրբ սիրոյ նորա[ժա]. կենդանի երանութեամբքն ի բարութիւնս վայելեցուցանելոյ հասեալ՝ պսակացն առաքինութեամբ ի նորա շնորհաց գրգանսն[ժբ]։ Զի մեծութիւնքն անքննինք անսկիզբն էութեանն[ժգ] արտաքս է քան զարարածս՝ յանսահմանութեան, յանբաւութեան[ժդ], և դարմանաւք անսչութեամբ[ժե] լի են ամենայն արարածք՝ ըստ Գրոցն[ժզ]. Աստուած մեր[ժէ] յերկինս և յերկրի, ի ծով և յամենայն խորս[1], որ գիտէ[ժը] զխորհուրդս սրտից եւ քննէ զերիկամունս, և առաջնորդէ հոգևոր աւրինօք՝ խրատուն կենար(ար)աւ, յաւթեանս փրկութեան կենաց[ժթ], յանմոռաց ուրախութիւնս|և յանդադար խնդութիւնս[ի], յանճառ և յանպատում ժառանգութեան արքայութեան[իա] երկնից։ Այս[իբ] ամենայն արուեստք ինքնաբոյս[իգ] անսահման մըշտընջենաւորութեանն՝ կեցուցիչ արուեստիւք սիրով դարմանիչ արարածոց, ի միոյ ինքնութեանն բարերար արար-

ա) եւ ամենայնի ինքն կեանքն կեցուցիչ, եւ ամենայն ինքն անբաւն եւ անճառն եւ անհասն բ) երանութեամբքն գ) եւ ամենայն ինքն լոյս է դ) եւ ամենայն ե) կենդանի խնամօքն, եւ ամենայն ինքն զ) ընդ երկայնմտութիւն է) դարմանօքն կերակրելովն, եւ ամենայն ը) եւ անարատ, ազատելով թ) լուսաւորելովն, խրատուն սաստկութեան, հատուցմամբ բարկութեան ժ) չ. ժա) փառօք, ժամանեցուցանելովն ի հանգիստն հանգստարար, ի խնամս սուրբ սիրոյն. ժբ) երանութեամբքն պսակօքն առաքինութեան ի նորա շնորհացն գրգանս. ժգ) զի մեծութիւն անքննին անսկզբնութեանն ժդ) եւ յանբաւութեան ժե) եւ անսչութեամբ իւրով ժզ) ըստ բանին Գրոց թէ, ժէ) ի վեր ժը) յերկրի որ գիտէ ժթ) եւ կենաց ի) խնդութիւնն իա) յանպատում արքայութիւնդ իբ) Արդ այս իգ) ինքնաբոյսք

[1]) Հմմտ. Սաղմ. ՃԼԴ, 6.



չութեան[ա], որ անբաւն և անքննին, զի ոչ[բ] կարեն ծածկել[գ] միտք և ոչ քննել խորհուրդք, որում ոչ բաւէ իմաստութեան հոգի, և զչգաւորաց[դ], և ոչ գիտութիւն որդոց մարդկան՝ զմեծութիւն[ե] Հաւր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն[զ], այլ ի գործոց անտի իւրոց և յերախտեաց միայն գիտի և ճանաչի, || 16v. և անուանի Հայրն և բարերար Տէրն՝ հաստիչն[է] ամենայն երախտաւոր ար(ու)եստօքն[ը] իւրովք։ Զի որ կատարեալքն են՝ երախտեացն ամենայն[թ] կարեն հասու լինել. զի որպէս մի է արև, և լոյս և ջերմութիւն իւր, և մի արև ասին[ժ] և ոչ երեք[ժա] արեգ. և որպէս հուրն և լոյսն և տապ իւր[ժբ] մի հուր ասի, և ոչ երեք[ժա] հուրք. և որպէս աղբիւրն և գետն և ջուրն մի ջուր ասին[ժ], և ոչ երեք[ժա] ջուրք. և որպէս հոգի և[ժգ] միտք և բան մի հոգի ասին, և ոչ գ.[ժա] հոգիք. այլ հոգի ասի կենդանութիւն[ժդ] և միտք ասին իմաստութիւն[ժե] և բան խաւսողութիւն՝ միոյ հոգւոյ է[ժզ]. այսպէս և[ժէ] Հայր անծին իսկութեամբ, անսկիզբն էութեամբ. Հայր վասն մըշտ Որդւոյ[ժը], որ ընդ նմա, և իսկ Հոգւոյն, որ ի նմանէն[ժթ]։ Իսկ արդ, է՞ր երբէք արեգակն առանց լուսոյն իւրոյ և ջերմութեանն[ի], կամ է՞ր երբէք արդեաւք հուր առանց լուսոյ և տապոյ իւրոյ[իա]. կամ է՞ր երբէք արդեաւք ջուր առանց բխման[իբ] և խոնաւութեան իւրոյ, կամ է՞ր երբէք հոգի[իգ] առանց բանի և մտաց[իդ]։ Այսպէս և ոչ երբէք Հայր առանց Որդւոյ և Հոգւոյ[իե]։

Կատարեալ Հայր[իզ] անձամբ՝ զաւրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ, || 17r. բարերարութեամբ[իէ] և զամենայն զիւրն անձին[իը] իսկութեամբ ունի։ Կատարեալ և Որդի անձամբ, զօրութեամբ[իթ], գիտութեամբ,

ա) մշտնջենաւորութեան դարմանիք են արարածոց, ի միոյ ինքնութեանն, բարերար արարչութեանն, կեցուցիչ արուեստիւք իւրովք բ) եւ ոչ գ) կարծել դ) հոգեւոր զօրացն ե) մեծութեանն զ) Հոգւոյն Սրբոյ է) եւ բարերարն եւ հաստիչն ը) արուեստիւքն թ) նորա միայն ժ) ասի ժա) երեք ժբ) եւ տապն ժգ) չ. ժդ) կենդանութիւնս ժե) իմաստութիւնս ժզ) եւ բան ասի խօսողութիւնս միոյ հոգւոյն ժէ) այսպէս եւ ժը) Որդւոյն ժթ) որ ընդ նմա ի) ջերմութեան իա) լուսոյն իւրոյ եւ կամ տապոյ իբ) երբէք աղբիւր առանց բղխման իւրոյ իգ) հոգին իդ) առանց մտաց իե) Այնպէս՝ չէր Հայր առանց Որդւոյ իւրոյ եւ Հոգւոյն Սրբոյ իզ) Հայրն իէ) եւ բարերարութեամբ իը) անծին իթ) եւ զօրութեամբ

իմաստութեամբ[ա], արարչութեամբ, բարեգթութեամբ[բ], և և զամենայն զիւրն անսկիզբն էութեամբ ունի։ Նոյնպէս և Հոգին Սուրբ կատարեալ անձամբ, զօրութեամբ, գիտութեամբ, իմաստութեամբ[գ], արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն զիւրն անսկիզբն մշտնջենաւորութեամբ ունի։ Մի բնութիւն է նոցա և մի անփոփոխ իսկութիւն, մի կամք, մի հաւանութիւն, բարերարութիւն. մի արարչութիւն[դ], մի աստուածութիւն, մի[ե] զաւրութիւն, և չիք ուստեք եկամուտ կամ յաւելուած կամ զաւղած՝ այն անսկիզբն|Երրորդութիւնն[զ], այլ նա է աղբիւր և ի նմանէ բաշխին[է] ընդ ամենայն արարածս խնամք արարչութեան նորա[ը], որ յաւրինիչն է[թ] և կազմիչ, և դարմանք բարերարութեան նորա՝ իւրով[ժ] դարմանաւէր խնամաւքն, որ տածէն և սնուցանէն[ժա] և առաջնորդէ ի կատարումն չափոց հասակի[ժբ]։ Այս աստ առ երևելի պէտսս[ժգ] և առ աներևոյթսն առաջնորդէ վարդապետութեամբ իւրով, և աւգնէ շնորհաւք իւրաւք արքայութեանն[ժդ] երկնից. անմահն յանուշակն, յանփոփոխն, ի լին[ժե] ամենայն երանութեամբք՝ հաւատացելոց իւրոց և ապաւինելոց։ ||

17v.

Այսպիսի[ժզ] ուսումն և հաւատք վաել է[ժէ] ճշմարիտ հաւատացելոց ի Քրիստոս[ժը]։

### Երանելոյն Կիւրղի, եպիսկոպոսի Երուսաղեմացոյ, ի բանէն. Բազում մասամբ եւ բազում աւրինակաւք*[1]):

Արդ, Աստուած ճշմարիտ Որդի յանձին իւրում ի ներքս ունի զՀայր. ոչ եթէ Հայր փոփոխեցաւ[ժթ], և ոչ եթէ[ի] Հայր եկն և մարդկութիւն[իա] զգեցաւ, այլ Որդի։ Այլս զագատաբերան[իբ] յայտնապէս ասացից[իգ]. ոչ եթէ Հայր եկն և չարչարեցաւ[իդ], այլ Որդի. Հայր[իե] առաքեաց

*) Տես. Երանելւոյն Կիւրղի, Երուսաղեմայ Հայրապետի, Կոչումն ընծայութեան. Վիեննա, 1832. եր. 192.

ա) եւ իմաստութեամբ բ) եւ բարերարութեամբ գ) եւ իմաստութեամբ դ) իսկութիւն եւ մի արարչութիւն ե) եւ մի զ) եկամուտ եւ զօղուած կամ յաւելուած յանսկիզբն Երրորդութիւնն է) է բաժանումն ը) արարչութեանն թ) յօրինիչ ժ) իւրովք ժա) որ տայ եւ դարմանէ եւ սնուցանէ ժբ) չափոյ հասակին ժգ) պէտս ժդ) իւրովք յարքայութիւնն ժե) երկնից՝ յանփոփոխ եւ լին ժզ) յայսպիսի ժէ) վայել են ժը) չ. ժթ) ի Հայր փոխեցաւ ի) չ. իա) եկն զմարդկութիւն իբ) այլ ազատաբերան իգ) բաց ասացի իդ) չարչարեցաւ վասն մեր իե) այլ Հայր

[1]) Եբր. Ա, 1.



զՈրդի վասն մեր, եկն և չարչարեցաւ։ Եւ մի զայս ասասցուք, եթէ էր|երբեմն, զի չէր Որդի, և մի Որդի է Հաւրութեանն՝ երբէք յանձն առցուք[ա]. ճանապարհ զարքունի գնասցուք և մի խոտորեսցուք՝ մի յաջ և մի յահեակ.[բ] և մի կարել[գ] մեծարանս դնել Որդոյ՝ Հայր անուանել[դ] զնա. մի ինչ յարարածոց անտի համարել կարծեսցես[ե] դու զՈրդի, այլ մի Հայր՝ միով Որդւով երկրպագեալ, և ոչ բաժանեալ[զ]։ Մի որդի պատուեսցի յառաջ քան զյաւիտեանս՝ ընդ աջմէ Հաւր նստեալ։ Դարձեալ նստելն ոչ ժամանակաւք յետ չարչարանացն[է] յառաջ ձգութեամբ մատուցեալ, այլ մշտնջեն || աւորութեամբ 18r. նստեալ[ը]։ Եւ՝ Որ ետես զՈրդի՝[թ]. ետես զՀայր[ժ] [1]). զի նման է Որդի յամենայն[ժա] ծնչին իւրոյ՝ կեանք ի կենաց ծնեալ[ժբ] և լոյս ի լուսոյ, զօրութիւն[ժգ] ի զօրութենէ, Աստուած յԱստուծոյ[ժդ], և առանց փոփոխման են Աստուածութեան կերպարանք[ժե] յՈրդի. և որ արժանի եղև տեսանել զՈրդոյն աստուածութիւնն՝ գոյ[ժզ] նա և վայելչութիւն[ժէ] ծնողին, որպէս ինքն իսկ ասաց[ժը]. Որ ետես զիս՝ ետես[ժթ] զՀայրիմ[1]։ Արդ համառօտ ասացից. մի մեկնեսցուք, մի հակառակեսցուք[ի], մի աւտարաբար երկհամարեսցուք[իա] զՈրդի ի Հօրէ, և ոչ ընկալցուք զայն, զոր ասեն[իբ], եթէ Հայր երբեմն Հայր է[իգ] և երբեմն Որդի. զի անօրէնութիւն մեծ|է այս[իդ]։ Այլ Հայր ծնաւ զՈրդի և ինքն կա և մնա Հայր, ոչ այլ[իե] ինչ կերպարանս փոփոխեալ։ Իմաստութիւն ծնաւ, ոչ եթէ[իզ] առանց իմաստութեան եղև. զօրութիւն ծնաւ, ոչ[իէ] եթէ ինքն տկարացաւ, և ոչ կորոյս, նաև

ա) եւ մի երբէք որդեհայրութիւն յանձն առնուցուք բ) մի յաջ խոտորեսցուք եւ մի յահեակ գ) առ ի կարծել մեզ դ) անուանեսցուք ե) համարեալ կարծիցես զ) երկրպագութիւն ընկալցի, եւ մի բաժանեսցի. է) նստելն ոչ ժամանակաւ յետ չարչարանացն դարձեալ. ը) ասացեալ թ) զՈրդին ժ) ետես նա զՀայրն ժա) յամենայնի ժբ) ծնեալ ի կենաց ժգ) եւ զօրութիւն ժդ) Աստուած յԱստուծոյ ժե) եւ Աստուածութեան կերպարանքն ժզ) գայ ժէ) ի վայելչութիւն ժը) ծնողին։ Ո՛չ է իմ բանդ, այլ միածնին. Այսչափ ժամանակս ընդ ձեզ եղէ, ասէ, եւ ոչ կարացեր ճանաչել զիս Փիլիպպէ. ժթ) ետես նաև ի) եւ մի խառնակեսցուք իա) եւ մի օտար երբէք համարեսցուք իբ) եւ մի ընդունիր զայն որ ասենն թէ իգ) էր իդ) զի օտարութիւն մեծ է այս եւ ամբարշտութիւն, եւ ոչ եկեղեցւոյ ուղղոյ վարդապետութիւն։ իե) ոչինչ յայլ իզ) եւ ոչ եթէ ինքն իէ) եւ ոչ

[1]) Յովհ. ԺԴ, 9.

ոչինչ նուազեցաւ[ա], և ոչ այլայլեալ, և ոչ պակասութիւն ինչ գո ի ծննդեանն անդ։[բ] Կատարեալ է զոր ծնաւն, կատարեալ[գ] է որ ծնաւն. Աստուած է զոր ծնաւն, Աստուած է որ ծնաւն.[դ], և Աստուած ամենայնի. այլ Աստուած զՀայր[ե] զրէ. ոչ եթէ ամօթ ինչ համարի, զի ասէ[զ]. Երթամ ես առ Հայր իմ և առ Հայր ձեր, և առ Աստուած իմ և առ Աստուած ձեր[1]։ Այլ զի մի կարծիցես, եթէ նման[է] Որդոյ և արարածոց[ը] է Հայր, ընդմէջեաց[թ]
18v. յառաջագոյն. || ոչ ասաց եթէ՝ Երթամ ես առ Հայր մեր[ժ], զի հաւասարութիւն ինչ լինիցի ընդ Միածնին և ընդ արարածս[ժա]. Առ[ժբ] Հայր իմ և առ Հայր ձեր, ասաց. այլազգ իմ՝ բնութեամբ է[ժգ], և այլազգ ձեր՝ պատուասաիւ։ Եւ դարձեալ ասէ. Աստուած[ժդ] իմ և Աստուած ձեր. այլազգ իմ որդիութեամբ, բնութեամբ և միածնութեամբ, և այլ[ժե] ձեր արարածոց։

## Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի, եղբայր Բարսղի՝ Յերրորդութիւնն*:

Զի[ժզ] կարգաւորապէս ցուցանի Սրբոյ Երրորդութեան[ժէ] բնութիւնն՝ ոչ խառնակեալ յիւրաքանչիւր գոյութեանց,[ժը] առանձնաբար երևեցելոյ[ժթ] նոցա յատկութիւնն, և ոչ ծանուցութիւնք ի միմեանս փոփոխեալ, որպէս եթէ նշանակ հայրենի դիմաց[ի] յՈրդի կամ Հոգի[իա] փոփոխումն ընդունիցի, կամ Որդի[իբ] դարձեալ ի մի ոք կացելոյ[իգ] յարմարեալ, կամ Հոգւոյն անձնաւորութիւնն[իդ] ի Հօր և յՈրդւոջ երևեալ, այլ հասարակ բնութիւնն երևի[իե] որոշեալ։ Առանձին է Հայր՝ ոչ ի պատճառ-

* Հմմտ. Գ. ձեռ. 172, p. 354. ուր միայն առաջին պարբերութիւնն է բերած։

ա) ակարացաւ. Աստուած ծնաւ, և ոչ եթէ ինքն զրկեցաւ ինչ։ Եւ ոչինչ կորոյս նա, ոչ նուազեալ. բ) ի ծննդեան նորա գ) եւ կատարեալ է դ) Աստուած է որ ծնաւն, եւ Աստուած է զոր ծնաւն ե) Աստուածն, որ զՀայրն զ) ասէ թէ է) նմանապէս ը) արարածոց թ) ընդմիջեաց ժ) թէ առ Հայր մեր երթամ ժա) զի մի հաւասարութիւն ինչ լիցի արարածոց ընդ Միածինն եւ արարիչն ժբ) այլ՝ Առ ժգ) չ. ժդ) Առ Աստուած ժե) այլազգ. ժզ) Մի ժէ) Երրորդութեանն ժը) գոյակցութեանց ժթ) երևելոյ ի) դիմացն իա) ի Հոգի իբ) Որդւոյ իգ) կացելոց իդ) առանձնաւորութիւն իե) բնութեանն հասարակութիւն յանձնաւորութեանն որոշեալ

1) Յովհ. Ի, 17.



ռէ գոլ. այս ոչ է առանձին Որդւոյ և Հոգւոյ, վասն զի Որդին ի Հաւրէ ել[1]), որպէս ասեն Գիրք, և Հոգին ի Հօրէ և յՈրդւոյ առաքի։ Այլ զօրօրինակ առանց պատճառին գոլ միայնում Հօր է, և Որդւոյ և Հոգւոյ ընդունել ոչ կարէ,
|| նոյնպէս ընդդէմ նմին պատճառէն գոլով է առանձին Որդւոյ և Հոգւոյ երևեալ բնութիւն. ոչ ունին հասարակ եղելոյ Որդւոյ և Հոգւոյ, ոչ առանց ծննդեան ըղխման գոլ, որպէս զի մի խառնակութիւն ի դէմսն տեսանիցի. դարձեալ անխառնութիւն յառանձնաւորութեանն նոցա գտանել և զանազանութիւն, որպէս զի հասարակութիւն պահիցի և առանձնաւորութիւնն ոչ խառնակիցի։ Վասն զի Միածին Որդին ի Հաւրէ՝[2]) ի սուրբ Գրոց անուանի, և մինչև յայսոսիկ հաստատեալ կացուցանէ զնոսա յառանձնաւորութիւն Բանն։ Իսկ Սուրբ Հոգին և ի Հօրէ ասի և յՈրդւոյ վկայի. | Զի թէ ոք զՀոգին Քրիստոսի ոչ ունի, այնպիսին չէ նորա[3]). ապա ուրեմն Հոգին յԱստուծոյ է, և Քրիստոսի Հոգին։ Իսկ Որդին յԱստուծոյ՝ ոչ ևս է Հոգւոյն, ոչ է և ոչ ասի, և ոչ ևս դառնա կարգս այս յարմարութեամբ, որպէս թէ կարողութիւն իցէ հաւասարապէս անդրէն դարձուցանել զբանն, և զօրօրինակ Քրիստոսի Հոգին ասել, նոյնպէսև Հոգւոյն զՔրիստոս անուանել։ 19r.

Արդ, այսոցիկ առանձնաւորութեանց հաւաստեաւ առանց խառնակութեանց ի միոյ ի մի էն որոշելոյ՝ ըստ գործոյ նոյնութիւն հասարակութեան նոցա վկայի, բնութեանն զօրացուցելոյ երկաքումք բարեպաշտութիւնն || 19v.
յԱստուածութիւնն իմանի, որպէս զի և թիւն ընդունել Երրորդութեանն յաղագս դիմաց և յայլ բնութիւն համար? ոչ բաժանեալք։

## Երանելոյն Դամասոսի եպիսկոպոսին Հռովմայ:

Այսպէս հաւատամք և խոստովանիմք ի Հայր և յՈրդին և ի Հոգին Սուրբ՝ յԵրրորդութիւն անբաժանելի. սկիզբն և դադարումն, նուազ և առաւել ոչ ունի, այլ միշտ հաւասարն սուրբ և հիւթական?։ Հոգի է Աստուած, և խոստովանիմ զերեսինն ի Միութիւն և զմինն յԵրրորդութիւն։ Հայր|անծին և ծնաւղ զՈրդի, Որդի ծնունդ է և

1) Հմմտ. Յովհ. ԺԶ, 28. 2) Հմմտ. Յովհ. Ա, 14.
3) Հռոմ. Ը, 9.

անծին, Հոգի հլաւղ է և ղաղարումն. ի Հօրէ առ Որդի անեղք երեք անձնաւորութիւնք և մի բնութիւնք։ Իսկ ի վերջնումն բոլորն Աստուած եղանի բոլոր մարդ՝ սակս բոլորից փրկութեան. ոչ Հայր և ոչ Հոգի մարմնացաւ, այլ Մէնածնին է մարմնաւորութիւնն. անարատն անարատապէս զմաքուրն բացեալ արգանդ, անճառ և անեղապէս մարմնացեալ և ծնեալ ի սուրբ Կուսէն, որպէս ինքն գիտէ, յերկուց խառնեալ՝ միացեալ և մի լեալ անլուծակի միաւորեալն, և ոչ ևս լինի երկուցն յերկուց բաժանեալ։ **20r.** Մի կատարեալն ‖ երկուց է միջնորդ. ոչ երկուք երկուց միջնորդ, այլ մի երկուց՝ յԱստուծոյ է և մարդկան. որ էնն և է անփոփոխ և անյեղլի՝ նոյն ինքն Աստուած և մարդ, զհաստակն եղծեալս յարգանդէ ցմահ սրբեաց, որում վկայեն ապաքինեալքն յախտից, և դատապարտին մեղքն։ Անչարչարելին չարչարի՝ չարչարելովն անչարչարելին, և անծնիցնիցն* եղանի բարձումն. անմահն մեռանի՝ մեռանելովն անմահ և քակումն ապականութեան, և յարութեամբն լուծեալ մահ. համբարձեալ նստեալ ընդ աջմէ՝ գա նովիմբ մարմնովն, դատել զ|տիեզերս։

Այս է ճշմարիտ խոստովանութիւն սուրբ հարցն, զոր մեզ աւանդեցին, յորժամ ըստ օրինակի այն ՃՄ, որ ի Կոստանդնուպաւլիսն, Մ որ յԵփեսոս ի պատիւ գումարեցան սուրբ Երրորդութեանն։ Զայս մեծ և պանծալի զերիս ժողովս ընկալեալ ընդունիմք՝ երիւք սրբասացութեամբ, զխաչիլն խոստովանիմք, և այլ աւելի հաւատ ոչ ընկալեալ և ոչ ընդունիմք, և որ ընդունի, թէ և յերկնից հրեշտակք իցեն, նզովեալ եղիցի։

## Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսին Կիպրացւոց։

**20v.** ‖ Թէ Հայր և միայն ճշմարիտ Աստուած է, Միածինն և միայն ճշմարիտ. վասն զի միայն ի միոջէ Միածինն և միայն Սուրբ Հոգին Աստուած ճշմարիտ՝ Երրորդութիւնն ի միութիւն, և մի Աստուած՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգին։ Ճշմարիտ է Աստուած Հայր, ճշմարիտ է Աստուած Որդին, ճշմարիտ է Աստուած և Սուրբ Հոգին. Հոգի Աստուծոյ է Հոգի ճշմարտութեան. Երրորդութիւն ի միում անուան թուեալ։ Հայր է լոյս ճշմարիտ. Որդի լոյս ճշմարիտ և ի ճշմարիտ լուսոյն և ի ճշմարիտ Աստուծոյ, զմի զզաւրութիւն Աստուածութեանն խոստովանեսցուք. դոյնպէս և վասն Սուրբ Հոգւոյն թէ՝ Երթամ,

* Պէտք է կարդալ երևի՝ «անիծիցն»



նա զա՝ Հոգին ճշմարտութեան, և պատմէ զԱւծելոյն իւր |մարդկան [1]). զճշմարիտ ծնեալն ի ճշմարտէ, զանստեղծն, զանեղծանելին, զանփոփոխելին՝ զհանապազլին ի հանապազէն, ի Յովհաննէ քարոզեցեալն զհանապազէն։ Քանզի՝ Որ էն, ասէ Մովսէս, առաքեաց զիս [2]). և Յովհաննէ. Որ էրն ի ծոց Հօր՝ նա պատմեաց մեզ [3]). էն է Որդի, էն է Հայր, Որ էն առ Էին՝ ի նմանէ ծնեալ, ոչ միացութիւն ընդ Հօր, ոչ սկսեալն ի յեղն, բայց միշտ Որդի հարազատ ընդ Հաւր, միշտ Հայր ծնաւղ Որդւոյ։ Քանզի ոչ էր ժամանակ, յորժամ Հայր ոչ էր, և ոչ երբէք էր ժամանակ, յորժամ Որդի չէր ընդ Հաւր միայնի, զի թե էր ‖ ժամանակ, յորժամ ոչ էր Հայր, Հայրն արդեաւք և ինքն Որդի էր այլոյ հայր, մինչև լինել նմա հայր Միածնին, և կարծեցեալք ի Հայր բարեպաշտել՝ կատարեալ ամբարշտեն։ **21r.** Քանզի յԱստուած ոչ ժամանակ և ոչ ամանակ և ոչ դոյզն մասն ժամանակի, և ոչ անհատ ժամու և ոչ քթթումն ական, և ոչ բարձրութիւն մտաց ընդունի. այլ որչափ և վերացի քո միտք, զՈրդի տեսանէ ընդ Հաւր, քանզի անունդ է նշանակելի. զի յորժամ Որդի կոչես, Որդի ասելով իմա զՀայր, զի Որդւոյ հայր իմանի, և յորժամ գոչես զՀայր, նշա|նակես զՈրդի. իսկ յորժամ կարես իշխել և ասել, եթե ոչ էր Հայրն հայր, զի և զՈրդի իշխեսցես ասել չգոլ։ Իսկ եթէ ոչ իշխես պատիւ յաւելուլ ի Հայր, քանզի աստուածութիւնն ի նմին կա և ոչ կարաւտի յաւելուածոյ՝ ոչ փառաց, ոչ յառաջ մատուցման, ուսիր չհայհոյել, ո որ մարտնչիս ընդ հաւատոյ, մանաւանդ թէ զանձն ի հաւատոյ հալածելով. կամ հաւատա ի Հայր յանեզրական՝ ճշմարտութեամբ ծնեալ զՈրդի, և միշտ արդարև զՈրդի ծնեալ։ Քանզի Որդի միշտ գոյր ընդ Հաւր, ոչ եղբայրակից, այլ Որդի ‖ հարազատ՝ ի Հաւրէ ծնեալ բարութեամբ, **21v.** և ոչ եթե մատուցանելով Որդի համագոյ նման Հօր, ոչ միագոյ, այլ համագոյ. քանզի ոչ է միացութիւն Հաւր և ոչ եղբայրակցութիւն, այլ համագոյ, այսինքն է՝ արտաքոյ Հօր ծնեալ, որպէս ոմանք պատրանս ի մէջ բերեն՝ առնելով կամին ասել զՈրդի, և ոչ ճշմարտութեամբ։ Իսկ մի բնութիւն հաւատոյ զհամագոյն ասելի է. զի թէ ասես համագոյ՝ լուծեր զզօրութիւն Սաբելի. զի ուր համագոյութիւն է, անձնաւորութեան նշանակ է, իսկ անձնաւո-

1) Համմ. Յովհ. ԺԶ, 13—14. 2) Ել. Գ, 14. 3) Յովհ. Ա, 18.

րութիւն նշանակէ զՀայր,|և անձնաւորութիւն նշանակէ զՈրդի, և անձնաւորութիւն զՍուրբ Հոգին։ Յորժամ զհամագոյն ասէ, ո՛չ աւտար ի նոյն Աստուածութենէն նշանակէ, այլ Աստուած յԱստուծոյ զՈրդի և Աստուած յԱստուծոյ զՀոգին, յԱստուածութենէ ՝ո՛չ (երիս) Աստուածս. քանզի ո՛չ է բազում աստուածութիւն յԱստուած. մի է մեր Աստուածս, որպէս և երանելին ասէ Մովսէս. Տէր Աստուած քո Տէր մի է[1])։ Իսկ ի ձեռն երից անուանց մի է Աստուածութիւն՝ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն նշանակ է, և ո՛չ երկու որդիք. քանզի միածին է Որդին։ Իսկ Սուրբ Հոգին Սուրբ Հոգի է Աստուծոյ, որ միշտ Աստուած ընդ Հօր և Որդւոյ, ո՛չ օտար յԱստուծոյ, բայց յԱստուծոյ գոլ՝
**22r.** ի Հաւրէ ելանելով ‖ և յՈրդւոյն առնելով։ Այլ Որդին Միածին անհասանելի, և Հոգին անհասանելի, և յԱստուծոյ ո՛չ օտար՝ ի Հաւրէ և յՈրդւոյ. ո՛չ միացութիւն է Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն, այլ Երրորդութիւն միշտ է՝ ի նմին գոյութենէ. ո՛չ այլ գոյութիւն արտաքոյ Աստուածութեանն, և ո՛չ այլ աստուածութիւն արտաքոյ գոյութեանն. այլ գոյն Աստուածութիւն, ու ի նմին Աստուածութենէ է Որդի և Սուրբ Հոգին։ Եւ Հոգին Սուրբ Հոգի, և Որդին Որդի, բայց Հոգին ի Հօրէ ելանելով և յՈրդւոյ առնելով, որ քննէ զխորս Աստուծոյ՝ պատմելով զՈրդւոյն յաշխարհի, սրբելով զսուրբս ի ձեռն Երրորդութեանն, երրորդ|անուանութեամբք՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի. Գնացէք, ասէ, մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն[2]). վերակնիք շնորհին միութիւն Երրորդութեանն։ Ո՛չ օտար ի թուոյն, ո՛չ որոշեալ յանուանակոչութենէն, ո՛չ օտար ի պարգևս, այլ մի Աստուած, մի հաւատ, մի շնորհ, մի եկեղեցի, մի մկրտութիւն. քանզի միշտ Երրորդութիւնն Երրորդութիւն է, և ո՛չ երբէք յաւելուած ունի, այսպէս թուեալ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի. ո՛չ միացութիւն է Սուրբ Երրորդութեանն և ո՛չ որոշումն է ի սմին յիւրեանցանձ միութենէ։ Իսկ յանձնաւորութեանն կատարման
**22v.** կատարեալ Հայր, ‖ կատարեալ Որդի, կատարեալ և Սուրբ Հոգին՝ մի Աստուածութիւն ի մի կատարումն. քանզի ոչինչ է յԵրրորդութեանն հատանելի կամ յաւելուած լինելի։

Արդ, Հայր զՈրդի ծնանի, բայց ո՛չ ժամանակ, յորժամ ո՛չ էր Որդի. քանզի և ո՛չ Հայր երբէք ի ժամանակի

1) Երկր. Օր. Զ, 4. Մարկ. ԺԲ, 29. 2) Մատթ. ԻԸ, 19.



Հայր կոչիւր, այլ էր միշտ Հայր, էր միշտ Որդի, ո՛չ եղբայրակից, այլ Որդի՝ ծնեալ անպատումն և անուանեալ անհասանելի, ընդ Հօր հանապազ գոլով, և ո՛չ երբէք պակասեալ։ Յէութենէ Հայր միշտ անեղ և անստեղծ և անհասանելի. Որդի ծնեալ, այլ անստեղծ և անհասանելի. Սուրբ Հոգին միշտ՝ ո՛չ ծնանելի և ո՛չ ստեղծանելի, ո՛չ եղբայրակից, ո՛չ հօրեղբայր, և ո՛չ հաւ գոլով և ո՛չ թոռն, այլ ի նմին գոյութենէ՝ ի Հօր և յՈրդւոյ և Սուրբ Հոգւոյն. քանզի Հոգի է Աստուած։ Իսկ յիւրաքանչիւր անուանց միանունք ո՛չ ունին զերկրորդն. քանզի Հայրն Հայր, և ոչինչ է այլ նմանագիր նմա, և ո՛չ այլ ոք Հօր լծակցեալ, զի մի՛ բ. աստուածք. և Որդին Միածին Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ո՛չ զՀօր ունելով զանուն և ո՛չ աւտար ի Հաւրէ, այլ Որդի Հաւր գոլով։ Իսկ Միածին, զի անուանեսցի մի Որդի. Աստուած յԱստուծոյ, զի զմի ունի Աստուած Հայր, ‖ և Որդի կոչի Միածինն։ Եւ Հոգին Սուրբ՝ **23r.**
ո՛չ ունելով զանուն Որդւոյ, և ո՛չ զՀաւր, այլ Հոգին Սուրբ՝ այսպէս կոչելի է, ո՛չ աւտար ի Հաւրէ. քանզի Միածինն ասէ՝ Հոգի Հաւր[1]), և՝ Որ ի Հաւրէ ելանէ[2]), և՝ Յինէն առցէ[3]). զի մի՛ աւտար կարծեսցի ի Հօրէ և յՈրդւոյ, այլ ի նոյն էական Աստուածութենէ։ Հոգին Սուրբ՝ Հոգի ճշմարտութեան, Հոգի Աստուծոյ, Հոգի մխիթարութեան, միանուն կոչեցեալ՝ չունելով զնմանն և ո՛չ ումեք հաւասարելի, այլ Հոգւոյ. և ո՛չ կոչիլ յանուն Որդւոյ և կամ անուանիլ յանուանութիւն Հօր, զի մի՛ ի մի անուն նմանունք կարծեսցին։ Բայց զի Աստուած, այլ Հայր Աստուած և Որդի Աստուած. է Հոգի Հաւր|և Հոգի Քրիստոսի, ո՛չ ըստ ի մեզ զուգմանց, որպէս ի մեզ շունչ և մարմին, այլ ի մէջ Հօր և Որդւոյ՝ ի Հօրէ և յՈրդւոյ, երրորդանուանութեամբ. քանզի՝ Գնացէք, ասէ, մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն[4])։ Զի թէ մկրտէ Հայր, յանուն իւր՝ յանուն Աստուծոյ, և կատարեալ կնիքն յանուն Աստուծոյ կնքեալ է ի մեզ։ Մկրտէ և Քրիստոս յանուն իւր՝ յանուն Աստուծոյ, և կատարեալ է կնիքն ի մեզ յանուն Աստուծոյ։ Ո՞վ իշխեսցէ պատերազմել ընդ իւր ոգիս, և զՀոգին Սուրբ աւտար յԱստուածութենէն ասելով. քանզի եթէ յանուն Աստուծոյ կնքիմք՝ և յանուն

1) Մատթ. Ժ, 20. 2) Յովհ. ԺԵ, 26. 3) Հմմտ. Յովհ. ԺԶ, 14. 4) Մատթ. ԻԸ, 19.

Որդւոյ և յանուն Սուրբ Հոգւոյն. մի կնիք է Սրբոյ Երրորդութեանն, և ապա մի զաւրութիւն է աստուածութեան Եր **23v.** || րորդութեանն. քանզի մի է Աստուած յՈրդւոջ, և Որդի ի Հաւր՝ հանդերձ Սուրբ Հոգւովն, և վասն այնորիկ Սուրբն ի Սուրբս հանգուցեալ է։

Հայր ճշմարիտ յանձնաւորութեան, Որդի ճշմարիտ յանձնաւորութեան, և Սուրբ Հոգին յանձնաւորութեան. գ. գոլով՝ մի Աստուածութիւն, մի էութիւն, մի փառաբանութիւն։ Մի Աստուած անուանեցեր զՈրդի, ըմբռնեցեր ի մի մտաւք զԵրրորդութիւնն։ Ընկալար զՀոգին Սուրբ, արժանացար զօրութեան հայրենւոյ և Որդւոյն Աստուծոյ։ Փառաւորեցեր զՀայր՝ նշանակեցեր զՈրդի և զՀոգին Սուրբ. Որդի է Որդին և Սուրբ Հոգի է Հոգին Սուրբ, այլ ոչ օտարացեալ Երրորդութիւնն ի միութենէ, կամ յինք|նութենէ։ Իսկ պատուի Հայր ըստ այնմ, զի Հայր է. իսկ պատուի Որդի ըստ այնմ, զի Որդի է ճըշմարիտ. պատուի և Հոգին ճշմարիտ, զի ճշմարիտ է Հոգի Աստուծոյ։ Այսպէս ասէ Որդին. Որ պատուէ զՀայր, պատուէ և զՈրդի [1]). քանզի յասելն Հայր՝ զՈրդի նշանակես և զՈրդի պատուես, և պատուելով զՈրդի՝ պատուէ զՀայրն, ոչ կրտսեր զՈրդին ասելով Հօր։ Քանզի թէ ի մեզ ի մարդկան այսպիսի խորհուրդք, զի ոչ կրտսերագոյնք կամիմք զորդիս և ի վայր քան զհայրենի պատիւն, քանզի և յորդիս անարգանքն ի հարս համարեալ են, ո՞ պատուեսցէ ճշմարտութեամբ գոլ զՀայր՝ զՈրդի մեկնեալ ի հայրենի **24r.** փառացն կարծելով. || ոչ առաւել անպատուէ՝ փոխանակ պատուի, յանգիտութենէ յաղթեալ։ Վասն զի Որդի յայտնէ զՀայր ասելով. Ոչ ոք գիտէ զՀայր, բայց Որդին, և ոչ ոք գիտէ զՈրդին, բայց Հայր [2]). իսկ իշխեմ ասել, և ոչ զՀոգի ոք գիտէ, բայց Հայր և Որդի, յորմէ ելանէն և յորմէ առնուն. քանզի ինքնն Աստուած գիտէ, զինքնն Քրիստոս քարոզէ և զինքնն Սուրբ Հոգին յայտնէ արժանեաց։ Իսկ ի Գիրս սուրբս Երրորդութիւն մեզ պատմի և հաւատալի և անքննելի, և անհակառակելի եդելոց լսաւղաց։ Իսկ ի հաւատոյս յայտմանէ փրկութիւն շնորհի. ի հաւատոց է արդարութիւն՝ առանց գործոց օրինաց [3]). գրեալ է եթէ՝ Ի լրոյ հաւատոյ ոգին Քրիստոսի տուեալ լինի ապրեցելոցն [1]):|Բայց հաւատ ամենայն քարոզացն

¹) Հմմտ. Յովհ. Ե, 23. ²) Ղուկ. Ժ, 22. ³) Հմմտ. Հռոմ. Գ, 28. ⁴) Հմմտ. Գաղ. Գ, 2.



ձայնիւ այս նշանակի, որպէս ես կարծեմ ի միտ առեալ ի Գրոց Սրբոց՝ երեք սուրբք, երեք սրբակիցք, երեք իրագործք, երեք իրակիցք, երեք անձինք, երեք անձնակիցք՝ միմեանց էակիցք։ Երրորդութիւն այսուիկ կատարի. երեք էք՝ մի կամակցութիւն, մի Աստուածութիւն՝ ի նոյն էութենէ, ի նոյն զաւրութենէ, ի նոյն անձնաւորութենէ. նմանիք նմանոց հաւասարութիւն շնորհին գործի՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Բայց զորպիսութիւն նոցա անկարեմք յուսուցանել. ասէ յաւետարանին. Մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ [1])։ Բայց ի մէջ էիցս ոչ միա || ցութիւն նշանակեաց զՈրդին ի Հայր, **24v.** և ոչ միացութիւն զսուրբ Հոգին ի Հայր և յՈրդի, այլ զՀայր վկայէ Հայր ճշմարիտ և զինքն ճշմարտեցոյց անձնաւոր Բանն, և Հոգին նորա անձնաւոր Հոգի և Հոգի ճըշմարտութեան՝ անստեղծ, անյեղլի, անայլայլելի։ Բայց ոչ որպէս կարծեսցէ ոք՝ նենգաւորութիւն բերելով ի հաւատն և զմերձաւորութիւն նորա ծածկելով և նենգելով առ լսաւղսն, զի Քննէ զխորս և զերիկամունս Աստուած [2]), և ասէ եթէ՝ հաւատամս, զի Հայր Հայր և Որդին Որդի և Սուրբ Հոգին Հոգի սուրբ, ոչ խոստովանելով երիս անձինս ի միում էութեան։ Բայց ոչ այլ ասեմ գոյութիւն ար|տաքոյ Աստուածութեանն, և ոչ այլ աստուածութիւն արտաքոյ էութեանն. այլ վասն այսպիսւոյ ստուգագոյն զէութիւնն կոչեմք, զի մի՛ այլեայլ տեսութիւ ասասցուք աստուածութեան Երրորդութեանն։

## Երանելոյն Գրիգորի Աստուածաբանի, ի յառաջադրելոյն ի ճառէն, որ Յայտնութիւն Տեառն *:

Քրիստոս ծնեալ՝... էր [ա] միշտ և է և եղիցի, մանաւանդ եթէ է միշտ. քանզի էրն և եղիցի ըստ [բ] մեզ ժամանակի հատուածք են՝ հաստատուն բնութեանս, որ է [գ] միշտ։ Զայս ինքն աւանդէր [դ], ընդ Մովսիսի խաւսելով ի լերինն, զբովանդակ ինքեամբ ի միասին առեալ, և ունի՝ զոչ սկսեալն և զոչ դադարեալն. իբրև [ե] || խոր ինչ անբաւ են սահմանք **24v.**

* Տես. Չեռ. № 944. p. 725. էջն.

ա) Աստուած էր  բ) ըստ  գ) էն  դ) ինքն զինքն անուանէ  ե) իբրև զի

¹) Մատթ. ԻԸ, 19. ²) Սաղմ. Է, 10.

բնութեանն՝ քան զամենայն միտս գերազանցեալս և քան զժամանակս և զընութիւնս[ա], մտաւք միայն նկարագրեալ, և այսոքիկ յոյժ աղօտ և չափաւորապէս, ոչ ըստ ինքեան, այլ յաղագս իւրոցն այլ յայլմէ երևմանց ժողովոց ի միասին[բ] ճշմարտութեանն կերպարան, որ նախ քան զունել ճողոպրէ և յառաջ քան զիմանալն ի բաց փախչի՝ այնքան պայծառացուցանէ զմեր զիշխանութիւնս[գ] և այնքան զմաքրեալս[դ], որքան զաչս փայլատականց երագութիւն՝ ոչ կացելոց։

**Ցեօ ռակաւաց.**

Արդ, անբաւ է Աստուածութիւնն և դժուարաւ տեսանելի, և նոյն ամենայն ուստեք անհասանելի[ե], ինքն միայնոյ անբաւութիւն[զ], թեպէտ|և թուի ումեք պարզագունի լեալ բնութեան, կամ բոլորովին անհասանելի, կամ կատարելապէս անըմբռնելի, տակաւին ես խնդրեմք։

**Ցեօոյ.**

Եւ Աստուածոյ յորժամ ասեմ՝ Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն ասեմ. զի և ոչ[է] քան զայս Աստուածութիւն է ցնդեալ[ը], և մի բազմաստուածութիւն[թ] աստուածոց ի ներքս ածիցեմք, և ոչ ի ներքսագոյն քան զայս սահմանեալ, զի մի աղքատութիւն Աստուածութեանն դատապարտիցեմք[ժ]. յաղագս մի իշխանութեանն հրէաբար հրէիցեմք[ժա], և կամ երկուցն[ժբ] հեթանոսաբար. քանզի չարն յերկոսին նման է, թէպէտ և ի հակառակացն գտանիցին։ Արդ, սոքա սրբութիւնք սրբութեանց[ժգ], զոր և սերովբէքն ծածկեն և փառաւորեն, երեքկին սրբասացութեանցն[ժդ] || 25r. ի մի հաւաքելով տէրութիւն Աստուածութիւն[ժե]։ Որպէս և այլ ումեմն* նախ քան զմեզ իմաստասիրեցաւ գեղեցկագոյն և բարձրագոյն. զի[ժզ] ոչ էր բաւական բարութեանն այս շարժիլ[ժէ] զիւր տեսութիւնն, այլ պարտ և արժան էր հե-

* Լուսանցքում՝ Աթանաս է։

ա) զժամանակ և զընութիւն բ) ժողովելոց ի մի իմն գ) զիշխանականս դ) և այն զմաքրեալն ե) հասանելի զ) ինքեն միայնս անբաւութիւնն է) զի ոչ տասել ը) ցնդել թ) զի մի բազմութիւն ժ) դատապարտեսցի ժա) կրեսցեմք ժբ) և կամ յաղագս բազմութեանն ժգ) Արդ այսպէս սրբութիւն սրբութեանցն ժդ) սրբասացութեամբքն ժե) և Աստուածութիւն ժզ) եւ զի ժէ) շարժել միայն



զուլ զբարիսն և ճանապարհորդել, որպէս զի տաւել ես լիցի[ա] բարեգործութիւնն. քանզի այս ծայրագոյն է նորա բարերարութեանն[բ]։

**Նորին՝ յԵրկրորդ ճառէն. Դարձեալ իմ Յիսուս*։**

Այլ և յաղագս նոցունց սարսափեմ և լեզուաւ և մտաւք, յորժամ վասն Աստուծոյ խօսիմ։ Եւ ձեզ զնոյն[գ] զայս աղաւթակից լինիմք զգովելի կիրս և գերանելի Աստուծոյ անուամբ[դ] ասեմ. միով լուսով շուրջանակի փայլեցուք[ե] և երիւք։ Երիւք ըստ անձ|նաւորութեանն[զ] և կամ ըստ դիմաց ումեք սիրելի իցէ կոչել, և թե երեսս. զի և ոչ յաղագս անուանց լծակռիւ[է] լինիմք, ցորքան[ը] ի նոյն միտս ասացուածքն բերիցեն. և միով ըստ բնութեան Բանին[թ] կամ աստուածութեանն։ Վասն զի բաժանի անբաժանաբար, զի այսպէս ասացից[ժ], և միաւորի որոշմամբ. վասն զի մի է յերեսեան Աստուածութիւնն, և երեքեան մի՝ յորս Աստուածութիւնն։ Իսկ զգերազանցութիւնս[ժա] ի բաց լքցուք, ոչ միաւորութիւն խառնակելով[ժբ] և զբաժանումն[ժգ] աւտարութիւն։ Ի բաց կացցէ մեզ զուգահաւասար և Սաբելի ի միասին հաւաքումն և՛ Արիանոսի բաժանումն, յոյժ հեռաւորութեան չարութիւնն և զուգապատիւ ամպարշտութիւն։ Վասն զի || 26r. զի՞նչ պարտ է զԱստուած ի միասին ժողովել չարաչար և կամ բաժանել յանհաւասարս. բայց՝ Մի է[ժդ] Աստուած, Հայր, յորմէ ամենայն, և մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն[1], և մի Հոգի Սուրբ, յորում ամենայն։ Իսկ յորմէ՞ն և որո՞վքն և յորումն ոչ զբնութիւնն հատանողաց, զի ոչ[ժե] արդեւք փոփոխեալ լինին[ժզ] պատճառքն կամ կարգք[ժէ] անուանցն, այլ որք զմի կերպարանն և առանց խառնակութեանն զբնութիւն անձնաւորութեանն ցուցանէ. և այս յայտ է յորոց[ժը] ի մի հաւաքեն դարձեալ եղիցի, որք ոչ վարկպարազի զայսոսիկ ընթեռնուն ի նմին յառաքեալն[ժթ]. զի

* Հմմտ. ձեռ. № 944. р. 727 r.

ա) լինիցի բ) եր բարերարութեանն գ) զնոյն դ) յորժամ ե) փայլեցեք զ) առանձնաւորութեանն է) լծակռիւք ը) յորքան թ) ըստ բնութեանն Բանի ժ) ասիցեմ ժա) զգերազանցութիւն և զկակատութիւն ժբ) ոչ զմիաւորութիւնն խառնակութիւն գործելով ժգ) և ոչ զբաժանումն ժդ) Մեզ մի է ժե) և ոչ ժզ) փոփոխել լինեին ժէ) կարգ ժը) յայտ յորոց ժթ) առաքեալ

1) Ա. Կորնթ. Ը, 6.

ի նմանէն և նովաւ[ա] և ի նոյն ամենայն, որում փառք յաւիտեանս. ամէն։

Հայր է Հայրն, և անսկիզբն,|զի ո՛չ[բ] յումեքէ։ Որդի է Որդին[գ], և ո՛չ անսկիզբն, վասն զի ի Հաւրէ[դ]. ապա եթէ ի ժամանակէ առնուցու՝ սկիզբն և անսկիզբն[ե], վասն զի արարիչ ժամանակաց է, և ո՛չ ընդ ժամանակաւ։ Հոգին Սուրբ ճշմարտապէս Հոգի, յառաջ առաքեալ ի Հօրէ, ո՛չ որդիաբար. ապա եթէ[զ] ինչ նորաձևեալ յանուանսն՝ յաղագս յայտնութեանն լինիցի։ Եւ ո՛չ Հայր ի բաց կացեալ յանծնելութենէ, վասն զի ծնաւ. և ո՛չ Որդի ի ծնանելոյն, քանզի ոչն յոչ ծնեցելոյն է. զի որպէս արդեւք և ո՛չ Հոգի ի Հայր փոփոխելոյ[է] և կամ յՈրդի, վասն զի Աստուած է։ Թեպէտ և ոչ այս Թուի[ը] անաստուածիցն, քանզի առանձնաւորութիւնն անշարժ է. ապա թէ ո՛չ՝ զիա՞րդ մնասցէ առանձ 26v. ‖նաւորութիւնն շարժեցեալ և փոփոխեալ։

Իսկ որք զանծնելութիւնն բնութիւն Աստուծոյ, որոց անուանակոչութիւնս[թ]՝ դնեն, Թուի թե և զԱդամ և զՍէթ. զի մինն ո՛չ ի մարմնոյ, վասն զի ստեղծուած է, և միւսն յԱդամայ և յԵւայէ՝ ի միմեանց զընութիւնն աւտարացուցանեն[ժ]։ Արդ, մի է յերեսին Աստուածութիւնն[ժա], և երեքեանն մի, որպէս ասացաք։ Եւ զի այսպէս այսոքիկ[ժբ], և կամ այս, պարտ և արժան է ո՛չ ի վերնայնոցն[ժգ] միայն զերկրպագութիւնն գրել, այլ լինել զոմանս և ի ստորինս երկրպագուս. զի լցցի ամենայն փառօքն Աստուծոյ, վասն զի և Աստուծով։ Ցաղագս այսորիկ մարդ Աստուծոյ շնորհաւն պատուեցաւ և պատկերաւն։

### |Նորին՝ յԵրախայիցն։

Ի վերայ ամենեցուն և նախ քան զամենայն պահեա ինձ զբարւոք աւանդն, որով կեամ և առաքինանիամ, զոր ի գնալն ընդ իս առնում, ընդ որում և զվտանգաւորսն զամենայն բերեմ և զվայելչականս զամենայն արհամարհեմ՝ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին խոստովանութիւնն։ Զայս քեզ հաւատամ այսօր, յայս ընդ քեզ գնամ

ա) զ' ի նմանէն և զնովաւն   բ) զի և ո՛չ   գ) Որդի Որդին
դ) քանզի ի Հօրէ է   ե) առցես զսկիզբնն է և անսկիզբն   զ) ոչ որդիբար, զի և ո՛չ ծնգեմդ, այլ արտաքս առաքաբար. և եթէ
է) փոփոխել.   ը) այսպէս Թւիցի   թ) զանուանակցութիւնս
ժ) ըստ բնութեան աւտարացուցեն   ժա) Աստուած յերեսին
ժբ) այսոքիկ են   ժգ) արժան էր ո՛չ վերնայնոցն



և ժողովեմ ղքեզ. զայս տամ ամենայն կենաց հաղորդ և վերակացու՝ զմի Աստուածութիւնն և զզօրութիւնն յերեսին զոլ միութեամբ, և զերիսն ի միասին առեալ՝ առանց բաժանելոյ, ո՛չ առաւել բնութեամբք կամ էութեամբք, և ո՛չ աճեցեալ կամ նուազեալ գերազանցութեամբ, և կամ նուաստանալով։ 27r. ‖Ամենայն ուստեք իբրև զմի գեղեցկութիւն երկնի և մեծութեանն երից անբաւիցն անբաւ բնակցութիւն՝ Աստուած իւրաքանչիւր ոք ըստ ինքեան տեսեալ, իբրև զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին՝ պահեալ յիւրաքանչիւր ումեք առանձնաւորութեանն։ Աստուած երեքեանն՝ ընդ իրեարս միացեալ, այս է յաղագս միիշխանութեանն. ո՛չ ժամանեմ զմինն իմանալ, երեքումք շուրջ պայծառանամ. ո՛չ ժամանեմ զերիսն բաժանել, և ի մինն ի վեր բերեալ լինիմ։ Ցորժամ զմի ոք յերիցն նկատեմ, զնա իմանամ զամենայն, և զիմաւքն լցեալ լինիմ, և առաւելն փախչի. ո՛չ ունիմ մեծութեան նորա հասու լինել, թե տայ զառաւելութիւնն Թերեցելումն, և յորժամ զերեսեանն միան|զամայն ընդունիմ տեսութիւն, զմինն տեսանեմ ջահ. ո՛չ ունիմ որոշել կամ չափել զլոյսն միաւորեալ։ Երկնչիս դու ի ծննդենէն, զի մի՛ ինչ ախտասցի Աստուած, որ ոչն ախտանայ. ես երկնչիմ յարարածոյն, զի մի՛ զԱստուած կորուսից Թշնամանաւք և չարաչար համարմամբն՝ կամ զՈրդի հատանելով ի Հօրէ և կամ յՈրդւոյ զընութիւն Հոգւոյն. քանզի հրաշափառագոյն, զի ո՛չ արարած ի վերայ բերեալ լինի միայն Աստուծոյ՝ յայն, որք չարաչար զաստուածութիւնն կշռեն, այլ և նոյն ինքն դարձեալ արարածն յինքն հատանի. որպէս ի Հօրէ ամփոփին երկուքն նուաստագունիւք և ի ստորև կալովն, նոյնպէս և խոնարհ ամփոփեալ և յՈրդւոյ 27v. ‖և ի պատւոյն Հոգւոյն. մինչ զի և Աստուած և արարած Թշնամանին նորա այնպիսի աստուածաբանութեամբ։ Ո՛չ ոք յԵրրորդութենէն, ո՛ դուք, ծառայ, և ո՛չ արարեալ, և ո՛չ արտաքուստ ի ներքս մտեալ։ Լուար յիմաստնոյ ումեմնէ, որ ասէն. Տակաւին մարդկան հաճոյ լինեի, Քրիստոսի ծառայ ո՛չ արդեւք էի[1]), ասէ աստուածային առաքեալն. եթէ տակաւին ևս արարածոց երկիրպագանէի՝ եթէ յարարածս նստեի, ո՛չ ևս արդեւք աստուածանայի, և ո՛չ զառաջին ծնունդն փոփոխէի։ Զի՞նչ ասացից՝ որք

1) Գաղ. Ա, 10.

Աստարատոյն երկիրպագանեն, և կամ Ովսա՝ գարշելոյն Սիդոնացւոց, և կամ աստեղն պատկերի։ Ո՛չ փոքր ինչ զայսոսիկ Աստուծոյ կապաշտիցն,|սակայն ստացուածոյ և արարածոյ Նորին. և կամ ոչ երկիրպագանել երկոցունց, ընդ որս մկրտեցան, կամ երկիրպագանել ծառայակցաց. վասն զի ծառայակիցք են, թէպէտ և փոքր ինչ նուազագոյն. զի և ի ծառայակիցսն է զանազանութիւն իմն և երկրպագութիւն։ Կամիմ զՀայր մեծագոյն ասել, յորմէ զուգութիւն է հաւասարացն, ըստ որում և գոլն, քանզի և այս յամենեցունց տացի, և երկեայ ի պատճառէն, մի՛ գուցէ նուազ սկիզբն արարից և թշնամանեցից նախապատուութեամբ. զի և ոչ փառք են, որոց ի նմանէ խոնարհութիւն։ Որով տեսանես զքո անյագութիւնդ, մի՛ գուցէ զմեծագոյնն առաւել յերկուս հատանես **28r.** զբնութիւնն՝ առ ամենայն մեծագունօքն վա || րելով. վասն զի ոչ ըստ բնութեան է մեծ, այլ ըստ պատճառին. զի ոչինչ ի նոյն բնութեան մեծ կամ փոքր։ Կամիմ զՈրդի առաւել պատուել քան զՀօրին, իբրև զՈրդի, և ոչ ներէ ինձ մկրտութիւնս՝ կատարել զիս ի ձեռն Հոգւոյ։ Այլ երկեար՝ մի՛ երեքստուածեան թշնամանեսցիս, ընկալ ի քեզ զբարին, որ յիրեսինն ի միաւորութիւնն։

Խաղաղականէն, Նորին՝ Ջերմ է նախանձ*։

Բայց ես զնոյն ձայն զայն համառօտ[ա] բարբառեցայց. Երրորդութիւն՝ իբրև ճշմարտապէս Երրորդութիւն, Եղբարք, երրորդութիւն ոչ իրերաց անհաւասարից թիւք[բ], ապա թէ ոչ՝ զի՞նչ խափանէ տասներեակս և հարիւրեակս և բիւրեակս անուանել, հանդերձ այնպիսեաւքն բարդեալ։| Քանզի հոլովք են թիւրեալք[գ] և բազմագոյնք քան զնոյն[դ]. այլ զուգացն և համապատուոցն ի միասին ժողով միաւորեցելոյ[ե] զկոչումն միաւորէ[զ] ի բնութենէն, և ոչ ներէ ցրուել թուոյն արձակս զոչ արձակեալսն։ Այսպէս խորհիմք և այսպէս ունիմք. մինչզի ո որպէս[է] ունիցի ինչ այլազգ որոշման[ը] և կարգին, զայս միայն Երրորդութեանն թողացուցանել է[թ] գիտել և որոց Երրորդութիւնն յայտնեսցի[ժ] մաքրելոցն, եթէ այժմ և եթէ յետոյ ժամանակի։

Տես. Ձեռ. № 944, p. 841 ելն.

ա) Բայց ես զմի ձայնն զնոյն համառօտաբար բ) թիւ գ) թիւոյքն դ) զնոյն ե) միաւորեցելոյ զ) միաւորել է) մինչ զի որպէս ը) այնպիսիկ որոշմանն թ) թողացուցանե ժ) յայտնեսցե



Բայց մեք զմի զնոյն գիտել զբնութիւն Աստուածութեանն՝ անսկզբան և անծնիցելոյ[ա] և յառաջ եկելոյ ծանուցեալք, որպէս մտաւք, որ ի մեզ են, || և բանիւ և հոգւով, **28v.** որքան զոյ նմանեցուցանել զգալեացն զիմանալիսն և փոքունց զմեծամեծս։ Եւ վասն զի ոչ մի կերպարանս[բ] հասանէ առ ճշմարտութիւնն՝ ինքն ըստ ինքեան հանդիպելոյ[գ] միշտ, և զնոյն միշտ կատարեալ, առանց որպիսութեան և առանց քննութեան, անժամանակ, անստացական, անհասանելի, ոչ երբեք պակասեալ յինքենէ, ոչ նուազեալ՝ կենդանութիւն, կեանք[դ], լոյս[ե] և լոյս, բարիք և բարիք, փառք և փառք, ճշմարիտ և ճշմարիտք և հոգի ճշմարտութեան, սուրբք[զ] և ինքն սրբութիւն. Աստուած իւրաքանչիւրովք[է], թէպէտ և[ը] երևեսցի միայն մտաւք որոշել անորոշելիքն. Աստուած երեքեան՝ ընդ իրեարս միացեալք, նովիմբ շարժ|մամբ և բնութեամբ, ոչ զեր ի վերոյ քան զինքն ինչ թողլով, և կամ ի ներքոյ այլ ինչ։ Զի[թ] ոչ էր ոչ ընդ նմա միացեալ և կամ ի ստորև անկեալ. քանզի ոչինչ է ոչ[ժ] ընկալեալ զուգապատիւ, ըստ որում ոչինչ հատանէ[ժա] յարարածոցս և ծառայիցս և ընդունաւղացս բովանդակեցելոցս[ժբ] ընդ անստացականին և ընդ Տեառնն և ընդ շնորհօղին անբովանդակութիւնն[ժգ]։

Նորին, Խաղաղականէն՝ Արձակէ ինձ լեզու*։

Պահեսցուք զբարւոք աւանդն, զոր ի հարցն առաք, երկիրպագանելով Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն. Որդւով զՀայր և Հոգւով զՈրդի ծանուցեալք, յորս մկրտեցաք, յորս[ժդ] հաւատացաքն, առ որս եկաքն։ Նախ քան զժո || ղովելն բաժանելով և յառաջ քան զբաժանելն հաւաքելով։ **29r.** Ո՛չ երեքեանն[ժե] մի, քանզի ոչ անգոյք են անուանքն, և կամ միոյ դիմաց, մինչզի լինել ճոխութիւնն մեր անուամբ[ժզ], այլ ոչ իրաւք. և երեքեանն մի, քանզի մի է՝ ոչ դիմաւք, այլ աստուածութեամբն. միաւորութիւն՝ Երրորդութեանն[ժէ] երկրպագեալ, և Երրորդութիւնն

* Ձեռ. 944. p. 839 v. ելն.

ա) ծնիցելո բ) կերպարան գ) առ ճշմարտութիւնզ ըստ ինքեան հանդիպելով դ) և ոչ նուազեալ կենդանութիւնս և կեանս ե) լոյսս զ) սուրբ է) իւրաքանչիւր ոք ը) թէև թ) զի և ժ) ոչ ընդ նմա ժա) հատանէ ժբ) ընդունողաց բովանդակեցելոց ժգ) և անբան բնութեանն ժդ) մկրտեցաքն, յոր ժե) երեքին ժզ) անուամբքն ժէ) Երրորդութեամբ

*ի միաւորութիւնն[ա] գլխաւորիւ. ամենայն երկրպագելի, Թագաւորական ամենայն. աթոռակից, փառակից, գերաշխարհիկ, գեր ի վերոյ քան զժամանակս[բ]. անստացական, անտեսանելի, անհրեւոյթ, անհասանելի։ Առ ինքեան որպէս ունի զկարգն՝ ինքն միայն ճանաչէ, սպասաւորելի մեզ[գ] և պաշտելի. միայնակ[դ] ի Սուրբն Սրբոց ի|ներքս շրջի, իսկ զարարածն ամենայն արտաքոյ եթող՝ զոմն առաջնովն և զոմն երկրորդաւն արգելլով վարագուրաւն. առաջնովն զերկնայինն և զհրեշտակականն յԱստուածութենէն, և երկրորդաւն զմեզ յերկնայնոցն։*

*Զայս գործեսցուք և այսպէս կալցուք, եղբարք, և որք այլազգ խորհեցին՝ իբրև ղժանտախտ ճշմարտութեանն։ Որքան է կարողութիւն ընկալցուք և բժշկեսցուք, իսկ յանբժշկելի եղելոցն[ե] ի բաց դարձցուք, զի մի ախտին հաղորդեսցուք՝[զ] նախ քան ի մերմէ[է] առողջութենէն. և Աստուած խաղաղութեան լիցի[ը] ընդ մեզ։*

**Նորին Աստուածաբանի, ի բանէն՝ Յորժամ տեսանեմ այժմ*։**

29v. *Եւ արդ, զի պարտ է զմիաստուածութիւնն[թ] պահել և զեռադէմսն[ժ] խոստովանել, կամ զերիս գոյացութիւնս՝ իւրաքանչիւրովք[ժա] հանդերձ յատկութեամբն, և պահի[ժբ], որպէս իմ բանս է՝ մի Աստուած ի մի պատճառ Որդւոյ և Հոգւոյ վերաբերելով, ոչ շարադրեցելոյ[ժգ], և զերիս գոյացութիւնս ոչ ի միում ... ալ ժողովմանց[ժդ], կամ[ժե] լուծանելոյ ի միմեանց, կամ խառնակութեան, զի մի ամենայն քակտեսցի, որովք առաւել մինն պայծառանայ[ժզ], կամ զեղեցկապէս ունի, և զմինն ըստ ինքեան Աստուածութեանն. զի այսպէս անուանեցից շարժումն և կամս և բնութեան[ժէ] զնոյնութիւն։ Իսկ զառանձնաւորութիւնս[ժը] Հայր՝ անսկզբնաւորութիւնն, սկիզբն իմացեալ և ասացեալ. բայց սկիզբն իբրև պատճառ և աղ|բեւր, և*



*զմշտնջենաւոր լոյսն[ա]։ Իսկ Որդւոյ օրինակ իմն անսկիզբըն[բ], այլ ի պատճառէն բոլորեցուն. բայց սկիզբն յորժամ առեալ՝ մի զժամանակ ի ներքս մղեսցուք և մի միջոց[գ] ինչ կարգեսցես Ծնաւղին և Ծնելումն, և մի բաժանեսցես[դ] զբնութիւնն չարաչար՝ ի ներքս դրութեամբ մշտընջենաւորակիցն[ե] և միաւորեցելումն։ Զի եթե ժամանակ երիցագոյն քան զՈրդի իցէ, յայտ է եթէ նորա առաջին եղև[զ] պատճառ Հայր, և զիարդ արարիչ ժամանակաց՝ որ ընդ ժամանակաւն է. զիարդ և տէր ամենայնի[է], եթե ընդ ժամանակաւ յառաջագոյն ըմբռնեալ իցէ և տիրեալ։*

**Նորին, յԵրկրորդ ճառէն, որ վասն Որդւոյ. ի բանէն՝ Զոր ինչ ախտանան առ բազմածաղիկ*։**

*Ճառագայթ փառաց, առաց|| առաքեալն[ը], և կերպարան էութեան[1][թ], և զօրութիւն Աստուծոյ և իմաստութիւն Աստուծոյ[2], և որքան ինչ այսպիսիք՝ յիւրաքանչիւր[ժ] որ իբրև լծակիցք ոմանք հարկաւորք ոչ ինքեամբ առանձին երեւին[ժա], այլ միաւորեալք երկրորդին[ժբ] և ընդ իրեարս հաւասարեալք. քանզի ճառագայթքն որում[ժգ] են ճառագայթք և կերպարանն ամենայն իւրաքանչիւր ումեք[ժդ] է կերպարան։ Արդ, որպէս են[ժե] ճառագայթիցն լոյս, ոչ եղելոյ պատճառ ի ճառագայթիցն, նոյնպէս և ճառագայթից բնութիւնն[ժզ] ըստ ինքեան ոչ իմացի, եթե ոչ ընդ նմին իմանի, որ լուսաւորէն. նոյնպէս և կերպարանն և զէութիւնն ցուցանէ[ժէ], և էութիւնն ի ձեռն[ժը] կերպարանին ոչ ճանաչի. այսպէս և Աստուծոյ զօրութիւնն առանց Աստուծոյ լինել ոչ կարէ,|և զԱստուած առանց զօրութեան իմանալ ոչ ունի բնութիւնն։ Արդ, որ զմի ոք ի լծակցացս յայտնանէ նշանակելոցս[ժթ] մեզ ոչ գոլ առնէ՝ ընդ նմին ի բաց բառնայ զօրութեամբ և զմիւսն եւս* 80r.

* Ձեռ. 944, p. 805 v. եւն.

ա) Երրորդութիւն ի միաւորութիւն բ) զժամանակ գ) պաշտելի ի մեզ նմանապես ի մեզ դ) և միայնակ ե) անբժշկելի եղելոյն զ) հաղորդիցիմք է) առ ի մերմէ ը) եղիցի թ) զմի զԱստուածութիւնն ժ) և զերիս դէմսն ժա) գոյացութիւնս ոչ մեւ իմանալ ժողովման, այլ իւրաքանչիւր ժբ) յատկութեամբ ժգ) շարադրեցելոց ժդ) ոչ մին իմանալ ժողովման ժե) և կամ ժզ) մին պարծանաց ժէ) զբնութեանն ժը) առանձնօրութիւնքն

*) Տես. ձեռ. 944, p. 810 եւն.

ա) լոյս բ) սկիզբն գ) մղեսցես և մի ինչ միջոց դ) կարծեսցես ծնողին և ծնեցելումն, և բաժանեսցես ե) մշտնջենաւորակցին զ) նորա նախ առաջին է է) ամենեցուն ը) զՈրդի առաքել թ) էութեանն ժ) յորոց իւրաքանչիւր ժա) ոչինչ ինքեամբ առանձինն երեւելի ժբ) երկոքին ժգ) ուրումն ժդ) ամենայն իրօք ուրումն ժե) ոչ են ժզ) ճառագայթիցն բնութիւն ժէ) կերպարան զէութիւնն երեւեցուցանէ ժը) եթե ոչ ի ձեռն ժթ) նշանակելոցս

1) Եբր. Ա, 3. 2) Հմմտ. Ա. Կորնթ. Ա, 24. 30.

Յետ սակաւուց*)։

Եւ ասեն՝ ինքն խոստովանեաց Տէրն[ա], եթե առաքեցայ ի Հօրէ[1]). և զի առաքեցաւն՝ ճանաչես, և զի որ առաքեցաւն ընդ նմա է՝ ոչ լուար, և ոչ[բ] վարդապետեցար ասելովքն[գ], եթե առաքի և ոչ հեռանայ. քանզի առաքի յաղագս[դ] մարդասիրութեանն, և ոչ հեռանայ վասն անհատ բնութեանն։ Ասեն դարձեալ Միածնին խոստովան եղեալ[ե] մեծ քան զինքն զՀայր[2]). արդ[զ], քննեսցուք, եղբարք, մի՞ զուցէ ստիցէ, որ ասացն եթե՝ Ես ի Հայր իմ և || [30v.] Հայր յիս[3])։ Եթէ մեծ է Հայր քան զՈրդի, զիա՞րդ տանիցի[է] զմեծն նուազն, և եթե նուազ է[ը] Որդի քան զՀայր, զիա՞րդ լցեալ լինի մեծն նուազաւն. քանզի նեղեսցի ամենայն իրաւք[թ] մեծն ի փոքուն, և նուազն ձգտեալ առ գերազանցն՝ ոչ կարասցէ[ժ]։ Որպէս զի Հայր, կարևոր է[ժա] նուազանալ ի Հօր զՈրդի և առաւելուլ յՈրդւոջ[ժբ] զՀայր. և ստէ որ ասացն՝ Ես ի Հայր. պարտ էր ասել, եթե արդարև փոքր էր, եթե ես[ը] ի մասին Հօր[ժգ]. ճշմարիտ էր ասել, եթե մեծ է Հայր, եթէ մասն ինչ Հօր յիս[ժդ]։ Ապա եթե բովանդակ Հայր ի բովանդակ Որդւոջ, և բովանդակ Որդի ի բովանդակ Հօր[ժե], ո՞ւր է մեծն|կամ[ժզ] նուազն։ Եւ զի՞նչ պարտ է և արժան բազում[ժէ]. վայել է միով ձայնիւ զամենայնն ի բաց ջնջել զշատախօսութիւն[ժը]. Որ ի կերպարանս[ժթ] Աստուծոյ է՝ ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զգոլն[ի] հաւասար Աստուծոյ[4]։ Ասա ինձ, զհաւասարն ո՞ր զանհաւասարդ[իա] իմանաս։

## Երանելոյն Յովհաննու Կոստանդնուպօլսի եպիսկոպոսին՝ ի սուրբ Երրորդութիւնն**։

Բժշկի նման է եկեղեցւոյ վարդապետք[իբ], և[ը] բազմաց զանազան[ա] ախտից բժշկական դեղ մատուցանելով՝[բ] իւրաքանչիւր ումեք ախտացելումն ըստ պիտոյից ցաւոց[գ] տայ զդեղն։ Որպիսի՞ ինչ. եկին ոմանք ի բժշկական եկեղեցիս, ի յայտման || [31r.] ախտէ ամբարտաւանութեան[դ] ըմբռնեալք. առեալ (զդեղ խոնար)հութեանն՝ յայտուցեալ ախտէ հպարտութեանն բժշկեցան, և այլք ընթացան ի բարկութենէն[ե] բոցակիզեալք. նստեալ[զ] և նոքա յերկայնութենէ[է] վարդապետութեանն՝ զոգւոց հիւանդութիւնսն[ը] շիջուցին։ Ոմանք ի մարմնոյ ախտից[թ] ի պակշոտութիւն մոլեալք[ժ] ընթացան, և նոքա առնուլ[ժա] զդեղ ողջախոհութեան[ժբ] սրբութեամբ զինքեանս պնդեցին։ Արդ, եկա՛յք, սիրելիք, վասն զի որ յառաջագոյն ժամանեալք զվարդապետս[ժգ] զհիւանդացելոցն զանձինս երեքայարմար հաւատովն բժշկեաց, և մեք զսորա հետոցս[ժդ] երթիցուք զհետ. քանզի կարծեմ զյոլովս, որք աստ[ժե] են, ախորժելով լսել յաղագս հաւատոյ. իբր[ժզ] ոչ եթե ինքեանք պէտս ունիցին ինչ[ժէ], վասն զի առողջք են, ախորժեն[ժը] ի ձեռն այնորիկ զհիւանդացեալսն բժշկել։

Յետոյ.*

Նախ առաջին հաւատ յԱստուած՝ իբր են անշօշափելի, անըմբռնելի, անտեսանելի, անքննելի, անխնդրելի, անճառելի, լռութեամբ պատուեալ և մտօք երկրպագեալ։ Հաւատ ի Հօրէ սկսանի և յՈրդի գայ և ի Հոգի[ժթ] լնու։ Հաւատ՝ աթոռ անձին, հիմն կենաց, արմատ անմահ։ Հաւատ[ի]՝ արմատ կենդանութեան Հայր, ոստ անթառամ Որդի, պտուղ անմահ Հոգին Սուրբ։ Երրորդութիւն պարզ, առանց շարադրութեան, անիմանալի, անճա || [31v.] ռելի, անպատմելի, անորիշ՝ ըստ միաբանութեան, ըստ զօրութեան, ըստ գործոյ, ըստ աստուածութեան, ըստ մեծութեան[իա], էութեամբ՝ անուամբ[իբ] միայն բաժանեալ[իգ], բայց իւրօք և զօրութեամբ միաւորեալ[իդ]։ Երրորդութիւն, որ նախ քան

---

* Տես Ձեռ. 944, p. 811 և ն ** Ձեռ. 906 p. 120. Յաղագս հաւատոյ.

ա) Տէր բ) Որ առաքեցն զիս. ասէ, ընդ իս է. և ոչ գ) ասացեալովքն դ) վասն ե) Միածին խոստովանել զ) յասելն թե՝ Հայր մեծ է քան զիս. արդ է) և զիա՞րդ տանի ը) չ. թ) ամենայնօք ժ) ձգտել առ գերազանցելն ոչ կարէ ժա) Որպէս զի հարկաւոր է ժբ) Որդւոյ ժգ) Հօր, և Հայր յիս ժդ) չ. ճշմարիտ—Հօր յիս ժե) Ապ՝ եթե բովանդակ Հայր ի բովանդակ Որդւոյ. և բոլոր Հայր ի բոլոր Որդի ժզ) և կամ ո՞ւր ժէ) արժան է բազումս ասել ժը) զամենայն նոցա ի բաց ջնջել զշատախօսութիւնն ժթ) ի կերպարանի ի) գոլ իա) զհօտասարն լսելով զանհօտասարն իբ) վարդապետ

1) Հմմտ. Յովհ. ԺԲ, 49. ԺԴ, 24. 2) Յովհ. ԺԴ. 28. 3) Յովհ. ԺԴ, 10. 4) Փիլ. Բ, 6.



* p. 121.

ա) և զանազան բ) տանելով գ) ցաւոցն դ) ի բժշկական եկեղեցւոյս յայտմանէ ախտէ ամբարտաւանութեանն ե) ի բարկութենէ զ) զնստեալք է) յերկայնմտութենէ ը) զոգւոյն զհիւանդութիւն թ) ախտիցն ժ) մոլորեալք ժա) առնլով ժբ) ողջախոհութեանն ժգ) ժամանեալ վարդապետս ժդ) սորա հետոցն ժե) որք աստ ժզ) իբրև ժէ) պէտս ինչ ունիցին ժը) այդ ախորժեն ժթ) ի Հոգին ի) Հաւատոյ իա) ըստ գործոյն, ըստ աստուածութեանն, ըստ մեծութեանն իբ) էութեամբ և անուամբ իգ) բաժանեալք իդ) միաւորեալք

զյաւիտեան[ա] էր. ոչ ի ժամանակէ իմիքէ սկիզբն է առնել[բ], այլ անսկիզբն, անժամանակ, անծերանալի, անարատ, անմահ, անվախճանելի. ոչ նուազէ[գ], ոչ ծերանայ, այլ միշտ որպէս էն և մնայ և կայ[դ]։ Երրորդութիւն՝ ոչ այժմ գտեալ երկրպագութիւն[ե], այլ յաւիտենից ի հրեշտակաց յերկինս երկրպագեալ և միշտ[զ] ի վերայ երկրի փառաւորեալ, ի մարգարէից[է] պատուեալ, յառաքելոց[ը] քարոզեալ և յեկեղեցւոյ մինչև ցայժմ մեծացեալ։ Սկսանելով, սիրելիք, յերկնայ|նոցն արարածոց սկիզբն՝ ցուցանել զԵրրորդութիւնն[թ], զմի տէրութիւնն[ժ] և զերկրպագութիւն և զմեծութիւն։ Երից[ժա] հրեշտակականն զօրութիւնքն քերովբէից և սերովբէից՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ անդադար բերանով նուագ երգելով՝ ի մի տէրութիւն աւարտեն զփառսն[1])։ Երեք հրեշտակս Աբրահամու հայրապետի[ժբ] հանդիպեալ ընդ կաղնեաւն՝ ի Մամբրէ խորանին[ժգ] տեսանելով, մի տէրութիւն զուգապատիւ Երրորդութեանն հրեշտակացն ընձեռեաց. երեք հրեշտակք՝ կաղնին, խորանն և Աբրահամ. խաչն[ժդ] և եկեղեցի և զաւակ մարդկան։ Աբրահամ[ժե] ճանապարհ երից աւուրց գնաց, զորդի[ժզ] իւր զԻսահակ բոլորապտուղ լինել[ժէ], երեքօրեայ որ խաչիւն ‖ 82r. չարչարանք[ժը] եղեն Միածնին. և զի Քրիստոսի խորհուրդն Աբրահամ Սահակաւ[ժթ] տեսանէր զՏէր,[ի] վկայէ բանն[իա] ասելով. Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զաւր[իբ] իմ, ետես և ցնծացաւ[2])։ Երից աւուրց ճանապարհ և Մովսէս գնայր՝ զոհել Աստուծոյ, և ածէր զՓարաւոն[իգ]. Ճանապարհ երից աւուրց երթիցուք յանապատն, զի զոհեսցուք[իդ] Տեառն Աստուծոյ[3])[իե]։ Երիս

ա) զյաւիտեանս բ) ումեքէ սկիզբն եառ լինել գ) ոչ աճէ, ոչ նուազէ դ) որպէս էն կայ մնայ ե) յերկրպագութիւն զ) և ի հարցն է) ի մարգարէիցն ը) յառաքելոցն թ) զԵրրորդութեանն ժ) տէրութիւն ժա) Երիցս ժբ) Աբրահամ հայրապետն ժգ) ընդ կաղնեաւ Մամբրեի ի խորանին ժդ) երեք հրեշտակք՝ և կաղնին և Աբրահամ և խորանն. Երրորդութիւն՝ և խաչ ժե) Նոյն ինքն Աբրահամ ժզ) զորդին ժէ) բոլորապտուղ Աստուծոյ մատուցանել ժը) երեքաւրեայ ճանապարհ և Իսահակ բոլորապտուղ լինել, երեքաւրեայ որ խաչին չարչարանքն ժթ) և զՔրիստոսի խորհուրդն Աբրահամ Իսահակաւ ի) Տէրն իա) չ. իբ) զի տեսցէ զաւրն իգ) ցՓարաւոնի իդ) յանապատ զոհել իե) Աստուծոյ մերում

1) Հմմտ. Ես. Զ, 3. 2) Յովհ. Ը, 50. 3) Ելք Գ, 18, Ե, 3.



չափս նաշւոյ[ա] Սառայի առեալ՝ զնկանակսն[բ] արար. երեք չափքն՝ Սառա և նաշիհ և նկանն[գ], երեքայարմար հաւատ ի ծածուկ սիրտ[դ] մարդկան պահեալ։ Երիս զաւազանս Յակոբայ առեալ և ի ջուրն դնելով՝ զոչխարսն Լաբանու[ե] արբուցանէր. երեք գաւազանքն և ջուրն և ոչ|խարքն[զ], որ ըմպէին. Երրորդութիւնն և մկրտութիւնն[է] և ժողովուրդ լուսաւորեալ։ Երիս տիւս և գիշերս[ը] Յովնան ի ձկանն արար. երեք տիւք և գիշերք, Յովնան[թ] և ձուկն և երեքաւրեայ ընակութիւնն[ժ] Միածնին ի դժոխս։

Եւ յետ սակաւուց *։

Զերիս աւուրսն Նինուէացիքն[ժա] պահելով փրկեցան. երեք աւուրքն՝ պահքն և Նինուէացիքն[ժբ] կենդանիք, Երրորդութիւն լուսազգեստ[ժգ] և ի բաց լինել չարաց[ժդ] և աշխարհի կենդանութիւն։ Երից և Եղիա մարգարէն[ժե] ի վերայ շիրմիցն և անդամոցն[ժզ] զջուրն հեղլով՝ հուր ի յերկնից ի վերայ այնորիկ իջոյց[ժէ]. երից չափ՝[ժը] ջուրն և շիրմքն և անդամքն[ժթ] արջառոցն և ‖ 82v. երկնային հուրն, երեքայարմար մկրտութիւնն և խաչն և արիւնն Քրիստոսի[ի]։ Երիցս յաւուրն[իա] և Դանիէլ զպատուհանն[իբ] տան իւրոյ բանալով՝ ընդ արեւելս աղօթէր և հայցուածոյն[իգ] հանդիպէր. ուսուցանէր խորհուրդ[իդ], Եթէ պարտ և արժան է մեզ, զաչս ոգւոց մերոց բանալով՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն[իե] ընդ արեւելս պատահել[իզ]։ Երեք մանկունք[իէ] առանց ապականութեան ի հնոցին անկեալք՝ ինքեանք ոչ[իը] չարչարեցան, բայց զՔաղդէացիսն այրեցին։

* p. 122v.

ա) նաշխոյ բ) զնկանակն գ) երեք չափք՝ և նաշիհ և Սառա և նկանքն դ) և եկեղեցի ի ծածուկ սրտի ե) զոչխարսն Ղաբանու զ) երեք գաւազանք և ջուր և ոչխարք է) Երրորդութիւն և մկրտութիւն ը) և երիս գիշերս թ) և Յովնան ժ) երեքաւրեա բնակութիւն ժա) աւուրս և Ննուեացիքն ժբ) աւուրքք և պահք և Ննուեացիքն ժգ) լուսազգեստ ժդ) չարեաց ժե) Երիցս Եղիաս մարգարէ ժզ) անդամոց արջառոցն ժէ) իջոյց է վերայ այնորիկ ժը) երիցս ժթ) անդամք ի) մկրտութիւն և խաչ և մարմինն Քրիստոսի և երկնային ճառագայթքն իա) յաւուր իբ) Դանիէղ զպատուհանս իգ) հայցուածոցն իդ) ուսուցանէ խորհուրդն իե) Հոգւոյն Սրբոյ իզ) պատահեալ իէ) մանկունքն իը) ոչինչ

Եւ յետ այդ[*].

Քանզի երիս գոյացութիւնս մի տէրութիւն է, երիս, ասէ, ձաղեցայ[ա], այլ մի անգամ քարկոծեցայ, այս է՝ երիս էութիւնս խոստովանեցի և ի մի հաւատ Երրորդութեանն՝ վիմաւ խոստովանութեան[բ] ի մի ձայնակցութիւն զանձն[գ] արձանացուցի։ Երիցս[դ] նաւաբեկեցայ, այս է՝ զբեռն հրէական մեղացն յանուն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն[ե] յաղբեր մկրտութեան[զ] ընկղմեցի։ Երից գրուաց ալեր և արքայութիւն[է] երկնից նմանեցաւ, զոր կնոջն[ը] առեալ և[թ] փոքր խմոր ծածկեալ՝ զամենայն զանգուածն խմորեաց. երեք գրիւ ալեր և փոքր խմոր և կինն[ժ], որ խմորէրն՝[ժա] իմաստութիւն է, ի ձեռն Քրիստոսի[ժբ] զամենայն մարդկութիւն[ժգ] յԵրրորդութեանն հաւատ դարձուցանելով։ Այսոցիկ խորհրդոց ամենեցուն իբրև կնիք

88r. իմն դնելով Տէր, ‖ յերից մղխելով ի ջուրն[ժդ], մի մկրտութիւն աշակերտացն[ժե] աւանդեաց, ասելով. Գնացէք[ժզ] աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք[ժէ] զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ[1]). իմացուցանել[ժը] պատրաստարար ցուցցուք՝ միոյ գործոյ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ ցուցելոյ[ժթ], հարկաւոր է ամենայն իրօք և մի բնութիւն հաւատալ. քանզի որոց գործն մի է, նոցա և բնութիւնն և զօրութիւնն մի է։

Արդ, սկսցուք ասել յաղագս աշխարհարարութեանն և վասն որդեգրութեան մարդկան, վասն ազատութեան և[թ] վասն երկնի և երկրի հաստատութեան, միանգամայն իսկ[ի] պարզաբար յաղագս ամենայն գործոց և այլոց պիտոյից կենաց[իա] մերոց զպատճառն՝ ի Հօրէ և յՈրդւոյ և

[*] p. 123.

ա) Քանզի Հայր և Որդի և Հոգի Սուրբ՝ երեք գոյութիւնք և մի տէրութիւն, և երիցս, ասէ, ձաղկեցայ  բ) խոստովանութեանն  գ) զանձն իմ  դ) Երիցս, ասէ,  ե) Հոգւոյն Սրբոյ  զ) մկրտութեանն  է) արքայութիւնն  ը) կնոջ  թ) չ.  ժ) փոքր խմոր և կին  ժա) խմորէր  ժբ) զամենայն Քրիստոսի  ժգ) մարդկութիւնս  ժդ) Տէր մեր յերկինս մխրճելոյ ի ջուրն  ժե) աշակերտացն իւրոց  ժզ) Երթայք  ժէ) մկրտելով  ժը) Եւ եթէ պարտ և արժան իցէ զգործն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ մի ցուցանել  ժթ) և Սրբոյ Հոգւոյն ցուցանելով  ի) և միանգամայն  իա) կենացս

1) Մատթ. ԻԸ, 19.



ի Սուրբ Հոգւոյն[ա]։|Սկսցուք յառաջնոցն և եկեսցուք յերկրորդս, այսպէս[բ] ի կարգի զբանս մեր անցուսցուք։ Զերկինս[գ] արար Հայր, այլ ոչ առանց Բանին և Հոգւոյն[դ]. քանզի՝ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա[1][ե]։ Զամենայն աշխարհ ելից Հայր, որպէս և գրեալ է. Զերկին և զերկիր ես լնում, ասէ Տէր[2]). զՈրդի[զ], որպէս և գրեալ է. Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ[3])։ Լի՛ր իմաստութեանն, որ ասէ[է]. Հոգի Տեառն ելից զաշխարհ[4])։ Զի՞նչ է մեծ յարարածս՝ մարդ. ոչ ի միայն ի Հօրէ եղև[ը], ասէ, և[թ] գործակից եղև Որդի, կատարեաց և[ժ] Սուրբ Հոգին։ Արասցո՛ւք[ժա] մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան[ժբ] [5]). ‖ արասցուք՝ ոչ արարից  88v.
ես, ոչ արասցես[ժգ] դու, ոչ արասցէ նա, այլ արասցուք. զի ի բաց արասցէ զարբանեկութեան կարգս և զզուգապատուութիւնն ուսուսցէ[ժդ], ասէ՝ Արասցուք[ժե]. հասարակաց են կամքն, հասարակաց են գործքն[ժզ], հասարակաց են ստացուածքն[ժէ]։ Եւ զի Հայր և Որդի և Սուրբ Հոգին[ժը] արարին զմարդն՝ Դաւիթ ինձ վկայէ, ասելով ցԱստուած. Ձեռք քո արարին և ստեղծին զիս[6]). ոչ աջ քո միայն, որ է Միածին քո, այլ ձեռք քո, որ է Բանդ և Հոգիդ. որպէս թէ՝ քո իմաստութիւն ստեղծ զիս և հանճար Հոգւոյ քո ելից զիս։ Նոյնպէս և Յովբ ասէր ցԱստուած. վասն զի՝ Ձեռք քո արար զիս[7]),|և զօրութիւնք երկնից նովին ձեռօք եղեն. թէ՝ Բանիւ և Հոգւով ամենայն զօրութիւնք նորա[8])[ժը]։ Եւ մարգարէն Ովսէէ[ժթ].

ա) և ի Սրբոյ Հոգւոյն կատարեալ  բ) յերկրորդսն և այնպէս  գ) զերկին  դ) Բանի և Հոգւոյ  ե) Նոցա  զ) ելից և Որդի  է) որ ասէ յաղագս Հոգւոյն  ը) ոչ ի Հաւրէ միայն եղև  թ) այդ  ժ) և կատարեաց  ժա) Արասցուք, ասէ  ժբ) ըստ պատկերի և նմանութեան մերում  ժգ) արայ  ժդ) այդ արասցուք. քանզի, եթէ ասացեալ՝ արա դու, ցուցանէր առբանեակ, այդ զի ի բաց բարձցէ զորբանեկութեանն կարգ և զուգապատուութեանն ուսուսցէ զկարգ  ժե) արասցուք մարդ  ժզ) համարակաց գործն  ժէ) համարակաց և ստեղծուածն  ժը) արարին զիս և ստեղծին. վասն զի երկինք և զաւրութիւնք երկնից նորին ձեռաւք եղեն, ասէ և Դաւիթ. Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և Հոգւով բերանոյ նորա ամենայն զաւրութիւնք նոցա  ժթ) Ովսէէ

1) Սաղմ. ԼԲ, 6.  2) Երեմ. ԻԳ, 24.  3) Յովհ. Ա, 3.  4) Իմաստ. Ա, 7.  5) Ծննդ. Ա, 26.  6) Սաղմ. ՃԺԸ, 73.  7) Յոբ. Ժ, 8.  8) Համա. Սաղմ. ԼԲ, 6.

Որոյ ձեռք արարին զօրս[ա] երկնից [1])․ քանզի աստ նշանակէ՝ Բանիւ և Հոգւով զզօրս երկնից ստացեալ[բ]։ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում․ ոչ ըստ պատկերաց մերոց, այլ պատկերի մերում[գ]․ արասցուքն յոքնական է, իսկ զպատկերի միաւորական է[դ]․ և զի մի՛ ոք կարծիցէ ըստ[ե] Հօր կերպարանի միայն լինել մարդոյն[զ], ի վերայ բերէ զմերումն։ Զի[է] կերպարանն այն նախ եղեալն Ադամայ յանցանաւքն աղաւաղայաւ[ը] և մեռաւ, կարօտացաւ մաքրութեան և նորոգութեան[թ]․ ոչ յանուն Հօր միայն
84r. ի մկրտութեան նորա ‖ նոր նորոգի, այլ և[ժ] յՈրդւոյ և Հոգւոյն Սրբոյ[ժա]․ քանզի և յսկզբանն[ժբ] այսպէս եղեւ Յաղագս որոյ կնքէ Հայր ի մկրտութեանն, որպէս[ժգ] Պաւղոս ասէ․ Որ կնքեաց[ժդ] զմեզ ի սոյն յոյս՝ Աստուած, և աւծ զմեզ Աստուած [2]) և կնքեաց Աստուած[ժե]։ կնքէ և Հոգին Սուրբ․ Մի՛ տրտմեցուցանէք, ասէ, զՀոգին Սուրբ, որով կնքեցարուք[ժզ] յաւուր փրկութեան մերում [3])։ Կնքեալ ի Հօրէ և ի Հոգւոյն[ժէ] սիրտք մեր՝ ոչ յերկուս պատկերս կերպարանիմք, այլ ի մի՛ յՈրդւոյ[ժը]․ Պաւղոս ասէ․ Զոր յառաջագոյն ծանուցեալ[ժթ] և կանխաւ սահմանեալ՝[ի] կերպարանակիցս Որդւոյ[իա] իւրոյ [4])։ Յայտնանէ ժողովլ ի[իբ] մի գոլ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն[իգ] պատկեր։ Քանզի թե[իդ] ի Հոգւոյն Սրբոյ կնքեալ|[իե] սիրտք մեր՝ կերպարանակից Որդւոյ լինիմք[իզ] և պատկեր Աստուծոյ, որպէս գոչէ[իէ] Պաւղոս․ ասելով․ Այր ոչ պարտի ծածկել զգլուխ իւր[իը], վասն զի պատկեր և փառք Աստուծոյ է [5])․ Եւ առաւել Հոգին Սուրբ պատկեր է Աստուծոյ։

ա) զզաւրս  բ) Հոգւով և Բանիւ զերկնից զզաւրսն ստացեալս  գ) այդ արասցուք մարդ ըստ կերպարանի մերում  դ) ըստ պատկերին միաւորական  ե) կարծեսցէ եթէ ըստ  զ) եղեւ մարդն  է) յաղագս այնորիկ զի  ը) աղտեղեցաւ  թ) նորոգութեան և մաքրութեան  ժ) ի մկրտութեանն նորանայ, եթէ ոչ  ժա) եւ ի Սրբոյ Հոգւոյն  ժբ) ի սկզբանն  ժգ) որպէս և  ժդ) զործեացն  ժե) ի սոյն յոյս Աստուած է, որ եւած զմեզ և կնքեաց  ժզ) Աստուծոյ, որով կնքեցայք  ժէ) յաւուրն փրկութեան, կնքեալ ի Հաւրէն փրկութեան և յՈրդւոյ և ի Հոգւոյն  ժը) յՈրդւոյն, որպէս և  ժթ) զորս յառաջին ծանեաւ  ի) սահմանեաց  իա) Որդւոյն  իբ) չ․  իգ) Սրբոյ Հոգւո  իդ) եթէ  իե) կնքեալք  իզ) լինիմք Որդւոյն  իէ) գոչէն  իը) զգլուխն

1) Ովսէ ԺԳ, 4․  2) Բ․ Կորնթ․ Ա, 22 և 21․  3) Եփ․ Դ, 30․  4) Հռոմ․ Ը, 29․  5) Ա․ Կորնթ․ ԺԱ, 7․



Մեծ է Հայր, մեծ է Որդին, անբովանդակ է[ա] և Հոգին Սուրբ։ Մեծ է Տէր[բ] և մեծ է զօրութիւն նորա[գ]․ Քրիստոս Աստուծոյ զօրութիւն, և իմաստութեան Նորա ոչ գոյ թիւ, որ է[դ] Հոգին Սուրբ․ քանզի՝ Հանգիցէ ի վերայ նորա Հոգի[ե] իմաստութեան և հանճարոյ [1])։ Խաղաղութիւն է Հայր, որպէս և[զ] Պաւղոս ասէ․ Նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան ի մի [2])․ Խաղաղութիւն է[է] Հոգին Սուրբ․ Իսկ պտուղ Հոգւոյն այս է․ սէր, խնդութիւն, խաղաղութիւն [3])։ ‖ Աղբիւր է Հայր․ 84v.
Ի քէն է, Տէր[ը], աղբիւր կենաց [4])։ Աղբիւր է և Որդի․ Զիս թողին մարդիկ՝ զաղբերս ջրոյս[թ] կենդանւոյ [5])։ Եթէ ոչ էր աղբիւր և Հոգին Սուրբ, ոչ[ժ] ասէր Պաւղոս․ Ամենեքեան զնոյն հոգի արբաք [6])։ Կատարելագոյն[ժա] ի Տեառըն բանիցն ուսանիլ․ Եթէ ոք ծարաւի է, եկեսցէ առ իս և արբցէ [7]), որպէս և[ժբ] ասեն Գիրք․ Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոյ կենդանւոյ [8])։ Զայս ասէր վասն Հոգւոյն Սրբոյ, զոր հանդերձեալ էին առնուլ հաւատացեալք[ժգ] ի նա [9])։ Լոյս է Հայր, վասն զի՝ Աստուած լոյս է [10])․ լոյս է և Որդին[ժդ]․ Ես եմ լոյս աշխարհի [11])։ Եթէ ոչ էր լոյս և Հոգին Սուրբ, ոչ արդեւք ասէր Պաւղոս․ ԶՀոգին մի՛ շիջուցանէք [12])։ Դաւիթ[ժե] առ|անձնաբար ասէ[ժզ]․ Լուսով քո տեսցուք զլոյս [13])․ ասէ՝[ժէ] Որդւով քո տեսցուք զՀոգին[ժը] Սուրբ։ Ազատ է Հայր զծառայսն[ժթ] մեղաց, ազատ է և Որդին[ի]․ քանզի ասէր ցհրեայսն․ Թէ Որդին զձեզ ազատեսցէ, ճշմարիտ ազատք լինիցիք [14][իա]։ Ազատ է և Հոգին, վասն զի՝ Ուր Հոգի[իբ] Տեառն է, անդ ազատութիւն է [15]։ Աւրէնք Հօր ազատին, աւրէնք Որդւոյ ազա-

ա) Որդի, անբովանդակելի է  բ) Տէր մեր  գ) իւր  դ) թիւ, այս  ե) Հոգի Աստուծոյ, Հոգի  զ) Հայր․ Ահա խոնարհեցուցանեմ ի նոսա իբրև գետ զխաղաղութիւն[16]․ խաղաղութիւն է եւ Որդի, որպէս  է) է եւ  ը) զի ի քէն է, ասէ․  թ) թողին զաղբեւր ջրոյ  ժ) ոչ արդեւք  ժա) կատարելագոյն ասէ  ժբ) արբցէ ջուր, եւ որպէս  ժգ) Հոգւոյն. զոր ընդունելոց էին հաւատացեալքն  ժդ) Որդի  ժե) Բայց վասն զի բանադրաւեալ իմն այս բազմաց թուի, Դաւիթ  ժզ) ասասցէ  ժէ) այս է  ժը) զլոյս՝ զՀոգին  ժթ) զծառայն  ի) Որդի  իա) ճշմարտապէս ազատք եղիջիք  իբ) Հոգին

1) Ես․ ԺԱ, 7․  2) Եփ․ Բ, 14․  3) Գաղ․ Ե, 22․  4) Սաղմ․ ԼԵ․ 10․  5) Երեմ․ Բ, 13․  6) Ա․ Կորնթ․ ԺԲ, 13․  7) Յովհ․ Է, 37․  8) Յովհ․ Է, 38․ հմմտ․ Ես․ ԺԲ, 3․ Յովէլ Գ, 19․  9) Յովհ․ Է, 39․  10) Ա․ Յովհ․ Ա, 5․  11) Յովհ․ Ը, 12․  12) Ա․ Թես․ Ե, 19․  13) Սաղմ․ ԼԵ, 10․  14) Յովհ․ Ը, 36․  15) Բ․ Կորնթ․ Գ․ 17․  16) Հմմտ․ Ես․ ԽԸ, 18․

տեն. այլ[ա] Աւրէնք Հոգւոյ ազատեն[բ] զքեզ ի ծառայութենէ և յապականութենէ[1])[գ]: Բարի է Հայր, բարի է և Որդին[դ], որ ասէ[ե]. Ակն քո չա՞ր է, զի ես առատ[զ] եմ[2]). բարի է Հոգին[է] Սուրբ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ
35r. յերկիր[3])[ը]: ‖ Ուր կամի՝ է Հայր, վասն զի ո՛չ զոք ունի, ընդ որով դասի: Ուր կամի՝ է[թ] Որդի, վասն զի է ազատ[ժ]: Ուր կամի՝ է[թ] Հոգին. Ուր[ժա] կամի շնչէ, և զձայն նորա լսես, այլ ո՛չ գիտես՝ ուստի՞ գայ կամ յո՞[ժբ] երթայ[4]): Զամենայն պարունակէ Հայր, զամենայն պարունակէ Որդի[ժգ], զբովանդակ պարունակէ և Հոգին Սուրբ, որպէս և գրեալ է[ժդ]. Յո՞վ[ժե] երթայց ես յոգւոյ քումմէ և յերեսաց քոց ես յո՞վ փախեայց[ժզ 5]): Ամենազօր է Հայր, որպէս ասէ[ժէ] Յովբ. Գիտեմ, Տէր, զի զամենայն կարես, և անկարութիւն քեզ ոչինչ է[6])[ժը]: Ամենազօր է և Որդին. Հաւատացելումն[ժթ] ամենայն ինչ կարաւղ է[7])[ի]: Ամենազօր և[իա] Հոգին Սուրբ է՝ ամենայն ինքն Աստուծոյ իմաստութիւն. Հոգի[իբ] Սուրբ՝|հոգի իմանալի, սուրբ, բազմամասն, նուրբ, դիւրաշարժ, զուարաւոր, անաղտ, յայտնի, անվնաս, արագ, անխափան, բարեգործ, մարդասէր, հաստատուն, ամուր, անհոգ, ամենազօր և ամենեցուն այցելու, և զմարդիկ[իգ] վերակացուս ունէ. այսպէս վկայէ ինձ Պաւղոս ի Գործս առաքելոցն. Յորում[իդ] եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչ[8])[իե]:

Առաքեաց մարգարէս Հայր, առաքէ[իզ] և Որդի, առաքէ[իզ] և Հոգին Սուրբ. Էսայիաս բարբառելով առ Տէր. Տէր[իէ] առաքեաց զիս և Հոգի նորա[9]: Ի Հօրէ առաքեցան

ա) այդե  բ) կենաց ազատեցին  գ) ի ծառայութենէ ապականութեան  դ) Որդի  ե) ասէ Թե  զ) բարի  է) եւ Հոգին  ը) ինձ յերկիր ուղիղ  թ) է եւ  ժ) ազատ է  ժա) Հոգին ուր  ժբ) եւ կամ ուր  ժգ) եւ Որդի  ժդ) որպէս ասէն Դաւիթ  ժե) Յո՞  ժզ) քոց ո՞ւր փախեայց  ժէ) ասէն  ժը) է քեզ եւ ոչինչ  ժթ) Որդի, ասէ Տէրն յաւետարանին. Հաւատացելոյն  ի) կարողութիւն է  իա) Ամենազաւր է  իբ) ասէ նոյն ինքն Աստուծոյ իմաստութիւնն. Հոգին  իգ) ո՛չ միայն այցելու է Հոգին Սուրբ, այլ եւ զմարդիկ  իդ) Հայեցարուք յանձինս եւ յամենայն հաւտ., յորում  իե) վերակացուս Հոգին Սուրբ  իզ) առաքեաց մարգարէս  իէ) որպէս մի ի մարգարէիցն Եսայիաս բարբառի՝ ասելով. Եւ այժմ Տէր Տէր

1) Հռմա. Հռոմ. Ը, 2. 2) Մատթ. Ի, 15. 3) Սաղմ. ՃԽԲ, 10. 4) Յովհ. Գ, 8 5) Սաղմ. ՃԼԸ, 7. 6) Յովբ. Ժ, 13. ԽԲ, 2. 7) Մարկ. Թ, 22 8) Գործք Ի, 28. 9) Ես. ԽԸ, 16.



առաքեալքն, որպէս և գրեցաւ. Քո էին և ինձ ետուր[1]: Առաքին և յՈրդւոյ. Առաքեմ զձեզ. գնացէք և աշակերտեցէք զամենայն հեթանոս[2]: Առաքէ և Հոգին Սուրբ[ա]. ‖ Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն՝ իջին ի Սելևկիա[3]: 35v.
Ասեմ[բ] իբրև Տէր, լուարո՞ւք իբրև ծառայ[գ]: Ի պաշտել նոցա և ի պահել Տեառն, հայեցարո՞ւք. ի պաշտելն[դ] ասէ. ասացեն ոք յանդգնին պաշտօնեայ զՀոգին Սուրբ ասել. քանզի՝[ե] Ո՞ արար զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ[4]: Բայց ո՛չ պաշտօնեայ և[զ] Հոգին Սուրբ, այլ պաշտեալ. ի պաշտել[է] նոցա, ասէ, Տեառն՝ Ասաց Հոգին Սուրբ. որոշեցէք ինձ զՊաւղոս և զԲառնաբաս ի գործ[5][ը]: Տեսե՞ր զիշխանութիւնն. ծառայ ո՛չ երբէք ասէ. Որոշեցէք ինձ. այլ[թ] Տեառն է ձայնս. այժմ դուք[ժ] որոշեցէք ինձ զՊաւղոս և զԲառնաբաս, քանզի ես[ժա] որոշեցի զդոսա յորովայնէ մօր իւրեանց:

|Յետ սակաւուց*.

Այժմ այլ իմն հարցումն հայհոյութեան հարցանեն[ժբ] ասելով. Ունի՞ աթոռ Հայր. ասեմք՝ այո. Աստուած նստաւ յաթոռ Սրբութեան իւրոյ[6]. ունի՞ և աթոռ և Որդի. ասեմք՝ այո[ժգ]. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս[7][ժդ]: Եւ դու յորժամ աթոռ լսես[ժե] Աստուծոյ՝ աստուածվայելչաբար իմա զաթոռն[ժզ], զիշխանութիւնն,

* p. 157 v.

ա) առաքեալքն եւ յՈրդւոյ. Քանզի ահա զձեզ առաքեմ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց[8]). Առաքեցան եւ ի Հոգւոյն Սրբոյ, որպէս ասէ ի Գործս Առաքելոցն  բ) ի Հոգւոյն Սրբոյ, իջին ի Սելեւկիայ: Կոչեաց Հայր զառաքեալսն, կոչեաց եւ Որդի, նմանապէս եւ Հոգին Սուրբ կոչեաց զնոսա. ի պաս տանելն նոցա Տեառն յայտ է Թե առաքելոցն ասէ Հոգին Սուրբ. Որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՊաւղոս ի գործ, յոր կոչեմ զդոսա. որոշեցէք դուք ինձ զԲառնաբաս եւ զՊաւղոս. ասեմ  գ) եւ լուարուք իբրեւ ծառայք  դ) եւ ի պաշտելն  ե) եԹէ պաշտաւնեայ է Հոգին Սուրբ, մի ի հրեշտակաց եւ ի սրբոց առաքելոցն է, քանզի  զ) ո՛չ է պաշտաւնեայ  է) ի պաշտելն  ը) Որոշեցէք ինձ. հայեաց եւ յայն, որ ասէն. Որոշեցէք ինձ  թ) որոշեցէք. այլ  ժ) որոշեցէք ինձ զՊաւղոս եւ զԲառնաբաս ի գործ, յոր կոչեմ զդոսա. այժմ դուք  ժա) ես ահա  ժբ) զայն եւ հարցանեն զմեզ  ժգ) Հայր. ասեմք այո. գրեալ է յաղագս Որդւոյ  ժդ) յաւիտեանս յաւիտենից  ժե) Այլ աթոռ յորժամ լսիցես  ժզ) իմա, աթոռն այս է

1) Յովհ. ԺԷ, 6. 2) Մատթ. ԻԸ, 18—19. 3) Գործք ԺԳ, 4. 4) Եբր. Ա, 7. 5) Գործք ԺԳ, 2. 6) Սաղմ. ԽԶ, 9. 7) Սաղմ. ԽԴ, 7. 8) Մատթ. Ժ, 16.

զթագաւորութիւնն, զտէրութիւնն. վասն զի ընդ մեզ Գիրք իբրև ընդ մանկտեակս խօսին։ Արդ, ասեն[ա]. Ուր գրեցաւ, եթէ և Հոգին Սուրբ ունի աթոռ, զի համապատիւ[բ] տէրութեանն արասցուք[գ]։ Այնպիսեացն ոչ է արժան պատասխանի տանել[դ]. քանզի եթէ առաքելոցն աթոռք են պատրաստեալ և դատաւորութիւն, որ ‖ չափ բաշխաւղին պարգևաց զշնորհս իւր ի նոսա։ Ասէ Եսայիաս. Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ,[1] և որ զկնի բանք իցեն. զկնի դարձեալ ասէ. Լուայ զձայն նորա, և ասէր ցիս. Երթ առ ժողովուրդն և ասասցես ցնոսա. լսելով լուիջիք և մի իմասջիք[2]։ Յետ բազում ժամանակաց, ի լնուլ մարգարէութեանս այսորիկ՝ գայ Պաւղոս ի Հռոմ, վիճի ընդ հրեայսն, և անմիաբանեալ նոցա՝ ասէ. Բարւոք ասաց[ե], ոչ Հայր և ոչ Որդի, այլ Հոգին Սուրբ, այն, որ յաթոռ բարձրութեանն՝[զ] ի ձեռն Եսայեայ մարգարէի. Լսելով լուիջիք[3], և որ զկնի[է]։ Արդ, Ով իցէ մոլորեալն, որ յերկուանայ՝ ասելով, եթէ պաշ-

ա) ընդ մարդկան խօսին   բ) զի յաթոռոյն իմացաք զհամապատիւ   գ) չ.   դ) Յայցնմք առ այնպիսի հարցուածս պատասխանի. պարտ եւ արժան է մանաւանդ եւ ոչ պատասխանի տալ այնպիսեացն   ե) քանզի եթէ ծառայք յերկրէ լեալք, զառաքելոյսն ասեմ՝ արժանիք եղեն յաթոռ նստել. Ահա դուք երկոտասանքդ, ասէ, նստջիք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի[4]), եւս առաւել Հոգին Սուրբ։ Եւ առ այդոքիւք ո՛ւր Հոգւոյն փառք. փառաւորի Հայր, փառաւորի եւ Որդի. ո՛ւր փառաւորի եւ Հոգին Սուրբ, խնդրեն անհաւատքն։ Լուասցէ Եսայիաս եւ Պաւղոս վկայեսցէ. Տեսի զՏէր ի վերայ աթոռոյ բարձու[5]). յաղագս Հոգւոյն ասէ, որպէս յինէն յաւէտ ցուցցի այս. եւ ամբարձեցելոյ, ասէ. եւ լի էր տունն փառաց նորա, եւ սերովբէք կային շուրջ զնովաւ, վեց թեւք միոյ եւ վեց թեւք միոյ, աղաղակէին ասելով. Սուրբ. սուրբ, սուրբ, Տէր Սաբաւովթ, լի է երկին եւ երկիր փառաց քոց[6]). հայեաց առ տաճարն, եւ զաթոռն տեսանես եւ զփառսն։ Եւ ասէ Տէր ցիս. Զո՞ առաքեցից եւ ո՞ երթիցէ առ ժողովուրդն այն՝ Հրեից, եւ ասասցէ ցնոսա. լսելով լուիջիք եւ մի իմասջիք, եւ տեսանելով տեսջիք, եւ մի տեսջիք. վասն զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ եւ ականջաւքն ծանրանալ լուան[7]), եւ որ ի կարգին է։ Գայ Պաւղոս յետ բազում ազգաց ճանապարհաւ մարգարէութեանն, լինի ի Հռովմէ, վիճի ընդ Հրեայսն, տեղեկացուցանելով նոցա զՄիածնին Քրիստոսի զհաւատն, իսկ նոքա ի բաց դառնային եւ ոչ հաւատային, եւ յայնժամ յիշէր զմարգարէութիւնս զայս, յորժամ լցաւն, եւ զինչ ասէր ցնոսա. Բարւոք ասաց   զ) այդ բարւոք ասաց Հոգին Սուրբ   է) ի կարգին է

1) Ես. Զ, 1.   2) Ես. Զ, 8—9.   3) Գործք ԻԸ, 25—26.
4) Մատթ. ԺԹ, 28.   5) Ես. Զ, 1.   6) Ես. Զ, 2—3.
7) Ես. Զ, 8—10.



տաւնեայ է Հոգին Սուրբ, որում փառք վայելէ ընդ Հօր և ընդ Որդւոյ[ա]։

## Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոց՝ ի սուրբ Երրորդութիւնն:

Երրորդութիւն նոյն բնութեամբ՝ երեք դէմք, մի զաւրութիւն, մի աստուածութիւն. յամենայն ժամ Հայր, յամենայն ժամ Որդի, յամենայն ժամ Հոգին Սուրբ։ Մի Աստուածութիւն է յերեսին դէմսն. որպէս կամի, որպէս խորհի՝ ամենայն ուրեք է, մի հրամանք, մի կամք, մի թագաւորութիւն՝ յերեսին դէմսն Հաւր և Որդւոյ և Հոգւոյ.

## Եզնիկայ Կողբացւոյ՝ թարգմանչի ի Հայս:

Մի Աստուած խոստովանիմք՝ յանդիմանութիւն բազմանուն չաստուածոցն, ինքնակաց, անպատճառական, պարզական, անյաւդական, ‖ 36v. արարիչ, ամենակալ, ամենազօր, ամենագործ, հաստիչ և կազմիչ երևելեաց և աներևութից։ Եւ ի նմանէն և ընդ նմա և առ նմին մի Ծնունդն՝ անսկզբնակից, արարչակից, համազաւր, համագործ։ Եւ մի Հոգի Սուրբ Աստուծոյ, մշտնջենաւոր բղխեալ և ընդ նմին և առ նմին՝ արարչակից և զաւրակից Հաւր և Որդւոյ։ Այսպէս կատարեալ Սուրբ Երրորդութիւնն դաւանի սուրբ և ի համաշխարհական եկեղեցիս, անմարմին, անզննական, անտարրական, կանխագէտ, յառաջիմաց քան զամենայն արարեալս և հաստատեալս, ի մի թագաւորութիւն և ի մի աստուածութիւն՝ յերիս անձինս կատարեալս։ Զի ոչ անձն Հօր է անձն|Որդւոյ, քանզի ոչ իւրոյ անձինն է Հայր, և ոչ անձն Որդւոյ է անձն Հօր, քանզի ոչ եթէ իւրոյ անձինն է Որդի. և ոչ անձն Սուրբ Հոգւոյն է անձն Հաւր կամ Որդւոյ, զի ոչ եթէ իւրոյ անձինն է Հոգի, այլ Աստուծոյ Հոգի։

ա) Արդ, եթէ Եսայիաս Տէր Սաբաւովթ ասէ, ի վերայ աթոռոյ բարձու նստեալ եւ ի հրեշտակաց փառաւորեալ, եւ Պաւղոս ասէ, եթէ Հոգին Սուրբ, ո՛ իցէ արդեւք մոլեալ, որ յերկուանայ, թէ արդեւք ոչ իցէ Տէր եւ Աստուած Հոգին, եւ եթէ պաշտաւնեայ իցէ. եւ նմա փառք, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ հայրապետին.

Սրբոյ զուգական և միասնական Երրորդութեանն՝ երեք անձինք, մի Աստուածութիւն, մի էականութիւն, մի իսկական էութիւն, մի ինքնակալն էութիւն, մի ինքնակալ էութիւն. մի է թագաւորութիւն, մի է արքայութիւն, 87r. մի է տէրութիւն, մի է իշխանութիւն, մի է փառաւորութիւն, մի բնութիւն, մի հաւասարութիւն. մի է սրբութիւն, մի է լու‖սաւորութիւն, մի է ընտրողութիւն, մի է կարողութիւն, մի է (տ)իրողութիւն, մի է կամք, մի խորհուրդ, մի փառք, մի պատիւ, մի հաւատ, մի յոյս, մի սէր. մեծ, հզօր, կարող և ի վեր քան զամենայն. անեղ, անանց, անսկիզբն, անվախճան, անկատարած, անհաս, անտես, անքննին, ոչ իւիք կարաւտ և ոչ իմիք ցանկացող. ամենահայր, ամենարար, ամենալուր, ամենապարգև, ամենահաս, ամենատես, ամենադէտ, ամենափրկիչ, ամենակեցոյց. որ ակնարկելովն դարմանէ զամենայն արարածս՝ զերկնաւորսն և զերկրաւորս, զերևելիս և զաներևելիս, ի շէնս և յանշէնս, յամենայն արարածոց՝‖ յերևելեաց և յաներևութից, յերկնաւորաց և յերկրաւորացս, որում փառք յաւիտեանս. ամէն:

## Յովհաննու Մայրագոմեցւոյ ճգնաւորի Խոստովանողի:

Եւ արդ, այսպէս հաւատամք և խոստովանիմք զՀայր և զՈրդի և զՀոգին Սուրբ՝ միշտ ի միութեան և յանորաշաւղութեան, ցանց անբաժանելի, անփոփոխելի և (ան)այլայլելի: Զի Հայր միշտ Հայր է և կատարեալ յամենայնի, և ծնօղ Միածնի Որդւոյ իւրոյ. և Որդի միշտ Որդի և կատարեալ յամենայնի, և ծնունդ միածնողի Հաւր իւրոյ. և Հոգին Սուրբ միշտ Հոգի Սուրբ, ելումն ի նորին էութենէ, 87v. կատարեալ ամենայնիւ. երեք անձնաւորութիւնք անբաժանելիք ի միմեանց ‖ և անշփոթելիք: Մի բնութիւն, մի զօրութիւն, մի էութիւն՝ ամենեւին հարթ հաւասար ի փառս մեծութեանն. ոչ ժամանակաւ ինչ միջակութեան, նախասկիզբն եւ ինչ լինելութեան, այլ յաւէտ, յարակայ և ամենեւին անընդմիջելի էութիւն Սուրբ Երրորդութիւնն. զի ընդ Հօր կատարելութեանն իմանի կատարեալ և՛ Որդի և՛ Հոգին Սուրբ: Ո՛չ առանձին բաժանեալ Հայր, զի միշտ զՄիածինն ի ծոց իւր կրէ. ոչ առանձին բաժանեալ է և Որդի, զի ոչ մեկնի յՈրդւոյ Հայր. ոչ առանձին բաժանի Սուրբ Հոգին, զի ելանէ ի



Հօրէ, և ոչ բաժանի, բղխէ և ոչ սպառի: Այսպէս անբաժանելի է Սուրբ Երրորդութիւնն: Եւ վասն զի Հայր միշտ Հայր է, և ոչ փոփո‖խի յՈրդի, և Որդին միշտ Որդի է և ոչ փոփոխի ի Հայր, և Հոգին Սուրբ միշտ Հոգի է, և ոչ փոփոխի ի Հայր և յՈրդի. վասն այսորիկ անշփոթելի իմանի Սուրբ Երրորդութիւնն: Եւ ահաւասիկ նզովեմք զՍաբէլլիոս, զի ընդ շփոթութեամբ փակեաց զբնութիւն Սուրբ Երրորդութեանն: Նզովեմք և զԱրիոս, զի բաժանեաց զՈրդի ի Հօրէ բնութենէ և օտարացեղութիւն խառնեաց յանխառն էութիւնն: Նզովեմք և զՄակեդոն, զի բաժանեաց զՀոգին Սուրբ ի Հօրէ և յՈրդւոյ. իբրև զարբանեակ ասաց և զսպասաւոր: Բայց զայժմու ճարտարաց Յունաց զի՞նչ պարտ է համարել, որք ասեն զՍուրբ Երրորդութիւնն զիմօք և առ‖անձնաւորութեամբ բաժանեալ 88r. ի միմեանց և աստուածութեամբն միաւորեալ: Այս հաւատ մարդկային խորհրդով է, կարծել ընդդէմ ասել Սաբելլի խանգարմանն, և զԱրիոսի և զՄակեդոնի զանջատողականն ի ներքս մուծանել, որպէս մարդոյ ումեք, որ հայր իցէ երկուց որդւոց, դէմս և առանձնաւորութիւնս բաժանել, և բաժնոց եկամտութիւն լինել յանբաժանելի Երրորդութիւնն: Ո՞չ վասն այսորիկ գրեցաւ. Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ[1]: Այս է զօրութիւն Աստուծոյ առ կատարեալ հաւատն. զի Հայր միշտ յինքեան է, և յՈրդւոյ երբէք ոչ բաժանի, որպէս Միածինն ասաց առ հրեայսն. Դատաստան իմ ‖ճշմարիտ է, զի չեմ միայն, այլ ես և որ առաքեացն զիս Հայր[2]. և դարձեալ. Որ առաքեացն զիս ընդ իս է, ոչ եթող զիս միայն[3]. և ցաշակերտսն ասաց. Ամենեքեան դուք ցրուեսջիք յինէն և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է[4]: Արդ, ո՞ւր է առանձնաւորութիւնն բաժանեալ: Նոյնպէս և Որդի միշտ յինքեան է, բայց ի Հօրէ ոչ բաժանի, որպէս ի սուրբ Աւետարանին ասէ. ԶԱստուած ոչ ոք ետես երբէք, բայց Միածին Որդին, որ ի ծոց Հօր՝ նա պատմեաց[5]. և առ Նիկոդիմոս ասաց Տէրն. Ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդի մարդոյ, որ էն յերկինս[6]. և դարձեալ ասէ. Զի գիտասջիք և ծանիջիք

[1]) Ա. Կորնթ. Բ, 5. [2]) Յովհ. Ը, 16. [3]) Յովհ. Ը, 29. [4]) Յովհ. ԺԶ, 32. [5]) Յովհ. Ա, 18. [6]) Յովհ. Գ, 13.

38v. ե ‖ թե Հայր յիս և ես ի Հայր[1]. և ցՓիլիպպոս ասէ.
Ո՞չ հաւատաս, եթե ես ի Հայր և Հայր յիս, և թէ՝ Հայր,
որ յիս բնակեալ էն՝ գործէ զգործն[2]։ Արդ, ո՞ւր է ա-
ռանձնաւորութիւնն բաժանեալ։ Նոյնպէս և Հոգին Սուրբ
միշտ յինքեան է, և ի Հօրէ և յՈրդւոյ ոչ բաժանի. վասն
զի միշտեկլումն ասի և հանապազաբղխումն, որպէս և Տէրն
ասէ. Հոգին ճշմարտութեան, որ ի Հաւրէ ելանէ, նա
վկայեսցէ վասն իմ[3]։ Տեսանե՞ս զգերահրաշութիւն Բա-
նին. ոչ ասաց, եթե Հոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ
ելեալն է, այլ թէ՝ որ ի Հօրէ ելանէ։ Տեսանե՞ս, զի ելանէ
և ոչ բաժանի, բղխէ, և ոչ սպառի. վասն որոյ ասաց
իսկ. Յորժամ եկես|ցէ Նա՝ Հոգին ճշմարտութեան, առաջ-
նորդեսցէ ձեզ զամենայնն ճշմարտութեամբ. ոչ եթե
յանձնէ ինչ խօսեսցի, այլ թե՝ յիմմէ առնու և
պատմեսցէ ձեզ[4]։ Տեսանե՞ս՝ որպէս երից անձանցն հա-
ւասարապէս կատարեալ միութիւն ճանաչի՝ անբաժանելի
և անորոշելի. և որպէս անորոշելի և անբաժանելի ճանա-
չի, նոյնպէս անշփոթելի և անփոփոխելի իմանի։ Այս է
անհասական պայման անբաւ էութեանն. վասն այսորիկ
ասացաւ. Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդ-
կան, այլ զօրութեամբ Աստուծոյ[5]։ Եթե զաւրութեամբ
Աստուծոյ է գիտել զճշմարտութիւն հաւատոցն, նոքա
զիա՞րդ յաւակնեցան՝ մարդկային իմաստութեամբ դիմաց
39r. և առանձնաւորութեան ‖ բաժանումն հետազօտել, և բա-
ժանմանցն հրապոյրք և դիմացն որոշմունք յաստուածա-
յին Գիրս ոչ երբէք գտանի։ Ընդէ՞ր ոչ ասաց Որդին Աս-
տուծոյ, եթե բաժանեցայ ի Հօրէ և եկի յաշխարհ. քա՛ւ,
այլ՝ Ելի, ասէ, ի Հօրէ[6], և երկրորդէ և ասէ. Ես յԱստու-
ծոյ ելի և եկի[7]։ Տեսանե՞ս զելսն ճշմարիտ և զանբաժա-
նելիս, զի յերկինս է և յերկրի՝ առ Հայր և ընդ Հօր։ Տե՛ս
և զբաժանմանց թերութիւն, որով տգեղութիւն օտարա-
ցեղութեանն եկամուտ լինի, որով անիծաւ Իսկարիոտ։
Նաև զդիմացն իսկ որոշմունս ընդէ՞ր քարտաւատեն և
բաժանեն. զի յորժամ ասեմք զԱստուածութե|նէն՝ Հայր
և ծնօղ և առաքօղ Միածնի Որդւոյ իւրոյ, ոչ դէմքն բա-
ժանին, այլ դէմքն յայտնին, և յորժամ ասեմք զՈր-

---

1) Յովհ. Ժ, 38. 2) Յովհ. ԺԴ, 10. 3) Յովհ. ԺԵ, 26.
4) Յովհ. ԺԶ, 13. 5) Ա. Կորնթ. Բ, 5. 6) Յովհ. ԺԶ, 28.
7) Յովհ. Ը, 42.



դւոյ՝ Բան և Որդի և Ծնունդ, ի դէմս Որդւոյ վերաբերի
Բանն, այլ ոչ եթե դէմքն բաժանին. և յորժամ ասեմք
զՀոգւոյն Սրբոյ՝ ելումն և բղխումն, և առաքումն ի Հօրէ
և յՈրդւոյ, դէմքն երևին, այլ ոչ եթե բաժանին։ Այս
դէմք ըստ առանձնաւորութեանն և ըստ անուանցն Հօր
և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ վերաբերին, և ոչ բաժանին, և
երևին և ոչ անջատին։ Դարձեալ դէմք համասեռք վերա-
բերին յազագս միութեանն, զի մի է Աստուածութիւնն.
‖ մի էութիւն, մի գոյութիւն, մի բնութիւն, մի լոյս, 39v.
մի փառք, մի զաւրութիւն, մի իշխանութիւն, մի պա-
տիւ. Սուրբ Երրորդութեանն ճանաչի, և զգուշանամք յոր-
ջորջմանցն և ի շփոթութեանցն Սաբելի, ողջ պահելով
դիմաց անձանցն կատարելութիւնն. զգուշանամք և ի բա-
ժանմանցն և յաւտարացեղութեանցն Արիոսի՝ ողջ պա-
հելով զմիութիւնն յԵրրորդութեանն։

Նորին.

Այսպէս հաւատամք ի Սուրբ Երրորդութիւնն, խոս-
տովանելով զմիմիայն Հայր Աստուած՝ զինքնագոյն յէու-
թեան, զէակն անսկզբնաւոր, զծնօղն և զառաքօղն Միած-
նի Որդւոյ իւրոյ, զարարօղն համանգամայն գոյութեանց,|
յորմէ Սուրբ Հոգին բնարար ելևքն լինու զտարերքս և
զանտարերքս։ Եւ զմիմիայն Միածինն Յիսուս Քրիստոս՝
զծնունդն Աստուածութեան, զ՚իսկզբանէ Բանն, զառա-
քեալն ի Հօրէ, զմարմնացեալ և մարդացեալն յԱստուա-
ծածնէն Մարիամայ, կատարեալն յաստուածութեանն և
ի մարդկութեանն՝ զլոյս երևաց Հօր, զնկարագիր էու-
թեանն, զպատկեր երևելոյն Աստուծոյ, որ զամենայն ա-
րարածս բանիւ հրամանաւ իւրով գոյացոյց։ Եւ զմիմիայն
ամենազօր Հոգին Սուրբ, զմշտնջենաբուղխ լոյս, զհա-
ւասարն Հօր, զանեղն և զհամագոյն Հօր և Որդւոյ, որ
զաղաւնակ ‖ երպեալն աստուածազան հրաշիւքն՝ անգոյք 40r.
յեղելութեան զանազանութիւնն աստուածազան յիւրնուա-
ծով վերանորոգեցան։ Այսպէս հաւատամ ի Սուրբ Երրորդու-
թիւնն և խոստովանիմ զՀայր և զՈրդի և զՀոգին Սուրբ՝
յանշփոթ և յանբաժանելի։

*Երանելւոյն Սեւերիանոսի Գաբաղիացւոյ եպիսկոպոսի՝ ի յերրորդ ժամուն, ի բանին Երեկ ժամուցս*.*

Եկեղեցի ոչ երբեք ամենակալս գիտէ, այլ մի զօրութիւն, որ զամենայնն[ա] ունի, և[բ] ճշմարտութեամբ ամենակալութիւնն Հայր և Որդի և Հոգին ճանաչի[գ]։ Որ ասիցէ երբեք աստուածս որոյն[դ] ի միմեանց՝ նզովեալ եղիցի։ Որ ասիցէ երբեք ամենակալս, բաժանեալս ի միմեանց՝ նզովեալ լիցի[ե]։ Որ[զ] ոչ դաւանիցի[է] մի ամենակալ զԵրրորդութիւնն՝ նզովեալ լիցի։

*Սահմանք հաւատոյ՝ որք ի Նիկիայ ժողովեցան սուրբ եպիսկոպոսքն, բացատրութիւն նորին ժողովոյն առ Պաւղոս Սամոսատացի**:*

Խոստովանիմք զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ զ'ի Հաւրէն յառաջ քան զյաւիտեանս Հոգւով Սրբով ծնեալ[ը], ի վախճան աւուրց ի սրբոյ Կուսէն ըստ մարմնոյ ծնեալ, մի դէմ, շարադրեալք[թ] յերկնային աստուածութենէն և ի մարդկային մարմնոյն։ Եւ ըստ որում մարդն էր՝ ամենեւին Աստուած և ամենեւին մարդ էր. բոլորովին Աս-
40v. տուած և[ժ] հանդերձ մարմ‖նովն, այլ ոչ ըստ մարմնոյն Աստուած, և բոլորովին մարդ՝ հանդերձ աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստուածութեանն մարդ։ Այսպէս բոլորովին երկրպագելի է, և հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն երկրպագելի է[ժ]. և բոլորովիմբ[ժա] երկրպագելի է՝ հանդերձ[ժբ] աստուածութեամբն, այլ ոչ ըստ աստուածութեանն[ժգ] միայն երկրպագելի[ժդ]։ Բոլորովին անստեղծ, և հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն անստեղծ։ Բոլորովին ստեղծանելի է[ժ], և հանդերձ աստուածութեամբն, այլ ոչ ըստ[ժ] աստուածութեանն ստեղծանելի է[ժ]։

* Տես. Ձեռագիր № 510, p. 265. Համեմատութիւնն ըստ տպագրին՝ Սեւերիանոսի Եմեսացւոյ, Գաբաղացւոց եպիսկոպոսի՝ ճառք ԺԵ. Վենետիկ, 1830. եր. 76.

** Տես. Ձեռ. № 1876, p. 44 v. Սահմանք հաւատոյ, որ ի Նիկիայ ժողովեցան սուրբ եպիսկոպոսունք ՅԺԸ.

ա) զամենայն բ) չ. գ) ամենակալութիւն ի Հայր, յՈրդի եւ ի Հոգի Սուրբ ճանաչի։ դ) որոյն ե) չ. Որ ասիցէ—լիցի զ) եւ որ է) դաւանեսցէ ը) զյաւիտեանս ծնեալ Հոգւովն Սրբով թ) դէմք շարադրեալ ժ) չ. ժա) բոլորովին ժբ) եւ հանդերձ ժգ) այլ ոչ աստուածութեամբն ժդ) երկրպագելի է



Բոլորովին համագոյացութիւն Աստուծոյ՝ հանդերձ մարմնովն, այլ ոչ ըստ մարմնոյն համագոյացութիւն Աստուծոյ, որպէս և ոչ ըստ աստուածութեանն համագոյացութիւն մարդկան, և սակայն աստուածութեամբն էացեալ՝ ըստ մարմնոյն մեզ է համագոյացութիւն։ Քանզի[ա] յորժամ ըստ հոգւոյն ասեմք զնա Աստուծոյ համագոյացութիւն, ոչ ասեմք ըստ հոգւոյն մարդկան համագոյացութիւն. և դարձեալ, յորժամ քարոզեմք ըստ մարմնոյ[բ] մարդկան համագոյացութիւն, ոչ քարոզեմք զնա ըստ մարմնոյն Աստուծոյ համագոյացութիւն. քանզի որպէս ըստ հոգւոյն մեզ չէ համագոյացութիւն, այսպէս[գ] այսոցիկ ընտրութիւնք զատեալք են, ոչ առ բաժանումն միոյ դիմացն անբաժանելոյ*։

*Այս Թուղթ Հերձուածողաց, զոր վիճագրեցին ընդ Աթանասի և առ Անտիոկոս, ու չի է հայհոյութեամբ **:*

Ես այսպէս ածէի զմտաւ, եթէ ամենայն ընդդիմանայ-
նարանութիւնքն, ուր և իցեն*** ‖ Հերձուածողաց և աղան- 42r.
դաւորաց՝ լռեալ դադարեսցին ի լինել մեծ ժողովոյն Նիկիայ. քան որ ի նմա ըստ աստուածեղէն Գրոց դաւանեցան ի հարցն հաւատք՝ կարող էին տապալել զամենայն ամպարշտութիւնս և հաստատել զբարեպաշտութիւն քրիստոնեան հաւատոյս։ Քանզի եղեն և այլ ի բազում տե-

* № 1876 ձեռագրում աւելի է. «բայց այդչափ թէ վասն ի Կուսէն ծննդեան զինչ եւ աստն նեստորականքն՝ թիւրք եւ սուտք են». որ եթէ սկզբնագրում լինէր, այս հատուածը Նիկիոյ ժողովի հետ ոչ մի առընչութիւն չէր կարող ունենալ հարկաւ։

** Համա. Ձեռ. Հ. 6. (ըստ Գէորգեան ցուցակին), p. 327 v. Զայս Թուղթս առեն յիշել Գիրքի յիր Թուղթոն։ Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի, Աղէքսանդրի հայրապետի՝ Թուղթ առ եպիսկոպոսն Եպիկտետոս Կորնթացոց. Յաղագս ուղղափառ հաւատոյ՝ ընդդիմադրութիւն ասեն յորուցելոց ոմանց հակառակ ճշմարիտ եւ սուրբ հաւատոյ նոյն Թուղթը, ինչպէս այս և ուրիշ ձեռագիրներում կցուած է Կիւրեղ Աղէքսանդրացու Պարապմանց գրքին, այնպէս էլ կից տպուած է Կ. Պոլսում 1717 թ. ին, եր. 491։ Բառացի համեմատութիւն տալ չէինք կարող. որովհետև այստեղ տարբեր թարգմանութեամբ է. բայց բովանդակութիւնը մէկ է։

*** Ձեռագրում կազմելիս սխալմամբ մի թերթ մէջ է ձգած ուրիշ կողակցութիւնից, ապա անմիջական շարունակութիւնն է։

ա) քանզի բ) մարմնոյն գ) համագոյացութիւն, վասն զի ըստ Աստուծոյ է յայսմիկ համագոյացութիւն, այսպէս

զիս ժողովք՝ ի Գա՛լիա և ի Սպանիա և ի մեծն ի Հռոմ. և էր ուրեք ուրեք, որ զաղտնիս որ ունէին զԱրիոսի աղանդն, զԱւքսինտեայ ասեմ զՄեդուլացւոյ և Ուրսասկէս և Վաղանդէս և Գայիոմն Սպանիացի, վասն այսց արիանոսաց ժողովեցան հարքն,|որպէս ի Սուրբ Հոգւոյն յորդորեալք, նզովեցին և ի բաց մերժեցին զարիանոսս, և գրեցին յամենայն տեղիս, եթե վասն այսպիսեացս խաբաւղ մոլորութեանցս մի՛ անուանեսցի այս սինհոդոս, որ է ժողով, որ Թարգմանի զուգաճանապարհք, և կաթողիկէ եկեղեցի, բայց միայն որ եղև ի Նիկիայ, որ կարողն է յանդիմանել զամենայն աղանդս, եւ առաւել զաղանդն արիանոսաց, վասն որոյ և ժողովեցան իսկ հարքն։ Արդ, ո՞րպէս զհետ այսչափ մեծի հաստատութեան արժան է յերկբայս լինել, կամ ի խնդիրս և ի քննութիւն 42r. հաւատոյս ձեռնարկել։ Զի թէ ոք յարիանոսաց իցէ՝ չեն ինչ զարմանք, || վասն զի զիւրեանցն քակեալ լուծանեն և որպէս հեթանոսք լսեն ի մէնջ, եթե՝ Կուռք հեթանոսաց արծաթ և ոսկի և ձեռագործ են որդւոց մարդկան [1], յիմարութիւն համարեն վասն աստուածեղէն վարդապետութեանն պատուական խաչին [2]։ Իսկ եթե յուղղահաւատաց, որք սիրեցին զյայտնութիւն հաւատոյ ժողովոյն հարցն և արդ կամեցին վերստին քննութմն և խնդիր առնել՝ ոչինչ վճարեն, այլ ըստ գրեցելոցն՝ Արբուցանեն ընկերաց իւրեանց զմոլորութեանն պղտորութիւնն [3] և հակառակաբանութիւն՝ յոչինչ պիտանացու, ի շրջելն յունայնութիւնս։

Զայս ամենայն վասն այսորիկ գրեցի առ Քո Աստուածպաշտութիւնդ, զի պատահեալ ընթերցայ զմեկնութիւն գրելեացն քոց. զոր ո՛չ գրել արժան է և ո՛չ յիշատակել զայսպիսի ինչ իրս՝ զհետ այսչափ մեծի հաստատութեան։ Ո՞վ լուաւ զայսպիսի ոք երբէք և կամ յո՞րմէ վարդապետէ ոք տեղեկացեալ լուաւ. զի մեք գիտեմք զգրեալսն, ասէ՝ Ի Սիոնէ ելցեն աւրէնք և բան Տեառն յԵրուսաղեմէ [4]։ Իսկ այս հուր բարկութեան ուստի՞ել և բղխեաց, կամ ո՞ր դժոխք զգայռեցան ասել՝ մի բնութիւն որ ի Մարիամայ մարմինն էր և Բանին Աստուծոյ, և կամ թէ՝ Բանն ի մարմին և յոսկր. և կամ թէ՝ ամենեւին բնաւ ի բնութիւն մարմնոյ շրջեցաւ, և կամ՝

[1] Սաղմ. ՃԺԴ, 4. ՃԼԴ, 15. [2] Հմմտ. Ա, Կորնթ. Ա, 18. [3] Ամբ. Բ, 15. [4] Ես. Բ, 3.



փոփոխեցաւ յիւրմէ բնութենէն։ Կամ ո՞ լուաւ յեկեղեցւոյ և կամ յամենայն հաւատացելոց, || թե պիտակապէս 48r. նմանութիւն, և ո՛չ զբնութիւն մերոյ մարմնոյս զգեցաւ Տէրն։ Եւ ո՞վ այսչափ ամպարշտեալ ասիցէ և կամ ի միտս իւր անկանիցի, եթե աստուածութեանն բնութիւն, որ է Հօր հաւասար, Թլփատեցաւ և անկատար ի կատարելութենէ իւրմէ եղև. եթե որ ի խաչին բեւեռեցաւ՝ չէր մարմին, այլ ինքն էր արարիչ բնութիւնն, որ էր իմաստութիւն Հօր։ Ո՞ ոք լուաւ ասել զայս, եթե ո՛չ ի Մարիամայ, այլ յիւրմէ բնութենէն շրջեալ արար իւր մարմին անչարչարական՝ Բանն։ Եւ ո՞ր հաւատացեալ և քրիստոնեայ, որ զայս ասէ, եթե որ ի Մարիամայ է տէրունական մարմինն ո՛չ ասին Երրորդութիւն, այլ Երրորդութիւն|յԱստուածութեանն համարին. վասն զի, ասեն, մերձաւոր եղեալ բնութեանս զԵրրորդութիւնն՝ ի մարմնոյն, զոր զգեցաւ ի մարմնոյ Փրկիչն։ Եւ կամ ուստի՞ դարձեալ ոմանք զգայռեցան ուղիս ամպարշտութեան՝ ասել յառաջ զմարմինն, և ո՛չ յետոյ յապա ժամանակաւ, և ո՛չ կրսերագոյն աւուրս զմարմինն, քան զԲանն Աստուծոյ, այլ միշտ հաւասար ընդ Բանին Աստուծոյ, և էր կից ընդ նմին համազոյգ ժամանակօք. վասն զի գիտացին, եթե ի բնութենէ իմաստութիւն հաստատեալ է՝ ընդ մարմինն միացան։ Եւ ո՞րպէս յերկուանալ իշխեցին և յանդգնեցան, որ լոկ անուամբ միայն են քրիստոնեայք, եթե որ ի Մարիամայ ծնաւ Տէրն և Որդին ըստ բնութեան աստուածութեան || հաւասար Հաւրն է, 48v. որ եղև մարմնով ի զաւակէ Դաւթի՝ ի մարմնոյ Սուրբ Մարիամայ։ Եւ կամ ո՞վ ոք են ամպարիշտք, որ այսչափ յանդգնեցան, մինչեւ ասել զՔրիստոսէ, որոյ մարմինն չարչարեցաւ, եթե ո՛չ է Տէր և Փրկիչ և Աստուած և Որդի Հօր։ Եւ կամ ո՞րպէս հաւատացեալք ի Քրիստոս անուանին, որք ասեն՝ որպէս ի մարդ ոք սուրբ, իբրև զմի ի մարգարէիցն եմուտ ի նա Բանն, և ո՛չ եթե ինքն եղև մարդ՝ առեալ ի Մարիամայ մարմին, այլ զայլ ոմն ասեն զՔրիստոս և զայլ ոմն Աստուծոյ Որդի. այլ յառաջ քան զՄարիամ և քան զամենայն յաւիտեան Որդի էր առ Հօր։ Եւ կամ դարձեալ զիա՞րդ կարիցեն անուանել քրիստոնեայք, որք ասեն՝ այլ ոմն զՈրդին և այլ ոմն Բանն Աստուած։|Զայս ամենայն գրեալ է ի մեկնութիւնս. պէսպէս մասամբք և դիմօք էր ասացեալ, այլ ամենայն ի մի դէմս եկեալ միաբանէր.

քանզի ցուցանէր զմիտս ամպարշտութեանն ի ներքս։ Վասն այսր ամենայնի դատեալ կշռեցին ընդ միմեանս և, կռիւ եղեալ՝ քակեցին զամենայն հերձուածողս ժողով սուրբ հարցն, որ ի Նիկիայ։

Այլ ես զարմանամ ընդ Աստուածսիրութիւն Քո, թե ո՞րպէս ընկալար զայս յանձին՝ որք խափանեալ յայնպիսի սուրբ ժողովոյն, միւսանգամ դարձեալ նորաձևս և պէսպէս քննութիւնս ի մէջ բերեն և լինին ընդվայր և հակառակաւղ։ Քանզի զայս ամենայն ոչ ասել արժան է և ոչ լսել հաւատացելոց քրիստոնէից, այլ աւտար և
44r. հեռի է յառաքելոյ ‖ վարդապետութենէն։ Վասն այսորիկ զոր լուայ ի նոցանէ զգրեալսն՝ յայտնի ամենեցուն գրեցի զթուղթս. զի որք լսեցինն՝ հեռասցին և տեսցեն և իմասցին զամպարշտութիւնս իւրեանց և զամաւթնն։ Եւ թեպէտ պէտ էր բազում բանիւք յանդիմանել զանզգամութիւն, որք զայնպիսիսն իմացան, այլ շատ և բաւական լիցի մինչ ցայս վայր գրել զթուղթս, և մի՛ առաւել ինչ գրել. քանզի կարող է յայտնի ցուցանել զմոլորական միտս՝ որք կամին կրթել, այսու բանիւք։ Եւ ոչ է արժան աւելի ինչ ի խնդիրս և ի քննութիւնս արկանել, զի մի՛ հակառակողացն երկբանութիւնք ինչ թուեսցին, այլ առնել նոցա պա|տասխանի սակաւուք և ասել, եթե ոչ է այս խորհուրդ, զորս դուք ածէք զմտաւ, սուրբ և կաթողիկէ Եկեղեցւոյ, և ոչ հարքն զայս հաստատեալ կանոնեցին. և մեք դարձեալ ոչ խպառ լռեցաք, զի մի՛ պատճառք գտցեն և ևս առաւել զչարութիւնս իւրեանց աճեցուսցեն։

Բարւոք է մեզ և յաստուածային Գրոց սակաւ ինչ յիշատակ բերել, զի նոքօք յանդիմանեսցուք և լռեցուսցուք զընդվայրած զաղտեղի խորհուրդս նոցա։ Արդ, սկսցուք ասել. ուստի՞ է նոցա ասելն, եթե մի բնութիւն է Բանին և մարմնոյն Աստուծոյ. քանզի աստի արժան է սկիզբն առնել, զի յորժամ յայսմ ըմբերանեսցին նոքա,
44v. լուծեալ կործանին ամենայն ամպա‖րշտութիւնք նոցա։ Քանզի ամենայն Գիրք միաբանեալ ասեն, եթե Բանն Աստուծոյ մարմին ի կուսէ առեալ՝ ծնաւ Էմանուէլ. և հարք ի Նիկիա ժողովեալ՝ ոչ եթե զմարմինն, այլ զնոյն ինքն զՈրդին ասացին մի բնութիւն և հաւասար Հօր. իսկ զմարմինն ի Մարիամայ դաւանեցին՝ ըստ գրելոցն յաստուածային Գիրս։ Արդ, եթե ոք ուրանայ զասացեալսն ի Նիկիայ սուրբ ժողովոյն և իբրև զհերձուածողս



բերէ ի մէջ զայն ամենայն, եթե կամիցի որդի լինել հարցն, մի՛ աւելիս խորհիցի, քան զոր գրեցին նոքա. քանզի յայսմ գիտեմք զայլանդակութիւն հերձուածողացն։ Արդ, փորձեալ տեսցուք զայն, եթե մի՞ բնութիւն է Բանին և մարմնոյն։ Մարմինն յերկրէ ունի զբնութիւնն իւր. իսկ Բանին Աստուծոյ և Հաւր մի բնութիւն է՝ ըստ հարցն խոստովանութեան. ապա թէ այդպէս, զոր ասեն հերձուածողքն՝ մի բնութիւն է և նոյն իսկ Հօրն և մարմնոյն, որ յերկրէ եղև, և զի՞ ևս պախարակեն զարիանոսն, որք ասեն զՈրդին Աստուծոյ արարած. քանզի և նոքա աւասիկ ասեն զՀօր և զարարածոց մի բնութիւն։ Եւ ևս առաւել յամպարշտութիւնն զարկեալ կործանին, որք ասեն՝ ի մարմին և յոսկր, ի նեարդս և ի ջիղս և բովանդակ իսկ ի բնութիւն մարմնոյ, թէ շրջեցաւ և փոխեցաւ յիւրմէ բնութենէն։ Տեսանե՞ս, զի ասացին յայտնապէս, թէ յերկրէ ինքն. քանզի յերկրէ ոսկր է և բովանդակ մարմնոյ բնութիւն։ Արդարև մեծ անզգամութիւն է ընդ նոսա հակառակ ասել. այլ զի ‖ մի՛ մեծարա- 45r.
նեսցին՝ սանձահարել ընդդիմասցուք նոցա։ Զի մի բնութիւն ասել Բանին և մարմնոյ՝ որպէս ընկեր առ ընկեր նշանակել, որ լինի երկու, և ոչ մի։ Իսկ յասելն, եթե ի մարմին շրջեցաւ Բանն, նորին իսկ Բանին զփոփոխումն և զապականութիւն ցուցանեն։ Ով ոք իցէ, որ զայսպիսի բանս յանձին ունիցի, քան զամենայն հերձուածողս յամպարշտութիւն կործանեսցի։ Զի եթե մի բնութիւն իցէ Բանին և մարմնոյն, աւելորդ էր յիշել զՄարիամ. զի եթե բնութիւն մարմնոյն յառաջագոյն էր քան զՄարիամայնովն, և էր աներևոյթ և անտես մարմինն. ապա եթե այդպէս է, և նախ իսկ է Բանն։ Ապա թէ ըստ ձերում ասելոյ մի բնութիւն է Բանին|և մարմնոյն, զի՞նչ պէտք էին գալուստ Բանին. վասն որո՞յ եկեսցէ և զիւր բնութիւնն զգեցցի, և կամ յիւրմէ բնութենէն փոխեալ մարմին լինիցի։ Այլ ոչ ոք երբեք զայդ ի մոլեգնելոցն ոք կարծէ, եթե ինքն զինքեան զիւր բնութիւն զգեցաւ, և ոչ եթե որ ինքն մեղուցեալն իցէ՝ զայլս ի մեղաց փրկեսցէ Բանն։ Եւ դարձեալ, եթե շրջեալ փոխեցի Բանն ի մարմին, ինքն վասն իւր պատարագ մատուցանիցէ և զինքն փրկեսցէ։ Այս ոչ այսպէս, քաւ լիցի։ Զգաւակէ

1) Հմմտ. եբր. Բ, 16—17.

Աբրահամու բուռն հարեալ՝ առնու մարմին, որպէս ասաց
և առաքեալն. զի ըստ ամենայնի պարտ է եղբարցն նմա-
նել[1]) և առնուլ զմեր զբնութեանս մարմինս։ Վասն այ-
45v. սորիկ իսկ ‖ և անուանէ ճշմարիտ զկոյսն Մարիամ, զի
ի նմանէ զմեր բնութիւնս զմարմինս առցէ, և միացու-
ցեալ ընդ Բանին, որպէս իւր՝ վասն մեր զնա պատարագ
մատուսցէ։ Եւ զայս մարգարէացեալ Եսայայ՝ յայտնա-
պէս ցուցանէ. Ահաւասիկ կոյս յղասցի և ծնցի[1]։ Եւ
Գաբրիէլ առ սա առաքեցաւ, ոչ եթե առ վայրապար կոյս,
այլ որպէս՝ Առ կոյս խօսեցեալ առն[2]։ զի և ի խօսմանէն
ցուցանէ զկոյս Մարիամ ճշմարիտ ըստ բնութեան մե-
րում, և ի սմանէ ասեն ծնեալ Գիրք սուրբք և ի խան-
ձարուրս պատեալ[3], երանելի ստեամբ դիացեալ[4] և մա-
տուցեալ ի տաճարին վասն սրբութեան պատարագ, վասն
բանալոյ և պտղաբերութեան արար անդի*) իւրոյ զման-
կունս[5]։ Այս ամենայն վասն ծննդեան Կուսին է գիտե-
լութիւն և ծանօթութիւն ամենեցուն։ Եւ Գաբրիէլ զգուշու-
թեամբ|աւետարանէ զսմանէ՝ ասելով. ոչ եթե վայրապար
ասաց զծնանելն ի նմանէ, զի մի՛ թե արտաքուստ ի Կու-
սէն զմարմինն կարծիցէ, այլ զգուշութեամբ ասէ. Որ ի
քէն ծնանելոցն է՝[6] ի նորին բնութենէ, և այսպէս հա-
ւաստացեալ՝ յայտնապէս եցոյց զառ բնութեան ծնունդ
Կուսին, և ոչ ուստեք այլուստ։ Քանզի չէր հնար Կուսին
լինել կաթն, եթէ ոչ էր ծնեալ. և ոչ էր մարթ դիացու-
ցանել և կաթամբ սնուցանել զմարմինն և պատել ի
խանձարուրս, եթե ոչ յիւրմէ բնութենէն էր. այլ ծնեալ
յիւրմէ բնութենէն՝ այս է որ ութաւրեայ թլփատի։ Զսա
Շմաւոն ի գիրկս իւր ընկալաւ. սա եղև մանուկ և ա-
46r. ճեաց, և եղեալ երկոտասանամեայ և հասեալ մինչև ‖ յե-
րեսնամեայսն՝ եկն ի մկրտութիւն, և յայտնապէս երևեալ
աշխարհի։ Այլ ոչ որպէս ոմանք մոլորեալ ասացին, եթե
բնութիւն Բանին շրջեալ փոխեցաւ ի մարմին և թլփա-
տեցաւ. քանզի ասէ ինքն Աստուած այսպէս. Տեսէք տե-
սէք, զի ես նոյն եմ, և ոչ փոփոխեցայ[7]. և Պաւղոս վկա-
յելով սմին ասէ. Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և
յաւիտեանս յաւիտենից[8]։

* Պէտք է լինէր երևի՝ արգանդի։

1) Ես. Է, 14. 2) Ղուկ. Ա, 27. 3) Հմմտ. Ղուկ. Բ, 7.
4) Ղուկ. ԺԱ, 27. 5) Ղուկ. Բ, 22—24. 6) Ղուկ. Ա, 35.
7) Հմմտ. Երկ. օր. ԼԲ, 39. 8) Եբր. ԺԳ, 8.



Արդ, երևեցաւ, եթե ոչ նոյն բնութիւն Բանին է՝
ճշմարտութիւն մարմնոյն թլփատեցաւ և ի գիրկս գգուե-
ցաւ, և կերաւ և արբ, և վաստակեալ աշխատեցաւ, և ի
փայտին բևեռեցաւ և չարչարեցաւ. և է ի մարմնին ան-
չարչարելին անմարմին Բանն Աստուծոյ։ Այս մարմին
էր, որ եդեալն էր ի գերեզ|մանին. ընդ նմին էր և Աս-
տուած Բանն, որ քարոզէր զարձակումն և թողութիւն մե-
ղաց ոգւոցն, որք պահեալն էին ընդ աղխեալք դրամք
պատուհասին, որպէս ասէ Պետրոս մի ըստ միոջէ[1]. որ
կամի՝ ընթերցցի զայն, և կարող է իմանալ ի նմանէն.
և յանդիմանեալ կշտամբէ զայնոսիկ, որք ասեն, եթե
ի մարմին շրջեալ փոփոխեցաւ Բանն Աստուծոյ։ Եթե
այդպէս էր, զի՞նչ պէտք էին գերեզմանին. քանզի ինքն
երթեալ էր՝ որ շրջեցաւ ի մարմին Բանն, քարոզէր զար-
ձակումն արգելելոցն ի դժոխս։ Իսկ արդ աւասիկ ինքն
Բանն երթեալ քարոզէր. իսկ զմարմինն առեալ զԲանին
Յովսէփ պատէր կտաւաւք և դնէր զնա ի նոր գերեզմա-
նին՝ մաւտ ի Գողգոթայն։ ‖ Ահաւասիկ յայտնի ամենե- 46v.
ցուն երևեցաւ, եթե ոչ մարմին էր Բանն, այլ մարմին է
Բանին, և զայս մարմին յարուցեալ ի մեռելոց Թովմաս
շօշափեաց և ետես ի նմա զտեղի բևեռացն։ Եւ անչար-
չար մնացեալ ինքն Բանն՝ տեսանելով բևեռեալ զիւր մար-
մինն, զոր կարողն էր արգելուլ զչարչարանս մարմնոյ
իւրոյ, և ոչ արգել. այլ իւր հաշուեալ համարի զիւրոյ
մարմնոյն չարչարանս, և ինքն աներևոյթ և անչարչար է
Բանն Աստուած. և ի հարկանել զմարմինն իւր ի սպա-
սաւորէ քահանային, որպէս ինքնն չարչարեսցի՝ ասէ.
Զի՞ հարկանես զիս[2]։ Եւ անշօշափելի և անըմբռնելի
բնութիւն Բանին իւր համարեալ զիւրոյն մարմնոյն՝ ասէր.
Զթիկունս իմ ետու ի հարուածս և զերեսս իմ ոչ դարձու-
ձի յամօթոյ[3]. քանզի մարմինն իւր չարչարէր ի Բանին։
|Զայս ամենայն միաբան ընդ մարմնոյ Բանն էր՝ իւր զա-
մենայնն հաշուեալ համարէր, զի և մեք Բանին աստուա-
ծեղենի ընդունիչ կարասցէ լինել։ Եւ արդ և են սքանչե-
լապէս զարմանազանութիւնք, զի ինքն էր չարչարականն
և ինքն էր անչարչարական. չարչարական՝ վասն զի իւր
ինքեան էր, որ չարչարէր մարմինն, և ինքն ի նմա ի
չարչարեցելումն էր. և անչարչարական է, զի բնութիւնն

1) Հմմտ. Ա Պետ. Գ, 19—20. 2) Յովհ. ԺԸ, 23. 3) Ես. Ծ, 6.

աստուածութիւն Բանին անչարչար և անախտ մնաց, և ինքնն անմարմինն էր միացեալ ի չարչարականի մարմնին իւրում. և մարմինն ունէր միացեալ յինքեան անչարչար Բանն Աստուծոյ, որ ջնջէր և ապականէր զտկարութիւն ապականութեան՝ զբնութեան մարմնոյն, և զգեցուցանէր մարմնոյն զանապականութիւն։ Եւ արարեալ զայս և զառ ի մէնջ մարմինն յինքեան ընկալեալ միաւորութիւն՝ ընդունի յանմահէն 47r. || մահկանացուս զանմահութիւն, և մատուցեալ զմարմինն պատարագ՝ ջնջեալ ապականէր զմարմնոյն զմահ և զգեցուցանէր մահկանացուին զանմահութիւն։ Քանզի ոչ կարէր մահկանացուն զրաւել ի մահ, այլ անմահին զմահ ի բաց ջնջեալ և զմահկանացուս ընդ անմահին միաւորեալ՝ անմահ արար, և իւրով մարմնով զայսպիսի անմահութիւն մեզ շնորհեալ՝ տայ այսունհետև մեծաբարբառ իւրում առաքելոյն գոչել և ասել. Արժան է ապականացուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն և մահկանացուիս այսմ զգենուլ զանմահութիւն[1]։

Ո՛չ առաչաւք և նմանութեամբ այս ամենայն եղև, քաւ լիցի, որպէս ոմանք ի հերձուածողացն ասեն զմարմինն, եթէ նմանութիւն էր, և ոչ բնութիւն. այլ արդարև մարդ եղև ճշմարիտ Փրկիչն մեր և զբովանդակ բնութիւնն մեր միացոյց իւր Բանն Աստուծոյ և կատարեալ բովանդակ մարդոյ բնութեանս փրկութիւն շնորհեաց։ Զի եթէ նմանութեամբք և պիտակապէս՝ առաչօք թարգմանի, և ոչ բնութեամբ, գտանի այսունհետև առաչօք յարութիւնն՝ առաչօք, և ոչ բնութեամբ փրկութիւն մարդոյ, և լինիմք հաւասարեալք և նման ամպարիշտ Մանիքեցւոցն։ Այլ ոչ էր առաչօք յարութիւն մարմնոյն և փրկութիւն մեր ամենեցուն, այլ ճշմարիտ իսկ, և ոչ միայն զմարմինս միացոյց իւր Բանն, այլ բովանդակ զհոգի և զմարմին։ Ճշմարիտ զբնութիւնս մարդոյ իւր միա 47v. || ցոյց Աստուած, արար փրկութիւն մարդկան բնութեանց. արդարև զմարմին բնութեանս մերոյ էառ ի Մարիամայ ըստ աստուածեղէն Գրոց, և ճշմարիտ էր մարմինս այս Փրկչին մերոյ. քանզի էր մեր քոյր սուրբ կոյսն Մարիամ, վասն զի ամենեքեան յԱդամայ եմք։ Եւ զայս ոչ ոք կարէ յերկրոյս լինել. քանզի խաւսեալ էր զնա առն, որպէս և

1) Ա. Կորնթ. ԺԵ, 53.



Ղուկաս ցուցանէ մի ըստ միոջէ[1]. յայտ է՝ և Յովսէփ և Մարիամ մեր քոյր և եղբայր էին, և ի միոյ բնութենէս։

Եւ ևս առաւելագոյն այլք մոլորեցան և ասեն, եթէ յետ յարութեանն ի մեռելոց ոչ նոյն մարմին էր, զոր էառն ի Մարիամայ, և ոչ բնութեամբ մարմնոյ տեսին զՏէրն, այլ ահազին իմն ասեն՝ ի նմանութիւն մարմնոյ։ Եկայք յանդիմանեսցուք զսոսա ի սուրբ աւետարանէն բանիւն Տեառն, զոր ասէր ցաշակերտսն. Շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք, զի ունիմ. զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռս իւր և զոտս[2]։ Եւ այսու բանիւ դարձեալ յանդիմանէ զայնոսիկ, ոյք յանդգնին և ասեն, եթէ ի մարմին և յոսկերս շրջեցաւ Բանն Աստուծոյ, և փոխեալ. ոչ ասաց եթէ՝ որպէս տեսանէք մարմին և ոսկերս զիս, այլ թէ՝ որպէս տեսանէք զիս, զի ունիմ մարմին և ոսկերս. վասն զի մի՛ զնոյն ինքնն զԲանն ի մարմին շրջեալ փոփոխմամբ իմանայցեն, այլ ինքն Բանն էր ի մարմնին իւրում յառաջ քան զմահն, և զկնի յարութեանն ի նմին ի մարմնին իւրում էր միացեալ. և այսպէս յայտնի ամենայն հաւատացելոց քարոզեցաւ յառաքելոցն։ || Արդ, աւելորդ է և այլ 48r. ևս զհետ մտաց հերձուածողացն երթալ. քանզի մարմին էր միացեալ ընդ Բանին, և ոչ էր մի բնութիւն Բանին՝ աստուածութեանն և մարմնոյն, այլ ի սրբոյ կուսէն Մարիամայ ճշմարտութեամբ ծնեալ։ Եւ ոչ եթէ Բանին Աստուծոյ շրջեալ փոփոխեալ ի մարմինն, այլ ի մարմնին իւրում, զոր առ ի Կուսէն, անքակ Բանն է միացեալ, և միանալն իսկ ցուցանէր զբնութեանցն զանքակութիւն և զմիութիւն։ Իսկ արդեւք յայն ինչ դրդուեցին և գայթակղեցին, զոր Յովհաննէս ասաց թէ՝ Բանն մարմին եղև[3]. այս է, զոր ասեն, և արժան է զսա միով բանիւ, որ ըստ նմանութեան սորա՝ գտանել և մեկնել։ Գրէ այսպէս Պաւղոս և ասէ. Քրիստոս վասն մեր եղև անէծք[4]. և ոչ եթէ|ինքն Քրիստոս եղև անէծք, քաւ լիցի. այլ վասն զի զմեր անէծսն յանձն իւր ընկալաւ և ընդ մեր անիծիցն և պարտուցն ինքն չարչարեցաւ, վասն այսորիկ է ասացեալ թէ՝ Քրիստոս վասն մեր անէծք եղև։ Ըստ այսմ օրինակի է, որ ասեն. Բանն մարմին եղև. ոչ շրջեալ փոփո-

1) Ղուկ. Ա, 27. 2) Ղուկ. ԻԴ, 39—40. 3) Յովհ. Ա, 14.
4) Գաղ. Գ, 13.

խեցաւ ի մարմինն, այլ զի մարմին վասն մեր առեալ՝ իւր միացոյց Բանն Աստուծոյ և եղև մարդ, վասն այսորիկ ասացաւ եթե՝ Բանն մարմին եղև։ Եւ դարձեալ զոր ասեմք, եթե մարդ եղև, նման է այնմ, զոր ասէ Յովէլ մարգարէ. Հեղից յոգւոյ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ[1]). մի՞թե ի վերայ անասնոց եհեղ զշնորհս Հոգւոյն. այլ ի վերայ մարդկան բանաւորաց։ Ըստ այսմ օրինակի է, զոր ասեն եթե՝ Բանն մարմին եղև։ Եւ դարձեալ որ ասէ եթե՝ մարդ եղև Տէրն ամենայնի[2])։ Այս միտք և
48v. մեկ‖նութիւնք են, զոր ասէ աւետարանիչն Յովհաննէս եթե՝ Բանն մարմին եղև։

Շատ և բաւական է բանս այս յամօթ առնել և զայնոսիկ, որք ասեն, թե յառաջ քան զՄարիամ առնուլն զմարմինն՝ էր ընդ Բանին, և յառաջ քան զմարմնանալ Բանին Աստուծոյ հոգի մարդոյ էր ընդ նմին, և յառաջ քան ի Մարիամայ ծնանելն բազում անգամ գալուստ ասեն Բանին Աստուծոյ յաշխարհ։ Արդ, լռեալ դադարեսցին ընդվայրայած անամաւթ բերանք նոցա։

Եւ դարձեալ այնք, որ ասեն. ոչ էր ընդունիչ մահու մարմինն, վասն զի, ասեն, յանմահութենէն Աստուծոյ էր նա։ Իսկ եթե ոչ մեռաւ մարմինն տէրունական, զիա՞րդ Պաւղոս աւանդէ Կորնթացւոցն, զոր և ինքն ընկալաւ. Քրիստոս, ասէ, մեռաւ վասն մեղաց մերոց, ըստ Գրոց[3])։ |Եւ արդ, որպէ՞ս յարեաւ՝ որ ոչն մեռաւ։ Եւ դարձցին յետս և ամաչեսցեն ամենեքեան, որք խօսին զանօրէնութիւն։

Եկայք այսուհետև ըմբերանեսցուք զայնոսիկ, որք իշխեցին ասել, եթե Երրորդութիւնն չորրորդութիւն լինի, եթե ասեմք, եթե ի Մարիամայ է մարմինն. և թե մի բնութիւնք ասեմք ամէն՝ Բանին և մարմնոյն, մնայ Երրորդութիւնն երրորդութիւն։ Ապա թէ ասեմք մարդկեղէն բնութիւն ի Մարիամայ, հարկ է եթե աւտար իմն բնութիւն մերձեցուցանեմք, և միանալ Բանին ընդ մարմնոյն իւրում ասեն չորրորդութիւն յԵրրորդութեանն լինել՝ վասն յաւելուածոյ մարմնոյն ի Բանն։ Եւ զայս այսպէս ասելով ոչ իմանան, եթե ինքեանք զարկուցեալք
49r. յաղթահարին. զի եթե ոչ ի Մարիամայ ‖ իցէ մարմինն,

1) Յովէլ Բ, 28. Գործք Բ, 17.
2) Հմմտ. Փիլպ. Բ, 7.
3) Ա. Կորնթ. ԺԵ, 3.



այլ մի բնութիւն Բանին և մարմնոյն, որպէս ասեն ինքեանք, յորմէ փախչին՝ զնոյն չորրորդութիւն քարոզեն։ Եւ արդ, եկայք ասասցուք. Որդի ապաքէն մի բնութիւն է և էութիւն Հօր, որպէս և սուրբ հարքն ի Նիկիա դաւանեցին, և թեպէտ և մի բնութիւն է, ոչ եթե ինքնն Որդի Հայր, այլ ինքնն Որդի Հօր ասի. և ահա մի բնութիւնս երևեցան երկու անձինք կատարեալք և մի էութիւն՝ երկու ինքնութիւնք։ Այսպէս և մի բնութիւն մարմնոյն և Բանին Աստուծոյ ոչ ինքն նոյն Բան, այլ այլում ընկեր Բանին, և թե ընկեր Բանին և նոյն բնութիւն մարմնոյն, որպէս և ասենն, նոքա արարին զԵրրորդութիւնն չորրորդութիւն։ Այլ ճշմարիտ Երրորդութիւնն կատարեալ և անքակ է, և ոչ ընդունի զոք յաւելուած, որպէս թէ|ինքնն անկատար իցէ, և ոչ զայլ ոք Բանն Աստուծոյ ընկերակից ընդ իւրում բնութեանն ընդ ինքեան աներևոյթ մարմին ունի։ Արդ, զիա՞րդ և սոքա քրիստոնեանք անուանեսցին, որ զայլ ոմն էակից Աստուածութեանն համարուն ի մտաց իւրեանց կարծեցին և ասեն։ Եւ դարձեալ, ընդդէմ Գրոց հակառակին և ի ներքս հերձուածս և պատառմունս արկանեն. զի Գիրք ասեն, եթե ի Մարիամայ էառ զմարմինն մարդկեղէն Փրկիչն մեր՝ Բանն Աստուծոյ, և նոքա չորրորդութիւն ի ներքս արկանել իշխեցին, և յաւելուածս իմն զմարմին Աստուածութեանն առնեն, և զոյգ և հաւասար Արարչին զարարածն։ Եւ Աստուածութեանն, որպէս թերացելոյ, յաւելուածս համարեն, և ոչ իմանան, եթե ոչ ի կատարումն
ինչ Աստուածութեանն և առ կարօտութիւն ինչ ‖ Բանն 49v.
մարմին եղև, այլ զի զմեռելութիւնս մեր կենդանացուսցէ։ Եւ ոչ եթե կատարեալ Բանն անկատար իցէ, վասն այնորիկ ծնաւ ի Մարիամայ, այլ զի զմարդկեղէն բնութիւնս փրկեսցէ ի մեղաց։ Որպէ՞ս ոչ իմանան, եթե Բանիւ եղև փրկութիւն մարմնոյն և կենդանութիւն։ Արդ, զիա՞րդ յաւելուած. որ եղև կենդանի մարմինն՝ Բանին կենդանարարի լինէր։ Մանաւանդ թե ևս առաւել մարդկութեան բնութեանս եղև յաւելուած հաղորդութիւն և միութիւն Բանին. քանզի մարմինն ի մահկանացուէ եղև անմահ և ի շնչաւորէ եղև հոգևոր, և որ յերկրէ եղեալն էր՝ վերացաւ էանց ընդ դրունս երկնից, և որ հողեղէնն էր՝ եղև անմահ և, ելեալ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հօր։ |Այլ Երրորդութիւնն, և թեպէտ և էառ ի Մարիամայ

մարմին Բանն՝ Երրորդութիւն կատարեալ է, ոչ ընդունի զյաւելուածս և զթերութիւնս, այլ միշտ ի կատարելութեանն իւրում էր և է, որ յԵրրորդութեանն միութիւն ճանաչի, և այսպէս յեկեղեցւոջ մի Աստուած քարոզի։ Արդ, վասն այսր ամենայնի լռեալ կարկեսցին հերձուածողքն։

Ասասցուք և առ այսոսիկ, որք ասենն, եթէ որ ի Մարիամայ մարմինն էր՝ ոչ նա Քրիստոս և ոչ Տէր և ոչ Աստուած։ Եթէ, որպէս ասեն, եթէ ոչ տէրունական մարմին էր և ոչ Աստուած Բանն ի նմա էր, զիմրդ իսկ և իսկ ծնեալ ի Մարիամայ՝ կոչեցաւ Էմմանուէլ, որ թարգմանեալ կոչի՝ ընդ մեզ Աստուած [1]։ Որպէս դարձեալ և Պաւղոս, եթէ ոչ Բանն էր ի մարմնին՝ զիմրդ Հռովմայեցւոցն գրէ, ասելով. Յորոց || 50r. և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած՝ աւրհնեալ յաւիտեանս, ամէն [2]։ Արդ, եկեալ խոստովանեսցին, եթէ յանցեան և մոլան, և դաւանեալ՝ հաւասարելով ընդ մեզ, ասասցեն, եթէ խաչեալն է Աստուած, և հաւանեալ հաւատասցեն ամենայն աստուածեղէն Գրոց։ Մանաւանդ Թովմա, որ հետս զտեղի բևեռացն, մեծաձայն գոչեաց՝ ասելով. Տէր իմ և Աստուած իմ [3]. Աստուած և Տէր փառաց և ի չարչարելումն ի մարմնին։ Իսկ մարմին չարչարեալ մեռաւ բևեռեալ ի խաչին, և ի խոցելն գեղարդեամբ՝ բղխէր ի կողիցն չարչարական մարմնոյն արիւն և ջուր. տաճար Բանին Աստուծոյ չարչարեալ մարմինն՝ լցեալ և միացեալ ընդ աստուածութեան Բանին, և զչարչարանս իւրոյ մարմնոյն Որդին Միածին Աստուծոյ իւր համարեալ, և ինքն անախտ և անչարչար էր յիւրում|մարմնին չարչարականի։ Վասն այսորիկ արեգակն տեսեալ զԱրարիչն իւր, այսինքն զԲանն Աստուած, ի խաչ ելեալ և թշնամանեալ զտէրունական մարմինն՝ յինքն ամփոփեաց զլուսաւորութիւն ճառագայթիցն իւրոյ, արար խաւար ամենայն աշխարհի։

Ցապականութիւն *։

Եւ դարձեալ մարմնոյն Բանին Աստուծոյ, որ ըստ բնութեան մարմնոյն էր մահկանացու՝ Բանն, որ ի մարմնին ի վեր քան զբնութիւնն մահկանացու մարմնոյ, արար



զմարմինն իւր անմահ և անապականացու, և լռեցոյց և ջնջեաց ի մարմնոյն զբնական մահն և զապականութիւն. վասն զի զգեցեալ և միացուցեալ էր իւր զմարմինն Բանն Աստուած, որ ի վեր է քան զբնութիւն մարդկան. վասն որոյ եղև մարմին անապական, և յաղթահարեցաւ մահ ի բնութեան մարմնի մահկանացուի. վասն զի Բա || 50v. նին Աստուծոյ կեանք թագաւորեցին ի նմա։

Ասասցուք դարձեալ և վասն այնոցիկ, ոյք յանդըգնեալ ասեն, եթէ որպէս ի մի ի մարգարէիցն եմուտ ի նա Բանն։ Զսոսա ևս դիւրագոյն է յանդիմանել, վասն զի առաջի ամենեցունց ի կուսական արգանդէ ծնաւ Բանն մարմնացեալ։ Եթէ էր լինել իբրև զմի ի մարգարէիցն Քրիստոս, ընդէ՞ր ի կուսէ ծնանէր, և ոչ յառնէ և ի կնոջէ, որպէս ամենայն մարգարէք և սուրբք, և ընդէ՞ր նորա մահն ասի վասն մեր ամենեցուն, իսկ այլոց մարգարէիցն և սրբոցն ոչ նոյնպէս։ Եւ ընդէ՞ր միայն ի գալստեան Բանին, որ մարմնացաւն ի Մարիամայ, ասի, եթէ ի վախճան աշխարհիս այսորիկ խաւսեցաւ ընդ մեզ Որդւովն իւրով [1]. իսկ այլոց մարգարէիցն և սրբոցն, որ յառաջ քան զնա էին և կամ յետոյ՝|զիւրաքանչիւր ծնունդս ծնան և զիւրաքանչիւր մահ մեռան, և ոչ ասի վասն նոցա, եթէ Բանն Աստուծոյ, և ոչ՝ ի կուսէ, և ոչ վասն մեր ամենեցուն զմահ ճաշակեալ։ Եւ դարձեալ, առաքեալն ասէ. Ամենեքեան ննջեցին, և ոչ ևս ընկալեալ զհատուցմունս, այլ մեզ միան [2]. իսկ որ ի Մարիամայն՝ միայն յարեաւ յերիր աւուր և արար փրկութիւն ամենայն տիեզերաց։ Եւ եթէ նման արդարոցն էր, ընդէ՞ր որ ի Մարիամայն ծնաւ՝ նա միայն ասի Էմմանուէլ. որ էր մարմինն միացեալ և լցեալ աստուածութեամբն և ծնանէր յԱստուածածին Կուսէն, քանզի Եմմանուէլ, որ թարգմանեալ կոչի՝ ընդ մեզ Աստուած։ Եւ դարձեալ՝ ամենայն սուրբք կերան և վաստակեցան և մեռան. և ոչ ասի որպէս վասն նորա, եթէ եկեր և վաստակեցաւ և մեռաւ, || 51r. ոչ զինքեան ինչ պէտս, այլ վասն մեր ամենեցուն։ Եւ դարձեալ՝ վասն իւրաքանչիւր սրբոցն ինչ ոչ վասն ուրուք ի նոցանէն ասացաւ. իսկ որ ի Մարիամայն է՝ վասն նորա միայն ասացեալ է, եթէ Բանն մարմին եղև, որով երևեցաւ, թէ առ սուրբսն տուաւ ի Բանէն Աստուծոյ շնորհք մարգարէութեան, իսկ որ

* Հմմտ. Զեռ. Գ. 6, p. 335, տպ. եր. 504. ուր անմիջական շարունակութիւն է նախընթացի, միայն սկզբում զգալի կերպով տարբեր է մեր ձեռագիրը և մօտ 10 տող մի պարբերութեամբ՝ վերջում մի քանի տողով. աւելի. մնացած բովանդակութիւնը նոյնն է։

1) Հմմտ. Մատթ. Ա, 23. 2) Հռոմ. Թ, 5. 3) Յովհ. Ի, 28.

1) Եբր. Ա, 2. 2) Հմմտ. Եբր. ԺԱ, 2, 39, 40.

ի Մարիամայն էր՝ ինքն Բանն իւր մարմին էառ և ծնաւ մարդ կատարեալ, ըստ բնութեան և ըստ էութեան Բանն Աստուծոյ հաւասար Հօր, և ըստ մարմնոյն ի զաւակէ Դաւթի. և մարմնոյն ի Մարիամայ եղեալ, որպէս ասաց Պաւղոս ի սկզբան ի Հռովմայեցւոց թղթին[1]: Զսա և Հայր եցոյց յէջն Յորդանանու և ի Թաբաւրական լերինն և ասէ. Սա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ[2]: Զսա արիանոսք ուրացան և հերձուածողք, և հաւատացեալ երկրպագեմք սմա, և ոչ բաժանեմք զՈրդի ուրոյն և Բանն ուրոյն, այլ զնոյն ինքն Բանն գիտեմք ճշմարիտ Որդի Աստուծոյ, որով ամենայն ինչ եղև, մեք փրկեցաք և տիեզերք ամենայն փառաւորութիւն Հօր մատուցանեն:

**51v.** Այլ և ես ընդ այս զարմացեալ էի, թե որչափ յայտնի եղեն իրք, զիարդ դուք գայիք ի մեծ հակառակութիւն, մինչև առ մեզ ևս հասանել. այլ փառք Աստուծոյ, զի թեպէտ և տրտմեցաք ի վերայ գրելոցս և մեկնութեանցս, ևս առաւել ուրախ եղաք վասն այնոցիկ, որք եկին ի ձէնջ առ մեզ, զի միաբանեցան ընդ մեզ և խաղաղութեամբ արձակեցան առ ձեզ, խոստովանելով զբարեպաշտութիւն և զուղղութեան հաւատ: Եւ զայս, զոր գրեցի առ ձեզ, ոչ բա‖զում ինչ ի միտ ածելով, այլ սակաւ բանիւ հարկեցայ գրել, զի մի լռութեամբս տրտմեցուցից զձեզ, այլ ի ձեռն սակաւ գրոյս միաբանեալ ընդ ձեզ՝ միաբանութեամբ զուրախութիւն ընկալցուք: Նախ աղաչեմք զԱստուածասէր լաւութիւնդ Քո և երկրորդ յանգամ զայնոսիկ, որ լսեն զբան թղթոյս՝ հանդերձ մըտաւորութեամբ և բարեկամութեամբ ընդունել զասացեալսդ: Եւ թե իցէ պակաս և նուազ դէմք ասացելոցդ՝ դուք եղբայրաբար ուղղեսջիք և առ իս տաջիք բերել. և թե իցէ ինչ տգիտաբարբառ բանիցն, զոր ոչ ունի զարժանն կատարելութեան՝ շնորհեսցէ մեզ, գիտացեալ զամենեցունց զբնութեան մարմնոյն զտկարութիւնս և զտգիտութիւն. զի հաւատով փառաւորեմք զԱստուած, այլ ոչ եթե քննութեամբ‖ինչ ի վերայ բնութեան Աստուածութեանն հասանել ինչ կարասցուք:

1) Հռոմ. Ա, 3.    2) Մատթ. Գ, 17. ԺԷ, 5. Բ. Պետ. Ա, 17.



## Այսորիկ են խոստովանութեան բանք Սրբոյն Գրիգորի Սքանչելագործի, եպիսկոպոսին Նէոկեսարու՝ յայտնեալ Հաւատամք *

Մի[ա] Աստուած, Հայր կենդանի Բանին, էական իմաստութեանն և զաւրութեան կերպարան[բ] իւրոյ. կատարեալ կատարելոյ ծնաւղ, Հայր Որդւոյ Միածնի: Մի[գ] Տէր միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր Աստուածութեանն, Բանն[դ] գործաւոր, իմաստութիւն պարառական ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցն[ե] և զաւրութիւն, բոլոր էիցս[զ] արարօղ. Որդի ճշմարիտ ճշմարտոյն, անտեսանելի անտեսանելւոյն[է]. անապական անապականին, անմահ անմահին, մշտնջենաւոր մշտնջենաւորին:.... և Որդւով[ը] երևեալ յայտնապէս մարդկան, պատ‖կեր Որդւոյ[թ], կատարեալ կատարելոյ, պատճառ կենդանեաց, սրբութիւնք[ժ] սրբութեանց[ժա] շնորհօղ, որ [ժբ] ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդի Աստուած[ժգ], որով ամենայնք: Երրորդութիւն կատարեալ փառօք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ՝ անբաժանելի և[ժ] անաւտարելի. ոչ ստեղծական ինչ և ոչ ծառայական Երրորդութեանն[ժդ], և կամ ի ներքս ածական, որ պէս թէ յառաջագոյն ինչ ոչ եղելոյ[ժե] զկնի ի ներքս ածաւ: Եւ[ժզ] ոչ երբէք նուազեաց Որդի ի Հօրէ, և ոչ յՈրդւոյ Հոգի[ժէ], այլ անփոփոխելի և[ժ] անայլայլելի Երրորդութիւնն միշտ: **52r.**

**Յաղագս Երրորդութեանն՝ Նորին, գ.**

Բայց մեք երկիրպագանեմք Հաւր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն. Աստուած զՀայր, Աստուած|զՈրդի, Աստուած, եթե ոչ զայրանաս, զՍուրբ Հոգին. մի բնութիւն երից առանձնաւորութեանցն՝ իմանալեաց և կատարելոց, ըստ ինքեան էութիւնս բաժանեցելոյ աստուածութեամբն:

* Հմմտ. Գ. ձեռ. 105, p. 178. կրկնութիւն է իրօք եր. 17. (p. 13 v.) վերջին հատուածի, աննշան շեղումներով և թերութիւններով: Այստեղ համեմատել ենք Աբ. Գր. 14, p. 124 v. ձեռ. ի հետ:

ա) Մի է    բ) էական իմաստութեան և զաւրութիւն կերպարանին    գ) Եւ մի    դ) Բան    ե) անկելոյս    զ) բոլորից    է) ճշմարտին    ը) Մի Հոգի Սուրբ՝ Աստուծոյ գոյութիւն ունելով և Որդւովն    թ) չ. պատկեր Որդւոյ    ժ) չ.    ժա) սրբութեանն    ժբ) որով    ժգ) Աստուծոյ    ժդ) ոչ ստեղծական ինչ յԵրրորդութեանն    ժե) յառաջագոյն չէր    ժզ) Զի    ժէ) և ոչ ի Հօրէ և յՈրդւոյ Հոգին Սուրբ

### Մեկնութիւն հաւատոյ. Նորին*։

Այսպէս հաւատամք և խոստովանիմք զսուրբ Երրորդութիւնն ի միաւորութիւն անդ՝ առանց խառնակութեան, նոյնպէս զսուրբ Միաւորութիւնն յերրորդութիւն անդ՝ անհատաբար և անսկզբնաբար և անբաժանաբար։ Քանզի, որպէս անխառնելի է սուրբ Երրորդութիւնն, այսպէս և անբաժանելի. անխառնելի է յաղագս իւրաքանչիւր յատուկ բնութեանն, իսկ անբաժանելի, վասն զի ամենակալ է Հայր, ամենակալ է Որդի, ամենակալ է և Հոգին
**52v.** Սուրբ՝ անորոշաբար, մշտնջենաբար։ | Քանզի երեք էութիւնքն մի են սուրբ Երրորդութեանն՝ անսպառք, անխառնք, անհատք, անբաժանելիք, անսկզբունք, մշտնջենաւորք, համագոյականք, անհասանելիք, որպէս և գրեալ է. Մեզ մի է Աստուած՝ Հայր, յորմէ ամենայն[1]. Նմա փառք յաւիտեանս։

### Նորին՝ Մասին Հաւատոյ. Ե.**

Եւ է Աստուած ճշմարիտ, անմարմին ի մարմնի երևեալ, կատարեալ ճշմարտութեամբ և աստուածային կատարելութեամբ. ոչ երկու դէմք և ոչ երկու բնութիւնք, քանզի և ոչ քառս երկրպագել ասեմք զԱստուած և զՈրդին Աստուծոյ, և ոչ զմարդ[ա] և զՀոգին Սուրբ։ Սակս որոյ նզովեմք զայսպիսի ամպարշտաց[բ], որք մարդ յաստուածային փառաբանութիւնն[գ] դնեն։ Զի մեք ասեմք՝ մարդ եղեալ զԱստուծոյ|Բանն[դ] առ փրկութիւն մեր, զի նմանութիւն[ե] զերկնայնոյն առցուք և աստուածազգեցցուք[զ] առ նմանութիւն՝ ըստ նմանութեան ճշմարիտ[է] Որդւոյն Աստուծոյ, իսկ ըստ Մարիամայ[ը] (Որդւոյ մարդոյ, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

### Նորին՝ Յաղագս մարմնանալոյ Աստուծոյ Բանին, եւ Հաւատոց. գ.

Աստուծոյ շնորհաւորապէս պարտ է հաւատալ յաղագս մարմնանալոյն և մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, աւրինացն յառաջագոյն զուշակեալ, մարգարէիցն վկայեալ, յառաքելոցն քարոզեալ, և նորին Տեառն բանիւ վարդապետեալ և գործով զինքն երևեցուցեալ։

### Ճառք ԺԲ. գլխոց նզովից*։

ա. Եթե ոք ասիցէ՝ կարծեաւք երևեալ զՔրիստոս աշխարհի, և ոչ խոստովանի զնա մարմնով եկեալ, որպէս և գրեալ է, նզովեալ լիցի։

բ. Եթե ոք ասիցէ առանց հո‖գւոյն կամ առանց **53r.**
մտաց զմարմինն Քրիստոսի, և ոչ խոստովանիցի զնա ըստ ամենայնի կատարեալ՝ զմի և զնոյն, որպէս և գրեալ է, եղիցի նզովեալ։

գ. Եթե ոք ասիցէ մասն մարդոյ առեալ Քրիստոսի, և ոչ խոստովանեսցի զնա նմանութեամբ ըստ ամենայնի՝ առանց մեղաց, որպէս և գրեալ է, նզովեսցի։

դ. Եթե ոք ասիցէ փոփոխելի կամ այլայլելի զՔրիստոս, և ոչ խոստովանեսցի զնա հոգւով անապական մարմնով, որպէս և գրեալ է, եղիցի....։

ե. Եթե ոք ասիցէ մարդ կատարեալ զՔրիստոս, բաժանելով զԱստուածն Բան, և ոչ խոստովանի մի Տէր զՅիսուս Քրիստոս, որպէս և գրեալ է, եղիցի նզովեալ։

զ. Եթե ոք ասիցէ փրկեալ զՔրիստոս, և ոչ խոստովանի զնա փրկիչ աշխարհի և լոյս ախեզիրաց, որպէս և գրեալ է, նզովեալ եղիցի։

է. Եթե ոք ասիցէ՝ այլ է, որ|չարչարեցաւն, և այլ է, որ ոչն չարչարեցաւ, և ոչ խոստովանի զնա առանց չարչարանաց՝ զԲանն մարմնով իւրով չարչարեալ առանց փոփոխելոյ, որպէս և գրեալ է, եղիցի նզովեալ։

ը. Եթե ոք ասիցէ՝ այլ նախ քան զյաւիտեանս Որդին Աստուծոյ, և այլ է որ ի վախճանի, և ոչ խոստովանի զնա, որ յառաջ քան զյաւիտեանս՝ զնոյն և ի վախճանի, որպէս և գրեալ է, եղիցի նզովեալ։

թ. Եթե ասիցէ ոք ի սերմանէ առն ծնեալ զՔրիս-

---

* Համա. եր. 17 (p. 14 r.) Սահմանք հաւատոյ ՏԺԸ. ից, որի կրկնութիւնն է իսկապէս՝ ընթերցուածների աննշան տարբերութեամբ։

** Համա. Տիմոթէոս, Հակաճառութիւն եր. 21, 93 և 189. համեմատութիւնն ըստ վերջին օրինակին.

ա) և զմարդ  բ) և նզովեմք զայսպէս ամպարշտացն  գ) փառաբանութեանն  դ) զԱստուծոյն բան  ե) զնմանութիւն  զ) աստուածազգեցցուք  է) ճշմարտի  ը) ըստ մարմնոյ

* Առաջին 5 նզովքը համա. «Արարատ» ամսագիր, 18[illegible]. ապրիլ, յաւելուած. եր. 10. Նոյնք, այլ և Է—Թ, ԺԱ—ԺԲ նզովները՝ Տիմոթէոս, Հակաճառութիւն. եր. 190։ Երկու թարգմանութիւնն էլ տարբեր, մանաւանդ վերջինը, թէպէտ կան նաև մօտիկ առընչութիւն ցոյց տուող նմանութիւններ (օր. նզ. ԺԱ.)։

տոս ի Կուսէն, որպէս զամենայն մարդ, և ոչ խոստովանի զնա ի Հոգւոյն Սրբոյ և սրբոյ Կուսէն մարմնացեալ և մարդացեալ՝ ի զաւակէ Դաւթի, որպէս և գրեալ է, նզովեալ եղիցի։

ժ. Եթէ ոք ասիցէ մարդ կատարեալ առեալ Քրիստոսի, իբրև զմի ոք ի մարգարէիցն, և ոչ խոստովանի զնա մարմնով ի Կուսէն լեալ մարդ, ի Բեթղեհէմ ծնեալ,
53v. ի Նազա || րեթ սնեալ և զարգացումն հասակի ընկալեալ, և ժամանակաց թիւ արարեալ, Յորդանանու մկրտեալ և ի Հօրէ վկայեալ, որպէս և գրեալ է, նզովեալ եղիցի։

ժա. Եթէ ոք ասէ զմարմինն Քրիստոսի նորին բնութեան աստուածութեանն, և ոչ խոստովանի զնա ի կերպարանի Աստուծոյ նախ քան զյաւիտեանս, և զինքն թափելով՝ զկերպարանս ծառայի առեալ, որպէս և գրեալ է, նզովեալ։

ժբ. Եթէ ոք ասէ անստացական զմարմինն Քրիստոսի, և ոչ խոստովանի զնոյն զանեղ Աստուած Բանն ի ստացական մարդկութենէս զմարմնաւորութիւն և զմարդկանալն ցուցեալ, որպէս և գրեալ է, եղիցի նզովեալ։

Մեկնութիւն ԺԲ. գլխոց՝ ի ԲԺ. երորդէն սկսեալ, ի ներքուստ մինչեւ յառաջինն *։

ժբ. Որպէս արդեւք անստացական ասէ ոք զմարմինն. քանզի անեղն անխոցելի է, անչարչարելի, անշօշափելի. իսկ Քրիստոս ի մե|ռելոց յարուցեալ՝ զտեղիս բևեռացն և զխոցումն տիգին և զշօշափումն մարմնոյն ցուցանէր աշակերտացն, և դրօքն փակելօք ի ներքս մտեալ՝ այլ զի ցուցցէ զաստուածութեանն գործ և զմարմնոյն ճշմարտութիւն։

ժա. Զիա՞րդ և յետ ժամանակին մարմին նորին բնութեանն լինիցի՝ անժամանակ էի Աստուածութեանն. քանզի նոյն բնութեամբ՝ որ նոյն է էութեամբ և մշտընջենաւորութեամբ, անփոփոխաբար։

ժ. Զիա՞րդ ասիցեն մարդ կատարեալ առեալ Քրիստոսի, իբրև զմի ի մարգարէիցն, նորին Քրիստոսի մարդ եղելոյ ի Կուսէն մարմնով. յաղագս որոյ գրեալն է եթէ՝ Առաջին մարդն յերկրէ հողեղէն [1]. վասն զի ստեղծեալ

* ԺԲ. և ԺԱ. հատուածները հմմտ. Տիմոթէոս, էջ 190, ուր տարբեր թարգմանութեամբ է։

1) Ա. Կորնթ. ԺԵ, 47.



յերկրէ՝ յերկիր չոգաւ, երկրորդ մարդ լինեալ յերկինս, և ասի առաջին Ադամ, որպէս խոստովանի, եթէ յառաջնմէն երկրորդն ըստ մարմնոյ. յաղագս որոյ և || մարդ 54r.
և որդի մարդոյ Քրիստոս։ Այսպէս վկայի, եթէ երկրորդն՝ առաջնոյն փրկիչ. վասն որոյ և եկն ի յերկնէ իջեալ Բանն և մարդ լինեալ՝ յերկինս ել, և ասի յերկնէ երկրորդ Ադամ։

թ. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք ի սերմանէ առն լինել զՔրիստոս ի Կուսէն սրբոյ. քանզի հրեշտակն, որ աւետարանեաց՝ ի Հոգւոյն Սրբոյ ասաց. և Մարիամ ասէ. Զիա՞րդ լինիցի, զի զայր ոչ գիտեմ [1]։ Վասն որոյ դարձեալ՝ Զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի քեզ, և՝ Որ ծնանելոցն է սուրբ է և Որդի Բարձրելոյ [2]։ Եւ Յովսեփայ ասէ. Մի՛ երկնչիր առնուլ զՄարիամ կին քո, զի ի նմայն ծնեալն ի Հոգւոյն Սրբոյ է. ծնցի որդի և կոչեսցի անուն նորա Էմմանուէլ՝ ընդ մեզ Աստուած [3]։

ը. Որպէս արդեւք լինիցի այլ նախ քան զյաւիտեանս Որդին Աստուծոյ, և այլ|որ ի վախճանի, ինքնին Տէառնն ասացեալ. Յառաջ քան զԱբրահամ եմ ես [4]. և թէ՝ ի Հօրէ ելի և եկի, և դարձեալ երթամ առ Հայր իմ [5]։

է. Որպէս արդեւք ասիցէ՝ այլ է որ չարչարեցաւն, և այլ է, որ ոչ չարչարեցաւ. Տէրն ասէ. Պարտ է Որդւոյ Մարդոյ բազում չարչարել և մեռանել և յերրորդ աւուր յառնել [6]. և՝ Յորժամ տեսանիցէք զՈրդի Մարդոյ նստեալ ընդ աջմէ Հօր [7]. և՝ Յորժամ եկեսցէ Որդի Մարդոյ փառօք Հօր իւրոյ [8]։

զ. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք փրկեալ զՔրիստոս. իւր Տեառնն ասացեալ է. Ես եմ կեանք [9]. Ես եկի, զի զկեանս ունիցին [10]. և՝ Որ հաւատայ յիս, զմահ մի՛ տեսցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս [11]։

ե. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք մարդ կատարեալ
զՔրիստոս՝ բաժանմամբն || զմարդն և զԱստուածն Բանն. 54v.
ինքն իսկ Տէրն ասէ. Ընդէ՞ր կամիք զիս սպանանել՝ այր, որ զճշմարտութիւնն ձեզ խօսեցայ. և՝ Զոր լուայ ի Հօ-

1) Ղուկ. Ա, 31. 2) Ղուկ. Ա, 35. 3) Մատթ. Ա, 20—21. հմմտ. 23. 4) Յովհ. Ը, 58. 5) Յովհ. ԺԶ, 28. 6) Ղուկ. Թ, 22. 7) Մատթ. ԻԶ, 64. Մարկ. ԺԴ. 62. 8) Մատթ. ԻԵ. 31. հմմտ. ԺԶ, 27. 9) Յովհ. ԺԱ, 25. ԺԴ, 6. 10) Յովհ. Ժ. 10. 11) Յովհ. Գ, 16, 15 ևլն.

րէ[1]։ Զի ոչ եթե զմարդն ետ յաղագս մեր, այլ զինքն մատնեաց վասն մեր. վասն որոյ ասէ. Քակեցէ՛ք զտաճարս զայս, և յերիս աւուրս յարուցանեմ զդա. քանզի նա ասէր յաղագս տաճարի մարմնոյ իւրոյ[2]։

դ. Զիա՞րդ ասիցէ ոք փոփոխելի կամ այլայլելի զՔրիստոս՝ իւր Տեառնն ասացեալ. Ես եմ, և ոչ փոփոխիմ[3]. և դարձեալ՝ Ոչ հոգին նորա թողաւ ի դժոխս և ոչ մարմին նորա ետես զապականութիւն[4]։

գ. Զիա՞րդ արդեւք ասիցէ ոք փոփոխելի կամ այլայլելի և կամ մասն առեալ Քրիստոսի. իւր Տեառնն ասացեալ է. Զանձն իմ դնեմ յաղագս ոչխարացն[5], և՝ Մարմին իմ ճշմարիտ կերակուր և|արիւն իմ ճշմարիտ ըմպելի[6], և՝ Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ ունի կեանս յաւիտենականս[7]։

բ. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք առանց հոգւոյ կամ առանց մտաց զմարմինն Քրիստոսի. քանզի խռովութիւն և տրտմութիւն և հոգք ոչ մարմնոյ առանց հոգւոյ, և ոչ հոգւոյ առանց մարմնոյ, և ոչ աստուածութեանն անփոփոխելոյ, և ոչ կարծեացն ցոյցք, և ոչ մարդկային տկարութեանս խնդիր, այլ ըստ մեզ չարչարանացս ցոյցս յինքեան առնէր Բանն, ընդունելով զչարչարականն, որպէս և գրեալ է՝ Նա զտկարութիւնս մեր էառ և զհիւանդութիւնս մեր եբարձ[8]։ Վասն զի խռովութիւն և տրտմութիւն և հոգք՝ հոգւոյն են ախտք, իսկ աշխատութիւն և քուն և խոցումն մարմնոյ՝ տկարութիւն մարմնոյ է։

55r. ա. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք ‖ կարծեաւք երեւեալ զՔրիստոս աշխարհի, որ ի Բեթղեէմ ծնաւ և ի թլփատութիւն մարմնոյ ածաւ, ի Շմաւոնէ բարձաւ և երկոտասանամ ծնողացն հնազանդեաց, և Յորդանանու մկրտեցաւ և ի խաչին բեւեռեցաւ և ի մեռելոց յարեաւ։ Վասն որոյ, թէպէտ և ասի՝ Խռովեցաւ հոգւով[9], տրտմեցաւ անձն իւր, խոցեցաւ մարմնով՝ ըստ մեզ հաստատութիւն չարչարանացն առնուանէ, և զի ցուցցէ, թե մարդ եղև, յաշխարհի մարդկան երևեցաւ, ըստ նմանութեան՝ առանց մեղաց։ Քանզի ծնաւ ի Բեթղեէմ աստուածավայելչաբար ըստ մարմնոյ. երկնաւոր հրեշտակացն ծանուցեալ՝ զիւրեանց

[1]) Յովհ. Ը, 40. [2]) Յովհ. Բ, 19. 21. [3]) Մաղ. Գ, 6. [4]) Գործք Բ, 31. [5]) Յովհ. Ժ, 15։ [6]) Յովհ. Զ, 56. [7]) Յովհ. Զ, 55. [8]) Մատթ. Ը, 17. Ես. ԾԳ, 4. [9]) Յովհ. ԺԱ, 33.



Տէրն աւրհնէին, որ ի մսուր խանձարրօքն պատեցաւ, որ ասէին՝| Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն[1]։ Ի Նազարեթ սնեալ աստուածավայելչաբար, ի մէջ վարդապետաց նստեալ՝ հիացուցանէր զնոսա իմաստութեամբ, ի տարաժամ հասակի ըստ մարմնոյ, որպէս աւետարանական բանն թուէ։ Յորդանանու մկրտեցաւ, ոչ զի զսրբութիւն ընդունիցի մերձեցեալ, այլ զի սրբութեանն ընդունելութիւն շնորհեսցէ։ Յանապատին փորձեցաւ՝ ոչ փորձութեանցն ի ներքս անկեալ, այլ զմեր փորձութիւնն յառաջ կոչելով, զփորձիչն առաջի արկեալ, զի մնոտի ցուցանէ զփորձաւղն։ Վասն որոյ ասէ. Քաջալերեցարո՛ւք, ես յաղթեցի աշխարհի[2]. ոչ զաստուածային մարդն առաջի արկեալ, այլ զիւր մարմինն յաղթող ախտիցն և մահու և ապականութեան ցուցանելով։ Այլ զինչ. ի ձեռն որոյ ‖ մարմնոյ մեղք մտին յաշխարհ, և մեղաւքն 55v. մահ թագաւորեաց ամենայն մարդկան, ի ձեռն նորին մարմնոյ ըստ նմանութեան դատապարտեցին մեղք ի մարմնի[3], և յաղթեցի որ մեղացն վերակացու էր. լուծցէ Փրկիչն զմահն, և ոչ ևս թագաւորեալ, և խափանեցի ապականութիւն թաղմամբ մարմնոյն, և պտուղ յարութեան և ցուցցէ և սկիզբն արդարութեանն յաշխարհի նահատակեսցի ի ձեռն հաւատոցն, և արքայութիւնն երկնից աւետարանեսցի, և Աստուծոյ ընդ մարդկան եղիցի հաղորդութիւն։ Յաղագս այսպիսի շնորհի փառաւորեմք զՀայր՝ զտըւօղն զնոյն ինքն զՈրդին Միածինն վասն աշխարհի կենաց. փառաւորեմք զՈրդի, որ ետ զինքն|վասն մերոյ փրկութեան. փառաւորեմք զՀոգին Սուրբ, որ զաւրացուցանէ և կենագործէ զմեզ, և տա շնորհս Աստուծոյ ի Աստուծոյ հաղորդութիւնն։ Եւ մի՛ քննեսցուք զաւետարանական բանն՝ ցամաք վաճառիւք և անբաւ խնդրովք բանակռուութիւն սերմանելով և զխարթ և զուղիղ բանն հաւատոցն խոշորացուցանելով, այլ մանաւանդ գործեսցուք զգործս հաւատոցն. զխաղաղութիւն սիրեսցո՛ւք, զմիաբանութիւն ցուցցո՛ւք, զմիաւորութիւն պահեսցո՛ւք, զսէր մշակեսցո՛ւք, որով զոհացեալ լինի Աստուած, որպէս զի ոչ է մեզ զժամանակս և զժամս, զոր Հայր յիւրում իշխանութեանն եդ՝ գիտել, այլ հաւատալ, թէ և ժամանակի է ‖ կատարած և հանդերձելոյ յաւիտենին երև- 56r.

[1]) Ղուկ. Բ, 14. [2]) Յովհ. ԺԶ, 33. [3]) Հմմտ. Հռոմ. Ը, 132.

ւումն և դատաստանին յայտնութիւն, և Որդւոյն Աստուծոյ գալուստ և գործոց հատուցումն, և արքայութեանն երկնից ժառանգութիւն։ Նոյնպէս և ո՛չ մեր է գիտել՝ զիա՞րդ Որդի Աստուծոյ մարդ եղև. քանզի խորհուրդս այս մեծ է, որպէս և գրեալ է թէ՝ Զազգն նորա ո՞վ պատմեսցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա[1]։ Այլ հաւատալ, թէ Որդին Աստուծոյ ճշմարտապէս ծնաւ ըստ մարմնոյ՝ մարդ ըստ գործոց, և թէ մեռաւ յաղագս մեր, և յարեաւ, որպէս և գրեալ է[2], և յերկինս ել՝ նստաւ ընդ աջմէ Հաւր, ուստի եկեսցէ դատել զկենդանիս և զմեռեալս, որպէս և գրեալ է[3]։ Մի՛ զուգէ ի մեր բանակռիւ լինելոյ| առ միմեանս՝ հայհոյեսցեն ոմանք զհաւատոյն բան, և գայցէ ի վերայ ասացելումն. Յաղագս ձեր յամենայն ժամ անուն իմ հայհոյի (ի) մէջ հեթանոսաց[4], և ի մարդկան, ընդ որ շրջեցաւ ըստ նմանութեան՝ առանց մեղաց-

## Սրբոյն Բարսղի, եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց՝ Յաղագս սուրբ Երրորդութեանն*:

ԶԱստուած յիշել հանապազ բարեպաշտութիւն է, և յագումն ո՛չ ունի զաստուածասէր[ա] հոգի. բայց բանիւ անցանել յաղագս Աստուծոյ յանդգնութիւն է՝ մտօք[բ] բազում չափով յիրացն արժանաւորութենէ ի բաց մնացեալ, և դարձեալ բանիւ աղաւտաբար մերձ կացուցանել զիմացեալն։ Արդ, եթէ միտք մեր յոլովագոյն ի մեծութենէ ի բաց նուազեալ, իսկ բանն նուազագոյն ևս է || 56v. և[դ] քան զնոյն ինքն զմիտսն. զիա՞րդ ո՛չ հարկաւոր է լռութիւն[ե]. մի՛ երբեք բանիցն տկարութեամբ թուեսցի վտանգել և[զ] յաստուածաբանութեանն սքանչումն։ Արդ, փառաւորելն զԱստուած տենչալի յամենեսին ի բանականսս սերմանեցաւ ըստ բնութեան. իսկ արժանաւորապէս[է] ասել՝ ամենեքեան նուազեն նմանաբար,[ը] և յաղագս բարեպաշտութեանն բաղձանայ[թ]. այլ յայլմէ զանազանեմք, եթէ ո՛չ արդեւք ոք ամպարհաւաճեալ մտամոլոր է զինքն, որպէս և[ժ] կարծել զինքն ի վերայ ծայրագունին ելանել ըմբռ-

* Տես. ձեռ. № 944, p. 905 v.

ա) աստուածասէր բ) միտք գ) իբրացն նուազեն դ) ես և ե) լաւութիւնն զ) չ. է) արժանապէս ը) նմանաբար նուազեն թ) բաղձանաց ժ) որպէս թէ

1) Ես. ԾԳ, 8. 2) Հմմտ. Ա, Կորնթ. ԺԵ, 32. 3) Հմմտ. Կող. Դ, 1. Բ. Տիմ. Դ, 1. եւն. 4) Համմ. Բ. 24. Ես. ԾԲ. 5.



մամբ[ա]. այլ որքան թուի յառաջատել ի գիտութեամբ[բ], այնքան առաւել զտկարութիւնս իւր զգասցէ[գ]։ Այսպիսի էր Աբրայամ[դ], այսպիսի էր Մովսէս, յորժամ զԱստուած տեսանել[ե] կարացին, որպէս|մարդոյ տեսանել է կարելի. յայնժամ մանաւանդ իւրաքանչիւր[զ] ոք զինքն անարգեաց. քանզի Աբրահամ երկիր զինքն մոխիր[է] անուանեաց[1], իսկ Մովսէս աղաւտաբար[ը] ասելով զինքն և յամրալեզու[2]. վասն զի տեսանէր զլեզուոյն իւրոյ զտկարութիւն՝ սպասաւորել մեծութեան իմաստիցն ո՛չ կարացեալ։ Այլ սակայն լսելիք[ը] բացան այժմ[թ] առ աստուածաբանութեան լսելութիւն, և յագումն ո՛չ է յեկեղեցւոջ այսպիսեաց լսաւորութիւն[ժ], հաստատելով զժողովողին բան եթէ՝ Ո՛չ լցցի ունկն ի լսել[3]. հարկաւոր է ասել՝ ըստ կարի. և ասեմք՝ ո՛չ որքան է Աստուած, այլ որքան մեզ հասանի, և ո՛չ վասն զի զմիջոց[ժա] երկնի և երկրի զետեղի՝ անցանել[ժբ] աչօք զրովանդակն անկարանամք և որքան կարիցեմք տե||սանել հրաժարեսցեմք[ժգ], Սոյնպէս 57r. և այժմ սակաւ բանիւք զբարեպաշտութիւնն լցուսցուք[ժդ], իսկ մեծ[ժե] բնութեանն թողացուսցուք ունել զամենայն բանի զյաղթանակն. քանզի և ո՛չ հրեշտակացն լեզուք ոք[ժզ] երբեք իցեն և ո՛չ հրեշտակապետացն՝ հանդերձ ամենայնի միասին բանական բնութեամբն ժողովեալք, յոլով մասամբ հասանել կարասցեն, ո՛չ զի ամենայնի[ժէ] զինքեանս զուգել։ Իսկ դու եթէ կամիս յաղագս Աստուծոյ ասել ինչ կամ լսել, թո՛ղ զմարմինդ քո, թո՛ղ զմարմնական զգայութիւնս[ժը], լքցես զերկիր, լքցես զծով, ի ստորև քան զքեզ արասցես զաւդդ, զա՛նց արա զժամուց և զժամանակաց բարեկարգութեան որ[ժթ] յերկրի զարդք, ի վերոյ քան զերկին ելցես[ի], զանցցես զաստե|ղաւք և շուրջ զնոսա 'հրաշալեաւքն՝ զբարեզարդութեամբ նոցա, զմեծութեամբն և զպիտոյիւքն, զորս ընձեռեն ամենեցուն, զքաջակարգութեամբ[իա] նոցա, զպայծառութեամբն, զդրու-

ա) ըմբռնման բ) որպէս թէ յառաջել ի գիտութիւնն գ) զգասցուք դ) Այսպիսի Աբրաամ ե) տեսանել զԱստուած զ) երկաքանչիւր է) և մոխիր ը) աղօտաձայն ը) զի ամենայն լսելիք թ) յայժ ժ) լսաւորութեանց ժա) զմիջոցս ժբ) զտեղի զանց առնել ժգ) հրաժարեցեմք ժդ) լցցուք ժե) մեծի ժզ) որք ժէ) զամենայն ժը) զգայութիւնդ ժթ) զանց արա զժամանակաց բարեկարգութեամբք և որք ի) զերկինս լեցես իա) զքաջակարգութեամբ

1) Ծնն. ԺԸ, 27. 2) Ելք Դ, 10. 3) Ժող. Ա, 8.

թեամբն, զշարժմամբն և բացատրութեամբ ունին[ա]. ըստ ամենայն զանցեալ բանիւ, զերկնաւն ի վեր յառեալ և գեր ի վերոյ նորին լինելով՝ յատուկ մտօք շուրջ տեսցես զանդ գեղեցկութիւնն, զօրութեանց երկնայնոյ զպարա̃կցութիւնն՝ զհրեշտակացն, զհրեշտակապետացն, զկերակցութիւնս, զփառս տերութեանցն, զնախանձառութիւն[բ] աթոռոյն[գ], զզօրութիւնս, զպետութիւնս, զիշխանութիւնս՝ զանցանելով ըստ ամենայն և ի վերոյ քան զբոլոր ստացուածսն. ի վեր հայեսցիս մտօք և խորհրդոք[դ], գեր ի վերոյ քան զայսոսիկ զմիտսդ ի վեր բարձ- ‖ 57v. բացուցեալ՝ իմասցիս զաստուածային բնութիւնն, կացեալ անփոփոխելի, անայլայլելի, անախտ, պարզ, անշաբաղիր[ե], անբաժանելի, լոյս անմերձանալի, բարութիւն անճառելի, մեծութիւն անհասանելի՝ փառս առաւել փայլեալս, բարութիւն ցանկալի, գեղեցկութիւն անհնարելի՝ ուժգնարար ի վարժեցեալ[զ] հոգի մերձանալով։

* Անդ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի անստացական բնութիւն, տիրական արժանաւորութիւն, բնական բարութիւն։ Հայր ամենեցուն սկիզբն, պատճառ գոլով[է] էիցն, արմատ կենդանութեանց. ուստի յառաջ եկն աղբիւր կենաց՝ իմաստութիւն, զօրութիւն, պատկեր անայլայլելի անտեսանելւոյն[ը] Աստուծոյ, ի Հօրէ ծնեալ Որդի, կենդանի Բան, Աստուած և էն[թ] և առ էն Աստուած։| էն ոչ լինելով գոյացեալ նախ քան զյաւիտեանս, ոչ առստացեալ զՈրդի զկնի[ժ], ոչ ստացուած, արարիչ՝ ոչ արարած, ստացօղ և ոչ ստացուած։ Ամենայն էր[ժա], որ ինչ է Հայր. Որդի[ժբ] ասացի և Հայր, պահելով ինձ զայսոսիկ զառանձնաւորութիւնս[ժգ]. բայց մեալոմն ի գոլն Որդի՝ ամենայն է, որ ինչ է Հայր, ըստ իւրում ձայնի Տեառնն՝ ասելով. Ամենայն, զոր ունի Հայր՝ իմ է[1]. քանզի էին պատկեր է, որ ինչ է նախատիպին դիմաց. վասն

* № 901 ձեռ.ում կազմելիս սխալմամբ ուրիշ տեղից միջանկեալ մի թերթէ գրած, տես Բ. 907 այս շարունակութիւնը։

ա) զշարժմամբքն, եթե զիմրդ առ իրեարս ունակութեամբք և բացատրութեամբ  բ) զնախանձառութիւնս  գ) աթոռոյն  դ) հայեսցիս խորհրդովք  ե) անշարադիր  զ) ուժգնարար վարժեցեալ  է) զոյ  ը) անտեսանելւո  թ) և Աստուած էն  ժ) զկնի Որդի  ժա) է  ժբ) Հայր և Որդի  ժգ) զառանձնաւորութիւնն

1) Յովհ. ԺԶ, 15.



զի՝ Տեառք, տէր աւետարանիչն, զփառս նորա՝ զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ[1]։ Այս է, ոչ ի պարգևէ և ի շնորհէ տուեալ նմա սքանչելեացն, այլ ըստ բնական հաւասարութեանն ունելով Որդւոյ զհայրենի Աստուածութեանն պատիւ. քանզի առնուլ[ա] հասարակ ստաս ‖ 58r. ցուածն, իսկ ունելն ի բնութենէ ծնիցելոյն յատուկ։ Արդ, իբրև Որդի բնարար ստացաւ զՀայրն, և իբրև զՄիածին զբովանդակ[բ] ունի՝ յինքեան բովանդակելով, ոչ ուրուք բաժանեցելոյ[գ] առ այլ. զի ի նմին իսկ յՈրդւոյ[դ] անուանէ վարդապետիմք, զի բնութեան[ե] է հաղորդ, ոչ հրամանաւ ստացեալ, այլ ի գոյացութենէն[զ] պայծառացեալ՝ անբաժանարար, անժամանակապէս ընդ Հօր միաւորեալ, զոյգ բարութեամբ, զոյգ զօրութեամբ հաղորդ փառացն[է]. քանզի ժ այլ կնիք և պատկեր[ը] բովանդակ յինքեան ցուցանելով զՀայր[թ]. և որքան քեզ զկնի այսոցիկ ի մարմնական պատրաստութենէս խաւսի՝ զմարդկային փրկութիւնն տնօրինելով, էն մարմնով երևեալ մեզ|ցուցաւ, առաքեալ ասելով զինքըն[2], և ոչ կարել[ժ] յինքենէ առնելոյ[3], և պատուիրան առեալ[4], և որքան այսպիսիք՝ մի քեզ ընձեռեսցեն[ժա] պատճառս առ ի փոքրկացուցանել[ժբ] զՄիածնին աստուածութիւնն։ Քանզի ոչ առ քո տկարութիւնդ[ժգ] խոնարհումն նուազութիւն պարտի լինել արժանաւորութեան զօրաւորին. այլ զբնութիւն մեծվայելչաբար[ժդ], իսկ զխոնարհագոյն բանսն ընկալ տնօրինաբար։ Ցաղագս որոյ, եթե կամեսցուք ի մերձակայիս հաւատեաւ պատմել, մատուցանեմք արդեւք զմեզ ինքեան[ժե], բազում ինչ և անբաւ յոլովութիւն բանից ի ներքս ածեալ ի պատճառ[ժզ]. այլ յառաջիկայն վերստին երթիցուք, զի միտք կարիցեն[ժէ] ի նիւթականացն մաքրանալ և զամենայն ‖ 58v. զիմանալի ստացուածն լքանել. որպէս ձուկն ի խորոց ինչ[ժը] առ վերին

ա) առնուլն  բ) զբովանդակն  գ) բաժանեցելոց  դ) յՈրդւոյ  ե) բնութեանն  զ) Գոյութենէն  է) անբաժանարար, զոյգ բարութեամբ հաղորդ փառացն.  ը) այլ զկնի քեզ պատկեր  թ) զբովանդակ յինքեն ցուցանէ զՀայրն  ժ) առ ինչ կարել  ժա) այսպիսիք քեզ ընձեռեսցեն  ժբ) փոքրացուցանել  ժգ) ոչ առ քո տկարութիւնն  ժդ) իմա աստուածավայելչաբար  ժե) ինքենն  ժզ) ի պատճառս  ժէ) կարասցեն  ժը) և որպէս զձուկն ինչ ի խորոց.

1) Յովհ. Ա, 14.  2) Մատթ. ԺԵ, 24. Ղուկ. Դ, 41 ևլն.  3) Յովհ. Ե, 19.  4) Յովհ. Ժ, 18.

հրևութիւնն զուղեսցուք՝ ի մաքրութիւն ստացուածի լինալք։

Անդ տեսանիցէք զՍուրբ Հոգին, ուր Որդին և Հայրըն[ա], զամենայն ունելով և նա, գոյակից ըստ բնութեանն բարութիւնն[բ], զուղղութիւնն, զսրբութիւնն, զկենդանութիւնն։ Քանզի՝ Հոգի քո, ասէ, բարի[գ][1]. և դարձեալ՝ Հոգի ուղիղ[2]. և դարձեալ՝ Հոգի քո սուրբ[3]. և առաքեալ՝ Օրէնք հոգւոյն կենդանութեան[4]։ Այսոքիկ ոչինչ[դ] ի վերայ ստացեալք նմա, և ոչ զկնի լինալ է, այլ որպէս անբաժանելի է հրոյ ջեռուցանել և լուսոյ պայծառացուցանելն, նոյնպէս և Հոգւոյն[ե] սրբելն և կենագործելն՝ ուղղութիւն, բարութիւն[զ]։ Արդ, անդ եկաց Հոգին Սուրբ, անդ՝ յերանելի բնութեանն, ոչ|ընդ բազումս թուեալ, այլ յԵրրորդութեան նստեալ[է], միաբար պատմեալ՝ ոչ շուրջ ըմբռնեալ բաղկացութեամբքն։ Քանզի, զորօրինակ Հայր մի և Որդի մի, սոյն(պէս) մի և[ը] Հոգին Սուրբ։ Իսկ սպասաւորական հոգիքն ըստ իւրաքանչիւրում[թ] կարգի բազմութիւն մեզ երևի դժուարաթուելի։ Արդ, մի՛ խնդրեր ի ստացուածի զառաւելն քան զստացուածն, և մի՛ ի վայր[ժ] ածեր զսրբօղն ընդ սրբեալսն։ Նա լնու զհրեշտակս, լնու զհրեշտակապետս, սրբէ զզօրութիւնս, կենագործէ զամենայն։ Սա յամենայն ստացուածս բաժանեալ, յամենն[ժա] և այլազգաբար յայլմէ ընկալեալ՝ ամենեցուն զիւրմէ շնորհսն[ժբ] տայ, և ոչ ծախի յընդունօղսն, և ինքնն է աննուազ[ժգ]։ Զորօրինակ արեգակն պայծառացուցանելով զմարմինս և զանազանաբար ըմբռնեալսն[ժդ], ոչինչ
59r նուազէ || յընդունողացն, սոյնպէս Հոգի[ժե] Սուրբ ամենեցուն զառ յինքենէ շնորհսն ընձեռելով՝ անաղօտելի միայ և անբաժանելի, զամենեսեան լուսաւորէ առ ի յԱստուծոյ իմաստսն. շնչի[ժզ] ի մարգարէսն, զօրինադիրսն[ժէ] իմաստնացուցանէ, զօրացուցանէ զթագաւորսն, զքահանայս կատարէ, հաստատէ զարդարսն, պարկեշտացուցանէ

ա) և ուր Հայրն  բ) զբարութիւնն  գ) բարի առ է  դ) Այսուհետև ոչ ինքն  ե) անբաժանելի հրո ջեռուցանելն, նոյնպէս Հոգւոյն  զ) սրբութիւն  է) յԵրրորդութեանն տեսեալ  ը) այնպէս և մի է  թ) իւրաքանչիւր իւրում  ժ) ընդ վայր  ժա) չ.  ժբ) յիւրմէ շնորհ  ժգ) յընդունողսն. այլև ընդունողքն լեալ լինին, և ինքն աննուազ  ժդ) ի նոցանէ ըմբռնեալ  ժե) սոյնպէս և Հոգին  ժզ) շնչէ  ժէ) զօրինադիրսն

1) Սաղմ. ՃԽԲ, 10.  2) Սաղմ. Ծ, 12։  3) Սաղմ. Ծ, 13.
4) Հռոմ. Ը, 2.



զողջախոհս, գործէ զշնորհս բժշկութեան[ա], կենդանիս[բ] առնէ զմեռեալս, լուծանէ զկապեալս, ուղղէ զվայրանգեալսն[գ], որդեգրէ զօտարացեալսն։ Զայսոսիկ վերստին գործէ ծննդեամբ[դ]. եթէ զմաքսաւորն ըմբռնէ, հաւատացեալ[ե] աւետարանիչ ցուցանէ. եթէ ի ձկնորսի լինի՝ աստուածաբան կատարէ. եթէ զհալածիչն գտանէ ապաշաւեալ՝ առաքեալ հեթանոսաց գործէ, քարոզ հաւատոյն[զ], անաւթ ընտրութեան։ Սովաւ|տկարք զօրանան և աղքատք ճոխանան, տգէտք բանիւ իմաստնագոյնք են քան զիմաստունս։ Պետրոս և նա ի տկարութեան մարմնի[է] էր, այլ բնակեցելոյ[ը] ի նմա շնորհի Հոգւոյն՝ անկեալ ի մարմնոյն ստուեր զհիւանդութիւնն ի բաց հալածէր աշխատեցելոցն[թ]։ Աղքատ Պետրոս և Յովհաննէս, զի ոչ ունէին[ժ] արծաթ և ոսկի, այլ շնորհէին ողջութիւն՝[ժա] քան զբազում ոսկի պատուականագոյն. վասն զի յոլովից[ժբ] առնլով ոսկի կաղն և մուրացիկն[ժգ], իսկ ի Պետրոսէ ընկալեալ շնորհս՝[ժդ] դադարեալ ի մուրանալոյ[ժե], վազելով իբրև զեղջերու և աւրհնելով զԱստուած։ Ո՛չ գիտէր Յովհաննէս զաշխարհիս իմաստութիւնն, այլ խօսէր զբանս զօրութեամբ Հոգւոյն, յորս և ոչ մի իմաստութեան համեմատել կարէ։ Սա և յերկնի եկաց և զերկիր ելից, և
ամենայն || ուրեք մերձ է և ոչ պարունակի բովանդակ[ժզ], 59v
յիւրաքանչիւրում ընտանենայ[ժէ] և բովանդակ է ընդ Աստուծոյ. ոչ սպասաւորաբար պաշտէ զպարգևսն, այլ ինքնիշխանաբար բաժանէ զշնորհսն. քանզի բաժանէ, ասէ, իւրաքանչիւր ումեք՝ որպէս և կամի[1], և առաքի տնօրինաբար, իսկ մերձ լինի ինքնն իշխանապէս[ժը]։ Զսա մերձ զոլ յանձինս մեր աղօթեսցուք, և ոչ զմի ժամանակ զմեզ լքանել. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

ա) շնորհս բժշկութեանց  բ) կենդանի  գ) զվայրագնացեալսն  դ) ծննդեամբ գործէ  ե) զհաւատացեալն  զ) հաւատոյն  է) Պօղոս տկար էր, այլ մերձաւորութեամբ Հոգւոյն վարշամակն նորա մարմնոյն բժշկութիւնս ընձեռէր կարաւտելոց. Պօղոս և նա ի մարմնի տկարութեան  ը) բնակեցելով  թ) ի բաց հալածէր զհիւանդութիւն աշխատեցելոցն  ժ) քանզի չունէին  ժա) առողջութիւն  ժբ) ի յոլովից  ժգ) և էր մուրացիկ  ժդ) զշնորհն  ժե) դադարեաց ի մուրանալոյն  ժզ) և ոչ ուրեք պարունակի բոլորն  ժէ) ընդանեկ  ժը) ինքնիշխանապէս

1) Ա. Կորնթ. ԺԲ, 11. հմմտ. 4.

## Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապօղինարի հերձուածողի վիճաբանութիւն*.

Բարսեղ ասէ. *Մարմին մարդկային ունէր Քրիստոս, թէ ոչ։*

Ապօղինար ասէ. *Ո՛չ։*

Ուղղ.[ա] *Բնութեամբ, եթէ միաւորութեամբ անօրէնութեամբն։*

Ապօղինար ասէ. *Միաւորութեամբ անօրէնութեամբն։*

Ուղղ. ասէ. *Ապա ուրեմն բնութեամբ մարդկային, և[բ] միացուցանելով անօրէնութեամբն աստուածային։*

Ապօղ. *Այո։*

Ուղղ. *Եւ համաբնութիւն մեզ։*

Ապօղ. *Որ ի Մարիամայ մարմինն՝ համաբնութիւն մեզ։*

Ուղղ. *Զայնակի՞ց ուրեմն մեզ լիցիս յայսմ[գ]։*

Ապօղ, *Թէ այդպէս՝ այո։*

Ուղղ. *Արդ, տեսցուք յաղագս անձինն։*

Ապօղ. *Տեսցուք։*

Ուղղ. *Անձնաւո՞ր մարմինն էր[դ], եթէ առանց հոգւոյ։*

Ապօղ. *Հոգևոր։*

Ուղղ. *Հոգի ունէր՝ յայտ է ահա։*

Ապօղ. *Ո՛չ[ե]։*

Ուղղ. *Եւ զիա՞րդ հոգևորն ոչ ունէր հոգի։*

Ապօղ. *Աստուածային էր հոգևորութեամբ հոգիացեալ։*

Ուղղ. *Իսկ դու անաստուածութեամբ հոգիացար։*

60r. Ապօղ. ‖ *Բնաբար անձնացայ։*

Ուղղ. *Առանց Աստուծոյ զօրութեամբն։*

Ապօղ. *Այլ ոչ այսպէս[զ] Տէրն. քանզի յայնոսիկ անձն բանական ի մարմնի միանալով՝ հրամանաւ Աստուծոյ մարդ կատարէ. իսկ Քրիստոս[է] ոչ այսպէս. այլ Աստուած Բանն ի մարմնի[ը] միացեալ՝ մարդ կատարեաց զԱստուածն։*

* Տես. Ձեռ. № 944, p. 911 v. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի և Ապօղինարի հերձուածողի՝ Տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին։

ա) Բարս. Իսկ այլ գրչ։—Ապօղ. Աստուածաբնին—Բաղ. բ) իսկ գ) լինիցես յայս դ) էր մարմինն ե) Ո՛չ ունէր հոգի զ) որպէս է) Քրիստոսին ը) Բանն մարմին



Ուղղ. *Ուրեմն զայն ասես աստուածային անձնաւորութիւն։*

Ապօղ. *Եւ ամենևին իսկ։*

Ուղղ. *Փոխանակ անձի՞ն[ա] ուրեմն էր Բանն։*

Ապօղ. *Այո։*

Ուղղ. *Իսկ ո՞ էր, որ ասէրն. Զանձն իմ ոչ ոք բառնայ յինէն. յորժամ կամիմ՝ դնեմ զնա, և յորժամ կամիմ՝ առնում զնա[1]. մարմի՞նն է, եթէ Բանն[գ]։*

Ապօղ. *Բանն։*

Ուղղ. *Զի՞ր անձն. զոր ո՞չ ունէրն, թէ զոր ունէ՞րն[դ]։*

Ապօղ. *Զմարդկային կենացն ասէր։*

Ուղղ. *Եւ կարելի՞[ե] զմարդկայինն|կեանսն գոլ առանց մերձաւորութեան անձինն։*

Ապօղ. *Ամենևին իսկ. քանզի Աստուած Բանն ինքն ի վերայ երկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ։*

Ուղղ. *Երևեցաւ բնութեամբ անտեսանելին՝ զիա՞րդ։*

Ապօղ. *Մարմնով։*

Ուղղ. *Արդ, որպէս մարմնոյ երևելն[զ], սոյնպէս և անձին շրջելն. անկարելի է բնութեամբ անտեսանելոյն տեսանել, եթէ ոչ միասցի ի մարմնի, որ կարէն երևելի լինել, և անկարելի[է] բնութեամբ անչարչարելոյն չարչարել և շրջել ընդ մարդկան, ոչ միացեալ մարմնի[ը] անձնաւորի. իսկ մարմին անձնաւորի հոգի ունել[թ], եթէ կամիս և եթէ ոչ կամիս։*

Ապօղ. *Մա՞րդ ուրեմն չարչարեցաւ յաղագս մեր։*

Ուղղ. *Մի՛ լիցի. այլ Աստուած կամելով երևել՝ միացոյց ինքեան մար‖մին[ժ], զկարելին երևել, և կամելով* 60v.
*չարչարել՝ միացոյց ինքեան մարմին անձնաւոր, զկարելին չարչարել. ոչ յառաջագոյն զգոյացեալն և յայնժամ ըստ առաքինութեան[ժա] միաւորեալ, և ոչ ի մարդոյ պարզաբար Մարիամայ[ժբ]. այլ յառաջագոյն զնա սրբեալ[ժգ], յայնժամ ի նմա ընկալաւ Աստուծոյն[ժդ] Բան զմարդկու-*

ա) հոգւո բ) ոչ բառնա գ) դնեմ զնա. Բանն, եթէ մարմինն դ) Եւ զի՞ր անձն ասէ. զոր ունէ՞րն, եթէ զո՞ր ոչն ունէր ե) Եւ կարելի՞ է զ) մարմնոյն երևել է) Նոյնպէս և անձինն շրջել և անկարելի է ը) ի մարմնի թ) անձնաւոր հոգի ունել է ժ) մարմին անձնաւոր զկարելին չարչարել ժա) ըստ առաքինութեանն ժբ) ի Մարիամա ժգ) սրբեց ժդ) և յայնժամ ի նմանէն կալաւ Աստուածն

[2]) Հմմ. Յովհ. Ժ, 17—18.

թիւնն և միացոյց ինքեան ըստ անօրէնութեանն՝ հոգևոր մարմին, որպէս զի գոլ զմի և նոյն[ա] Աստուած և մարդ։

Ապօղ. Անձնաւոր մարմին[բ] մարդ է։

Ուղղ. Ո՛չ պարզաբար զհոգևոր մարմին ասեմ մարդ, այլ մարդկային մարմինն անձնաւոր լինել՝[գ] մարդ է։

Ապօղ. Մարդ Յիսուս է։

Ուղղ. Միաւորեալ Բանին։

Ապօղ. Ապա ուրեմն ոչ է Յիսուս մարդ։

Ուղղ. Առանց Բանի ոչ գիտեմ զնա մարդ եղեալ[դ], քանզի զգոյգութիւնն[ե] իւր միաւորութեամբ Բանին ծանեայ։

|Ապօղ. Ապա ուրեմն փոխանակ բանականին էր Բանն։

Ուղղ. Ո՛չ, այլ բանականին էր Բանն՝ միաւորելով յինքեան[զ], և բանականաւն եկն ի կամաւոր չարչարանս*։

Ապօղ. Միտս զմարդոյ[է] ուրեմն ունէր Քրիստոս։

Ուղղ. Մի՛ ասեր Քրիստոս բաժանելով զմիտս[ը] ունէր. քանզի երկոքին՝ միտքն և Բանն, ասի Քրիստոս. և այսպէս միտս մարդոյ[թ] ասեմ, յորում էր[ժ] Բանն, որպիսիքս ամն բանին[ժա], ասացաք՝ մարմին մարդկային բնութեամբ և անօրէնութեամբ Աստուծոյ[ժբ]. սոյնպէս և զանձն բնութեամբ զմարդկային, իսկ անօրէնութեամբ զԱստուծոյ[ժգ], և միտս[ժդ] մարդկային՝ բնութեամբ և անօրէնութեամբ Աստուծոյ։ Եւ զօրօրինակ մարմին նորա[ժե] ոչ եսես զապականութիւն, սոյնպէս և ոչ միտքն արարին զմեղս. և որպէս հարկաւոր է բնութեամբ զմարդկային մարմինն և յԱդամայ[ժզ] || 68r. ի մարմնոյ և յարենէ[ժէ] ունել զբնութիւնն, նոյնպէս հարկաւոր է զմարդկային անձնն բանական գոլ։ Եւ զարձեալ ասեմ. զօրօրինակ մարմինն բնութեամբ

---

* Հարուածականութիւնը № 944 ձեռագրի մէջ ք. 94 «յօգոյն ի բանականէ»... զօրքերութիւնն է՝ մինչև մեր ձեռագրի մէջ եղած հատուածի վերջը. իսկ յետոյ անմիջապէս հետևում է այն զօրքերութիւնը (ք. 912 v.), որ այստեղ մեր ձեռագրի շարունակութիւնն է կազմում. և այսպէս ամբողջանում է հատուածը։

ա) զմարմինն բ) մարմինն գ) ասեմ մարդկային մարմին անձնաւորել դ) Մարդ Յիսուս է.—Ուղ. Առանց Բանին ոչ մարդ զիտեմ զնա լինել ե) զգոյացութիւնն զ) այլ զի բանականն էր Բանին միաւորել է) մարդոյ ը) զմիտսն թ) մարդկային ժ) է ժա) որպէս ի սկզբան բանիս ասացաք ժբ) զԱստուծոյ ժգ) չ. սոյնպէս—զԱստուծոյ. ժդ) զմիտս ժե) մարմինն ժզ) մարմինն յԱդամայ ժէ) մարմնոյն և յարենէն



մարդկային էր[ա] և միաւորութեամբ անօրէնութեամբն[բ] աստուածային, սոյնպէս և միտք՝ բնութեամբ միաւորութեանն աստուածային միտք[գ]։

Ապօղ. Երկո՞ւք ուրեմն կատարեալ[դ]։

Ուղղ. Երկուց գոյացութիանցն կատարելոցն[ե] միաւորութիւն։

Ապօղ. Երկու կատարեալք մի կատարեալ ոչ լինին։

Ուղղ. Առ մարդկան արդեւք անկարելի լինել, բայց առ ի յԱստուծոյ[զ] կարելի։

Ապօղ. Զիա՞րդ կարելի։

Ուղղ. Որպէս կուսին ծնանելն, որպէս ի վերայ ծովուն գնալն, որպէս դրաւքն փակելովք մարմին թանձրամասն մտանել՝ ի մարմնոյ[է] և յոսկերաց հաստատեալն։ Արդ, զօրօրինակ այսոքիկ կարելիք Աստուծոյ, և նոյնք։

Ապօղ|Մա՞րդ ուրեմն ծնաւ Մարիամ։

Ուղղ. Սոսկ ոչ, այլ Աստուած մարդացեալ. քանզի յառաջագոյն ընդ նմա Տէրն աստուածաբար և յայնժամ ի նմանէ անօրինաբար մանուկ, յաղագս որոյ և Աստուածածին Մարիամ։

Ապօղ. Մա՞րդ ուրեմն խաչեցաւ յաղագս մեր։

Ուղղ. Սոսկ ոչ, այլ Աստուած էր Աստուծոյ Որդին, և կամեցեալ խաչել յաղագս մեր՝ միացոյց ինքեան մարմին անձնաւոր, բանական՝ զկարելին խաչել հանդերձ կամաւոր չարչարանօքն։

Ապօղ. Ընդէ՞ր ասես խաչեցեալ՝[ը] հանդերձ չարչարանօք. այլ է խաչն, և այլ է չարչարանսն կամաւորս[թ]։

Ուղղ. Կարճ քաջ։

Ապօղ. Զիա՞րդ։

Ուղղ. Զի մարմին հոգևոր խաչել[ժ] կարէ, իսկ չարչարանս ընդունել կամաւորապէս ոչ կարէ, որ ոչ է հոգևոր[ժա] բանական, և այս է || ամպարշտութիւն ասողացն, եթէ[ժբ] հոգի ոչ ունէր. քանզի մարմնոյ ոչ կարացելոյ զգալ զկամաւոր չարչարանսն առանց հոգւոյ, հարկաւոր է Բանին[ժգ], փոխանակ հոգւոյն լեալ՝ ընդունել չարչարանս[ժդ], 68v.

---

ա) չ. բ) անօրէնութիւնն գ) միտքն բնութեամբ են մարդկային և միաւորութեամբ անօրէնութեանն աստուածային դ) կատարեալք ե) գոյացութեանց կատարելոց զ) բայց Աստուծոյ է) ի մարմնոյն ը) խաչել թ) չ. և այլ է—կամաւորս. ժ) հոգևոր բանական ժա) և ոչ ի հոգևոր ժբ) զի ասեն թէ ժգ) բան. Բանին ժդ) չարչարանս ընդունել

կամ ոչ բնաւ գոլ զգայութիւն կամաւոր չարչարանացն։

Ապօղ. Եւ ոչ չարչարեցաւ Բանն։

Ուղղ. Միացուցեալ յինքեան[ա] զկարելին չարչարել, որպէս զի գոլ զչարչարանս անօրէնութեանն, և ոչ բնութեան Բանին. զորօրինակ վաստակեաց[բ] յուղեգնացութեանն՝ ոչ բնութիւն աստուածութեանն, այլ միաւորութիւն անօրէնութեանն. սոյնպէս և չարչարեցաւ՝ ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ անօրէնութեանն։ Ապա թէ ոչ, արար զերկին[գ] և զերկիր առանց աշխատութեան և գնայ ի վերայ թևոց հողմոց[1], զիա՞րդ արդեւք[դ] աշխատեցաւ, ե||թէ ոչ միացոյց ինքեան զկարելին վաստակել մարմինն[ե]. զի մարմին առանց հոգւոյ ոչ աշխատի և ոչ վաստակէ։ Եւ[զ] զորօրինակ Նորա մարմին է, զոր միացոյց ինքեան հոգևոր[է] մարմին՝ ոչ բնութեամբ, այլ անօրէնութեամբ[ը], սոյնպէս Նորա[թ] աշխատութիւնն, վաստակն[թ] ոչ բնութեամբ, այլ անօրէնութեամբ միաւորութեանն, և Նորին չարչարանքն ոչ բնութեամբ. քանզի անչարչարելի է աստուածութիւնն[ժ], այլ անօրէնութեամբ միաւորութեանն[ժա]։ Վասն զի յաղագս չարչարանաց է[ժբ] միաւորութիւնն և յաղագս փըրկութեան[ժգ] չարչարանքն. քանզի կեցուցանել կամելով[ժդ] չարչարեցաւ, և չարչարել կամելով միացոյց, և միացուցեալ՝ ոչ եթող. զի՝ Սոյնպէս և[ժե] եկեսցէ, զորօրինակ տեսէք
62r. զնա երթեալ յերկինս[2]. և՝ Հայեսցին յոր[ժզ] խոցեցինն[3]։

Ապօղ. || Այլազգաբար արդեւք ոչ կարէր ապրեցուցանել։

Ուղղ. Այլ այնպէս կամեցաւ ապրեցուցանել՝ յիմարութեամբ քարոզութեանն։

Ապօղ. Եթէ զմիտս մարդոյ ունէր՝ կարէ՞ր արդեւք[ժէ] մեղանչել։

Ուղղ. Եթէ ոչ էր միացեալ աստուածութեամբն[ժը] միտքն՝ այո՛։

Ապօղ. Փոփոխելի՞ ուրեմն էր Քրիստոս։

Ուղղ. Մի՛ լիցի։

ա) ընդ ինքեն  բ) վաստակեցաւ  գ) արարն զերկինս  դ) չ.  ե) մարմին  զ) չ.  է) ընդհին հոգևոր  ը) այլ միաւորութեամբ անօրէնութեանն  թ) չ.  ժ) բնութեամբ  ժա) միաւորութեամբ անօրէնութեան  ժբ) չարչարանացն էր  ժգ) ի փըրկութիւն էին  ժդ) կամեցաւ  ժե) նոյնպէս  ժզ) հանեցել տեսին զոր  ժէ) կարէր և  ժը) ընդ աստուածութեանն

[1]) Սաղմ. ճԳ, 3.  [2]) Գործք Ա, 11.  [3]) Յովհ. ԺԹ, 37. Զաք. ԺԲ, 10.



Ապօղ. Զի եթէ կամէր[ա] մեղանչել՝ փոփոխելի էր։

Ուղղ. Յիշեա՛ զասացեալսն[բ]. քանզի ասացի, եթէ ոչ էր միացեալ՝ այո՛. զի Քրիստոս Յիսուս[գ] առանց միաւորութեան ոչ իմանի Քրիստոս Յիսուս, այլ Աստուած Բան և Որդի[դ] Աստուծոյ գոյացեալ։ Եթէ կարասցես[ե] գտանել անձնաւոր մարմին առանց միաւորութեան՝ իմա՛[զ] փոփոխումն. ապա թէ միանգամայն մարմին՝ միանգամայն Աստուծոյ Բանին մարմին հոգևոր, բանական[է],||զի՞ խնդրես[ը] փոփոխումն։

Ապօղ. Թէ զմիտս[թ] մարդոյ ունէր, և զմոռացումն և զանգիտութիւն ունէր և[ժ] մեղանչել կարէր։

Ուղղ. Եթէ ոչ էր միացեալ աստուածութեամբն՝[ժա] այո՛. և դու մի՛ ասեր միտս մարդոյ[ժբ], քանզի ոչ զայլոյ ուրուք մարդոյ ունէր միտս։

Ապօղ. Եթէ զմարդկային միտս ընկալաւ Բանն, զորօրինակ և զմարդկային միտս[ժգ], զիա՞րդ կարէր մարդկային միտքն ոչ փոփոխել։

Ուղղ. Որպէս մահկանացուս այս զգենլով զանմահութիւն՝ ոչ ևս մեռանի, և ապականացուն զգենուլ[ժդ] զանապականութիւն՝ ոչ ևս ապականի, սոյնպէս և միտք աստուածացեալ[ժե], միաւորութեամբ Աստուծոյ Բանին՝ ոչ փոփոխի։

Ապօղ. Ապա ուրեմն և սուրբքն անփոփոխելի՞ս ունէին[ժզ] զմիտսն։

Ուղղ. Ո՛չ։

Ապօղ. Ընդէ՞ր[ժէ]. ոչ || ի նոսա էր Բանն։ 62v.

Ուղղ. Այլ ի սուրբսն ոչ ըստ միաւորութեան էր, այլ ըստ Հոգւոյ շնորհի, զանազանաբար ի նոսա Նորա զօրանալով. իսկ աստ ամենայն լիութիւն[ժը] աստուածութեանն. և սուրբքն ընդունակ էին[ժթ], իսկ աստ Բանն ընկալաւ զմարդկութիւնն։

Ապօղ. Ասաց[ի] արեան և մարմնոյ, որպէս գրեցաւ։

ա) կարեր  բ) զասացեալն  գ) քանզի Յիսուս Քրիստոս  դ) Բանն Որդի  ե) կարիցես  զ) Բանին ի նմա  է) հոգևոր և բանական մարմին  ը) խնդրեն  թ) Եթէ միտս  ժ) չ.  ժա) ընդ աստուածութեանն  ժբ) այլև մի՛ ասեր, միտս մարդոյ ունէր  ժգ) ունէր միտս. այլ թէ արդեօք, ասա՛, զմարդկային միտսն ընկալաւ Բանն, զորօրինակ զմարդկային մարմինս։ Ապօղ.  ժդ) այս զգենլով  ժե) աստուածացեալք  ժզ) անփոփոխելի ունէին  ժէ) ընդէ՞ր և  ժը) լրութիւն  ժթ) Բանին էին  ի) Ասա

**Ուղղ.** Սովորութիւն է Գրոց զբովանդակ մարդն մարմին և արիւն կոչել, որպէս յորժամ ասէ՝ Ոչ վերագրեցին մարմնոյ և արեան[ա]. [1] Եւ՝ Ի վերջին աւուրս հեղից յՈգւոյ իմմէ[բ] ի վերայ ամենայն մարմնոյ[2], և դարձեալ՝ Ո՛չ մնասցէ հոգի իմ ի մարդկանդ յայդմիկ, յաղագս զոլ զդոսա մարմինս[գ], [3] և որ ինչ այսպիսիք:

**Ապօղ.** Զի՞նչ են, որ սուրբքն[դ] ընկալան, և Աստուած Բանն ո՛չ ընկալաւ. զի՞նչ է զանազանութիւնն:

**Ուղղ.** Զի սուրբքն յառաջագոյն գոյացեալք և[ե] յայնժամ ըն|կալան զԱստուած Բանն. իսկ աստ ո՛չ այսպէս, այլ որ էր նախ քան զյաւիտեանս Աստուածն Բան՝ կամեցեալ մարդանալ, սրբեաց զկոյսն և միացոյց ինքեան ի նմանէ[զ] մարմին. զի ո՛չ յառաջագոյն գոյացեալ և յայնժամ[է] միացեալ, այլ ի նմին գոյութենէ միացոյց[ը]:

**Ապօղ.** Երկո՞ւք ուրեմն իշխանականք էին[թ] ի մարմնին՝ Աստուած Բան և միտք մարդկայինք:

**Ուղղ.** Այլ ինքն Բանն առաջնորդէր մտացն:

**Ապօղ.** Զիա՞րդ կարէր:

**Ուղղ.** Զօրօրինակ սպիտակութիւն աււոյն՝[ժ] ներկեալ գունով ծիրանեաւ[ժա], ո՛չ երկու գոյն է, այլ մի, նոյնպէս միտք պայծառացեալք և աստուածացեալք[ժբ] մի է, և ո՛չ ևս[գ] երկուք առաջնորդականք: Քանզի ո՛չ այլ ինչ կամին[ժգ] միտքն և այլ ինչ[գ] Բանն, այլ որպէս երաժշտականն և գործին || ո՛չ երկու երաժշտականք[ժդ], (68r.) սոյնպէս Բան և միտքն մարդկայինք ո՛չ երկու իշխանականք[ժե]. քանզի փոխանակ գործւոյ մարդկային մտօքն վարէր Բանն[ժզ]:

**Ապօղ.** Այլ գործն երաժշտականին[ժէ] առանց մտաց է:

**Ուղղ.** Երաժշտականն մահկանացու, իսկ աստ Բանն անմահ էր, մտաւքն վարի գործեաւ[ժը]. և զօրօրինակ ի մեզ միտքն մարմնով վարին գործեաւ[ժթ], զի ի ձեռն մարմնոյն է կատարելութիւնն[ի], նոյնպէս և անդ Բանն մտօքն վարէր գործեաւ[իա]. զի ի ձեռն մտացն կատարելութիւն:

---

ա) ոչ վերագրեցի արեն և մարմնո ումեք. բ) չ. և ի վերջին—իմմէ գ) մարմին դ) Զի՞նչ է, սուրբքն ե) և ապա զ) չ. է) և ապա ը) ի նմին միութենէ գոյացել թ) իշխանք են ժ) ասրու ժա) ծիրանո ժբ) ո՛չ երկնագոյն, նոյնպէս և միտքն աստուածացեալք և պայծառացեալք ժգ) խօսին ժդ) որպէս երաժշտականքն, այլ մի. ժե) իշխանականք. այլ մի ժզ) միտք մարդկայինք, և նովիմբ վարէր Բանն ժէ) գործի երաժշտականին ժը) գործօք ժթ) մարմնովն վարէին գործով ի) կատարելութիւն իա) գործով

1) Գաղ. Ա, 16. 2) Յովէլ Բ, 28. Գործք Բ, 17. 3) Ծնն. Զ, 3.



**Ապօղ.** Եւ զի՞նչ ևս մարմնոյն պէտք[ա]:

**Ուղղ.** Յաղագս բազմաց. զի երևել կամեցաւ և զի երկաքանչիւրովք էր կորուսեալն՝ նմանեաւն[բ] զնմանն ապրեցուսցէ խաչիւ, և կամաւոր չարչարանսն մտօք վարեցաւ,|և կամաւոր չարչարանօքն հաճեցաւ[գ], որպէս յառաջն ասացի՝ գործեաւ, իսկ ի մարմնականսն մարմնով, և այսպէս խնդրելով և գտանելով միացոյց և ապրեցոյց զկորուսեալսն:

**Ապօղ.** Որո՞վ ասես[դ] մարմնականաւք:

**Ուղղ.** Խաչիւն, թաղմամբն, դնելովն[ե], շօշափմամբն, կերակրովն, ըմբելեաւն[զ], և որք այդոցիկ զհետ գան[է]:

**Ապօղ.** Աստուա՞ծ էր Բանն, որ ծնաւ ի Մարիամայ:

**Ուղղ.** Ծնեալն ի Մարիամայ էութիւն ի նորա[ը] բնութենէն ո՛չ էր Աստուած բնաբար[թ], այլ միաւորութեամբ տնօրէնութեանն:

**Ապօղ.** Եւ զիա՞րդ՝ Օրհնեալ պտուղ որովայնի քո[1], ասի:

**Ուղղ.** Վասն զի՝ որ ի բնութենէ Հօր էր Աստուած Բանն, ի բնութենէ Մարիամայ էառ զպատկեր ծառայի, և ձեւօք[ժ] գտեալ իբրև զմարդ՝ պտուղ որովայնի նորա գտաւ:

**Ապօղ.** || Յարեցա՞ւ ուրեմն Բանն ծնեալ ի մարմինն, որ ի Մարիամա, իբրև զկենդանի: 68v.

**Ուղղ.** Իբրև զկենդանի ո՛չ զրեցաւ, այլ իբրև Աստուած ի տաճարի կենդանւոյ[ժա]:

**Ապօղ.** Եւ յիւրաքանչիւր ումեք[ժբ] ի սրբոցն այսպէ՞ս բնակեցան, որպէս ի տաճարի[ժգ] կենդանւոյ:

**Ուղղ.** Ո՛չ այսպէս[ժդ]. քանզի իւրաքանչիւր ոք սրբոցն[ժե] այնքան եղեն տաճարք, որք[ժզ] կարացին առաքինութեամբ և ճգնութեամբ ուղղել, իսկ աստ ամենայն լիութիւն աստուածութեանն բնակէ. և սուրբքն զպատկեր Աստուծոյ առին՝[ժէ] առաքինութեամբ ուղղեալք, բայց աստ Բանն պատկեր ծառայի էառ:

---

ա) պետք էին բ) և նմանովն գ) խաչիւն և կամօք չարչարանաւքն հաճեցաւ և ի կամաօրք չարչարանս մտօքն վարեցաւ. դ) Որո՞վք ասէք ե) զալովն զ) շաւշափելովն, ըմբելովն է) երթան ը) էութիւնն ծնել է ի Մարիամա ի նոյն թ) բնաբար Աստուած ժ) ձեւով ժա) չ. Ապօղ. Յարեցաւ—կենդանւոյ. ժբ) ոք ժգ) այսպէ՞ս է, որպէս ի տաճարի ժդ) Ո՛չ այսպէս է ժե) ի սրբոցն ժզ) որքան ժէ) չ.

1) Ղուկ. Ա, 42

**Ասող.** Այն, որ ի հոգւոյ և ի մարմնոյ գոյացաւ տաճար՝ մարդ է[ա]։

**Ուղղ.** Թէ առանց Բանին էր՝[բ] այո. իսկ եթէ ոչ է, յորժամ առանց Բանին ի մարմնի՝ ոչ էր[գ] մարդ սոսկ, այլ Աստուած՝|միաւորութեամբ Բանին։

**Ասող.** Ծնեալն ի Մարիամայ տաճար էր միայն, որով ամենայնքն։

**Ուղղ.** Ծնեալն ի Մարիամայ տաճար[դ] ոչ թափուր և ունայն ծնաւ[ե], այլ հանդերձ բնակչաւն. յաղագս որոյ և ինքն է Յիսուս, որով ամենայնք։ Արդ[զ], ոչ զտաճարն կոչեմք[է] Յիսուս՝ առանց Բանին, և ոչ զԲանն առանց տաճարին. այլ յայնմհետէ Յիսուս Բան կոչեցաւ, յորմէ հետէ[ը] բժշկեաց զխորտակումն[թ] ժողովրդեանն իւրոյ. և յայնժամ բժշկեաց, յորժամ արժանի արար[ժ] զպատկեր ծառայի առնուլ։ Արդ, այս Բան, որ այժմ Յիսուս[ժա] յաղագս տնօրէնութեանն կոչեցաւ՝ նոյն է, որով ամենայնք։ Եւ որպէս հրացեալ[ժբ] երկաթ հուր և երկաթ իմանամք, սոյնպէս զՅիսուս՝ զԱստուած[ժգ] Բան մարդացեալ։

**Ասող.**|Տաճարն, որով ամենայնք, թէ՞ որ ի տաճարին։

64r. **Ուղղ.** Մի՛ բաժաներ զտաճարն ի բնակչաւ‖ դէն. զի թէ[ժդ] որ յարին ի Տէր մի հոգի է, բազում ևս առաւել[ժե] յորժամ Տէրն ասի[ժզ], և հաւատարիմ է միաւորեալ պատկեր ծառայի՝ միևնոյն Աստուած և մարդ։

**Ասող.** Ո՞չ ուրեմն է մարդ ծնեալն Մարիամայ[ժէ]։

**Ուղղ.** Միայն մարդ՝ ոչ։

**Ասող.** Այլ և զի՞նչ։

**Ուղղ.** Եւ Աստուած. քանզի ոչ է միայն մարմին[ժը] Իսահակ ծնեալ[ժթ] յԱբրահամէ, և ոչ այլ ոք ի մարդկանէ, այլ մարդ[ի] ի մարդոյ ծնեալ. իւրաքանչիւր ոք ի մէնջ ոչ ծնեալ ոգւոյն բանականի ի յոգւոյն բանականէ, և սակայն մարդ յանձնէ բանականէ և ի մարմնոյ գոյանայ[իա]։ Սոյնպէս և Աստուած ասեմ զ՝ ի Մարիամայ

ա) էր  բ) իմանի  գ) իմանի ոչ է  դ) չ. էր այնմ— տաճար  ե) ծնաւ և ունայն  զ) Բարսեղ. Արդ  է՝ կոչեմ  ը) յորմէ հետէ  թ) զբեկումն  ժ) արժանաւորեաց  ժա) Աստուծոյ  ժբ) Որպէս զհրացեալն  ժգ) Սոյնպէս և զՅիսուս Աստուած  ժդ) քանզի եթէ  ժե) բազում առաւել  ժզ) ասի լեալ մարդ  ժէ) ի Մարիամա  ժը) որպէս ոչ է մարմին միայն  ժթ) Սահակ ծնեալն  ի) այլև հոգի և մարդ  իա) իւրաքանչիւր ոք ի մէնջ է բանական կենդանի, բայց ոչ ծնեալ հոգւոյն բանականի։



ծնեալ հոգւոյ և մարմնի[ա] միացեալն. վասն զի, զօրօրինակ միացեալ ոգի ի մարմնի[բ] ծնանիմք[գ] ի ձեռն կնոջ, սոյնպէս միացեալ Աստուած Բանն ոգւոյ և մարմնոյ՝ ծնաւ Աստուած և մարդ ի ձեռն կնոջ։

**Ասող.** Եւ սակայն՝ ի կնոջէ գրեցաւ։

**Ուղղ.**|Ի կնոջէ ըստ մարմնոյ, ի ձեռն կնոջ ըստ հոգւոյ։

**Ասող.** Իւր որդի[դ] Աստուծոյ ուրեմն[ե] յաղագս մերոյ է[զ] Բա՞նն, եթէ մա՞րդն։

**Ուղղ.** Իւր Որդին Աստուծոյ նոյն ինքն է, որ խոնարհեցոյց զինքն, զպատկեր ծառայի առնլով, և նովիմբ ծառայական պատկերաւն զտաւ[է]։

**Ասող.** Ո՞չ ծնեալն ուրեմն ի Մարիամայ Յիսուս, այլ ծնեալն ի ձեռն նորա Բանն ինքն զինքն խոնարհեցոյց մինչև ի մահ։

**Ուղղ.** Մի՛ բաժաներ զընտանեցեալ միաւորութիւնն. քանզի ասացի, թէ նոյն ինքն է իւր Որդին[ը] և ի Մարիամայ ըստ մարմնոյ, և ի ձեռն նորա ըստ հոգւոյ։

**Ասող.** Որ ի ձեռն նորա՞ արդեւք Բանն խոնարհեցոյց զինքն մինչև ի մահ։

**Ուղղ.** Որ ի ձեռն Մարիամայ Աստուած Բանն՝ ոչ կարելով բնութեամբ աստուածութեանն խոնարհիլ մինչև ի մահ, էառ ինքեան ի Մարիամայ անձնաւոր մարմին՝ զկարելին խոնարհել ‖ մինչև ի մահ, որ է պատկեր ծառայի։ 64v.

**Ասող.** Աստուա՞ծ ուրեմն մեռաւ յաղագս[թ] մեր։

**Ուղղ.** Աստուած՝ միացուցանելով ինքեան հոգևոր մարմին, զկարելին մեռանել. վասն զի ոչ բնութեամբ աստուածութեանն յաղագս[ժ] մեր մեռաւ, այլ միաւորութեամբ տնօրէնութեանն։

**Ասող.** Թէ հոգի բանական ունէր մարմինն՝ ոչ Աստուած, այլ մարդն մեռաւ։

**Ուղղ.** Որ ի մարմնոյ բաժանումն[ժա] մահ ասի, թէ ոչ։

**Ասող.** Այո։

**Ուղղ.** Զօրօրինակ ուրեմն[ժբ] ոչ կարէ ասել Աս-

ա) ծնեալն՝ ի հոգւոյ և ի մարմնոյ  բ) ոգւոյ ի մարմին  գ) ծնանի մարդ  դ) Որդին  ե) զոր եառ  զ) մեր, ո՞ է.  է) և նորին ծառայական պատկերաւն աւ  ը) Որդին Աստուծոյ  թ) վասն  ժ) վասն  ժա) մարմնոյն բաժանումն  ժբ) Արդ, զօրօրինակ ուրեմն

տուած ի գերեզմանին[ա] և ի թաղմանն լինել, եթե ոչ ունէր զեղեալ մարմինն, սոյնպէս ոչ ասացաւ՝ բաժանեցաւ[բ] ի մարմնոյն, զի[գ] ամենայն ուրեք էր և զամենայն բովանդակէր, եթե ոչ ունէր զբաժանելի հոգին, ընդ որում[դ] և որոց ի դժոխս էին աւետարանեաց։ Վասն զի յաղագս Նորա և գնալ ի մարմնոյ և ի դժոխս լինել.|և այս է յաղագս մեր[ե] Աստուած ի գերեզմանի եղեալ ի ձեռն մարմնոյ, և ի դժոխս լինել[զ] ի ձեռն հոգւոյն։

Ապօղ. Ես հաւատացի, թե Աստուած Բանն իւրով մերձաւորութեամբն հոգիացոյց զմարմինն և պէտս ինչ ոչ ունէր հոգւոյն։

Ուղղ. Որպէս ի խաչելն և ի թաղելն և յառնելն պէտս ունէր մարմնոյ, զի մի կարծիօք խաչն լիցի[է], այլ ճշմարտութեամբ, նոյնպէս և ի մեռանելն և ի դժոխս լինելն պէտս ունէր հոգւոյ. քանզի յաղագս մեր ասացաւ տրտմել և հոգալ մինչև ի մահ. յաղագս մարմնոյ զգալոյ[ը], եթե Բանին Աստուծոյ։

Ապօղ. Եւ մեք ասեմք, եթե զգայութիւն ունէր մարմինն, որով զգայր զչարչարանացն։

Ուղղ. Եթե մարմին զգայութեան ունէր[թ], հոգևոր է.
**65r.** քանզի առանց հոգւոյն անզգայ է. ‖ որպէս որ[ժ] խոնարհեցոյց զինքն մինչև ի մահ և մեռաւ՝ Աստուած է, ոչ բնութեամբ Աստուածութեանն մեռանելով, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. վասն զի զմարդկութեան զչարչարանսն իւր համարեցաւ չարչարանս[ժա]։ Եւ զորօրինակ էր անկարելի[ժբ] բևեռել զնա ի խաչին և պատել պատառակալաւն և դնել ի գերեզմանի՝ առանց մարմնոյն, նոյնպէս անկարելի էր Նմա տրտմել առանց հոգւոյն[ժգ] բանականի. քանզի անբանականն ոչ տրտմի՝[ժդ] յառաջագոյն անգիտանալով զմահն, այլ իբրև զարջառ ի սպանումն ածաւ[ժե], և կամ իբրև զայլ ինչ յանբանիցն։

ա) ասել ի գերեզմանին   բ) եթե բաժանեցաւ   գ) չ·
դ) բովանդակեր և ունէր զանբաժանելի հոգին, ըստ որում   ե) և որոց ի դժոխս լինել· և այս յաղագս մեր   զ) չ·   է) լինիցի
ը) մարմնոյն անոգալ   թ) Եւ մարմին զգայութիւն ունելով   ժ) զի որ   ժա) վասն զի մարդկութիւնն չարչարանս կրեց   ժբ) անկարելի էր   ժգ) Նորա տրտմելն և հոգալն առանց հոգւո   ժդ) զի անբան անձն ոչ տրտմի·   ժե) ածել լինի



Ապօղ. Ո՞չ ուրեմն եղև մարդ Որդին Աստուծոյ, այլ ի մարդումն, և անկարելի որ ի մարդումն՝ զնա զօլ Աստուած[ա]։

Ուղղ. Ասե՞ս զԲանն լեալ մարմին, եթե ո՞չ[բ]։

Ապօղ. Բանն մարմին եղև՝[1] գրեալ է։

Ուղղ.|Փոփոխեա՞լ ի մարմին[գ], թե ի մարմնի լինելով։

Ապօղ. Ի մարմնի լեալ[դ]։

Ուղղ. Թէ անկարելի է Նմա մարդ լինել, լինելով ի մարմնի[ե], իսկ եթե ի մարմնի լեալ՝[զ] մարմին ասի լինել, ոչ փոփոխելով[է] ի մարմին, և մարդ լեալ՝ մարդ ասի եղեալ[ը], ոչ փոփոխելով ի մարդ[թ]։

Ապօղ. Ո՞վ է, որ ասէրն[ժ]. Աստուած, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս[2]. Աստուած Բա՞նն, եթե մարդ[ժա]։

Ուղղ. Ես զԹաղումն մարմնոյն, և զզեստն Նորա[ժբ] ասեմ Բանին՝ ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնօրէնութեանն։ Սոյնպէս[ժգ] զձայնականս՝[ժդ] զտրտմութիւնն, զզոփալն և որքան ասի յաղագս[ժե] Նորա յաւետարանսն՝ Աստուծոյ Բանին ասեմ, ոչ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնօրէնութեանն. քանզի նոյն ինքն մարմինն Նորա ոչ բնութեամբ ‖ Աստուածութեանն էր մարմին, այլ միաւորութեամբ **65v.**
տնօրէնութեանն։ Արդ, զորօրինակ զմարմինն իւր առնէ՝ ասելովն. Եթե ոչ կերիցէք զմարմին իմ[3]. նոյնպէս և զհոգին[ժզ] իւր առնէ՝ ասելով. Զհոգի իմ[ժէ] ոչ ոք բառնայ յինէն[4]։ Նոյնպէս զչարչարանսն երկաքանչիւրոցն ընտանեցուցանէ. քանզի որպէս Նորա մարմինն տնօրինաբար, այսպէս[ժը] Նորա Թաղումն մարմնոյն[ժթ], և զորօրինակ Նորա անձն տնօրինաբար՝ Նորա[ի] ձայն անձինն տնօրինաբար, զի և Թաղումն Նորա[իա] մարմնոյն՝ Բանին Թաղումն տնօրինաբար, և ձայն անձին Նորա Բանին ձայն տնօրինաբար. քանզի ինքն էր Բանն՝ ձայնելով զանձինն յատուկ[իբ]։

ա) ի մարդում լեալ՝ զօլ զնա Աստուած   բ) և ոչ   գ) փոփոխելի մարմին   դ) լինելով   ե) ի մարմին   զ) մարմին լինել
է) փոփոխել   ը) լինել   թ) ոչ փոփոխել ի մարմին և մարդ լինել· մարդ ասի եղել, ոչ փոփոխելով ի մարդ։   ժ) ո՞վ էր, որ ասեր   ժա) մարդն   ժբ) մարմնոյն Նորա   ժգ) աստուածութեանն· նոյնպէս և զայնս   ժդ) զանձնականս   ժե) վասն
ժզ) զհոգին   ժէ) Եւ զհոգի իմ   ժը) նոյնպէս և   ժթ) մարմնոյն անօրինաբար   ի) Նոյնպէս և Նորա   իա) չ·   իբ) յատկութիւն

1) Յովհ· Ա, 14   2) Մատթ· Իէ, 46· Մարկ· ԺԵ, 34·
3) Յովհ· Զ, 51·   4) Յովհ· Ժ, 18·

Ապօղ. Մեք ասեմք, թե մարդասէրն Աստուծոյ Բանն մարդ լինել արժանի արար՝ մարմին առնլով ի սրբոյ|կուսէն Մարիամայ, և էր Աստուած մարմնացեալ իբրև զմարդ գտեալ։

Ուղղ. Մի՛ ասեր մարդասէր Աստուծոյ Բանն, այլ մանաւանդ սաստ մարմնասէր[ա]. քանզի եթե ոչ արժանի արար միանալ ի մարդն՝ զիա՞րդ մարդասէր։

Ապօղ. Սիրելով զմարդն՝ ի մարդկային մարմնի միացաւ[բ], զի իցէ նոյն ինքն Աստուած և մարդ։

Ուղղ. Ո՛չ ևս մարդկային մարմին է, որ ոչ է[գ] անձնաւոր բանական[դ]. քանզի զիա՞րդ ոչ անձնացեալ անձամբն բանականաւ[ե] մարմին մարդոյ կարասցէ[զ] գոլ. քանզի մարմինն մարմին է և անձն անձն է, և յայնժամ մարդ ասի, յորժամ բանականաւ[է] անձամբ մարմնանայ, և մարմինն անձնանայ։ Արդ[ը], ոչ ևս մարդկային մարմին, որ ոչ հաւասարեաց[թ] հոգւոյ բանականի։

66r. Ապօղ. Երկրային մարմինք յորժամ ինչ առընկալ‖ցին՝ անձն բանական մարդ[ժ] լինի. եթե անբան անձն առընկալցի, այլ կենդանի մարդոց[ժա] լինի. և յայսմ Նիւթոյ Տէրն ինքեան ստեղծանելով մարմին[ժբ] և զնոյն կենդանացեալ[ժգ] իւրով բնութեամբն, որպէս բնաւորեցաւ՝ անձն ունել կատարեալ[ժդ], և նմա զիւր զաւրութիւնն տալով՝ առնէ կենդանի Աստուած, Աստուած ըստ տեսակի[ժե] և մարդ ըստ նիւթոյ։

Ուղղ. Ըստ տեսակին ոչ իմանամ. կամիս ասել ըստ աստուածութեանն։

Ապօղ. Մարմին կերպարանեալ աստուածայնովքն՝ պայծառացեալ զօրութեամբք։

Ուղղ. ԶԱստուած ուրեմն զզօրութիւնս տեսանել ասես[ժզ],

Ապօղ. Այո՛։

Ուղղ. Զի յորժամ ինչ յերկրային մարմնոյն առցէ, անձն բանական մարդ լինի, յայնժամ մարդկային մարմին լինի և լսի. բայց ոչ առնլով զանձն բանական՝|ոչ մարդկային մարմին է, և որ ոչն է մարդկային մարմին[ա], զիա՞րդ ասես ըստ[բ] նիւթոյն. նիւթոյս յայնժամ մարդկային եղելոյ, յորժամ անձն բանական առընկալցի։ Ես և ընթերցայ[գ] զվարդապետին ձերոյ զԱպողինարին խոստովանութիւն[դ], յորում համարնութիւն[ե] ասէ զմարմինն Տեառն Մարիամայ[զ], և Մարիամ[է] մեզ. ապա ուրեմն համարնութիւն տէրունական[ը] մարմինն, վասն զի և մարդկային[թ]։

Ապօղ. Զիա՞րդ[ժ] ասես տէրունական մարմին, զոր երբեք մարդոյ կազմեցես։

Ուղղ. ասե. Եւ ես[ժա] զմարմինն տէրունական ասեմ և զանձն տէրունական, և զմիտս տէրունականս և զաւրինն տէրունական, և զթագումն տէրունական, և զմարդըն[ժբ] բոլորովին տէրունական՝ միաւորութեամբ ‖ Աստուածն Բանի, այսպէս, որպէս մի Տէր լսես[ժգ] զնոյն ինքն զԱստուածն և մարդն. երբեմն[ժդ] զնոյն ինքն բովանդակ Աստուած և Տէր լսել, երբեմն զնոյն բովանդակ մարդ[ժե]. քանզի ինքն յաղագս իւր ասէ. Զի՞ խնդրէք զիս սպանանել՝ զմարդ[ժզ], որ զճշմարտութիւնն ձեզ խօսեցայ[1]։ Եւ Պաւղոս մարդ՝ Յիսուս[ժէ] Քրիստոս երէկ և այսաւր, նոյն[ժը] և յաւիտեանս[2]։ Եւ զնոյն զայս մարդ շօշափելով Թովմաս ասէ[ժթ]. Տէր իմ և Աստուած իմ[3]. և[ի] նմանաբար և Պաւղոս ասէ. Յորոց և[ի] հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենայնի[իա] Աստուած, օրհնեալ յաւիտեանս[իբ]։[4] Արդ, Աստուած և Բանն[իգ] յաղագս հաճոյութեան[իդ] միաւորութեանն. քան[իե] որ յարին ի Տէր մի հոգի է[իզ]. բազում առաւել յորժամ Տէր ասի 66v.

ա) Մի՛ ասեր Աստուծոյ Բանին մարդ, այլ մանաւանդ մարդասէր. բ) մարմին միացեալ գ) մարմին, որ ոչն է դ) անձն անձնաւորական ե) ոչ անձնացեալն բանականօն զ) մարդկային կարաց է) բանական ը) Մարմնանա արդ թ) հաւասարակաց ժ) մարդն ժա) ի մարդս ժբ) մարմին ստեղծանելով ժգ) կենդանացուցանել ժդ) ունելով հաստատ կատարել ժե) առնէր կենդանի Աստուած ըստ տեսակին ժզ) Զաստուածային ուրեմն զզօրութիւնն տեսականն ասես.



ա) առցէ անձնական, ոչ մարդկային մարմին է. եւ որ ոչ մարդկային մարմին է բ) վասն գ) Ես ընթերցա և դ) զԱպօղինարի զխոստովանութիւնն. ե) համարնական զ) Տեառն մերո ի Մարիամա է) զՄարիամ ը) մեզ տէրունական թ) վասն զի մարդկային ժ) ընդէ՞ր ժա) Ես և ժբ) զաւրինն տէրունական և զմարդն ժգ) որպէս զի մի Տէր լսեմ ժդ) Աստուածն. և Տէր լսեմ և երբեմն ժե) զնոյն ինքն բաւանդակ մարդ ժզ) մարդ ժէ) զՅիսուս ժը) նոյն ինքն ժթ) զայն մարդ Թովմաս շաւշափել ասէր ի) չ. իա) ամենեցուն իբ) յաւիտեանս. ամէն. իգ) և մարդ Բանն իդ) հաճութեան իե) քանզի թե իզ) են

1) Յովհ. Ը, 40. Համա. Է, 20. 2) Եբր. ԺԳ, 8. 3) Յովհ. Ի, 28. 4) Հռով. Թ, 5.

լեալ մարդ՝ ոչ կորուսանելով զգոլն Աստուած, է նոյն ինքն Աստուած և մարդ. Աստուած յաղագս բնութեանն, իսկ մարդ յաղագս հաճոյութեան[ա] ընդունելով զմարդկութիւնն, որում փառք յաւիտեանս։

### 5 |Երանելւոյն Սեւերիանոսի Գաբաղայ եպիսկոպոսի, ի բանէն՝ Ոչխարքն ձայն իմ լսեն*։

Հարցին աշակերտքն և ասեն. Տէ՛ր, յո՞ ամբառնայցեն. ասէ ցնոսա. Ուր մարմինն իցէ[1]. և բարուք[բ] ասաց մարմինն[գ], քանզի մարմնովն գալոց է[դ]. Թեպէտ և ծածկեցաւ մարմինն աստուածութեամբն և ներկեաւ[ե] անմահ արմատովն, և է ամենևին[զ] անմահութիւն, չկորոյս զնկարագիրն, այլ կայ միայ նկարագիրն[է] մարմնոյն ներկեալ և ընկղմեալ ի կենացն։ Եւ օրինակ ինչ ի նմին[ը] ի մէջ բերցուք. Թեպէտ և մթին և ընդ աղօտ իցէ, սակայն և ի փոքուն առնու ոք զօնեայ[թ] սակաւ ինչ զնշմարանս մեծին։ Ա՛ռ երկաթ և մխեա ի բովս հրոյ և տե՛ս՝ որպիսի՛ ինչ էր, մինչև ի հուրն[ժ] մխեալ էր, ցուրտ առ
67r. շաւ | շափելն[ժա], և յետ ի հուրն մտանելոյ՝ լուսաւոր տեսլեամբ, ջերմն զննելով. չկորոյս[ժբ] զլինելն երկաթ, այլ զի առաւելութիւն իւր[ժգ] բնութիւնն ընկալաւ, թեպէտ և պայծառացաւ, չվրիպեաց յիւրոց կերպարանացն. զինչ կերպարան և ի ներքս մխեցես, նոյնն[ժդ] երևի, եթէ բոլորակ, եթէ երեքկուսի, եթէ չորեքկուսի, և եթէ զիարդ և իցէ՝ զկերպարանսն[ժե] չփոխէ, բայց գոյնն զհրոյ գոյնն[ժզ] առնու։ Նոյնպէս սուրբ և արժանի[ժէ] երկրպագութեան տէրունական մարմինն ներկաւ անմահ արմատաւն՝ աստուածութեամբն[ժը], և ընկղմեցաւ ի կենացն, և խառնեալ[ժթ] ունի զաստուածութիւնն իբրև զերկաթն՝ ի ներքոյ և յարտաքոյ[ի]. բայց կայ և միայ անեղծ[իա] նկարագիրն՝ ի փառս հաւատացելոց և յամօթ արհամարհողաց[իբ]։

* Տես. ձեռ. № 510, p. 283 v. Համեմատութիւնն ըստ տպագրին, եր. 116.

ա) հաճութեամբ  բ) իմ մարմին իցէ. փոխանակ ասելոյ, թէ ուր իմ գալուստն իցէ։ Եւ բարիոք  գ) թէ մարմինն  դ) յայտնելոց է  ե) ներկաւ  զ) ամենևին  է) նկարագիր  ը) ինչ նմին  թ) զանէ  ժ) ի հուր  ժա) մթար երեւոյ, ցուրտ առ ի շօշափել  ժբ) և չկորոյս  ժգ) քան զիւր  ժդ) նոյն և  ժե) զկերպարանս  ժզ) զհրոյն գոյն  ժէ) Նոյնպէս և սուրբ արժանի  ժը) արմատով աստուածպաշտութեանն  ժթ) եւ զգեցեալ  ի) զաստուածութիւնն, ոչ վայրապար արտաքոյ  իա) յանեղծ  իբ) արհամարհողացն

1) Ղուկ. ժէ, 36—37.



## |ԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ.

**Յաղագս միոյ գոլ զՏէր մեր եւ զՓրկիչն Յիսուս՝ հանդերձ իւրով մարմնովն, եւ նմա առբաշխել զամենայն աստուածավայելուչս եւ զմարդկայինս, եւ զի յերկուս բնութիւնս բաժանեն զնա ամպարիշտք.**

### Սրբոյն Յերոթէոսի փիլիսոփայի՝ Առ յԱստուածաբանականացն ստիքիոնացն, որ էր ի հեթանոսականին եղեալ ուսուցիչ Դիոնիսիոսի Արիսպագացւոյ. *

Որ ամենեցուն պատճառն և վերայլիակատար Յիսուսի աստուածութիւնն, որ զմասնաւորսն բոլորին համաձայն միացուցեալ՝ և ոչ մասն և ոչ բոլոր ելով, և մասն և բոլոր, որպէս ամենայն, ‖ և զմասն և զբոլորն՝ յինքեան 67v. ի միասին առեալ, և առաւելապէս ունելով և նախաբար ունելով։ Կատարեալ ապա է յանկատարս, որպէս կատարելապետ[ա], և անկատար ի կատարեալս, որպէս առաւելակատար և նախակատար. տեսակ տեսակարար յանտեսակս[բ], որպէս տեսակապետ. անտեսակ ի տեսակս, որպէս վերակատար[գ]։ Գոյութիւն բոլորից գոյացելոց՝ անապականապէս եղեալ և վերագոյ ամենայն գոյութեանց, և համարձեալ զբոլոր իշխանութիւնս և զկարգապետութիւնս որոշելով, և բոլոր պետութեանց և կարգաց վերանստեալ, և չափապէս գոյացելոցն, և յաւիտեան և վերայաւիտեան և նախ քան զյաւիտեանս։ Կատարեալ ի կատարեալսն և առաւել ի կատարեալսն. անճառելի և անբարբառ, գերամիտ, գերակայ, գերագոյական՝ գերաբնապէս ունելով|զգերաբնութիւնն, գերագոյաբար զգերագոյութիւնն։ Վասն զի, մինչ ըստ բնութեանն և ճշմարտապէս վասն մարդասի-

* Համե. ձեռ. 944, p. 546 r. Սրբոյն Յեաթէոսի՝ Յաղագս աստուածաբանականացն տարրութեանց։ Համեմատել ենք ձեռ. 70, p. 88 v. որ ասանց «լուծմանց» է, թեպէտ նոյն՝ մեր ձեռագրերի ասերեր, թարգմանութեամբ։

ա) կատարեալպետ  բ) տեսակարար յանտեսակսն.  գ) գերակատար։

րութեան եկն և գոյացաւ, և այր, որ Աստուածն անուանեցաւ, քաւեալ ապա եղիցի ի մէնջ՝ առաւելեալն մտաց և բանի աւրհնելով[ա]։ Թեպէտ և այսոքիւք ունի զգերաբնութիւն և զգերագոյակ[բ], ոչ միայն զի անայլայլաբար և անշփոթապէս մեզ հաղորդեցաւ, ոչինչ պակասեալ ի լիութենէն, որ առ մեզ խոնարհեցաւն, այլ զի և ըստ ամենեցուն նոր և նորագոյն մերում բնութեանս գերաբնութեամբ գոյր, որ ըստ բնութեանն գերաբնութիւն զբոլորս մեր առ ի մէնջ, ի վեր քան զմեզ ունելով։

Դիոնէսիոսի Արիսպագացւոյ, Աթենացւոյ՝ առ Գայիոս սարկաւագ*։

66r. Որպէս ասէ Յիսուս[գ], որ ամենե ‖ ցունն առաւելն է՝ ամենայն մարդկան կենդանութեամբ կարգեալ. քանզի ոչ որպէս պատճառ մարդկան, որ ասի մարդ, այլ որպէս նա ինքն է ըստ գոյութեան՝ բոլորովին ճշմարտապէս մարդ եւլով։ Բայց մեք զՅիսուս ոչ մարդոյ նմանապէս ձևացուցանեմք, վասն ոչ մարդն միայն և ոչ գերագոյակ, կամ մարդ լոկ, այլ մարդ ճշմարտապէս, որ և առաւելապէս մարդասէր՝ ի վեր քան զմարդիկ և ըստ մարդկան ի մարդկայինն գոյացութեանց գերագոյական գոյացեալ։ Եւ դոյ ոչինչ պարտ գոյութեանն[դ], որ Ամենակալին է, և առաւել վերագոյակ. վասն որոյ և այսորիկ աղագաւ գոյութիւնն ասի, կենդանութիւն ճշմարտապէս գոլով՝ ի վեր քան զգոյութիւն գոյացաւ և ի վեր քան զմարդ ներգործէր զմարդոյն։ Եւ զեկուցանէ Կոյսն՝ վերաբնաբար ծնանելով, և ջուր անկայուն նիւթական և երկրա|կոխային ոտից անսալով ծանրութեանն, և ոչ ճռճելով, այլ վերաբուն զօրութեամբ յանհեղլի հաստատեալ։ Զի՞նչ թերևս զայլն՝ յոյժ բազում գոլով, ասիցէ ոք, ի ձեռն որոց և աստուածաբար տեսանելով[ե] ի վեր քան զմիտս ծանիցէ, և զմարդասիրութեամբն Յիսուսի հակառակ զօրութեանցն վերին իշխանութեանն ունելով[զ]։ Եւ զի համառօտաբար

* Հմմտ. ձեռ. 944, p. 570 v. Համեմատել ենք ձեռ. 70, p. 140 (Զորբորդ առ նոյն՝ Գայիոս)

ա) Եւ այր եղև գերագոյնն Աստուած, և հաճեցաւ յառ ի մէնջ գերագոյն քան զմիտս և զբան աւրհնաբանութիւնս։ բ) զգերաբնութեանն գերագոյութիւն գ) Զի՞արդ տեսս զՅիսուս դ) և ոչինչ տրուպ ի գերագոյն էութենէն ե) ի ձեռս որոց աստուածային ոք տեսանելով զ) և զօրս ի վերայ մարդասիրութեանն Յիսուսի են ճառեալ՝ զօրութիւն գերունակունի անճառութեանն ունելով։



առասցուք՝ ոչ մարդ, այլ որպէս[ա] ոչ մարդ*, այլ որպէս առ[բ] ի մարդկանէ՝ մարդկան գերազանց և ի վեր քան զմարդ, և ճշմարտապէս մարդ եղեալ, և այնուհետև ոչ ըստ Աստուծոյ զաստուածայինսն ներգործեալ, և ոչ զմարդկայինսն ըստ մարդոյ, այլ այրացեալ[գ] Աստուծոյ նոր իմն և աստուածայրական ներգործութեամբ ըստ[դ] մեզ քաղաքավարեալ։

Երանելւոյն Երանոսի՝ Հետեւողին առաքելոց, եպիսկոպոսի Ղուգդոնի Գալլիեացւոց**։

‖ Աւրէնն և մարգարէք և աւետարանք քարոզեցին 68r.
զՔրիստոս՝ զծնեալն ի Կուսէն և զչարչարեալն ի խաչին և զյարուցեալն ի մեռելոց և յերկինս վերացեալ և փառաւորեալ[ե], և թագաւոր յաւիտեանս. և զի սա է կատարեալ միտք Աստուծոյն Բան, որ նախ վաղորդայնազգեցին ծնիցեալն[զ] [1], շինակից է[է] ամենայնի, ստեղծիչն մարդոյ, յամենայնի ամենայն եղեալն՝ ի հայրապետսն հայրապետ, յօրէնսն օրէն, ի քահանայսն[ը] քահանայապետ, ի թագաւորսն իշխան առաջնորդական, ի մարգարէսն մարգարէ, ի հրեշտակսն հրեշտակ, ի մարդիկ[թ] մարդ, ի Հաւր Որդի, յԱստուածութիւն Աստուած, յաւետարանսն[ժ] արքայ։ Սա իսկ է սա, որ նաւուղեաց[ժա], զԱբրայամ առաջնորդեաց, ընդ Սահակայ կապեցաւ, ընդ[ժբ] Յակովբայ ուտարակենցաղեաց[ժգ], ընդ Յով|սեփայ վաճառեցաւ, ընդ[ժբ] Մովսեսի զաւրավարեաց, ժողովրդեանն աւրինադրեաց, ընդ Յեսուաւ[ժդ] վիճակաստւեաց. ի Դաւթի երգիչ[ժե], ի մարգարէսն զիւր կիրսն քարոզէր[ժզ], ի Կուսի մարմնացեալն, ի Բեթղեհէմ ծնեալ[ժէ]. ի հովուացն տեսեալ, ի հր-

* Հմմտ. ձեռ. № 1876, p. 208, ուր այստեղից մինչև վերջը վկայութիւն է բերած նոյն թարգմանութեամբ, որի վերայ և եղել է շարունակութեան համեմատութիւնը։

** Հմմտ. Տիմոթէոս, p. 256.

ա) Ո՛չ մարդ էր Քրիստոս և ոչ որպէս բ) չ. գ) այրացելոյ դ) ընդ ե) ծնիցեալ ի Կուսէ և խաչակրելի ի փայտին և տեսանելի մեռելոց և յերկինս վերելեալ և ի Հաւրէ փառաւորեալ զ) որ նախ վաղորդայնազգեցկին ծնիցեալ է) չ. ը) ի քահանայս, ի թագաւորս եւն. թ) ի մարդկան ժ) յաւիտեանս ժա) որ զնոյ նաւուղղեաց ժբ) եւ ընդ ժգ) յաւտարակենցաղեաց ժդ) եւ ընդ Յեսովայ Նաւեայ ժե) երգիչն և ժզ) քարոզեաց ժէ) և ի Բեթղեհեմ ծնիցեալն և ի մսուր խանձարրապատեալն եւ

¹) Հմմտ. Սաղմ. ՃԹ, 3.

րեշտակացն փառաւորեալ, ի մոգուցն երկրպագեալ, Յով-հաննէ ընկալեալ, ի Յորդանան մկրտեալ[ա], յանապատի փորձեալ[բ] և Տէր գտեալ, զառաքեալսն հաւաքեալ, զարքայութիւնն քարոզեալ, զկաղս բժշկեալ. զբորոտս սրբելով[գ], զկոյրս լուսաւորելով[դ], զմեռեալս յարուցանելով. ի տաճարին երեւեալ[ե], ի ժողովրդենէ անհաւատացեալ[զ], ի Հրեից մատնեալ և ի քահանայապետիցն ըմբռնեալ[է], առաջի Հերովդի յառաջ ածեալ[ը], առաջի Պիղատոսի դատեցեալ[թ], ի մարմնի || բեւեռեալ[ժ] և ի փայտի կախեցեալ[ժա].
69r. ի յերկրի թաղեալ[ժբ], ի մեռելոց յարուցեալ, առաքելոցն երեւեալ[ժգ], ի յերկինս համբարձեալ, յաջմէ[ժդ] Հօր նստեալ[ժե] և ի նմանէ փառաւորեալ. Որ է յարութիւն մեռելոց[ժզ], փրկութիւն կորուսելոց[ժէ], լուսարան խաւարելոց և փրկարան բացածնելոց[ժը]. առաջնորդ մոլորելոց և ապաւէն վշտացելոց, հովիւ ապրեցելոց և փեսայ Եկեղեցւոյ, երեսանակալ քերովբէից[ժթ] և զաւրավար հրեշտակաց. Աստուած յԱստուծոյ, Որդի ի Հօրէ, Յիսուս Քրիստոս, արքայ է[ի] յաւիտեանս. ամէն։

## Սրբոյն Փիլիկեայ եպիսկոպոսապետին Հռովմայ եւ վկայի՝ ի Թղթոյն, որ առ Մաքսիմիոս եպիսկոպոս եւ առ ուխտ եկեղեցւոյն Աղեքսանդրի*։

Յաղագս[իա] մարմնաւորութեան Բանին և հաւատոյ[իբ], |Հաւատամք ի Տէր[իգ] մեր Յիսուս Քրիստոս՝ ի Կուսէն Մարիամայ ծնեալ, եթէ[իդ] ինքն է յԱստուծոյ[իե] մշտնջենաւոր Որդի[իզ] և Բան, և ոչ մարդ յԱստուծոյ առեալ, զի իցէ այլ քան զնա[իէ]. քանզի ոչ մարդ առընկալաւ Աստուծոյն Որդի, զի իցէ այլ քան զինքն, այլ Աստուած ելով կատարեալ՝ եղև համանգամայն[ա] և մարդ կատարեալ, մարմնացաւ ի Կուսէն[բ]։ Հաւատամք* ի Քրիստոս Յիսուս՝ Աստուած խոստովանելով զնա աստուածական[գ] բնութեամբն, ոչ ընդունելութեամբ աստուածութեանն[դ]. քանզի ինքն է, որ ընկալեալ լինի[ե], աստուածարար փրչեալ[զ] յաշակերտսն զՍուրբ Հոգին. ինքնն[է], որ մեռաւ մարմնով վասն մերոյ փրկութեան[1] և ապրեցուցանելով[ը] ի մեղաց զհաւատացեալս ի նա։ Քանզի ոչ մարդ ըստ մեզ Տէրն առաւ[թ] յԱստուծոյ, այլ Աստուած ճշմարիտ զմարդիկ առնելով, որպէս և գրեալ է[ժ]. Առնելով զ..եզ Տէր[ժա ?]. իսկ Տէր է ի Մարիամայ ծնեալն՝[ժբ] ըստ Պաւղոսի,[2] ինքն ելով Աստուծոյն Բան[ժգ]։ Բայց նզովեմք, որք տխտակիր[ժդ] զաստուածութիւնն ասեն || և որք[ժե] մարդ զխաչեցեալն զՔրիստոս ասեն[ժզ], և ոչ բոլորովին էութեամբ[ժէ] Աստուած։



69v.

## Պետրոսի եպիսկոպոսին Աղէքսանդրի**։

Վասն որոյ եղեալն[ժը], ասէ, սուրբ կոչեսցի և[ժթ] Որդի Աստուծոյ[4]. իբր[ի] զի՝ ծնեալն ի մարմնոյ մարմին է։ Քանզի[իա] Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ՝ զմի և զնոյն ելով[իբ], այլ ոչ այլ և այլ, քաւ լիցի[իգ]։ Քանզի ճշմարտապէս ասեմք եթէ՝ Տէր Յիսուս[5], հաւատալով առաւել, եթէ[իդ] Յիսուս է Որդի Աստուծոյ, և եթէ

* Հմմտ. Տիմոթէոս, եր. 2.

ա) ի հրեշտակաց փառաւորեալն և ի մոգուցն երկրպագեալն, ի Յովաննէ ընկալեալն և ի Յորդանանէ մկրտեալն բ) փորձեցեալն գ) զառաքեալս հաւաքիլով և զարքայութիւն քարոզելով, զկաղս բըժշկելով և զբորոտս մաքրելով. դ) լուսածելով և ե) ի բազնէ երեւեալն և զ) անհաւատացեալն է) մատնեալն և ի քահանայապետաց ըմբռնեալն ը) յառաջածեալն և թ) դատիցեալն ժ) բեւեռեալն ժա) կախեցեալն ժբ) թաղիցեալն ժգ) յարուցեալն և առաքելոց երեւեալն ժդ) և յերկինս բարձրացեալն, յաջմէն ժե) նստեալն, եւն. ժզ) որպէս է յարութիւն թաղեցելոցն և ժէ) կորուսելոցն, եւն. ժը) փրկանակ բացածելոցն ժթ) երասխանակընկալ քերովբեիցն ի) չ. իա) Բայց յաղագս իբ) հաւատոյ իգ) ի Տէրն իդ) զի իե) Աստուծոյ իզ) Որդին իէ) յԱստուծոյ ընկալեալ, որպէս զի այդ իցէ առ նովաւ

* Այստեղից սկսած Տիմ. յառաջ է բերել իբրև առանձին հատուած. «Եւ այդ ես նորին».

** Հմմտ. Տիմոթէոս, եր. 2.

ա) ոչ զմարդ եառ Որդին Աստուծոյ, զի եղիցի այդ ամն առինքեամբ, այդ Աստուած կատարեալ էութեամբն եղև միանգամայն բ) մարմնացեալ ի Կուսէ գ) աստուածային դ) և ոչ ըստ կցորդութեան աստուածութեան ե) յորմէ կցորդութիւն առնումք զ) փչեցեալ է) և ինքն է ը) վասն մեղաց մերոց, որ և ապրեցոյց թ) ընկալեալ եղև ժ) զմարդիկ ընդունելով ըստ Գրեյոցն ժա) ընդունի զհեզս ժբ) որ ի Մարիամայն ծնեալ ժգ) Բանին, և ինքն է Աստուծոյ Բանն ժդ) և նզովեմք չարչարելի ժե) ասացողս և ժզ) Քրիստոս ասացողս ժէ) ամենայն էութեամբն ժը) և որ ծնանելոցն է ժթ) սուրբ է, կոչեսցի ի) որպէս իա) վասն զի և իբ) էն իգ) ոչ զայդ ամն և զայդ. քաւ մի լիցի իդ) ճշմարտութեամբ ասեմք Տէր զՅիսուս, առաւել հաւատալով թէ

[1]) Հմմտ. Ա. Պետ. Գ, 18. [2]) Հմմտ. Սաղմ. ՁԹ, 6. [3]) Հմմտ. Ա. Կորնթ. Ը, 6. [4]) Ղուկ. Ա, 35. [5]) Ա. Կորնթ. ԺԲ, 3.

Յիսուս է Քրիստոսն[ա][1], որպէս ինքն յետ յարութեանն և ի համբառնալն[բ] ինքն Յիսուս երևեցաւ։

## Երանելւոյն Դիոնէսիայ եպիսկոպոսապետին Աղէքսանդրիայ՝ Երրորդ Թղթոյն, որ առ Քուստոս եպիսկոպոսապետ Հռոմայ*։

Իսկ եթե զնախանձ ունել զԱստուծոյ[գ] և ի բոլոր սրտէ զնա սիրել հաւատ զմեզ յորդորէ[2], և միայն պըղծել[դ] պարտ որ|զէապէսն միմիայն խոտեն[ե] Աստուած և զերկնի և զերկրի և զամենեցուն արարիչ[զ] և տէր, նուաստագոյնս ուրեմն այլոյ[է] և անարգագոյն գոլ ասելով, և ամենայն բարւոյ[ը] չարութիւն առյարեն, և[թ] ոչ զսիրելին նորա զմեր Փրկիչն[ժ], որ զինչ էն՝[ժա] հաւատան, այլ զքանչելի տնօրէնութիւնն և զմեծ խորհուրդն լուծանելով՝ զոմն[ժբ] ոչ Աստուած, ոչ[ժգ] Որդի գոլ հաւատալ[ժդ], իսկ զոմն[ժե] ոչ մարդ եղանել՝ ոչ[ժզ] մարմնով եկեալ, այլ երևոյթ և ստուեր գոլ ասելով՝ զնոսա[ժէ] զամենեսեան յիրաւի Յովհաննէս թղթովն դերաքրիստոս[ժը] կոչեաց[3]. և յաղագս նոցա[ժթ] մարգարէն վկայեաց ասելով. Ո՞չ[ի] զատելիս քո ատեցի և ի թշնամիս քո հալէի[իա]. կատարեալ յատելութիւն[իբ] ատեցի զնոսա. ինձ ի թշնամիս եղեն[իգ][4]։

70r. || Նորին Դիոնիսի՝ ի լուծմանէ ժ. բանեն, որ առ Սամոսացին Պաւղոս։

Առաքեալ ասէ. Որոց հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած[5]։ Եւ Եսայիաս ասէ. Մանուկ ծնաւ մեզ և Որդի տուաւ[6]։ Քանզի այն, որ էր ի սկզբանն՝ տուաւ մեզ, և այն, որ չէր ինչ յառաջագոյն, եղև. և եղև իշխանութիւն նորա ի վերայ ուսոց իւրոց։ Զի որ էրն ի սկզբանն և յառաջ քան զաշխարհս ընդ Հօր ծնողի իւրոյ, ինքն իսկ ի վերջին ժամանակս վասն փրկութեան մերոյ տուաւ մեզ[1], և եղև այն ինչ վասն մեր, որ ոչ կայր ի նմա, և մնաց որպէս էրն ի սկզբան յառաջագոյն։ Որպէս մարգարէն Ովսէէ ասէ վասն Քրիստոսի եթե՝ Մարմին իմ ի նոցանէն[2]. այլ մարմինն, զոր ասաց, վասն Բանին ասաց Աստուծոյ, որ մարմնացաւ ի սուրբ Կուսէն.|քանզի եղև մարմին և ետ զհոգին, արար իւր մայր և ետ մեզ հայր. կոչեաց իւր մայր զՄարիամ և մեք կոչեմք՝ Հա՛յր մեր, որ յերկինսդ ես[3]։ Եւ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց[4]. քանզի զկեանս մեր եբարձ ի վերայ ուսոց իւրոց՝ այն, որ է Աստուած ամենայնի, այսինքն՝ զսուրբ խաչն տէրունական, մինչ խնդութեամբ երթայր ի մահ։ Եւ խորհրդակից Հօր իւրում[5], քանզի նա ասաց. Հա՛յր, եկայք արասցուք մարդ ըստ պատկերի մերում[5]։ Եւ Աստուած հզօր կոչեցաւ և իշխան խաղաղութեան[4]. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ և իշխանութիւն ունիմ առնուլ զնա[6]։ Յղացաւ Բանն Աստուած ի սուրբ Կուսէն և ծնաւ ի նմանէն մարդ կատարեալ, յղացաւ և ոչ գիտաց. ծնաւ և ոչ չարչարեցաւ, և որպէս Աստուած և տէր բնութեամբ՝ պահեաց զարգանդ սր||բոյ Կուսին որպէս էրն իսկ։ Եւ վկայէ Եզեկիէլ 70v. մարգարէ. Դուռն այն եղիցի փակեալ և ոք մի՛ մտցէ և ելցէ ընդ նա. բայց ինքն Տէր մեր մտցէ և ելցէ[7]։ Ի Բեթղեհէմ ծնաւ Որդին, որ յառաջ քան զաշխարհ, և վկայէ Միքիա մարգարէ ասելով. Եւ դու, Բեթղեհէմ, տուն Եփրաթայ, սակաւաւոր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ իշխան[8]։ Եւ իշխան, ո՛ Սամոսատացի, զնա կոչէ. քանզի չիք այլ իշխան յառաջ քան զնա։ Եւ դարձեալ եթե՝ Նա հովուեսցէ ժողովրդեանն իմում Իսրայելի[9], այսինքն՝ զնդի առաքելոցն, որ յԻսրայելէ էին. քանզի ասաց ցնոսա. Ահա առաքեմ զձեզ իբրև գառինս ի մէջ գայլոց[10]. քանզի երկոտասան ոչխարք էին սուրբ առա-

*) Հմմտ. Տիմոթէոս, եր. 7.
ա) Նոյն իսկ ինքն Քրիստոս  բ) ըստ որում և Առաքելոյ զկնի վերանալոյն  գ) Աստուծոյ  դ) միայնս պիղծս վարկանել  ե) որք զորդարեն մի և զմիայնն՝ որհամարհեն  զ) զամենայնցն Արարիչն  է) Նուաստագոյն ուրեմն այղոյ  ը) յԱմենաբարւոյն  թ) և կամ  ժ) զՓրկիչն մեր Յիսուս Քրիստոս  ժա) է  ժբ) զոմանս  ժգ) և ոչ  ժդ) հաւատալով Աստուծոյ  ժե) զայլս  ժզ) և կամ  ժէ) զայսոսիկ  ժը) բարւոք Յովհաննէս ի ձեռն թղթոյն նեռինս  ժթ) Եւ եւս առ նովաւ յաղագս սոցա և  ի) չ.  իա) Տէր, ատեցի և ի վերայ թշնամեաց քոց մաշեցա  իբ) ատելութիւն  իգ) ի թշնամիս եղեն ինձ
1) Ա. Յովհ. Ե, 1. 5.  2) Հմմտ. Բ. Օր. Զ, 5. Ժ, 12. Մատթ. ԻԲ, 37. Մարկ. ԺԲ, 30. Ղուկ. Ժ, 77.  3) Հմմտ. Ա. Յովհ. Բ, 18. 22 և այլն.  4) Սաղմ. ՃԼԸ, 21.  5) Հռոմ. Թ, 5.  6) Ես. Թ, 6.

1) Հմմտ. Ա. Յովհ. Ա, 1, Եբր. Ա, 2.  2) Ովսէ Թ, 12.  3) Մատթ. Զ, 9.  4) Ես. Թ, 6.  5) Ծնն. Ա, 26.  6) Յովհ. Ժ, 18.  7) Եզ. ԽԴ, 2.  8) Միք. Ե, 2.  9) Հմմտ. Միք. Ե, 4. Մատթ. Բ, 6.  10) Ղուկ. Ժ, 3. հմմտ. Մատթ. Ժ, 16.

քեալքն, զորս առաքեաց, և զամենայն գայլս, որ ի վերայ երկրի էին՝ խաղաղացոյց։ Եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց|աշխարհի[1]. որպէս երանելի մարգարէն Դաւիթ յիւրում ասէ, եթէ՝ Յառաջագոյն քան զարև է անուն նորա[2], և աւրհնեսցին ի նա ամենայն ազգք երկրի[3]։ Եւ առաքեալ ասէ. Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան[4]. քանզի նորաստեղծ ծագեցաւ առ մեզ առաջի այն թագաւորի փառաց, որ Յակոբայն ծագեաց մարմնով, որ է Աստուած ամենայնի։ Եւ վկայէ երանելին Մովսէս թէ՝ Ծագեաց աստղ Յակոբայ[5]. քանզի եւ մարդ ինքնն մարդասէրն, այսինքն Յակոբայ, և բարձրացաւ թագաւորութիւն նորա. և ոչ ասաց թէ՝ բարձրասցի, այլ այն, որ ինքնն իսկ Բարձրեալն էր, զիարդ պիտոյ էր նմա բարձրանալ. քանզի ընդ ամենայն երկիր ծագեաց լոյս նորա։ Եւ մոգք յարևելից եկին և մատուցին պատարագ այնմ, որ ծնաւ ի Բեթղեէմ. և վկայէ Եսայի. Ի Սաբայ եկեսցեն՝ բերելով ոսկի և կնդրուկ և զմուռ, և
[72r.] պատգամս մա||տուսցեն և զփրկութիւն Տեառն պատմեսցեն[6]։.

## Երանելւոյն Ռիտուաղեայ եպիսկոպոսապետին Հռովմայ՝ Յաղագս հաւատոյ*։

Իսկ ես և յաղագս մարմնոյ[ա] տնօրէնութեան մերոյ[բ] Փրկչին հաւատամք, զի[բ] անայլայլելւոյ և անյեղեղկի միացելոյ Աստուծոյ Բանին զմարմնաւորութիւն եղանել[գ]։ Քանզի Որդի ելով ճշմարտապէս Աստուծոյ՝ ըստ յաւետախաղաց Աստուծոյ[դ] ծննդենէն, եղև Որդի[ե] ըստ ի Կուսէն ծննդեանն[զ], և է միևնոյն կատարեալ Աստուած՝ համագոյական[է] ըստ աստուածութեանն և համագոյ[է] Հօր, և կատարեալ մարդ, նոյն ինքն ըստ ի Կուսէն ծնելութեանն[ը], և համագոյ[թ] մարդկան ըստ մարմնոյ։ Իսկ որք[ժ] յերկնուստ ասէ մարմին ունելով[ժա]|զՏէրն, կամ Հոգւոյ[ժբ]

*) Հմմտ. Ցիմոթէոս, եր. 7.

ա) ըստ մարմնոյ   բ) չ.   գ) անյեղյեղելի միացելոյ Աստուծոյն Բանի զմարմնաւորութիւնն եղանել առ նորոգութիւն մարդկութեան։   դ) յԱստուծոյ   ե) եւ Որդի Մարդոյ   զ) ծննդեան   է) նոյնագոյ՝ լուսանցքում «համագոյ»   ը) ծնելութեան   թ) նոյնագոյ   ժ) որ ոք   ժա) ունել   ժբ) նոյնագոյ

1) Միք. Ե, 2.   2) Սաղմ. ՀԱ, 17.   3) Հմմտ. Ծնն. ԺԲ, 3. Գաղ. Գ, 8.   4) Եբր. ԺԳ, 8.   5) Թիւք ԻԴ, 17.   6) Ես. Կ, 6.



Աստուծոյ զմարմինն՝ եղիցի նզովեալ։ Որ ոք ոչ խոստովանիցի Տեառն մարմինն[ա] ի Կուսէն, և մարդկան համագոյ[բ], եղ.։ Որ ոք զՏէրն մեր և զՓրկիչն[գ], ի Հոգւոյն Սրբոյ և ի Մարիամայ կուսէն ծնեալ ըստ մարմնոյ՝[դ] անանձն ասէ, կամ անզգայ, կամ անբան, կամ անիմաստ, եղ. նզ.։ Որ ոք բաժանէ և զատուցանէ զՏէրն մեր և զՓրկիչն[ե] և ասէ այլ զոլ Որդի զԱստուած Բանն[զ] և այլ զառեալն մարդ, և ոչ խոստովանի մի և զնոյնն[է], եղ. նզ.։

## Երանելւոյն Եւսքթեայ եպիսկոպոսապետին Անտիոք Գիպիղեայ՝ ի խօսիցն ասացելոց յաստուածայայտնութիւնն ի մեծ եկեղեցւոջն Կոստանդնուպօլսի. Առնելով երանելւոյն Պռոկղի եպիսկոպոսին*։

[72v.] ||Առ Էսայեայ[ը] մեծի մարգարէի Աստուծոյ քարոզելոյ[թ] մանկանն՝ Քանզի մանուկ, ասէ, ծնաւ մեզ, որդի և տուաւ մեզ, որոյ պետութիւնն[ժ] եղև ի վերայ ուսոց իւրոց, և կոչեսցի[ժա] անուն իւր մեծի խորհրդոյ հրեշտակ, սքանչելի խորհրդակից[1], և որ զկնի։ Մի՛ ոք այսուհետև զձեզ հրէական պատրեսցէ ոստ. քանզի այսպէս կոչել զհերձուածողականսն արժան, իբր այլ ումն ծնիցեալ[ժբ], իսկ այլ ումն ծնիցելոյ[ժգ] բնութիւնք։ Քանզի եթէ ոք զայս ասել համարձակեսցի, զԵմմանուէլն[ժդ] զայս միայն ընդդէմ դիր, և սանձս[ժե] լռութեան զանուանն ընկալցի զյիշողութիւն[ժզ]։ Քանզի ոչ երկու բնութիւնք, այլ զմարմնացեալն Աստուած Կոյս[ժէ] խորհրդաբար|սաղմնեաց[ժը], ընկալեալ զՀոգւոյն վերեկութիւն. քանզի եթէ մարդկայնոյ էր սերմաբողբոջ[ժթ] Քրիստոս, հաւանեի արդեւք և[ի] զպտուղն ըստ բնութեանն[իա] քատակիլ յարմատոյն[իբ]. իսկ եթէ Հոգւոյն է վերեկութիւն՝[իգ][2] ըստ հրեշտակապետին

* Հմմտ. Ցիմոթէոս, եր. 277.

ա) խոստովանի զՏեառնն մարմինն   բ) նոյնագոյ   գ) զՓրկիչ   դ) ի Մարիամա կուսէ ծնեալ մարմնով   ե) Փրկիչ   զ) զԱստուածն Բան   է) խոստովանէ մի և զնոյն ինքն   ը) Էսայեայ   թ) քարոզեցելոյ   ժ) պետութիւն   ժա) կոչի   ժբ) ծնիցեալն   ժգ) իսկ այդ ի նոյն բնակեալ Աստուած, և իբր երկու ծնիցելոյն   ժդ) զԵմմանուէլն   ժե) սանձ   ժզ) կալցի յիշողութիւն   ժէ) Կոյսն   ժը) բացասաղմնեաց   ժթ) սերման բողբոջ   ի) չ.   իա) բնութեան   իբ) արմատոյն   իգ) Հոգւոյ է Սրբոյ

1) Ես. Թ, 6.   2) Մատթ. Ա, 20.

ձայնին, Աստուած է ծնեալն[ա]. վասն զի Աստուած ծնելութեան[բ] աւրի։

## Երանելւոյն Պրոկղի եպիսկոպոսի.

Եւ թերևս պահանջիցէ ոք, զի եթէ չէ Քրիստոս որդի Յովսեփու և Դաւթի, զիա՞րդ համարիմք զՄատթէոս, որ ասէ սկիզբն աւետարանին եթէ՝ Գիրք ծննդեան որդւոյ Դաւթի, Որդւոյ Աբրահամու[1]։ Այսպէս իմանալի. քանզի Կոյսն և որում զնայն խօսեցան՝ Յովսէփ, էին յազգէ Դաւթի և ‖ 72r. Աբրահամու. զի որպէս զԱբրահամ և զԴաւիթ գիտեմք անուամբ հայր Յիսուսի, քանզի ի Կուսէն, որ յազգէ նոցա էր, երևեցաւ մարմնացեալ Բանն Աստուած, նոյնպէս և զՅովսէփ անուամբ իմանամք հայր Յիսուսի, և ոչ բղխմամբ սերմամբ՝ ըստ օրինակի ամուսնութեան, այլ հանգուցեալ ի Մարիամ զօրութեանն, և ի Մարիամայ առեալ ճշմարտութեամբ մարմին և մարդացեալ. ոչ որպէս ընդ սողէն անցեալ, որպէս Վաղենդիանոսք և Ծայդանացիք և Մարկիոն հայհոյեն, և ոչ ստուերականի կերպարանօք և առաջօք երևեալ, որպէս Մանիքեցիքն ամպարշտեն. և ոչ մարմին առանց շնչոյ առեալ, որպէս Արիանոսք և Մակեդոնիանոսք և Եւնոմիանոսք բամբասեն. և ոչ մարմին և շունչ առանց մտաց, որպէս Ապողինարիոսքն դանդաչեն. և ոչ մարդ լոկ, որպէս տաճար իմն և բնակութիւն|աստուածութեան՝ ի նմանութիւն մարգարէիցն և առաքելոցն, որպէս Նեստորիկեանքն անօրինին։ Այլ Աստուած յԱստուծոյ, Բան մշտընջենաւորական, Որդին Միածին՝ անսկզբնականն, որ ի Հօրէ և ընդ Հօր՝ ի բնէ և յաւիտենից, ի վախճան ժամանակաց եկեալ յարգանդ սուրբ Կուսին՝ մարմնացաւ և մարդացաւ, ոչ ի սերմանէ և ոչ յամուսնութենէ և ոչ յարենէ, այլ որպէս ինքն գիտէ միայն։ Եւ զի մարմնացեալ և մարդացեալ երևեցաւ՝ հաւատամք, բայց եթէ զի՞նչ օրինակ իցէ՝ չքննեմ, քանզի չեմ բաւական լինել հասու. զի խորհուրդ է անճառ, անքննելի, անստաց. և մինչ խորհուրդն խորհուրդ է՝ ոչ ոք կարէ յայտ առնել և մեկնել. ապա եթէ մեկնեսցէ և յայտնեսցէ, խորհուրդն այնուհետև չէ խորհուրդ։

ա) ձայնի՝ Աստուած ծնիցեալն բ) եւ Աստուած ծնելութեանն

1) Մատթ. Ա, 1.



**Նորին՝ ի թղթոյն, որ առ սուրբն Սահակ Հայոց հայրապետն, Պրոկղի։**

‖ 72v. Հաւատամք յԱստուածն Բան՝ յանեղծն, յանարատն. թե առանց անցից մարմնացաւ և սրբութեամբ՝ հաւատամք. զի այս ինքն է մերոյ փրկութեանս հիմն և հաստատութիւն. նաև սիրեմք՝ որ վասն մեր եկն և զկերպարանս առ զծառայութեան. որ ոչ եթե զբնութեանն ինչ եղծումն յանձն էառ և ոչ աւելորդ ինչ յՆերրորդութիւնն արար։ Արդ, ամենայն քրիստոնեայ, որ ոչ պարբեալ է հաւատովք և յուսով և սիրով, չէ նա այն, որ անուանեալն կոչի. զի թեպէտ և բազում անգամ ճնշէ զմարմին և յանցից անցից ցանկութեան թուի իմն զվարուց զքաջութիւնս ուղղել՝ յաղթութեան պսակացն արժանի չլինի, իբր նոյն ինքն յաստուածպաշտութեանն պատրաստիչ պսակացն, որ նահատակացն պատրաստեալ է՝ չժա|մանել։ Արդ, հաւատք են, որպէս ասացաք, ամենայն բարեացն գլխաւորութիւն. և պահեսցի նոքա առանց շնութեան, մի՛ ինչ ի նա մատուցանել ամենևին պղծութեան խորհրդոց ի մարդկանէ, և մի՛ բնաւ ի պղծութիւն ի նորաձայն ուսմանցն պղտորեալ խառնակեսցի, այլ ի ներքոյ աւետարանական յառաքելական սահմանացն հաստատեալ կացցէ. զի մի՛ ոք ամենևին իշխեսցի ձեռն ածել այնու, որով վրիպեցաքն և որով ի մկրտութեան անդ մերով իսկ լեզուաւ ձեռնագրեցաքն. զի խոտէ և անարգէ բարձրութիւն հաւատոցն զամենայն արձակումն յանդըգնութեան և ժպրհութեան՝ ոչ միայն մարդկութեանս, այլ և որ յանմարմին բնութեանն են՝ ի բարձունս գլխաւորեալ։ Որպէս երանելին Պաւղոս բողոք կալեալ գոչէ. ‖ 73r. Եթե կամ մեք, ասէ, կամ հրեշտակք յերկնից աւետարանիցէ ձեզ քան զայն, զոր ընկալարուքն դուք՝ նզովեալ լիցի[1]։ Արդ, ինքն Աստուած՝ անեղծն, անարատն, անպաճոյճն, անսկիզբնն, անչափականն, հզօրն, ամենազօրն Բանն եկն մարմնացաւ. քանզի ամենայն զօրութիւն և ամենայն կամակարութիւն առ իւր էր, և առ նա զկերպարանս ծառայի և եղև մարմին և ծնաւ ի Կուսէն, ամենայնիւ կամեցաւ ցուցանել, եթե ճշմարտիւ մարդ եղև։ Զի ի հարկէ երթան զհետ բարուցն իշխանութիւնք և կերպարանք և չարչարանք. զի ոչ ուրեք ասէ աւետարա-

1) Գաղ. Ա, 8.

նիչն, եթե եկն եմուտ նա ի կատարեալ մարդն, այլ ասէ. Եղև մարմին՝[1] ի նոյն ինքն իջեալ ի բնութիւնն և ի սկզբան անդր հասեալ ծննդեանն. նախ եղև|մարմին, ոչ եթե ի մարմինն եղծաւ, քա՛ւ լիցի. զի կայ հաստատեալ Աստուածութիւնն եղծմանն ի վերոյ. քանզի որ եղծմամբն է՝ ի ծորել բարուցն չարչարմամբն, իսկ որ մըշտընջենաւորն է՝ միշտ առ իւր ունի զանեղծ բնութիւնն։

Արդ, ասեմք՝ զերկոսինն առաջի արկեալ բարբառս գրոց. եղև մարմին և առ զկերպարանս ծառայի[2], և երկոքինն ուղղապաշտմամբ իմացեալ՝ փրկութեան սերմանիք լիցին մեզ։ Այն զի ասէ՝ բայց եղև, զանքակ կատարեալ հաւասարութիւն աւետարանիչն ցուցանէ մեզ. զի զօրօրինակ միութիւն ոչ լինի ի միւսութիւնս երկուս. զի եթե այսպէս լինի, ոչ լինի միութիւն. սոյնպէս մի ըստ կատարեալ հաւանութեանն ոչ բաժանի յերկուս, 78v. այլ այն ,որ ասեն՝ առբողոքէ || զանխախուտն բարուց. քանզի ամենայն որ լինելոցն՝ ի չէէ անտի լինի։ Արդ, երկուքին յաստուածային բնութեանն անկազմ են. զի ոչ եթե ի չգոյից անտի ի մէջ եկն որ միշտ անսկիզբն է, և ոչ ի գոյից քակտեցաւ անեղծ Բանն. վասն այսորիկ յերկուց կողմանց՝ և զանեղծ և զանարատ աստուածութեանն և զանքակ խորհրդեանն, Աստուածեղէն Գիրք ուսուցանեն. զի առաջնովն զմիութիւն երեւացն հաստատեսցէ և երկրորդաւն զանեղծն և զանարատն գոչեսցէ։

Արդ, եղև Աստուած Բանն կատարեալ մարդ՝ ոչ եթե կարճեալ ինչ յանեղծն յանարատ բնութենէ անտի, որ ի վեր քան զիմաստ զարմանալեաց. այլ հաւատովք զայնպիսին ուսաք, ոչ եթե քննութեամբ|հասաք. եղև մարդ և ապրեցուցանէ չարչարակցութեամբն, որ ըստ մարմնոյ ազգակից և տոհմականն է. հատոյց զպարտս մեղացն ի վերայ ամենեցուն մեռանելովն իբրև զմարդ, խափանեաց զայն, որ զիշխանութիւն մահու ունէր, այսինքն զսատանայ, իբրև զչարատեաց զԱստուած, և զկար զօրինացն եցոյց՝ ի կատարել անդ զամենայն արդարութիւն, և բնութեանն զառաջին ազնուութիւն հատոյց ի պատուելոյ անտի ի մարմնանալն, զոր իւր իսկ ստեղծեալն էր զբոյս բարուցն բարութեան։ Արդ, մի է Որդի, և համազօր Երրորդութեանն երկիրպագանեմք. չորրորդութիւն

1) Հմմտ. Յովհ. Ա, 14. 2) Հմմտ. Փող. Բ, 7.



անդ ոչ մատուցանեմք, այլ մի Որդի՝ անսկիզբն ի Հօրէ ծնեալ, որով զամենայն յաւիտեանս հաւատամք եղանել. որ մշտնջենաւորակիցն է առ || 74r. մատոյ շառաւիղ, որ առանց ծորման ի Հօրէ իջանէ*. որ անքակ մտաց անտի յառաջ եկեալ և անդէն բնակեալ. զի թէպէտ յերկրի երեւեցաւ, այլ ի Հօրէ ոչ մեկնեցաւ։ Սա կամեցաւ փրկել զոր ինքն ստեղծ, և փրկեաց ի բնակելն յարգանդի անդ, և աւրհնեաց զդուռն բուսոյ բարուցն բարութեան, և ծընընդեան իւրով կնքեաց, և եցոյց զինքն, որ ի վեր է քան զբարս ծննդեան՝ Բանն մարդացեալ։ Արդ, ոչ եթե այլ ոք է Քրիստոսն, քա՛ւ լիցի, և ոչ այլ ոք Աստուած Բանն. զի երկուս Որդիս Աստուածութեան բնութիւնն ոչ գիտէ, այլ միայն միածին ծնաւ։ Զի ուր ոչ գոյ ամուսնութիւն ծննդականաց, անդ ոչ գտանի երկութիւն ծնելոյ. Զի յանուն Յիսուսի Քրիստոսի կրկնեսցի ամենայն ծունր՝|երկնաւորաց և երկրաւորացս և սանդարամետականաց[1]։ Ապա եթե այլ ոք է Քրիստոսն, քան զայն, որ Աստուած Բանն է ի Հօրէ, դոյզն մարդ է Քրիստոս. զի տաճար է Աստուծոյ՝ ըստ բանի սռաբեոցն։ Իսկ եթե դոյզն մարդ իցէ Քրիստոս, զիա՞րդ, որ ի վեր են քան զբնութիւն նորա և պատուականագոյնք՝ երկնաւորքն, ծունր իջեալ երկիրպագանեն կրտսերոյն. և կամ զիա՞րդ ընկալցուք մեք զբարբառ մարգարէիցն, որ գոչեն. Աստուած մեր յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ[2]. երեւել զայն ասէին, որ մարմնովն երեւեցաւ, և շրջել՝ որ ըստ ժամանակի, ընդ մարդկան. զառաւելութիւն զամենազօր ի գործոց անտի զնպցիցն ցուցանէր, զի իբրև զամենակալ, որ եկաց և մնաց ի նմին վասն իւր և որ ինչ կամեցաւ և եղև վասն մեր։ Ապա եթե զայթակղութեան պատճառք լի || 74v. նիցին խանձարուրքն և որ ի մսրի անդ բազմականն էր, և կամ ժամանակաւ ըստ մարմնոյ աճումն էր, և որ ի նաւին անդ ի քուն մտանելն էր և ի ճանապարհի աշխատ լինելն էր, և որ ի ժամանակի անդ քաղցնուլն էր, և որ ինչ միանգամ մարդոյ եղեալն էր դէպքն անցանէին։ Արդ, ես զարմացեալ եմ ընդ պակասամտութիւնն, որ նոր ճանապարհս խոտորս ձեւեն. զի իմ զմինն գիտացեալ և ուսեալ բարեպաշտութեամբ զՈրդի,

* Լուսանցքում այս բառի փոխարէն՝ ծագեալ։

1) Փիլպ. Բ, 10. 2) Հմմտ. Բարուք Գ, 36 և 38.

և մի խոստովանութիւն ունիմ զմարմնացելոյ Բանին Աստուծոյ զօրութիւն բնութեանն*։

Իսկ արդ, զի մի է, որ անցից անցից համբերութեամբ յանձն էառ|և զմեծասքանչ զօրութիւնսն կատարեաց, արդ՝ ընդէ՞ր զաստուածեղէնսն լռեալ և զվատթարագոյնն յերկարեալ բարբաջեն։ Զի նա իբրև կամեցաւ, թե հաւատարիմ արարից՝ Աստուած եմ և Բան, հաստատեցաւ կաց որ էրն. իսկ եղև մարմին և մանուկ, և ոչ միով իւիք քակտութեամբ զխորհուրդն թշնամանեաց. նոյն ինքն և զմեծասքանչ զօրութիւնն առնէր և նոյն ինքն չարչարանօք մատնէր. նշանօք և արուեստիւք կալ մնալ յայնմ, որ էրն իսկ և երևեցուցանէր, իսկ չարչարանօք զոր եղեն հաստատէր։ Արդ, միևնոյն մշտնջենաւոր ի սկզբանէն և ի կատարածի մարմնացեալն խոստովանեսցուք Որդի, և մի ինչ այլ ամենևին յաստուածութիւն բնութեանն անդր օտարոտի և խառն խառնեսցուք, զի ոչինչ աւելորդ գոյացն աթոռ։

75r. || Երանելւոյն Հօր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու, առ գրեցելոյ Թըղթոյն ի Գանգրայ յԱսորիս, ուր զաշակերտսն հաստատեաց ի Քրիստոս՝ Թուղթ Երրորդ: Սեպտեմբերի Բ. ճառի վեցերորդն. Առ Միայնակեացսն ի Հենատոն գրեցեալ Թղթոյ**:

Քանզի զիտեմք[ա] զնա հաւատով՝ բուժեալ ծնիցեալ զնա[բ] իբրև զԱստուած, իսկ զնոյն ծնիցեալ ի Մարիամայ իբրև զմարդ[գ]։ Տեսս զնա ի վերայ երկրի ճեմեալ[դ] իբրև մարդ[ե], և տես զնա երկնայնոց հրեշտակաց արարիչ իբր զԱստուած։ Տես զնա ի նաւի ննջեալ[զ] իբրև զմարդ, և տես ի վերայ ալեացն[է] ճեմեալ իբր զԱստուած[ը]։ Տես զնա քաղցեալ իբր զմարդ, և տես զնա բուծանօղ աշխարհի իբր զԱստուած։ Տես զնա ծարաւեալ|իբր զմարդ, և տես զնա արբուցանելով՝ իբր զԱստուած[ը]։ Տես զնա մերկացեալ իբր զմարդ, և տես զնա զգեցուցանօղ իբր



ա) զիտեմ ես  բ) առա զնա  գ) ի Մարեմայ իբր մարդ  դ) ճեմելով  ե) զմարդ  զ) ննջեցեալ  է) զնա ի վերայ ջրոյն  ը) Աստուած



զԱստուած[ա]։ Տես զնա ի վերայ յովանակի նստեալ իբր զմարդ, և տես զնա ի քերովբէսն նստեալ իբրև զԱստուած[բ]։ Տես զնա ի հրեից[գ] քարկոծեալ իբր զմարդ, և տես զնա ի հրեշտակաց երկրպագեալ իբր զԱստուած։ Տես զնա փորձեալ իբր զմարդ, և տես զնա զդևս[դ] հալածելով իբր զԱստուած։ Տես զնա ոչխար իբր զմարդ, և[ե] հովիւ իբր զԱստուած[զ]։ Տես զնա զոհ զենեալ իբր քահանայ ընծայաբեր, և[է] փրկանաւորելով՝ իբր զԱստուած[զ]։ Տես զնա ի[ը] Պիղատոսի յատենի կացեալ իբր զմարդ, և տես Հօր գահակցեալ[թ] իբր զԱստուած[ժ]։ Տես զնա խաչեալ[ժա] իբր մարդ, և տես զնա աւա || զակին դրախտին[ժբ] 75v. շնորհելով իբր զԱստուած[ժ]։ Տես զնա քացախ արբեալ իբր զմարդ[ժգ], և տես զաշխարհ արբուցեալ անչարակնաբար իբր զԱստուած[ժդ]։ Տես զնա մեռեալ իբր զմարդ, և տես զնա մեռեալս յարուցանելով՝ իբր զԱստուած[ժ]։ Տես զնա աղքատացեալ մարմնով[ժե] իբր զմարդ[ժզ], և տես զնա փարթամացուցանօղ[ժէ] իբր զԱստուած[ժ]։ Տես զնա ծառայ իբր զմարդ[ժգ], և տես[ժը] ազատիչ իբր Աստուած։ Տես զնա որպէս ցորեան սերմանեալ[ժթ], և տես զնա դարձեալ սերմանօղ[ի] իբր Աստուած։ Տես զնա այգի պտղալից[ժե] իբր մարդ, և տես զնա բուսակեր երկրագործ[իա] իբր զԱստուած[ժ]։ Այլ զի մի բազմամբոխ շարադրութեանս[իբ] արարից, թողում այժմ զվկայութիւնս իւրաքանչիւր հաւաքեալ զլխոց, և հաւաքեցից՝[իգ] շնորհելով Աստուծոյ, ի[ժե] դիպող ժամանակի առ|այս կոչողի։ Իսկ զօտարափառացն անպիտանութիւն[իդ] թողեալ, զմի[իե] և զնոյն խոստովանիմք Փրկիչ և Տէր և Աստուած, և թե եղև անօրինաբար[իզ]։ Կալարուք այսուհետև և[ժե] զհարցն խոստովանութիւն, և մի շոգմոգողացն հերձուածողաց համեմատիք

ա) զգեցուցանելով իբր Աստուած  բ) զնա վերելակեալ քերովբէից իբր Աստուած  գ) ի հրեից  դ) զևս  ե) և տես զնա դարձեալ  զ) Աստուած  է) և իբր քահանայ ընծայաբերելով, եւ տես զնա  ը) չ.  թ) զնա Հաւր գահակցելով  ժ) Աստուած  ժա) խաչեցեալ  ժբ) զդրաստն  ժգ) քացախ ի խաչին արբուցեալ իբր մարդ  ժդ) տես զնա իբր Աստուած անչարակնաբար զաշխահ արբուցանելով  ժե) չ.  ժզ) մարդ  ժէ) փարթամացուցանելով  ժը) տես զնա  ժթ) սերմանեալ իբր զմարդ  ի) սերմանող դարձեալ  իա) և երկրագործ  իբ) թողում ամբոխ ի շարագրութեանս  իգ) իւրաքանչիւրոյ հաւաքել գլխոյ, և հաւաքեսցին  իդ) Իսկ մեք զօտարափառաց անպիտանութիւնս  իե) մի  իզ) և եթ՝ եղև անօրէնաբար մարդ

բանից[ա], այլ և մի յերկուս բաժանողաց. զմինն[բ] հաւանիք. քանզի մինն[գ] է մեր փրկիչ, որպէս ասացն Թե՛[դ] եղև մարդ սակս մարդասիրութեան[ե]:

Երանելւոյն Տիմոթէոսի եպիսկոպոսի Աղէքսանդրացւոց՝ ի Հակաճառութենէ, առաջին գլխոյն Լեւոնի հայհոյութեանն եւ որ յառաջ քան զնա հերձուածողք՝ Նեստորի Անտիոքացւոյ եւ Դիոդորի Տարսոնացւոյ եւ Պաւղոսի Շամշատացւոյ եւ Թէոդորիտեայ Կիւրոս քաղաքի, եւ աշակերտաց որ յետոյ*:

76r. || Հերձուածողացն նորա վարդապետացն ի բաց յայտնելով զնորայն զամպարշտութիւն[զ], իբր հետեւեցելոյ իւր նորայն ամպարշտութեանն, ենթակայեսցի[է] յիրաւի զնոցայն ելելոյ[ը] նզովիցն ի հարանց սրբոց[թ]: Քանզի երանելի առաքեալն Պաւղոս զմարմնացեալ Աստուած Բանն[ժ] հանդերձ իւրով մարմնովն Քրիստոս քարոզեաց[ժա], և Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն ընդ երկնաւ զսա անուանեաց[ժբ].[1] զի ոչ որպէս նորուս վարդապետիս Թուի՝ տաղաւարեաց ի Մարիամայն մարդն Աստուծոյ Բանին[ժգ], իբր այլ ելով քան զ'ի կուսէն ծնեցեալն[ժդ] Փրկիչն, Քրիստոս Տէրն. քանզի տուն անուանեաց նորս վարդապետ զ' ի Մարիամայն առեալն. բնակեալ զԱստուած Բանն ի տան[ժե] օրինադրէ, որպէս Թուի հերձուածողացն նորա[ժզ] վարդապետաց, զի մի Աստուած Բանն[ժէ], որպէս ինքն կոչէ|իմաստութիւն՝ Թափեալ զինքն զտանիցի, և մի առեալ վասն մեր ի Հօրէ՝ ըստ գերազանցութեան սիրոյն[ժը]. Զի այնպէս[ժթ] սիրեաց

* Հմմտ. Տիմոթէոս, էջ 55.

ա) հերձուածողացն հետեւեալք բանից բ) զմին գ) մի դ) որպէս ասացէ, և եթ՛ ե) մարդասիրութեանն զ) վարդապետաց յայտնելով զնորա ամպարշտութիւնն է) նոցայն վարդապետութեանց ենթակայեսցի ը) զնոցանէ եղելոց թ) ի սրբոցն հարանց ժ) զմարմնացեալն Աստուածն Բան ժա) անուանեաց ժբ) զսա քարոզեաց ընդ երկնաւս ժգ) ի Մարիամայն մարդ Աստուածն Բան ժդ) ծնեցեալ ժե) զ' ի Մարիամայն առեալ՝ բնակել զԱստուածն Բան ի տանն ժզ) հերձուածողաց նորայն ժէ) Աստուածն Բան ժը) սիրոյ ժթ) այսպէս

1) Հմմտ. Ա, Կորնթ. Ա, 24.



Աստուած զաշխարհս[ա], ասէ աւետարանիչն Յովհաննէս, իբր զի զՈրդին իւր Միածին[բ] ետ վասն մեր[1]. այլ[գ] զի մի Տէրն փառաց, այլ Տեառն փառաց տուն[դ] ասիցի զխաչն համբերիչ վասն[ե] մեր[2], և զմահն և զԹաղումն և զյարութիւնն:

Այլ ոչ ուսուցին այսպէս Աստուածեղէն Գիրք, այլ ինքն[զ] Բանն մարմին եղեալ՝ տաղաւարեալ կամ բնակեալ ի մեզ, և ի մարդկան. քանզի՝ Բնակեցայց ի նոսա և գնացից, ասէ[է], և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ ժողովուրդք[ը][3]: Իսկ զբնակիլն ի սիրտս մեր զՔրիստոս[թ] աղօԹէ երանելին Պաւղոս[4]. իսկ բնակիլ ի մարդիկ[ժ] Աստուծոյ միայնւոյ[ժա] յատուկ է, և ոչ մարդոյ: Եւ յԱռ Եբրայեցիս Թղթին զՔրիստոս[ժբ] հա||րազատ քարոզէ Որդի[ժգ] Հօրն և արարիչ բոլորեցուն, և գեր ունել[ժդ] անբաղդատաբար ամենայնի համանգամայն արարածոց. Քանզի, ասէ, Մովսէս[ժե] հաւատարիմ[ժզ] բոլորում տան նորա բուժող*[ժզ] առ ի վկայութիւն խօսեցելոցն, իսկ Քրիստոս իբրև[ժէ] որդի ի տուն նորա, որոյ տունն մեք եմք:[ժը][5] Իսկ Քրիստոս[ժթ] իւր ոչ տուն ասի և ոչ բնակութիւն յԱստուածային Գրեցելումն[ի], Թեպէտ և մարդկայնոց վարեսցի[իա] ձայնիւք՝ վասն տնօրէնութեանն[իբ], զի մի երևոյԹ կարծիցի մարմնաւորութեանն իւրոյ խորհուրդ. այլ ըստ ճշմարտութեան[իգ] մարդ եղեալ տնօրինաբար Աստուծոյ Բանն՝ հաւատասցի միացեալ անյեղում բնութեանն[իդ]: Քանզի եթե Աստուած էր հանդերձեալն յերկրի երևելն և ի կուսէն ծնանելն՝ Էսայի[իե] մարգարէանայ ասելովն[իզ]. Ահա Աստուած մեր դատաստան հատուցանէ և հա|տուսցէ, ինքնին[իէ] եկեսցէ և փրկեսցէ[իը] զմեզ. յայնժամ աչք 76v.

* Լուսանցքում՝ ծառայ.

ա) զաշխարհ բ) Միածին գ) այլ և դ) տունն ե) համբերիչն զվասն զ) այսպէս ուսուցին աստուածային գրեցեալքն, այլ զինքն է) ասէ, և գնասցից ը) և ինքեանք եղիցին իմ ժողովուրդ թ) բնակել զՔրիստոս ի սիրտս մեր ժ) ի մարդում ժա) միայնում ժբ) զՔրիստոսն Որդի ժգ) չ. ժդ) գեր ունելով ժե) և Մովսէս ժզ) իբր բուժաւղ ժէ) իբր ժը) տուն եմք մեք ժթ) Քրիստոսի ի) ոչ տուն և ոչ բնակիչ ասի Աստուածային գրեցելումն իա) ուրեք մարդկայնովք վարի իբ) տնտեսութեանն իգ) մարմնաւորութեան իւրոյ խորհուրդն, այլ ըստ ճշմարտութեանն իդ) տնաւրինաբար այն հաւատասցի միացեալն անյեղումն բնութեան իե) երևել և ի Կուսէ ծնանել, Եսայի իզ) ասելով իէ) ինքն իը) կեցուսցէ

1) Յովհ. Գ, 16. 2) Հմմտ. Ա. Կորնթ. Բ, 8. 3) Եզ. ԼԷ, 27. 4) Եփ. Գ, 17. 5) Եբր. Գ, 5—6.

կուրաց բացցին[ա], և այլն զկնի[1]: Եւ՝ Ահա Աստուած Տէր[բ] գայ հաստատութեամբ[գ][2]. Եւ՝ Ահա կոյս յորովայնի ընկալցի[դ] և ծնցի որդի, և կոչեսցեն[ե] զանուն Նորա Էմանուէլ[զ][3]. և զի՝ Կոչեսցի անուն Նորա[է] մեծի խորհրդոյ հրեշտակ, Աստուած հզօր[4]: Եւ ինքն իսկ յառաջ[ը] քան զյաւիտեանս Աստուծոյ Բանն յաղագս ի կնոջ իւր[թ] ըստ մարմնոյ ծննդեանն տնօրինականի մարգարէիւն ասէ. Լուարուք ինձ, կղզիք, և հայեցարուք, ազինք, յետ բազում ժամանակաց[ժ], ասէ Տէր, յորովայնի մօր իւրոյ[ժա] կոչեաց զանուն[ժբ][5]: Ահա զկամաւոր և զանկիր և զանճառելի յղութիւն իւր զեկուցանեն որովայնիւ մօր, և առանձին[ժգ] մայր կոչէ զսուրբ Կոյսն, և անուն կոչեցեալ առ ի Հօրէ[ժդ]: Իսկ եթէ տուն իւր 77r. ‖ շինեաց և յայնժամ բնակեցաւ ի Մարիամայն մարդն Աստուծոյ Բանն[ժե] արտաքոյ եղով ամենայնիւ է շինելոյն տանէն, մինչև իննամսեայ ժամանակաւ զսա շինեսցէ, այլ եղով Քրիստոսն, զի ի Մարիամայն իւր տուն[ժզ], ապա ուրեմն ոչ[ժէ] շարառեցաւ անճառաբար մարմնացեալն յարգանդի[ժը] Կուսին Աստուած Բանն[ժթ], որպէս Նմա Թուի, և ոչ Աստուածածին սուրբ Կոյսն[ի], և իբր մնաց յղացեալ և ծնեալն[իա] կոյս: Այլ մարգարէն վկայէ և գոչէ զսորա զստութիւն[իբ], մանաւանդ ինքն իսկ Աստուած Բանն[իգ] մարգարէիւն, ապա իբր առ Նոյն ծնիցեալն ի Կուսէն ասէ[իդ] մարգարէիւն. Եւ Սերումացիք[իե] արք բարձունք առ քեզ անցցին և քեզ եղիցին ծառայք և յետոյ քո հետևեսցին կապեալք ձեռակապօք, և ի քեզ աղօթեսցեն, զի ի քեզ Աստուած է, և ոչ է Աստուած բայց քո[6]: | Ասէր իսկ ինքն Տէրն եթե՝ Հայր յիս մնալով գործէ[իզ] զգործս

ա) բացցին աչք կուրաց բ) մեր, ահա Տէր գ) հաստատութեամբ և բազուկ իւր տիրականութեամբ դ) Նորովայնի կալցի ե) կարդասցեն զ) Եմանուէլ է) կոչի անուն իւր ը) յառաջ թ) յաւիտենից յաղագս ի կնոջէ ժ) ժամանակի կացցէ ժա) յորովայնէ մաւր իմոյ ժբ) զանուն իմ ժգ) և զկամաւոր և անկիր և անճառելի յղութիւնն իւր զեկուցանէ Նորովայնի մաւր, և առանձինն ժդ) Նմա առ ի Հաւրէ ժե) բնակեաց ի Մարեմայն մարդ յԱստուածոյն Բան ժզ) ի շինեցելոյն տանէ, մինչ զի իննամսեա ամանակաւ զառ շինիցէ, այլ եղեալ քան զ՚ի Մարեմայն իւր տուն ժէ) և ոչ ժը) յարգանդին ժթ) Աստուածն Բան ի) սուրբն Կոյս իա) յղացեալ և ծնեալ իբ) ստութիւն իգ) իսկ ինքն Աստուածն Բան իդ) ասէ իե) Սերոյթմացիք իզ) միայն առնէ

1) Ես. ԼԵ, 4—5. 2) Ես. Խ, 10. 3) Ես. Է, 14. 4) Ես. Թ, 6. 5) Ես. ԽԹ, 14. 6) Ես. ԽԵ, 1.



ինքն[1], և եթէ՝ Հայր[ա] իմ ընդ իս է. ոչ[բ] եթող զիս միայն, զի ես զհաճոյս Նորա[գ] առնեմ յամենայն ժամ[2]. և՝ Հայր իմ յիս և ես ի Հայր[դ][3]: Էջ իսկ և Հոգին Սուրբ մարմնական տեսակաւ իբր աղաւնի ի[ե] յերկնուստ և մնաց ի վերայ Նորա[4]. զի այսպէս ասէ[զ] Տէրն. Հոգի Տեառն առ իս, սակս որոյ օծ[է] զիս[5]: Վասն այսորիկ և տաճար ասաց զիւր մարմինն՝[ը][6] իբր օծեալ անօրինաբար Սուրբ Հոգւովն[թ] և ունելով յինքեան[ժ] զՀայր և զՀոգին Սուրբ. զի և մեր մարմինքս[ժա] իւրով շնորհաւն կոչեսցի տաճար ի մեզ[ժբ] բնակեցելոյ Հոգւոյն Սրբոյ[ժգ]. Զի անդամք եմք մարմնոյ Նորա[7], և՝ Ի լրմանէ Նորա մեք ամենեքեան առաք[8], և՝ Շինիմք ի վերայ հիման առաքելոց[ժդ] և մարգարէից՝ եղոյ ի ծայր անկիւնոյ[ժե] Յիսուսի Քրիստոսի, ‖ 77v. յորում ամենայն շինուած յաւդակապեալ՝ աճէ ի տաճար սուրբ Տեառն[ժզ][9]:

Այլ Թէպէտ և էր ի Նմայ Հայրն և Սուրբ Հոգին, այլ վկաէ մարգարէին[ժէ], եթէ ոչ էր Աստուած բայց Նորա. քանզի մարմնով[ժը] Աստուած՝ եղև անխառնաբար և անյեղապէս մարդ, և համագոյ[ժթ] Հաւր և Հոգւոյն Սրբոյ, և յորժամ եղև ըստ մեզ: Իսկ մարմնաւորութեան և ծնելութեան[ի] Նորա յեղանակ անճառելի է և անիմանալի[իա] է ամենեցուն, որպէս[իբ] միայն գիտէ ինքն Միածինն Աստուած ընդ իւրում[իգ] Հաւր և Սուրբ Հոգւոյն[իդ]: Քանզի երանելի[իե] աւետարանիչն Յոհաննէս՝ Ի սկզբանն առ Աստուած և Աստուած Բանն էր[իզ], որով ամենայն եղև[10],

ա) Հայրն բ) և ոչ գ) հաճոյս Նմա դ) ի Հաւր ե) չ. զ) ասէր է) որոյ սակս եւած ը) բազին եասաց զիւրն մարմին թ) Սրբովն Հոգւով ժ) Նինքեան ժա) մերքն մարմինք ժբ) բազին ի մեզն ժգ) Սրբոյ Հոգւոյն ժդ) առաքելոցն ժե) անկիւնոյ ինքեան ժզ) ի բազին սուրբ Տերամբ ժէ) Սուրբ Հոգին այդ վկայէ մարգարեին ժը) մնալով ժթ) նոյնագոյ էր ի) մարմնաւորութեանն և ծնելութեանն իա) անճառելի և անպարփմանալի իբ) ամենեցուն է և որպէս իգ) իւրումն իդ) Հոգւոյն Սրբոյ իե) և երանելի իզ) զ՚նիսկզբանն Աստուածն Բան առ Աստուած

1) Յովհ. ԺԴ, 10. 2) Յովհ. Ը, 29. համմտ. ԺԶ, 32. 3) Յովհ. Ժ, 38. ԺԴ, 10, 11. համմտ. ԺԷ, 21. 4) Համմտ. Մատթ. Գ, 16. Ղուկ. Գ, 22 և ն. 5) Ղուկ. Դ, 18. Ես. ԿԱ, 1. 6) Յովհ. Բ, 19. համմտ. 21. 7) Եփ. Ե, 30. 8) Յովհ. Ա, 16. 9) Եփ. Բ, 20—21. 10) Յովհ. Ա, 1. համմտ. 14.

մարմին[ա]|եղեալ քարոզեաց, միալոյն Աստուած, տաղաւարեալ[բ] ի մեզ հաւատացեալսս[գ]։ Քանզի և Նախածին եղեալ ի բազում եղբարս և տեսեալ յառաքելոցն վկայի[1], և այսպէս՝ Փառս ունել[դ] Մէնածնի առ ի Հաւրէ, լի շնորհաւք[ե] և ճշմարտութեամբ. զի ի լրմանէ նորա ամենեքեան առաք զշնորհ Սուրբ[զ] Հոգւոյն[2], և ընդունիչք նորա եղաք։ Եւ երանելիքն իսկ հարքն, որ ի Նիկիայ, զ՛ ի գոյացութենէ Հաւր՝[է] Աստուած յԱստուծոյ ասացին[ը] զնա. վասն մեր և վասն մերոյ փրկութեան ստորիջեալ մարմնացեալ և ախտակրեալ[թ] և յարուցեալ ասացին, որպէս[ժ] աւետարանիչն Յոհաննէս*, ‖ և ոչ ուրեք անուանեցին[ժա] 41r. զՔրիստոս և զխմաստութիւնն, կամ եթե զԱստուած Բանըն[ժբ] բնակեալ ի նմա, այլ զմի և զնոյն համագոյ Հօր ելով և Սուրբ Հոգւոյն ասացին[ժգ]։ Արդ, եթե[ժդ] թուեցաւ ապականչին Աստուածայնոյ Գրեցելոյն[ժե] և սրբոյ կանոնին՝ բնակեաց Աստուծոյն Բանն ի Մարիամայն[ժզ] մարդումն, աստուածազգեստ մարդ էր Քրիստոս[ժէ], և ոչ եղև մարդ Աստուծոյ Բանն՝[ժը] միալոյն Աստուած, այլ ի մարդ բնակեաց։ Քանզի զայս յառաջիկայն[ժթ] յայտնապէս ուսուցանէ, շինելով ի վերայ չարապէս գրիցելոյ հիման[ի] Նեստորի հերձուածոյն։ Ո՞րբ արդեօք բնակէ Քրիստոս յամենայն սուրբս, եթե ոչ Աստուած գոյր և մարմնով. ասէ՝[իա] Նախ քան զլինելն Աբրահամու եղանիլ[իբ][3], և այս ըստ մարմնոյ Որդի ելով Դաւթի[իգ]. քանզի միայնոյ Աստուծոյ յատուկ ի սուրբս բնակիլ։ Իսկ զի՞նչ է աւելի սրբոյն[իդ] մարգարէիցն|երևեցի արդեւք ի Քրիստոսի այլ ասացեալ. ցուցեալ[իե] ահա, զի Մովսէս ընդ ընտրինս[իզ] կարգեալ Աստուծոյ, իսկ Քրիստոս ամենայնի տէր՝ իբր Որդի

* Այս կապակցութիւնից վերցրած յաջորդ հատուածն է, որ ձեռագրում մտել է ս. Աթանասի թղթի մէջ (եր. 57)։

ա) զատ մարմին բ) տաղաւարել գ) ի նա հաւատացեալս դ) ունելով ե) շնորհիւ զ) եառաք զշնորհս Սրբոյ է) հարք, որք ի Նիկէա, զ՛ ի գոյացութենէն Հաւրն ը) չ. թ) և մարմնացեալ և կրեալ ժ) ուսուցին, որպէս և ժա) առւն ա- նուանեցին ժբ) զԱստուածն Բան ժգ) զմին և զնոյն, նոյնագոյ ելով Հաւրն և Սրբոյ Հոգւոյն։ ժդ) եթ՛ որպէս ժե) աստուածայնոց գրեցելոցն ժզ) Բան ի Մարեմայ ժէ) էր մարդ Քրիստոսն ժը) Աստուածոյն Բան ժթ) յառաջիկայսն ի) չարապէս ի նմանէ գրեցելոյ հիմանն իա) ասէ իսկ իբ) Նախ քան զԱբրահամ եղանել եմ ես իգ) Դաւթայ իդ) զի՞նչ աւելի սրբոց իե) և ցուցեալ իզ) Մովսէս ընդ ընդոծինս

[1]) Հմմտ. Հռոմ. Ը, 29. [2]) Յովհ. Ա, 14 և 16. [3]) Յովհ. Ը, 58.



Աստուծոյ և Աստուած. քանզի երկրպագի յամենայն հրեշտակաց[ա], և նովաւ արար զյաւիտեանսն Հայր[բ], եղելոյ նախածնի[գ] ի բազում եղբարս և վկայեցելոյ դարձեալ, եթե միաց բացափայլումն և գծաւորութիւն ենթակացութեան[դ] Հօր[1], և՝ Ի նմա կեամք և շարժիմք և եմք[2]։ Քանզի նման[ե] ասացաւ ի Դաւթայ և ի Պաւղոսէ. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից[զ][3]. քանզի անապաւառութիւն[է] մեղաց մերոց արարեալ պատուական արեամբն[ը] իւրով[4] և փրկանաւորեալ՝ նստաւ ընդ աջմէ Աստուծոյ, Աստուած ելով և[թ] մարմնով։ Եւ զի պատուական արիւնն նորա արիւն Աստուծոյ է, Պաւղոս ուսուցանէ՝ ասելով առ յԵփեսոսէ երիցունսն[ժ]. Հայեցարո՛ւք ձեզ ‖ ինքեանց և ամենայն[ժա] հօտիդ, յորում զձեզ եդ Հոգին Սուրբ[ժբ] վերադիտօղս, հովուել զեկեղեցի[ժգ] Աստուծոյ, 41v. զոր ստացաւ արեամբն[ժդ] իւրով[5]։ Քանզի մի է Որդին[ժե] Աստուծոյ՝ Մենածին[ժզ], իբր Աստուած յԱստուծոյ, և նախածինն էր բազմաց[ժէ] եղբարց[6], ի ձեռն յաղագս մեր կամաւոր իւրոյ թաղմանն, ըստ որում եղև մարդ տնօրինաբար վասն մերոյ[ժը] փրկութեան, գոլով իսկ և այսպէս ըստ բնութեան Աստուած մարմնովն[ժթ]։ Քանզի էակն[ի] ի սկզբանէ է Աստուածն Բան՝ կենդանութիւն[իա], տեսաք, ասեն Փրկչին աշակերտքն, և ձեռք մեր որոնեցին[7]։ Քանզի եղեն ինքնատեսք և սպասաւորք Բանին[8], որպէս ասէ Ղուկաս։ Քանզի աներեւանելին եղև տեսանելի՝ միացեալն յանյեղլի[իբ] բնութեանն. քանզի ինքն է Աստուած մեր և՝ Ի վերայ երկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ[9], և յայտնեցաւ մեզ՝ Աստուած ե|լով Տէր, մարդ եղեալ անխառնաբար, և ոչ անմարմնապէս երևեալ ի վե-

ա) և յամենայն հրեշտակաց Աստուծոյ բ) եարար զյաւիտեանս Հայրն գ) նախածնի դ) ենթակացութեանն ե) Նման զ) յաւիտեան յաւիտենի է) ապաւառութիւն ը) արեամբ թ) չ. ժ) առ յԵփեսոսէ երիցունսն ասելով ժա) ամենայնի ժբ) Հոգին Սուրբ եդ ժգ) զեկեղեցին ժդ) արեամբ ժե) Որդի ժզ) Մէնածին ժէ) նախածին եղբարազմաց ժը) մերոյն ժթ) և մարմնովն ի) զէակն իա) կենդանութեան իբ) միացեալ Նանյեղլի

[1]) Եբր. Ա, 2—3. հմմտ. Գ, 5—6 [2]) Գործք ԺԷ, 28. [3]) Սաղմ. ԽԴ, 7. Եբր. Ա, 8. [4]) Հմմտ. Եփ. 7. [5]) Գործք Ի, 28. [6]) Հմմտ. Հռոմ. Ը, 29. [7]) Ա. Յովհ. Ա, 1. [8]) Ղուկ. Ա, 2. [9]) Բարուք Գ, 38.

րայ երկրի։ Քանզի ուսուցանէր մեզ զինքն եկեալ[ա] իւրով մարմնովն՝ ասելով. Ես եմ հաց կենդանի ի յերկնուստ[բ] իջեալ. եթե ոք կերիցէ յայսմ[գ] հացէ՝ կեցցէ յաւիտեան. և հացն իսկ, զոր ես տաց, մարմին[դ] իմ է՝ յաղագս աշխարհի կենդանութեան[1]։ Եւ դարձեալ. Եթե ոչ ուտիցէք զմարմին Որդւոյ մարդոյ և ըմպիցէք զարիւնն՝[ե] ոչ ունիք կենդանութիւն ի ձեզ. Ուտողն զիմ մարմին և արբօղն զիմ արիւնն[զ] ունի կենդանութիւն յաւիտենական, և ես յարուցից զնա յաւուրն վերջնումն[է][2]։ Եւ սոցուն ի վերայ բերէ. Ուտողն զիս՝ նա[ը] կեցցէ վասն իմ. քանզի ես եմ[թ] հացն յերկնուստ իջեալ և կենդանութեան տուիչ աշխարհի[3]։

Տեսանեմս, զի ամենայն ուրեք մին[ժ] զինքն քարոզէ՝
78r. հանդերձ իւրով մարմնովն, || ինքն գոլով յերկնուստ՝[ժա] իբր Աստուած, և ի Կուսէն՝ իբր որդի մարդոյ։ Ասէ իսկ Յոհաննէս աշակերտն յաղագս տեսացելոյն[ժբ] և որոնացելոյն ի նմանէ Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. Սա է ճշմարիտ[ժգ] Աստուած և կենդանութիւն յաւիտենական[4]։ Եւ Պաւղոս[ժդ] խոստովանեաց զՔրիստոս ի Հրէից[ժե] ըստ մարմնոյ զ' ի վերայ[ժզ] ամենեցուն Աստուած[ժէ], բարեբանեալ յաւիտեանս[5]։ Եւ յայլում թղթի դարձեալ[ժը] ասէ. Ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի[6]։ Եւ այլ դարձեալ բացերևեցուցէ[ժթ] յաղագս ամենայնի կատարօղի զցանկութիւնս մարմնոյ, և ոչ գոլով[ի] գնացելոցն, իբր ոչ ընկալցի զարքայութիւնն[իա] Քրիստոսի Աստուծոյ[իբ][7]։ Իմաստութիւն այսուհետև Աստուծոյ այս է. Քրիստոս ճշմարիտ շինեաց ինքեան տուն հոգեկան զ' ի նայն հաւատացեալս. վասն այսորիկ զկամաւորն ենթակաց[իգ] թա-

ա) ուսուցանէր մի զինքն եալ  բ) կենդանի յերկնուստն  գ) ուտիցէ յայսմանէ  դ) մարմինս  ե) զնորա արիւնն  զ) ըմպօղն զիմ արիւն  է) ի վերջնում աւուր  ը) և նա  թ) ես եմ, ասէ,  ժ) ամենուրեք մի  ժա) և յերկնուստ  ժբ) տեսեցելոյն  ժգ) ճշմարիտն  ժդ) Եւ Պաւղոս նմանապէս զՔրիստոս ունելով նինքեան խաւսօղ՝  ժե) ի հրէից  ժզ) զ' ի վերայն  ժէ) Աստուածն  ժը) դարձեալ թղթի  ժթ) և այդուբ դարձեալ բացերևեցէ  ի) ոգւով գնա  իա) ժառանգութիւն յարքայութեանն  իբ) և Աստուծոյ  իգ) և զկամաւորն ... կացեաց

1) Յովհ. Զ, 51—52.  2) Յովհ. Զ, 54—55.  3) Յովհ. 58—59. հմմտ. 51—52.  4) Ա, Յովհ. Ե, 20.  5) Հռոմ. Թ, 5.  6) Տիտոս Բ, 3.  7) Հմմտ. Գաղ. Ե, 16 և 21.



փումն|անթափն զընութիւնն իբր Աստուած, և զաղքատութեանս մերոյ զամենայն իւր արարեալ, զի մեք փարթամասցուք ի նա հաւատով[ա] և[1] բնակութիւն նորա եղիցուք սրբով մկրտութեամբն՝ յաւէտ փարթամացեալք առ ի նմանէ տուեցելոյ զշնորհս Սուրբ Հոգւոյն[բ]. սակս որոյ ընդ մեզ է մինչև ի սպառումն յաւիտենից[2]։ Աստուած ուրեմն մեր[գ] Քրիստոսն ներբնակեալն և ներճեմեալն ի մեզ[դ], և յերկրի երևեալն[ե] և ընդ մարդկան շրջեցեալն, ի փրկման շնորհօղն առաքելոց Հոգին[զ] Սուրբ, իբր Աստուած, որոյ և ժողովուրդն[է] յատուկ եմք՝[3] ըստ հրեշտակապետին[ը] ձայնին. Զի կոչեսցես զանուն[թ] Նորա Յիսուս. զի ինքն ապրեցուսցէ ]զժողովուրդ իւր ի մեղաց[ժ][4]։

Նորին՝ ի Հակաճառութենէն երրորդ գլխոյն Լեւոնի*։

Եթե մարդ բացակատարեաց[ժա] || հասարակական 78v.
Նարդանդի Կուսին և յետ այնորիկ[ժբ] յարակցեաց Աստուածութիւն Բանի ունակութեան շարայարութեամբ, քանզի այս[ժգ] եղեր քեզ հիմն ամպարշտութեան, որպէս Նեստորի[ժդ] թուի և այլոց քոց վարդապետաց, Յիսուս է մարդ, կարէ ապրիլ յատկութիւն իւրաքանչիւրոյ[ժե] բնութեանն, որպէս դու դանդաղեցեր[ժզ], զի և մի Աստուած[ժէ] Բան մարդ եղեալ անյեղաբար և ըստ ճշմարտութեանն հաւատասցի, և[ժը] յարակցեալն մարդ Աստուած գոլ հաւատասցի[ժթ] ըստ ճշմարտութեանն, ապա ուրեմն և ոչ Աստուած ի Կուսէ ծնիցաւ[ի] ըստ քեզ, այլ մարդ սոսկ. քանզի յատուկ մարդոյ զ' ի կնոջէ ծնանիլն ասանդեցեր[իա]։ Եւ Իբր Աստուածածին Կոյսն քարոզի ընդ երկրաւս[իբ], եթե ոչ Աստուած իցէ ի նմայն մարմնացեալն[իգ], որոյ և՛ նուաստին և՛ կարևորքն, ախտակրութիւնքն և առնելու-

* Տիմոթէոս, եր. 66.

ա) ի ձեռն ի նոյն հաւատոյ  բ) շնորհք Սրբոյ Հոգւոյն  գ) էր  դ) նըմեղ  ե) երևեալ  զ) ի ձեռն փըշմանն շնորհաւղն առաքելոցն զՀոգին  է) ժողովուրդ  ը) հրեշտակապետի  թ) ասէ, զանուն  ժ) ի մեղաց իւրեանց  ժա) բացակատարեցաւ  ժբ) այսորիկ  ժգ) զայս ահա  ժդ) և Նեստորի  ժե) երկաքանչիւրոյ  ժզ) դուք ապանդես  ժէ) Աստուածն  ժը) ըստ ճշմարտութեան հաւատայցի, և մի  ժթ) հաւատայցի  ի) ապ'ուրեմն և ոչ ի կուսէ Աստուած  իա) ծնանիլ  իբ) ընդ երկնաւս  իգ) Աստուած է ծնիցեալն ի սրբոյն Կուսէ մարմնացեալ

1) Հմմտ. Բ. Կորնթ. Ը, 9.  2) Հմմտ. Գաղ. Գ, և 27 և Մատթ. ԻԸ, 20.  3) Հմմտ. Ա. Պետ. Բ, 9.  4) Մատթ. Ա, 21.

թիւնքն[ա] յատուկ իւր ըստ ճշմարտութեանն[բ] է։ Եւ Ո՞րբ իւրաքանչիւր բնութիւնքն[գ], որպէս դու ասացեր, ի մի դէմ կարէ կայակցիլ ըստ մարդկային իմացման[դ]. Յեր մտանելոյ դիմին միւսոյ բնութեանն[ե], ասա ինձ. քանզի ոչ է բնութիւն անդէմ. այլ է յայտ, իբր ըստ ընդընութեան[զ] ի մեզ, որպէս[է] ի վերայ մեր, այսպէս համարիս զԱստուած Բանն՝ ընտանեցեալ[ը] ունակաբար նուաստին և անկարին և մահկանացուին մարդոյ, որպէս[թ] Նեստորի Թուի։ Իսկ[ժ] յորժամ ասէ վասն Սամուէլի[ժա] Աստուած. Ոչ զքեզ անարգեցին, այլ զիս մերժեցին[ժբ], առ յոչ Թագաւորել ի նոսա[1]. Եւ՝ Լսօղն ձեզ ինձ լսէ[2]. Եւ՝ Որչափ[ժգ] արարէք միում այսոցիկ տղայոց, ինձ արարէք[3], ի նոյն իսկ ի[ժէ] Փրկչէն ասացեալ։ Այլ ոչ այսպէս ի վերայ Քրիստոսի խորհիմք, մի լիցի, և ոչ մարդկայնովք մտածութեամբք ըստ[ժդ] Նմայն խոր || հուրդ արտախուզեալ 79r. ձեռնարկեմք[ժե]. այլ հաւատամք, որպէս ընկալաք ի սուրբ և յԱստուածաշունչ Գրեցելոց[ժզ], զի վասն մեր աղքատացաւ կամաւորապէս, բառացի, Աստուած ելով Բանն[ժէ], և եղև մարդ ճշմարտութեամբ[ժը], մնալով անյեղլի իբր Աստուած, և զամենայն կարացեալ։ Եւ յատուկ իւր մարմնացելոյ Աստուածն[ժթ] Բանի հաւատամք զոլ և զաստուածավայելուչս[ի] և զմարդկայինս, սակս ըստ մեզ տնօրէնութեան. քանզի ըստ ըստ բնութեան է[իա] Աստուած և, մնացեալ միշտ Աստուած, եղև ըստ տնօրէնութեանն[իբ] մարդ, սակս մերոյ[իգ] փրկութեան։ Քանզի ոչ ըստ[ժբ] բնութեան ունի Բանն[իդ] Աստուծոյ մարմնաւորութիւն[իե], այլ տնօրէնութեան, գերագընութիւն[իզ] գործեցելոյ Աստուծոյ[իէ] ի հասարակական և ի մարդկային մերմէ բնութենէս կամ գո-

ա) կարևորք, անխտակրութիւնք և աննելութիւնք բ) ճշմարտութեան գ) երկաքանչիւրն բնութիւն դ) էակցիլ ըստ մարդկայինս իմացմունս ե) միոյ բնութեան զ) ընդունակութեան է) որպէս և ը) զԱստուածն Բան ընտանացեալ թ) և անկարի և մահկանացու մարդոյն, զաստուածային բնակութիւն փարթամացելոյն, որպէս և ժ) իբր ժա) յաղագս Սամուէլի ժբ) չ. ժգ) լսէ, և արհամարհիչն զձեզ զիս արհամարհէ. և Զորչափ ժդ) զքա ժե) ձեռնարկեմք մեք ժզ) ի սրբոյ և Աստուածաշունչ Գրեցելոյն ժէ) ելով Աստուծոյն Բան ժը) ըստ ճշմարտութեան ժթ) Աստուծոյն ի) զաստուածավայելուչսն իա) եալ իբ) տնօրէնութեան իգ) մերոյն իդ) Բան իե) մարմնաւորութիւնն իզ) զեր զընութիւնն իէ) յԱստուծոյ

1) Ա. Թագ. Ը, 7. 2) Ղուկ. Ժ, 16. 3) Մատթ. ԻԵ, 40.



յացութենէս։ Սակս որոյ համարան[ա] և համասեռ մեզ ասի ըստ տնօրէնութեան Բանին[բ], կամ զ՚ ի կնոջէն ծնելութեան[գ]. այլ և ոչ բնութիւն և ոչ գոյացութիւն հասարակականի ուրեմն[դ] մարդոյ ասացեալ էր[ե] երբէք, անկրական և համասեռ[զ] մեզ մարմինն Աստուծոյ[է] Բանի. զի ոչ ենթակայակցեաց[ը] ըստ ինքեան. քանզի ի պարառութեան* Բանին ոչ ենթակայութիւն[թ] ընկալաւ, այլ մարմին Քրիստոսի ասի և մարմին Աստուծոյն Բանի, և մարմինն կենագործիչ[ժ] յամենեցունց ուղիղ[ժա] խորհիլ սովորելոցն ասի, և հաւատան[ժբ]։ Քանզի և Քրիստոսի քահանայագործք ի ձեռն աստուածայնոյ[ժգ] խորհրդոցն այսպէս զնա քարոզեալ[ժդ] սովորեցաք ժողովրդոցն, և նոցա յառլսել[ժե] մեզ զամէնն. և ոչ ոք երբէք ասացեալ զնա ի ժամանակի բաշխմանն այնորիկ մարմին հասարակական մարդոյ, կամ բնութիւն մարդոյ, կամ գոյացութիւն մարդոյ. այլ || մարմին Աստուծոյ[ժզ] Բանի կենա- 79v. գործիչ զնա քարոզեմք, ըստ Տեառնն վարդապետութեանն և առաւութեանն[ժէ]։

Դադարեսցին այսուհետև զերկուս[ժը] բնութիւնս մեզ ի սահմանս[ժթ] հաւատոյ քարոզիչքն, իբր օտարացեալք յուղիղ խորհիլ սովորելոցն. որպէս ուսուցին մեզ[ի] ի սկզբանէ ինքնատեսքն և սպասաւորքն եղելոյ[իա] Բանին[1], և յետ նոցայն ուղղափառ[իբ] վարդապետք եկեղեցւոյ եղեալքն[իգ]։

Նորին՝ ընդդէմ Լևոնի, գլուխք ԽԲ. հեծգնելով յօրինեալ**։

ա. Եւ ոչ է ասել զմի Քրիստոս երկուութիւն[իդ].

բ. Եւ ոչ երկախումբ.

* Լուսանցքում՝ յղութեան։

** Տիմոթէոս, եր. 341։

ա) և համարուն և համազոյ բ) ըստ տնաւրէնութեանն Բանի գ) ծնելութենէ դ) ուրումն ե) է զ) անկրականն և համասեռն է) մարմին Աստուծոյն ը) զի և ոչ ենթակացեաց թ) ի պարառութեան Բանին զենթակացութիւնն ժ) մարմին կենագործիչ ժա) ուղիղս ժբ) հաւատանայ ժգ) փոխատուութեան աստուածայնոց ժդ) քարոզել ժե) ժողովրդոց նոցա եւ լսելով ժզ) Աստուծոյն ժէ) ըստ Նորին Տեառն վարդապետութեան և առաուութեան ժը) զերկուսն ժթ) ի սահման ի) զմեզ իա) ինքնատեսք և սպասաւորք եղեալք իբ) ուղղափառք իգ) եկեղեցւոյ եղեալք իդ) երկու բնութիւն

1) Հմմտ. Ղուկ. Ա, 2.

գ. Եւ ոչ երկաբոյս.

դ. Եւ ոչ կրկնապատիկ.

ե. Եւ ոչ երկակերպ.

զ. Եւ ոչ երկաբնութիւն.

|է. Եւ ոչ երկատութիւն[ա] բնութեանց.

ը. Եւ ոչ ներկութիւնս առանձնացեալս.

թ. Եւ ոչ իւրաքանչիւր բնութիւնս.

ժ. Եւ ոչ երկուս գոյացութիւնս.

ժա. Եւ ոչ երկուս ենթակացութիւնս.

ժբ. Եւ ոչ երկուս առանձնաւորութիւնս.

ժգ. Եւ ոչ երկուս տեսակս.

ժդ. Եւ ոչ երկուս յատկութիւնս.

ժե. Եւ ոչ երկուս ներգործութիւնս.

ժզ. Եւ ոչ երկուս զանազանութիւնս.

ժէ. Եւ ոչ երկուս տարբերութիւնս.

ժը. Եւ ոչ երկուս զօրութիւնս.

ժթ. Եւ ոչ երկուս ազդմունս.

ի. Եւ ոչ միւսութիւն յատկական զանհատանելի միութիւնն.

իա. Եւ ոչ այլ և այլ զանպարիմանալի միաւորութիւնն[բ].

իբ. Եւ ոչ այլածին և այլազնեայ Աստուծոյ մարդ սրբեցեալ զՔրիստոս Աստուած։

իգ. Եւ ոչ ապականելի և անկատար զպատուական մարմինն Տեառն.

80r. ‖ իդ. Եւ ոչ հասարակական մարդոյ զմարմինն տէրունեայն։

իե. Եւ ոչ ընակութիւն ասել զմարդեղութիւնն[գ].

իզ. Եւ ոչ տուն կամ տաղաւար զմիաւորեալ իւր Տեառն զմարմինն.

իէ. Եւ ոչ աստուածազգեստ մարդ զմարմնացեալ Բանն Աստուած.

իը. Եւ ոչ ընտանեկան ունակութեամբ.

իթ. Եւ ոչ շարունակութեամբ.

լ. Եւ ոչ ունական արժանաւորութեամբ.

լա. Եւ ոչ յարակցութեամբ.

լբ. Եւ ոչ յարելութեամբ[դ] կամ մերձաւորութեամբ մարդոյ[ե] հասարակականի առ Աստուածն Բան.

ա) երկատուութիւն բ) միաւորութիւն գ) զմարդեղութիւն դ) յարաբերութեամբ ե) մարմնոյ



լգ. Եւ ոչ ըստ արժանաւորութեան որդւութեան[ա].

լդ. Եւ ոչ մարդ բացակատարեալ յարգանդի Կուսին և յետ այսորիկ յարակցեալ Աստուածումն Բանի.

լե. Եւ ոչ մարդածին շնորհագիւտ զԱստուածածինն կոյս.

լզ. Եւ ոչ սոսկ մարդ զխաչեցեալն զՏէրն փառաց.

|լէ. Եւ ոչ այլ ոմն զչարչարեալն.

լը. Եւ ոչ այլ ոմն զոչ չարչարեալն.

լթ. Եւ ոչ այլ ոմն էր մածուցեալ ի փայտին, իսկ այլոյ լեզուն խոստանալոյ ի դրախտն զմուտ աւազակին.

խ. Եւ ոչ դարձեալ, որպէս այսոքիկ ուրանան, զոլ զկենդանարարն զանապական մարմինն[բ] Աստուծոյ Բանին.

խա. Եւ ոչ ըստ մասին դնել Աստուած և մարդ՝ բաժանելով զտնօրինականս և զաստուածային ճահագործութիւնս և սքանչելիսն։

խբ. Քանզի ոչ ուսուցաւ մեզ յԱստուածային Գրութենէ և ոչ ի սուրբ[գ] հարցն՝ այսր բնութեան այս ինչ և այնր բնութեան այն ինչ, այլ միոյ Քրիստոսի ճշմարտի Աստուծոյ զամենայն համանգամայն՝ զաստուածավայելուչս և զտնօրէնութեանն[դ] Բանին առաքաշխեն. քանզի իւր արար զմարդկայինսն։ ‖ 80v. Եւ ոչ որպէս ասացն հայհոյիչն Լեոն, մինչդեռ երկախումբքն ընդ իրեարս[ե] է. ահա երկախումբքն ասել և[զ] ընդ իրեարս[է], և միւս ընդ միւսումն և երկաքանչիւրն և հաւասարութիւնն՝[ը] զերկուս նշանակէ, և ոչ զմի։ Եւ ոչ ոք իւր ասի առգոլ, և ոչ ընդ իրեարս կարի ասել և ի վերայ միայնոյն և անբաժանելի Քրիստոսի. քանզի ոչ ի վերայ դիմի և ոչ ի վերայ միաւորութեան զերկաքանչիւր բնութիւն[թ] ասել կարելի է. քանզի երկաքանչիւր բնութիւն ասացեալ՝ երկուս յայտնապէս դէմս նշանակէ*։ Իսկ միաւորութիւն ոչ ևս կարի ասել իւրկաքանչիւրսն[ժ]. զի ամենայն ի միոյ մի բնութիւն ասի. քանզի անկարելի է համանգամայն պահել զմիաւորութիւն և զերկաքանչիւրսն դիտել. քանզի ոչ ոք մի կամեցեալ ցուցանել՝ ասէ.|Սա, որ զայս ինչ պարտ էր կրել, և նա, զոր վայել էր փառաւորել և երկրպագել. քանզի ի ձեռն՝ սա և սա և զոր և զոր, և զայս անուն և

* Լուսանցքում՝ ի մէջ տո., երկաբնակ.

ա) որդւութեան բ) մարմին գ) ի սրբոց դ) զտնաւրէնութեան ե) ընդ իրեարս զ) չ. է) ընդ իրեարս ը) հաւասարութիւն թ) վասն երկաքանչիւր բնութեան ժ) երկաքանչիւրսն.

զայն անուն, և սոցա և սորա և նորա, և այսորիկ և այնորիկ, և ոմն և ոմն, և միւս միւսում[ա] յարակցեալ։ Ահա երկու յօդիւք և երկակս նշանակեալ զեկուցանէ մեզ Լևոն ըստ սովորութեան իւրոյ հայհոյութեանն։

## Ի Թղթոյն Զենոնի բարեպաշտ եւ ուղղափառ թագաւորի, որ կոչի Հենատիկոն, այսինքն միաւորիչ, որ է յետ Լ. ամի Քաղկեդոնի ժողովոյն*։

Ցաղագս այսորիկ[բ] ծանուցանել ձեզ փութացաք, զի ամենայն ուրեք ուղղափառ և սուրբ եկեղեցւոյ միաւորութիւն[գ] եղիցի, և[դ] այլ հաւատ, կամ ուսումն, կամ
81r. սահման հաւատոյ կամ հաւատ, քան զասացեալսն[ե] || յառաջագոյն ի սուրբ հարցն ՅԺԸ. եցն[զ], զոր հաստատեցին և[է] ՃԾ. սուրբ հարքն ժողովեալք ի Կոստանդնուպօլիս[ը], ոչ ունէաք և ոչ ունիմք, և ոչ կալցուք և ոչ թե ունիցի ոք գիտեմք[թ], և որ[ժ] ունիցի ոք՝ օտար զնա ի մէնջ համարիմք, և այսու միայն քաջալերիմք։ Յառաջագոյն[ժա] ասացաք և այսու հա(մարիմք) կենդանի պահել զմեր թագաւորութիւնս և միաբան զամենայն ժողովուրդս, որ փրկական մկրտութեանն արժանի[ժբ] եղեն՝ զմի և զնոյն ընկալեալ, նովին լուսաւորեալ, զորոյ և զհետ չոգան ամենայն սուրբ հարքն, մանաւանդ որ[ժգ] յԵփեսոս ժողովեցան, որք լուծին[ժդ] և ի բաց մերժեցին[ժե] զանօրէնն Նստոր[ժզ] և որք յետ նորայն[ժէ] զնորայն խորհէին և ունէին[ժը]։ Զոր և մեք[ժթ] զՆեստորիոս՝ միանգամայն հակառակորդի մը|տածել, և որք զնորայն[ի] խորհին և մտաբերեն՝[իա] նզովեմք, ընկալեալք զԲԺ. գլուխն[իբ], զասացեալսն յաստուածասիրէն Կիւրղէ, այն որ եղև գլուխ եպիսկոպոսացն և սրբոյ[իգ] եկեղեցւոյն Աղեքսանդրեայ[իդ]։

---

* Տես. Գիրք Թղթոց. Թիֆլիս, 1901. եր. 270.

ա) և միւսումն բ) այսոցիկ գ) միաբանութիւն դ) բայց ե) հաւատոց, քան զասացեալս զ) յառաջագոյն սուրբ հաւատն ՅԺԸ. սուրբ հարանցն է) չ. ը) ժողովեալք յառաջագոյն յիշեցեալքն, որ ի Կոստանդինուպօլիս թ) և գիտեմք ժ) թէ ժա) որպէս յառաջագոյն ժբ) արժանաւորք ժգ) նովին լուսաւորին մանաւանդ որք ժդ) ժողովեցան։ Որոց և զհետ եւս չոգան ամենայն սուրբ հարքն, որք լուծին ժե) հերքեցին ժզ) զանօրէն Նեստորիոս ժէ) նորա ժը) խորհին և ունին ժթ) մեք ի) միանգամայն ընդ Եւտիքեայ հակառակս երկոցուն մտածեալս, և որք զնոցայն իա) մտածեն և կամ մտածեսցեն իբ) գլուխսն իգ) եպիսկոպոսաց սրբոյ իդ) Աղեքսանդրացւոց



Քանզի հաւատամք, եթե Միածինն Որդի[ա] Աստուծոյ Աստուած էր[բ] ճշմարտութեամբ՝ այն, որ մարմնացաւ, Տէր մեր Յիսուս Քրիստոս. այն, որ ի բնութենէ Հօր յաստուածութեանն[գ] իւրում, և ի բնութենէ մերմէ եղև մարդկութիւնն[դ] իւր. այն, որ էջն[ե] և մարմնացաւ ի Հոգւոյն Սրբոյ և ի Կուսէն Մարիամայ Աստուածածնէն[զ]։ Քանզի մի է Որդի, և ոչ երկու խոստովանիմք. զի մի է Միածին Որդին Աստուծոյ, և նորա են սքանչելագործութիւնքն[է] և չարչարանքն, զոր կամաւորութեամբ կրեաց մարմնով իւրով։ Այլ զայնոսիկ, որ բաժանենն և[ը] փոփոխելի ասեն կամ այլայլելի՝ || զայնպիսիսն ոչ ընդունիմք. 81v.
քանզի ճշմարիտ մարմնաւորութիւնն՝[թ] անապական և առանց մեղաց, որ յԱստուածածնէն եղև, յաւելուած Որդւոյ ոչ արար. այլ[ժ] Երրորդութիւնն Երրորդութիւն՝ մինչ կամեցաւն[ժա] և մարդացաւ մի յԵրրորդութենէն, Բանն Աստուած։

Արդ,* գիտացէք այսուհետև, զի ոչ սուրբ եկեղեցիք, որ են յամենայն կողմանս, և ոչ այնք, որ պաշտենն զնոսա՝ աստուածասէր քահանայք և թագաւորութիւնս մեր, այլ հաւատ կամ այլ սահման հաւատոյ, բայց այն, որ վերագոյն ասացաւ, ոչ ընկալաք և ոչ ընդունիմք։ Այսուհետև եկայք ամենեքեան անխտրութեամբ ի միաբանութիւն հաւատոյ։ Այլ զայդ ամենայն, զոր գրեցաքդ առ ձեզ, ոչ եթե այնք որ զհաւատ նորոգեմք, այլ որպէս զայսոսիկ, որ խնդրուածս մա|տուցանեմք։ Բայց զայնոսիկ, որ այլ ինչ խորհեցան և կամ խորհիցեն այժմ և կամ երբ և իցէ, կամ ի Քաղկեդոնի, և կամ յոր և իցէ յայլ ժողով՝ զնոսա նզովեմք, մանաւանդ զայնոսիկ, որ կոչեցան Նեստորիանոսք և Եւտիքոսք, և որք զնոցայն խորհեցան կամ խորհին։

---

* Այս հատուածը մինչև վերջ պակասում է «Գիրք Թղթոց»ում։

ա) Միածին Որդին բ) է գ) յաստուածութեան դ) մարդկութիւն ե) էջ զ) մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ Աստուածածնէ Հոգւովն Սրբով է) նորա է սքանչելագործ զօրութիւնքն ը) և կամ թ) մարմնաւորութիւն ժ) այլ եկաց մնաց ժա) կամեցաւ

**Ի թղթոյն Անաստասայ բարեպաշտ թագաւորի ընդդէմ հերձուածողաց, որ էր յետ (խա?)ամի Քաղկեդոնի ժողովոյն։***

Այ է սահման հաւատոյ, զոր ընդունիմք՝ ՅԺԸ. սրբոց հարցն[ա], որք ի Նիկիա ժողովեցան՝ այն, որ ցուցանէ, եթէ[բ] մի է ի Սրբոյ[գ] Երրորդութենէն Տէր[դ] մեր Յիսուս Քրիստոս՝ Բանն Աստուծոյ, այն որ մարմնացաւ[ե] ի սուրբ և յԱստուածածին Կուսէն Մարիամայ, և մարդացաւ[զ]։ **82r.** Զնոյն սահման կա‖լան ՃԾ. սուրբ հարքն[է], որ ի Կոստանդնուպոլիս ժողովեցան վասն Սրբոյ Հոգւոյն։ Ըստ նմին և երանելի ժողովն, որ յԵփեսոս ժողովեցան և նզովեցին զՆեստոր[ը] հերձուածող և զամենայն, որ ըստ նմա խորհին և հաւատան։ Որպէս[թ] թուղթն, որ կոչի Հենատիկոն՝ Զենոնի ուղղափառ թագաւորի, նոյնպէս և թուղթն Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի՝ այն, որ ցուցանէ[ժ] այսպէս, յորում նզովէ զտոմարն Լևոնի և ոյք[ժա] անցին ըստ նոյն սահման և երկուս բնութիւնս զկնի միաւորութեանն սահմանեցին ի վերայ միոյն[ժբ] Քրիստոսի։ Մեք[ժգ], որպէս ընկալաք ի սուրբ հարցն՝[ժդ] ոչ ասեմք երկուս բնութիւնս, այլ մի[ժե] բնութիւն, որ մարմնացաւ՝ զԱստուած[ժզ] Բանն խոստովանիմք, և նզովեմք|զժողովն Քաղկեդոնի. ընդ[ժէ] նմին և զԼևոն և զտոմարն նորին[ժը] և զայնոսիկ, որք ասեն, զՔրիստոս երկուս որդիս՝ մինն, որ յառաջ քան զժամանակս, և միւսն, որ ի վերջինս ժամանակի[ժթ]։ Եւ որք ասեն, զկնի խոստովանելոյն միաւորութիւն՝[ի] երկուս բնութիւնս և երկուս դէմս, կամ[իա] երկուս օրինակս, կամ[իա] երկուս յատկութիւնս և[իբ] զանազանութիւնս, կամ[իգ] երկաքանչիւր բնութեան գործ՝[իդ] խոտեմք և նզովեմք. վասն զի ընդդէմ երանելւոյն Կիւրղի ԲԺ. գլխոցն գտանի[իե]։

* Տես. Գիրք Թղթոց, եր. 277.

ա) հաւատոյ, զոր ունիմք, ՅԺԸ. սուրբ հարցն բ) մեզ, թէ գ) մի ի սուրբ դ) էր Տէր ե) մարմնացաւն զ) մարդ եղև է) Զայս սահման ընկալան և սուրբ հարքն ՃԾ.-քն ը) զՆեստորիոս թ) որպէս և ժ) Աղեքսանդրի՝ որ ցուցանէն ժա) զտումարն Լևոնի և զժողովն Քաղկեդովնի, որ ժբ) վասն ժգ) Եւ մեք ժդ) ճշմարիտ հարցն ժե) բայց յերկուց մի ժզ) Աստուածն ժէ) և ընդ ժը) զտումարն նորա ժթ) որ երկուս Քրիստոս եւ երկուս որդիս ասեն, մի յառաջ քան զյաւիտեանս և միւս՝ որ ի վերջին ժամանակս ի) խոստովանելոյ զմիաւորութիւնն իա) և իբ) և երկուս իգ) և կամ իդ) զգործս իե) գտանին



*Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ սուրբ վարդապետին Մեսրոպայ՝ ի թղթոյն, որ առ երանելին Պրոկղ պատասխանի։**

Այլ մեք հաւատամք ի մի Աստուած՝ Հայր, Արարիչ[ա] երկ‖նից և երկրի՝ երևելեաց և աներևութից[բ]։ **82v.** Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ ի Միածին Որդին Աստուծոյ, այսինքն՝[գ] էութիւն յէութենէ, էութիւն ծնեալ, |որով ամենայն եղև. Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ՝ ծնեալ, և ոչ արարեալ, խնակից Հաւր. որ վասն մեր[դ] էջ և մարմնացաւ, յանձն առ զչարչարանս, թաղեցաւ[ե], յարեաւ յերրորդ[զ] աւուր, ել[է] յերկինս և գայ դատել զկենդանիս և զմեռեալս։ Հաւատամք և ի Սուրբ Հոգին[ը]։ Իսկ որք ասեն՝ էր երբեմն, զի ոչ էր[թ], և մինչև ծնեալ էր՝ չէր, և ասեն՝ ի չէութենէ եղև և յայլմէ իմեմնէ և զաւրութենէ, և կամ եղծանելով և փոփոխելով, զայնպիսիսն նզովեմք։ Զի միշտ Հայր, միշտ Որդի, միշտ Հոգին Սուրբ[ժ]։ Հոգի Աստուծոյ Հոգի Սուրբ՝ կատարեալ,|բարեխաւս, անստեղծ, անեղծ, որ խաւսեցաւ[ժա] օրինաւք և մարգարէիւք և առաքելովք. որ էջ Յորդանան[ժբ]։ Եւ վասն մարմնազգեցութեան Որդւոյն[ժգ] այսպէս հաւատամք, զի էառ[ժդ] յանձն լինել մարդ կատարեալ՝ յԱստուածածին Կուսէն[ե] Մարիամայ, Սրբով Հոգւով՝ առեալ շունչ և մարմին, ճշմարտիւ և ոչ կարծեաւք[ժե]։ Զի այսպէս եկն ի կատարել[ժզ] փրկել զմեր մարդկութիւնս, և ճշմարտիւ չարչարեցաւ. ոչ թէ ինքն պարտ էր չարչարանաց[ժէ], այլ վասն մեր յանձն էառ[ժը] զչարչարանս, և յերրորդ[ժթ] աւուր յարեաւ, և յերկինս համբարձաւ և ընդ աջմէ Հաւր նստաւ, և գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս։

* Տես. Գիրք Թղթոց, եր. 10.

ա) ամենակալ արարիչ բ) երևելի և աներևելի արարածոց գ) այսինքն է դ) մեր մարդկութեան ե) չ. զ) յերիր է) և ել ը) Եւ ի Սուրբ Հոգին հաւատամք թ) զի չէր ժ) Սուրբ Հոգին ժա) խաւսեցաւ ժբ) ի Յորդանան ժգ) Որդւոյ ժդ) առ ժե) կեղծեաւք ժզ) այսպէս եւ կատարեաց ժէ) չարչարանաց, զի ազատ է աստուածութիւնն ի չարչարանաց ժը) եառ յանձն ժթ) խաչեցաւ եւ թաղեցաւ եւ յերեք

*Ի Թղթոյն Եզնկայ Կողբացոյ Թարգմանչի, զոր գրեաց ի Կոստանդնուպոլիս՝ առ երանելին Մաշդոց* 88r. *վարդապետ,| յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի, յորում լուծին ի պատուոյ զՆստոր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս։**

Եւ վասն հաստատութեան եկեղեցեայց[ա], զոր կարծեաց յարուցանել[բ] հողմ մոլորութեան և[գ] շարժել՝ սուրբ աղօթիւք ձեր[դ] դադարեաց, և ի միաբանութիւն եկին ամենայն եպիսկոպոսք Հոռոմոց՝ ունել հաստատուն զառաջին երեքհարիւրոցն հաւատ[ե], և նզովեցին, զի մի ոք իշխեսցէ նորած[զ] ինչ և աւտարօտի հաւատալ[է], այլ ի սորին[ը] վերայ շինել և զնոյն ուսուցանել. խոստովանել զՔրիստոս Աստուած ճշմարիտ և[գ] Որդի Աստուծոյ և Միածին՝ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս[թ] և Տէր արարիչ ամենայն արարածոց[ժ], և զնոյն Բանն Աստուած ի վաղջան[ժա] ժամանակաց զգեցեալ մարմին և[գ] եղեալ մարդ՝[ժբ] առանց շր|ջելոյ և անկանելոյ յիւր աստուածական բնութենէն[ժգ], և ծնեալ ի սուրբ Կուսէն, Աստուած՝ ըստ մարմնաւոր ծննդեանն մարդ կատարեալ, և կոչի և է կոյսն Տիրածին և Աստուածածին, և ծնեալն Աստուած և մարդ կատարեալ[ժդ]։

*Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի՝ ի հակաճառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց։*

Քանզի ՅԺԸ ի Նիկիայ գումարեալք ի քակտումն արիանոսացն ոչ կալան փոյթ երկու բնութեանց առնել ընտրութիւն զանազանութեան, այլ ըստ վերայ վերաւորեցելոց բարբառեալ՝ վաղվաղակի կարելով զարմատ ժահահոտ փտութեանն, մի բնութիւն ասացին, նպատակ 88v. ուղղափառութեան կանգնելով ‖ յաղթութիւն յերեսս

* Հմմտ. Գիրք Թղթոց, էջ. 1. Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ սուրբն Սահակ հայրապետ Հայոց և առ սուրբն Մաշդոց։

ա) եկեղեցեայ բ) յանկարծ յարոյց գ) չ. դ) աղաւթից քոց տեառն սրբութեան ե) հաւատոյ զ) Նորածին է) հաւատալ ը) ի Նորին թ) քան զամենայն արարածս ժ) ամենայնի ժա) ի վախճան ժբ) վասն մեր մարդ ժգ) անկանելոյ և խախտելոյ յիւրոյ աստուածային ինքնութենէն ժդ) եւ կատարեալն Աստուած առէ մարդ կատարեալ։



լրբենի լկտողաց, որք ուրացան զՈրդի յէութենէ Հօր՝ յապականութիւն և յաղքատութիւն իջուցին տաժանեալք։ է նոյն բնութիւն Հօր, որով ամենայն եղև, և այս առաւել իմն դիպողագոյն, զի բնութիւն Բանին աստուածութիւնն է, և զի մի է բնութիւն Բանին՝ դաւանելի է։ Քանզի չէ ոք ի Սուրբ Երրորդութեանն յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ. մինն նետիւ երեքայրեան սլաքաւորաւ սպանին զԹշնամին արդարութեան՝ աւետարանելով զյաղթութիւնն հանդերձ հրաշալի տնաւրէնութեանն կարիւք։ Իջեալ, ասէ, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ՝ ի սուրբ Կուսէն։ Դարձեալ աստանօր զիջանելն ոմանք կերպարանօք,|և ոչ ճշմարտութեամբ՝ վարկանին, զի տեղաց ի տեղիս փաստաբանելով փոփոխումն, հաճոյութեամբ իմն և կամօք՝ զխոնարհմանն տայ զօրինակ, և ոչ գիտեն, թե որով զայլսն ասիցեն, ինքեանք մարմին նովիմբ, յայտ առնելով, եթե միով վայրի բովանդակին։ Եւ վասն այնորիկ զայլսն դատապարտեն՝ հայհոյիչս գոլով ամենայնի, և զայն ոչ իմանան, թե տարրական նիւթեղինաց այնպիսի կիրք ուրեմն լինել և ի հեռաձիգս ակամաւ միայն մատչիլ և հաճոյութիւն ունիլ անարդիւնաւոր, զոր ոչ բաւէ բոլորն աւարտել։ Իսկ անբովանդակելի էութեանն ո՞ կարէ առնել որոշումն վայրաւք զանազանելովք.* ‖ յայտ է, եթէ ամբարիշտնի։ 98r. Ո՞չ ապաքէն զերկինս և զերկիր ես լնում[1], ասէ Տէր. և՝ Երկինք աթոռ իմ են և երկիր պատուանդան է ոտից իմոց[2]։ Եւ հեզն Դաւիթ բողոք բարձեալ յոյժ յանդըգնագոյն գոչէ. Մի՛ մոլորիք, ասէ, Աստուած մեր յերկինս և յերկրի և ի ծովս և յամենայն խորս[3]. այս իսկ է Ամենակալն։ Ապա, եթե անկարելի թուի գոլ բնութեամբ մարմնանալն և ընդհանուր լինելն՝ գիտասցէ, զի և հաճութիւնն ի հաճելումն աւարտի, ոչ ևս ուրեք բաւելով։

Բայց ճշմարիտ քրիստոնեին ոչ է պարտ ընդ այնպիսի խոհերս դեգերելով թաւալել, քանզի մահ գործէ, և որք ժպրհեցան քննել զ|խորս Աստուծոյ՝ իսկապէս շահեցան զատակումն. այլ հաւատալ մարմնացելումն Բանին

* Այստեղ և ձեռագրի թերթերը խառնուած են։

1) Երեմ. ԻԳ, 24. 2) Ես. ԿԶ, 1. Գործք Է, 49. 3) Հմմտ. Սաղմ. ՃԼԴ, 6. և ՃԾԹ, 3.

Աստուծոյ և յաւէտ զարմացմամբ փառաւորել՝ որ զծառայի կերպարանս առնելով երևեցաւ, և է ի վեր քան զհրեշտակս խոնարհութիւնն։ Այլ Բանն յաշխարհի էր, որպէս և աւետարանագիրն ասէ, և աշխարհս նովաւ եղև[1], և որպէս էրն՝ է միշտ ծածկաբեան, միայն յայտնի էակն. աւետաւոր պարգևացն և մարգարէութեանցն յայտնիս զհետ հրթիցուք, և մի բնութեամբք դուպար* եղեալ, զանճառելին բացասելով՝ չարաչար օտիցիմք։

Իսկ արդ, թե չէին մոլեգնեալ դասք հերձուածողացն, որք յառաքելոցն ընկալան զքարոզութիւնն, ապաեւ չէին
98v. քրիստոնեայք. ‖ քանզի բնութեանցն անուն և յականջալուրս անգամ ձեր լեալ, այլ նորին հակառակն. Կեանքն յայտնեցան, ասէ, և տեսաք և վկայեմք. քանզի որ էրն առ Հօր և երևեցաւ մեզ[2]։ Ո՞վ աքանչելի նպատակին, որ առաւել իմն ուշիմագոյնս տայ ընթանալ ի կէտ կոչման նորա. զի որք զմարմնոյն տեսանէին զկերպարանս, որպէս էր իսկ ճշմարիտ եղեալն մարդ, որդի Յովսեփու կոչէին, այլ և Սամարացի և հայհոյիչ[3]. իսկ զիմանալին ունօղք ղհոգևորական աչս՝ Լոյս փառաց և նկարագիր էութեանն անսկզբնականին Հօր[4] խոստովանէին. քանզի լուան ի կենսատու Փրկչէն և հաւատացին, եթե՝ Ես ի Հայր և Հայր յիս է[5]։|Ապա զի՞նչ ասէ բնութեանցն խնդրօղ, որ քրիստոնեայ զինքն անուանէ. զո՞ր բնութեան տեսին աշակերտքն՝ զաստուածութիւնն, եթե զմարմնոյն. յայտ է, զի զմարմինն տեսին. այլ թէպէտ բիւր անգամ կամեցան ուրանալ, գիրն բողոք բարձեալ աղաղակէ. Շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, և զիս տեսանէք, զի ունիմ[6]. զոր էառն ի զաւակէ Դաւթի։ Քանզի հայէին ի նա, որպէս ի մի ոք ի մարդկանէ. այլ զի Բանն միացեալ էր ի մարմնի, բառնա ի բաց զխտրումն անջրպետութեանն. քանզի ոչ ասաց՝ որ տեսեն զաստուածութիւն բնութեանն կամ զմարմնոյն, այլ անորոշաբար ասէ՝ զիս։ Եւ դարձեալ ասէ եթե՝ Ո՞չ ոք
99r. յերկինս, եթե ոչ ‖ էջն յերկնից՝ Որդի մարդոյ, որ էրն

* Պէտք է կարդալ հարկաւ՝ գուպար։

ա) 1) Յովհ. Ա, 10. 2) Ա. Յովհ. Ա, 2. 3) Համա. Յովհ. Ձ. 42. Ը, 48. Ժ, 36 ևայլն. 4) Եբր. Ա, 3. 5) Յովհ. ԺԴ, 11 ևայլն. 6) Ղուկ. ԻԴ, 39։



յերկինս[1]. ո՞ւր էրն Որդի Մարդոյ յերկինս, զորմէ իջանել ասէ, աղէ՞ ցուցցեն. զի թե երկնաւոր էր մարմինն, ոչ յորջորջէր Որդի Մարդոյ, և եթե յերկրէ և ի զաւակէ Աբրահամու, որպէս և խոստովանիմք իսկ պանծալով՝ զիա՞րդ էր յերկինս. եթե ուղղակի իմասցուք՝ յաղագս անբաժանելի միաւորութեանն։ Արդ, եթե ստուգիւ հաւատամք ասացելումն Փրկչին և Տեառն՝ ի բաց թողցուք զխտրութեանն բաժանմունս, զի մի՛ նմանել լիցուք փարիսեցւոցն, եթե՝ Դու մարդ ես, և զանձն քո Աստուած առնես[2]։

*Երանելույն Բաբգենի Հայոց կաթուղիկոսի, որ էր յաւուրս Անաստասայ ուղղափառ թագաւորի՝ ի թղթույն առաջնոյ, զոր գրեաց|ի Պարսս ուղղափառն, հանդերձ աթոռակցաւքն ի զաւառէ եպիսկոպոսօք.**

Արդ, հարկաւոր է մեզ զբղխումն սրբոյ հաւատոցն, զոր երանելի հարքն մեր, որ ի Նիկիայ ժողովեցանն՝[բ] ՅԺԸ. եպիսկոպոսացն ընկալեալ՝ բարեպաշտութեամբ[գ] և առանց գայթակղութեան զսոյն և աւետարանել. ընդ որս պատահեաց ըստ աստուածային շնորհին[դ] ի սուրբ ժողովին երանելին հայրապետն մեր Ռստակէս[ե] և ընկալեալ ի սուրբ հարցն մեր[զ] բոլորովիմբ զհաւատն ճշմարտութեանն՝[է] եբեր յաշխարհս[ը]։ Զոր առեալ ի նմանէ[թ] Հայոց՝ նովին[ժ] հաւատովք լուսաւորեցաք և յաջորդեցաք ի նմանէ[ժա] մինչև ցայժմ ձեռնադրութիւն քահանայութեան աշխարհի[ժբ] Հայոց, և կամք հաստատուն ի նմին, զոր ընկալաքն և ասեմք[ժգ].

Հաւատամք[ժդ] ի մի Աստուած, Հայր ‖ ամենակալ, 99v.
ամենեցուն երևելեաց և աներևութից արարիչ։ Եւ ի[զ] մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ, ծնեալ ի Հաւրէ, Միածին, այսինքն[ժե] ի գոյութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ և[զ] լոյս ի՛լուսոյ, Աստուած՝[ժզ] յԱստուծոյ ճըշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ. այլ[զ] նոյն էութիւն Հաւր,

* Գիրք Թղթոց, եր. 44.

ա) հաւատոյն բ) հարցն ի Նիկիա ժողովեցելոցն գ) պարկեշտութեամբ դ) շնորհաց ե) Առիստակէս զ) չ. է) ճըշմարտութեան ը) յաշխարհս ճշմարտութեամբ։ թ) ի նմանէն ժ) և նովին ժա) եւ ի նմանէն յաջորդեալ ժբ) քահանայապետութեան աշխարհիս ժգ) չ. զոր ընկալաքն եւ ասեմք ժդ) եւ այսպէս. հաւատամք ժե) այսինքն է ժզ) Աստուած ճշմարիտ

1) Յովհ. Գ, 13. 2) Յովհ. Ժ, 33.

որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի։ Որ վասն մեր մարդկան, որ և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ, մարմնացաւ և մարդացաւ ի սուրբ[ա] Կուսէն Մարիամու, չարչարեցաւ վասն մերոյ փրկութեան[բ], մեռաւ և յերրորդ աւուր յարեաւ. ել յերկինս և[գ] նստաւ ընդ աջմէ Հաւր, և[գ] գալոց է[դ] դատել զկենդանիս և զմեռեալս։ Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն[ե]։ Եւ վասն այնոցիկ, որք ասեն՝[զ] էր երբեմն, զի ոչ էր[է], և մինչև ծնեալն էր՝ ոչ էր[է], և թէ[ը] յոչնչէ եղև, կամ թէ յայլմէ էութենէ[թ] կամ ի գոյութենէ համարին, թէ իցէ, կամ փոփոխելի, կամ անցանելի, զայնպիսիս նզովէ[ժ] կաթուղիկէ և[գ] առաքելական եկեղեցի։

Այսպէս հաւատամք, որպէս մկրտեցաքն[ժա] և սուրբ հարքն[ժբ] կանոնեցին. և այլ սահման արտաքոյ կանոնին[ժգ] ոչ է, և ոչ ընկալաք և ոչ ընդունիմք։ Քանզի և վարդապետն եկեղեցոյ Պաւղոս[ժդ] յոյժ զգուշացուցանէ զմեզ յերկրաւոր իմաստից մարդկանէ[ժե]։ Բազում են վկայութիւն[ժզ] սուրբ Գրոց, յոլովագոյն և սուրբ[ժէ] հարց ուղղափառաց վարդապետութիւնք լուսափայլք[ժը], որով լուսաւորեալքն[ժթ] լուսաւորին և զգենու մխիթարութիւնն վհատեալք[ի] հոգւով՝ ի սէր և յոյս և հաւատ[իա] սրբոյ Երրորդութեանն հիմնաւորեալք[իբ], որ կենդանութիւն է և պաշտպանութիւն հոգւոյ և մարմնոյ։

85r. Զայս հաւատ Հոռոմք || և Հայք և Վիրք և Աղուանք ունին[իգ], և փախչիմք* ուրացեալ ի Քաղկեդոնէ։ Զի Քաղկեդոնի սուտութիւնն զՆեստորի և զնոցունց նմանեացն[իդ], զոր գիտեմք կեղծաւորութեամբ փախուցեալք[իե] ի հեթանոսութենէ և ի հրէական մոլորութենէ. զի[գ] և զնոյն

* «եւ փոխչիմք» ու շարունակութիւնը Բաբգէն կաթուղիկոսի երկրորդ թղթից է, անմիջապէս կցուած Ա. թղթի այս նախորդ հատուածին. տես. Գիրք Թղթոց, եր. 19։

ա) էջ եւ մարմնացաւ  բ) վասն մեզաց մերոց  գ) չ.  դ) գալ  ե) չ. Հաւատամք—եւ ի կատարեալն։  զ) ոյք ասեն  է) չէր  ը) զի  թ) կամ իբրեւ յայլմէ էութենէ  ժ) անցանելի զՈրդին Աստուծոյ, զնոսա նզովէ  ժա) մկրտեցաք  ժբ) հարքն  ժգ) այսօրիկ կանոն  ժդ) երկնային Սաւղոս  ժե) իմաստից մարդկան եւ ի մոլար խաբէութենէ  ժզ) վկայութիւնք  ժէ) սրբոց  ժը) լուսափայլ վարդապետութիւնք  ժթ) լուսաւորեալք  ի) զգենուն մխիթարութիւն վհատեալքն  իա) ի յոյս եւ ի հաւատս  իբ) հիմնաւորեալ  իգ) ունիմք  իդ) ուրացեալ զ' ի Քաղկեդոնէին սուտութիւն Նեստորի եւ այլոցն նմանից  իե) փախուցեալ



խոստովանին հեթանոսութիւնն[ա], միանգամայն և հրէութիւնն՝[բ] պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց, որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրն[գ], որով սա հիմնեցաւ ի Հոգւոյն Սրբոյ[դ] մարգարէիւն՝ զհատուցումն[ե] նոցին։ Քանզի* ոչ խոստովանելով զՈրդի՝ ուրանան[զ] զոր ասաց ուրանալ և ինքն Քրիստոս զնոսա առաջի Հօրն[է]. պատուիրեաց[ը] և մեզ հրաժարել ամենեիմբ[թ] ի նոցանէ և ատել, մինչև բանիւ անգամ ոչ տալ ողջոյն[ժ] նոցա։|Արդ, զի ևս[ժա] յայտնագոյն եղիցի խոստովանութիւն մերոյ բանի[ժբ], որպէս հաւատամք՝ ի Հայր[ժգ] և յՈրդի և ի Հոգին Սուրբ, յորոց վերայ շինեալ և հաստատեալ է սուրբ եկեղեցի.

Խոստովանիմք զՀայր և զՈրդին՝ ծնեալ[ժդ] ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, անսկիզբն, մարմնացեալ ի սրբոյ Կուսէն Մարիամայ՝ ի փրկութիւն արարածոց, անքննելի, անպատմ ծննդեան օրինակաւ՝ կոյս մնացեալ մայրն[ժե]. և ի Սուրբ Հոգին՝ էակից և փառակից Հօր Որդոյն[ժզ]. Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած զՀոգին Սուրբ, յոր մկրտիմք[ժէ], ոչ և[ժը] հրէաբար պակասեցուցանեմք, և ոչ նուազ և առաւել քան զմիմեանս, այլ երկրպագեմք զերիսն ի միութեան՝ փառաւորելով և զՄիոյն յԵրրորդութեանն[ժթ]։

## Երանելւոյն Ներսիսի Հայոց կաթուղ || իկոսի՝ ի պատասխանոյ թղթոյն, որ ի Միջագետս Ասորոց. որով ձեռնադրեցաւ Աբդիշոյ եպիսկոպոս Ասորոց ի Ներսիսէ Հայոց կաթուղիկոսէ։** 85v. 52

Խոստովանիմք և հաւատամք իսկապէս զմարդանալն կատարելապէս ամենայնիւ՝ զկաթնաբուծն[ի] լինելն,

*) Սորանից առաջ մի ընդարձակ հատուած բաց է թողած և այսպէս շարունակւում է եր. 50։

**) Տես. Գիրք Թղթոց, եր. 56.

ա) զհեթանոսութիւն  բ) զհրէութիւն  գ) զկոյրս  դ) որով սահմանեցաւ ի Սրբոյ Հոգւոյն  ե) հատուցումն  զ) ուրանան և զՀայր  է) Հաւր  ը) և պատուիրեաց  թ) ամենեւին  ժ) անգամ ողջոյն  ժա) և  ժբ) խոստովանութեանս մերոյ բան  ժգ) մեք Հայք ի Հայր  ժդ) զՈրդի զծնեալն  ժե) մնալով մայրն  ժզ) Հոգին, յանեղն և ի կատարեալն  ժէ) զՍուրբ Հոգի, յորում մկրտեցաքն, և մկրտիմք  ժը) չ.  ժթ) զմին յԵրրորդութեան  ի) զկաթնաբոյծ

զանանիլն, զչարչարանս[ա] ի վերայ սրբոյ խաչին, զմահն, զԹաղումն, զերեքօրեա յարութիւնն, որպէս կամեցաւ աստուածաբար. նովին մարմնովն զփառօք համբարձումն[բ], զնստիլն ընդ աջմէ Հօր. յաղագս ամենայն տիեզերաց փրկութիւնն, զգալոցն[գ] նովին մարմնով և փառօք՝ դատել զկենդանիս և զմեռեալս, յաւիտենական Թագաւորութեամբ։ Եւ նովին հաւատով և յուսով փառաւորեմք[դ] զաստուածութիւնն հանդերձ մարմնաւորութեամբն, և զմարմնաւորութիւնն հանդերձ աստուածութեամբն, և երից[ե] |սրբասացութեամբ զԵրրորդութիւնն[զ] խոստովանիմք։ Եւ նզովեմք հանապազ[է] զուրացօղսն. զՆեստորիոս չարադատող[ը] հնարութեան հերձուածողացն, և զՍամոսատացին և զԹովդորոս և զԴէոդոր և զԵւտիքէս[թ] և զԱրիոս, և զամենայն Գիրս ապականութեանց[ժ], և զԱպօղինարիս, և զտոմարն[ժա] Լևոնի, և զՄանի[ժբ] և զՄարկիոն, և զԲարծումայ և զ(Ս)ևերոս և զՁիբայ և զԱկակ, և զատանուն[ժգ] կանոնս նոցա, և զԹեոդորիտոս, և զանաւրէն ժողովն Քաղկեդոնի և զԹշնամանաւղ և զանյիշելի ըղանադատեալ կանոնս[ժդ] ի նոցանէ. զոր[ժե] նզովեաց ժողով սրբոցն, որ ի Նիկիա ՅԺԸ, և ՃԾ, որ ի Կոստանդնուպօլիս,
86r. ‖ և Մ, որ յԵփեսոս[ժզ]. զոր հնազանդեալ ունին եկեղեցիք Քրիստոսի կարգաւորեալ։ Այլ և զամենայն[ժէ] պիղծ և արհամարհելի հերձուածս՝ հեռացեալս ի ճշմարտութենէ[ժը] ուրացաք և ուրանամք, և միշտ ուրասցուք։

## Երանելւոյն Յովհաննու Հայոց կաթուղիկոսի՝ ի Թղթոյն, զոր գրեաց Ի. եպիսկոպոսք առ Աղուանից եպիսկոպոսն*։

Խոստովանիմք մեք զմի Աստուած՝ Հայր ամենակալ, Արարող[ժթ] ամենայն երևելեաց և աներևութից։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ ծնեալ[ա] ի Հօրէ, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայնքն։ Եւ ի Սուրբ Հոգին, որ ի Հօրէ ելանէ և ընդ Հաւր և ընդ Որդւոյ երկրպագի և փառաւորի[բ], արարչակից և հաւասար Հաւր և Որդւոյ։ Երրորդութիւն|կատարեալ՝ միով բնութեամբ, փառօք և զօրութեամբ և իշխանութեամբ՝ նախախնամութեամբ ընդհանուր եղելոցն[գ]։ Իսկ ի վախճան յաւիտենիս՝[դ] Աստուած գոլով[ե] մշտնջենաւոր, Բանն Աստուծոյ եղև մարդ կատարեալ, անյեղապէս մարմնացեալ ի սուրբ Կուսէն՝ անճառաբար, ոչ հեռացեալ ի բնութենէն, ոչ[զ] քայքայեալ ի մարմնաւորութիւնն[է], այլ եկաց մնաց նոյնպէս՝[ը] անփոփոխելի, անայլայլելի, Աստուած մարդացեալ՝[թ] ոչ մասամբ, ոչ երկուութեամբ, այլ անբաժին միութեամբ[ժ]. ոչ Հայր էառ մարմին, այլ Որդի. ոչ[գ] Սուրբ Հոգին թանձրացեալ մարմնով, այլ Միածինն ի Հօրէ, բայց կամօք Հօր և[ժա] զօրութեամբ Սուրբ Հոգւոյն. այլ գոյութեամբ միայն Բանն Աստուած[ժբ]։ ‖ Այսպէս սուրբ ծընունդ[ժգ] ճանաչի. նոյն ինքն անբովանդակելին խանձարուրապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն. եդաւ ի մսուր, զի զանասնական[ժդ] ի բաց փախուսցէ զբարս. ի հրեշտակաց փառաւորեցաւ[ժե], զի և[ժա] մեք կոչեսցուք փառաբանակիցք նոցին[ժզ]։ Ընծայեցաւ ի մոգուցն, զի պտղաբերեսցուք զհաւատս. կաթնաբուծեցաւ, զի զանմեղութիւն ընկալցուք. զարգացաւ ըստ մարմնոյն[ժէ] ամենակատար[ժը], զի ժամանեցուսցէ[ժթ] ի չափ հասակի կատարմանն[ի] Քրիստոսի։ Եկն կամաւ[իա] ի չարչարանս, զի ի տանջանաց մեզաց[իբ] զերծուսցէ. խաչեցաւ, զի կենդանութեան պտղովս[իգ] վայելեսցուք. մեռաւ, զի մահուամբն[իդ] սպանցէ զմահ. եդաւ ի գերեզմանի, զի| խորտակեսցէ զնիգս դժոխոց[իե], յերրորդ աւուր յարեաւ, 86v.

---

* Հմմտ. Գ. ձեռ. 487. p. 24 «Խոստովանութիւն Հայոց, զոր գրեցին առ ժողովն Եփեսոսի»։ Նոյն վերնագրով Տ. 43, p. 562 v. Մենք համեմատել ենք՝ Գիրք Թղթոց, եր. 52։

ա) զչարչարանսն բ) մարմնով փառաւք զհամբարձումն գ) զգալուստն դ) երկրպագեմք և փառաւորեմք ե) երիցս զ) զխաչիլն է) և մեք հանապազ ը) և զՆեստորիոս չարադատողն թ) հերձուածողութեան և զնմանս նորին, և զԹէոդորոս, և զԴիոդորոս և զԵւտիքէս ժ) ապականութեան ժա) զտումարն ժբ) զԳայիոս Սամոսատցի և զՄանի ժգ) և զպիղծ ժողովն նոցա և զատանուն ժդ) կանոնսն ժե) զորս ժզ) և ժողով սրբոցն ՅԺԸ-իցն ի Նիկիա, և Ճ և Ծ իցն ի Կոստանդնուպաւլիս և Մ-ացն յԵփեսոս ժէ) զամենայն ժը) ի ճշմարտութենէն ժթ) յարարիչն

ա) յՈրդին Աստուծոյ ծնեալ բ) փառաբանի գ) եղելոյ դ) ի վախճան ժամանակի ե) գոլ զ) և ոչ է) ի մարմնաւորութիւն ը) նոյն որ էրն թ) մարմնացեալ ժ) ոչ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի ժա) չ. ժբ) Աստուծոյ ժգ) ծընունդն ժդ) զանասնականն ժե) փառաբանեցաւ ժզ) լինել փառաբանակիցք նոցա ժէ) մարմնոյ ժը) ամենակատարն ժթ) ժամանեսցուք ի) լրմանն կատարմանն իա) կամաւք իբ) մեզացն իգ) ի կենդանութեան պտղոյն իդ) մահուամբ իե) դժոխոցն

զի զմեզ ի Նորոգումն կենդանութիւն փոխիցէ[ա]. համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր, զի մեք[բ] դասեալք լիցուք ընդ աջմէ նորա. գալոց է միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և թագաւորութեանն նորա վախճան ոչ գոյ[գ]: Այսպէս հաւատամք և երկրպագեմք և փառաբանելով ասեմք. Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ց մեզ: Իսկ զոչխոստովանօղսն այսպէս նզովեցին սուրբ հարքն, նմանապէս և մեք նզովեմք՝ զհինսն եղեալսն հերձուածօղսն և զնորսս[դ]. զԱրիոս, զՊաւղոս Սամոսատցի[ե], զՄանի և զՄարկիոն և զՈվնէմիոս[զ], և զԵւտիքոս, և[է] զԱպողինարոս և զպեղծ[ը]

89r. || Նեստոր և զԹէոդորիտոս[թ] և զանոտի ժողովն Քաղկեդոնի և զպեղծ տոմարն[ժ] Լևոնի, որ լրբաբար յանդգնեցան ասել երկուս բնութիւնս և երկուս դէմս ի վերայ միոյն Քրիստոսի[ժա], և թէ սուրբ Կոյսն ոչ ծնաւ զաւակ[ժբ], այլ սոսկ մարդ[ժգ] ըստ մեզ և տաճար Բանին Աստուծոյ: Այլ են ոմանք, որ ասեն. մինչ յերկրի էր Քրիստոս, ոչ էր յերկինս, և յորժամ ի խաչին և ի գերեզմանի էր, ոչ էր յաթոռ փառաց[ժդ].*

* Վերև յիշուած ձեռագիրներում շարունակութիւնը տարբեր է. այսպէս ըստ Ց. 43 ձեռ.ի. «Այլ եղեալ են ոմանք, որ ասեն, թէ մինչ յերկրի էր Քրիստոս՝ յերկինս ոչ էր, և մինչ ի վերայ խաչին էր՝ ոչ էր յաթոռ փառաց. և մինչ ի գերեզմանին էր ոչ էր ընդ աջմէ Հօր: Եւ արդ նզովեմք զայնպիսի հերձուածօղսն և զայնոսիկ, որ հնազանդեցան Նեստորի ժողովոյն և եղեն պատճառք կորստեան բազմաց: Այլև զամենեսեան զայնոսիկ, որք այժմ հնազանդին նոցա ամբարիշտ և սպանօղ վարդապետութեանն՝ նզովեմք: Եւ բան հաւատոյ մերոյ այս է, որ միաբան է ընդ լուսաւոր վարդապետութիւն ուղղափառացն, զոր մարգարէք և հարքն առաջինք՝ յերեք հարիւր և տասն և ութքն, որ ի Նիկիա ժողովեցան և հարիւր և յիսունքն, որ ի Կոստանդինուպօլիս, և երկու հարիւրքն, որ յԵփեսոս՝ զայս հաւատս հաստատեցին. և մեք յայս գերիս ժողովս դաւանիմք, և փառաւորեմք զամենասուրբ զԵրրորդութիւնն, այժմ և միշտ և...»

ա) ի նորոգութիւն կենդանութեան փոխեսցէ բ) և մեք գ) թագաւորութիւն նորա վախճան ոչ ունի դ) զհինս զամենեսեան եղեալ հերձուածօղս և զնորս ե) և զՊաւղոս Սամոսատցի զ) զՄարկիովն, զԵւնոմիոս է) չ. ը) զպեղծն թ) և զԹէոդորոս և զԹէոդորիտոս ժ) և զտումարն ժա) միոյ Քրիստոսի Աստուծոյ ժբ) Աստուած ժգ) մարդ սոսկ ժդ) և մինչ ի խաչին վերայ էր՝ ոչ էր յԱթոռ փառաց և մինչ ի գերեզմանին էր՝ ոչ էր յաջմէ Հաւր



զխորհեցօղսն այսպէս և զՋիբայ[ա] և զԱկակ և զԲարծումն[բ], որք հնազանդ[գ] Նեստորի և եղեն պատճառք կորստեան բազմաց, և զՍևերիոս, զգիրս[դ] ապականութեան նորա, այլ և զամենեսեան իսկ զայնոսիկ, որք այժմ[ե] հաւանին և հնազանդին նոցա ամբարիշտ սպանօղ վարդապետութեանն՝ նզովեմք:

*Երանելույն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի՝| յԵրրորդ թղթոյն, զոր գրեաց առ Կիւրիոն Վրաց կաթուղիկոսն՝ այն, որ դարձաւ յուղիղ հաւատոյն եւ եղեւ Քաղկեդոնի.**

Բայց արդ մի՛ հեղգասցուք նորոգել զսէրն հոգևոր, (որ) կայր ի մէջ երկոցունց ազգացս՝[զ] զայն, որ ի միոջէ աղբերէ առեալն[է] էր զվարդապետութիւնն[ը], որ նախ ինքեանք զկենդանութեան զլոյս[թ] առին, որպէս ուսուցին մարգարէքն և առաքեալքն, և ապա ի մեզ և ի ձեռն առհասարակ[ժ] սերմանեցին զաստուածպաշտութիւնն[ժա], նախ՝ երանելին սուրբն Գրիգոր և ապա Մաշտոց[ժբ], և զգրոց ծանօթութիւնն[ժգ] ի պնդութիւն հաւատոց. և այժմ աղօթեսցուք նովիմբ եկեալ[ժդ] մեզ մինչ[ժե] ի գալուստն Տեառն մերոյ[ժզ] Յիսուսի Քրիստոսի՝ զնոյն և[ժէ] հաւատ ճշմարտութեան ընծայել նմա: Քանզի և սէր իսկ աստուածային

89v. || այն է, և յայդ վրիպեալ մտաց ի բաց փոխել արժանի է. զոնեայ զոր այժմդ ասէք, թե դեռ ևս զհայրենի հաւատն ունիմք[ժը]: Զի թե զնոյն հաւատն ունէիք՝ զհայրենին, ապա մեր այլ զի՞նչ էր ի ձէնջ խնդիր[ժթ], և կամ ընաւ զաշխատութիւնս զայս զի՞ կամէաք տեսանել, այլ զի փոխեցաք[ի] յայնմանէ, վասն այնորիկ այս երրորդ թուղթ գրեցաւ ի մէնջ առ Ձեր Սրբութիւնդ. քանզի՝[իա] Յերկուց և յերից վկայից հաստատեսցի ամենայն բան[1]:

* Տես. Գիրք թղթոց, եր. 180.

ա) Նզովեմք և զԻբա բ) զԲարծումա ի Մծբնայ գ) հնազանդեցան ժողովոյն դ) և զգիրս ե) որ այժմ զ) զսէրն հոգևոր, որ կայր ի մէջ երկուց ազգացս՝ նորոգել է) առեալ ը) ըզվարդապետութիւն թ) զկենդանութեանն լոյս ժ) և ապա մեզ և ձեզ հասարակ ժա) զԱստուածպաշտութիւն ժբ) Մաշթոց ժգ) ծանօթութիւն ժդ) կալ ժե) մինչև ժզ) Աստուծոյ մերոյ Տեառն ժէ) և զնոյն ժը) զոնեա թէ այժմ զոր ասէքդ, թէ մեք զհայրենի ունիմք հաւատ և այժմ ժթ) Զի թէ զհայրենի հաւատն ունիք, մեր այլ խնդիր զի՞նչ էր ի) փոխեցայք իա) քանզի գրեալ է

1) Բ. Կորնթ. ԺԳ, 1.

Զի յառաջ, մինչ առաքինի հարքն մեր ազգաց[ա] երկոցունց և որք յիշխանութիւն[բ] կարգեալ, զոր այժմ մեք ունիմք[գ], նոքաւք հանդերձ միաբանէին յամենայն բարիս[դ] և զոյգ[ե] հեռանային յամենայն չարէ, թուի ինձ, եթե տեղ|եակ է Ձեր Սրբութիւնդ այնմ։ Եւ յեկեղեցւոջ զսուրբ Երրորդութիւնն[զ] փառաւորել մեզ ուսուցին առաքեալքն և որք ի նոցանէն ճշմարտութեամբ ուսանն[է], և ի նոյն Սուրբ Երրորդութիւնն մկրտել, և զՈրդի յԵրրորդութենէն մարմնացեալ և մարդացեալ՝[ը] մի լեալ քարոզեցին, և զնոյն Աստուած՝ ընդ Հաւր և ընդ[թ] Սուրբ Հոգւոյն, և ասեն այսպէս. Մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս[1], և դարձեալ՝ Յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, էակն ի վերայ[ժ], Աստուած աւրհնեալ յաւիտեանս[2]։ Եւ[ժա] դարձեալ ի Կաթուղիկէին ասէ[բ]. Աստուած[ժբ] ճշմարիտ և կեանք յաւիտենականք[3]։ Եւս բազում քարոզեալ յառաքելոցն, զոր ոչ է այժմ բաւականապէս մի ըստ միոջէ ասել[ժգ]։ Նոյնպէս և մարգարէքն յառաջագոյն ծանուցեալ վկայեցին, և Երեմիա թե՝ Ըստ որում ոչ համարեսցի այլ Աստուած[ժդ], որ[ժե] ետ զիմաստութիւնն Յակովբայ. յետ

90r. այսորիկ սա ‖ յերկրի երևեսցի[ժզ] և ընդ մարդկան շրջեսցի[ժէ][4]. և այլք նոյնպէս վկայեցին։

Իսկ եթե վասն ճշմարիտ մարդ[ժը] լինելոյ է ուրուք ասացեալ[ժթ], որպէս այն[ի] թե՝ Մարդով եղև յարութիւն մեռելոց[5], կամ[իա] թե՝ Երկրորդ Ադամ Տէր[իբ][6], ոչ եթե զբնութեանցն[իգ] ինչ ճառեն առաքեալքն, այլ վասն այնր, զի իւրով մարմնովն, որ[բ] ի կուսէն սուրբ[իդ] Աստուածածնէ էառ, մարդ է, և իւրով մարմնովն Աստուած է[բ]. և ոչ թե՝[բ] երբեմն մարդ և երբեմն Աստուած[իե]. մի լիցի,

ա) ազգացս  բ) յայս իշխանութիւն  գ) ունիմքս  դ) բարիսն  ե) զուգաց  զ) Սուրբ զԵրրորդութիւնն  է) ուսան  ը) մարմնացեալ միացեալ  թ) չ.  ժ) Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն  ժա) Եւ այլ  ժբ) Սա է Աստուած  ժգ) և այլք բազումք նոյնպէս քարոզեցին առաքեալքն, որ վասն ժամուս այսչափ բաւական համարիցայ։  ժդ) Երեմիա ասէ. Սա է Աստուած մեր, ընդ որում ոչ համարեսցի այլ ոք  ժե) սա որ  ժզ) երևեսցաւ  ժէ) շրջեսցաւ  ժը) մարդն  ժթ) ուրեք որ յիշատակէ  ի) զայն  իա) և կամ  իբ) Երկրորդ մարդն Տէր յերկնից  իգ) թէ զբնութեանց  իդ) ի սրբոյ կուսէն  իե) Աստուած է

1) Ա. Կորնթ. Ը, 6. 2) Հռոմ. Թ, 5. 3) Ա. Յովհ. Ե, 20. 4) Բարուք Գ, 37—38. 5) Ա. Կորնթ. ԺԵ, 21. 6) Ա. Կորնթ. ԺԵ, 45. հմմտ. 47.



չքարոզեն այսպէս։ Այլ[ա] երանելի հարքն, որ ի Նիկիա ժողովեցան՝[բ] այսպէս ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեան. Հաւատամք[գ] ի մի Աստուած, ի Հայր ամենակալ, Արարիչն երկնի և երկրի։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս[դ]. այլ ոչ բնութիւնս[ե], կամ երկուս որդիս ասացին, այլ մի[զ] Տէր Յիսուս Քրիստոս՝ ծնեալ ի Հօրէ անճառաբար, զնոյն և[է] մարմնացեալ|և մարդացեալ, խաչեալ[ը], յարուցեալ և համբարձեալ, և գալոց է դատել[թ]. որոյ թագաւորութեանն վախճան ոչ է[ժ]։ Եւ ի Սուրբ Հոգին, որով խօսեցան առաքեալքն[ժա] և մարգարէքն։

Զայս հաւատ ընկալաւ սուրբ[ժբ] եկեղեցի Աստուծոյ և նովիմբ պարծի սուրբ Երուսաղէմ վերին[ժգ]։ Իսկ ի Քաղկեդոն[ժդ] ժողովեալքն՝ հակառակ առաքելոցն և սուրբ ժողովոյն, երկուս բնութիւնս ասացին միոյն[ժե] Քրիստոսի, խաբելով զպարզամիտսն[ժզ], և փոխանակ Երրորդութեանն չորրորդութիւն մուծանեն[ժէ]. յաւելուն ներմարդութեանն[ժը] բնութիւն, և Որդւոյ երկասաց[ժթ], և այլ նոյնպիսի[ի] բարբաջեն, որ[իա] ի սատանայի վարդապետութենէն։ Նոյնպէս և ի ջնջեալ տոմարն Լևոնի[իբ] այսպէս պատմէ, ասէ[իգ]. ազդէ կերպարան երկուց բնութեանց[իդ] ընդ ընկերին շարայարութեան[իե] ‖ միոյն գործել զաստուածայինսն՝ որ ինչ 90v

Աստուծոյ վայել է, իսկ միւսն[իզ] զմարդկայինսն, որ ինչ մարդոյ արժան է, և այլ բազում ինչ[իէ] այսպիսիս։ Արդ, զայս յո՞րմէ առաքելոց[իը] լուան, և կամ ո՞ր ճշմարիտ վարդապետ պատմեաց։ Եթէ[իթ] ճշմարիտ էր ասացեալ ի Քաղկեդոնի ժողովոյն[լ] և ի Լևոնի տոմարէն[լա], ապա՝ մինչ փառս տան, զի՞նչ ասեն այսպէս[լբ]. Փա՜ռք Հօր և Որդւոյ երկուց բնութեանց[լգ] և Հոգւոյն Սրբոյ. և կամ մկրտու-

ա) Սոյնպէս և  բ) ի Նիկիայ ժողովին  գ) Հաւատալ, ասեն  դ) չ. Արարիչն—Քրիստոս  ե) երկուս բնութիւնս  զ) զմի  է) և զնոյն  ը) և խաչեալ  թ) յարուցեալ և գալ ի դատել  ժ) կայ  ժա) առաքեալք  ժբ) Զայս կալաւ հաւատ  ժգ) ի սրբոց առաքելոց. և սովիմբ պարծի ի վերինն Երուսաղէմ ժողով լինել  ժդ) ի Քաղկեդոնի  ժե) խոստովանեցին երկուս բնութիւնս ասելով միոյ  ժզ) զպարզամիտս  ժէ) քարոզեն  ժը) Ներմարդութեան  ժթ) և որդւոց երկակաց  ի) նոյնպիսիս  իա) որ է  իբ) տումարէն Լևոնայ  իգ) վասն Քրիստոսի Աստուծոյ ասէ  իդ) երկոցունց բնութեանցն  իե) շարայարութեամբ  իզ) միւսովն  իէ) այլ ինչ բազում  իը) առաքելոյ  իթ) Եւ թէ  լ) ի ժողովոյն Քաղկեդոնի  լա) տումարէն  լբ) զի՞ չասեն  լգ) բնութեանցն

թեանն՝[ա] Ցանուն Հօր և Որդւոյ երկուց բնութեանց[բ] և Հոգւոյ[գ] Սրբոյ. և կամ ի ժամ պատարագին թե՝ Հայր Սուրբ, Որդի Սուրբ երկու բնութիւնք[դ] և Հոգին[ե] Սուրբ։ Ապա թե չիշխեն ասել այսպէս[զ], այլ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ փառս տան, ապա ուրեմն լոկ խոտորումն[է] ուսուցանեն ժողովն Քաղկեդոնի և տոմարն Լևոնի[ը]։

|Արդ, եթե չէ[թ] փոխեալ ի հայրենի հաւատոյն[ժ], որպէս բազում անգամ գրեցեր առ իս[ժա], եկ նզովեա դու[ժբ] զանիծեալ ժողովն Քաղկեդոնի և զպեղծ տոմարն[ժգ] Լևոնի որպէս և նախնիքն[ժդ] Քո՝ երանելի[ժե] Գաբրիէլ կաթուղիկոսն Վրաց նզովեաց ընդ երանելի հօրն մերում[ժզ], հանդերձ աթոռակցօք իւրովք և եպիսկոպոսօք[ժէ]*։ Արդ, այս երանելի եպիսկոպոսունքս, որ յաշխարհէդ[ժը] ձերմէ էին և ընդ Աղուանօք և ընդ Սիւնեաւք ի Հայս դիպեցան[ժթ] յաւուրս Բաբգենի Հայոց կաթուղիկոսի՝ յայնմ[ի] ժողովի, յորում անիծաւ ի նոցանէ[իա] միաբանութեամբ ժողովն Քաղկեդոնի և տոմար[իբ] Լևոնի։ Եւ զի պայման նամակն, որ հայերէն գրով էր, յապստամբութեանն կորեաւ, թարգմանեցաւ[իգ] այս յՈւռհա[իդ] քաղաքի ի հոռոմ գրոց[իե]. քանզի և նոքա ունէին ի մէնջ**։

**100r.** ||Երանելւոյն Յովհաննու հօր մերոյ, ծգնաւորի եւ խոստովանողի եւ Մայրագոմեցոյ՝ ի բանէն, որ վասն անօրէնութեան Փրկչին։

Խորհուրդն ըստ նախակարգ յաւիտեանցն եղելութիւն՝ ըստ ցօղակերպ իջիցն, յառաջ քան զմարմնանալն մարմինն ոչ ի Բանէն էր և ոչ ի Կուսէն. զի Բանն Հոգի էր և եթ և կոյսն ինքեանք միայն։ Ի մարմնանալն ոչ

* Այստեղ բաց է թողած եպիսկոպոսների անունները, որ կայ Գիրք Թղթոց, եր. 182 ։

** Յաջորդը ենթադրաբար կցեցինք այստեղ։

ա) ի մկրտութեանն, եթէ մկրտի այս անուն բ) բնութեանցն գ) Հոգւոյն դ) Որդւոյ երկու բնութիւնքն Սուրբ ե) Հոգի զ) այսպէս է) խոտորումն յԱստուծոյ ը) տումարն Լևոնայ թ) չէք ժ) հաւատոյ ժա) առ մեզ ժբ) և դու ժգ) զպիղծ տումարն ժդ) նախնին ժե) երանելին ժզ) հարսն մեր ժէ) չ. և եպիսկոպոսօք ժը) յաշխարհէ ժթ) և ընդ Աղուանիւք և ընդ Սիւնիւք ի Հայս դիպեցան ի) յայն իա) անիծան ի նոցանէն իբ) տումարն իգ) և թարգմանեցաւ իդ) յՈւռհայ իե) գրոյ



Բանն ըստ ինքեան մարմնացաւ, զի ինքն Բանն Աստուած մարգարէիւն՝ Մարմին իմ ի նոցանէ[1]. և ոչ կոյսն ըստ ինքեան յղացաւ, այլ աւետարանագիրն ասէ զԿուսէն. Գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ[2]։ Ինքն Բանն, առաքեալն ի Հօրէ, ինքն էակից Որդին, ինքն Միածին Որդին Հօր՝ լրութեամբ աստուածութեամբն|էջ և անճառաբար և անպարփմացապէս անքննելի միութեամբ եղև մարմին ի Կուսէն, եթէ՝ Ինքն եկեսցէ և փրկեսցէ[3]։ Ինքն Բանն է պատճառ եղելութեան. առանց պատճառին զեղելութիւնն անհնար է ասել։ Ինքենէ եղեալն ինքն եղեալն է Աստուած և մարդ միանգամայն. և զի ամենևին եղեալն է Աստուած և բնութիւն Հօր, և Հայր վկայեաց և ազդարար մարգարէիւն Իսրայելի, եթէ՝ Ցինէն գտաւ պտուղ ի քեզ[4]. զի ի պտղոյ արդարութեան ճանաչի ծառն կենաց։ Եւ զի Աստուածութիւնն է պատճառ եղելութեանն, վասն այնորիկ ասէ մարգարէն. Որ ի սկզբանէն էր՝ այն եկն եհաս, և զորս ես պատմեցի ձեզ[5]. ապաքէն որ ի սկզբանէ՝ նոյն է մարմնացեալն, այլ ի հիմնակալութիւն հաւատոց, որ ի Քրիստոս։

Ցեռ սակաւուց.

||Ցայսմ վայրի վերադիտեսցուք զվերածնութիւն, սակս ցօղակերպ իջիցն և հակիրճ զնախագրելոցն զնոյնս վերակարգեալ հանդիպեսցուցուք իւրն, զգուշանալով ի վրիպակոտ իրաց հոգեմտութեամբ. զի թեպէտ և տղայացաւ Հինաւուրցն վասն մեր յանկատար հասակի, անկատար ոչ երբէք ասի, այլ միշտ կատարեալ՝ ըստ Գրոց, եթէ՝ Որդին յաւիտեան կատարեալ. և թեպէտ անսաց անբանութեան աճման հասակին ըստ օրինակի տղայոց, անբան ոչ երբէք ասի, այլ՝ Ի սկզբանէ էր Բանն[6], և գլուխ բանից և խօսից՝ ըստ Գրեաց, և հրաման կամաց Հօր ի բերանոյ նորա ելեն և ամենայն արարածք հրամանաւ նորա շարժին։ Եւ թեպետ անիմաստ և անզաւր կարծեցաւ, իբրև զմի ոք|ստնդիացիկ մանգանց, այլ գիր ասէ. Քրիստոս Աստուծոյ զաւրութիւն և Աստուծոյ իմաստութիւն[6]։ Եւ թեպետ և անզէտ և անմտաւոր համարեցաւ ի մարդկանէ՝ ըստ համարնութեան տիոցն, այլ մարգարէն ասէ. Ահաւադիկ ի միտ առցէ մանուկ իմ[7]. նոյն **100v.**

1) Ովսէ Թ, 12. 2) Մատթ. Ա, 18. 3) Հմմտ. Ես. Լե, 4. 4) Ովսէ ԺԴ, 9. 5) Ես. ԽԲ, 9. 6) Յովհ. Ա, 1. 7) Ա. Կորնթ. Ա, 24. 8) Ես. ԾԲ, 13.

լան վեր ացի և առ մանուկն, եթե՝ Ոչինչ ծածկեցաւ ի քէն[1]։ Եւ թեպետ յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին, ինքն միշտ անապական ասի, ապականացու և երբէք ոչ. ըստ նախագրեցելոցն՝ Մարմին նորա ոչ ետես ապականութիւն[2]. և եթե զմեզ անապական գործեաց՝ զծնեալս վերստին յանապականութեան սերմանէն կենդանի և մշտնջենական Բանին Աստուծոյ[3]։ Եւ թեպետ զկերպարանս ծառայի էառ, ծառայ ոչ երբէք ասի, այլ
101r. Տէր և ազատ, ըստ գրելոյն || թե՝ Ազատ է Որդին[4], և թե՝ Նա է Աստուած, ընդ որում ոչ համարեցի այլ[5]։ Եւ թեպետ առաքեաց զնա Աստուած ի նմանութիւն մեղաց[6], մեղաւոր երբեք ոչ ասի, այլ ցանգ անմեղ, ըստ վերագրելոյն թե՝ Ի նմա մեղք ոչ են[7]։ Եւ թեպէտ զգեցաւ հողեղէն բնութիւն, հողեղէն երբեք ոչ ասի, և ոչ երկրեղէն, այլ Տէր և ստացօղ հողոյ և հողեղինացս, ըստ յառաջագրայն բաղադանեալ ի նորումս եթե՝ Առաջին մարդըն յերկրէ հողեղէն, երկրորդ մարդն յերկնից[8], որպէս և Տէր. զի զհնացեալ և զմահկանացու աշխարհս ըստ առաջին հողածին մարդոյն՝ երկրորդ մարդն, Կուսին ծնեալ, եկեալ յերկնից նորոգեացէ։ Եւ թեպետ առ զմարդկային շունչ և համեկեալ ունի յինքեան զշնչաւորն, և բնաւ ուրեք|շնչաւոր երբեք ոչ ասի, այլ միշտ հոգևոր, ըստ հնագրութեանցն փոխարկեալ ի նորս, եթե՝ Եղև մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ ի հոգի կենդանի[9]։ Եւ թեպետ յարարածոց եղև մարդ, արարած անհնար է ասել զնա, այլ ամենեւին անեղ և արարիչ և մեծ և կատարեալ, և անձեռագործ խորան, և ոչ յայսց արարածոց՝ ըստ աստուածաստեղծին և հոգեծնելոցն քառակապէս նմանէ, որ նախակարգեաց ի խօսս իւր զպաբարիչն անուն զառ ի յապա զասօղսն, թե՝ Աստուած եմ ես, և ոչ մարդ, ի միջի ձերում սուրբս[10]։ Եւ թեպետ և ստեղծական և ստացական մարմին գոյացոյց յինքեան, ինքն ոչ կարէ ասիլ ստեղծուած և ստացական, այլ ստեղ-
101v. ծօղ և ստացօղ համանգամայն ստեղծ || ուածոց, ըստ այնմ

1) Ես. Խ, 26 Հմմտ. Եր. ԼԲ, 17. Դան. Դ, 6. 2) Գործք Բ, 31. ԺԳ, 37. Հմմտ. Սաղմ. ԺԵ, 10. 3) Հմմտ. Ա. Պետ. Ա, 23. 4) Հմմտ. Մատթ. ԺԷ, 25. 5) Հմմտ. Երկր. Օր. Դ, 35, 39. Գ. Թագ. Ը, 60. 6) Հմմտ. Հռով. Ը, 3. 7) Հմմտ. Ա. Պետ. Բ, 22. Բ. Կորնթ. Ե, 21. Յովհ. Ը, 46. 8) Ա. Կորնթ. ԺԵ, 47. 9) Նոյն ԺԵ, 45. 10) Ովսէ ԺԱ, 9.



թե՝ Սա ինքն, որ ստացաւն՝ արար և ստեղծն զքեզ[1]։ Եւ թեպէտ երկու ծնունդք փառաւորեալ է՝ անեղապէս ի Հօրէ և եղելութեամբն ի Կուսէն, և աւտարին ի Գրոց երկոքին ծնունդքն, ինքեան հրաշիւքն և՛ Որդի Աստուծոյ ասի և՛ Որդի Մարդոյ. սակայն ի խոստովանողական հաւատս, յորժամ հաստուցանէ կաթուղիկէ եկեղեցւոյ միաբանական պտուղ շրթանց ի հոտ անուշից Տեառն՝ ոչ հնար է երկածին ասել զՔրիստոս, այլ Միածին և եթ, և ոչ երկուց որդւոց հնար է կարծիս ունել, բայց միոյ. զոր ընդ Հօր ծննդեամբ փակեալ է կուսական ծնունդն, և ոչ կարէ երկաւորիլ, զի Միածին տուեալ լինի վասն աշխարհի՝ յառաջ քան զարուսեակ ծնեալ յարգ|անդէ[2]։ Եւ մինչ աստուածավայելուչ ծնունդք և ճշմարիտ պատմագրութիւնք ծննդոցն ոչ երբէք հնարանան երկածին ասել, անզրաւորական բնութեանցն համբաւած՝ անմտացածնութիւնք յօդել, զիարդ հնարանան երկաբուն առնել զմիշտ միաբնութիւնն Քրիստոսի։ Զի որպէս կատարեալ Աստուած իմանամք զՀայր և կատարեալ Աստուած զՈրդի և կատարեալ Աստուած զՀոգին Սուրբ՝ ոչ երիս Աստուածս յաւակնիմք ասել, այլ մի. նոյնպէս կատարեալ Աստուած և կատարեալ մարդ իմանամք զՔրիստոս, բայց երկու անձինս և երկու բնութիւնս ոչ ասեմք, այլ մի անձն և մի բնութիւն։ Արդ, զի՞ միաւորեալ երկարեցից զբանս, մինչ այս ամենայն որ շարայարեցաւ մասնաւորաբար ի դէմս
Քրիստոսի՝ միա || դէմ և միակարգ և անշարժ, և չէ փո- 92r.
փոխմամբ և այլայլութեամբ։ Ո՛չ անկատար ասի վասն տղայութեանն, ոչ ապականացու ասի վասն յապականութենէ մարդկան զգենլոյ զմարմինն, ոչ ծառայ ասի վասն ծառայի կերպ առնելոյ, ոչ մեղաւոր ասի վասն նմանութեան մարմնոյ մեղաց երևելոյն. ոչ երկածին ասի ըստ երկուց ծննդոց, և Որդին Աստուծոյ որդի մարդոյ լինելն. ո՛չ երկուց որդոց կարծիս ունի։ Եւ մինչ այս ամենայն, զոր շարակարգեցիս՝ զգոյացութիւն մարմնոյն ընդ աստուածային բնութեանն փակեալ, և ոչ երկրաւորին ի Քրիստոսի, և ոչ է հնար ասել զմի Քրիստոսն Աստուած և հաստուած, արարիչ և արարած, Տէր և ծառայ, անապական և ապականացու, անգէտ և ամենագէտ, անեղ և եղական, երկնաւոր|և երկրաւոր, հոգևոր և շնչաւոր, ան-

1) Հմմտ. Երկ Օր. ԼԲ, 6. Ես. ԽԴ, 2. 2) Հմմտ. Սղմ ՃԹ, 9.

անմեղ և մեղաւոր. զի ամենևին Աստուած է, ամենևին արարիչ է, ամենևին Տէր է, ամենևին անեղ է, ամենևին անապական է, ամենագէտ և հոգեղէն և անմեղ է։ Արդ, զի ըստ ամենայն դիմ ոչ երկաւորի մարմնացեալ Բանն Աստուած, ըստ բնութեանն զի՞ երկաւորի և երկարուն ընդէ՞ր ասի։ Այլ քանզի գիտէր չարն, եթե թիւք բնութեանցն բաժանեն զՔրիստոս, յամենայն դէմս հնարեայց ուսոյց զայդ։ Այլ եթե ոչ բնութիւնքդ երկաւորեն զՔրիստոս, ընդէ՞ր ծփեցուցեն զեկեղեցի, որպէս հողմ զջուրս ծովու, որ ըստ անիծիցն Կայենի յանդադար երերմունս տատանմանցն սասանին անհանգիստ ծփանաց։ Եւ կամ
92v. զի՞նչ են բնութիւնքն փաստմունս, որ այսպէս || կերպակերպս շրջշրջեն զհաւատս. մերթ յերկուց ասեն զՔրիստոս, մերթ դառնան անդրէն և մի ասեն, մերթ յերկուց և երկուս ասեն, և զտիեզերս կործանեցին ի հաւատոց։

## Լուսաւորչին մերոյ սրբոյ Գրիգորի ի Վարդապետութենէ՝ ի ծննդեանն կարգէն*։

Արդ[ա], առաքեցաւ[բ] Աստուած՝ յԱստուծոյ Սուրբ Հոգին, և առ[բ] զմարմին ի Կուսէ՝ մարդ կատարեալ կատարէ[գ] աստուածութեամբն. զԱստուածութեանն[դ] զզաւրութիւն[ե] յայտ արար և զմարմնոյ տկարութիւնն ցուցանէր. ծառայակից եղև և[ա] մարմնովն մարդկութեամբ մարմինս։ Ո՞վ էջ[գ] ի դժոխս. Աստուած, և եհան[է] անտի զարգելեալսն դժոխոցն[ը]. մարմնով հալածեցաւ, և հալածեաց զսատանայ և կապեաց զսատանայ[թ]։ Զի որ ի մարմին[ժ] հաւատացին՝ ծանոյց նոցա|զաստուածութիւնն իւր. որք ի մարմնոյն գթեցին՝ ուրացան զբնութիւն նորա. քանզի միացաւ ի մարմնի բնութեամբ և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութիւնն։ Որք հաւատացին ի նա՝ նոքա վայելեսցեն ի բարիս անպատումս[ժա], և որ յայս[ժբ] հաւատոց վրիպեցան՝ զանկոխ գնացին[ժգ] և ըստ արտուղի

* Տես. Աղաթանգեղայ՝ Պատմութիւն Հայոց. Տփխիս. 1909. եր. 184.

ա) չ. բ) Որդին գ) կատարեալ դ) զԱստուածութեան ե) զօրութիւն զ) մարմնովն մարդկութեանս, և ազատեաց ի մեղաց զմարդկութեան մարմինս: Որով էջ է) ի դժոխս, և ած եհան ը) ի դժոխոց թ) զմեզս ժ) ի մարմինն ժա) ի բարիսն յանպատումս ժբ) որք յայսց ժգ) զանկոխն և զանխուլ գնացին



անգան[ա], և խրատեցին իւրեանց անձին խրատս[բ] անկարկատս, և զբազումս ի ճշմարիտ հաւատոցն թիւրեցին, և[գ] կարծէին, թե գտին ինչ՝ գտին[գ] զոչինչ, որպէս և գրեալ է. Զոգան զհետ ոչնչի և գտին զոչինչ[1]։

Յետոյ*։

Իսկ իբրև եկեալ կատարեաց Փրկիչն ամենեցուն զերբեմն խոստացեալս[ե] վասն նորին, և վկայութեամբ վասն նորին զգալուստն[գ] կարեմք ճշմարտել մարգարէականօք[է] յառաջ ասաց || ելովք վասն մարմնածին ծնելու- 93r.
թեանն Որդւոյն Աստուծոյ՝[ը] հոգեխառն բանիւք զաստուածախառն մարմնոյն, զոր յառաջագոյն Աստուած եցոյց, զոր յՈրդւոյն[թ] զգալուստ՝ իւրով մարգարէիցն[ժ] ձայնիւք։ Զի՝ Առաքեաց զՈրդի[ժա] իւր, որ եկն և ծնաւ ի կնոջէ և եմուտ ընդ օրինօք, զի զորս ընդ աւրինաւքն էցեն՝ գնիցեն[ժբ], զի մեք զորդեգրութիւն ընկալցուք[2]։

Յետոյ**։

Սակայն յորժամ կամեցաւ՝ առ զմարդ(կան) կերպարանս և զգեցաւ մարմին, և էջ ի մեր նմանութիւնս[ժգ], այն[3], որ անբաւն էր և անհաս յամենայն լրութեանն՝ լրութեան Աստուածութեան[ժդ], և վասն մեր էջ ի չափաւորութիւն և ամփոփեցաւ ի մարմինն[ժե], բովանդակեցաւ ճշմարտութեամբ ի մարմինն[ժզ] և ճշմարիտ մարդ եղև և էջ յանարգութիւն, զի զմեզ բարձրացուսցէ[5]. սակայն իւրով|աստուածութեամբ[ժէ] յերկինս էր և յերկրէ[ժը] առ Հօր էր[ժթ] և ընդ Հօր, և ամենայն արարածք հրամանաւ նորա շարժին՝ ըստ իւրաքանչիւր կարգածոյ կազմածոյ[ի]։ Սակայն վասն[իա] մեր էջ յանարգութիւն, այլ կայ իւրում բնութեանն, որպէս[իբ] ինքն ասէ. Ես նոյն եմ, և ոչ փոխ-

* եր. 186.

** եր. 188.

ա) անկան բ) եւ խրամատեցին անձանց իւրեանց անցս գ) իբրեւ դ) եւ գտին ե) զերբեմնի խոստացեալսն զ) վկայութեամբ զգալուստ Որդւոյն է) մարգարէականօքն ը) ծնընդեան Աստուածորդւոյն թ) զիւրոյ Որդւոյն ժ) արժանաւոր իւրոց մարգարէիցն ժա) Աստուած զՈրդին ժբ) գնեսցէ ժգ) Նմանութիւն ժդ) Աստուածութեանն ժե) ի մարմին ժզ) ի մարմին ժէ) Աստուածութեամբն ժը) է եւ յերկրի ժթ) չ. ի) կարգածոյն կազմածոյ իա) թէպէտ վասն իբ) որպէս եւ

1) Հմմտ. Երեմ. Բ, 5. 2) Գաղ. Դ. 4—6. 3) Հմմտ. Փիլիպ. Բ, 7. 4) Հմմտ. Կող. Բ, 9. 5) Հմմտ. Բ. Կորնթ. Ը, 9.

ցայ[1]. զի թեպէտ զկերպարանս ծառայի էառ[ա] և զմարմին մարդկան, այլ խառնեաց միացոյց՝ ըկղմեաց զմարմինն յաստուածութեանն[բ] իւրում։ Եւ դարձեալ ասէ. Սա է Աստուած, Աստուած մեր յաւիտեանս[գ][2]։ Եկեալ[դ] այսպիսի բարբառ և առ մարգարէն[ե] Մովսէս եթէ՝ Ես եմ, որ ի սկզբանէն[զ]. այսպէս ասասցես թէ՝ որ ի սկզբանէն Աստուած, առաքեաց նա զիս առ քեզ[է][3]։ Զոր և Յովհաննէսն[ը] ասէր ի թղթին իւրում թէ՝ Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաք, որում ականատեսն[թ] եղաք, ընդ || 93v. որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին[ժ] կենաց. և կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք, զի նա ինքն է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք[4]։ Որ առ մարմին՝ անըմբռնելի[ժա], և շօշափեցաւ և ըմբռնեցաւ մարմնովն, և զամենայն անցս մարմնոյն յանձն էառ[ժբ] իւրովք կամօքն[ժգ]։ Ցանծանօթս եղեալ՝ համբերէր հանդերձ խոնարհութեամբն[ժդ], և ոչ ուրուք բանադատութեամբ, բայց իւրով[ժե] իշխանական և անձնիշխան կամօքն[ժզ] կրեաց զայն, որպէս և ինքն ասէ եթէ՝[ժէ] Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, իմովք կամաւք, և[ժը] դարձեալ միւսանգամ առնուլ զնա[5]։ Եւ ինքն ծնաւ ի Կուսէն, և իւրով[ժթ] կամօք կատարեաց զկամս անձին[ի] իւրոյ, ասէ. Եկի[իա] կատարել զկամս Հօր իմոյ[6]. զի ցուցցէ զմիաւորականն, անքակ, անբաժին[իբ] ինքնութեանն միութեանն[իգ]։ Կամօք Հօր եմուտ յարգանդ Կուսին, և ոչ զարշեցաւ. վասն ինքն իսկ է[իդ] սրբիչ ամենայնի. իւրովք կամօք պատեցաւ ի խանձարուրս, եղեալ[իե] ի մսուր անասնոց, զի ինքն[իզ] Տէր և արարիչ ամենայն մեծութեանց և բխիչ[իէ] ամենայն բարութեանց։ Հինաւուրցն

ա) փոփոխեցայ. զի թէպէտ զկերպարանս առ բ) յաստուածութեան գ) յաւիտեանս յաւիտենից դ) Եւ դարձեալ ասէ. «Դու նոյն ես, և ամք քո ոչ անցանեն»։ Եկեալ ե) առ մեծն մարգարէից զ) ի սկզբանէն էի է) առ ձեզ ը) Յովհաննէս թ) ականատեսքն իսկ ժ) զԲանն ժա) զմարմին անըմբռնելին ժբ) առեալ ժգ) կամօք ժդ) համբեր խոնարհութեամբ ժե) իւրովք ժզ) կամօք ժէ) ասէր ժը) զի ժթ) իւրովք ի) առաջչին իա) Ես եկի իբ) զմիաւորական զանքակ զանբաժին իգ) միութիւն իդ) վասն զի ինքն է իե) և եղեալ իզ) ինքն է իէ) բղխիչ

1 Մատ. Գ, 6. 2) Սաղմ. ԽԷ, 15. 3) Ելք, Գ, 14. 4) Ա. Յովհ. Ա, 1—2. հմմտ. Ե, 20. 5) Յովհ. Ժ, 18. 6) Յովհ. Զ, 38.



վասն մեր մանկացեալ[ա] և առ զկերպարան[բ] մարմնոյ տկարութեան մարդկութեանս մերոյ[գ], զի զմեզ փոխեսցէ յիւր անմահութիւնն[դ]. սակայն թեպէտ[ե] զգեցաւ մարմին և էջ ի մեր նմանութիւն, այլ կայ ի փառս հայրենի բնութեանն աստուածութեանն[զ] իւրոյ, որպէս և էր իսկ և է և կայ յաւիտեան ընդ Հաւր իւրում ի բարձունս, ի[է] յիւրում բնութեանն՝ հանդերձ մարմնովն, զոր 94r. ի մէնջ[ը] զգեցաւ։ Փառաւորեալ ցանգ Որդի[թ] ի հոգեղէն և հրեղէն[ժ] զուարթնոցն՝ նա եկն և[ը] եղև մարդ, զի մարմնաւորք[ժա] տեսանել կարասցեն զնա[է]. զի[է] բայց զԱստուած զոյիւ ոչ տեսեալ է՝ ուրուք՝ ոչ հրեշտակաց և ոչ հրեշտակապետաց, ոչ սրովբէից և ոչ քրովբէից, և ոչ բիւրաւոր բանակք վերին զըւարթնոց[ժբ]. բայց Որդին ծածկեալ է[է] մարմնով, կատարելամիտ ի մանաւորացն ցոյց յայտնի[ժգ] արար, զի յագեսցին լուսով սքանչելութեանն[ժդ], թէ՝ Որ ետես զիս, ետես զՀայր իմ[1]։ Եւ եկեալ զխոստացեալն[ժե] կատարեաց, ի սրբոյ Կուսէն. և ծնունդ[ժզ] առաջին ի Հօրէ յառաջ քան զանդէտ[ժէ] յաւիտեանս՝ մըշտընջենական և յաւիտենական ծնունդ մշտնջենական[ժը] և յաւիտենական Հօր[ժթ], յառաջ քան զյաւիտեանս[ի]։ Այսչափ և եթ գիտել տկարութեան արարելոցս ի նմանէ։

Յես սակաւուց*.

Հաւատք ճշմարիտ այս են. խոնարհեցաւ և խառնեաց զաստուածութիւնն ընդ մարդկութիւնն[իա] և զանմեռն ընդ մեռոտն[իբ], զի զամենայն մարդկութիւնն[իգ] անքակ արասցէ յանմահութենէ աստուածութեանն[իդ] իւրոյ։ Եւ[է] յորժամ առ Հօր մարմնով ընդ աջմէ[իե] եմուտ և խառնեաց զմեզ յաստուածութիւնն[իզ] իւր Միածին Որ-

* Եր. 192.

ա) մանկացաւ բ) զկերդարանս գ) տկարութեանս մերոյ մարկութեանս դ) յանմահութիւն իւր ե) թէպէտ և զ) աստուածութեան է) չ. ը) ի մէնջն թ) ցանկորդ ժ) ի հրեղէն ժա) մարմնաւորքս ժբ) բանակաց երկնաւոր զուարթնոց ժգ) կատարելամիտ իմաստնոց եցոյց և յայտնի ժդ) լուսոյն սքանչելութեամբ ժե) զխոստացեալսն ժզ) ծնունդն ժէ) զանկէտ ժը) ի մշտնջենական ժթ) Հօրէն ի) զամենայն իա) ընդ մարդկութեանս իբ) ընդ մեռոտս իգ) մարդիկ իդ) Աստուածութեան իե) մարմնովն առ Հօրն ընդ աջմէն իզ) յԱստուածութիւն

1) Յովհ. ԺԴ, 9.

դին հզօրակից[ա], որոյ[բ] ի ձեռն հաստեաց[գ] զհիմունս երկրի և պարզեաց զպարզուածս երկնից. վասն որոյ մարգարէն ասէր[դ]. Ցայտնեաց զաջ[ե] իւր և զբազուկ իւր ամենայն հեթանոսաց, և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ[1]։ Աջ Հայր ինքնին և բազուկ՝[զ] Միածինն Քրիստոս, և նովաւ լուսաւորեցան ա-
94v. մենայն եղեալք[է]. որ՝ Ի սկզբանէ էր Բանն և || Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն[2]. որ՝ Ամենայն ինչ նովաւ եղև[3], և՝ Նովաւ հաստատեցաւ[ը] ամենայն ինչ, որ յերկինս և յերկրի[4]։ Հարկ էր զի նովին սրբեսցին, որով եղենն՝ հաստատեցանն[թ], և լուսաւորեսցին[ժ]։ Եւ կամեցեալ Աստուծոյ, զի կեցցեն արարածք, և մի կորիցեն[5], առաքեաց[ժա] Աստուած զՀոգին Սուրբ ի կոյսն Մարիամ, և առ Աստուածորդին մարմին ի Կուսէն, որով կորոյս զչարն և պատուիրեաց զմեղս[ժբ] աստուածախառն մարմնովն. ի բարձրախառն խոնարհութենէն՝ զանեղելոյթս խառն տեսմանէն, աւետարանաւն հրեշտակաց[ժգ] առ հովիւսն՝ զաստուածային[ժդ] փառացն գուշակէր, մսուր և խանձարուրսն՝ զխոնարհաձև[ժե] մարմնոյն զաղքատութիւն ի մէջ բերելով. առաջնորդութեամբ աստեղն[ժզ], մոգուցն պատար|ագօք յայտնի է[ժէ] Ամենատեառնն տէրութիւն. երկրաւորաւքս գիտացուք զմարմինն, և երկրաւորաւքն ծանիցուք զաստուածութիւնն։ Արդ, տես՝ զինչ պատմէ քեզ Միքիա շնորհաւք[ժը] Հոգւոյն մարգարէութեանն[ժթ] թե՝ Եւ դու Բեթղեհեմ[ի], ոչինչ կրտսեր ես, վիճակեսցես[իա]. ի քէն ծագեսցի ինձ իշխանն տան[իբ] Իսրայելի, և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհիս[իգ]։ Սկիզբն[իդ] զաստուածութիւնն ցուցանէ. ի Բեթղէեմ՝[իե] զմարմինն

ա) միածին Աստուածորդին հզօրակիցն Հօր   բ) յորոյ   գ) հաստատեաց   դ) ասէ   ե) Ցէր զաջ   զ) Աջն Հօր ինքն է և բազուկն   է) եղեալքս   ը) հաստատեցան   թ) և հաստատեցան   ժ) և Նովաւ լուսաւորեսցին   ժա) Արդ առաքեաց   ժբ) զչարն զովին մարմնովն պարտաւորեաց զմեղսն   ժգ) զանեղելոյթ խառն տեսմանն։ Աւետարանումն հրեշտակացն   ժդ) զաստուածեղէն   ժե) մսուրն և խանձարուրքն զխոնարհաձիգ   ժզ) զաղքատութիւնն ի մէջ բերէին. առաջնորդ աստեղըն   ժէ) չ.   ժը) պատմէ մեզ Միքիայն շնորհ   ժթ) մարգարէութեան   ի) Բեթղեհէմ, ասէ   իա) կրսեր վիճակաց հասեր   իբ) ծագեսցէ ինձ պետ և իշխան տանն   իգ) աշխարհի   իդ) Ի սկզբանէ   իե) Բեթղեհէմ

1) Հմմտ. Սաղմ. ՂԷ, 1—3.   2) Յովհ. Ա, 1.   3) Յովհ. Ա, 3.   4) Կող. Ա, 16.   5) Հմմտ. Ա, Տիմ. Բ. 4. Բ. Պետ. Գ, 9.



պատմէ հրեշտակապետն. Ծնիցէ, ասէ[ա], և կոչեսցի անուն[բ] նորա Քրիստոս[գ][1]. և սաղմոսարանն երգէ՝[դ] Յառաջ քան զարև զանուն նորա[2]։ Զմարմնածնին[ե] ծնունդն պատմէ, և միւսն զաստուածութիւնն ցուցանէ՝ յաւիտեան[զ] ի Հօրէ ծնեալ։ Մեք զայս ճշմարիտ հաւատս ունիմք ի սուրբ Գրոց և յօրինաց եկեղեցւոյ՝ առաջնորդ կենաց ճանապարհի առ Աստուած, || և ի սուրբ Գիրս 95r.
վարդապետութեանն[է] հաւատովք։

Յես... *

Բայց մեզ դեռ կայ պատմել[ը] զծնունդ Աստուածորդոյն ի Կուսէն[թ]. եթե զիարդ եղեն[ժ], մի ըստ միոջէ կարգեսցուք[ժա]։ Զի ոչ եթե յորմէ հետէ ծնունդ[ժբ] ի Կուսէն իցէ՝ յայնմ հետէ սկիզբն[ժգ] անսկզբանն Բանին գոյութեան[ժդ], որ[ժե] յառաջ քան զամենայնն ծնաւ[ժզ], իսկ արդ վասն մեր էջ և մարմնով ծնաւ ի Կուսէն. այն, որ ծնունդ[ժէ] Հօր, որ զնայն ծնաւ՝ Նա միայն գիտէ։ Իսկ երկրորդն շնորհօք իւրովք[ժը] ի մէջ մարդկան, վասն զի կեցուսցէ զմարդիկ և աւրհնեսցէ յառաջին անիծիցն անդ[ժթ] զերկիր, իւրով[ի] աւրհնութիւնաբեր զարշապարօքն նորոգեսցէ[իա]. զի ետես կորուսեալ զմարդիկ, ժողովեաց զցրուեալսն և եդիտ զկորուսեալսն։ Եւ յղացեալ այնուհետև ի Հոգւոյն Սրբոյ՝|ի շնորհագիւտ ի Կուսէ յանցանաց յանապական արգանդէ, Որդին[իբ] Աստուծոյ, անհասական պայմանաւ, ըստ աւրինակի[իգ] ծննդականաց ծնեալ[իդ] զանդրանիկն ի քաղաք[իե] Դաւթի ի Բեթղեեմ[իզ], առ ի կատարելոյ զմարգարէականն թե՝ Դու Բեթղեեմ, տուն[իէ] Եփրաթայ, ոչինչ կրսեր իցես ի հազարաւորս[իը] Յուդայ,

* Եր. 195.

ա) Հրեշտակապետն ասէ. ծնցի   բ) կոչեսցեն զանուն   գ) Քրիստոս   դ) երգեաց   ե) Մին զմարմնածին   զ) զյառաջ քան զարուսեակ   է) վարդապետութեան   ը) պատմել ձեզ   թ) որ ի կուսէն   ժ) եղև   ժա) պատմեսցուք   ժբ) ծնունդն   ժգ) է սկիզբն   ժդ) գոյացութեան   ժե) այլ   ժզ) զամենայն յաւիտեանս ծնաւ ի Հօրէ   ժէ) այլ այնր ծննդոց   ժը) Իսկ երկրորդ ծնունդն շնորհիւ իւրով   ժթ) անիծից անտի   ի) և իւրովք   իա) եկեալ նորոգեսցէ   իբ) շնորհագիւտ կուսին յանարանց յանապական արգանդին զՈրդին   իգ) Եւ ըստ օրինին   իդ) ծնաւ   իե) ի քաղաքի   իզ) ի Բեթղեհէմ   իէ) Բեթղեհէմ տունդ   իը) Եփրաթայ, սակաւաւորդ իցես լինել ի հազարաւորսն

1) Մատթ. Ա, 21.   2) Սաղմ. ՀԱ, 17.

ի քէն ելցէ ինձ իշխան և պետ[ա] Իսրայելի, և ելք նորա ի սկզբանէ աւուրց[բ] [1]։ Տեսանե՞ս զելսն յառաջընծայս. տեսանե՞ս զաւետիս հրեշտակաց յօթեվանս հովուաց[գ], եթէ՝ Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է աւծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի[2]։ Տեսանե՞ս՝ որոյ ելքն ի սկզբանէ աշխարհի, այսաւր ծնաւ՝ ասէին, և[դ] պատմէին[ե] զաւծելոյն, առ ի նշանակելոյ զմարգարէականն թէ՝ Ո՞վ պատմէ ի մէջ մարդկան զօծեալ իւր[3]. **95v.** ‖ և տուեալ նշան զաւծելոյն թէ՝ Գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս և եդեալ ի մսուր[4]։ Այն իսկ էր յաւիտենական խորհուրդ՝[զ] ծածկեալ առ ի յԱստուծոյ[է], որ յայտնեցաւ երկրակեաց իշխանացն։ Զորս և[ը] անդէն իսկ աստուածականն[թ] փառացն զերգս առեալ երկնաւոր զաւրուն՝ հովուացն ուսուցանէին, զի մի՛ ի մսրոյն և ի խանձարրոյն[ժ] արհամարհեալ հովուացն կարծիցէ[ժա]։ Եւ փութացեալ այնուհետև հովուացն՝ հասեալ գտանէին զմանուկն ըստ նշանակելոյ հրեշտակին, որ ո՛չ միայն մօտաւորաց[ժբ], այլ և հեռաւորաց բազմաց երևելեաց[ժգ] աստղանշան ծանաւթ գտեալ։ Անդ էր այնուհետև քննել ի հոգիապատում մատեանս մարգարէիցն, եթէ՝[ժդ] Մանուկ ծնաւ մեր և որդի տուաւ |մեզ, որոյ իշխանութիւն է[ժե] ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա՝ հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած հզաւր, հայր[ժզ] հանդերձելոյ աշխարհին[5]։ Տեսանե՞ս, զի որդի[ժէ], և իշխան և հրեշտակ և խորհրդակից, և Աստուած հզաւր և հայր հանդերձելոյ աշխարհին՝ զայսօրածին մանուկն նշանակէ։ Քանզի և է իսկ Որդի, վասն զի զաւրութիւն Աստուծոյ է, և[դ] խորհրդակից և Աստուած հզաւր, որով և յաւիտեանքն հաստատեցան. և մանուկ, զի այսօր ի սուրբ Կուսէն ի Բեթղեհէմ ծնաւ[ժը]. որ[ժթ] յառաջապատում իսկ է[ի], թէ՝ Տէր ասաց ցիս, Որդի իմ ես դու, և ես այսաւր ծնա զքեզ[6]։

ա) պետ և իշխան   բ) յաւիտենից աշխարհի   գ) և զաւետիս հրեշտակացն յօթեւանս հովուացն   դ) չ.   ե) պատմեն   զ) խորհուրդն   է) առ Աստուծոյ   ը) Զորոյ   թ) զաստուածական   ժ) ի պատանացն   ժա) կարծիցի   ժբ) մօտաւորացն   ժգ) այլև բացականացն արևելեաց   ժդ) քննելի հոգեպատում մատեանքն մարգարէականք, թէ   ժե) իւր է   ժզ) իշխան հայր   ժէ) և որդի   ժը) ծնաւ ի Բեթղեհէմ   ժթ) որ և   ի) ասէ

1) Միք. Ե, 2. Մատթ. Բ, 6.   2) Ղուկ Բ, 11.   3) Ամովս Դ, 13   4) Ղուկ. Բ, 12.   5) Ես. Թ, 6.   6) Սաղմ. Բ, 7.



Եւ հայր հանդերձելոյ աշխարհին, զի զհնացեալ և զմահակուլ աշխարհս, ըստ հողածին առաջին մարդոյ[ա], երկրորդ ‖ մարդն կուսածին, եկեալ յերկնից՝ նորոգեացէ[բ]։ **132r.** Եւ իշխան, քանզի Գաւազան բղխեալ յարմատոյն Յեսսեա՝ ասէ Էսայի, և ծաղիկ ի շառաւիղաց անտի[1], և ծընունդ[գ] դստերն Դաւթայ[դ]։ Ապա և՝ Յաթոռն Դաւթի նստի[ե] և զարքայութիւն նորա յաջողէ[զ] [2]։ Որով եկեալ հասին աւուրք[է], զոր մարգարէն յառաջագոյն սահմանեաց. Ահա աւուրք գան, ասէ Տէր, և հաստատեցի զուխտըն իմ ի բարի[ը], զոր խաւսեցայ ի վերայ տանն Իսրայելի և ի վերայ տանն Յուդա. յաւուրս յայսոսիկ և ի ժամանակս յայսմիկ[թ] ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ իրաւունս և արդարութիւն յերկրի։ Վասն որոյ անդէն[ժ] ասէ. Դարձ անդէն[ժա] և բուռն հար զնմանէ Յակովբ՝[ժբ] ընդ ծագումն|առաջի[ժգ] լուսոյ նորա. մի տար այլում զփառս քո և մի՛ զաւգուտս քո ազգի աւտարոտաց[ժդ] [4]։

Իսկ այլ մարգարէ յայտնագոյն վճիռ[ժե] տայ թէ՝ Յաւուրն[ժզ] յայնմիկ զխորանն Դաւթի զանգեալն, և կանգնեցից զկործանեալսն նորա, և զյատակեալսն[ժէ] վերըստին կանգնեցից, և շինեցից զնա ըստ աւուրցն յաւիտենից, որպէս զի խնդրեսցին զիս մարդիկ, որ մնացեալ են, և ամենայն ազգք[ժը], յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր, որ առնէ զայս[5]. յայտնի է ի սկըզբանէ յաւիտեանս[ժթ]։ Քանզի յառաջագոյն խոստացաւ[ի] Դաւթի, ասէ և[իա] թէ՝ Ի պտղոյ որովայնի նորա[իբ] նըստուցից յաթոռ նորա[իգ] [6]. բարձրացուցեալ քան զամենայն թագաւորս երկրի՝ հաստատել[իդ] զաթոռ նորա ըստ աւուրց[իե] երկնից, իբրև զարեգակն առաջի իմ և[իա] իբրև ‖ **132v**

ա) զմահակուլ աշխարհս ըստ առաջին հողածին մարդոյն   բ) նորոգիցէ   գ) անտի՝ զծնունդ   դ) Դաւթի   ե) նստցի   զ) յաջողեսցէ   է) աւուրքն   ը) հաստատեցից զբանս իմ բարի   թ) Յաւուրսն յայնոսիկ և ի ժամանակին յայնմիկ   ժ) և անդէն   ժա) Յակոբ   ժբ) չ.   ժգ) առաջին   ժդ) օտարոտայ   ժե) իսկ վճիռ   ժզ) Յաւուր   ժէ) կանգնեցից զխորանն Դաւթի, զանգեալն կանգնեցից, և զկործանեալս նորա և զյատակեալս նորա   ժը) խնդրեսցեն զիս մնացորդք մարդկան և ամենայն հեթանոսք   ժթ) յաւիտեանց   ի) խոստացեալ   իա) չ.   իբ) յորովայնէ քո   իգ) քո   իդ) հաստատել   իե) ըստ աւուրցն

1) Ես. ԺԱ, 1.   2) Ես. Թ, 7.   3) Երեմ. ԼԳ, 14—15   4) Բարուք. Դ, 2—3.   5) Ամովս Թ, 11—12.   6) Սաղմ. ՃԼԱ, 11.

զլուսին, զի հաստատեալ է յաւէտ[1]։ Նա եկեալ, որոյ իւրն է, և եցոյց[ա] հեթանոսաց[2], որպէս և պատմեացն Մովսէսի[բ]. և յարուցեալ թագաւորն[գ] համաշխարհական՝ զամենայն ազգս հնազանդելով, և թագաւորութիւն իւր[դ] այլում ոչ փոխեալ, ըստ ասելոյն[ե] Դանիէլի[3], որ վասն[զ] Դաւթի իսկ, որոյ որդի անուանեցաւ Քրիստոս. բղխեալ ի սրտէ հոգէապատում մարգարէից՝ բարբառովք զհրամանս[է] թագաւորին յայտ արարեալ, նախ թե՝ Գեղեցիկ է տեսութեամբ քան զամենայն որդիս մարդկան, և շնորհս սփռեալ[ը] ի շրթանց իւրոց[4], և գեղեցիկ՝ ոչ կերպարանաց[թ], այլ անզուգական փառացն ասէ։ Եւ դարձեալ. Ա՛ծ[ժ] զսուր քո ընդ մէջ քո, հզօր, զի վայել է ճշմարտութեան քում[5]։ Ապա յետ այսորիկ զոր լուաբուքն, զի միանգամայն[ժա] վճիռ տայ[ժբ]. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից, գաւազան|ուղղութեան և[ժգ] գաւազան արքայութեան քո[6]. և նշանակէ, թէ աւծեալն է այն, զոր և ինքն և մարգարէքն զմուտ աւծելոյն երգէին, ասելով[ժդ] թե՝ Վասն այսորիկ աւծ զքեզ Աստուած, Աստուած քո, իւղով ուրախութեամբ՝[ժե] առաւել քան զընկերս քո[7]։ Տեսանես, յառաջագոյն[ժզ] ծանուցեալ տեսանաւղ[ժէ] մարգարէին Հոգւով[ժը] Սրբով, թե Միածին Որդին Աստուծոյ, աթոռակից Հօր իւրոյ[ժգ], Սիրելին՝ եղև Որդի Դաւթի, և բարձրացուցանել զաթոռ նորա յաւիտեան[ժթ]. որպէս և ասէ իսկ թէ՝[ի] Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ, զի[իա] ընդ աջմէ իմմէ է[8]։ Զոր և մարգարէն գիտէր[իբ], զի երդմամբ երդուաւ նմա[իգ] ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա[9]. որում օրինակքն[իդ] իսկ վկայեն[իե] թէ՝ Ցազգէ Դաւթի,

ա) իւրն է թագաւորութիւն. և նա է յայտ   բ) Մովսէս   գ) թագաւոր   դ) զթագաւորութիւն իւր ազգի   ե) ասացելոյն   զ) նաև   է) հոգեպատում բարբառով մարգարէին, զհանգամանս   ը) սփռէ   թ) զկերպարանացն.   ժ) թէ՝ (ծ   ժա) յետ այնորիկ միանգամայն   ժբ) տալ, թէ   ժգ) չ.   ժդ) մարգարէն զմուտ օծելոյն երգէր ասելովն   ժե) ուրախութեան   ժզ) զի յառաջագոյն   ժէ) տեսող   ժը) Հոգւովն   ժթ) յաւիտենական   ի) ասէն.   իա) իմ յամենայն ժամ. և   իբ) զոր և գիտէ.   իգ) Նմա Աստուած   իդ) և օրինականքն   իե) վկայքն

1) Սաղմ. ՁԸ. 28, 30, 37—38.   2) Հմմտ. Ծննդ. ԽԹ, 10.   3) Հմմտ. Դան. Բ, 44.   4) Սաղմ ԽԴ, 3.   5) Սաղմ. ԽԴ, 4.   6) Սաղմ. ԽԴ, 7.   7) Սաղմ ԽԴ, 8.   8) Սաղմ. ԺԵ, 8.   9) Սաղմ. ՃԼԱ. 11.



յառաջագոյն գուշակելոյն՝ ի Բեդղեհէմ[ա] գեղջէ գա Քրիստոս[բ][1]։ Եւ անդ նա ոչ նշանով մո‖գուցն միայն եկելոյ[գ] թագաւոր ճանաչէր, և որք ասէինն[դ]. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից[ե][2]. և տեղեկացեալ ի դպրաց անտի՝ հասին ի տեղին[զ], ուր էր մանուկն, որում երկրպագեալ՝ մատուցեալ պատարագս[է], և միանգամայն տէրագէտ հրեշտակածանօթ եղեալ դարձան։ **138r.**

**Ցեսոյ *.**

Զի թեպէտ[ը] խոնարհեցաւ Աստուածութիւնն յերկնից, սակայն յերկարակեաց ի ներքնոյս[թ] բարձրացեալ ճանաչի. ի միտ առեալ, զի թեպէտ[ը] խոնարհութեամբ էջ, սակայն ինքնաբուն իւրոյ[ժ] փառացն զաւրութեամբ վերացեալ՝ ըստ յառաջագուշակ տեսողութեանն[ժա] մարգարէին, թե՝ Վերասցի և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ[3]։ Իբրև զի ոչ էր[ժբ] նա կարաւտ փառաց, այլ յետ իւրովք կամօք զիւր կամս կատարելո՝ համբերատար իշխանութեամբն, ոչ|եկամտօք[ժգ] ինչ, այլ բնական փառօքն վերացեալ ճանաչէր երկնաւոր զաւրուն, ըստ այնմ, որ ասեն[ժդ]. Համբարձաւ Աստուած աւրհնութեամբ[ժե][4]։ Եւ** զի էջ ի խոնարհութիւն խոնարհ մարմնով[ժզ], վասն այսորիկ[ժէ] նորին խոնարհութեան մարմնոյ[ժը] կերպարանօք բարձրանայ։ Իբրև զմարդ խոնարհեցաւ, որ առաւել[ժթ] քան զամենայն մարդիկ խոնարհ և հեզ[ի], և հանդարտութիւն ցուցեալ համբերութիւն վշտաց, որ առ մարմինն[իա]. վասն այնորիկ[իբ] նովին մարմնովքն բարձրացեալ ի խոնարհութեանցն՝ մարմնովքն իբրև զմարդատեսիկ[իգ] կերպարանացն, զոր առ[իդ]։

* Եր. 202.

** Աղաթանգեղոսի համեմատութեամբ այստեղ 12 տող բաց է թողած:

ա) Դաւթի և ի Բեթղահէմ   բ) Քրիստոսն   գ) Նա ոչ միայն յառաջագոյն գուշակելոցն, այլ և առ ժամայն նշանաւ մոգուցն եկելոց   դ) որք և ասէին   ե) Հրէից   զ) ի դպրացն՝ հասանէին   է) որում և երկրպագեալ և պատարագս մատուցեալ   ը) թէպէտ և   թ) յերկրակեաց ի ներքնոցս   ժ) իւրոց   ժա) տեսողութեան   ժբ) ոչինչ է   ժգ) եկամտաւ   ժդ) ասէն թէ   ժե) և Տէր մեր ձայնիւ փողոյ   ժզ) մարմնովն   ժէ) այնորիկ   ժը) մարմնոյն   ժթ) խոնարհ երևեալ. և առաւել   ի) հեզ և խոնարհ   իա) համբերութեամբ վշտացն. զոր առ ի մարմինն   իբ) այսորիկ   իգ) ի խոնարհութեանցն մարդկութեամբն վերացեալ և բարձրացեալ և փառաւորեալ, իբրև զի զմարդատեսիլ   իդ) առն

1) Ցուհ. Է, 42.   2) Մատթ. Բ, 2.   3) Ես. ԾԲ, 13.   4) Սաղմ. ԽԶ, 6.

*Երանելւոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ ի Մեկնութենէ առաքելոյն, յԵբրայեցոց թղթոյն՝ յԱռաջին ճառէն, ի քանէն՝ Բազում մասամբք եւ բազում օրինակաւ կանխաւ խաւսեցաւ։*

183v. ‖ Ասէ այսուհետեւ երանելին Պաւղոս. Բազում կերպարանօք խաւսեցաւ ընդ հարս մեր մարգարէիւքն. ի կատարածի աւուրցս այսոցիկ խաւսեցաւ ընդ մեզ Որդովն իւրով, զոր եդ ժառանգութիւն, որով և զաշխարհ արար[1]։ Իսկ ինքեամբ խաւսեցաւ ընդ մեզ Որդի՝ ոչ ևս միջնորդօք սրբովք մարգարէիւք, այլ ինքեամբ, որպէս ասացին, լեալ իբրև զմեզ Միածինն՝ Աստուած խօսի։ Խօսել ասեմք մօր որդովն իւրով, ոչ եթե մարդով իւիք՝ որդւոյն միջնորդաւ, որ պատգամաւորութեամբ ինչ զայլոց զկամս և զխորհուրդս պատմեսցէ. այլ իւրով բարբառովն և իւրով մարմնովն խօսեցաւ ընդ մեզ Որդի. զի իւրով իսկ է Միածին մարմինն, զի ոչ այլոյ ուրուք. զի Աստուած է բնութեամբ, և եղև մարդ տեսչութեամբ՝ իւրով|ծառայական կերպարանօք[2]։ Զի է բնութեամբ իւրով ազատ և ազատել և Տէր ամենայնի, որով ասեմք յիրաւի ուսեալք յԱստուծոյ. և այս բարութիւն առաւելութեան պահեցաւ մեզ յԱստուծոյ ի Հօրէ ի Քրիստոս, և զի խոնարհեցոյց զանձն իւր վասն սիրոյ, որ առ մեզ՝ Որդի եղև մարդ, և ոչ անկաւ յԱստուածութենէ իւրմէ, այլ եկաց մնաց որ էն։ Յայնժամ խաւսեցաւ ընդ մեզ՝ զանճառ Հօր յայտնի առնել մեզ զխորհուրդն։ Վասն այսպիսի իրաց կոչի անուն նորա հրեշտակ մեծի խորհրդոյ[3], զի պատմեաց մեզ որչափ լուաւ ի Հաւրէ[4]. զի պատմեաց ոչ իբրև մարդով, ուրոյն միջնորդութեամբ՝ ոմանց յիմարութիւն կարծեցաւ, այլ ինքն իսկ եղև մարդ և իւրով բարբառովն խօսէր ընդ լսօղսն։ Եւ յորժամ ասեմ, թե մարմին եղև Բանն, ոչ եթե լոկ մարմին 184r. ‖ ասեմ, այլ յամենայն մարդկութենէն յայտ առնեմ՝ ոգւով բանաւորութեամբ և ամենայն մարդկութեամբք կացուցեալ մարդկութեան։ Այլ զոր ոմանք տխմարութեամբ և յանդըգնութեամբ ածեն ի Քրիստոս, և մարդ ուրոյն ցուցանեն որ ի Կուսէն ծնեալ՝ կամին պաշտաւնեայք լինել իրաց

1) Եբր. Ա, 1—2։ 2) Հմմտ. Փիլիպ. Բ, 7. 3) Հմմտ. Ես. Թ, 6. 4) Հմմտ. Յովհ. Ը, 40. ԺԵ, 25.



ընգելացն (?) մոլորութեամբ, որք ոչն կարեն ճշմարտութեամբ խոստովանել զմիութիւն երեսացն միոյ Որդւոյն Աստուծոյ՝ մարմնացելոյն ըստ Գրոց։ Եթե ոչ ըստ արժանի զօրութեան խորհրդոյ քարոզաց նայեսցիս, մարդ լոկ կարծիս Քրիստոս, եթե ոչ տացես նմա ըստ արժանի իրացն ճշմարտութեան, զի է Աստուած. վասն Բանին, որ ի բնութեանն է Աստուծոյ, ի սուրբ Կուսէն մարմնացաւ, և ոչ եթե յարելութիւն ինչ հաւասարութեան, այլ միութիւն ի վեր քան զիմաստութիւն մարդկան, որ միացոյց իւր Բանն Աստուած մարմին ի Կուսէն։ Եւ վասն զի էակից է Հօր|և Որդի բնութեամբ և մշտնջենաւորակից, յորժամ ըստ կամաց Հաւր ի Կուսէն ծնանի ըստ մարմնոյ վասն մարդասիրութեան իւրոյ, իբրև սկիզբն որդիութեան առնու յանձն միւսանգամ վասն մեր, և ասէ յառաջագոյն ի բերանոյ Դաւթի զի՝ Տէր ասաց ցիս. Որդի իմ ես Դու, և ես այսօր ծնա զքեզ[1]. զի այսաւրդ սկզբնաւորութեան և մերձաւորութեան և արդիս ժամանակաց անուն է, յորմէ հետէ եղեն մարմին։ Եւ որ Ադամաւն պարտաւորեցաւ, և ի վիշտս մատնեցան և եղեն ընդ անիծիւք և ընդ մահուամբ գրաւեալք, նոյնպէս դարձեալ յամենայն ազգս մարդկութեանն Քրիստոսիւ բաշխեսցի՝ լուսաւորութիւն ազատութեան, աւրհնութեան և կենաց ընդունի յանձն իւր։ Զայս ոչ իբր կարաւտեալ բնութիւն Միածնին Աստուծոյ, զի լի են նովաւ ամենայն արարածք. քանզի էր բնութեամբ Աստուած ‖ և ոչ իւիք է 184v. կարաւտ, մեծացուցանէ և լնու երկնաւոր բարեաւքն իւրովք զամենայն արարածս։ Դարձեալ անուանի վասն այդպիսի իրաց երկրորդ Ադամ[2], զի սկիզբն արասցէ երկրորդ կենաց. զի որ առաջին Ադամաւն զվնաս եմուտ, ինքն ուղեսցէ և զիւր մեծութեան բնութիւնն մարդկան շնորհեսցէ։ Զի ապստամբեցան յանդգնութեամբ մարդիկ և հեռացան ի ծառայութենէն Աստուծոյ, կամեցաւ Հայրն և Արարիչն կեցուցանել զարարածս իւր, առաքեաց զՄիածինն իւր յաշխարհ՝ զԲանն Աստուած, զի լիցի մարմին և շրջեսցի ընդ երկրաւս իբրև զմարդ՝ Քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել, կոչել ամ Տեառն ընդունելի[3]. զի լիցի քաղցրութեամբ աստուածաբարբառոյն,

1) Սաղմ. Բ, 7. 2) Ա. Կորնթ. ԺԵ, 45. 3) Հմմտ. Ղուկ. Դ, 19. Ես. ԿԱ, 1—2.

որ ասէր. Եկայք առ իս. ամենայն աշխատեալք և վաստակեալքդ, և ես հանգուցանեմ |զձեզ[1]: Եւ յիրաւի և ուղիղ մտօք իմանալ, թէ աղքատանալն ասի վասն մեր, որ էն մեծ բնութեամբ, զի մեք նորա աղքատութեամբն մեծասցուք[2]: Ցերևմ երևէր աղքատութիւն նորա, եթե ոչ եղև իբրև զմեզ, այսինքն մարդ կատարեալ՝ մնացեալ ի նմին անշարժութեանն Աստուած: Այսպէս ուսուցանէ զմեզ Պաւղոս երանելի յասել անդ իւրում թե՝ Որով արար զաշխարհ[3]. զի թե ի վախճանի ժամանակի ծնանի Կոյսն զԷմմանուէլն, որպէս արդեւք լինել ասիցէ զաշխարհս հոգեկիրն. յիրաւի ասէ և առաւել յիրաւի. զի որ յԱստուծոյ Հօրէ Բանն, որ յառաջ քան զամենայն ժամս և ժամանակս եղեալ ի Հօրէ բնութեամբ, ի վաղջան աւուրցս այսոցիկ ծնանի ի Կնոջէ ըստ մարմնոյ և ոչինչ փոխի ամենևին յԱստուածութեան պատուոյ, որ ունի զժամանակ էութեան կարգս բնութեամբ, զի գրեալ է այսպէս. || 185r. Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան[4]. զի և մարդկութեամբն երևեալ՝ կայ ի նմին, վասն բնութեան Աստուածութեանն, որ կանուխ է քան զամենայնն. և հաւանեցուցանէ զքեզ բանն, որ ասէր ընդ Հրէայսն թե՝ Արդարև ասեմ ձեզ, յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես[5]:

Նորին՝ յԵրկրորդ ճառեն, որ ի՝ Ծագումն փառաց եւ կերպարան[6]:

Արդ երևեցաւ մեզ Որդի՝ զՀաւր բնութեան փառս ծագեալ յինքեան, և զի ասէր իսկ յայտնապէս. Որ ետես զիս՝ ետես զՀայր իմ[7]: Զի է կերպարան էութեան Նորա, առնու դարձեալ զմեր նմանութիւն թանձրութեան և շաւշափելի մարմնոյ և յանձն առնու զբովանդակիլ և զսահմանելի անուն. զի բնութիւն Աստուածութեանն անմարմին և անշօշափելի է: Եւ ոչ ըստ նմանութեան մարմնաւորաց ընդունի ծագումն զկերպարանս էութեան Հաւր Որդի,|որ է ինքն անձնաւորութեամբ էութեանն. թեպէտև ի Հօրէ իմանի և ի նմանէ ծնեալ բնութեամբ՝ ունի յինքեան զմեծութիւն Հօր բնութեամբ ամենայնիւ, բայց միայն ի հայրութենէն: Որպէս անշիջելի է մշտնջենաւոր Հայր և կա մնա ի նմին, որ է, այսինքն Հայր, և յոր-

1) Մատթ. ԺԱ, 28. 2) Հմմտ. Բ. Կորնթ. Ը, 9. 3) Եբր. Ա, 2. 4) Եբր. ԺԳ, 8. 5) Յովհ. Ը, 58. 6) Եբր. Ա, 3. 7) Յովհ. ԺԴ, 9.



դիութիւն ոչ փոխի, նոյնպէս և Որդի կա մնա յորդիութեան մշտնջենաւոր և երբէք ի հայրութիւն ոչ փոխի, զի յայտ լիցի ամենևին թե կերպարանք էութեան Հօր. և ցուցանէ զծնաւղին իւրոյ առաւելութիւն յինքեան և զփառացն վայելչութիւն՝ զգեղեցկութիւնն: Զի Աստուած ճշմարիտ է և ճշմարիտ յԱստուծոյ ի Հօրէ ծնեալ, լոյս ի լուսոյ, կեանք ի կենաց, կրէ յինքն զամենայն բանիւ զաւրութեամբ իւրով. զի բան է կենդանի անձնաւոր, ծնեալ ի յԱստուծոյ Հօրէ բնութեամբ ամենազաւր, և կարող է հրաման || նորա, և զամենայն ընդ իւրեաւ ունի, 185v. կազմէ և յարդարէ կամաւք իւրովք: Ասէ ցբորոտն. Կամիմ, սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւն[1]: Դարձեալ և մեռելոյն հոտելոյն ընթանալ ի կեանս իշխանութեան հրամայէ, որ վայել է իսկ Աստուծոյ իշխանութեանն բարբառոյ. երբեմն ասէ. Ղազար, եկ արտաքս[2]. երբեմն դարձեալ և այլոյ որդւոյն ասէ. Պատանի՛ դու, քեզ ասեմ, արի[3]: Սաստէ դարձեալ ծովուն և հրամայէ իբրև Տէր և արարիչ ամենայնի, զի և զՀօրն իսկ զփառս և զառաւելութեան յինքեան ցուցանէր, իբրև ցոյց ճշմարիտ վասն աստուածութեան նորա: Ցուցանէ դարձեալ վասն մարդանալոյն տեսչութեան, որով ապրեցաքն և մեծացաքն, սրբեցաք արեամբ նորա, և հաւանեցուցանէ զքեզ երանելին Պաւղոս, որ ասէ.|Որով ընկալաք զփրկութիւն արեամբ նորա և թողութիւն մեղաց[4]: Պարտ է ածել յայսմիկ զմտաւ զմեծ և զփառաւորեալ խորհուրդ մարդանալոյ փրկութեան մերոյ՝ զՄիածին Որդին Աստուծոյ, և զարմանալ ասել ըստ բարբառոյն մարգարէին Ամբակումա. Տէր, զլուր քո լուա և երկեա, նայեցայ ի գործս քո և զարմացայ[5]. այս իսկ են զարմանք ի վեր քան զմիտս մեր, զի Բան է բնութեամբ և ծագումն փառաց Հօր և կերպարան էութեան Նորա, և եղև մարմին, և ոչ եթե յիւր բնութեանն ինչ յաւելոյր պատիւ ի մարդանալոյ տեսչութեանն, այլ վասն մեր առնուցու յանձն զվիշտս, համբերէ խաչի մահու, արհամարհէ զամաւթ անարգանաց, զթշնամանս, զթքանս, զի զմեզ արեամբն իւրով ազատեսցէ և սրբեսցէ յամենայն պղծութենէ, և զազատեալսն || մերձեցուսցէ ինքեամբք 186r. առ Հայր իւր. զի նովաւ ընկալաք զընծայումն առ Հայր:

1) Մատթ. Ը, 3. հմմտ. Մկ. Ա, 41—42. Ղուկ. Ե, 13. 2) Յովհ. ԺԱ, 43. 3) Ղուկ. Է, 14. 4) Կող. Ա, 14. 5) Ամբ. Գ, 2.

Նոյն ինքն է դուռն և ճանապարհ. զի թէպէտ և եղև Բանն մարմին և բնակեաց ի մեզ[1] և իբրացոյց մարմին իւր ի Կուսէն, այլ նովին բնութեան և փառօք. և յորժամ ընդ մեզ իբրև զմեզն երևեցաւ՝ յառաւելութենէ պատուոյն Աստուծոյ և Հաւր աթոռոյն ոչ երբէք մերժեցաւ. զի էր իբրև զմարդ յերկրի և լնոյր դարձեալ զերկինս, և լի էին նովաւ ամենայն արարածք։ Զի Աստուածաշունչ Գիրք այլովք կերպարանօք հաստատեն ի մեզ՝ առանց բաժանելոյ զխորհուրդս մարդանալոյ և միանալոյ մարմնաւորութեանն, և ասեն այսպէս. Բան մարմին եղև. զի մարմին յորժամ ասէ՝ հանդերձ հոգւով և մտաւք բանաւորութեանն իմանամք զմարմնանալն. զի նմին իմանալի է Աստուած բնութեամբ՝ յԱստուծոյ ի Հաւրէ ան|ճառայութեամբ ծնեալ և նոյն մարդ վասն տեսչութեան Աստուածութեան ի վեր քան զմիտս իմանալոյն, որ Աստուծոյն միայն վայել է։ Եւ ոչ ասեմք, եթէ արգելեալ սահմանեցաւ բնութիւն Բանին Աստուծոյ ի մարդկութեանն. զի անսահման անբովանդակելի Աստուածութիւն բովանդակէ զամենեսին, ոչ բովանդակի յումեքէ, այլ ի սուրբ մարմնոյ իւրո. և լնոյր զամենայն արարածս, և աթոռակից ծնողին իւրոյ։ Եթէ նայեսցի ոք ճշմարիտ հաւատոց նայեցած ի սուրբ և ի փրկական խորհուրդն՝ տեսանէ ի Քրիստոս զկատարեալ մարդկութիւնն, կատարեալ դարձեալ զբնութիւն Բանին Աստուծոյ. սակայն մի Քրիստոս, մի Որդի խոստովանելի է՝ միով երեսաւք, միութեամբ ի վեր քան զմիտս, անճառ, անհաս գիտութենէ մտաց մարդկան, որ Աստուծոյ գիտութեանն միայն անդ
186v է։ || Քանզի անուանի Եմմանուէլ, ի սուրբ Կուսէն ծնեալ՝ ընդ մեզ Աստուած[2]. այսուհետև թէ մարդ անուանեսցես զնա և լուիցես ի մարդկութենէ, եթէ որ իբրև զմեզ եղև յայտ առնես։

Նորին՝ յԵրրորդ Ճառէն. Յորժամ միաւորեցաւ անձն զանուանելին յաշխարհ։

Վասն զի Բանն Աստուած ի Հօրէ կամեցաւ նորոգել զամենայնն, որպէս ի սկզբանէն, միացոյց իւր մարմին ի սուրբ կուսէն Մարիամայ և անուանեցաւ Որդի Մարդոյ, զի մատուսցէ զինքն Աստուծոյ Հօր պատարագ

1) Յովհ. Ա, 14. 2) Մատթ. Ա, 23. Ես. Է, 14.



հաշտութեան, գնեաց զամենեսեան արեամբն իւրով, տիրեաց կենդանեաց և մեռելոց և բազում իրաւք տեղեակս արարեալ զմեզ խորհրդոց փրկութեան իւրում։| Եւ առաւել զայս պարտ է մեզ գիտել, զի թէպէտ և խոնարհեցաւ Բանն Աստուած և մարդացաւ, ոչ զի կայցէ մնացէ ի խոնարհութեան ընդ մեզ, այլ և հանդերձ մարդկութեամբ է նոյն Աստուած. այլ զի կամօք իջոյց զանձն իւր ի խոնարհութիւն և եղև մարմին և անուանեցաւ և եղև եղբայր մեր երկրաւորացս։ Սակայն թէպէտ և եղև մարդ և անուանեցաւ անդրանիկ ընդ բազում եղբարս, սակայն գիտեմ զառաւելութիւն նորա և զփառս, խոստովանիմք ի վերայ ամենայնի Աստուած։ Այլ այսպէս ասեմք զմտանելն նորա յաշխարհ, զի եղև իբրև զմի ի մէնջ և անուանեցաւ մարմնաւոր իբրև զմարդ յաշխարհէ, որ է բնութեամբ ի վերուստ. և զարժանաւորութիւն փառաց իւրոյ զառաւելութիւն, որ միայն Աստուծոյ վայել էր, առանց մերժելոյ ունէր յինքեան. այլ տեսչութեամբ իմաստութեամբ իւրով և կամօք բարերարութեամբ կամեցաւ լինել իբրև զմասնաւոր և զ || բովանդակելի։ Եւ 137r.
այն, որ բովանդակելին էր բնութեամբ, էր յաշխարհի իբրև զԱրարիչ, արդ տեսչութեամբ իւրով և կամօք Հօր մտանէ յաշխարհ, իբրև զմի յաշխարհէ, զի կեցուսցէ զայնոսիկ, որ էին յաշխարհի, և բռնադատեալքն պատրանօք խաբէութեամբ չարին եկեսցեն Քրիստոսիւ առ Աստուած Հայր։ Զի որպէս Ադամաւ, որ մասնաւոր է յաշխարհէ՝ անկաւ յապականութիւն մարդկան բնութիւն, գրեցաւ ընդ մեղաւք և եղև ընդ մահուամբ, նոյնպէս դարձեալ Քրիստոսիւ, որ կամօք իւրովք եղև իբրև զմասնաւոր յաշխարհէ, զի կեցուսցէ զամենեսեան ի նորոգութիւն կենաց՝ ի սրբութիւն և յարդարութիւն[1]։ Քրիստոսիւ ամենայն ինչ նորոգեցաւ. այլ գիտել մեզ ճշմարտիւ և հաւատալ, եթէ որ է Բանն Աստուած և եղև մարմին և ի բնութիւն մարմնոյ ոչ փոխեցաւ, զի անհնար էր, այլ զի միացոյց իւր մարմին ի Կուսէն։ Եւ ոչ ասեմ մարդ զոք կամօք|և հաճութեամբ մերձաւորութեամբ մերձենալ առ Աստուած, այլ միացեալ և մարդացեալ Բանին Աստուծոյ ի սուրբ Կուսէն՝ սա մի Որդի է Յիսուս Քրիստոս, մի Տէր անբաժանելի. ոչ բաժանեմ ի մի երեսս զԲանն Աստուած

1) Հմմտ. Հռոմ. Ե, 12—21.

և ի մի երես զմարդն ի Կուսէն, այլ զմի և զնոյն Որդի խոստովանել Աստուած մարդացեալ։ Այսպէս տեղեկացուցին զմեզ Գիրք Աստուածաշունչք՝ զնոյն ինքն զԲանն Աստուած Աստուծոյ Հաւր միացեալ բնութեամբ և մարդացեալ, մարմին բանաւոր և մտաւոր երևեալ յերկրի՝ մարդ, հանդերձ առաւելութեամբ փառօք Աստուածութեանն։ Այսուհետև մի է Քրիստոս՝ Որդի և Տէր [1], ըստ Գրոց. այսպէս հաւատասցուք։

Նորին՝ յԵրրորդ ճառէն, ի բանէն՝ Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանաւրէնութիւն [2].

Կամեցաւ այց առնել արարածոց իւրոց Տէրն ամենայնի և Արարիչն արարածոց, զի հաճ || **187v.** եցաւ Աստուած Հայր կատարել և բովանդակել Քրիստոսիւ զամենայն և նորոգել միւսանգամ, որպէս և ի սկզբանն, և զդիւրամոլար միտս մարդոյն, որ ի պատրանս անգեալ էր, շնորհօք Հոգւոյն Սրբոյ տեղեկութեամբ հաստատեսցէ ի գիտութիւն ճշմարտութեան և կացուսցէ առաջի իւր սուրբս և ամբիծս և անարատս [3], և յամենայն աղտոյ և ի մեղաց սրբեսցէ, և յառաջին պատուիրանացն ազատեալս՝ ի ճշմարտութիւն հաստատեսցէ զմեզ։ Եւ արդ, ձրպէս իցէ ի վերին այցելութեանն խնամոյ կարգք. Բանն իւր Միածին, որ հաւասար կերպարանօք էր առ Հայր իւր, որ էն և ասին՝ Ոչինչ էր նմա յափշտակութիւն հաւասար Աստուծոյ, այլ զանձն իւր ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի էառ, ի նմանութիւն մարդկան եղեալ և կերպարանօք մարդ գտաւ. խոնարհեցոյց զանձն իւր, եղև հնազանդ մինչև ի մահ, և|մահու խաչի [4]։

Բազում հոգաբարձութեամբ տեղեակք խորհրդոյ Տեառն իւրեանց՝զբարձրութիւն փառաց Աստուածութեանն Միածնին յայտնեն պատմութիւն քրիստոնէից մեզ, ցուցանել զխորհուրդ զունայնալոյ և զխոնարհելոյ կարգս իմաստութեամբ.իջուցանեն զԲարձրն բնութեամբ, զի դարձեալ բարձրացուցանել զնա, և աստուածութեամբ մեծութեամբ բնութեան պսակեն զնա՝ հանդերձ մարմնովն, և հաւանեցուցանեն զըբեալսն շնորհաւք նորա, եթէ վասն մեր կամօք աղքատութիւն առ յանձն, զի իբրև սկիզբն երկրորդ

1) Հմմտ. Ա. Կորնթ. Ը, 6. 2) Եբր. Ա, 9. Սաղմ. ԽԴ, 8.
3) Հմմտ. Կողոս. Ա՛ 22. 4) Փիլիպ. Բ, 6—8.



արասցէ զկնի առաջին մարդոյն։ Ասէ երանելին Եսայի այսպէս. Ահա կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցէ զանուն նորա Էմմանուէլ. եւղ և մեղր կերիցէ. յառաջ քան զժամանակ գիտելոյ նորա զչարն՝ ընտրեսցէ զբարին. յառաջ քան զգիտել մանկանն զչար կամ զբարի, անարգեսցէ զչարն և ընտրեսցէ զբարին [1]. Սիրե || **188r** ցեր զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն [2]. վասն զի ինքն է արդարութիւն և Աստուած։ Զի մինչչև ի ժամանակ մանգանն կարողութիւն գիտելոյ զպարսաւէն և գովել զգովութեան արժանի, զիարդ էր հնար խնդրել զչարն և ընտրել զբարին։ Այլ այսպէս ուսուցին, թէ Աստուած երևեցաւ մարմնով ըստ արժանի իւր բնութեան բարեաց՝ յայտնել զընտրութիւն բարութեան և զպարսաւանս չարեաց. այս ասացեալ լիցի վասն ճշմարիտ կրաւնիցն հաւատոյ։ Արդ, վասն այսորիկ բարերար Բանն Աստուծոյ, Որդին բնութեան Հօր, որ անկարօտն է բնութեամբ, սուրբն, արդարն, որ սիրէ զարդարութիւն և ատէ զանօրէնութիւն՝ եղև իբրև զմեզ և անուանեցաւ ծառայ, և Աստուած անուանեաց իւր բնութեանն զՀայրն իւր՝ վասն մարդանալոյն. զի թէպէտ և Աստուած էր բնութեամբ, աւծանիլ ասէ ի Հօրէ Հոգւով Սրբով, ոչ եթէ իբրև կարօտ բնութիւն՝ այն որ սուրբն իսկ է և Աստուած| բնութիւն, այլ զի ինքեան բացցէ մեզ դուռն շնորհաց և արժանի արասցէ զմեզ Հաւր աւրհնութեանն. որ յառաջագոյն ընդդիմադարձ գտեալ էաք պատուիրանազանցութեամբ Ադամա, և զկնի նորա ի վերա մեր բռնացեալ էին մեղքն մեր։ Վասն այսորիկ ոչ պատգամաւորաւք և ոչ հրեշտակօք, այլ ինքնին Տէրն փրկեաց զմեզ. զի և երանելին Յոհաննէս ասէ, և զի Աստուած է բնութեամբ և եղև մարմին, զհոգևոր վերստին ծննդեամբ պատուականութիւն շնորհեաց զաւրութեամբ իւրով, այսպէս ասէ վասն նորա. Սա է, որ եկն Ջրով և Հոգւով, Յիսուս Քրիստոս. ոչ Ջրով միայն, այլ և Ջրով և արեամբ. և Հոգին է, որ վկայէ, զի Հոգին է ճշմարտութեան [3]։ Արդ, ասի Հոգին Քրիստոսի, և բաշխէ և տայ իբրև զիւր՝ ի լրութենէ իւրմէ. զի Աստուած է ճշմարիտ և Որդի բնութեամբ, և զազատելոյն ունի յինքեան զիշ || **188v.** խանութիւն բնութեամբ, իբր եղեն ի կերպարանս ծառայութեան և

1) Ես. Է, 14—15. 2) Սաղմ. ԽԴ, 8. 3) Ա. Յովհ. Ե, 6—7.

էջ ի նմանութիւն մարդկան. զի գրեալ է այսպէս. Եղև առաջին մարդն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդն Տէր յերնից[1]. որո՞վք կերպարանաւք ասասցի զայս, այլ վասն զի՞ւրմէ մարմինն ի վերուստ յերկնից եկելոյ Բանին Աստուծոյ, և զորօրինակ տէր է երկնից և աւրէնսդիր որպէս Աստուած, լինի ընդ աւրինօք, զի գնեսցէ զայնոսիկ, որ ընդ աւրինաւքն իցեն[2], որպէս և գրեալ է։ Նոյնպէս դարձեալ վերստին ծնունդն Ջրով և Հոգւով պատուեաց տեսչութեամբն, որ բնութեամբն իսկ Որդի էր. լուիցի դարձեալ ի բարբառոյ Հօր Աստուծոյ եթէ՝ Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ[3]։ Ընդունի զայս Քրիստոս և ընքեամք զիւր բաշխէ մեզ, որև իւր իսկ են բնութեամբն|բարութիւն զմեզ հաղորդ արասցէ և լիցի ճանապարհ և դուռն այսպիսի լուսաւորութեան պատուոյ։ Անգ իսկ էր Որդւոյ Աստուծոյ առնել զայս ամենայն, զի որպէս եղև պտուղ ննջեցելոցն ի կեանս և յանապականութիւն բնութեան մարդկան ինքեան, նոյնպէս դարձեալ գտցի ինքն առաջնորդ կատարմանն, իբրև պտուղ սրբեցելոցն մկրտութեամբ, զի յորդեգրութեան փառս վերացուսցէ։ Եւ զոր ինչ եցոյց յինքեան Քրիստոս՝ նոյնպիսի կարգեաց աւրինակաւ և մեզ սփռեաց զշնորհս Հաւր. որպէս եղև առ Կարապետ Մկրտչաւն, նոյնպէս լիցի և առ քև. բացցին երկինք և թռուցեալ իջանիցէ ի վերայ քո Հոգին Սուրբ, և լինիցիս և դու որդի Աստուծոյ։ Այսպիսի ճանապարհ փրկութեան նորոգեաց մեզ, որ վասն մերոյ եղև Բանն Աստուծոյ իբրև զմեզ, զի մեք
189r. առ Նմա և Նովաւ գտցուք ‖ վայելել ի շնորհս Նորա։ Եւ ո՛չ ոք կարէ կարծել ի ճշմարիտն հաւատացելոցն և յուղամիտ խորհրդոցն զայլ ոք աթոռակից Հօր, քան զայն, որ ի Կուսէ ծնեալ է ըստ մարմնոյ. և վասն զի է մինն միաւոր ճշմարիտ Որդի՝ Եմմանուէլն, իմանալի և խոստովանելի է ի մէնջ Աստուած և մարդ միանգամայն, որ անգ է Նմա ըստ պատմութեան Գրոց Սրբոց աստուածութիւն և մարդկութիւնն։

**Նորին՝ ի Հինգերորդ ճառէն, ի բանէն՝ Վասն այսորիկ պարտ է մեզ ուշկնդիր լինել բանից ասացելոց[4]։**

Արդ, զայ յայտնի, այսինքն մարմնով, և վկայէ Բարուք իւրում յասելն այսպէս. Սա է Աստուած մեր. մի

1) Ա. Կորնթ. ԺԵ, 47. 2) Գաղ. Դ, 4—5. 3) Մատթ. Գ, 17.
4) Եբր. Բ, 1.



համարեսցի ընդ ամենայն այլ ոք. եգիտ զամենայն ճանապարհ իմաստութեան, ետ զնա Յակոբայ ծառայի իւրում և Իսրայելի սի|րեցելոյ իւրոյ. և յետ այսորիկ ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ[1]։ Արդ, երևեցաւ ի վերայ երկրի և շրջեցաւ ընդ երկրաւորս, այսինքն ընդ մեզ՝ ո՛չ մերկ աստուածութեամբ, զի աստուածութիւնն աներևոյթ է, այլ զի յառաջագոյն ասացի՝ ինքն էակն եղև մարմին, ծնաւ ի կնոջէ և եղև ընդ օրինաւք՝[2] բնութեամբ Որդին Աստուծոյ. և աւրինադիր, Զի ամենայն, որ հաւատայ ի Նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս[3]։ Զի բնութիւն մարդկան, որ ընդ մահուամբ և ընդ անիծիւք գրաւեալ էին վասն յանցանացն Ադամա՝ ազատեսցէ զնոսա շնորհօք իւրովք ի վշտաց բազմութենէ և արասցէ ի վեր քան զմահ և զապականութիւնն, և ածցէ կացուսցէ առաջի Աստուծոյ Հօր՝ այն, որ եղև իբրև զմեզ տեսչութեամբ, և ո՛չ եկաց մնաց ընդ մեզ յաղքատութեանն, այլ վերացաւ ի նոյն ‖ 139v.
բնութիւնն յիւր իսկ յառաւելութիւն և ի փառս։ Եւ որպէս ասեմք զնա լինել մարմին, եթե եղև մեղք և անէծք[4], և բնութիւնն իւր ի վեր է ի չարեաց և ի զղջմանէ, այլ զի աւրհնեսցէ զարարածս իւր և փրկեսցէ զմեզ յանցանաց մեղաց և յանիծից մահու և ի պարտաւորութենէ։

Այսուհետև ինքնին պարտեւք առնուլ վարդապետութեամբ կրաւնից ճշմարիտն հաւատոյ, եթե զի՞արդ ածցեն զմտաւ յանդգնել և ասել զՅիսուս Քրիստոս ուրոյն լոկ մարդ, կամ իմանալ այսպիսի ինչ կամ ասել, այլ պարտ է գիտել ճշմարտիւ և խոստովանել զԲանն Աստուած մարդացեալ. զի այսպիսի խոստովանութիւն քարոզութեան փրկութիւն է անվրէպ ամենայն խոստովանողաց իւրոց։ Զի Աստուած է բնութեամբ, որպէս բազում անգամ ասացաք, Բանն Աստուծոյ. այլ իջոյց զանձն իւր ի խոնարհութիւն և անուանեցաւ ընդ մեզ իբրև զմարդ և փոքր մի խոնարհ|քան զհրեշտակս[5], և հնազանդ է Հօր մինչև ի մահ, զի փառաւք և պատուովք պսակեսցէ զմարդկան բնութիւնս. իբրև զմի ի մէնջ պսակեալ՝ ասէ, որ Տէրն է փառաց[6]։ Այսպէս ուղղութեամբ և աստուածպաշտութեամբ խոստովանեսցուք, այսպէս սրբեսցուք զխորհուրդս մեր,

1) Բարուք Գ, 36—38. 2) Գաղ. Դ, 4. 3) Յովհ. Գ, 15.
4) Հմմտ. Բ. Կորնթ. Ե, 21 և Գաղ. Գ, 13. 5) Եբր. Բ, 7.
6) Հմմտ. Փիլիպ. Բ, 8—11. Ա. Կորնթ. Բ, 7—8.

և զամենայն բարձրութիւն հպարտացեալ ընդդէմ գիտութեանն Աստուծոյ խոնարհեցուցուք և գերեսցուք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի։ Այսպէս առողջ և առանց փտասելոյ պահեսցուք զմիտս խորհրդեանն՝ տուելոյն մեզ քարոզօքն իւրովք։ Արդ, զի զխորհուրդս փրկութեան մերոյ կամիցին ցրուել, և զանբաժանելի զմի Որդի յերկուս կամին բաժանել, զոր Գիրք սուրբ քարոզեն մեզ, ծվ առնուցու յանձն և հաւանեսցի սատարոյ Թշնամւոյն զայսպիսի բարբաջանս. այլ բարեբարութիւն Աստուծոյ և զօրութիւնն, վասն որոյ անքնին
104r. քաղցրութիւն ի վեր քան զմիտս, որ ի վերն է ‖ բնութեամբ աստուածութեանն իւրոյ ի բնութենէ տարրեղինացս, խոստովանելի է բնութեամբ անըմբռնելի, զատեալ յըմբռնելեացս և ի մարմնաւորացս, լինի մարմին, առնու զկերպարանս ծառայութեան մարդկութեան՝ միութիւնն ի վեր քան զմիտս եղելոյ։ Քանզի ճշմարիտ քարոզացն իւրոց ի հոգեկրաց մի Որդի՝ աստուածութեամբ և մարդկութեամբ անբաժանելի, Աստուած մարդացեալ, և որոյ առեալն զկերպարանս ծառայութեան. զի Թեպէտ և կարգի և անուանի ընդ այնոսիկ, որք խնամօք և շնորհօք զան յորդեգրութիւն՝ յանուանելն իւրում ընդ նոսա, ոչ կորուսանելով բնութեան իւրոյ զազատութիւն, և ոչ հեռանայ ի Միածին անուանէ, և ոչ ըմբռնի ի ծառայութիւն ի լինելն մարդ, այլ իմանալի և խոստովանելի է և ի մարդկութեան իւրում ազագ և ազատիչ և Միածին։ Եւ զի ունայնացոյց զանձին իւր և էջ ի խոնարհութիւն վասն մեր, ոչ զի կացցէ|ննասցէ ունայնութեամբ յաղքատութեան, այլ զի հաւատացեալ լիցի մեզ, թե Աստուած է բնութեամբ, որ զամենայն լնու և ի լինելն իւրում մարմին։ Արդ, Թեպէտ և ի մարմնաւորութեանն իւրում կարգի ընդ բազում եղբարս, իբրև յորդեգրութիւն ծնեալ բնութեամբ և աստուածաբար ի Հօրէ, Բանն՝ իւր արմատ և սկիզբն երևելոյն ի մարդիկ ունի զսուրբ Կոյսն ի լինելն իւրում մարմին. այլ ճշմարիտ միաւորութեանն կարգապահ է անվրէպ և անապական զփառս Միածնին. զի Թեպէտ և եղև տեսչութեամբն իւրով մարդ և Թեպէտ և անուանի ընդ բազում եղբարս՝ խոնարհելով և ծառայութեան կերպարանօքն, սակայն անընկեր և անհամեմատ է ·և ի վեր քան զամենեսին բնութեամբ աստուածութեանն իւրով, և յառնուլն իւրում զծառայութեան կերպարանս՝



զազատութիւն բնութեան և զհաւասարութիւնն առ Հայր ոչ մերժէ յինքենէ. բնութիւնք նոր յանգին ի միմեանս։ Բնութեամբ միանալ, ասեն, չէ հնար, այլ ‖ մերձաւորութիւն մարդոյ առ Աստուած. և զիմրդ ասեն, որ այնչափ 104v.
յայտնի աղաղակեն իբր և բնութիւնք անհաւասար ի միմեանց։ Ո՛վ մշակք Թշնամոյն, հնազանդեսցին զաւրութեանն Աստուծոյ և լուիցեն ճշմարիտ քարոզացն, որ աղաղակեն և ասեն եթե՝ Բանն մարմին եղև[1], ի վեր քան զինքն մարդոյն, որ Աստուծոյ միայն է գործ՝ իմանալի և անհաւատալի, ոչ քննելի. զի այն, որ կամեցաւն մարդ լինել և առ զկերպարանս ծառայութեան, հաւատալի է մի Որդի, վասն փրկութեան մարդկան եղև մարդ՝ ի փրկութիւն արարածոց իւրոց։ Ի վերայ այսր ամենայնի մի Որդի խոստովանելի է ճշմարտութեամբ։

*Երանելւոյն Յոհաննու եպիսկոպոսապետի Կոստանդնուպօլսի՝ Մեկնութիւն որ ըստ Մատթէոսի աւետարանն*:*

Մատեան ծնելութեան Յիսուսի Քրիստոսի, Որդւոյ Դաւթի, Որդւոյ Աբրահամու[2]։ Երանելին Մատթէոս իբր զԵբրայեցւոց գրէ ասելով[ա]. Նախ քան զամենայն խնդ|րեաց ցուցանել, եթե յԱբրահամու[բ] և ի Դաւթայ էր Քրիստոսն[գ]. և վասն զի լուեալ էր Աբրահամու պատմութիւնն[դ] վասն ամանակին, և փոխանակելով Դաւթի զկենցաղն Աբրահամու, ապա և զխոստացեալ[ե] արքայութեան սերման նորա կալաւ Դաւիթ. և յիշողութեանն ամենեցուն է[զ]։ Քանզի, որպէս յայնժամ ասէր Իսահակայ[է] Աստուած. Մի՛ երկնչիր, զի ընդ քեզ եմ և բարեբանեցից զքեզ, և բազմեցուցից[ը] զքեզ սակս Աբրահամու հօր քո[3], սոյպէս յետ այսորիկ ասէր Աստուած Եզեկիայ. Գերապարեցից վասն քաղաքիս այսորիկ սակս իմ և Դաւթի և[թ] հօր քո[4]. քանզի ժառանգաւոր աստուածսիրելութեան եղև Դաւթի[ժ]։ Եւ վասն զի յետ այսորիկ ի սերմանէ Դաւ-

* Տիմոթէոս, եր. 282.

ա) իբր զի Եբրայեցւոց գրելով  բ) յԱբրահամէ  գ) Քրիստոս  դ) Նմանութիւն  ե) զխոստացեալն  զ) յիշողութեան ամենեցուն էր  է) Իսահակայ  ը) բազմացուցից  թ) չ.  ժ) Աստուած սիրելութեանն եղև Դաւիթ

1) Յովհ. Ա, 14.  2) Մատթ. Ա, 1.  3) Ծնն. ԻԶ, 24.
4) Դ. Թագ. ԺԹ, 34. Ի, 6. Ես. ԼԷ, 35.

թի ակնկալութիւն զՔրիստոս եղանել, քանզի լուեալ էր ըստ Աբրահամու ամանակին[ա], այսր աղագաւ նախ եդ[բ] Որդւոյ Դաւթի, ապա որդոյ Աբրահամու։

Իսկ ասէ աւետարանիչն յաղագս Գաբրի(ելի) թէ՝
105r. Եկն առ կոյսն խաւսեցեալ առն, ‖ որում անուն էր Յովսէփ, ի տանէն՝ ի տոհմէ Դաւթի[գ][1]. ի Դաւթայ էր կոյսն, և Յովսէփ, որ արդար ելով և պահապան օրինի, յիւրմէ հայրենւոյ և ի տանէ աստէր իւր զկոյսն. զի քան[դ] հրամայէր աւրէնն՝[ե] ոչ պարտ գոլ առնուլ կինն[զ], եթե ոչ ի նոյն ցեղէ. և վասն զի ոչ էր օրէն առ հրէայսն ազգաբանել զկանայսն[է], զի զսովորութիւնն պահեսցէ աւետարանիչն և մի՛ թուեսցէ ի տարագծել[ը] ի նախնեացն, և զաղջիկն[թ] մեզ ծանուցէ, սակս այնորիկ[ժ] զնախնիս նորա[ժա] լռեաց, իսկ զՅովսէփ[ժբ] ազգաբանեաց, զի ուսցուք նովաւ զՄարիամ, եթե էր ի տանէ Դաւթի, ուստի և ինքն, զի և աւրինացն անտեղելի մնասցէ[ժգ]։ Քանզի ասղաւղին[ժդ] ի բաց երևեցելոյ ի տանէ Դաւթի՝ և կոյսն ընդ նմա ցուցեալ է, հաւաստապէս ի սերմանէ|ելով Դաւթի, յորմէ և ծնիցաւ Յիսուս Քրիստոս։ Իսկ Յիսուս թարգմանի Փրկիչ՝[ժե] ի փրկելոյ զժողովուրդ իւր։ Հռաշափառ լսել զխորհուրդս սքանչելի[ժզ], եթե Աստուած անճառելի և անասելի և անպարփմանալի, և Հաւր համագոյելի[ժէ] Որդի՝ արգանդաւ ծնիցաւ կուսական[ժը] և եղև ի կնոջէ, և կալաւ նախնիս զԴաւիթ և զԱբրաամ, այլ որ էք ըստ ընդելագոյն[ժթ] զկանայսն զայնմ[ի], զորս այժմս[իա] ևս յիշեցաք։ Եւ մի՛ ինչ նուաստ կարծեսցես, քանզի հաւանեցաւ կոչիլ Որդի Դաւթի[իբ] իւրոյն ծառայի, զի զքեզ արասցէ Աստուծոյ Որդի՝ քոյոյ Տեառնն. ծնիցաւ ըստ մարմնոյ[իգ], զի ծնցի ըստ Հոգւոյ. քանզի ի կնոջէ ծնանիլ մեզ պատահէր. իսկ ոչ յարենէ և ոչ ի կամաց առն, այլ ի Հոգւոյն[իդ] Սրբոյ՝[2] զգերազանցեալն զմեզ և զհան-

ա) որ ինչ ըստ Աբրահամու վասն ամանակին  բ) եդ  գ) ի տանէ և ի տոհմէ Դաւթայ  դ) քանզի  ե) աւրէն  զ) կին  է) զկանայս  ը) մի՛ թուեսցի տարագծել  թ) զաղիջն  ժ) այսորիկ  ժա) նէրա  ժբ) զՅուսէփ  ժգ) անտղելի մնայցէ  ժդ) աստուղին  ժե) փրկիչ. և փրկիչ  ժզ) Հրաշափառ լսել զխորհրդոյս սքանչ  ժէ) համագոյ ելով  ժը) կուսականաւ  ժթ) զԱբրահամ, և զի՛ ասեմ զԴաւիթ և զԱբրահամ, այդ որ է քընտանելագոյն  ի) զայնս  իա) այժմ  իբ) Դաւթի որդի  իգ) իսկ ըստ մարմնոյ  իդ) այդ ի Հոգւոյ

[1]) Ղուկ. Ա, 27.  [2]) Յովհ. Ա, 13.



դերձեալն նախաձայնէ ծնելութիւն, զոր հանդերձեալ էր մեզ ի Հոգւոյն[ա] Սրբոյ շնորհել։ ‖ Եւ ամենայն իսկ այլքն 105v.
այսպիսի էր. քանզի ի մարգարէէն մկրտիլ զհինն ցուցանէր մեզ նման[բ], իսկ ի Հոգւոյն վերեկութեամբ զնորն ստորագ(ր)եաց։

## Ի Նոյն Ճառի՝ ի Հռութ եւ ի Թամար*։

Տեառնն՛ս, իբր ոչ դուզնաքեայ և սակաւուց սակս յիշեաց ըստ Յուդայի պատմութեանն ամենայնի. սակս այսորիկ զՀռութ[գ] և զԹամար յիշէ՝ զմինն այլազգի և զմինն[դ] բոզ ելով, զի ուսցիս, թե զամենայն եկն զչարութիւնն լուծանել[ե]։ Քանզի որպէս բժիշկ, այլ ոչ իբր դատաւոր ժամանեաց. զի որպէս բոզ ասին[զ] կանայս այսոքիկ, այսպէս և Աստուած զընութիւնն զբոզացեալ յարմարեաց իւր, զոր մարգարէքն[է] ի վերուստ նախասեն ի վերայ ժողովրդին[ը] եղեալ. այլ այն անզգամ եղև առ ընդակիցն[թ]. իսկ եկեղեցի մի հաղ ի բաց թափեալ ի|հայրենի չարեացըն մեղաց՝ ողջագուրելով[ժ] զփեսայն. քանզի որպէս Հռութ, եթե ոչ նախ եթող զհայր և արհամարհեաց տուն[ժա] և զազգ և զգաւառ, և վայրածեցաւ ի վերջին աղքատութիւն, ոչ պատահեաց միրձաւորութեանն Բոոսի[ժբ]. սապէս և եկեղեցի զառաջին սովորութիւնն ի բաց թողեալ՝ յայնժամ տարփելի[ժգ] եղև Քրիստոսի և մեծաց[ժդ] բարեաց արժանաւորեցաւ։ Առ սա ասէր եկեղեցիս Դաւիթ[ժե]. Մոռացի՛ր ժողովուրդ քո և տուն հօր քո[ժզ], զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո[ժէ][1]։ Զայն և Հռութէ արար[ժը]. վասն այսորիկ և մայր եղև թագաւորացն[ժթ], որպէս և եկեղեցի. քանզի և ի սմանէ Դաւիթ[ի] թագաւոր մեծ եղեալ, և ոչ ամաչէ Դաւիթ[իա] ի վերայ այսոցիկ։

* Տիմոթէոս, եր. 283.

ա) ի Հոգւոյ  բ) նմանեալ  գ) և զՀռութ  դ) զմին այլազգի և զմին  ե) չարութիւն լուծանել զմեզ  զ) բոզս տուին  է) մարգարէք  ը) ժողովարանին  թ) այդ անզգամ եղև այն առ ընտակիցն  ժ) չարեացն, մեղաց ողջագուրելով  ժա) զտուն  ժբ) միրձաւորութեան Բոովսի  ժգ) տարփալի  ժդ) մեծացն  ժե) Դաւիդ  ժզ) ժողովրդեան քոյ և տան հաւր քո  ժէ) քում  ժը) Հռութ արար  ժթ) թագաւորաց  ի) ի սէմայ է Դաւիդ

*Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղէքսանդրացու, որ Առ Թագուհին ի մատենէն եթե՝ Աստուած է Քրիստոս**։

106r. Եւ զայս նորա զմտաւ ած(ելով), ‖ ահա հրեշտակ Տեառն յանուրջս երեւեցաւ նմա՝ ասելով. Յովսէփ,[ա] Որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ զՄարիամ, զի ի նմանէ[բ] ծնիցեալն ի Հոգւոյն Սրբոյ է. ծնցի[գ] որդի և կոչեսցի անուն[դ] նորա Յիսուս. ինքն իսկ ապրեցուսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց[1]։ Երկուս ի միասին դնէ՝ աստուածավայելուչս, և ոչ մարդկանում[ե] վայելուչս բնութեան. քանզի ծնիցելոյն ի Մարիամայ[զ] յատուկ ասաց ժողովուրդ նովաւ ապրեցեալսն[է], և ևս զի զնոսա ի մեղաց ի բաց թափիցէ[ը]. Աստուծոյ իսկ ամենայն և վայելեսցի իսկ՝ նմա և միայն զ' ի բաց թօթափելն[թ] ի մեղաց կարել զմեղուցեալսն[ժ]։ Աստուած ուրեմն[ժա] ի կուսէ ծնիցեալն, որոյ և յատուկ եմք ժողովուրդ, և ի մեղաց զմեզ ի բաց փոխեաց՝ ունելով[ժբ] զայսորիկ իշխանութիւն։

|Դարձեալ՝ բան երկրորդ**։

Իսկ Յիսուսի ծնանելն ի Բեթղահէմ[ժգ] Հրէաստանի[2]. ի Բեթղահէմ Հրէաստանի ծնանի[ժդ] որ յարմատոյն Յեսսեայ, և աստ յաղագս նորա միով ի մարգարէիցն Աստուած և Հայր. Եւ դու Բեթղեհեմ, տունդ[ժե] Եփրաթայ, սակաւոր ես գոլ ի հազարաւորացն[ժզ] Յուդայ. քանզի ի քէն ինձ արտաքս եկեսցէ առ ի գոլ իշխան Իսրայէլի[ժէ][3], և ելք իւր ի սկզբանէ աւուրցն[ժը] յաւիտենից[4]։ Ո՞րք ար-

* Տիմոթէոս, եր. 284. Երանելւոյ Կիւրեղի՝ յառ Թագուհիսն, ի մատենէ եթե՝ Աստուած Քրիստոս։
** եր. 285.

ա) Յովսէփ  բ) զՄարիամ կին քո. քանզի ի նմանէ զ' ի Հոգւոյ Սրբոյ. ծնեսցի  գ) կոչեսցես զանուն  դ) մարդկայնում  զ) ի Մարեմայ  է) ասաց ժողովուրդ զնովաւ ապրեցեալսն  ը) ի մեղաց զնոսա ի բաց թափեսցէ  թ) և վայել, եւս իսկ նմա և միայնում զ' ի բացն թափել  ժ) զմեղուցեալսն  ժա) ուրեմն է  ժբ) իբր ունելով  ժգ) ծնիցելոյ ի Բեթղեհեմ  ժդ) ի Բեթղեհեմ ծնանի Հրէաստանի  ժե) Բեթղեհեմ տուն  ժզ) ի հազարաւորս  ժէ) յԻսրայէղի  ժը) ի սկզբանէ յաւուրցն

1) Մատթ. Ա, 20.  2) Մատթ. Բ, 1.  3) Մատթ. Բ, 5. Միք. Ե, 1.  4) Համմ. Միքէ Ե, 14—15.



զեւք ծնիցեալն ի Բեթղեհեմ Հրէաստանի ի սկզբանէ զելսն յաւիտենից ասի ունել[ա], այս է գոյութեան սկիզբն[բ], թեպէտ և ծնիցեալ ի վերջին[գ] յաւիտենիս ժամանակս. Աստուած ուրեմն Քրիստոս, և վայել էր նմա Աստուծոյն Բանի ծայրագոյնն[դ], քանզի Աստուած էր, վասն մեր մարմնական համբերեալ ծնելութեան[ե] զ' ի կնոջէն։

‖ Դարձեալ՝ բան երրորդ*։ 106v.

Ես զձեզ ջրով մկրտեմ յապաշխարութիւն, իսկ որ զհետ իմ գայ հարստագոյն իմ է, որում ոչ եմ[զ] բաւական զկօշիկս բառնալ, ինքն զձեզ մկրտեսցէ Հոգւով Սրբով և հրով. որոյ հեծանոցն ի ձեռին իւրում է[է], և մաքրեսցէ զկալ իւր[1]։ Ո՛չ մարդկութեան գործ գոլ ասեմք մկրտել[ը] Հոգւով Սրբով, այլ և ոչ զկալն զիմանալի, այս է՝ զորս ի վերայ երկրի, յատուկ գոլ ասեմք մարդոյ. քանզի Աստուծոյ է ամենայն և նմա միայն[թ] վայել է Հոգւով Սրբով[ժ] մկրտել կարել զհաւատացեալս։ Ներգործեաց զայս Քրիստոս՝ յետ Յովհաննու եկեալն ըստ մարմնոյ, կամ եթե ըստ մարմնոյն ամանակի[ժա] ինքն իսկ իւր[ժբ] ՙկալ մաքր(է). Աստուած ուրեմն է ճշմարտապէս։

Եւ դարձեալ՝ բան չորրորդ**։

|Եւ ահա բորոտ յառաջ եկեալ՝ երկրպագէր նմա[ժգ] ասելով. Տէր, եթե կամիս, կարող ես[ժդ] զիս մաքրել. և ձգեալ զձեռն ի նա, յարեաց՝[ժե] ասելով. Կամիմ, մաքրեցի՛ր. և արագապէս մաքրեցաւ ի նմանէ[ժզ] բորոտութիւնն[2]։ Ներգործելն կարել աստուածավայելչաբար ոչ յատուկ մարդոյ, և այս յաւէտ հետեւանայ և միայն և[ե] որ ևս անդր ամենեցուն բնութեան, և ներգործէ այսպէս Քրիստոս. ոչ ուրեմն սոսկ մարդ ըստ մեզ, այլ մանաւանդ Աստուած մարդկութեան կերպի։ Այսպէս իմացիս և ի վարդապետս ի[ժէ] զոքանչին, թեպէտ և հողմոց վերասատելով երևեցի[ժը], ծովու և ջրոց. ուստի և աստուա-

* եր. 285.
* Նոյնպէս.

ա) ի Բեթղեհեմ Հրէաստանի ի սկզբանէ յաւիտենի զելսն ունել ասի  բ) զգոյութեանն սկիզբն  գ) ի վերջինս  դ) ծերագոյնն  ե) ծնելութիւն  զ) չեմ  է) չ  ը) մկրտելն  թ) միայնում  ժ) Սրբով Հոգւով  ժա) զմարմնոյն ամանակ  ժբ) և զիւրն  ժգ) զնա  ժդ) կարես  ժե) զձեռնն՝ յարեաց առ նա  ժզ) ի նման  ժէ) իմացիս ի վերայ Պետրոսի  ժը) երևեցի

1) Մատթ. Գ, 11—12. Ղուկ. Գ, 16—17.  2) Մատթ. Ը, 2—3 եւն.

ծագան աշակերտքն և զծով և զհողմս ընդ իշխանութեամբ տեսանելով՝ հրաշացան, ասելով. Ո՞րպիսի է սա. քանզի
107r. ոչ մարդոյ սովկի || զայսպիսիս կարել գործել[1]: Աստուած ուրեմն, ըստ Նմին և մարդ՝ Քրիստոս:

Դարձեալ *:

Իսկ զևքն մաղթերն[ա] ասելով. Եթե հանես զմեզ, առաքեա զմեզ յերամակ[բ] խոզից. և ինքն ասաց[գ] նոցա. Երթայք[2]: Նախախնամելն ամենեցուն[դ] և ապրեցուցանել զնոսա ձյր ևս իցէ, բայց միայնոյ[ե] ըստ բնութեան Աստուծոյ: Այսպէս և Փրկիչն ասէ. Ո՞չ երկու ճագք սակարի[զ] վաճառին, և մի ի նոցանէն[է] ոչ անկցի յերկրի Թարց[ը] Հօր ձերոյ, որ յերկինսն է[թ]. իսկ ձեր և մազք[ժ] գլխոյ ամենայնք համարեալ են[3]: Քանզի ահա այսուհետև այսքանից էակաց[ժա] նախախնամութիւն արար[ժբ] Քրիստոս, իբր մի իշխել անմաքրոց դիւացն և ոչ խոզաց երամակին[ժգ] ունել. յաղթեցեալ[ժդ] ապա՝ հրամայեաց հալիւ, և ոչ|զնոցայն լինոյր հայցումն, այլ և[ժե] զմեզ հաւանեցուցէ, եթե նախախնամէ բոլորեցունց[ժզ] իբր Աստուած: Աղէ, ի՞րր ոչ Աստուած, որ զաստուածավայելուչս իշխանութիւնն և զամենեցուն հարստութիւնն յարեալ ունել՝ ապրեցուցանելով իւր զիւրսն նովաւ եղեալս[ժէ]:

Եւ դարձեալ **:

Ամենայն, որ խոստովանիցի[ժը] զիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնա առաջի Հօր իմոյ, որ յերկինս. իսկ որ ոք ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմ, որ յերկինս[4]: Բազումք կոչեցեալ են սրբոյն առ վկայութեան[ժթ] փառս և

* Եր. 286, ուր այս հատուածը կցած է անմիջապէս նախընթացին:

** Եր. 287.

ա) մաղթերն զնա բ) յերամակն գ) եասաց դ) բոլորեցուն ե) Նորա միայնոյ զ) սասարի է) ի նոցանէ ը) ի վերայ երկրի Թանց թ) յերկինս ժ) մազ ժա) էակացն ժբ) եարար ժգ) արամակին ժդ) մաղթեցեալ ժե) այդ զէ ժզ) բոլորեցուն ժէ) ապրեցուցանելով իւր զիւր զնովաւ եղեալսն ժը) որ ոք խոստովանեսցէ ժթ) սրբոցն առ վկայութեանն

1) Մատթ. Ը, 28 եւն. հմմտ. Յովհ. Գ, 2. 3) Մատթ. Ը, 31—32 եւն. 3) Մատթ. Ժ, 29—30. Ղուկ. ԺԲ, 67. 4) Մատթ. Ժ 32—33. Ղուկ. ԺԲ, 8—9.



կատարեալք ախտակրութեամբք և մահու՝ Աստուած խոստովանելով, արդեւք պսակիցին՝ հաստատելով և ասելով մարդ զոլ հասարակական զնա, կամ յաւէտ || իբր Աս- 107v.
տուած խոստովանութեամբ. այլ յայտ է[ա], քանզի զայս ուրացեալքն և վկայութեան փառացն կորիցեն և զնա զոցեն յաւուրն դատաստանի՝[բ] ուրանալով զնոսա Քրիստոսի: Աղէ, ի՞րր ոչ Աստուած, որ վկայեալսն[գ] փառօք պսակէ, զորս եթե ասէ՝[դ] ճշմարտապէս խոստովանելով զնա:

Դարձեալ *:

Եկայք առ իս ամենայն վաստակեալքդ[ե] և ծանրաբեռնեալք, և ես հանգուցից զձեզ. բարձէք զլուծ իմ ի ձեզ[1]: Եթէ ոչ Աստուած ճշմարտապէս էմանուէլ[զ], զի՞նչ օրինակ մեզ զիւր լուծն դնէ ի վերայ[է]. քանզի Աստուծոյ ծառայ ամենայն, և ասացեալ է լուծ օրէնն[ը]. այլ ի վերայ դնէ մեզ Քրիստոս զիւր[թ] լուծ և իւր հնազանդէ, և Թեպէտ զամենայն ի ներքոյ բերէ Հօր, Աստուած ուրեմն է. ուստի և ընդ նովաւ կալ զամենայնն[ժ] վայել է, ըստ ասացողին առ Աստուած եթե՝ Ամենայն ծառայ քո[2]:

Դարձեալ **:

Կամ Թե ոք քահանայք ի քահանայարանին*** զշաբաթս[ժա] պղծեն և անպատճառելիք են****. իսկ ասեմ ձեզ, եթե քահանայարանին մեծագոյն է աստ[3]: Եթե պղծելով զշաբաթն քահանայքն անպատճառելիք են՝ իբր Աստուծոյն[ժբ] մատուցանելով զրուժականսն, ի՞րր ի քահանայարանին գործելոյն[ժգ] իմանի մեծագոյն Քրիստոսի բնութիւնն[ժդ]. այլ է յայտ, զի այնք որ յաւրէնսն սուրբ և օրինակ երկնայնոցն պաշտօնէին[ժե]. իսկ աստուածազան[ժզ] աշակերտքն առընթերակացեալք և սպասաւորեալք

*) Եր. 287.

**) Նոյն.

***) Լուսանցքում՝ ի Բազնին, նաև Տիմ.

****) Լուսանցքում անմեղադրելիք են. Տիմ. մեղադրելիք:

ա) այդ է յայտ բ) յաւուր դատաստանին գ) վկայութեամբ դ) եթ՝ այս է ե) վաստակեալք զ) եթ՝ ոչ Աստուած է ճշմարտապէս էմմանուէլ է) զիւրն լուծ ի վերայ դնէ ը) և աւրէնն թ) զիւրն ժ) զամենայն ժա) Կամ եթ՝ ոչ վերծանէիք յաւրէնս, եթէ ի շաբաթս քահանայքն ի քահանայարանին զշաբաթն ժբ) Աստուծոյ ժգ) ի քահանայարանի գործեցելոցն ժդ) բուժութիւն ժե) պաշտէին ժզ) աստուածազանք

1) Մատթ. ԺԱ, 28—29. 2) Սաղմ. ՃԺԸ, 91. 3) Մատթ. ԺԲ, 6.

Քրիստոսի՝ զմեծագոյն[ա] ևս զփառսն ունէին. և եթէ յօրէնսն պաշտութեանն[բ] լաւագոյն է պաշտելն[գ] Քրիստոսի, ի՞բր ոչ իմանայցէ[դ] Աստուած ճշմարիտ։

108r. ‖ Եւ դարձեալ *.

Իսկ եթէ ես Բէեղզեբուղաւ[ե] հանեմ զդևս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այսորիկ դատաւորք նոքա եղիցին ձեզ[զ][1]։—Եթէ յանուն Քրիստոսի բժշկեցին զայսոտսն[է] աշակերտքն, քանզի ի վերայ ձայնէին. Յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրացւոյ արի[ը][2], ի՞բր ոչ իմանայցի[թ] Աստուած ճշմարտապէս։ Քանզի ոչ ևս բաւականեաց մարդոյ փառք և զօրութիւն յաղթահարել[ժ] զսատանայ։

Դարձեալ **.

Եւ որպէս ժողովի որոմն և հրով այրի, այնպէս[ժա] եղիցի և կատարածի յաւիտենին. առաքէ Որդի Մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթագղութիւնս, և արկցէ[ժբ] զնոսա ի հնոց հրոյն[ժգ][3]։ Յաղագս Աստուծոյ է[ը] գրեալ. Բարեբանեցէք զՏէր, ամենայն հրեշտակք նորա[4]. քանզի ոչ հրեշտակ հրեշտակի է, այլ Աստուծոյ յաւէտ ամենայնի[ժդ]։ Ի՞բր արդեւք և աստ յաղագս Որդւոյ Մարդոյ, թէ առաքէ զհրեշտակս իւր. Աստուած ուրեմն է, որպէս և յատուկս առնելով հրեշտակս իւր[ը], և ի ձեռն վերին հոգւոյն սպասաւորել[ժե]։

Դարձեալ ***.

Եւ[ը] էհարց[ժզ] Քրիստոս. Զի՞ ոք[ը] ասեն մարդիկ զոլ զՈրդւոյ. նոքա[ժէ] ասեն. Ոմանք զՅովհաննէս[ժը] Մկրտիչ,

*) Եր. 288.
**) Նոյն.
***) Նոյն.

ա) մեծագոյն բ) պաշտութեանն գ) պաշտելն դ) իմանայցի ե) եթ՛ ես ի Բեեղզեբուղ զ) նոքա դատաւորք ձեզ եղիցին է) զայսոտս ը) չ. թ) իմանայցի ժ) առ ի յաղթահարել ժա) այսպէս ժբ) գայթակղութիւն և որք առնեն անօրէնութիւն, և արկցեն ժգ) հրոյ ժդ) այլ յաւէտ Աստուծոյ ամենայն ժե) հոգեացն սպասաւորեալ ժզ) եհարց ժէ) զՈրդի Մարդոյ և նոքա ժը) զՅովհաննէս

1) Մատթ. ԺԲ, 7. Ղուկ. ԺԱ, 19. 2) Գործք Գ, 6. 3) Մատթ. ԺԳ, 40–42. 4) Սաղմ. ՃԽԸ, 2.



և այլք զԵղիաս, և միւսք զԵրեմիաս և կամ զմի ի մարգարէիցն. ասէ նոցա. Իսկ դուք զո՞վ[ա] զիս ասէք զոլ. պատասխանեաց Պետրոս և ասաց[բ]. Դու ես Քրիստոս, Որդի[գ] Աստուծոյ կենդանւոյ. պատասխանեալ Յիսուս և ասաց[դ] նմա. Երանեա՜լ ես, Սիմո՛ն Բարիոնա՛յ[ե], զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր[զ] իմ, որ յերկինս է[1]։ Եթէ սոսկ մարդ Որդին[է], ընդէ՞ր սքանչանայ Պետրոս՝ ‖ խոստովանելով զնա. ի՞բր իսկ է և աստուածուսումն, 108v. կամ որո՞վ կարօտացաւ լուսաւորութեան ի վերուստ, զի ուսցի[ը] զ' ի վերայ նորա խորհուրդն. այլ ծանեաւ, և Աստուած ելով և Որդի Աստուծոյ կենդանւոյ խոստովանելով[թ] զնա, և աստուածհաստ իսկ[ժ] սքանչացաւ. բայց մի որդի, և ոչ երկուս որդիս ասէ։ Վատապարիշտ ուրեմն բաժանելոյն[ժա] յերկուս։

Եւ դարձեալ *.

Քանզի պատրաստեալ է Որդի[ժբ] Մարդոյ գալ փառօք Հօր իւրոյ, հանդերձ հրեշտակօք իւրովք[2]։—Ահա դարձեալ հրեշտակ[ժգ] նորա ասէ զվերին հոգիսն, թեպէտ և ասացելոյ Որդւոյ Մարդոյ։

Դարձեալ **.

Իսկ ելոց[ժդ] նոցա ի Կափառնայում՝ առաջեցին[ժե] զերկդրամեայսն առօղքն Պետրոսի և ասացին. Վարդապետն ձեր ո՞չ հատուցանէ զերկդրամեայսն. ասէ՝ Այո́. և եկեալ յապարանսն՝ նախաժամանեալ[ժզ] զնա Յիսուս, ասելով. Զի՞նչ թուի քեզ, Սիմոն[ժէ]. թագաւորք երկրի յումէ՞ առնուն զհարկս, կամ զկենսոսն. յորդւո՞ց իւրեանց, թէ յօտարա՞ց. իսկ ասացեալ՝ յօտարացն, ասէ նմա Յիսուս. Ուրեմն ազատ են որդիքն[ժը][3]։—Ի՞բր ազատ զինքն զոլ ասէ և արտաքոյ օրինին[ժթ] և անհարկապարտ և Որդի

*) Եր. 289.
**) Նոյն.

ա) զ՞ բ) և պատասխանեալ Սիմովն Պետրոս եասաց գ) Որդին դ) և պատասխանեալ Յիսուս եասաց ե) Բարիյովնա զ) Հայրն է) զՈրդին ը) ուսցի թ) խոստովանեաց ժ) և այսու իսկ ժա) բաժանելն ժբ) Որդին ժգ) հրեշտակս ժդ) եկելոցն ժե) ի Կափառնաւում առաջեկեցին ժզ) նախաժամանեաց ժէ) քեզ թուի Սիմովն ժը) ազատք են որդիք ժթ) ուրէնէ

1) Մատթ. ԺԶ, 13—17. 2) Մատթ. ԺԶ, 27. 3) Մատթ. ԺԷ, 23–25.

ճշմարտապէս, եթէ ոչ Աստուած է՝ միաւորութեամբ ըստ ինթակացութեան մարմնոյ և արեան հաւասարեալ. հարկատուեաց իսկ զերկդրաքմեանն[ա], իբր եղեալ[բ] ընդ օրինիւ զեր զօրէնն[գ] Որդին։ Իսկ մարդ ոչ գեր զօրէնն իմանի[դ]. Իբր իսկ այլ և ոչ ունի բնութեամբ զազատակն,
96r. եթէ ոչ իմանի Աստուած ‖ ի ներմարդութեան կերպի։

Դարձեալ*։

Եւ քահանայապետն հին ասաց[ե] նմա. Երդմնեցուցանեմ զքեզ զԱստուծոյ[զ] կենդանւոյ, զի մեզ ասասցես թէ՝ Դու ես Քրիստոս[է] Որդին Աստուծոյ. ասէ նմա Յիսուս. Դու ասացեր. բայց ասեմ ձեզ՝ արդուստ տեսանիցէք զՈրդի[ը] Մարդոյ նստեալ յաջմէ կարութեանն և գալոց[թ] ի վերայ ամպոց երկնից[ժ] [1]։ Իսկ Որդի[ժա] Մարդոյ նստի յաջմէ կարութեանն. այլ է յայտ, զի թէպէտ և[ժբ] եղև որդի մարդոյ յԱստուծոյն Բան, ոչ դադարեաց զգոլն Աստուած, այլ է որ էն[ժգ], այսուիկ և աթոռակից է բուսողին էն աստուածայինս[ժդ] արժանաւորութիւնս վայելուչ տեսանի, թէպէտ եղև մարմին։

Դարձեալ**։

Իսկ Յիսուս դարձեալ աղաղակեաց[ժե] ձայնիւ մեծաւ՝ արձակեաց զոգին, |և ահա վարագոյր տաճարին հերձաւ յերկուս՝ վերուստ մինչ ի վայր, և երկիր սասանեցաւ, վէմք հերձան և շիրիմք բացան, և բազում մարմինք քունեցելոց***[ժզ] սրբոցն յարեան[2]։ Եթէ հասարակական մարդ էր Քրիստոս, Իբր[ժբ] մեռեցելոյ նորա այսքան էր ի տարերսն խռովութիւն. քանզի արեգակն զճառագայթսըն[ժէ] ամփոփեաց, և նաւուր խաւար գործեցաւ[ժը]. իսկ երկիր զիւր Տէրն տեսանելով ի Հրեիցն այպանեալ՝ հերձանիւր. արձակեաց իսկ և դժոխք զսրբոց[ժթ] անձինս. ձյր զայս առնելով արդեւք, եթէ ոչ յԱստուծոյ[ի] քանզի

* Եր. 290.

** Եր. 291.

***) Լուսանցքում՝ ննջեցելոց.

ա) զերկդրաքմեանն բ) եղեալն գ) զօրէն դ) իմանի ե) ասաց զ) Աստուծոյ է) Քրիստոսն ը) զՈրդին թ) գալով ժ) երկնի ժա) Իբր Որդին ժբ) չ. ժգ) էրն ժդ) աթոռակից է բուսոյին Աստուածայինս ժե) աղաղակեալ ժզ) քունեցելոցն սրբոց ժէ) զճառագայթն ժը) խաւարագործեցաւ ժթ) զդժոխք սրբոցն ի) եթ՝ ոչ Աստուծոյ

1) Մատթ. ԻԶ, 63—64. 2) Մատթ. ԻԷ. 50—53.



Աստուած է[ա] ի մարմնի, որում և արարածս թշնամանեցելոյ յեղանակ իմն միաբանեալ բարկանայ[բ]։

Ըստ Ղուկայ. բանն Ա.*)։

Հրեշտակ Աստուծոյ Զաքարիայի[գ] ասէ յաղագս Մկրտչին. Եւ եղիցի ‖ խնդութիւն քեզ և ցնծութիւն, և 96v.
բազումք ի ծննդեանն նորա խնդասցեն. քանզի եղիցի մեծ առաջի Տեառն, և գինի և ուղղի մի[դ] արբցէ, և Հոգւովն[ե] Սրբով լցցի յորովայնէ[զ] մօր իւրոյ, և զբազումս[է] որդւոցն Իսրայելի դարձուսցէ ի[ը] Տէր Աստուած իւրեանց[թ] [1]։ Երանելի Մկրտիչն Յովհաննէս հարցողաց[ժ] Հրէիցն՝[ժա] Դու ով ես, Ես ձայն գոչման[ժբ] յանապատի՝ ասէ. պատրաստեցէք զճանապարհս[ժգ] Տեառն և ուղիղ արարէք զշաւիղս նորա[2]։ Մարգարէանալով և ինքն իսկ Զաքարիաս ի վերայ համբակին՝[ժդ] ասէ. Եւ դու, մանուկ, մարգարէ Բարձրելոյն[ժե] կոչեսցիս. քանզի Նախագնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա, առ ի տալ զգիտութիւն[ժզ] փրկութեան ժողովրդեան նորա՝ ի թողութիւն[ժէ] մեղաց նոցա. յաղագս գթութեան ողորմութեանն[ժը] Աստուծոյ մերոյ, որովք դիտաւորեաց մեզ՝ երևել[ժթ] ի բարձանց, ծագել ի խաւարի և ի ստուերս մահու նստելոց, առ յուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան[3]։ Քանզի Նախագնայր Քրիստոսի և նորա եղև կարապետ, և նմա զճանապարհ[ի] պատրաստել քարոզէր, և զի ի վերայ[իա] նորա մարգարէանայր բան՝ դարձուցանելով առ Աստուած իւր[իբ], արդարացուցանել կարելով զայն[իգ], որ ի մեղս Աղէ, Իբր ոչ Աստուած Քրիստոս։

Դարձեալ բանն**։

Նա[իդ] եղիցի մեծ և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի[իե] հօր իւրոյ.

*) Եր. 291.

** Եր. 292.

ա) էր բ) բարկանայր գ) Զաքարեի դ) ուղի ոչ ե) Հոգւով զ) տակաւին յորովայնէ է) բազումս ը) առ թ) նոցա ժ) Յովաննէս հարցողացն ժա) Հրէից ժբ) կոչման ժգ) զճանապարհն ժդ) իւրոյ համբակին ժե) Բարձրելոյ ժզ) գիտութիւն ժէ) ի թողութեան ժը) ողորմութեան ժթ) արեւելից ի) զճանապարհս իա) զ՝ ի վերայն իբ) իւր առ Աստուած իգ) զայնս իդ) Սա իե) զթագաւորութիւն

1) Ղուկ. Ա, 14—16. 2) Յովհ. Ա. 19 և 23. Ես. Խ, 3. Մատթ. Գ, 3. Մարկ. Ա, 3. 3) Ղուկ. Ա, 76—79.

և թագաւորեսցէ ի տանն[ա] Յակովբայ յաւիտեան[բ], և թագաւորութեան նորա վախճան ոչ եղիցի[գ] [1]։ Արդեւք ըստ[դ] միոյ, որ ըստ մեզ, կացցեմք[ե] թագաւորութեամբ հանապազ և անվախճանապէս, եթե յԱստուծոյ յաւէտ եղիցուք՝ թագաւորելոյ[զ] մեզ Քրիստոսիւ, և ոչ որպէս արտաքուստ 97r. միջնորդի ուրումն յայս առայցելոց[է], ‖ այլ իբր Որդւով և յՈրդւոյ հարստահարելով բոլորեցունցն Աստուծոյ և Հօր։ Եւ[ը] այս ճշմարիտ, որպէս[թ] և է ճշմարիտ, Աստուած ուրեմն է[ժ] Քրիստոս։

Դարձեալ *։

Եւ ասաց[ժա] իսկ Մարիամ առ հրեշտակն. Ի՞բր եղիցի ինձ այս, զի զայր ոչ ճանաչեմ. և ասէ նմա[ժբ] հրեշտակն. Հոգի Սուրբ վերեկեսցէ առ քեզ և կարութիւն Բարձրելոյն[ժգ] հովանասցի քեզ. զի և ծնիցեալն սուրբ է[ժ], կոչեսցի Որդի Աստուծոյ[2]։ Արդեւք կոչեցի՞[ժդ] միայն Որդի՝ ի սուրբ Կուսէն Հոգւով** անճառաբար ծնիցեալն, եթե բնութեամբ և ճշմարտապէ՞ս Որդի գոլ հաւատանայ և Աստուած. այլ է Աստուած[ժե] ճշմարիտ, իսկ իմացի մարմին՝ ըստ ենթակացութեանն եղեալ Բան[ժզ], այս է՝ արարեալ իւր[ժէ] մարմին զՀոգւոյն ի Սրբոյ Կուսէն[ժը]. քանզի այսպէս եղիցի Աստուած[ժթ] ճշմարտապէս։

Դարձեալ ***։

Եւ եղև իբրև լուաւ զողջունելն զՄարիամայ Եղիսաբեթ[ի], խայտայ[իա] ցնծութեամբ համբակն յորովայնի նորա[իբ]. և լցաւ Հոգւով Սրբով Եղիսաբեթ[ի], և մարգարէացաւ և ասաց[իգ]. Բարեբանեալ ես[ժ] դու ի կանայս և բարեբանեալ[իգ] պտուղ որովայնի քո. և ուստի՞ ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս[3]։ Նոր գործողի[իե]

* Եր· 392·

** Լուսանցքում՝ յծ· ի ձեռն Հոգւոյն·

*** Եր· 392.

ա) ի տուն բ) յաւիտեանս գ՝ ոչ եղիցի վախճան դ) ընդ ե) կայցեմք զ) թագաւորեցելոյ է) ուրումն յայս առեցելոյ ը) եթ՝ այս թ) որպէս և ժ) չ· ժա) եասաց ժբ) նէմա ժգ) Բարձրելոյ ժդ) կոչեցաւ ժե) այս ժզ) Բանն ժէ) իւր արարեալ ժը) զՀոգւովն ի սրբոյն Կուսէ ժթ) և Աստուած ի) եղիսաբեթ իա) խայտաց իբ) նէրայ իգ) եասաց իդ) բարեբանեալ է իե) ներգործական

¹) Ղուկ. Ա, 32—33. ²) Ղուկ. Ա, 31—35. ³) Ղուկ. Ա, 41—43.



Աստուծոյ մարգարէութեան սակս՝ եղիցի մարգարէ ոք[ա], իսկ ըստ միւսում յեղանակի ոչ եւս։ Արդ, ողջունելն[բ] սրբոյ Աստուածածնին Մարիամայ՝[գ] սաղմնազգեցելոյ տակաւին զՅիսուս, շարժեաց Նարգանդի զՅովհաննէս ի մարգարէութիւնն[դ]։ Ի՞բր ոչ Աստուած Քրիստոս՝ ի համակուսին[ե] շարժեաց աստուածավայելչապէս ի մարգարէութեան կարութիւն զՄկրտիչն։

Դարձեալ *։

Այժմ արձակես զծառայս[գ] քո, Տէր, ըստ բանի[է] քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, ‖ զոր պատրաստեցեր առ դէմս ամենայն ժողովրդեան[ը], 97v. լոյս առ ի յայտնութիւն ազգաց և փառք ժողովրդեան քում Իսրայէղի[1]։ Սիմէոնն զՅիսուս ի գիրկս առեալ՝ զայսպիսիս[թ] յաղագս նորա ասէ[ժ]. Ի՞բր արդեւք է փրկական[ժա] և ի՞բր լոյս յայտնութիւն[ժբ] ազգաց, եթե ոչ Աստուած իցէ[ժգ] ճշմարտապէս մի և միայն Որդի, որ բնութեամբ ի Հօրէ իբր Բան, իսկ ի Կուսէ նոյն ըստ մարմնոյ։ Քանզի ո՞ր եղև յայտնութիւնն ազգաց, բայց ի վերայ նորա. գիտացին, թէ Աստուած է, և նմա պաշտելով[ժդ] փախեան զպարտաւորութիւնսն պաշտել Աստուծոյ[ժե] միւսում, քան զմին բնութեամբն և ճշմարտապէս։

Դարձեալ **։

Եւ գիտելով Յիսուս զխորհուրդս նոցա՝ պատասխանեալ ինքն ասաց[ժզ] առ նոսա. Զի՞նչ խորհիք ի սիրտս ձեր, զի՞նչ դիւրավաստակագոյն՝ ասել է[ժէ]. Թողցին քեզ մեղք քո, եթէ ասե՞լ[ժը]. առ զպատգարակն[ժթ] քո և գնա՛[ի] [2]։ Եթէ միայն զմեզ բոլորեցունն Աստուած ի բաց վճարէ յանցանաց՝ այլում վայելելով զայս ոչ ումեք, և շնորհէ

* Եր· 293·

** Նոյն·

ա) ոք մարգարէ բ) այսուհետև ողջունելն գ) Աստուածածնի Մարեմայ դ) զՅովհաննէս ի մարգարէութիւն ե) ի համակուսին զ) զծառայ է) ըստ բայի ը) ժողովրդեանն թ) զայսպիսիս ժ) ասէր ժա) փրկանակ ժբ) յայտնութեան ժգ) է ժդ) պաշտելով ժե) Աստուծոյ պաշտել ժզ) պատասխանեալ ասաց ժէ) զի՞նչ է դիւրավաստակագոյն ասել ժը) մեղք եթ՝ ասել ժթ) զպատգարակդ ի) գնա ի տուն քո։

¹) Ղուկ. Բ, 29—32. ²) Մարկ. Բ, 8—9. Մատթ. Թ. 4—5. Ղուկ. Ե, 22—23.

Քրիստոս և զայս իշխանութեամբ աստուածավայելչիւ, Իբր ոչ իցէ Աստուած. կոչի իսկ Որդի Մարդոյ՝ ծնիցեալ ի կնոջէ ըստ մարմնոյ, և[ա] Թեպէտ և[բ] Աստուած էլով Բան։

Յայնմ ժամու* բժշկեաց զբազումս[գ] յախտից և ի[ա] հարուածոց և յոգւոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել, և ասէ[դ]. Պատմեցէք Յովհաննու զոր լուայքդ և տեսէք[ե] [1]։ Գործովքն ողջացուցեալ՝ զինքն Քրիստոս աստուածավայելուչ[գ] մեծագործականաց բացակատարող առ[է] յիշողութիւն վերաբերէ ասացելոցն ձայնիւ մարգարէից[ը]. յաղագս իւր ինքն[ա] ասաց այսուհետև երանելին Եսայի[թ]. Առհարստացարուք ձեռք Թողացեալք[ժ] և ծունգք
87r. քակտեալք. ‖ ապա միայն ոչ և ձեռք[ժա] կարկառելով ցուցանէ զԷմանուէլն՝[ժբ] այսպէս ասելով. Ահա Աստուած մեր, ահա Տէր զօրութեամբ գայ և բազուկն իւր տէրութեամբ [2]։ Եւ ասաց իսկ յայլսն. Յայնժամ բացցին աչք կուրաց և ականջք խլից[ժգ] լուիցեն. յայնժամ ոստիցէ կաղն իբրև զեղջերու[ժդ] [3]. և առ այսոքիկ[ժե]. Ցարիցեն մեռեալք և կանգնեսցեն որ[ժզ] ի շիրիմս, և ուրախասցին որ[ժէ] յերկրին. քանզի ցօղն, որ[ժը] ի քէն՝ բժշկութիւն է նոցա[ժթ] [4]։ Եւ ասաց[ի] դարձեալ ի[իա] դէմս Քրիստոսի. Ոգի Տեառն առ իս, սակս որոյ և օծ իսկ զիս[իբ], աւետարանել աղքատաց առաքեաց զիս, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսութիւն[իգ] [5]։ Ցորժամ այսուհետև զ՚ ի վերայ իւր հաւատոյն[իդ] զմարգարէիցն ձայնն առնէ նշանակ, կամ Թե ապացութիւն, և Աստուած զնա մարգարէքն քարոզեն, ո՞ սոցա զընդդէմն իշխել ասել[իե]։

* Տիմ. 293 այս հատուածն եւ «Եւ դարձեալ» վերնագրով բաժանուած է նախորդից։

ա) չ. բ) Թեպէտ գ) բազումս դ) և պատասխանեալ ասաց նոցա. ե) Գնացէք պատմեցէք Յովհաննու զոր տեսէք և լուայք. կոյրք վերատեսեն, կաղք Ճեմին, բորոտք մաքրին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին, և երանեալ է, որ ոչ գայթագղեսցի յիս։ զ) աստուածավայելչիցն է) առ ի ը) մարգարէիցն թ) Էսայիա ժ) հաստատացարուք ձեռաւք Թուլացեալք ժա) ձեռն ժբ) զԷմմանուէլ ժգ) ականջ խլաց ժդ) իբրև զեղջերու կաղն ժե) առ այսոքիկ ժզ) կանգնեսցին որք ժէ) որք ժը) առ ժթ) նոցա է ի) Նաաաց իսկ իա) և ի իբ) որոյ եւծ զիս իգ) վերատեսութիւն իդ) հաւատոյն իե) ասել իշխէ

[1]) Ղուկ. Է, 21—22. [2]) Ես. Խ, 10. [3]) Ես. ԼԵ, 5–6. [4]) Ես. ԻԶ, 19. [5]) Ես. ԿԱ, 1.



Դարձեալ*։

Զմեռնային երբեմն ըստ լճին աշակերտքն ապա մատուցեալ[ա] զարթուցին զնա՝ ասելով. Վերակացու, ապրեց, կորնչիմք. և յարուցեալ սաստեաց հողմոցն և խռովութեան ջրոյն[բ], և եղև խաղաղութիւն մեծ[1]։ Ասացեալ է վասն[գ] Քրիստոսի ձայնիւ երանելւոյն Դաւթայ[դ]. Դու տիրես զօրութեան[ե] ծովու և[զ] զաղէլութիւն կոհակաց[է] նորա դու հեզացուցանես[2]. Քո են երկիր լրիւ իւրով[ը] [3]։ Արդ, այսուհետև հեզացուցողին զծով վայել է իսկ և տիրել բոլորեցուն և ունել իւր[թ] զերկիրնս, և հիմնել կարել զաշխարհ[ժ] և զլրումն նորա։ Ի՞բր ոչ արդեւք գոլ իմանասցի ճշմարիտ[ժա] Աստուած Քրիստոս՝ ծովու և հոգեաց վերահաստելով, և զայս հանդերձ իշխանութեամբ։

Դարձեալ**։

Մաղթէր զնա այրն, յորմէ արտաքս ելեալ էին ‖ 87v.
դեքն՝[ժբ] գոլ ընդ նմա. իսկ առաքեաց զնա՝ ասելով. Դարձիր ի տուն քո և զրուցեա որքան ինչ արար[ժգ] Աստուած. և երթեալ ըստ բոլոր քաղաքին քարոզելով՝ որքան ինչ[գ] արար նմա Աստուած։

Դարձեալ***։

Ի Գերգեսացւոց քաղաքին[ժդ] բժշկեաց Քրիստոս զվայրենապէս դեւաժատեալն[ժե]. ներգործեաց ուրեմն ինքն, իբր Աստուած գոլով ճշմարիտ։ Քանզի ոչ եւս ասեմք՝ իբր արբանեակ եղև աստուածային շնորհին, ըստ միում ի մարգարէիցն, կամ եթե սրբոց առաքելոց[ժզ], այլ էր ինքն, որ զօրութեամբ իւրով խորտակէր զսատանայ. քանզի անուամբ նորա և սրբոց աշակերտացն հնազանդէին[ժէ] դեւք, և զայս[ժը] խոստովանեցին ինքեանք։

* Եր. 294.
** Նոյն.
*** Տիմ եր. 294. յաջորդն անմիջապէս նախընթացին է կցած, առանց վերնագրի, և նրա մէջ «դիւաժետեալն» բառից յետոյ 3 տող պարբերութիւն բաց է թողած։

ա) մատուցեալք բ) ջրոցն, և դադարեցին գ) յաղագս դ) Դաւթի ե) հզօրութեան զ) չ. է) զաղելութիւն կոհակացն ը) Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհ և զլրումն նորա դու հիմնացուցեր։ թ) իւրն ժ) զաշխարհ ժա) իմանայցի ճշմարտապէս ժբ) դեք ժգ) որքան քեզ արար ժդ) ի Գերգեսացւոցն գաւառի ժե) դիւաժետեալն ժզ) առաքելոցն ժէ) հնազանդին ժը) զԱստուածայն

[1]) Ղուկ. Ը, 24. Մարկ. Դ, 38. Մատթ. Ը, 25—26. [2]) Սաղմ. ՁԸ, 10. [3]) Սաղմ. ՁԸ, 12.

Դարձեալ *։

Ի վերայ գամեր ժողովրդապետի[ա] ասէ Քրիստոս. Մի լայք, քանզի ոչ մեռաւ աղջիկն, այլ ննջէ[1]։ Արդեւք սահմնց, քմւ լիցի։ Ճշմարիտ[բ] իսկ, ըստ իմ յեղանակի, Աստուածային Գրութիւնն մինչէ՝ ասելով. Ո՛չ է Աստուած մեռելոց, այլ կենդանեաց[2]. քանզի կեան Աստուծոյ կեալն համդերձեալ[գ][3]. ուրեմն և մեռեալք ըստ մեռեալք մարդկան[դ], իսկ ըստ կենագործութեանն[ե], այս է ըստ աստուածայնումն՝ ոչ մեռանի[զ]։ Ճշմարիտ է այսուհետև իբր Աստուած, յաղագս աղջկանն ասելով եթե՝ Ո՛չ մեռաւ, այլ ննջէ։

Դարձեալ **։

Ամենայն ինչ[է] աւանդեցաւ ի Հօրէ իմմէ, և ոչ ոք գիտէ զՈրդի[ը], եթէ ոչ Հայր, և ոչ ոք գիտէ զՀայր, եթե ոչ Որդի[թ], և որում կամիցի Որդի՝[ժ] յայտնել[4]։ Ո՛չ ուրուք գիտելով զՈրդին, եթե ոչ միայնումն[ժա] Հաւր, ճեր անգոսնեն ումանք զՀօր վկայութիւնն[ժբ]. քանզի եցոյց
Տիր աղէ, ով լաւագոյնք, բնակեւն միայն ի մարդումն[բ] զԱստուածն Բան բաւականասցէ՞[գ] արդեօք առ ի թափել[դ] զնա, և զգոյշ ասել եթե՝ այսպէ՞ս զգեցաւ զծառային զկերպ[ե] և այսպէ՞ս նման լինիցի արդեօք թափմանն յեղանակ. և զի աստղին լսեմ առաքելոյն[զ]. Եթե ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա, և առ նա եկեսցուք և օթեվանս[է] առ նմա արասցուք[1]։ Լսե՞ս, եթէ ի սիրելիսն զնա բնակակցելո[ը] իւր էասաց[թ], և զինքն և զԱստուած Հայր[ժ]. արդեաւք[ժա] և զինքն թափեցեալ կարծեսցուք և զնմանն համբ(եր)ել զնուաստութիւն՝[ժբ] զՈրդւոյ և զծառային կերպարան[ժգ] առնուլ, զի զսիրչացն զնա զանձինս իւր առնէ վանս։|Զի՞նչ իսկ ոգին բնակեալ[ժդ] ի մեզ. արդեօք[ժա] և նմ զներմարդութեանն[ժե] ի բաց լնու զանօրէնութիւն[ժզ], զոր ի ձեռն միայնոյ Որդոյն[ժէ] գործեցեալ ասեմք՝ ամենեցուն փրկութեան[ժը] սակս և կենդանութեան։ Տար ի բաց յայսպիսի[ժթ] աւելորդէ և իմանաստէ[ի] ամենևին ունայնաբանութենէ։ Նուաստացոյց այսուհետև զինքն՝ ի կերպի և ի հանգիտութեանն[իա] Աստուծոյ և Հօր Բանն, յորժամ եղեալ մարմին, ըստ որում ասէ Յովհաննէս[իբ]. Ծնանի ի կնոջէ որ ծնելութիւնն ունէր զ' ի յԱստուծոյ և ի Հօրէ, և զըստ մեզն համբերեաց կրել վասն մեր։

Ցեսոյ**։

Այսպէս իմացիս զ' ի յԱստուծոյն բուսեալ Բան զկամաւորն համբերեալ զթափումն[իգ]. այսպէս Նուաստա-

* Ցիմ. եր. 61։.
** Նոյն.
ա) կոչութեանն Ցիսուսի Քրիստոսի բ) ի մարդում գ) բաւականեսցէ դ) առ ի թափել ե) կերպ զ) սրբոց առաքելոցն է՞ր վանս ը) բնակակցել թ) եասաց ժ) և զՀայր ժա) արդեւք ժբ) Նուաստութիւն ժգ) զծառայի կերպն ժդ) բնակեալն ժե) զներմարդութեան ժզ) անաւրէնութիւն ժէ) Որդւոյ ժը) ամենեցունն փրկութեանն ժթ) յայսպիսւոյ ի) անիմաստէ իա) հանգիտութեան իբ) Յովաննէս իգ) համբերել թափումն
1) Յովհ. ԺԴ, 23.



ցոյց զինքն, ‖ զկերպ[ա] ծառայի առեալ ըստ բնութեանն[բ] իւրում ազատն. այսպէս զսերմանէն[գ] Աբրահամու բռնահարեաց և հաւասարեաց արեան և մարմնոյ. զի թե մարդ իմանի ըստ մեզ սուկ[դ], եթէ միւսոյ քան զինքն բնականապէս բռնահարեաց՝ զսերմանէ Աբրահամու, և եթէ իւրում մարմնոյ հաւասարեալ[ե] ասի, զի և ըստ ամենայն եղբարց նմանել[զ]։ Բռնահարեաց այսուհետև զսերմանէ Աբրահամու և հաւասարեաց արեան և մարմնոյ Աստուծոյ Բանն[է], զի մի՛ միայն գայցէ մերկ[ը] Աստուած, այլ մարմին առեալ երևեսցի մարդութեամբ և մարմնովն, և է Աստուած[թ]։ 126v.

Նրանելոյն Կիւրղի, եպիսկոպոսի Աղէքսանդրու, մեկնութիւն հաւատոյ, որ ԾԺԸ. իցն*։

Հաւատամք ի մի Աստուած։

|Հաւատալ ասացին ի մի Աստուած, իբրև անդստին իսկ ի հիմանց շարժելով զհեթանոսացն փառս[ժ]. Որք զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան և փոխեցին զփառս անապականին Աստուծոյ ի նմանութիւն ապականացու պատկերի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց և սողնոց, և երկիրպագին արարածոց, և ոչ Արարչին[1], և աշխարհական տարերց ծառայեցին, կարծելով, թէ բազում և անթիւք իցեն աստուածք. ապա ուրեմն ի ջնջումն բազմաստուածութեանն մոլորութեանն ի մի Աստուած անուանեն՝ զհետ երթալով ամենայն ուրեք[ժա] Աստուածեղէն Գրոց, և զճշմարտութեանն զիղ[ժբ] ամենեցուն, որ ի ներքոյ արեգական՝ նշանակ[ժգ]։ Զայս իմաստունն Մովսէս արար յայտ՝[ժդ] ասելով. Լուր, Իսրայէլ. Տէր Աստուած քո Տէր մի է[2]. և

* Հմմտ. Ձեռ. Հ. 1797 = 1796. 1798 = 1797. 1799 = 1798 180[0] = 1678, 1801 = 1679 էջն. Մեկնութիւն ս. հաւատոյն, որ յենք հանրական եկեղեցւո միշտ առ. զոր կարդացին սուրբ հարքն ի Նիկիացոց ժողովն։—Այս բոլոր ձեռագիրներում նախ յառաջ է բերած իսկական Նիկիական հանգանակը և ապա մեկնութիւնը՝ մեր ձեռագրին չառ մօտ, բայց տարբեր թարգմանութեամբ նշանակում ենք (ըստ Հ. 1798 = 1797) այն տարբերութիւնները, որոնք բնագրի իմաստը կարող են աւելի պարզել, կամ բնորոշել երկու թարգմանութեանց առանձնայատկութիւնները։
ա) կերպ բ) ըստ բնութեան գ) զսերմանէ դ) սուկ ըստ մեզ ե) հաւասարել զ) զի ըստ ամենայնի եղբարց նմանեսցէ. քանզի սմանց նմանել ասացեալ յանձնմանէ ուստեմս առ պարտն նմանել ընթանայ։ է) Աստուծոյն Բան ը) գոյիցէ թ) այլ առն և մարդ եղեալ ըստ մեզ իմնայցի միաւորութեամբն։ ժ) զթեւեցեալս ժա) իւրօք ժբ) գեղեցկութիւն ժգ) նշանակեալ ժդ) ներակէր հաւատացոյնս
1) Հռոմ. Ա, 23—25. 2) Երկ. Օր. Զ, 6. Մարկ. ԺԲ, 29.

127r. նա, որ ամենեցուն ազգագործն է և Տէր՝ ուրեմն ասէ[ա]. Ո՛չ եղ || իցին քեզ աստուածք օտարք բայց յինէն[1]. այլ՛ այլ և ձայնիւ սրբոց մարգարէիցն գոչէ. Ես Աստուած առաջին և ես յետ այսորիկ, և ո՛չ գոյ այլ[բ] բայց յինէն[2]։ Կարի գեղեցիկ ամենագով հարքն, հիմն արկանելով հաւատոյն՝ զպատշաճականն[գ] խորհել և ասել, թ(է) մի է և միայն ճշմարտութեամբ Աստուած, հաւատալ ասացին ի մի Աստուած։

Ի Հայր ամենակալ[դ]։

Անուանեն զնա և Հայր ամենակալ, զի միանգամայն ընծայիցի[ե] ընդ Հօր յայտնութիւն Որդւոյ, վասն որոյ է Հայր առընթերակցին և միաւորականին[զ]. քանզի ո՛չ եթե ժամանակաւ եղև Հայր, այլ էր, որպէս էրն, և է միշտ՝ այսինքն է Հայր[է], անդր ուրեմն ի վերագոյն եղելոցս և յաւելագոյն բարձրութիւնս[ը]. քանզի և տիրելն|և իշխելն ամենեցուն այսպէս լուսաւորագոյն և անզուգական նմա զփառս բաժանէ[թ]։

Յարարիչն երկնից եւ երկրի[ժ]։

Ի նմանէն ասին եղեալ[ժա] որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի զամենայն, զի աստի անբուսական[ժբ] բնութիւնն նորա առ ամենայն արարածս իմանացէ[ժգ]. քանզի անհամեմատ առաւելութիւն է[ժդ] Արարչի և արարածոց՝ անեղելոյ[ժե] և եղելոյ բնութեան, որ ընդ լծով ծառայութեան և որ ի տէրունական պատիւն գեղեցկացեալ[ժզ], աստուածաբար և ի վեր քան զաշխարհ հասեալ փառացս Զ Որդւոյ անուն յիշեալ[ժէ], զի մի կարծիցէ ոք հասարակ անունն նմա բաժանել[ժը], որ կարգիցէ արդեաւք և ի մեր վերայ. քանզի կոչիմք և մեք որդիք։ Կարի հանճարեղագոյնք զկնի ածեն Որդւոյն անուան, որ ||
127v. ով մանաւանդ է

ա) և ինքն ուրեմն ասէ՝ բոլորից արարչագործն և Տէր բ) և ոչ ոք է գ) զպատրան գոլ դ) չ. Ի Հայր ամենակալ ե) զի ընդ նմին ի ներքս բերցի զ) գոյակցի և էակցի է) այսինքն Հայր ամենայնի գոլով ը) անդր քան զեղելութիւն և ի գերագոյնն բարձրութիւնս թ) հաւանեցուցանէ ժ) չ. Յարարիչն երկնից և երկրի ժա) արարչագործիլ ամենայնի ժբ) անհամեմատն ժգ) իմացի ժդ) անհամեմատակից է տարբերութիւնն ժե) անեղի ժզ) տիրականին պատուոյն զարդարեցելոյն ժէ) յիշեալ և զՈրդի ժը) զհասարակաց անուն հաւանեցուցանել նմա

1) Ել Ի, 3. 2) Համա. Ես. ԽԴ, 6. ԽԱ, 4.



տեսանել զնորա պատուոյն պայծառութիւնն[ա] ի վեր քան զարարածս՝ ըստ բնութեանն գոյութեան։

Ծնեալ, եւ ո՛չ արարեալ։

Անզուգական գոյութեամբ ընդ արարածս իմանալով զնա, վասն ոչ լինելոյն, այլ հաստատեալքն մանաւանդ ի ծնեալն ի գոյութենէ Աստուծոյ և Հօր՝[բ] անժամանակ և առանց իմանալոյ. քանզի էր Բանն ի սկզբանէ. ապա և ծննդեանն մտերմութիւն մարթապէս[գ] ասացին, և այս վասն պիտոյական և կարգի գեղեցիկ նշանակելոյ։

Աստուած յԱստուծոյ ծնեալ

ասացին զՈրդի։ Իւր ծնունդն ամենևին[դ] ճշմարիտ է. անդ ամենայն իրօք զկնի երթայ զարժանն խորհիլ և ասել, եթե ոչ աւտար է ի գոյութենէ[ե] Ծնաւղին Ծընեալն,|այլ նորին իսկ. զի և ի նմանէ է, որպէս և նմա վայել է ըստ արժանական բանի[զ]։ Զի ո՛չ եթե ըստ մարմնոյ ծնանիցի անմարմինն, այլ այսպէս մանաւանդ՝ լոյս ի լուսոյ[է]. զի և ի ծագելում լուսոյ ճառագայթեալ լոյսն իմանացի[ը] և ի նմանէ ըստ անճառ և պատում ելից[թ], և ի նմին ըստ միաւորութեան, և ի նմին իսկ բնութեամբ[ժ]։ Քանզի այսպէս լինել ասեմք ի Հաւրէ զՈրդի և յՈրդւոյ զՀայր, զի և Որդի ի[ժա] յիւրում բնութեան և փառս զիւր Ծնաւղն. քանզի ասացեալ յայտնապէս ցՍիմոն յիւրոց աշակերտացն[ժբ], Փիլիպոս էր այն. Ո՛չ հաւատաս, եթէ ես ի Հաւր եմ և յիս Հայր. որ ետես զիս, ետես զՀայր իմ. ես և Հայր իմ մի եմք[1]։ Եթէ այդպէս՝ մի- || 128r.
աւորական[ժգ] է Որդի Հաւր. ըստ այս աւրինակի Աստուած յԱստուծոյ ճշմարտէ ծնեալն հաւատա[ժդ]։ Այլ զծննդեան անուն զացուք եղեալ և ի վերա արարածոց[ժե]. ըստ այնմ ասեմ. Որդիս ծնա և բարձրացուցի[2], վասն

ա) զներգոյին ի նմա պայծառութեան բնաւորականին՝ զոր ի վեր քան զարարածս պատւին: բ) անդաստակից էապէս արարածոց վասն ոչ արարեալ իմանալոյն զնա. այլ ծնանել առուցեն զնա յէութենէն Աստուծոյ և Հօր գ) ապա զծննդեանն ճշմարտութիւն մարդկօրէն դ) Քանզի ուրանոր բնաւին ծնունդ ե) յէութենէ զ) ըստ իւր վայելուչ նման սահմանին է) այլ այսպէս. որպէս առողի. ի լուսոյ. ը) իմացի թ) ըստ յառաջ ճանապարհին անճառելոյ և անպատմելոյ ժ) և նոյնութեան բնաւորականի։ ժա) զի կէ Որդի ժբ) հաւատեաւ առ մի ոմն ի սրբոց աշակերտաց ժգ) համագոյ ժդ) հաւատացեալ լինի ժե) եղեալ զասեմք ի վերայ հաստատածոց

1) Յովհ. ԺԴ, 10. Համա. Ժ, 30. 2) Ես. Ա, 2.

այնորիկ յարենէն Իսրայելի ասացեալ յԱստուծոյ[ա], այլ շնորհաց կարգի զայսպիսի կոչումն շահի եղեալն[բ]. (ի)սկ ի բնութեան Որդւոյ ըստ ի կիր առնելոյ ոչինչ ամենևին յայսպիսեացս գտցի[գ], այլ ճշմարիտ ամենայն. և վասն այսորիկ միայն յամենեցունց՝ Ես եմ, ասէ, ճշմարտութիւն[1], որպէս զի՝ թէև ծնունդ և թէ որդիութիւն ի նմա ասիցէ, ստաբանութիւն ինձ լինել ամենևին ոչ գտցի[դ]. քանզի նա է ճշմար|տութիւն։ Զուշացուցեալ ամբացուցանեն այսուհետև զոգիս մեր ամենագով խորհրդացոյցքն[ե] Հայր և Որդի և ծնունդ ամենայն ուրեք անուանելով։

Լոյս ի լուսոյ ծագեալ

ասացին[զ]. զի և զանմարմնութիւն և զպարզականութիւն միաւորութեան ծնունդս ունիցի[է], և զառ ի նմանէն և զնոյն, և ոչ այլ ումն որիշ ինքներեւութեամբ իմանացէ[ը]։ Զի Հայր է Հայր, և ոչ Որդի. և Որդի ծնեալ, և ոչ Հայր, և ի նմին իսկ բնութեան առանձինն ոք լինել, որ էն[թ]։ Ամենեցուն Արարիչ՝ երևելեաց և աներևութից, ցուցեալ զՀայր՝ Որդւով արարեալ զամենայն ասա-
128v ցին, ոչ նուազութիւն ի փառսն, իբրև զվիճակ ի ‖ նչ պատշաճական՝ բաժանելով[ժ]։ Ա՛ւն անդր ի բաց. Ձեր արդեաւք ամենևին փոքր և մեծ իցէ տեսանել ի նմին միում գոյութեան[ժա]. այլ որպէս թէ Աստուծոյ և Հաւր ոչ էր առանձինն ինչ գործել և ի չգոյէ ի գոյ ածել, բայց եթէ Որդւով և Հոգւով[ժբ], իբրև զաւրութեամբ և իմաստութեամբ իւրով. քանզի գրեալ է թէ՝ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և հոգւով բերանոյ նորա ամենայն զաւրութիւնք նոցա[2]։ Այո, այլ և ամենասուրբն Յովհաննու ասացեալ թէ՝ Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն[3], զկնի ած թափեաց

ա) յաղագս որոց յԻսրայէլէն ասացեալ առ ի յԱստուծոյ բ) արարեալն գ) իսկ ի վերայ բնութեան Որդւոյն զիտակապէս յայսպիսեացս ոչինչ է դ) ծնունդ ոք և որդիութիւն ոք ասիցէ ի վերայ նորա՝ սուտ է և ոչ բնաւ ուրեք. ե) Որք, զզուշացուցանեն զանձինս մեր երանելիք խորհրդածուքն զ) Եւ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ և լոյս ի լուսոյ փայլակեալ ասելով է) զպարզութիւն կայցէ ծնունդն ը) և իւրաքանչիւր գոլով առանձնապէս զիմա իմացցի թ) և նոյնութեամբ բնութեանն առանձին է իւրաքանչիւր ուրուք որ ինչ էն։ ժ) այլ որպէս զվիճակ ինչ նմա վայելուչ հետևեցուցեալ։ ժա) ի նոյնութեան էութեանն ժբ) Որդւով ի Հայր

1) Յովհ. ԺԴ, 6. 2) Սաղմ. ԼԲ, 6. 3) Յովհ. Ա, 1.



կարի գեղեցիկ[ա] եթէ՝ Ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ոչինչ[1]։ Միաւնական այսուհետև և|զուգափառ և հաւասարակագործ[բ] Հաւր զՈրդի ցուցեալ՝ յիշեն կարի աւգտակարագոյնս զմարդկութիւնս նորա, և զմատակարարութիւն խորհրդաւոր հանդերձ մարմնովն յայտ յանդիման կացուցեն. գիտացեալ այսուիկ՝ կատարելագոյն և անկարաւտ հաւատոց աւանդութիւն երևեալ տեսանի[գ]։ Քանզի ոչ միայն այն բաւական է հաւատացելոյն, առ ի նմա զմտաւ ածելն և խորհելն զայն միայն, եթէ Աստուած յԱստուծոյ ծնեալ է, ի Հաւրէ՝ միաւնական նմին և կերպարան զաւրութեան նորա[դ][2], այլ կարևորագոյն է գիտել ընդ այնոսիկ և զայն ևս, որպէս զի վասն ամենեցուն փրկութեան և կենդանութեան զիջուցեալ զինքն յունայնութեան՝ ‖ էառ զկերպարանս ծառայի[3] և եղ[ե] մարդ ծը- 129r.
նեալ ըստ մարմնոյ ի կնոջէ։ Վասն այսորիկ ասեն.

Որ վասն մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ եւ մարմնացեալ եւ մարդացեալ։

Տես, թէ զիա՛րդ գեղեցիկ աստիճանաշաճական և արժանական կարգի յառաջ խաղա բանն նոցա[զ]. իջանել ասացին, զի այսոսիկ իմացուք զայն, որ ի վեր է քան զամենայն բնութեամբ և փառաւք. զնա զիջեալ վասն մեր՝ ի կամելն, ասեմ, զառ ի մեր նմանութիւնն գոլ և ծագել աշխարհի հանդերձ մարմնովն։ Քանզի գրեալ է ի գիրս Սաղմոսաց. Աստուած յայտնապէս եկեսցէ[4]. իմանալի է[է], թէ կամիցի ոք, արդեաւք ասա այլում աւրինակի էջն[ը], որպէս յերկնից և|ի վերուստ, և կամ եթէ ի նմանէ իսկ ի Հաւրէ. քանզի բարբառաւք, որ ըստ մեզ[թ] և որ ի վեր քան զմիտս է, սովորութիւն է յայտնել[ժ] Աստուածեղէն Գրոց։ Ասաց ուրեմն Քրիստոս՝ այսպէս խաւսեցաւ ընդ սուրբ աշակերտսն. Ելի ի Հաւրէ և եկի յաշխարհ, դար-

ա) ի վերայ բերէ կարևորապէս բ) համագոյ և հաւասարափառ և հաւասարագործ գ) վասն այնորիկ կատարեալ լինել և անկարօտ՝ զհաւատոյն աւանդութիւն բարիոք ծանուցեալ։ դ) Հօր համագոյ և նորա գոլով նկարագիր էութեանն ե) յառաջ եկն զ) Եւ տես, թէ զիարդ ի դէպ և ի վայելուչ կարգի գայ առաջ Բանն Աստուծոյ է) եկեսցէ, Աստուած մեր ոչ լռեսցէ և իմացցի ը) կամեսցի և ըստ յեղանակի իջանելն թ) ըստ մեզ ձայնիւք ժ) յայտնի է սովորութիւն

1) Յովհ. Ա, 3. 2) Հմմտ. Փիլիպ. Բ, 6. Եբր. Ա, 3. 3) Փիլիպ. Բ, 7. 4) Սաղմ. ԽԹ, 3.

ձեալ թողում զաշխարհ և երթամ առ առաքիչն իմ[1]. զկնի այնորիկ և այլ ևս[ա]. Ես ի Հաւրէ ելի և եկի[2]: Գրէ և զարմանալին Յովհաննէս եթէ՝ Ի վերուստ եկեալն ի վեր է քան զամենեսեան[3]: Արդ, այն, որ էրն ի բարձրանագոյն աստուածութիւնն[բ] և ի վեր քան զամենեսին՝ գոյութեամբ իւրով[գ], որ և ի նմին իսկ բնութեամբ առ ի նմին իսկ
129v. պսակեալ, ոչ յափշ‖տակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զինքն ունայնացոյց՝ զկերպ ծառայի էառ և ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանաւք գտեալ իբրև զմարդ, խոնարհեցոյց զինքն[4]. վասն զի Աստուած էր Բան, ի մարմինս միացաւ ի մեր[դ], մնաց և այնպէս Աստուած: Այսու աւրինակաւ սքանչելին Պօղոս զԱստուած ի նմանութիւն մարդկան եղեալ ասէ և գտեալ իբրև զկերպարանօք մարդ[ե]. քանզի Աստուած էր, որպէս և ասացի՝ տեսլեամբ իբրև զմեզ, և ոչ առանց հոգւոյ[զ] առեալ զմարմինն, որպէս թուեցաւ ոմանց ի հերձուածողացն, այլ հոգէկան, մանաւանդ հոգի բանաւոր[է]: Արդ, զնա ուրեմն, որ ի գոյութենէն Հաւր եղեալ[ը] Բան և Որդի Միածին՝ զԱստուածն ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ,|զլոյսն ի լուսոյ, որով ամենայն ինչ եղև, իջեալ ասացին հարքն մեր՝ մարմնացեալ և մարդացեալ, այսինքն յանձն առեալ զծնանելն[թ] ըստ մարմնոյ ի կնոջէ և յառաջ գալ տեսլեամբ մարմնով ըստ մեզ[ժ]. քանզի այն է մարդանալն: Արդ, մի Տէր է[ժա] Յիսուս Քրիստոսն, նոյն Միածինն Բանն Հօր՝ եղեալ մարդ, ոչ ի բաց եղեալ զգոլն որ էրն. քանզի եկաց մնաց և ի մարդանալն[ժբ] Աստուած, և ի ծառայի կերպարանսն Տէրն, և յունայնութեան ըստ մեզ, որ լինէ աստուածապէս[ժգ], և ի տկարութեան մարմնոյ Զօրութեանցն Տէր, և ի մարդկութեան չափն զիւրն ունելով որ առաւելն քան[ժդ] զամենայն արարածս: Որ[ժե] ինչ

ա) և դարձեալ. Դուք ի ներքուստ էք, բայց ես ի վերուստ եմ. ևս առ այսորիկ բ) Քանզի և է իսկ ի վերայ ամենեցունց գ) էապէս ընդ Հօր իւրում դ) Աստուած գոլով Բանն՝ զմերս առ մարմին. ե) Այսուիկ Աստուած նմանութեամբ մարդկան ասաց գալ և գտանել որպէս զմարդ ձեւով զ) անանցն է) այլ անձնաւոր հոգով իմանալեաւ ը) զոր յէութենէն Հօր եկեալ յառաջ թ) կրել զծնունդն որ ժ) տեսակով ըստ մեզ ժա) Մի ուրեմն է Տէր ժբ) ի մարդկութեանն ժգ) որ զկրումն ունէր աստուածաբար ժդ) չափս և ի վեր քան ժե) Քանզի որ

1) Յովհ. ԺԶ, 28. 2) Յովհ. Ը, 42. 3) Յովհ. Գ, 31. 4) Փիլիպ. Բ, 6—8.



էրն յառաջ քան զմարմինն՝ անընկէց[ա] ունի, քանզի Աստուած էր և Որդի ճշմարիտ, Միածին և լոյս և կեանք և զօրութիւն. ‖ և ոչ էրն՝ զայն առաւել տեսանի վասն տընտեսութեանն[բ], և իւր արար զմարմնոյնսն, քանզի ոչ այ- 130r
լոյ ուրուք էր, այլ նորա, մանաւանդ անճառութեամբ և անպատմութեամբ նմա միացեալ մարմինն[գ]: Այսպէս և իմաստունն Յոհաննէս մարմին եղեալ ասէ զԲանն[1]. եղև մարմին, ոչ փոփոխումն ինչ և շրջումն, կամ այլայլումն[դ], ի մարմնոյ բնութիւն դարձեալ. այլ ոչինչ զանգուած կամ խառնուած և, ըստ փաքսելոյն ոմանց՝ յարումն բնութեան համբերեալ[ե]. քանզի անհնարին է, վասն զի ըստ բնութեանն անշրջական[զ] է և անայլայլելի, ի մարմին մանաւանդ, որպէս և անձնականացի հոգի բանաւոր՝[է] ի կուսական և յանարատ մարմնոյն առեալ և ինքեան զնա միացուցեալ:|Սովորութիւն է Աստուածաշունչ Գրոց թերևս և ի մարմնոյ միայն զբովանդակ մարդն նշանակել. Հեղից, ասէ, ի հոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ[2]. քանզի ոչ եթէ մարմնոց անհոգւոց բանական հոգւոյն[ը] զշնորհն Հոգւոյն Սրբոյ զեղուլ խոստանայր Աստուած, այլ մանաւանդ մարմնոց ի մարմնոյ և յոգւոյ բովանդակելոց: Թէ այդպէս է ուրեմն, եթէ ոչ Բանն[թ] զգոլն որ էրն[ժ] եղև մարդ, այլ ի նմանութեանն ըստ մեզ երևեալ՝ եկաց մնաց Բան, և ոչ եթէ նախ մարդ իմանայցի[ժա] Քրիստոս և այսպէս յառաջ եկեալ ի լինել Աստուած, այլ Աստուած[ժբ] Բանն եղև մարդ,-զի ի նմին իմանացի Աստուած[ժգ], միանգամայն և մարդ նոյնն: Այլ որք զնա յերկուս որդիս բաժանեն և ժպրհին ասել, եթէ զմարդն, ‖ որ ի զաւակէն 130v.
Դաւթի, յինքն յարեաց[ժդ] Աստուած Բանն և ետ նմա ի Բանն և ետ նմա ի պատուոյն և ի փառացն[ժե] և յորդութեանն արժանաւորութենէ, և պատրաստեաց զնա համբերել խաչի, մեռանել և կեալ, և վերանալ յերկինս և ընդ

ա) առանց ի բաց գնելոյ բ) որ ինչ ոչն էր առեալ տեսանի վասն տնօրէնութեանն գ) այլ իւր անճառապէս և որպէս ոչ պատմելի միաւորեալ ընդ նմա մարմինն: դ) ոչ ըստ փոխադրութեան, կամ յեղման, կամ այլայլութեան ե) այլ և ոչ խառնակումն, կամ չփոթումն, զյօրինակի ասացելոյս առ ի յոմանց՝ կրեալ. զ) ան փոփոխելի է) Այլ մարմին առեալ, որպէս ասացի, հոգւով իմանալեաւ ը) քանզի ոչ ի մարմինս՝ յոչ անձնաւորեալ հոգւով իմանալեաւ թ) Ըստ ոչ ի բաց կացեալ Բանին ժ) ի գոլոյ որ ինչ էրն ժա) իմանի ժբ) Աստուած գոլով ժգ) իմացի Աստուած գոլ ժդ) յարակցեաց ժե) հաղորդ արար փառաց և պատուոյ

1) Յովհ. Ա, 14. 2) Յովէլ Բ, 28. Գործք Բ, 17.

աջմէ Հաւր նստել, զի երկիրպագիցի յամենայն արարածոց, ընծա յԱստուծոյ զպատիւսն[ա]։ Նախ երկուս որդիս ասեն, ապա և զխորհրդեանն զօրութիւնն զառածանեն տգիտութեամբ[բ]. քանզի ոչ եթե ի մարդոյ[գ] եղև Աստուած Քրիստոս, որպէս և ասացին, այլ Աստուած եղև մարմին, այսինքն է մարդ, և ունայնացեալ ասի, որպէս զի յառաջ քան զունայնանալն զլիութիւնն ունելով յիւրում բնութեանն, ըստ որում իմանի Աստուած, և ոչ եթե յունայնութենէ ի լիութիւն եկն[դ]. խոնարհե|ցոյց զինքն ի բարձրութեանցն աստուածականաց՝ յանճառ փառացն, և ոչ եթե խոնարհ մարդ ոք փառաւորեալ. և առ զկերպ ծառայի իբրև զազատ. և ոչ եթե ծառայ ոք յազատութեան փառս վազեաց. ի նմանութիւն մարդկան եղև, որ ի կերպարանս և ի հաւասարութեան Հաւր, և ոչ եթե մարդ էր և զնմանողն լինել Աստուծոյ մեծացաւ հաղորդաբար[1]։ Ընդէ՞ր այսուհետև փոխեալ շրջեն զմատակարարութեան[ե] բանս և խառնակեն զճշմարտութիւնն, հակառակ կալով ամենայն Աստուածաշունչ Գրոց, որք Աստուած ճշմարիտ գիտեն ի մարդկութեանն զՈրդի և մի անուանեն զնա ամենայն ուրեք։ Քանզի և յԱշխարհարարութեանն գիրս գրեաց Մովսէս. յորժամ անցոյց սքան-
131r. չելին Յակոբ զմանկունս իւր ընդ հեղեղատ || և մնաց միայն, կռուէր այր ոմն ընդ նմա մինչև յառաւօտն. և կոչեաց Յակովբ զանուն տեղւոյն այնորիկ Տեսիլ Աստուծոյ. Քանզի տեսի, ասէ, զԱստուած դէմ յանդիման, և ապրեցաւ անձն իմ. ծագեաց ի նմա արեգակն, յորժամ էանց ընդ Տեսիլն Աստուծոյ, և Յակովբ կաղայր ի բարձէն իւրմէ[2]։ Յառաջագոյն ցուցանէր նախապատկերն Աստուած, եթե ի մարդանալն ըստ ժամանակաց[զ] Միածին Բանի նորա կռուակից ունիցի[է] զԻսրայէլ, եթե ոչ ուղղաքայլեն վասն սորա[ը], այլ կաղան ըստ այնմ, որպէս և նոյնն իսկ ասաց քնարաւ երգօղին. Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք օտարաց հնացան[թ] ի շաւղաց իւ-

ա) յԱստուած վերաբերութիւն ընկալեալ զպատիւն։ բ) ի հաւաստակն շրջին անուսումնաբար գ) ի մարդկութենէ դ) քանզի ոչ ոք յունայն գոլոյ ել ի բարձրութիւն ե) զանօրէնութեանն զ) յետին ժամանակաց է) ընդդիմահար կալցի ը) ոչ եղիցին առ նա ուղիղ գնացիւք թ) հնացան և կաղացան

1) Համա. Փիլիպ. Բ, 7. 2) Ծննդ. ԼԲ, 24—31.



րեանց[1]։ Թուի ինձ, թէ զայս նշանակեաց ի կաղալն Յակովբայ ի բարձէն իւրմէ. այլ սակայն դու զայն տես՝| մարդոյ կռուելոյ ընդ նմայ, տեսանել զԱստուած դէմ յանդիման, և տեսիլ անուանէ զնա Աստուծոյ. քանզի մնաց Աստուած Բանն, և յորժամ մարդ եղև՝ ի կերպի Հօր. ըստ մտաւոր կերպարանաց[ա] ասեմ, քանզի ըստ ամենայնի իսկ անփոփոխումն զոր ունի՝[բ] ասաց ցՓիլիպպոս, նկարագիր զօրութեանն* Հօր[գ] զինքն ցուցանելով և հանդերձ մարմնովն. Որ տեսս զիս՝ տեսս զՀայր իմ[2]։ Եւ վասն զի զոմն ի ծնէ կոյր բժշկեաց, գտեալ զնա ի տաճարին, Դու հաւատաս, ասէ, յՈրդի Աստուծոյ, և նորա առ այս ասացեալ. Ո՞վ է, Տէր, զի հաւատացից ի նա, պատասխանի ետ ասելով. Եւ տեսեր զնա, և որ խօսիս ընդ քեզ՝ նա է[3]. տեսս զնա կոյրն ոչ մերկ և ոչ անմարմին, այլ մանաւանդ ըստ նմանութեան մերում[դ], և հաւատաց յայն, զոր ետեսն, ոչ իբրև յոր || դի ընդ որդւոյ 131
միացեալ, այլ իբրև ի մի բնութեան և ճշմարտութեամբ[ե], ոչ առանց մարմնոյ ծագեալ որոց յերկրի։ Այլ և սքանչելին Մովսէս յօրհնութիւնսն ասէ. Տուք Ղևեայ զյայտնութիւնս նորա և զճշմարտութիւնս նորա առն անարատի. զի փորձեցին զնա ի փորձութեան, բամբասեցին զնա ի վերայ Ջուրցն հակառակութեան. որ ասէ ցհայր իւր և ցմայր. Ո՛չ տեսի զքեզ, և զեղբայր իւր ոչ ծանեաւ[4], Հրամայեաց ամենեցուն Աստուած զպճղնաւորն լինել Ահարոնի՝ յազգի ազգի անգուածոյ զգեստ վայելչական միայն քահանայութեանն որոշել, և առ լանջօքն քահանային ականք[զ]. օրինակաւ ի ձեռն այսոցիկ ցուցանէր սրբոց առաքելոցն պար՝ շուրջ փայլեալ զէմմանուէլիւ[է], որ է յայտնութիւն|և ճշմարտութիւն. քանզի յայտնեաց մեզ ճշմարտութիւնն, որ ի

* Լուսանցքում՝ էութեանն.

ա) ըստ իմանալոյ պատկերի բ) և ըստ ամենայնի, զոր ինչ և էցէ, զանվրէպ նմանութիւն ունելով գ) նկարագրութեան Հաւր դ) ըստ մեզ տեսակաւ ե) ոչ յորդւոյ այլ որդի պատուեալ, այլ որպէս մի զբնութեամբն և ճշմարտապէս զ) և եդեալ ի վերայ նորա ի լանջս քահանայապետին ականս ընդելուզեալս՝ թուով երկոտասան, և ի միջին եդեալ զճշմարտութիւնն և զյայտնութիւնն՝ այլ երկուս ականս։ է) ցուցանի զասս, որպէս շուրջանակի՝ ի միջի ունելով զէմմանուէլ

1) Սաղմ. ԺԷ, 45—46. 2) Յովհ. ԺԴ, 9. 3) Յովհ. Թ, 35—37. 4) Երկ. Օր. ԼԳ, 8—9.

ստուեր և յօրինակս մեկնաբանեալ զպաշտօնն[ա]։ Եւ զի եղև մեզ քահանայապետ Միածին Բանն Աստուծոյ, յորժամ և մարդն եղև, զիա՞րդ իցէ յերկուանալ, գրելով այսպէս սքանչելոյն Պաւղոսի. Նկատեցէք զառաքեալն և զքահանայապետ խոստովանութեան նորա[բ] զՅիսուս, հաւատարիմ եղեալ Արարչին իւրում[1]. քանզի քահանայապետութեանն[գ] պատիւ մարդկութեան չափոցն յիրաւի ոչ դէպ ինչ թուիցի և նուազ ինչ[դ] Բանին բնութեան և փառաց. այլ եթե անպատշաճ ինչ՝ հանդերձ մարմնական տնօրէնութեամբն[ե], քանզի նորա եղեն մարմնականքն. Տուք այսուհետև Ղևեայ, այսինքն է քահանայի, զպաշտօնութիւնն և զճշմարտութիւնն. և որում առն արդեւք և կամ Ղևեայ[զ], յայտնագոյնս արար, ասելով եթե՝ առն

**109r.** անարատի. ‖ քանզի ոչ արար մեղս Տէր մեր Յիսուս Քրիստոս[2]։ Այլ և երանելի Պաւղոս գրէ վասն Նորա. Այսպիսի վայել էր մեզ քահանայապետ՝ սուրբ, անմեղ[է], անարատ, զատեալ ի մեղաւորաց և բարձրագոյն քան զերկինս եղեալ[3]։ Զնա փորձեցին ի փորձութեանն, բամբասեցին ի վերայ ջուրցն հակառակութեան. ո՛ չքնաղ և սքանչելի իրաց. այր ասացեալ զնա՝ վաղվաղակի Աստուած երևեցոյց[ը]. զոր բարկացոյցն և փորձեաց Իսրայէլ յանապատին և ի ջուրսն հակառակութեան։ Եւ հաւատարմացուսցէ զասացեալսն սաղմոսերգուն Դաւիթ եթէ՝ Պատառեաց[թ] զվէմ յանապատին և արբոյց զնոսա, որպէս ի խորոյ մեծէ. և հան ջուր ի վիմէն և իջոյց որպէս գետ[ժ] զջուրսն[4]։ Եւ զի՞նչ յետ այսորիկ. և փորձեցին զնա ի սիրտս իւրեանց, և չարախօսեցին զԱստուծոյ և ասացին. Միթէ՞| կարիցէ Աստուած պատրաստել սեղան յանապատին. զի եհար զվէմ, և հոսեցան ջուրք և ուղխք հեղեղեցան[ժա]. և միթէ հաց կարէ տալ, կամ պատրաստել սեղան ժողովրդեան իւրոյ[5]։

ա) ի բաց մերժեալ զստուերս և զօրինակաւ պաշտաւնն։ բ) մերոյ գ) քահանայութեանն դ) մարդկութեանս չափոց ոչ իմացի աննման, և փոքր է քան Աստուծոյ ե) բայց ոչ է անպատշաճ տնօրէնութեանն զ) որո՞յ առն Ղևեայ, քահանայի է) անբիծ ը) կոչեաց թ) հերձ ժ) գգետս ժա) և վտակք խաղացին

1) Եբր Գ, 1—2. 2) Համմ. Ա. Պետ. Բ, 22. Բ. Կորնթ. Ե, 21. 3) Եբր. Է, 26. 4) Սաղմ. ՀԷ, 15—16. 5) Սաղմ. ՀԷ, 19—20.



Արդ, մի՞տ դիր, եթէ զիա՞րդ բանբասեն զսքանչելագործն Աստուած[ա]. զոր և այրն ասէ Մովսէս, զայս իմացեալ երանելւոյն Պաւղոսի, եթե՝ Ըմպէին[բ] ի հոգևոր վիմէն, որ երթայր զհետ նոցա, և վէմն էր ինքն Քրիստոս[1]։ Թէ այդպէս է, ապա ուրեմն բամբասեալ այրն նա էր՝ այն, որ չև ևս մարմնացեալ փորձեալ յԻսրայէլէ[գ]։ Եւ զի ոչ այլ ոք որդի էր, որ յառաջ քան զմարմին, և այլ ոք յետ նորա, որ ի զաւակէ Դաւթի, որպէս յանդգնեցան ասել ոմանք, այլ միևնոյն ինքն՝ յառաջ քան զմարմնանալն մերկ Բանն, և յետ ծննդեանն ի սուրբ Կուսէն ‖ մարմնա- **109v.**
ցեալ և մարդացեալ, որպէս գրեցին սուրբ հարքն, այլով դարձեալ նշանակելովս հաստատեաց[դ] Մովսէս. իբր եթե հարցեալ ուրուք, կամ ուսանել կամեցեալ, թէ վասն որո՞յ առն եղև բանն, զոր փորձեալ և բամբասեալ ասէ յԻսրայէլէ, ոչ միայն այսչափ, այլ գրեթէ ձեռն ձգեալ՝ մատամբ ցուցանէ զՅիսուս և ասէ. Որ ասէ ցհայր իւր և ցմայր իւր՝ ոչ տեսի զքեզ, և զեղբարսն իւր[ե] ոչ ծանեաւ։ Յիշեմք զգրեալն միոյ ուրուք յաւետարանչացն, որպէս զի յուսուցանելն երբեմն Քրիստոս զխորհուրդս արքայութեանն, և կային առ դրան նորա մայրն և եղբարքն նորա, և ապա ընթացեալ միոյ ուրումն յաշակերտացն՝ ասացեալ. Ահա մա՛յր քո և եղբարք կան արտաքոյ և տեսանել զքեզ կամին, ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասաց.|Մայր իմ և եղբարք սոքա են, որ լսեն զԲանն Աստուծոյ և առնեն. զի որ ոք արասցէ զկամս Հօր իմոյ, որ յերկինս է, նա է իմ եղբայր և քոյր և մայր[2]։ Թուի ինձ, թէ ասիցէ զոր ասացն Մովսէս. Որ ասէ ցհայր իւր և ցմայր՝ ոչ տեսի զքեզ, և զեղբարս իւր ոչ ծանեաւ։ Այո՛, այլ և ամենիմաստն Դանիէլ նմանութեամբ ըստ մեզ տեսանել ասէ զՄիածին Բանն Աստուծոյ[զ]. քանզի տեսանել ասէ զՀինաւուրցն նստեալ յաթոռ, և բիւրս բիւրուց յառաջի կացեալ և հազարս հազարաց պաշտօնէից. և յետ սակաւ միոյ այսոցիկ ածէ, թափէ[է]. Տեսանէի

ա) ի սքանչելագործելն Աստուծոյ բ) Այսպէս և առաքելային Պաւղոս գրէ. Քանզի ըմպէին գ) փորձիւքն առ ի յորոց, Իսրայէլէն դ) դարձեալ այլ նշանաւ հաստատեացոյց ե) զեղբայրս զ) ըստ մերոյս տեսակի ասէ զՄիածինն Աստուծոյ Բան տեսանել է) և ապա եկեալ ի մէջ այս ինչ բանս՝ բերէ ի վերայ այսոցիկ.

1) Ա. Կորնթ. Ժ, 4. 2) Մատթ. ԺԲ, 47—50. Համմ. Մկ. Գ, 31—35.

տեսլեան գիշերոյ, և ահա ընդ ամպս երկնից իբրև Որդի Մարդոյ եկեալ, և մինչև ի Հինաւուրցն էհաս, առաջի նորա մատուցաւ[ա], և նմա տուաւ **110r.** ‖ պատիւ և արքայութիւն, և ազգք և լեզուք նմա ծառայեսցեն[1]։ Ահա դարձեալ յայտնագոյնս և լուսաւորագոյնս՝ վերանալով առ երկնաւորն Հայրն և Աստուած, ետես զԷմմանուէլ. քանզի ամպն կալաւ զնա, զոր և ոչ մարդ լոկ, այլ իբրև զՈրդի Մարդոյ ասէ, քանզի Աստուած էր ի նմանութիւն ըստ մեզ եղեալ մարդ։ Այսպէս իմացեալ երանելոյն Պաւղոսի՝ ի նմանութիւն մարդկան ասէ լինել զնա և գտանել կերպարանաւ իբրև զմարդ, և ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևելոյ յերկրի[գ][2]։ Ապա եթէ մարդ ոք էր, յարմամբ[դ] առ Աստուած իբրև զԱստուած պատուեալ, ասէր արդեւք մարգարէն՝ իբրև զԱստուած, կամ իբրև զՈրդի Աստուծոյ տեսեալ զեկեալն ընդ ամպս երկնից. այլ ոչ զայս ասէ, այլ մանաւանդ զայն, եթէ իբրև զՈրդի Մարդոյ.|գիտէ ուրեմն, եթէ Աստուած է և ի մարմնաւորութեանն Որդի[ե], թեպէտ և ի նմանութիւն մարդկան եղեալ՝ ըստ Պաւղոսի բարբառոյն. սակայն և մարմնով երևեալ՝ մինչև ի Հինաւուրցն եհաս, այսինքն է՝ յիւրոյին Հօր եւ յաթոռ[զ], և ամենայն ազգք և լեզուք նմա ծառայեցին։ Եւ այս արդեօք ի նմանէ էր ասացեալ[է]. Հայր, փառաւորեա զիս փառօքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն[3]։ Եւ զի մարմնացեալ Բանն Աստուծոյ աթոռակից է և զուգափառ[ը] Աստուծոյ և Հօր և յետ մարմնոյն՝ իբրև զմի Որդի, և յորժամ եղև մարդ՝ յայտնագոյնս ցուցանէ[թ] ամենիմաստն Պաւղոս. Այսպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծութեանցն ի բարձունս[4]։ Այո, այլ և նոյն իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ի հարցանել զնա Հրէիցն, եթէ նա՞ իցէ **110v.** ‖ ճշմարտութեամբ Քրիստոսն, Եթէ ասացից, ասէ, ձեզ՝ ոչ հաւատայք. եթէ հարցից՝ ոչ պատասխանէք. յայսմհետէ լիցի Որդի Մարդոյ նստեալ

ա) ածաւ  բ) Թագաւորութիւն  գ) երևեալ որոց ի յերկրի  դ) յարակցութեամբ  ե) և Աստուած զոլ և մարդացեալ զՈրդի  զ) ի Հօր իւրոյ յաթոռ ելեալ, և նմա տուաւ պատիւ և թագաւորութիւն  է) եւ այս է ուրեմն ասացեալն առ ի նմանէ  ը) զահակից է և հաւասարափառ  թ) Հօր և մարմնովն՝ հաւաստէ գրելով

1) Դան. Է, 13—14. 2) Հռոմ. Ը, 3. Համմ. Փիլիպ. Բ, 7. 3) Յովհ. ԺԷ, 5. 4) Եբր. Ը, 1.



ընդ աջմէ զօրութեանց Աստուծոյ[1]։ Ապա ուրեմն յաստուածութեան աթոռսն և ի մարդանալն զՈրդի տեսանէր սրբոց մարգարէիցն զունդն[ա]։

Տեսցուք և զնորոյ Կտակարանացս քարոզ, զառ ի ներքոյ արեգական խորհրդացոյսն[բ], որոց ինքն Քրիստոս ասաց. Ո՛չ եթէ դուք իցէք, որ խօսիցիք, այլ Հոգի Հօր ձերոյ, որ խաւսիցի ի ձեզ[2]։ Գտցուք այսուհետև ասացեալ սքանչելի Մկրտչին. Զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղև, զի առաջին իմ էր[գ][3]. և զիա՞րդ արդեօք, որ զկնի նորա երթայր՝ առաջի նորա էր. և զի կրտսեր էր[դ] ըստ մարմնոյն ժամանակաց Քրիստոս քան զՅովհաննէս, զիա՞րդ ոչ իցէ ամենեցուն յայտնի։ Զի՞նչ ոք արդ|եօք ասիցէ առ այս. ելոյծ մեզ զխնդիրն ինքն իսկ Փրկիչն. ասաց ուրեմն՝ ընդ Հրէայսն խօսելով. Ամէն ասեմ ձեզ, յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես[4]. քանզի էր յառաջ քան զԱբրահամ աստուածապէս, իմանի և յետոյ քան զնա, ըստ որում երևեցաւն մարդ։ Եւ դարձեալ Հօրն և Աստուծոյ գոչելով յայտնապէս. Զփառս իմ այլում ոչ տաց[5], քանզի Աստուած ոք բաց ի նմանէ չիք[ե]. ասաց մեզ Քրիստոս. Յորժամ եկեսցէ Որդի Մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք սրբովք[6]. Որդւոյն Մարդոյ ակն ունել[զ] իջանել յերկնից։ Գրէ դարձեալ ամէնիմաստն Պաւղոս. Երևեցան շնորհն փրկչական[է] ամենայն մարդկան, խրատելով զմեզ, զի ուրացեալք զամպարշտութիւն, զաշխարհական ցանկութիւն, զգաստութեամբ և արդարութեամբ կեց **111r.** ‖ ցուք յաշխարհիս յայսմիկ, ակն կալեալ երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի[7]։ Ասաց ուրեմն և այլուր, վասն որոյ յարենէն Իսրայելի զխօսսն արարեալ[ը], եթէ՝ Նոցա են ուխտքն և օրէնսդրութիւնն և կտակարանքն, և ի նոցանէ ըստ մարմնոյ Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն Աստուած՝ օրհնեալ յաւիտեանս, ամէն[8]։

ա) դաս  բ) քարոզս, զոր ընդ արեգակամբ խորհրդածուա  գ) նախ քան զիս էր  դ) և զի վերջանայ  ե) Աստուած քան զնա այլ ոք ոչ է  զ) ունելով  է) քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ  ը) յաղագս յորոց յԻսրայէլէն. զանզի առնլով նոցա

1) Ղուկ. ԻԲ, 66—69. 2) Մատթ. Ժ, 20. 3) Յովհ. Ա, 30. 4) Յովհ. Ը, 58. 5) Ես. ԽԲ, 8. ԽԸ. 11. 6) Մկ. Ը, 38. Ղուկ. Թ, 26. Համմտ. Մատթ. ԺԶ, 27. 7) Տիտ. Բ, 11—13. 8) Հռոմ. Թ, 4—5.

Որովհետև այդ այդպէս է, ապա ի շաւիղս սրբոց հարց խոստովանութեան առանց խոտորելոյ գնացեալ՝[ա] գծընեալն ի յԱստուծոյ Հօրէ զՈրդին Միածին մարմնանալ և մարդանալ, չարչարել և մեռանել և յերրորդ աւուր յառնել ի մեռելոց. քանզի անչարչար է ընդ անգի իւրոյ բնութեանն[բ] Աստուած Բանն, և ոչ այնպէս ոք յիմարեսցի[գ], որպէս թէ համարեսցի չարչարանաց ընդունիչ լինել[դ] զայն, որ ի վեր քան զամենայն բն|ութիւնս է. այլ վասն զի եղև մարդ՝ իւր արարեալ միաւորեաց 'զմարմինն[ե], որ ի սրբոյ Կուսէն, այսու օրինակաւ[զ] մարմնով չարչարել մարդաբար ասեմք՝ զայն, որ ի վեր է քան զչարչարանս իբրև զԱստուած։ Զի թէ Աստուած էր և[է] եղև մարդ, չթողեալ ամենևին զլինելն[ը] Աստուած, և թէ եղև արարածոցս մասն, և եկաց մնաց ի վեր քան զարարածս. եթե օրինադիր էր իբրև զԱստուած, և եղև ընդ օրինօք, և տակաւին ևս օրինադիր է. և եթե Տէր է աստուածաբար, և ի կերպ ծառայի եղև, և անընկէց ունի զտէրութեանն պատիւ. և եթե Միածին էր, և եղև անդրանիկ ի բազում եղբարս, և տակաւին Միածին է, զի՞նչ զարմանալի է, թէ մարմնով չարչարեալ մարդապէս[թ]։
111v. Քանզի և ամէնիմաստն || Պաւղոս՝ Որ ի կերպարանս և ի հաւասարութեան Հօր էր Բանն, զնա հնազանդ լինել[ժ] մահու չափ և մահու խաչի[1]։ Դարձեալ և ի միւսումն ևս յաւելոյր թղթոյն վասն Նորին, ասէ. Որ է պատկեր աներևութին[ժա], անդրանիկ ամենայն արարածոց, զի ի նա հաստատեցաւ[ժբ] ամենայն, որ ի յերկին և յերկրի, և նա է յառաջ քան զամենեսին, և ամենայն ի նա բովանդակեցաւ[ժգ]. և զնա տալ ասէ՝ գլուխ եկեղեցւոյ լինել և պտուղ ննջեցելոց[ժդ] և անդրանիկ մեռելոց[2]։ Եւ կեանք և կենարար է որ յԱստուծոյ Հօրէ Բանն, քանզի և ի կե-

ա) Երգ, ընդ ճանապարհ հարցն խոստովանաբար գնալովինքն ասեմք  բ) խոստովանելի է, զի անչարչարելի է յիւրն բնութիւն  գ) և ոչ ոք է այնքան յիմար  դ) ընդունակ զալ  ե) արարեալ մարմին  զ) այսուիկ անօրէնութեանն հեռանել բանի  է) Աստուած գոլով  ը) ոչ եկաց ի բաց ի գոլոյն  թ) մարդկօրէն, իմանի և այսպէս անչարչարելի աստուածաբար։  ժ) զնոյնինքն հնազանդ լինել ասէ  ժա) Աստուծոյ աներևութի  ժբ) զի նովաւ արար  ժգ) չ և նա է—բովանդակեցաւ  ժդ) առաջին պտուղ ննջեցելոցն

¹ Փիլիպ. Բ, 6 և 8.  ²) Կող. Ա, 15—18.



նաց ծ(ն)եալ ի ծնօղէն իւրմէ։ Զիա՞րդ արդեօք եղև անդրանիկ մեռելոց և պտուղ ննջեցելոց[ա]. այլ վասն զի ընդունիչ մահու մարմինսն ինքեան իւրացոյց՝[բ] շնորհօք Աստուծոյ, որպէս և ասէ ամէնի|մաստն Պաւղոս. Վասն ամենեցուն զմահ ճաշակեաց՝[1] մարմնով, որով հնար է չարչարել, ոչ ի բաց եղեալ զգոլն կեանս։ Ուրեմն, եթե և ասիցէ մարմնով չարչարել՝ ոչ միայն աստուածութեանն բնութեամբն ընդունիցի զչարչարելն[գ], այլ որպէս ասացի այժմ, զի իւրով մարմնով ընկալաւ զչարչարանսն[դ]։ Քանզի և երանելին Եսայի մարգարէ, մարդացեալ զԱստուած մարմնով չարչարել գիտացեալ՝ ասաց ուրեմն վասն Նորա. Իբրև զորոջ առաջի կտրչի անբարբառ՝[ե] այսպէս ոչ բանա զբերան իւր. ի խոնարհութեանն դատաստան Նորա բարձաւ, և զազգատոհմն Նորա ո՞վ պատմեսցէ. զի բարձեալ են[զ] յերկրէ կեանք Նորա[2]։ Եւ զի թէ էր մարդ ոք[է], որպէս և ասեն պիղծ վարդապետութեանն պատմիչք, և որ առանձին իմացեալ Որդի յարեաւ Աստուած ոք[ը], զիա՞րդ արդեօք դժուարագիւտ || էր, որ զազգն Նորա կարէր պատմել. 84r.
քանզի եղև ի զաւակէն Յեսսեայ և Դաւթի։ Իսկ զԱստուծոյն Բանի ծնունդն, և կամ զծննդեանն օրինակ՝[թ] ո՞ կարիցէ ասել. քանզի բարձեալ են յերկրէ կեանք Նորա, այսինքն է՝ գոյութիւնն. եդ աստ փոխանակ գոյութեանն զկեանսն. քանզի ի բարձու ուրեմն շրջի և վերամբարձ ղուզի՝ քան զամենայն երկրաւորս անիմաց և անմատոյց ամենևին մարդկան մտաց, որ վասն անճառութեանն բան[ժ]։ Յաւելից յասացելոյս ևս. Մի Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն[3], որպէս և ասէ սքանչելին Պաւղոս. արդ, միոյ Տեառն գոլոյ, միոյ հաւատոյ և միոյ մկրտութեան՝ ո՞վ է Տէրն և յո՞վ հաւատացաք և մկրտեցաք. այլ թերևս պատշաճական համարել ասիցէ ոք|արդեօք, եթե Բանն, որ յԱստուծոյ Հօրէ. զտէրութիւնն և զհաւատն Նորա առ ի

ա) չ. և անդրանիկ—ննջեցելոց  բ) մահուն ընդունական իւր մարմին  գ) ոչ բնութեամբ աստուածութեանն ընկալցի զչարչարանս  դ) այժմ, մարմնով՝ չարչարանաց ընդունակաւն  ե) Որպէս ոչխար ի սպանումն ածաւ և որպէս որոջ առաջի կտրչի իւրոյ. անմռունչ կայ  զ) բառնան  է) մարդ, և առանձին իմացեալ որդի ընդ Աստուծոյ գոլով  ը) չ և որ—ոք  թ) յեղանակ  ժ) ի վեր ընթանայ և բարձրանայ քան զոր յեկրիս, քանզի անիմանալի է. և ոչ անկանի ամենևիմբ ընդ մտածութեամբ, որ յաղագս անճառելոյն բնութեանն բան

¹) Եբր. Բ, 9.  ²) Ես. ԾԳ, 7—8.  ³) Եփես. Դ, 5.

մինչ՝ զնոյն կատարել և զփրկչական մկրտութիւնն[ա], Քանզի այսպէս ուսեալ, սրբոց առաքելոցն ասելով պատուիրեաց. Աշակերտեցէք զամենայն ազգս, մկրտելով զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ[1]։ Այլ սքանչելին Պաւղոս զտէրութեանն զփառսն և զհաւատոց մերոց խոստովանութիւն, և զսրբոյ մկրտութեանն զզօրութիւն յայտ յանդիմանակաց ցուցանէ՝[բ] ասելով. Մի ասիցես ի սրտի քում՝ ո՞վ ելցէ յերկինս, այսինքն է՝ զՔրիստոս իջուցանել, կամ իջցէ ի խորս, այսինքն՝ զՔրիստոս հանել ի մեռելոց. այլ զի՞նչ ասէ Գիր. մօտ է ի ի քեզ բանն՝ ի բերան քում և ի սրտի քում. զի թէ ասիցես Տէր զՅիսուս, և ‖ 84v. հաւատայցես ի սրտի քում, թէ Աստուած յարոյց զնա ի մեռելոց՝ կեցցես[2]։ Գրէ դարձեալ. Ո՞չ գիտէք, եթէ որ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ նորա մկրտեցաք[3]. ահաւասիկ յայտնապէս պատուցանէ ճշմարտաբար զտէրութեանըն[գ] և զհաւատոց մերոց խոստովանութիւն, և զնոյն ինքն սրբոյ մկրտութեանն շնորհս, և չարչարելն մահուամբ, և յարուցեալն[դ] ի մեռելոց։ Արդ, արդեօք յերկո՞ւս որդիս հաւատասցուք. արդեօք զանց արարեալ զառ ի յԱստուծոյ Հօրէ ճառագայթեալ Բանիւն՝ իբրև Որդւոյ, թող զնա, միւսումն չարչարելումն յարեսցուք[ե] զտէրութեանն զփառսն, և զնոյն ինքն խոստովանութիւն հաւատոցն և զերկնաւոր մկրտութիւնն. և զիա՞րդ ոչ իցէ անմտութիւն, և յիմարութեան, մանաւանդ եթէ առանց յերկուանալոյ մեծի ամբարշտութեան՝[զ] այսպէս ասել կամ խորհել։ Արդ, զի՞նչ ասասցուք. մի Տէր ճշմարտութեամբ, մի հաւատ, մի մկրտութիւն. քանզի մի իսկ է Տէր և Որդի. ոչ զմարդ ըստ յարելոյ յինքն առ Բանն[է] և հաղորդ զնա երևեցոյց պատուոյն, և ետ նա յորդիութենէն և ի տէրութենէն իւրմէ, որպէս ասացին և գրեցին ոմանք՝ զառանցեալ բարբանջանօք. այլ նոյն իսկ[ը] մարդացեալ և մարմնացեալ որ յԱստուծոյ Հօրէ Բանն՝ լոյսն ի լուսոյ, ի նորա մահն մկրտեցաք. չարչարեալ նորա մարդկաբար իւրով

ա) ի նա կատարեալ և զփրկականն մկրտութիւն. բ) յայտնի կացուցանէ գ) Ահա հաւաստեաւ ընթացուցանէ բարիոք արուեստաւորապէս զտէրութեանն դ) ի կրեալն զմահ և ի յարուցեալն ե) որպէս այլ որդւոյ քան զնա չարչարեցելոյ հպեցուսցուք զ) յաւէտ զի եւ անհերքելի ամբարշտութիւն է) ոչ մարդ ըստ յարակցութեան առեալ Բանին ը) այլ ինքն

1) Մատթ. ԻԸ, 19. 2) Հռոմ. Ժ, 6–9. 3) Հռոմ. Զ, 3.



մարմնով, և մնացեալ անչարչար աստուածաբար, և միշտ կենդանի. քանզի կեանք է ի կենաց՝ յԱստուծոյ և ի Հօրէ։ Այսպէս յաղթահարեացի մահն իշխանացեալ, վազեալ ի վերայ[ա] մարմնոյ ‖ 91r. կենաց. այսպէս և ի մեզ խափանի ապականութիւն և նորուն իսկ մահուան զաւրութիւն տկարանայ. քանզի և ասաց իսկ Քրիստոս. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ Մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձին. ապա ուրեմն կենարար է սուրբ մարմին և արիւնն Քրիստոսի. քանզի մարմին է, որպէս ասացին, ոչ մարդոյ ուրուք՝ հաղորդական կենաց, այլ նորա մանաւանդ, որ ըստ բնութեանն կեանքն է[բ]։ Յայտ է, թէ յայս միտս հաստատեալ և զսոյն խոր(հ)ի ընդ մեզ քրիստոսասէր հարցն ժողով,[գ] և նոյն իսկ, որ այժմ զսրբոյ եկեղեցւոյ Կոստանդնուպօլսացոյ զաթոռն զարդարէ՝ սուրբ և աստուածապաշտ եղբայր մեր և եպիսկոպոսակից Պրոկղաս[դ]. քանզի գրեաց և|նա առ արևելեայ աստուածապաշտ եպիսկոպոսն սովին բանիւք[ե]. Այսպէս և մարմնոյ անշրջականութեամբն անտեսիլն[զ]. ծնանի ըստ մարմնոյ անսկզբնականն, զարգանա ըստ մարմնական հասակի[է] բնութեամբ ամենակատարն, և չարչարանաց համբերէ վերագոյնն քան զչարչարանսն. ոչ որով էրն համբերեաց թշնամանաց, այլ որով եղեն յանձն էառ զմարմնոյ թշնամանս[ը]։ Յանդիմանեալ կշտամբի այսուհետև և չարահաւատութիւնն այնոցիկ, որք աւելի ինչ քան զայս խորհեցանն և գրեցին ամենայն ուրեք՝ ախտացեալք զպիղծ և զանհաճոյ վարդապետութեանն[թ]։

Յանդ հանել այսուհետև զբանն, որ վասն Քրիստոսի՝ երանելեացն հարցն, յիշել և զՀոգւոյն Սրբոյ[ժ]. քանզի հաւա‖ 91v. տալ ասացին ի նա, որպէս և պարտ է ի Հայր[ժա] և յՈրդի. վասն զի միաւնական իսկ է նոցին, և զեղու կամ ելանէ[ժբ], իբրև յաղբիւրէ՝ յԱստուծոյ և ի Հօրէ, բաշխի արարածոց ի ձեռն Որդւոյ. քանզի և փչեաց ի սուրբ

ա) ի վերայ յարձակեալ յանդգնեալ բ) հաղորդի կենացն, յայտ է զի Միածնին։ գ) աստուածասէրն դաս սրբոցն հարց դ) Պրոկղոս ե) եպիսկոպոսունսն այսոքիւք բանիւք զայս ինչ զ) եւ մարմնանայ անփոփոխապէս անտեսակն է) աճէ մարմնոյ հասակաւ ը) կիրս թ) ախտացեալ զպղծութիւն եւ զճշմարտութենէն զօտար աւանդութիւնս ժ) երեքերանեան հարքն մեր զսուրբ Հոգին յիշեն ժա) որպէս միշտ ի Հայր ժբ) յառաջ հեղու եւ արտաքս ելանէ

առաքելոյն՝ ասելով. Առէք զՀոգին Սուրբ[1]։ Ապա ուրեմն յԱստուծոյ և Աստուած է Հոգին Սուրբ, և ոչ օտար ի գոյութենէն, որ է վերագոյն քան զամենեսեան,[ա] այլ ի նմանէն և ի նոյնն և նորին իսկ գոյութեան։

Այս է սրբոց հարցն ուղղալորով և անմոլար հաւատք և հաւատոց խոստովանութիւն։ Այլ որպէս Պաւղոսն ասաց. Աստուած յաւիտենից այսորիկ կուրացոյց զմիտս անհաւատիցն՝ առ ի չծագել[ա] լուսաւորութիւն աւետարանին փառաց Քրիստոսի[2], թողեալ ոմանց զուղիղ ճանա|պարհն ճշմարտութեանն ընթանալ՝ ընդ առապարսն ընթանան, չիմանալով ամենևին՝ զի՛նչ ասեն, կամ վասն որոյ վիճին. քանզի զատուցեալ[բ] զորդութեան փառս միայն ի ծնեալ Բանն յԱստուծոյ Հօրէ[գ], իբրև միւս ևս Որդի զայն, որ ի զաւակէն Յեսսեայ և Դաւթի՝ յարեալ ասեն ի նմա և հաղորդել որդութեանն և պատուին աստուածականի և բնակելոյն ի նմա Աստուծոյն Բանի[դ], և մանաւանդ զամենայն ինչ ունել առ ի նմանէ, և յիւրմէ ինչ ոչ ամենևին։ Վասն այսպիսեացս, որպէս կարծեմ ես, գրեցին Փրկչին աշակերտքն եթէ Սպրդեցին մտին ոմանք ի մարդկանէ, որք և յառաջագոյն գրեալ էին[ե] յայս դատաստան, ամբարիշտք՝ զշնորհսն Աստուծոյ փոխելով ի պղծութիւն[զ] և զմի Տէրն մեր զՅիսուս Քրիստոս ուրացեալք[3]։ Յիսուս Քրիստոս անուա-
112r. նեսցի՞ արդեւք մարդկեղէն ‖ կերպարանօք երևեալ Բանն. ապա թէ ո՛չ՝ յայտնի արասցեն այնուհետև հարցանելեացն հակառակորդք[է], որ զնեստորին և զԹէոդորիտին[ը] խորհել և խօսել ի յոյժ և ի բազում անմտութենէ չզանգիտեալք՝ մերժեցին ի լինելոյ Աստուած և Որդի ճշմարիտ Աստուծոյ և Հօր զայն, որ ի սրբոյ Կուսէն՝ զչարչարելն միայն նման մասնելով և հարթուցանել[թ] յԱստուծոյն Բանէ, զի մի՛ չարչարելի ասիցի[ժ]։ Այս գիւտք են նոցա ճշգրտականութեանն իմն[ժա] և մտացն խուզութեանն։ Թէ այդպէս է, մի՛ անուանեսցի Քրիստոս առանձինն և միայն

ա) զի մի՛ ծագեսցէ ի նոսա  բ) փոխեալ  գ) ի միայն Աստուծոյ Հօրէ ծնիցելոյն Բանէ  դ) եւ բնակութեան նորին Բանին  ե) նախագրեալք  զ) ի պղծութիւն  է) հարցողացս հակառակորդքն  ը) զնեստորին եւ զԹէոդորիտայն  թ) որք զչարչարելն նմա միայնոյ հեռացուցանէ  ժ) ասասցի Աստուած չարչարելի  ժա) ամբարշտութեանն

1) Յովհ. Ի, 22  2) Բ Կորն. Դ, 4.  3) Յուդայ 4.



որ ի յԱստուծոյ Հօրէ Բանն. քանզի որպէս անպատշաճ է նմա չարչարել, յորժամ արտաքոյ մարմնոյն իմանայցէ, նոյնպէս և օծումն ան|զաւդ իրք իմն[ա] և աւտար ի նմանէ. ԶՅիսուս որ ի Նազարեթէ, ասէ, աւծ Աստուած Հոգւովն Սրբով[1]. քանզի ամենայն իրօք ինքնակատար է Աստուած Բանն և ո՛չ արդեօք կարաւտացաւ աւծանելոյ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ։ Թէ այդպէս է, ապա ուրացարո՛ւք զտնտեսութիւնն[բ], մերժեցէք զՈրդի առ ի սիրոյ աշխարհիս. մի՛[գ] անուանեսցի Քրիստոս ի ձէնջ, կամ թէ չիցէ փոքր նմա ըստ մերոյս չափոյ լինել[դ]։ Ապա ուրեմն, քանզի և այս անպատշաճ է նմա, և խոստովանեսցի ոք՝ մի՛թէ եղև մարդ. զի և ցնոսա ասէ Քրիստոս. Մի՛ մոլորիք[ե], չգիտել զԳիրս և զզաւրութիւնն Աստուծոյ[2]։ Թէ այդպէս է, իբրև զԹշնամիս ճշմարտութեանն համարելով զայնոսիկ, որք այսպէս խորհել կամեցան, փախիցուք ի սատակիչ զրաբանութենէ նոցա[զ], և ման ‖ աւանդ 112v.
զհետ երթիցուք փառաց երանելի հարցն և աւանդութեանց սրբոց առաքելոցն և աւետարանչացն. քանզի նա իսկ էր, որ խօսէրն ընդ նոսա, որ մարդացաւ՝ Բանն[է], որով և ընդ որում Աստուծոյ և Հաւր պատիւ և փառք և զօրութիւն հանդերձ Հոգւովն Սրբով. յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Նորին Կիւրղի Երկոտասան Նզովից*։

### Առաջին Նզովք.

Եթէ ոք ո՛չ խոստովանեսցի, թէ Աստուած է ճշմարտութեամբ Էմմանուէլն[ը], և վասն այնորիկ Աստուածածին զսուրբ Կոյսն, որ ծնաւ[թ] ըստ մարմնոյ զմարմնացեալ Բանն Աստուած, նզովեսցի[ժ]։

### Մեկնութիւն.

Երանելի հարքն, որք[ժա] ժողովեցան ի քաղաքն Նիկիայ[ժբ] և զուղիղ և զանվրէպ հաւատոցն եդին զսահման,

* Գ. 6 p. 320v. Եւն. Այստեղ համեմատել ենք տպագրի հետ. Գիրք Պարապմանց ս. Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի. Կոստանդնուպոլիս, 1717 Թ. եր. 477.

ա) աննման է նմա  բ) զանուրջնութիւն  գ) Ե՛ր մի  դ) ո՛չ ապաքէն փոքր լինել նմա ըստ մարմնոյս չափուց  ե) անպատշաճ է նմա, ասասցէ Քրիստոս. Մոլորեալք  զ) ի նոցա կործանիչ ունայնաձայնութեանցն  է) մարդացեալն Բան  ը) ըստ ճշմարտութեան Էմմանուէլ  թ) Կոյսն ծնեալ  ժ) նզովեալ եղիցի  ժա) հարքն մեր, որք ի ժամանակս իւրեանց  ժբ) Նիկիացւոց

1) Գործք Ժ, 38.  2) Մատթ. ԻԲ, 29.

և ասացին|հաւատալ՝ Մի[ա] Աստուած, Հայր ամենակալ, ամենայն երևելեաց և աներևութից արարիչ, և մի[ա] Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին[բ] Աստուծոյ, և ի Սուրբ Հոգին. զայն[գ] ասէին, որ յԱստուծոյ Հօրէ Բանն երևեցաւ, որով ամենայնքն՝[դ] գլոյսն ի լուսոյ, զԱստուածն[ե] ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ մարմնանալ, մարդկանալ, մեռանել[զ] և յառնել, զի Աստուած էր[է] բնութեամբ։ Միածինն՝[ը] Բանն Հօր, ի զաւակէ[թ] Աբրահամու ընդունի մարմին, որպէս և[ժ] ասէն երանելին Պաւղոս. Եւ հաւասարեաց[ժա] մեզ արեան և մարմնոյ[1], ծնեալ[ժբ] ըստ մարմնոյ ի սուրբ Կուսէն, և մարդ երևեցաւ իբրև զմեզ և ոչ մերժեցաւ յաստուածութենէն իւրմէ, քա՛ւ լիցի, այլ է որ էրն[ժգ] և կայ և մնայ ի փառս և ի բնութեան[ժդ] աստուածու-
118r. թեան իւրում[ժե]։ Ա‖սեմք զնմանէ լեալ[ժզ], այլ[ժէ] ոչ այլայլումն ընկալեալ յայնմանէ, որ էրն, և ոչ փոփոխումն, զի միշտ է նոյն, և զայլելելոյ[ժը] ինչ վիշտս և ոչ[ժէ] ակնարկելով ընդունի, և ոչ խառնակութիւն և շփոթութիւն բնութեանն[ժթ] իւրոյ ասիցէ ոք ի մարմնանալն։ Ասեմք մարմին հոգեկան, բանական[ի] միանալ ի Բանն, ի վեր քան զմիտս՝ անճառութեամբ, որպէս ինքն միայն գիտէ։ Այսուհետև եկաց մնաց Աստուած[ժէ] և ի լինելն իւրում մարմին, և է մի Որդի Աստուծոյ Հաւր՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, նոյն և յառաջ քան զաւիտեանս[իա] և զժամանակս, որ իմանի ի սկզբան[իբ] ծագումն էութեան նորա և ի կատարած ժամանակաց մարդ վասն մեր։ Եւ վասն զի ուրանան ոմանք ի մարմնաւոր ծննդենէ նորա, որ[ժէ] ի սր|բոյ Կուսէն, որ եղև ի փրկութիւն ամենայնի, զոր ոչ ասեմք ի սկզբանն[իգ] աստուածութեան նորա, այլ զի զմեզ ազատեսցէ ի մահուանէ և յապականութենէ՝ ի լինելն իբրև զմեզ, վասն այսպիսի պատճառանաց[իդ] եդեալ է մեր զառաջին նզովսն, որ աղաղակէ վասն[ժէ] չարաչար հայհոյիչ հաւատոյ[իե] նոցա. իսկ որք ուղիղ[իզ] խոստովա-

ա ի մի   բ) Որդի   գ) զայս   դ) երևեցաւ Բանն, որով ամենայնն   ե) զԱստուած   զ) մարդանալ, մեռանել   է) է   ը) Միածին   թ) ի զաւակէն   ժ) որպէս   ժա) հաւասարեցաւ   ժբ) ծնաւ   ժգ) էն   ժդ) ի բնութիւն   ժե) իւրոյ   ժզ) մարդ լինել   ժէ) չ·   ժը) զայլայլելոյ   ժթ) բնութեան   ի) Այլ ասեմք մարմին հոգեւոր   իա) զյաւիտեանս   իբ) ի սկզբանէ և   իգ) սկիզբն   իդ) պատճառաց   իե) հաւատոց   իզ) ուղորդ

1) Եբր. Բ, 14 ?



նին՝ Աստուած ճշմարիտ ասեն զԷմմանուելն, վասն այնորիկ[ա] Աստուածածին զսուրբ Կոյսն։

Նզովք[բ].

Եթե ոք ոչ խոստովանեսցի բնութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ, և մի Քրիստոս խոստովանել՝ զմի և զնոյն[գ] Աստուած և մարդ, նզովեալ եղիցի։

Մեկնութիւն.

Գրէ երանելին Պաւղոս, որ աստուածային[դ] խորհրդոցն է պաշտօնեայ, և ասէ եթե՝ Խոստովանիմք զմեծ է[ե] խորհուրդն ‖ աստուածպաշտութեան, որ երևեցաւ մար- 118v.
մնով, արդարացաւ հոգւով, երևեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխարհի, ամբարձաւ[զ] փառօք[1]։ Արդ, զի՞նչ է, որ ասէն եթե՝[է] երևեցաւ մարմնով. այսինքն է, թէ եղև[ը] մարմին Բանն, որ յԱստուծոյ, ոչ փոփոխելով յիւրմէ բնութենէն, որպէս յառաջագոյն ասացաք, այլ միայցոյց իւր[թ] մարմին ի սուրբ Կուսէն, և մի և նոյն անուանի Որդի, յառաջ քան զմարդանալն անմարմին Բանն՝[ժ] յետ մարդկանալոյն նոյն[ժա] մարմնացեալ։ Զմանէ ասեմք, թէ նոյն է Աստուած Բանն՝[ժբ] միանգամայն և մարդ. ոչ[ժգ] բաժանեմք ուրոյն ի մարդ և ուրոյն որիշ զտեսակ զնորա[ժդ], և ուրոյն դարձեալ Աստուած Բան[ժե], զի մի երկուս որդիս ոք իմասցի, այլ մի և|նոյն ինքն[ժզ] է Քրիստոս Որդի և Տէր։ Իսկ որք ոչ[ժգ] այսպէս ասացին և ոչ այսպէս հաւատալ կամեցան, և բաժանեցին[ժէ] յերկուս որդիս զմինն[ժը] և զատուցանեցին[ժթ] ի միմեանց զմիացեալն ճշմարտութեամբ, և ասացեն, եթե[ի] միայն պատուով և յարգանօք մարդոյ եղև[իա] մերձաւորութիւն առ Աստուած, յուղիղ և յանբիծ հաւատոյն աւտարացեալ[իբ] ասեմք զնոսա։ Զի թէպէտ[իգ] առաքեալ անուանի, որ[իդ] կամ թէ օծեալ ասի և Որդի կոչի Աստուծոյ[իե], ոչինչ ամաչեմք ընդ տեսչութիւնն[իզ], զնոյն

ա) վասն այսորիկ   բ) Երկրորդ ճառ նզովից   գ) մի և նոյն   դ) աստուածութեան   ե) զի մեծ է   զ) և վերացաւ   է) զի՞նչ ասէ, թէ որ   ը) այսինքն եղև   թ) իւր միացոյց   ժ) Բան   ժա) մարդանալոյն   ժբ) չ·   ժգ) և ոչ   ժդ) զտեսիլ նորա   ժե) յԱստուած Բանն   ժզ) ոչն   ժէ) կամիցին և բաժանեսցեն   ժը) զմին   ժթ) զատուցանիցեն   ի) ասիցեն թէ   իա) եղև մարդոյ   իբ) հաւատոյն օտարացեալս   իգ) թէպէտ և   իդ) և   իե) Աստուծոյ կոչի   իզ) ըստ տեսչութեանն

1) Ա· Տիմ· Գ, 16.

ասեմք որ յԱստուծոյ Հօրէ Բանն, և իբրև եղև ընդ մեզ, յայնժամ[ա] անուանեցաւ առաքեալ[բ] և օծաւ ընդ մեզ մարդկութեամբ. զնոյն[գ], որ եղևն վասն մեր իբրև զմեզ՝ թէպէտ և[դ] եկաց մնաց յորում[ե] որ էրն, ոչ հրաժարէ[զ] ի մերմէն, 114r. ‖ առնու յանձն զմարդկութիւնն վասն տնտեսչութեան[է], և ոչինչ ամենևին վնասի ի բնութենէն իւր՝ փառացն[ը] իւրոց, այլ է և այնուիկ[թ] Աստուած և Տէր ամենայնի։

Նզովք[ժ].

Եթէ ոք զմի Քրիստոսն[ժա] բաժանեսցէ յերկուս երեսս յետ միանալոյն, և միայն մերձաւորութիւն և պատիւ և ճոխութիւն տացէ նմա, և ոչ միութիւն բնութեամբ, նզովեսցի[ժբ]։

Մեկնութիւն.

Զխորհուրդ միաւորութեանն[ժգ] տնտեսչութեան զՄիածնին[ժդ] զմտաւ ածցուք, զի փառօք անճառութեան միանալ[ժե] ասեմք ի սուրբ մարմնին ի հոգի[ժզ] բանաւոր, մտաւոր՝ զԲանն, որ յԱստուծոյ Հօրէ. և այսպէս մի որդի իմանամք. որպէս ի վերայ մեր իսկ է տեսանել. զի այլ բնութիւն է հոգին և այլ մարմինն[ժէ], սակայն յերկոցունց մի կենդանի բովանդակեալ է։|Այլ ոմանք ոչ իմանան զայս այսպէս, այլ մարդ ուրուք զատեալ մերձենալ ասեն ի Բանն Աստուած[ժը], միայն պատուով և ճոխութեամբ յարգեալ, և ոչ միութեամբ բնութեանն[ժթ], այսինքն ճշմարտութեամբ, որպէս և մեքն հաւատամք[ի]։ Այսպէս ասէ երբեմն և բանն Աստուածաշունչ Գրոյն եթէ՝ Էիք երբեմն բնութեամբ որդիք բարկութեան, որպէս և այլքն[1]. այլ զբնութեամբն ընդ ճշմարտութեամբ[իա] առ նուաստ։ Արդ, որք բաժանեն զբնութիւնսն յետ միանալոյն և ուրոյն զատուցանեն ի միմեանց, այսինքն

ա) ընդ մեզ մարդ, յայնժամն բ) և առաքեալ գ) ըստ մարդկութեանն, զի այն դ) զի թէպէտ ե) յիւրումն զ) հրաժարի է) զմարդկութեանն վասն տնտեսչութեանն ը) ի բնութենէ փառաց թ) այսուիկ ժ) Երրորդ ճառ նզովից ժա) Քրիստոս ժբ) Նզովեալ եղիցի ժգ) մարմնաւորութեանն ժդ) Միածնին ժե) մի ժզ) մարմնի հոգի ժէ) բնութիւնք են հոգիքն և այլ մարմինքն ժը) որ յԱստուծոյ ժթ) բնութեան ի) այսինքն որպէս մեք հաւատամք ճշմարտութեամբ իա) ընդ ճոխութեանն

1) Համա. Եփ. Բ, 3.



մարդ և Աստուած, և իմանան միայն մերձաւորութիւն և ի միմեանս[ա] և պատիւ, ապաքէն յայտնի երկուս որդիս կամին ցուցանել. այլ Աստուածաշունչ Գիրք մի որդի և Տէր ցուցանեն. զի յետ անճառ միութեանն թէ[բ] Աստուած անուա‖նեսցեն զէմմանուէլն՝ զմարդկացեալն և զմարմնացեալն[գ], իմանամք որ[դ] յԱստուծոյ Հօրէ Բանն[ե], 114v. և եթէ մարդ ասացաւ[զ], ոչինչ ընդհատ իմանամք յայնմանէ, որ ի մարդկութեան կարգսն խոնարհեցոյց զինքն տնտեսչութեամբն։ Ասեմք դարձեալ շաւշափելի[է] զանշաւշափելին և[ը] երևելի զաներևելին[թ], և ոչ ուրոյն ի նմանէ զմիացեալ մինն[ժ] նորա, զոր և շաւշափելի ասեմք և տեսանելի։ Իսկ որք ոչն[ժա] այսպէս հաւատան, որպէս ասացին, և յերկուս[ժբ] բաժանեն յետ միանալոյն, և լոկ մերձաւորութիւն իմանան, միայն պատուոյ և ճոխութեան՝ աւտարացեալք յայնց[ժգ], որք ուղիղ[ժդ] իմանան, և ընդ նզովիւք են[ժե]։

Նզովք *.

Եթէ ոք յերկուս դէմս և յերկուս զաւր|ութիւնս բաժանեսցէ զբանն Գրոց՝ աւետարանչաց[ժզ] և առաքելոց, և որ[ժէ] վասն Քրիստոսի ի սրբոցն ասացեալ իցէ[ժը], և կամ իւր վասն իւր, և զոմանս մարդոյ առանձինն իմասցէ[ժթ] և զոմանս Բանին, որ յԱստուծոյ Հօրէ, նզովեալ[ի]։

Կերպարան և հաւասար Աստուծոյ Հաւր է Բանն, որ ի նմանէն, և ոչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն[իա] հաւասար Աստուծոյ, որպէս և գրեալ է, այլ իջոյց զանձն իւր՝[1] կամաւք իւրովք, և եղև[իբ] իբրև զմեզ. ոչ փոխեցաւ յայնմանէ, որ էրն, այլ եկաց մնաց այնպէս, որ էրն՝ Աստուած[իգ], և զմարդկութեան կարգս[իդ] ոչ արհամարհեաց։ Արդ, ամենայն նորա է՝ և աստուածաբարքն և մարդկաբարքն, և ո՞ւր գտանիցի ունայնացուցեալ զանձն իւր, եթէ

* Չորրորդ ճառ նզովից.

ա) մերձաւորութիւն միայն ի միմեանս բ) միաւորութեանն եթէ գ) անուանեսցեն զէմմանուէլն, զմարմնացեալն և զմարդացեալն դ) մեք որ ե) Բանն է զ) ասիցես է) լինել շօշափելի ը) չ. թ) զաներևոյթն ժ) մարմին ժա) ոչ ժբ) ասացի յերկուս դէմս ժգ) են յայնցանէ ժդ) ուղիղն ժե) և են ընդ նզովիւք ժզ) և աւետարանչաց ժէ) առաքելոցն, և կամ զոր ժը) է ժթ) առանձին իմանայցէ ի) Նզովեալ եղիցի իա) լինել իբ) զանձն իւր յունայնութիւն և եղև կամաւ իւրով իգ) մնաց նոյնպէս Աստուած իդ) կարգսն

1) Համա. Փիլիպ. Բ, 6—8.

140r. ի մարդութեան կարգացն պատկառեսցէ. ‖ զի թէ հրաժարէր արդեաւք[ա] ի մարդկութենէն, ձիլ էր այն, որ ի հարկէ ակամա[բ] իջուցանէր զնայ ի մեր նմանութիւնս, ի լինելն իբրև զմեզ։ Այսուհետև և[գ] զամենայն բարբառ[դ], աւետարանչացն՝ զմարդաբարսն և զաստուածաբարսն[ե], միում երեսաց համարեսցուք. վասն զի մի իսկ[զ] խոստովանիմք զՅիսուս Քրիստոս, այսինքն զմարդացեալ և զմարմնացեալ Բանն Աստուած[է]. որպէս զի, թէ[ը] ասիցէ ոք զմարդկութեանն ըստ մարդանալոյն կարգաց՝ նմին իմանամք, և յորժամ ըստ աստուածութեանն կարգաց ասիցեն[թ], նմին մարդացելոյն գիտեմք. թէպէտ իբրև զԱստուած ասիցէ, Աստուած խոստովանիմք զմարդացեալն, դարձեալ միում Քրիստոսի և Որդւոյ՝ ի վեր քան զտկարութիւն բնութեան, համարիմք զբարբառսն։ Իսկ որք յերկուս երեսս[ժ] բաժանի|են, ապաքէն երկուս որդիս իմանան. որպէս ի վերայ մերո[ժա] մարդկութեանս ոչ յերկուս երեսս բաժանել մարթասցէ[ժբ], թէպէտ և հոգոյն և մարմնոյն[ժգ] իմանալի է, այլ մի և նոյն մարդ է, այսպէս և ի վերայ Եմմանուէլին[ժդ]. վասն զի մի է Որդի և Տէր[ժե], որ մարմնացաւ և մարդացաւ՝ Բանն Աստուած[ժզ]։ Ապաքէն մի երես պարտիմք խոստովանիլ և միում համարել զմարդկաւրէնսն, վասն Բանին[ժէ], որ յԱստուծոյ Հաւրէ, որ[դ] անճառութեամբն[ժը] է ծնեալ։ Արդ, որք որոշեն[ժթ] և զատանեն մարդ առանձին և[ի] ուրոյն Որդի՝ արտաքս քան զԲանն Աստուծոյ[իա], և զաստուածութիւնն դարձեալ ուրոյն Որդի, և[գ] երկուս որդիս կամին ցուցանել, և զսոյն ցուցանէ դարձեալ ճառ նզովից, որ առաջի այս[իբ]։

140v. (Ն)Թէ ոք իշխեսցէ ասել աստուածազգ ‖ եաց[իգ] մարդ զՔրիստոս[իդ], և ոչ Աստուած[գ] ճշմարիտ և մի որդի ըն-

ա) հրաժարիր արդեօք  բ) և ակամայ  գ) չ.  դ) բարբառս  ե) զմարդկաբարսն և զաստուածաբարսն  զ) իսկ Որդի է։ մարդացեալ մարմնացեալ զԲանն Աստուծոյ  ը) Որպէս թէ  թ) ասիցէ  ժ) երեսս  ժա) մերոյ  ժբ) մարթէ  ժգ) թէպէտ ի հոգւոյ և ի մարմնոյ  ժդ) Էմմանուէլի  ժե) մի Որդի և տէր է  ժզ) Աստուծոյ.  ժէ) զմարդկօրէնսն վասն տեսչութեան մարմնանալոյն և զաստուածաբարսն վասն Բանին  ժը) անճառութեամբ.  ժթ) Այլք՝ որք որոշենն  ի) առանձինն  իա) որ յԱստուծոյ  իբ) ի ճառն նզովից, որ կայ առաջի։ Հինգերորդ ճառ նզովից։  իգ) աստուածազգեաց  իդ) Քրիստոսի



նութեամբ, որ եղև Բանն մարմին և հաւասարեաց[ա] մեզ արեան և մարմնոյ, նզովեալ եղիցի։

Մարմին լինել ասէ երանելի աւետարանիչն Յովհաննէս զԲանն, որ յԱստուծոյ[1], ոչ փոփոխումն և ոչ այլայլումն ընդունել[բ] ի բնութենէ իւրմէ ի մարմնոյ բնութիւնն, որպէս[գ] յառաջագոյն ասացաք. զի ունի յինքեան զանխախտութիւն[դ] բնութեանն իբրև[ե] զԱստուած. այլ զի հաւասարեաց[զ] մեզ արեան և մարմնոյ լինելն[է] մարդ, և զի սովորութիւն է Աստուածաշունչ Գրոց՝ մարմին զմարդ անուանել, գրեալ է. Զի[ը] տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ[2][թ]։ Այլ պիղծ և անաւրէն կրաւնից[ժ] դասակք՝ Նեստորիոս և որք իբրև զնոյն իմանան, կեղծաւորին խոստովանել զմարմնանալոյն բարբառ[ժա]. ոչ ճշմարտութեամբ մար|մնացաւ, ասեն, Բանն, որ յԱստուծոյ, այսինքն մարդ լինել իբրև զմեզ և կալեալ որ էրն[ժբ]. այլ իբրև զմի ի սրբոցն, ասեն, որ ի սրբոյ Կուսէն ծնօ[ժգ], և պնդեալ և յամառեալ են, թէ ընակեցաւ ի նմա Միածին Բանն Աստուծոյ. զի մի՛ ևս միում Քրիստոսի և Որդւոյ և Տեառն երկիրպագցեն, այլ իբրև մարդ լոկ ուրոյն իմացեալս՝ միայն միաձաւորութեամբ և պատուով ասեն միացեալ, որ երկիրպագակից[ժդ] է նորա և փառաւորակից։ Բնաւորէ[ժե] ի մեզ Աստուածն ամենայնի Հոգւով իւրով[ժզ], զոր և[ժէ] յառաջագոյն ասէր մի ոմն[ժը] ի սրբոց մարգարէիցն թէ՝ Բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա, և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդ[3]։ Գրէ դարձեալ երանելին Պաւղոս. Ո՞չ գիտէք, ասէ[ժէ], եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի[ժթ] Աստուծոյ բնակեալ է ի ձեզ[4]։ Ասէ դարձեալ և[ժէ] ինքն Քրիստոս (վասն) ‖ 141r. սրբոց[ի] իւրոց մարգարէիցն[իա] և կամ յառաջագոյն եղելոց սրբոց. Զի թէ զնոսա աստուածս ասէ, առ որ զբանն[իբ] Աստուծոյ եղև. իսկ զոր Հայր

ա) հաւասարեալ  բ) և այլայլութիւն ընդունիլ  գ) բնութիւն, որպէս և  դ) զանախտութիւն  ե) որպէս  զ) հաւասարեսցի  է) ի լինելն  ը) զմարդն անուանել. զի գրեալ է թէ  թ) Աստուծոյ մերոյ.  ժ) կրօնիցն  ժա) բարբառս  ժբ) չ. այսինքն—որ էրն  ժգ) զոր ի Կուսէն սրբոյ ծնաւ  ժդ) երկիրպագակիցն  ժե) Բնակի  ժզ) Հոգւովն Սրբով  ժէ) չ.  ժը) միով  ժթ) հոգին  ի) վասն սրբոցն  իա) մարգարէից  իբ) առ որս բանն

1) Յովհ. Ա, 14.  2) Ղուկ. Գ, 6. Ես. Խ, 5.  3) Բ. Կորնթ. Զ, 16. Ղեւ. ԻԶ, 12.  4) Ա, Կորնթ. Գ, 16.

որբեաց և առաքեաց[ա], դուք ասէք, թէ հայհոյես, զի ասացի թէ Որդի Աստուծոյ եմ[1]։ Այլ ոչ որպէս և ի մեզ բնակէ[բ] Աստուած, այսպէս և Քրիստոս. զի նայ Աստուած է բնութեամբ, և երևեցաւ իբրև զմեզ, մի և նոյն Որդի է և իբրև եղեւ[գ] մարմին։ Արդ, որք յանդգնին ասել զնայ մարդ աստուածազգեաց, և ոչ Աստուած մարդացեալ, ի հարկէ եղիցի ընդ նզովիւք[դ]։

Եթէ ոք ասիցէ Տէր Քրիստոսի զԲանն, որ յԱստուծոյ Հաւրէ, և ոչ զնոյն Տէր խոստովանեսցի Աստուած միանգամայն և մարդ՝ զԲանն մարմնացեալ[ե], ըստ Գրոց, եղիցի՛ նզովեալ[զ]։

Տէր մեր Յիսուս Քրիստոս մի և նոյն ճշմարտութեամբ Որդի է Աստուծոյ և Հաւր՝ (Բանն) որ եղև մարմին, տիրէ[է] ամենայնի|ընդ Ծնաւղին իւրում, և նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորացն և երկրաւորացս[ը] և սանդարամետականաց, և խոստովանէ[թ] ամենայն լեզու, թէ Տէր է Յիսուս Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ Հաւր[2]։ Արդ է ինքն Տէր ամենայնի, որ ի մարմին[ժ], և է Աստուած անմարմին յառաջ քան զմարդանալն, այլ ինքն իւր ոչ[ժա] Աստուած և ոչ Տէր. անարժանութեամբ և անկարգութեամբ և ամբարշտութեամբ լի են իմաստք այնոցիկ, որ զայս[ժբ] խորհին և այսպէս ասեն. ի հարկէ ի վերայ նոցա գայ[ժգ] առաջի եդեալ նզով[ժդ]։

Եթէ ասիցէ ոք[ժե] մարդ զաւրացեալ յԱստուծոյ Բանէն զՅիսուս, և Միածնին[ժզ] փառաւորութիւն մերձեցեալ, որ արտաքս քան զնա իցէ, նզով լիցի[ժէ]։

Զի յորժամ զմարմնաւոր ծնունդն[ժը] Միածնի Որդւոյն **141v.** Աստուծոյ աւետարանէր սրբո Կուսին երանել‖ին Գաբրիէլ. Ծնցի, ասէ, և կոչեսցի[ժթ] զանուն նորա Յիսուս, և նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց[ի][3]։ Անուանի և Քրիստոս վասն աւծելոյն[իա] ընդ մեզ մարդ-

ա) առաքեաց յաշխարհ  բ) բնակի  գ) եղև  դ) ի հարկէ գրաւին ընդ նզովիւք առաջի եդելովքն։ Վեցերորդ ճառ նզովից։  ե) որ մարմնացեալ  զ) նզովեալ եղիցի  է) և տիրէ  ը) երկնաւորաց և երկրաւորաց  թ) խոստովան լինի  ժ) որ իմանին  ժա) ոչ է  ժբ) որք զայն  ժգ) գան ի վերայ նոցա  ժդ) նզովք։ Եօթներորդ ճառ նզովից։  ժե) ոք ասիցէ  ժզ) ի Միածնին  ժէ) նզովեալ եղիցի։  ժը) ծնունդ  ժթ) կոչեսցես  ի) նոցա  իա) օծանելոյն

¹) Յովհ. Ժ, 35—36.  ²) Համա. Փիլիպ. Բ, 10—11.  ³) Ղուկ. Ա 31.



կաբար, ըստ բարբառոյ երգչին, որ ասէ. Սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանաւրէնութիւն. վասն այսորիկ աւծ[ա] զքեզ Աստուած՝ Աստուած քո, իւղով ուրախութեամբ[բ] առաւել քան զընկերս քո[1]։ Եւ Յակայննայ բաշխաւղ[գ] Հոգոյն Սրբոյ, և ոչ չափով[դ] տայր արժանաւորաց իւրոց[2]. զի լրումն ինքն է[ե] և՝ Ի լրութենէ նորա մեք ամենեքեան[զ] ընկալաք[3], որպէս և գրեալ է։ Տեսչութեամբ մարդկութեանն աւծանել[է] ասի իբր[ը] զմարդ, և թռուցեալ իջանէ ի վերայ[թ] Հոգոյն Սրբոյ, զի[ժ] ըստ նմին աւրինակի և ի մեզ հանգիցէ, որ վասն յանցանացն Ադամայ ի սկզբանն հեռացաւ։ Արդ,|ինքն Միածինն[ժա] Բանն Աստուծոյ եղև մարմին և կոչեցաւ աւծեալ. որ անգն է Աստուածութեանն զաւրութիւն ունէր յինքեան և առնէր զարմանալիս և փառաւորեալս։ Արդ, որք ասեն[ժբ] վասն Քրիստոսի, թէ ի զաւրութիւն փառաւորութեանն[ժգ] Միածնին մերձեցաւ և ուրոյն զատուցանեն զՄիածինն ի Քրիստոսէ, այսինքն[ժդ] երկուս որդիս իմանան՝ զոմն զաւրացուցիչ և զոմն զաւրացեալ, իբրև զմարդ ոք մի[ժ] ի մէնջ, վասն այսր[ժե] լինին ընդ նզովիւք։

Եթե[ժզ] ոք իշխեսցէ ասել, եթե վերացեալ մարդն երկրպագակից է Աստուծոյ և փառաւորակից, որ[ժէ] յորջորջի Աստուած, իբրև այլայլում, և ոչ միով երկրպագութեամբ պատուեսցէ զԷմմանուէլն[ժը] և մի փառաւորութեամբ[ժթ] տացէ նմա, ըստ լինելոյ Բանին մարմին, նզ.. *

‖ Մեկնութիւնն.

**142r.**

Ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, և ի մի Որդի և ի մի Սուրբ Հոգին[ի] մկրտիմք։ Արդ, ասէ երանելին Պաւղոս. Ո՞չ գիտէք, եթէ որ[իա] ի Քրիստոս մկրտեցան, ի մահ[իբ] նորա մկրտեցաք. Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբ ի նորա մահն[իգ], զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառաւք Հօր, այսպէս[իդ] և մեք ի նորոգումն կե-

* Այստեղ վերջանում է ձեռագրի բուն նախնական մասը, և շարունակութիւնը յաջորդ երեսից նոր գրչով է։

ա) էօծ  բ) ուրախութեան  գ) եւ սակայն նա էր բաշխիչ  դ) չափով ինչ  ե) էր ինքն  զ) ամենեքին  է) օծանել  ը) իբրև  թ) իջանել ի վերայ նորա  ժ) չ.  ժա) Միածին  ժբ) ասեն  ժգ) փառաւորութեան  ժդ) այսպիսիքն  ժե) այսպիսի իրաց  ժզ) Ութերորդ ճառ նզովից։ Եթէ  ժէ) և  ժը) զԷմմանուէլ  ժթ) փառաւորութիւն  ի) Հոգին Սուրբ  իա) որք  իբ) մկրտեցաք, ի մահն  իգ) ի մահ անդր նորա  իդ) նոյնպէս

¹) Սաղմ. ԽԴ, 8.  ²) Համա. Յովհ. Գ, 34.  ³) Յովհ. Ա, 16. Համա. Եփ. Ա, 23.

նաց շրջեցուք[ա][1]։ Այսուհետև հաւատացաք և մկրտեցաք, որպէս ասացի[բ], ի մի յՈրդին՝ ի Տէր[գ] Յիսուս Քրիստոս, այսինքն՝ ի մարմնացեալ Բանն[դ], որ յԱստուծոյ. միում ճշմարտի[ե] Աստուծոյ ու|սաք երկիրպագանել, և ընդ մեզ վերին զաւրութիւնքն. զի գրեալ է[զ]. Յորժամ միւս անգամ մուծցէ զանդրանիկն[է] յաշխարհ, ասէ, երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ[2]։ Եղև անդրանիկ Միածինն, յորժամ մարդն[ը] երևեցաւ ըստ[թ] մեզ, յայնժամ և եղբայր յորջորջեցաւ սիրելեաց իւրոց[3]։ Այսուհետև եթէ ոք ասիցէ ուրոյն մարդ երկրպագակից, որպէս[ժ] այլ ոք, քան զԲանն, որ յԱստուծոյ Հօրէ, և ոչ միութեամբ ճշմարտութեանն մի Քրիստոս և Որդի և Տէր խոստովանիցէ[ժա], ի հարկէ լիցի[ժբ] ընդ նզովիւք։

## Իններորդ Նզովք[ժգ].

**142v.** ‖ Եթէ ոք զմի Տէր Յիսուս Քրիստոս, փառաւորեալըն[ժդ] յԱստուծոյ՝ ասիցէ իբրև յայլմէ զօրութենէ և յայլմէ ընդունել զօրութիւն կարողութեան ի վերայ այսոց պղծոց, և կատարել ի մարդիկ զնշանս աստուածագործս, և ոչ իւր իսկ[ժե] ասիցէ զՀոգին, որով առնէր[ժզ] զզօրութիւնս և զնշանս[ժէ] աստուածագործս, նզովեալ լիցի[ժը]։

## Մեկնութիւն.

Եղև մարդ Միածինն Աստուծոյ Բանն, էկաց մնաց և այնպէս Աստուած յէութեանն[ժթ] իւրում, որպէս և Հայր, բաց[ի] միայն ի հայրութենէն. և էր իւր[իա] բնութեամբ Հոգին, և առնէր նշանս աստուածագործս, և ի լինելն մարդ,|սակայն և այսպէս[իբ] Աստուած է ի զօրութեան իւրում, և իւրով զօրութեամբն[իգ] կատարէր զսքանչելիսն[իդ]։ Իսկ որք ասէնն[իե], եթե իբրև զմարդ մի է[ժե] ի մէնջ և կամ իբրև[ժե] զմի ի սրբոց[իզ] փառաւորեցաւ Հոգւովն զօրութեամբ[իէ], և ոչ իւր համարեցին, այլ որպէս[իը]

ա) շրջիցուք բ) և ասացին գ) Որդի ի Տէր մեր դ) և ի մարդացեալ Բանն ե) ճշմարտին զ) գրեալ է թէ է) զանդրանիկն իւր ը) մարդ թ) ընդ ժ) իբրև ժա) խոստովանեսցէ ժբ) լինիցի ժգ) ճառ նզովից ժդ) փառաւորեալ ժե) չ· ժզ) առնէ ժէ) նշանս ժը) եղիցի ժթ) յէութեան ի) բայց իա) իւր էր իբ) այնպէս և իգ) հոգւովն իդ) սքանչելիս իե) ասեն իզ) ի սրբոցն իէ) զօրութեամբ հոգւոյն իը) իբրև

1) Հռոմ. Զ, 3—4. 2) Եբր. Ա, 6. 3) Համա. Հռոմ. Ը, 29. Եբր. Բ, 17.



տար, և ոչ իբրև աստուածաբար վարել Հոգւովն իւրով, այլ իբրև ի շնորհաց կարգի ընդունել զՀոգին և զյերկինս[ա] վերանալն, այնպիսիքն ի հարկէ լինին ընդ նզովիւք։

## Տասներորդ Նզովք[բ].

Առաքեալ և քահանայապետ խոստովանութեան մե‖րոյ[1] լինել արեամբ զՔրիստոս[գ] Աստուածաշունչ Գիրք, և **143r.**
մատուցանել զանձն իւր վասն մեր հոտ անուշից Աստուծոյ Հօր[2]։ Արդ, եթե ոք առաքեալ և քահանայապետ խոստովանութեան մերոյ ասիցէ ոչ զայն, որ յԱստուծոյ Հօրէ Բանն, որ եղև[դ] մարմին և մարդ ընդ[ե] մեզ, այլ ուրոյն[զ] մարդ ի կնոջէ, և կամ թէ իւր վասն իւր մատուցեալ զինքն[է] պատարագ, և ոչ վասն մեր՝ այն, որ ոչն էր կարաւտ[ը] պատարագաց, որ[թ] ոչ գիտէր զմեղս, նզովեալ լիցի[ժ]։

## Մեկնութիւն.

Փոքունք և խոնարհագոյնք ասին ի վերայ բնութեանըն[ժա] Աստուծոյ Բանին|մարդկայինքն[ժբ]. սակայն ոչ մերժի յիւրմէ պատուոյն վասն տեսչութեանն, զի տէր է ամենայնի բնութեամբ, և իջոյց զանձն իւր ի մեր նմանութիւնս[ժգ], զկերպարանս ծառայի եառ և անուանեցաւ առաքեալ և քահանայապետ՝ ըստ մարդկութեան կարգացն, և յայսմիկ[ժդ] զմի և զնոյն Որդի անուանէ, և մատոյց զանձն իւր վասն մեր ի հոտ անուշից Աստուծոյ և Հօր, Միով պատարագովն[ժե] կատարեաց զսրբեալսն հանապազորդ[3], որպէս և գրեալ[ժզ] է։ Այլ ոչ գիտեմ, թե զիարդ այլ այլս[ժէ] իմացան, և ոչ զնոյն Բանն Աստուծոյ, որ եղև մարդ, և անուանեաց[ժը] առաքեալ ‖ և քահանայա- **143v**
պետ խոստովանութեան մերոյ, այլ ուրոյն[ժթ] մարդ առանձինն[ի] ի սրբոյ Կուսէն ծնեալ, և ասեն, եթե անուանեցաւ առաքեալ և քահանայապետ, և իբր[իա] յառաջա-

ա) յերկինս բ) ճառ նզովից գ) լինել ասեն զՔրիստոսէ դ) եղեն ե) ըստ զ) ուրոյն է) թէ ոք ասիցէ վասն իւր մատուցեալ ը) ոչ կարօտն էր թ) և ժ) եղիցի ժա) բնութեան ժբ) մարդկօրէնք ժգ) նմանութիւն ժդ) յայսոսիկ ժե) պատարագաւ ժզ) գրեալն ժէ) այլայլսն ժը) որ անուանեցաւ ժթ) ուրոյն ի նմանէ ի) առանձին իա) իբրև

1) Եբր. Գ, 1. 2) Եփ. Ե, 2. 3) Եբր Ժ, 14.

դիմութեամբ գոլ[ա] յայն, և ոչ վասն մեր, այլ վասն իւր մատոյց զանձն իւր պատարագ Աստուծոյ և Հօր. յուղիղ և յանբիծ հաւատոցս ամենևին ատարացեալք[բ] են. զի այն, որ ոչն արար մեղս և ի վեր է[գ] քան զզղջանալ[դ] և անմասն է ի մեղաց[ե], ոչ էր կարօտ ամենևին պատարագաց[զ]. և որպէս ասացի[է], երկուս որդիս իմանան այլայլիմացք, որք յայտնի արարին զամբարշտու|թիւն[ը] իւրեանց, և ի հարկէ եղեն ընդ նզովիւք։

**Մետասաներորդ նզովք[թ].**

Եթէ ոք ոչ խոստովանիցի[ժ] զմարմինն Տեառն կենդանարար և իւր Բանին Աստուծոյ, այլ իբրև այլոյ ուրուք արտաքս քան զնա, մերձեցելոյ ի նա պատուով[ժա], կամ իբրև բնակութեամբ[ժբ] աստուածութեանն, և կամ խնամով, և ոչ կենդանարար, որպէս ասացին, որ եղև իւր Բանին, որ զամենայն կարօղ[ժգ] կենդանի առնել, նզովեալ լիցի[ժդ]։

**Մեկնութիւն.**

Զսուրբ և զկենդանարար պատարագ[ժե] աւրհնութեան, զոր կատարեմք յեկեղեցիս՝ ոչ իբրև զմիոյ ի մէնջ
144r. զմար || մին լոկոյ մարդոյ հաւատամք զառաջի եղեալն, նոյնպէս և վասն պատուական արեանն, այլ խոստովանիմք իւր Բանին մարմին[ժզ], որ յԱստուծոյ. նոյնպէս և զարիւնն կենդանարար[ժէ] ամենայնի. զի լոկ մարմին կենդանութիւն տալ ոչ կարէ։ Այսմ[ժը] վկայէ Փրկիչն ամենեցուն[ժթ], որ ասէն եթէ՝[ի] Մարմին ինչ ոչ օգնէ, Հոգին է կենդանարար[1]։ Եւ վասն զի եղև իւր Բանին մարմին, այսու-իմանի և է կենդանարար[իա]. որպէս և ասէ[իբ] Փրկիչն թէ՝ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր[իգ], կենդանի եմ և[գ] ես վասն Հօր[իդ], և որ ուտէն[իե] զիս և նա կեց|ցէ վասն իմ[2]։ Եւ քանզի Նստոր[իզ] և որք

ա) գալ   բ) հաւատոցն ամենայնիւ օտարացեալ   գ) չ·   դ) զզղջանալն   ե) անմասն մեղացն   զ) պատարագաց ամենևին   է) ասացին   ը) զանպարշտութիւնս   թ) ճառ Նզովից   ժ) խոստովանեսցի   ժա) արտաքս մերձեցելոյ ի նա քան զնա պատուով   ժբ) բընակութեամբն   ժգ) կարօղ է   ժդ) եղիցի   ժե) պատարագն   ժզ) մարմին Բանին   ժէ) զկենդանարարն   ժը) Եւ այսմ   ժթ) ամենայնի   ի) ասէ թէ   իա) Եւ վասն զի—կենդանարար   իբ) դարձեալ   իգ) Հայրն կենդանի   իդ) Հօրն   իե) ուտէ   իզ) Նեստոր

1) Յովհ. Զ, 64.   2) Յովհ. Զ, 58.



իբրև զնայն[ա] իմանան եղծանել ջանան իւրեանց տխմարութեամբն զխորհուրդ զզօրութիւնն[բ], վասն այնր[գ] յիրաւի եղեն ընդ նզովիւք։

**Նզովք[դ].**

Եթէ ոք ոչ խոստովանեսցէ զԲանն, որ յԱստուծոյ, մեռանել[ե] մարմնով, և խաչել[զ] մարմնով և զմահ ճաշակել[է] մարմնով, որ եղև անդրանիկ ի մեռելոց[1][ը], որ կենդանի[թ] է և կենդանարար, նզովեալ լիցի[ժ]։

**Մեկնութիւն.**

Անվիշտ և անմահ է[ժա] Բանն յԱստուծոյ Հօրէ, և ի վեր է վշտանալոյ. անհաս և անճառ է[ժբ] բնութիւնն Աստուծոյ || և ի վեր է քան զապականութիւն, և կենդանի
առնէ զամենայն, և չէ ընդունիչ տրտմութեան. Թէպէտ[ժգ] 144v.
և այսպէս է բնութեամբ Բանն Աստուծոյ, իւրացոյց իւր մարմին ընդունիչ մահու[ժբ], որ վշտանալ սովոր է, և[ժդ] յաղագս մեր յանձն իւր ընկալաւ զվիշտսն, զի զամենեսեան զմեզ ազատեսցէ ի մահուանէ և յապականութենէ, և կենդանացուսցէ իբրև զԱստուած[ժե] իւրով մարմնովն։ Եւ եղև անդրանիկ ի մեռելոց[ժզ][1], զի ոչ[ժէ] մարդ լոկ ուրոյն և որիշ իմացեալ՝ արտաքոյ[ժը] քան զԲանն, որ յԱստուծոյ Հօրէ, որ վասն մեր համբեր[ժթ] պատուական խաչին և զմահ ճաշակեաց,|այլ ինքն Տէրն[ի] փառաց իւրով մարմնովն մեռաւ, ըստ Գրոց[2]։ Այլ որք զընդունայն[իա] և զհայհոյութեան կրաւնս[իբ] կամին ի սուրբ հաւատս[իգ] մուծանել, մարդ ուրոյն ասեն, որ վասն մեր խաչին[իդ]. յիրաւի և յարժանի եդան ի վերայ նոցա՝ ըստ մեծի ամբարշտութեանն[իե], մեծամեծ նզովք[իզ]։

ա) զայն   բ) զխորհրդոյն զօրութիւնն   գ) արոյ   դ) Երկոտասաներորդ ճառ Նզովից։   ե) չարչարեալ   զ) խաչեալ   է) ճաշակեալ   ը) եղև անդրանիկ մեռելոց   թ) կենդանին   ժ) եղիցի   ժա) էր   ժբ) չ·   ժգ) տրտմութեանց և թէպէտ   ժդ) վասն մեր և   ժե) Աստուած   ժզ) Եւ եղև պտուղ ննջեցելոց և անդրանիկ մեռելոց   ժէ) ոչ եթէ   ժը) արտաքս   ժթ) համբերեաց   ի) Տէր   իա) ընդունայն   իբ) կրօնեն   իգ) հաւատն   իդ) ըզհամբերելն խաչի   իե) անպարշտութեան նոցա   իզ) Նզովք վասն հայհոյութեան նոցա։

1) Կող. Ա, 18. Համա. Ա. Կորնթ. ԺԵ, 20.   2) Համա. Ա. Կորնթ. Բ, Ը.

*Նրանելոյն Սեւերիանոսի, սրբական եպիսկոպոսի Գաբաղինից՝ Նրբորդ ճառէն, որ ի Ջատիկն, ի բանէն՝ Նրբեմն յորժամ նախամեծար արարին շնորհքն Աստուծոյ*։*

Արդ[ա], նախ քան զամենայն ինչ զայն[բ] պարտ է
145r. գիտել, զի Միածին Բանն ‖ Աստուած՝ անչարչարելի էու-
թիւնն, անեղ և անփոփոխական զօրութիւնն[գ], առ իւր
զառեղծուածն[դ] և ընդ ինքեան զմարմինն միացոյց. ոչ
ինքն ի նուաստութիւն[ե] իջեալ, այլ զնուաղն[զ] յառաւե-
լութիւն խառնեալ[է]։ Եւ տես՝ զիարդ երկնաւորն[ը] փո-
փոխմունս ընդ մարդկութեանն[թ] գործէ. քանզի որ փո-
խանակեցէ ոք՝ տայ և առնու. առ մարմին ի մէնջ և ետ
մեզ զոգի[ժ] յիւրմէ. և որպէս դու, որոյ Աստուած և Տէր
գոյ, չիշխեիր զԱստուած Հայր կոչել, եթե չէր[ժա] զՀոգին
ի նմանէ առեալ, նոյնպէս և Որդի ոչ զՀայր Աստուած
իւր կոչէր, եթե չէր մարմին ի քէն առեալ։ Եւ քանզի
գիտէր կենարարն, եթե ոչ նոյնգունակ է Հայր նորա և
Հայր մեր, և ոչ ըստ նմին օրինակի Աստուած մեր, բա-
ժանէ զանուամբ մին՝[ժբ] Առ Հայրն իմ և առ Հայր ձեր.
է և այլազգ ձեր և այլազգ իմ[ժգ]. և՝ Առ Աստուած[ժդ] իմ և
առ Աստուած ձեր[1]. քանզի այլազգ ձեր Աստուած է և այլ-
ազգ իմ։ Վասն առ ի ձէնջ մարմնոյս[ժե] եղև իմ Հայր Աս-
տուած և վասն առ յինէն Հոգւոյն յաշխարհի եղև Հայր
աշխարհի[ժզ]. ոչ ինձ Որդւոյս[ժէ] կարէր Հայր Աստուած կոչիլ,
եթէ չէր[ժը] առեալ զմարմինս[ժթ], և ձեզ հնար ինչ չէր[ի]
145v. զԱստուած Հայր կոչել, եթե չէր առեալ զՀոգին։ ‖ Եւ վկայէ
Պաւղոս. Եւ[իա] զի էք դուք[իբ] որդիք, առաքեաց Աստուած
զՀոգի Որդւոյ իւրոյ ի ձեզ[իգ], որ աղաղակէ[իդ]. Աբբայ՝
Հայր[2]։ Ելանեմ առ Հայր[իե] իմ՝ ըստ բնութեանս[իզ], և առ
Հայր ձեր՝ ըստ շնորհաց. առ Աստուած ձեր՝ ըստ բնու-
թեանդ,[իէ] և առ[իա] Աստուած իմ՝ ըստ մարմնոյս։

* Ցես. ձեռ. Հ. 510. p. 275v. Եւն. Հմմտ. տպ. Վենետիկ, 1830. եր 99.

ա) Եւ արդ բ) չ. ինչ զայն գ) զօրութիւն դ) զիւր առեղծուածն ե) ի նուաղութիւն զ) զնորա նուաղութիւնն է) հանեալ ը) զերկնաւոր թ) ընդ մարդկութեան ժ) հոգի ժա) չէիր ժբ) զանուանեն ժգ) քանզի այլազգ իմ է, և այլ-ազգ ձեր ժդ) Աստուածն ժե) մարմնոյն ժզ) հոգւոյն՝ Աս-տուած և հայր աշխարհի եղև ժէ) որդւոյ ժը) չէր իմ ժթ) ըզ-մարմինն ի) և ոչ ձեր հնար ինչ էր իա) չ. իբ) առէ իգ) չ. իւրոյ ի ձեզ իդ) աղաղակէ ի սիրտս ձեր իե) ես առ հայրն իզ) ըստ բնութեան իէ) ըստ բնութեանս

1) Յովհ. Ի, 17. Գաղ. Դ, 6.



## ԲԱՆ ԵՐՐՈՐԴ.

**Եթե պարտ է անապական խոստովանել զմարմինն Քրիստոսի՝ անդստին յարգանդէ կուսա-կան Աստուածածնին Մարիամայ։**

*Նրանելոյն Նրինոսի՝ Հետեւողի առաքելոց, եպիսկոպոսի Ղոգզոնի Գալիլէացւոց*։*

Ուրեմն և մի բնութիւն[ա] Աստուծոյ և մարդոյ գոր-ծեաց, մեր ոչ կարացելոցս[բ] այլօրինակաբար ինձ[գ] կցոր-դութիւն ընդունելութեան զանապականութեան[դ], եթե նորա եկեալ էր[ե] առ մեզ։ Քանզի անտեսանելի և անե-րևոյթ ելով՝ ոչինչ[զ] օգուտ առնէր. արդ, եղև տեսանելի է, զի ըստ ամենայն մասին կցորդութեան ընդունելութիւն[ը] առցուք զանապականութեանն։

**Նորին**.**

Քանզի արիւն ոչ եղիցի, բայց եթե յերակաց և ի
մարմնոյ[թ] և յայլ ևս ի մարդն գոյացութենէ, զոր ճշմար-
տու ‖ թեամբ[ժ] եղեալ Բանն Աստուծոյ արեամբն իւրով 146r.
փրկեաց զմեզ։ Ըստ որում և առաքեալն նորա ասէ. Յո-
րում ընկալաք զփրկութիւն ի ձեռն արեանն[ժա] նորա՝
զթողութիւն մեղաց[ժբ][2]։ Քանզի այս է, որ ի հասարակու-
թիւն միաբանութեան և ի միութիւն զմարդն ածելով ընդ

* Հմմտ. Des heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung. (Ցոյցք առաքելական քարոզու-թեանն). Leipzig. 1907. s. 24.

** Առաջին եւ վերջին հատուածները ճակատակ դասաւո-րութեամբ հմմտ. Irenäus, Gegen die Häretiker (Իրենիոսի՝ Ընդ-դէմ հերձուածոց),Leipzig, 1910. S. 155. վերջինները հատուածը՝ Ցոյցք. S. 29—30. սորա նախընթաց տողերը կրկին՝ Ընդդէմ հերձ. s. 314.

ա) Արդ զմարդն միաւորեցոյց ընդ Աստուած և հասարակութիւն միաբանութեան բ) կարացելոց գ) ինչ դ) ընդունել զանապա-կանութիւնն ե) ոչ էր նորա եկեալ զ) անապականութիւնն. ոչինչ մեզ է) տեսանելի եղև ը) ընդունելութեան թ) մար-մնոյ ժ) ճշմարտապէս ժա) արեան ժբ) յանցանացն

1) Գաղ. Դ, 6. 2) Եփես. Ա, 7.

Աստուծոյ, որ վասն առաւելութեան առ զստեղծուածըն յիւր սիրոյ զ' ի կուսէն լինելութիւն կրեաց ինքն, ի ձեռն որոյ զմարդն միաւորեաց ընդ Աստուծոյ։ Քանզի թե մարդ ոչ յաղթեաց հակառակորդին մերոյ, ապա և ոչ յիրաւի հերքեցաւ թշնամին, և ոչ թե Աստուած պարգևեաց զյա||(ղթ)ութիւնն. ապա և ոչ հաստատութեամբ ընկալաք զնա. և եթե ոչ էր միաւորեալ մարդն ընդ Աստուծոյ, ոչ էր կարացեալ կցորդութիւն ընդունել անապականութեանն։ Իսկ որ ասեն՝ մարդ էր, և ո՞ ծանիցէ զնա. Եւ մերձեցաւ առ կին մի[ա] մարգարէ, և ծնաւ որդի, և կոչեաց զանուն[բ] նորա սքանչելի Խորհրդական, Աստուած հզօր[1]. և ի հասարակութիւն միաւորութեան[գ] զմարդն անդէն[դ] վերստին կոչեաց[ե] Աստուծոյ, զի ի ձեռըն հասարակութեան[զ] մեք կցորդութիւն[է] անապականութեան առցուք։ Ընդունայն[ը] և սնոտիք են ամենեքին

146v. որ զամենայն անօրէնութիւն[թ] անարգեն զԱստուծոյ, || և զմարմնոյ[ժ] (փր)կութ(իւն) ուրանան, զվերստին[ժա] ծնունդ նորա անպատուեն՝ ոչ զօլ ընդունական ասելով զանապականութեանն[ժբ]։ Եւ ոչ ապրեցաւ[ժգ] սա, և[ժդ] ոչ Տէր ուրեմն արեամբն[ժե] իւրով փրկեաց զմեզ. ոչ և[ժզ] բաժակն գոհութեան հասարակութիւն արեան[ժէ] նորա, և ոչ հացն, զոր բեկանեմք, հասարակութիւն է մարմնոյ[ժը] նորա։

Նորին *։

Եկն[ժթ] Որդին Աստուծոյ և ագեցաւ մարմին անապական յանապական ի կուսէն Մարիամայ[ի]։

---

*) Հմմտ. Գ. 102, բ. 104, Ստեփանոս Իմաստասէրի գրութեան մէջ, հրատ. Գ. Տէր Մկրտչեան, Արարատ 1902, մարտ—ապրիլ, ուր վկայութիւն է բերած նաև առաջին հատուածը և երկրորդից՝ «Ընդունայն և սնոտի են—զանապականութեանն»։ Նոյնը, Գիրք Թղթոց, եր. 458.

ա) Մերձեցայ առ կինն բ) կոչի անուն գ) միաւորութեան դ) անդրէն ե) կոչեցեալ զ) առ նոյն հասարակութեան է) զկցորդութիւն ը) ընդունայնք թ) զանաւրէնութիւնն ժ) զմարմնոյս ժա) և զվերստին ժբ) զօտ ասելով անապականութեան ժգ) Եւ եթէ ոչ ապրեցի ժդ) ապա ժե) արեամբ ժզ) և ոչ ժէ) է արեանն ժը) մարմնոյն ժթ) Արդ եկն ի) յանապական Գուսէ։

[1]) Հմմտ. Ես. Ը, 3 և Թ, 6.



Երանելոյն Եփրեմի՝ ի բանէն, որ ի սուրբ Կոյսն *)։

Սպասաւորեաց Կոյսն ի ձեռն անապական|ութեանն Քրիստոսի, պահեաց միշտ[ա] զկուսութիւնն. վասն զի միշտ անապականութեան փափագեաց, եղև մայր անապականութեան[բ], և ոչ կարաց լինել[գ] աղախին ապականութեան։ Քանզի[դ], յորում ստեղծաւ անապականութիւն[ե], շաւիղ ապականութեան լինել ոչ կարէ. յեղումն[զ] անփորձ ամուսնութեան սովորութեան[ա] 'խորհրդապէս ապականութիւն ոչ կարէր[է] տեղի գտանել, քանզի[դ] ոչ կարէր զանապականութիւնն ապականութիւնն պարտել[ը]. վասն այնորիկ և Մարիամ զուգարնակցութեանն[թ] յաղթեաց։ Ասաց և Պաւղոս եթե՝[ժ] Ապականութիւն զանապականութիւն ոչ ժառ||անգէ[ժա] [1]. քանզի[ժբ] Մարիամ նշանակ է յարութեան. ի[ժգ] յարութեանն ապականութիւն հալածական լինի, և առ Մարիամաւ ընդարմացաւ նորա զօրութիւնն՝ առանց բնակցութեան և ծննդեան. ամենեքեան յարութեանն[ժդ] ծնցին, այնպէս[ժե] և Մարիամ զՔրիստոս[ա] ծնաւ։ Երանելին[ժզ] Մարիամ, զի այնպիսի[ժէ] ունէր մաքուր խորհուրդ, որպէս[ա] զի կարելի լինել զանապականութիւն ծնանել. երանեալ[ժը] է եղեալն անապականութեան ըշտեմարան, զի առատապէս զնա ի վերայ երկրի յառաջ եհեղ. երանեալ[ժը] է աղբիւրն բարեպաշտութեան, զի ի նմա|նէն արտածաղկեցաւ մարդ Աստուած. երանեալ[ժը] է, որ ստացօղըն պիտանացու եղեալ[ժթ], զի եղև փրկութիւն բոլոր ազգիս մերում[ի]։

147r.

Նորին.

Ոչ էր ապականութեանն[իա] մօտաւորութիւն. քանզի[դ] խաւար փախչի առ ի գալստենէ լուսոյն[իբ]։ Եկն ա-

---

* Հմմտ. ձեռ. Հ. 1876, բ 200 v. Սորա այս առաջին հատուածի առաջին պարբերութիւնն եւ վկայութիւն է բերել Ստեփանոս Իմաստասէր։

ա) չ. բ) զի անապականութեան ցանկացեալ և մայր անապականութեանն գ) ոչ եղև դ) զի ե) շաւիղ անապականութեան զ) յեղելումն է) ոչ կարէր ապականութիւն ը) զանապականութիւն պարտել ապականութիւն թ) զուգարնակցութեամբն ժ) որպէս ասաց Պաւղոս, թէ ժա) ժառանգել ոչ կարէ ժբ) զի գիտէր թէ ժգ) զի է ժդ) ի յարութեանն ժե) այնպէս ժզ) երանելի է ժէ) այնպիսի ժը) երանելի ժթ) եղև ի) ազգի մարդկան իա) ապականութեամբ իբ) է գալ լուսոյ

[1]) Ա. Կորնթ. ժե, 50.

նապականն յանապական տեղի[ա]. զի ուր անապականութիւն[բ], անդ դադարեալ հովանացաւ աստուածային զօրութիւնն. ոչ մարմնովն[գ] յեղափոխեալ ի ստուեր, այլ ի ձեռն այցելութեան նմա զիւրոյ գալստեանն զգայութիւն շնորհեաց[դ]։

Նորին.

147v. Գգաթ էր Մարիամ, ոչ ներգործեաց ապական‖ութիւն[ե]. մեռանի մարմնով, վասն այնորիկ զգաթու իջանել ասի Բանն ի վերայ նորա։ Անդ զԱդամ կարգեաց ընդ անապականութեանն կենակից լինել. իսկ ի Մարիամու զանապականութիւն[զ] օրինադրեաց։

Նորին՝ ի բանէն, որ յաղագս մարգարէին։

Ո՛ երեկնաւն[է] հրամանացն, զի ծնաւ բնութիւն ոչ զիւրն. կոյսն[ը] մայր և բնութիւնն աղբիւր. արգանդն անուցիչ, աղջիկն գործակից, տաւմին[թ] ի հիւթից բնութենէ[ժ] և ծնունդն[ժա] ի կատարելութենէ հաստատեալ բնութենէ[ժբ]. միայն կին ծնաւ, զի օտար էր ապականութեան ծն|եալ[ժգ]. կոյս, և[ժդ] ծնաւ՝ վասն այնր, որ էր սրբութեան աղբիւր[ժե]։

Նորին*.

Կոյս[ժզ] սպասաւորեաց բնութեամբ աստուածութեանն. վասն այնորիկ և բնութիւն անապական եւ նմա։

Երանելոյն Գրիգորի Սքանչելագործի, եպիսկոպոսի Նէոկեսարու՝ յԵրկոտասան գլխոց նզովիցն չորրորդ գլուխն հանդերձ մեկնութեամբ զուգակցէ այսմ խորհրդոյս, որ նախ է գրեալ։

* Հմմտ. Արարատ 1902, եր. 386. Ստեփաննոս Իմաստասէրի գրութիւնը, ուր վկայութիւն է բերած նաև «Եկն անապականն յանապական տեղի—զգայութեան շնորհեալ» հատուածը։

ա) տեղին բ) անապականութիւն է գ) մարմնով դ) գալստեան զգայութիւնն շնորհեալ։— ե) ապականութեամբ զ) զանապականութիւնն է) Ո՛վ երկնային ը) զիւր. և եղև ծնունդ. որ ոչ յանէ անկաւ. կոյսն թ) տանուին ժ) բնութենէն ժա) ծնունդ ժբ) բնութեամբ ժգ) ծնեալն ժդ) չ. ժե) վասն այնորիկ բնութիւն անապական եւ նմա։ ժզ) Կոյս



Երանելոյն Աղէքսանդրու, եպիսկոպոսին Աղէքսանդրու, ի բանէն, որ ի Տնօրէնութիւնն*։

Աւգնեա՛յ Աստուա՛ծ։

Կոյսն մայր է, և Յովսէփ[ա] հայր, և ապականութիւն ոչ ուրեք. այս ‖ երևելապէս էր, կատարեալն[բ] եղև 148r.
մարմին՝ գոլով Բանն, ոչ ըստ հնոյ ծննդեան ծնունդ[գ], որով ապականութիւնն[դ] քաղաքավարիւր, և ծնաւ ոչ յաղտեղիս, այլ առ յԵւայի գործարանն[ե]։

Նորին*։

Ո՛չ կարէ մահ բնակել ընդ կեանս, և ոչ ապականութիւն ընդ անապականութեան. քանզի ասէ. Որ ետես զիս՝ ետես զՀայրն իմ[զ][1]։

Երանելոյն Աթանասի Աղեքսանդրու եպիսկոպոսին՝ ի բանէն, որ յԵրգս Երգոցն**.

Գահաւորակ արար իւր[է] արքա Սողոմոն[2]. գահաւորակ է մարմինն[ը], զոր զգեցաւ Բանն. առ|ի փայտից Լիբանանու զանփուտն.—և անապական, որ ի Կուսէն[թ]։ Սիւն արար նմա արծաթիս[ժ][3].—զնոյն ինքն[է] մարմին[ժա] անապական՝ քան զայլ մարմինս։ Յոսկոյ. քանզի նոյն ինքն[ժբ] մարմինն բարձեալ լինէր առ[է] ի Բանէն Հօր։ Եւ սքանչելի է այս, զի գահաւորակն ոչ բառնայր զնա, այլ նա մանաւանդ առ ի նմանէ բարձեալ լինէր[ժգ]։

* Հմմտ. նոյնպէս, Ստեփաննոս Իմաստասէրի գրութիւնը։

** Հմմտ. ձեռ. Հ. 1876. p. 202 v.

ա) Կոյս մայր և Յուսէփ բ) չ. և ապականութիւն կատարեալն գ) ծննդեանն ծնունդն դ) ապականութիւն ե) յՈւսածոյ գործարանս զ) չ. քանզի—զՀայրն իմ։ է) չ. ը) Սողոմոն, այսինքն մարմինն թ) Բանն. ի մայրից անփուտ, այսինքն ի կուսէն անապական ժ) սիւնքն արծաթիք ժա) զմարմինն ժբ) Յոսկւոյ, զի ինքն նոյն ժգ) ի բանէն. և ոչ թէ գահաւորակն զնա բառնայր. զի գոյութ...

1) Յովհ. ԺԴ, 9. 2) Երգք Գ, 9. 3) Գ, 10.

**Նորին՝ ի բանեն, որ ի Չարչարանս*։**

Գալստեան Բանին Աստուծոյ յերկիր և մարմնա(նա)-
լոյ ի սրբոյ Կուսէն[ա], զի նորոգեսցէ զբնութիւն որդոց[բ]
մարդկան իւրով անձամբն[գ] և զերծուսցէ զնոսա ի մա-
148v. հուանէ և յապականութենէ, որ տիրեաց[դ] ‖ ի վերայ մեր[ե],
և դարձուսցէ զնոսա յառաջին գեղեցկութիւնն[զ]։ Իսկ
զիա՞րդ կապեաց զհզաւրն և փրկեաց ի նմանէն զանձինս
որդւոց մարդկան[է]։ Եւ զիա՞րդ երանելին Յովհաննէս ցու-
ցանէ զՔրիստոս ձեռամբ իւրով և ասէր[ը]. Ահա[թ] Գառն
Աստուծոյ, որ բառնա զմեղս աշխարհի[1]։ Իսկ թե զմեղս
աշխարհիս ասաց բառնալ, որ է մայր ապականութեան**...։

154r. ‖ ...անվնասաբար[ժ] ի թշնամութենէն***։ Իբր զի մի
ասիցեն այսոքիկ մեղաւորեալք՝[ժա] Իբր արդեւք Տէրն
Թլփատիւր և զամենայն պահէր աւրէն, ընդդիմակն զնա
դարձուցանէ. ո՞չ ես զի մնասցէ օրէնն՝ զայս արար[ժբ],
ասէ, այլ զի զնա լուծցէ և զքեզ յանդ հանիցէ[ժգ] ի նո-
րայն անիծից, և ազատեցուսցէ[ժդ] բոլորովին յիշխանու-
թենէ նորա։

*Երանելոյ հօր մերոյ Հայոց Լուսաւորչի սրբոյն Գրիգորի՝ ի Վարդապետութեան կարգէն****։*

Եւ արդ, դու տես զճշմարիտ կերպարանսն[ժե] բերեալ ի սուրբ Կուսէն,|և ո՛չ առաչօք ինչ տեսիլ. զի և[ժզ] սկիզբն առնու անսկզբնականն և աւուրք համբերեալ[ժէ] ութաւրեայ՝ Թլփատի յառաջ քան զարուեստ Որդին,

* Հ. 1876. p. 203 r. Ձեռագրում անմիջական շարունակութիւն է այս Նախընթացին։ Նոյնը՝ Գ. 1094=4246, ուր երեք փոքրագիր երես շարունակութիւն ունի։

** Այստեղ ընդհատուում է, և 1½ էջ ու ամբողջ 5 թերթ մինչև p. 154 միրկ են մնում. իսկ լուսանցքում ցածը կարդում ենք. «Մին տետր պակաս էր յօրին(ակին)»։

*** Հմմտ. Տիմոթէոս, եր. 26. Երանելւոյ Յովաննու եպիսկոպոսի Կոստանդնուպոլսեցւոյ՝ ի կարճառաւտէն (որ?) յԱռաքեալ։

**** Ագաթանգեղոս, Տփղիս, 1909. եր. 200.

ա) զի գալուստ Բանին առ մարդիկ և մարմնանալ ի Կուսէն բ) ազգի գ) մարմնովն դ) տիրեալ էր ե) Նոցա զ) ապականութիւնն է) և զմեզ ազատեաց ը) և զիա՞րդ ասէ Յովհաննէս թ) Սա է ժ) ազատացեալք ժա) մեղապարտեալքս ժբ) եարար ժգ) հանցէ ժդ) ազատացուսցէ ժե) կերպարանս ժզ) չ. ժէ) աւուրքս համարեալ

1) Յովհ. Ա, 29.



ատեօք խոստացեալ զաւակն Աբրահամու, որով ազգք երկրի աւրհնին[ա]. որպէս և Յիսուսի Քրիստոսի[բ] Թլփատելն առ ի կատարելոյ զաւետիս հարցն, որո՝ Մտեալ, ասէ, ընդ օրինօքն[գ], զի զօրինաւորսն փրկեսցէ; և[դ] մեք զորդեգրութիւն ընկալցուք[1]։

**Յետ սակաւուց*։**

Վասն զի ճշմարիտ Որդին Աստուծոյ խոնարհեցաւ
և էջ ի Ջուրս[ե] մկրտութեան՝ մի, զի զխոստումն[զ] կա- 154v.
տարեսցէ զհարցն և զաւետիսն. ‖ և յառաջ քան զայս առ
յանձն և զԹլփատութիւն[է], վասն զի[ը] երկոցունց կող-
մանց[թ] շնորհեսցէ շնորհս և հաստուսցէ զբարիսն[ժ], զի իւ-
րով Թլփատելովն կատարեսցէ զհաստատութիւն խոստ-
մանն՝ ի խրախուս հրաւիրմանցն, և ի մկրտելն[ժա] զամե-
նայն մկրտեալսն կեցուսցէ[ժբ]։

**Յետոյ գսի։**

*Երանելոյն Եպիփանու՝ հարցումն եւ պատասխանի։*

Ընդէ՞ր զառաջնոցն Թլփատութիւնս յութերորդումն հրամայեն օրէնքն։

**Պատասխանի.**

Եւ սա յիշատակ էր առաջնոցն՝ իբրև առհաւատչեայ կենաց դրոշմ, յանձին բերելով զաստուածածան|օթութեանն զիտութիւն յութերորդումն, որով ցուցանէ զութերեակ երևումն Քրիստոսի՝ զմկրտութեանն զանընդդիմակալ Թողութիւնն։

**Հարցումն.**

Եւ ընդէ՞ր ո՛չ ի պարկեշտ վայրի, այլ ի վերայ առականացն տայ զնշանն, որ է ամօթոյ և ծածկութեան տեղի։

*) Նոյն. եր. 207.

ա) որով օրհնին ամենայն ազգք երկրի բ) Քրիստոսի Յիսուսի գ) օրինօք դ) զի և ե) ի Ջուրսն զ) զխոստմունսն է) զայն և զԹլփատութիւնն առ յանձն ը) զի և թ) կողմանցն ժ) զբարիսն ժա) խոստմանցն և ի խրախուսս հրաւիրմանցն որդեգրութեան ժառանգութեան արժանաւորացն։ Եւ ի մկրտելն ժբ) կեցուցանէ ...

1) Գաղ. Դ, 4—5.

Պատասխանի.

Պարկեշտութիւն, և ոչ զապականութիւն՝ յայտնելոյ ի Քրիստոս. քանզի որոց երևելոցն էր մարմնով՝ սրբութիւն պահանջէ, ոչ միայն ի պոռնկութենէ ի բաց կալ, այլ և զանառակ ցանկասիրութիւնն կարճել. վասն որոյ ի վերայ առականացն տայ զնշան, զի որ երևելոցն է 155r. մար(մն) || ով՝ զևս վեհագոյն պարկեշտութիւն ցուցցէ, որպէս և եղև իսկ. զի առանց սերման յղացաւ և թարց ապականութեան ծնաւ։

Հարցումն.

Եթէ անապական ծնաւ, զի՞նչ. պարատումն Թլփատութեան. զի ի բաց առաւ։

Պատասխանի.

Այսուիկ քաջ հաւանէ անապականութեան նորա. զի ի նոցանէ զպարկեշտն առնլով աւանդ՝ և զիւր անապականն փոխանորդէ փրկական. քանզի նոքօք աւրինակէր, որպէս զի իւր երևեալ մարդկութիւնն բացաչայայտ պարկեշտութիւն երևեսցի։

Հարցումն.

Եթէ Թլփատութիւնն|վասն պարկեշտութեան և անմեղութեան, որպէս ասես դու, եթէ աւրէն ունելով երկեցուցիչս, ընդէ՞ր և Քրիստոս ընդունի զայս՝ այն, որ ոչ արար մեղս, յորում և ոչ գտաւ նենգութիւն։

Պատասխանի.

Բազում վասն պատշաճ իրաց եառ զայս Քրիստոս. մի զի սրբութիւն ցուցցէ՝ սրբութեան արարօղն, որպէս դու ասացեր. և միւս, զի զմարդեղութիւնն իւր հաստատեսցէ՝ ճշմարիտն Աստուած, և զօրէնս հաստատեսցէ՝ օրինաց տվիչն. քանզի ոչ յումեքէ են սպասաւորքն, նոյնպէս և ոչ յայլ ումեքէ սպասաւորեալն։

Հարցումն.

155v. Զի՞նչ պարատեալն յանապականութենէն, քանզի || ի բաց առաւ՝ յանհունս տարաբերեալ զանապականութեանն խորգ. ապա թէ ոչ՝ Գիր վրիպեալ գտանի։



Ցետ սղի.

Դաւանեաց զմարդեղութիւնն ճշմարտապէս, և վասն Թլփատութեանն ոչ ապականացու զմարմինն. քանզի անկատար ոչինչ յաստուածութեանն իմանի, բաց ի մեղաց. որպէս կատարեալ աստուածութեանն բնութեամբ և տէրութեամբ, նոյնպէս կատարեալ ըստ մարդկութեանն բնութեամբ, և աւրինացն պահպանութիւն, և կամաւոր կրիւք։ Բայց արդ, աւտարացոյցս ինչ հաւանական առաջի դիցուք, զի այնմ հաւանին դիւրաւ ընդ երկիր վարժեալ իմաս|տունք. զխմոր զանկուածումն յո՞ւմէ աւանդն ընկալեալ. աւանդն մինչև հաճոյասցի ամենայնն՝ մի՞թէ կորնչիցի աւանդն. և կամի ոք ի պատուական ականց, զոր բազումք գիտեմք, զոր գտեալ ուրուք նկրտեսցէ ի սաստիկ ջուրս և այնու զբազմութիւն ջուրցն ի սպիտակութիւն դարձուսցէ, և յետ այնորիկ զկշիռն առանց թերութեան բերիցէ։ Նոյնպէս իմայ զԹլփատութիւնն Քրիստոսի, աւանդ զհետ ընթացեալ՝ յաղագս փոփոխելոյ զհաւատացեալս յիւր ի մաքրակի անապականութիւնն || ։ 156r Իսկ ոչ բառնի յեղծումն Թլփատութիւնն Քրիստոսի, քանզի ոչ ևս ի հուր տա զԹլփատութիւնն, և որ յիւրաքանչիւր ումեքէ ոչ հեռի է՝ զի՞մրդ ինքն յընքենէ հեռանայ ուրեք երբէք։

Աստուա՛ծ ողորմի գծողիս։

## ԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

**Եթէ պարտ է զմարդեղութիւնն Քրիստոսի ըստ նախաստեղծին Ադամայ խոստովանել՝ յառաջ քան զյաւիտեանսն։**

*Յեռոթէոսի փիլիսոփայի, ուսուցչի Դէոնիսեա Արիսպագացոյ վարդապետի՝|յԱստուածաբան Ստեքերոնացն**։*

Եւ մասն և զբոլորն յինքեան ի միասինն առեալ, և առաւելապէս ունելով, և նախաբար ունելով.

*Երանելոյն Աթանասի եպիսկոպոսի, ուստի զԱպօղինարն, ի բանէն՝ Օրինակ բարեպաշտութեանն***։

ԶԱդամ յանցանսն[ա] յանհաւասարելի կանգնումն Քրիստոս կանգնեաց՝ նմանութեան[բ] մարմնոյ մեղաց եղեալ, և դատապարտեաց զմեղս ի մարմնի[1], որպէս զի մարմնով ի վերայ երկրի[գ] առաքինասցի և անընդունակ մեղաց ցուցցէ զմարմինն, զոր յառաջին ստեղծուածին
156v. անմեղ ունէր Ադամ, իսկ ‖ յանցանօքն ընդունակ մեղաց արար և յապականութիւն և ի մահ կործանեաց[դ]։ Զայս ըստ բնութեան անմեղն[ե], զի ցուցցէ զԱրարիչն անպատճառ մեղաց, և ըստ սկզբնատիպին զստեղծուածն յինքեան բնութեան հաստատեաց[զ]. զի ինքն էր անմեղութեանն հանդէս։ Արդ, ունայն երևութանայք, կործանեալքդ, և ի յերկնուստ ասելով զմարմինն Տեառն. և

---

* Տես. p. 67 v. եր. (99), ուր բառացի կրկնութիւնն է։
** Հմմտ. Ն. 4246 և այլուր։

ա) ԶԱդամայ յանցանս բ) ի նմանութիւն գ) դատապարտել զմեղս, զի մարմնով յերկրի դ) ունէր անմեղ. և յետ յանցանացն յապականութիւն և ի մահ կործանեցաւ ե) Քրիստոս զըստ բնութեանն անմեղ զ) և ըստ մեզ բնական ստեղծուածն յինքեան հաստատեցէ

1) Հմմտ. Հռոմ. Ը, 3.



համայն Ադամ յերկնից յերկիր իջոյց, բայց Քրիստոս ի յերկրէ յերկինս եհան[ա]։

*Երանելոյն Յովհաննու Երուսաղեմի՝ յարտադրութիւն հաւատոյ**։

Խոստովանիմք իսկ,|եթե զբնութիւն մարդկային[բ] ճարտարապետեաց՝ բաղկացեալ[գ] յանձնէ աննիւթականէ[դ] և ի մարմնոյ երկրայնոյ, անմեղ շինէ[ե], որպէս էրն Ադամ[զ] նախ քան զաստուածային պատուիրանաւն զյանցանելն[է]։

*Երանելոյն Փիլիքսինոսի, եպիսկոպոսին Արբոց քաղաքի՝ ԺԸ·րորդ ճառէն, ի բանէն՝ Ելանեմ ես առ Հայր իմ*[1]։

Իսկ մահ և ախտք ի վերայ այնոցիկ տիրեն, որ յայսցանէ ծնեալ են՝ ի մարդկան արենէ, ապականելի և եղծանելի մարմնովն։ Այլ Տէրն մեր յայսպիսի նիւթոյ եղեալ ‖ սքանչելի, որ ի մէնջ ոչ յառաջի, որ ի մեղաց դա- 157r. տապարտութեան ոչ ստացաւ զմարմնաւորութիւնն. այլ եղև մարմին նորա ըստ նմանութեան նախաստեղծին, ընկալաւ զհոգին անփոփոխելի՝ զայնպէս, որ յԱդամն, և ոչ խոնարհեցաւ ի մեղս։

*Երանելոյ հօր մերում Յովհաննու Ճգնաւորի Մայրագոմեցոյ՝ ի բանէն, որ ի տնօրէնութիւնն Քրիստոսի***։

Մեք ոչ պարտիմք ապականութեանս մասունս եկամուտս[ը] զօդել ի Քրիստոս, զի ոչ օձապատիր[թ] մերկացելոյն ի փառաց տերևապատն Ադամա՝ դարձելոյն|ի հող, համեմատի երկրորդ Ադամ, այլ աստուածաստեղծին փա-

---

* Հմմտ. Արարատ, 1902, եր. 392. Ստեփ. Իմաստասիրէ գրութեան մէջ։
** Հմմտ. նոյն եր. 392, ուր Ստեփանոս բերում է այս վկայութիւնը հետևեալ խօսքերով. «Զնոյն և Յոհան Իմաստասէր ասէր». տալիս է նա և կրկնապատիկ ընդարձակութեամբ շարունակութիւն։

ա) անմեղութեան հանդէս, զի զանկեալն յերկնէ յերկիր, դարձեալ յերկինս եհան։ բ) մարդոյն գ) զբաղկացեալն դ) անապականէ ե) շինեաց և անապական զ) որպէս ի սկզբանն է) զանցանելն ը) չ· թ) ածապատիր

1) Յովհ. Ի, 17.

ուզգեստն[ա] Ադամայ համեմատի ճշմարիտ մարդն կու-
սածին։

**Խօսք.**

Երանելի առաքեալն ասէ. Մերկացարո՛ւք զհին մարդն
և զգեցարո՛ւք զնորն[1]. և դարձեալ Նոր ասելով հնացոյց
զառաջինն, և որ հնանայ և ծերանայ՝ մերձ է յապակա-
նութիւն. և ապականութեան սկիզբնն յանցանելն տը-
րեաց Ադամայ։ Իսկ Նոր Ադամ անուանի Քրիստոս, զի
ոչ եկն հին մարմնով, այլ ի նմանութիւն մարմնոյ մե-
ղաց. իսկ նմանութիւն և ճշմարտութիւն ոչ մի են։ Արդ,
157v. ոչ ասաց, ‖ թե առաքեաց Աստուած զՈրդի իւր մարմնով
մեղաց, այլ ի նմանութիւն[2], և որ զնմանութիւնն հաս-
տատէ և ճշմարտութեանն ոչ հաւանի՝ ուրացող է ընդ
հրէիցն. զի որում ասացաւն, եթե ի նմանութիւն մարդ-
կան եղև, ասէին ցնա եթե՝ Դու մարդ ես և զանձն քո
Աստուած առնես[3]։ Իսկ Որդին Աստուծոյ ոչ եթե զմար-
դեղութիւնն ուրանալ սիրէ, որ գթութեամբն կամեցաւ
լինել մարդ և մարդեղութեամբն փրկել զարարածս. զի
հանապազ զինքն Որդի մարդոյ հաստատեալ անուանէր,
և էր իսկ ճշմարտութեամբ. քանզի կոյրք աղաղակէին.
Որդի՛ Դաւթի, ողորմեա՛ մեզ[4],|և մատուցեալ բժշկեաց
զնոսա. և մանկունքն ասէին. Աւրհնութիւն Որդւոյ Դաւ-
թի[5], և հրեշտակն եթե՝ Տացէ նմա Տէր Աստուած զա-
թոռն Դաւթի հօր նորա[6]. զի զ՚ ի սկզբանէ ճշմարտու-
թիւնն գիտէին և զմարդեղութիւնն խոստովանէին։ Բայց
առ Հրեիցն անհաւատութեանն ընդդէմ դառնայ նոցա,
թե՝ Զոր Դաւիթն զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ որդի նորա
իցէ[7]։ Նոյնպէս և առաքեալն թե՝ Ո՛չ ի մարդկանէ և ոչ
ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի[8]։ Իսկ
ճշմարիտ հաւատացեալք ի Քրիստոս ոչ նմանութեամբ
158r. զճշմարտութիւնն ուրանան և ոչ ճշմարտ ‖ ութեամբ ըզ-
մարդեղութիւնն խոտեն, այլ ըստ Հոգւոյն Սրբոյ վարդա-
պետութեանն և ըստ Տեառնն ձայնին, խոստովանու-
թեամբ մերով՝ Ո՛չ արկանեմք զգինի նոր ի տիկս հինս[9],

ա) չ.

1) Կող. Գ. 9—10. 2) Հռոմ. Ը, 3. 3) Յովհ. Ժ, 33. 4) Մատթ. Թ. 27. Ի, 31 եւն. 5) Մատթ. ԻԱ, 9. 6) Ղուկ. Ա, 32. 7) Մատթ. ԻԲ, 45. Մկ. ԺԲ, 37. Ղուկ. Ի, 44. 8) Գաղ. Ա, 1. 9) Մատթ. Թ, 17. համա. Մկ. Բ, 22. Ղուկ. Ե, 37.



և ոչ մկրտութեամբ զՔրիստոս զգեցեալ[1] արկանէ զնորն
ի վերայ հնացեալ ձորձոյ, զի մի՛ չար ևս պատառումն
լինի[2]՝ հերձուածն, որ զՏէրն ի պարտեալն և ի մեղօք հնա-
ցեալ մարմինն միաւորէ. քանզի ասէ՝ չմիաբանի նորն
ընդ հնոյն[3]։ Իսկ արդ ասեմ եթե՝ զիա՞րդ ասաց առա-
քեալն եթե՝ Հին մարդն մեր խաչակից եղև նորա, զի
խափանեսցէ զմարմին մեղաց[4]։|Արդ, ասա, ո՞վ է հին
մարդն և ո՞ւմ եղև խաչակից. և Քրիստոս մի անգամ խա-
չեցաւ՝ մի՞ բնութեամբ. եթե երկաբնակ ես և եթե քրիս-
տոնեայ՝ ոչ կարես ասել, եթե որ խաչեցաւն և որ խա-
չակից եղև Քրիստոսն էր. քանզի ոչ բերէ խորհուրդն՝ ոչ
ի հերձուածն և ոչ ի ճշմարտութեանն. այլ խաչեցաւ Նոր
Ադամն՝ կենդանին ի մեզ Քրիստոս, անմահական բնու-
թեամբ մարմնոյն, զոր ի մէնջն էառ և անմահացոյց, և
շնորհեաց մեզ խաչակից լինել և կենդանանալ, որպէս և
գրեցաւն. Զի ես զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում
կրեմ[5]. Այսուհետև կենդանի եմ ոչ ես, այլ ‖ կենդանի է 158v.
յիս Քրիստոս[6]։ Եւ դարձեալ զայլս յորդորէ ընդ իւր՝ ա-
սելով ընդ իւր. Եթե չարչարանացն կցորդ լինիմք, և փա-
ռացն հաղորդ լինելոց եմք[7]. Եթե մեռարուք ընդ Քրիս-
տոսի, հաւատամք, եթե կենաւք նորա կեցցուք ընդ
նմա՝[8] ընդ քահանայապետին մերոյ, որ ըստ կարգին
Մելքիսեդեկի[9]. որով վկայեցաւն, թե անմահ և կենդանի
է որ տասանորդեաց զԱբրահամ և աւրհնեաց։ Քանզի
այս Մելքիսեդեկ թագաւոր Սաղիմայ, որ թարգմանի թա-
գաւոր արդարութեան, և կամ խաղաղութեան, որոյ ոչ
սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց. անհայր՝ չհամար|-
եալ յազգս, նմանեալ Որդւոյն Աստուծոյ[10]։ Արդ, որ ան-
հայրն է՝ զիա՞րդ նմանեցաւ Որդւոյն Աստուծոյ, որոյ հայ-
րըն յայտնի է և հզօր. այլ վասն կուսածին ծննդեանն և
մարմնաւորութեանն. զի ոչ եթե Հայր մարմնացաւ և ոչ
Հոգին Սուրբ թանձրացաւ, այլ Որդին։ Եւ դարձեալ՝ ան-
մայրն ըստ յառաջ բնութեան անսկզբնութեանն, և ոչ
համարեալ յազգս, վասն զի ինքն ի մեռեալս միայն ա-
զատ է և իշխանութիւն ունի մեռանել և յառնել, զի մե-

1) Գաղ. Գ, 27. 2) Մատթ. Թ. 11. Մկ. Բ, 21. 3) Հմմտ
Ղուկ. Ե, 36. 4) Հռոմ. Զ, 6. 5) Գաղ. Զ, 17. 6) Գաղ.
Բ, 20. 7) Հռոմ. Ը, 17. 8) Հռոմ. Զ, 8. 9) Եբր. Զ, 20
10) Եբր. Է, 1—3.

ռելոց և կենդանեաց տիրեսցէ՝ ոչ օտարաբար, այլ արարչաբար, և աստուածապէս զիւր արարածս փրկել յօտարէ։

---

160r. ## ‖ ԲԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ.

**Յաղագս մարմնական կրիցն Քրիստոսի. եթէ ո՛չ է ինքնութիւն ակամա եւ հարկաւոր եւ կարեկցութեամբք, այլ ի վեր քան զկարիս հարկաւորս եւ զմարդկային բնութիւնս:**

*Երանելոյն Յեռոթէոսի, Աթենացոց փիլիսոփայի, ուսուցչի Դիոնիսեայ՝ յԱստուածաբանական Ստիքիոնացն *։*

Բաւեալ ապաեղի[ա] ի մէնջ առաւելեալն մտաց և բանի[բ] աւրհնելով. Թեպէտ և այսոքիկ ունի զգերաբնութիւնն և զգերագոյակ՝ ոչ միայն, զի այլ|աբար և[գ] անշփոթապէս մեզ հաղորդեցաւ, ոչինչ պակասեալ ի լիութենէն, որ առ մեզն խոնարհեցաւ. այլ զի ըստ ամենեցունց[դ] Նոր և Նորագոյն բնութեանս մերում[ե] գերաբնութեամբ գոյր, որ ըստ բնութեանն գերաբունն, զբոլորս մեր առ ի մէնջ՝ ի վեր քան զմեզ ունելով[զ]։

*Երանելոյն Դիոնէսեայ, Աթենացոց առաջին եպիսկոպոսին եւ մարտիրոսի՝ սակս մարդանալոյն Քրիստոսի, ի բանէն՝ Որպէս ասէ Յիսուս, որ ամենեցուն առաւելն է **։*

Եւ զի համառաւտաբար ասասցուք՝ ոչ մարդ, ոչ որպէս մարդ, այլ որպէս ի մարդկանէ՝ մարդկան գե-

* Հ. 944, թ. 156 r. տարբեր թարգմանութիւն է. մինչ նոյն թարգմանութեամբ հմմտ. Արարատ 1902, եր. 388. Սահփանա Իմաստասէրի գրութեան մէջ։

** Հմմտ. թ. 66 r. (եր. 100)։

ա) քաւեալ եղիցի առա բ) բանիւ գ) չ. Թեպէտ և—այլաբար և դ) զի և ըստ մեզ ամենեցուն ե) ի մերում բնութեանս զ) անապական գերաբունն զբոլորսն մեր ի վեր քան զմեզ առնելով առ ի մէնջ։



և ի վեր քան զմարդ և ճշմարտապէս մարդ եալ, ‖ և այ- 160v.
նուհետև ոչ ըստ Աստուծոյ զաստուածայինսն ներգործեալ, և ոչ զմարդկայինսն ըստ մարդոյ, այլ այրացելոյ Աստուծոյ՝ Նոր իմն և աստուածայրական ներգործութեամբ ըստ մեզ քաղաքավարեալ։

*Երանելոյն Եփրեմի եպիսկոպոսի Խորին Ասորոյ՝ ի բանէն, որ վասն շնորհացն այսպէս գրեաց։*

Կինն պոռնիկ ի շնորհաց քաւարան ոտիցն Տեառն ընդունելով բովանդակութեամբ՝ տարաւ թողութիւն մեղաց, աւծանելով զոտսն Տեառն և Բժշկին իւղով, ձրի ընկալաւ զզանձսն առողջութեան ցաւոց իւրոց. զի ոչ թե* վասն որովայնի լրման հրաւիրեցաւ յագեցուցանել|զքաղցն իւր[ա], այլ վասն ապաշխարութեան մեղաւոր կնոջն հրաւիրեաց զանձն իւր՝ արդարացուցանել զմեղաւորն. և ոչ թե բազմապատրաստ կերակրոց փարիսեցոյն քաղցեալ էր Տէրն[բ], այլ արտասուօք պոռնկին յագեալ[գ] և հանգուցեալ յարտասուացն, որով[դ] քաղցեալն էր, շրջելով զվայելչութիւն անցաւոր կերակրոցն, որով հրաւիրեալն էր՝ ցուցանել[ե], եթե ոչ[զ] վասն անցաւոր կերակրոցն[է] հրաւիրեալ էր, այլ վասն աւգնականութեան մտացն։ Եւ ոչ իսկ[ը] վասն հեշտութեան եղև Տէրն ընդ կերօղս[թ] և ընդ արբեցողս, որպէս կարծէր ‖ փարիսեցին, այլ զի ի մահ-
161r. կանացու կերակուրս նոցա խառնեսցէ զվարդապետութիւնն[ժ] իւր, որպէս դեղ կենաց։ Եւ որպէս ի պատճառս կերակրոյ[ժա] տայր զխրատ դառնութեան Զարն տանն Ադամայ, նոյնպէս ի պատճառս կերակրոց տայր[ժբ] Բարին պարգևս կենաց որդոց Ադամայ. որսորդ էջ, զի որսասցէ[ժգ] զկորուսեալ կենդանիս[ժդ], և տես զմաքսաւոր և զպոռնիկս և զյամենայն անառակութիւնս ընթացեալս[ժե], փութացաւ և սփռեաց զգործս[ժզ] իւր ի վերայ ընթացից

* Սկսած այստեղից մինչև վերջը հմմտ. Գ. 1094 = 4246.

ա) հրաւիրեցաւ յագել բ) կնոջն մեղաւորի, զի արդարացուսցէ զմեղաւորս. ոչ էր քաղցեալ կերակրոց գ) յագչէր դ) յարտասուաց, յորում ե) չ. շրջելով—ցուցանել զ) զի ոչ թէ է) կերակրոյն ը) չ. թ) եղև ընդ կերակրողս ժ) զվարդապետութիւն ժա) զի որպէս ի պատճառս կերակրոյն ժբ) չ. զխրատ—տայր ժգ) որսայր ժդ) կենդանիսն ժե) տեսեալ զմաքսաւորս և զպոռնիկսն յանառակութիւն ընթացեալ ժզ) զգործսն

նոցա, զկերակուր[ա] պարարող մարմնոյ՝[բ]|որսալ զնոսա ի պահս, որ պարարէ զհոգին։ Ի լկտաց կարծեցեալ կերող[գ], ի գետնոց՝ ամենապարգև, յարբեցողաց՝ արբեցեալ[դ], յիմաստնոցն՝[ե] արբուցող ամենեցուն[զ]. աւրհնեալ տեսչութիւնն իւր[է]։

### Սրբոյ Լուսաւորչին Հայաստանեայց՝ ի Վարդապետութենէն Գրիգորի, Յարութեան բանէն*։

Եւ[ը] սքանչելագործ է և անհասական ի քննողաց, և ամենայն անհնարականաց[թ] հնարաւոր։ Զի որպէս յառաջ քան զչարչարելն պարգևեաց զկենարար մարմինն[ժ] իւր և զարիւնն[ժա] աշակերտացն՝ առ ի յայտ առնելոյ,
161v. եթե ինքնակամ չարչարի, նոյնպէս[ժբ] ‖ յետ յարութեանն ցուցանէ յանձին զնշանս[ժգ] բևեռացն, յայտ առնելով, եթե[ժդ] չէին բաւական վէրք արգելուլ զնա ի գերեզմանին՝[ժե] զբժիշկն վիրաւորաց։ Նոյնպէս և ճաշակեաց ընդ աշակերտսն ի նոր արքայութեանն, զի յայտ արասցէ, թե որ յանկարօտ և յանճաշակ արքայութեանն ճաշակել գիտէ, նոյն և յառաջ քան զչարչարանսն քաղցական և զարմանաւոր յաշխարհիս[ժզ] էր և անկարաւտ ամենալցոյց[ժէ] շրջէր։ Այլ զօրօրինակ անդ վասն[ժը] հաստատելոյ աշակերտացն ճաշակէր, նոյն օրինակ[ժթ] աստ առ ի| հաւատարիմ առնելոյ աշխարհի քաղցեաւ, և թե[ի] արդարև իսկական Որդին Աստուծոյ եղև յետ[իա] ժամանակի և որդի մարդոյ, զի կեցուսցէ զաշխարհս[իբ]. վասն որոյ[իգ] կանխասաց եղեալ մարգարէն[իդ] եթե՝ Աստուած յաւիտենական, Աստուած, Աստուած[իե], որ հաստեաց[իզ] զծագս երկրի՝ ոչ քաղցեսցի[իէ] և ոչ աշխատեսցի[իը], և ոչ գոյ քննութիւն իմաստութեան նորա[1]։

---

* Աղաթ. եր. 244.

ա) որ է կերակուր  բ) մարմնոյ նոցա  գ) զհոգին նոցա. Ի լկտեաց կարծիւր կերող. իսկ  դ) արբեցող  ե) իսկ յիմաստնոցն  զ) արբեցուց ամենեցուն զբաժակն կենացն  է) տեսչութիւն քո, Տէր ամէն էից ։  ը) Եւ քանզի  թ) անհնարականաց  ժ) զկենդանարար մարմին  ժա) զարիւն  ժբ) Նոյնպէս և  ժգ) զնշան  ժդ) արարեալ թէ  ժե) վէրքն ի գերեզմանէ արգելուլ  ժզ) ի քաղցական և ի զարմանաւոր աշխարհիս  ժէ) ամենալցոյցն  ժը) առ ի  ժթ) զաշակերտսն ճաշակեաց, Նոյնպէս և  ի) քաղցեաւ, եթէ  իա) ըստ  իբ) զաշխարհ  իգ) վասն որոյ և  իդ) մարգարէին  իե) չ.  իզ) հաստատեաց  իէ) քաղցիցէ  իը) վաստակեսցի

1) Ես. Խ. 28.



### Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրացոյ՝ ուստի զԱպողինարեաց, ի բանէն՝ Օրինակ բարեպաշտութեան*։

Բնութեամբ ուրեմն[ա] և ոչ ուրեմն[ա] պիտակ արար Տէր[բ], մարդ եղև ոչ[գ] ըստ բնութեան, ‖ և ոչ ըստ գործոց 168r.
մեզ մեղաց հանդուրժել կարողութիւն էր յԱրարիչն[դ]. քանզի[ե] մերով բնութեամբ և գտանելով պատերազմ եւս լինի[զ], և սերման տանումն ի ձեռն միոյ տկարութեան։ Իսկ Բանին մարմնաւորութիւն ըստ բնութեան Աստուածութեանն եղեալ՝ աննդունակ եղև որ ի մեզ հնութեամբ սովորական իրքն էին, և վասն այսորիկ[է] ուսանիմք մերկանալ զհինն և զգենուլ զնորն. և յայսոսիկ է սքանչելի[ը], զի մարդ եղև Տէրն և առանց մեղաց, զի նոր բովանդակ եղև, և որքան ինքն հրամաեաց բնութեանն՝ կամելով յինքըն ընկալաւ որքան կամեցաւ,|այս է՝ ծննդեանն, որ ի կնոջէ[թ], աճման հասակի, թուոց ամաց և աշխատութեան, և ծարաւոյ և քաղցո, և տրտմութեան և մահու[ժ], և յարութեան։

### Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու, ի բանէն՝ Յաղագս զոհութեան**։

Եւ համայն արտասուելն[ժա] Տեառն ի վերայ Ղազարու և ի վերայ քաղաքին զայս[ժբ] ասել ունիմք, զի և եկեր[ժգ] և արբ՝ ոչ ինքն այնոցիկ կարօտ, այլ չափս քեզ[ժդ] և սահման հարկաւորաց անձին ախտից թողլով։ Նոյնպէս և արտասուեաց՝ ողբացողաց և ողբացելոց սաստկացեալ զախտն[ժե] նուաստացուցանել ‖ ով ուղղէր. Ղազար 168v.

---

* Հմմ. Գ. 1094=4264.

** Հ. 944, p. 922.

ա) չ.  բ) պիտակացէս Տէրն  գ) և ոչ  դ) Արարչին  ե) զի  զ) գտանել զմեզ պատերազմ լինէր  է) իրք էին. վասն այսորիկ  ը) չ. և յայսոսիկ է սքանչելի  թ) ի կուսէն  ժ) ամաց, թուոց, աշխատութիւն, ծարաւոյ, քաղցոյ, քնոյ, տրտմութեան, մահու  ժա) առ արտասուելն  ժբ) զայն  ժգ) կեր  ժդ) կարօտել, այլ քեզ չափ  ժե) Նոյնպէս արտասուեաց. զմեզ ողբաց, և զողբացելոց սաստկացել ախտն

սիրելին[ա] մեր քունեաց, այլ երթամ, զի զարթուցից զնա[1]։ Ո՞ ի մէնջ զննջեալն ողբա սիրելի[բ], զոր սուղ ինչ զկնի վատահանայ զարթնուլ։

## Նորանելոյն Տիմոթէոսի, եպիսկոպոսին Աղէքսանդրու՝ ուստի զՆեւոն եւ զՆուսիքէ։

Իսկ լինելով Բանն մարմին, որ է այս որդի մարդոյ, եղև բնակից մեր, որպէս ի ստացականէ մարմնոյ, որ ի Կուսէն սրբոյ մարմնացեալ, որպէս վայել է Աստուծոյ՝ ըստ Աստուծոյ աստուածապէս ի նմա։ Իսկ մարմին անապական լինել՝ հիմն հոգևոր անձնաւոր հաստատապէս և անշարժ|ապէս, աղէ արդեօք վասն բնութեանն հողեղինի ստացեալ. պիտոյ էր արդեօք ասել՝ տեսանել և նմա զանապականութիւն և բառնալ զբեռն մեղաց, և թագաւորել ի վերայ նորա մահու, և լծոյ և առանց ապականութեան հնազանդել, ընդ որով որդիք մարդկան հնազանդին ընդ դատապարտութեանն այնուիկ, և պարտաւորեալք եղեալք։ Ո՛չ է արժան իմանալ և այսպէս, այլ մինչև կարի յոյժ ճշմարիտ եղեալ մարդ, յոյժ անցեալ վերաբերեալ քան զչափս բնութեան մարդկութեանս, և
164r. աստի ամենայն խորհուրդք մարմնաւ || որութեանն, որպէս վայել է Աստուծոյ, կատարեին։

## Նորանելոյն Փիլիքսիանոսի, Նաբուկայ եպիսկոպոսի՝ ի մեկնութենէ սրբոյ աւետարանին ըստ Յովհաննու։

Առաքեաց Աստուած զՈրդին իւր ի նմանու(թիւն) մարմնոյ մեղաց[2]. ոչ օրինակաւ մարմնոյ միայն նմանութեան, որպէս կարծեցին Եւտիքէ և Մարկիոն, Մանի և Վաղենտիանոս, այլ մարմին ճշմարիտ, և ցանկութիւն

ա) ուղեր։ Քանզի և այլ քան զարտաքսեալն Բանին չափաւորութեան կարաւտանա, և ի վերա նոյր լինել, և որքան և Որք, և որպէս ուրէն է. զի ոչ ախտաւոր եր ախտաւորն Յեսան, այլ վարդապետական, անդուստ է յայտ. Ղազարոս բարեկամ   բ) ի մէնջ զքան լինելն զսիրելի սղբա

[1]) Յովհ. ԺԱ, 11.   [2]) Հռոմ. Ը, 3.



ոչ ի նմա և ոչ հաշուեն, և ոչ մի ինչ, որ ի պատճառս դատապարտութեանն Ադամայ, այլ ազատ իսկ ամենևիմբ. որպէս ազատու|թեամբն իւրով փորձեալ Տէրն ամենայնի՝ կամաւորութեամբ, և ոչ որպէս հնազանդեալ ի բռնութենէ։ Այլ որպէս ինքն Տէրն ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ և իշխանութիւն ունիմ առնուլ զնա[1]։ Ապա թե դնել և առնուլն իշխանութեամբ էր, յայտնի է թե ամենայնն ևս կամաւորութեամբ է եղեալ, և ոչ բնականք. քաղցն և ծարաւն, վաստակելն, քունն և չարչարանքն՝ այս ամենայն ըստ տեսչութեանն համարեալ, և ոչ ըստ բնութեան մարմնոյ։ Յորժամ կամեցաւ, քաղցեաւ, և յորժամ քաղցեաւն՝ ոչ ըստ թափուր լինելոյ ի կերակրոյ, որպէս ամենայն մարդ. պահեաց երբ || եմն
164v.
զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, և յետ կատարելոյ քառասուն աւուրն ապա քաղցեաւ։ Եւ եթե բնութեամբ քաղց նորա, որպէս ամենայն մարդոյ, ոչ յանցանել պահոցն և ոչ ի կատարել քառասուն աւուրն ապա սկսանէր երևիլ քաղցն. և այն ըստ բնութեան մարդոյ ոչ պատշաճի, և ոչ այս, եթե զկնի քաղցոյն և ծարաւոյն ոչ վարի կերակրով և ըմպելեաւ։ Իսկ դայս, զոր ասացաքս, ոչ ասեմք, եթե ոչ վարեցաւ Տէրն կերակրով և ըմպելեաւ, այլ ոչ ի բռնութենէ, որպէս կարօտ ձգեալ|ա կարօտութիւնն։

## Նորանելոյն Սեբերիանոսի՝ ի հինգերորդ ճառէն։*

Եկն դարձեալ[ա] ի Կանա Գալիլէացոց, ուր արար զջուրն գինի[բ], Ցիշէ[գ] զերեկի բանսն, եթե զոր ինչ մարմնապէսն է ասացեալ՝ չէ՛ պարտ մարմնապէս իմանալ։ Երևի[դ] երբեմն աստ և երբեմն անդ՝ ըստ մարմնոյն, և ոչ

* Ձեռ. հ. 510, թ. 279 ուղն. Հմմտ. տպ. եր. 406.

ա) Դարձեալ Յեսուս   բ) ի գինի   գ) Յիշեա   դ) Եկն Յեսուս ոչ ըստ աստուածութեանն զօրութեան փոփոխելոյ, այլ ըստ մարմնոյն տեղաց ի տեղիս փոխելոյ. զի թէ անսահմանական բնութիւն ըստ աստուածութեանն, ապա ամենայն ուրեք է. երեւի մարմնով

[1]) Յովհ. Ժ, 18.

ըստ աստուածութեանն սահմանելոյ. զի աստուածութեամբն ամենայն ուրեք է, այլ տեսչութեամբն[ա] զկարգ տեսչութեանն կատարելոյ[բ]. և Յիսուս վաստակեալ ի ճանապարհին՝[գ] աշխատեցաւ աշխատելեաւն, որ ո՛չն աշխա-
165r. տէր[դ], պահեաց զԽ. տիւ ‖ և զԽ. գիշեր, և յետոյ քաղցեաւ. և յայտ է, եթե յորժամ կամեցաւ՝ քաղցեաւ, զի բնութիւնն իւր[ե] առանց կարեաց է։

## ԲԱՆ ԵՒԹՆԵՐՈՐԴ.

**Եթէ ո՛չ է պարտ անգիտութիւն ասել Քրիստոսի ըստ տնօրէնութեանն. թէ պարտ է՝ եւ ուրեք ձեւանայ անգիտանալ՝ յաղագս իմիք պատճառի:**

*Երանելոյն Երանեանոսի, Հետեւողի առաքելոց՝ եպիսկոպոսի Ղոզոնի Գալիլէացոյ, ի բանէն, որ յաղագս տնօրէնութեան Փրկչին։*

Քանզի նոյն ինքն Բանն Աստուած|հոգով գիտութեամբ և կատարելութեան երևեալ, և ո՛չ հոգով անգիտութեան և պակասութեան։ Քանզի զի՞արդ ի նմին զոլ

ա) աստ է, երբեմն անդ. ո՛չ եթէ բնութեամբ աստուածութեանն սահմանելով, այլ տեսութեամբ բ) կատարելով գ) Նին Յիսուս և աշխատութիւն կրեաց. աշխատեցաւ՝ ո՛չ ըստ աստուածութեան բնութեանն, այլ ըստ մարդկութեանն։ Նին, ասէ, Յիսուս, և աշխատեալ էր ի ճանապարհորդութենէն դ) և ո՛չ աստուածութեամբն, որ չկրէ երբէք աշխատութիւն... (կրկին մի նախադասութիւն աւելի) ե) Տեսանես, զի աստուածեղէն բնութիւնն



կարէր կատարելութեամբ և պակասութիւն, գիտութիւն և անգիտութիւն, ճշմարտութիւն և մոլորութիւն, լոյս և խաւար, կարողութիւն և անկարութիւն. զի սոքա բարձօղք են միմեանց, որպէս լոյս և խաւար ի նմին համանգամայն ո՛չ երբէք լինիցին. այլ եթէ լոյս, ո՛չ ևս խաւար. եթե կարողութիւն, ո՛չ ևս անկարութիւն. եթե ճշմարտութիւն, ո՛չ մոլորութիւն. եթե լիութիւն, ո՛չ պակասութիւն. եթե գիտութիւն, ո՛չ անգիտութիւն. եթե կա‖- 165v.
տարելութիւն, և ո՛չ բնաւ իւիք թերաբայութիւն։

*Սրբոյն մերոյ լուսաւորչին Գրիգորի՝ ի չարչարանան Քրիստոսի**։

Համարձակութիւն առին աշակերտքն հարցանել[ա] զՏէրն ի Ձիթենեաց լերինն[բ]. Ասա մեզ, ասեն. Երբ լինիցի այդ, կամ[գ] զի՞նչ նշան իցէ քոյո գալստեանդ[դ] և վախճանի աշխարհի[ե] [1], Իսկ նա թեպէտ և հրաժարէր, թէ՝ Վասն աւուրն և ժամուն[զ] ո՛չ ոք գիտէ՝ ո՛չ հրեշտակք[է] և ո՛չ Որդի, բայց միայն Հայր[2]. և[ը] յԱռաքելագործ մատենին՝[թ] Ո՛չ, ասէ, ձեզ գիտել զժամս և զժամ|անակս[ժ], զոր Հայր եդ յիւրում իշխանութեան[ժա] [3]. իսկ ո՞ այլ ոք իցէ իշխանութիւն Հաւր, եթե ո՛չ Որդին[ժբ]. սակայն առեալ մանրապատում նշանօք[ժգ] վասն ահաւոր և ամպախաղաց գալստեանն իւրոյ՝ աշակերտացն ուսուցանէր։ Տեսանես, զի գիտակ է[ժդ] Որդի ո՛չ միայն աւուրն և ժամուն, այլ և[ժե] կերպարանաց իւրոյ գալստեանն ոչինչ[ժզ] իւիք անտեղեակ. բայց վասն թերահաւատ լսողացն ըստ ժամանակի զիջանելով[ժէ] խօսէր։

* Ագաթ. եր. 231.

ա) առին հարցանելոյ բ) լերինն, յորժամ վասն քակելոյ զեղեցիկ տաճարին վճիռ ետ. գ) և կամ դ) գալստեանն ե) աշխարհիս զ) աւուրն այնորիկ է) հրեշտակք երկնից ը) և Ղուկաս թ) մատեանին առակաւ մեկնէր ժ) Ո՛չ է ձեզ, ասէ, քննել զժամանակս և զժամս ժա) իշխանութեանն ժբ) ինքն Որդի ժգ) մանրապատումն նշանակօք ժդ) էր ժե) այլև ժամուն և ժզ) ոչ ժէ) և զիջանելով

1) Մատթ. ԻԴ, 3. 2) Մատթ. ԻԴ, 36. Ղուկ. ԺԳ, 32.
3) Գործք Ա, 7.

166r. *Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրու՝ ի Թղթ ‖ ոյն, որ առ Եւսեբիոն եւ Ղուկիփերէ եւ Աստերոն*:*

Վասն որոյ և այլ[ա] էր նախ քան զԱբրահամ Որդին, և ոչ այլ որ յետ Աբրահամու[բ]. ոչ այլ[գ] յարուցիչն Ղազարու[դ], իսկ այլ հարցաւղն վասն նորա. այլ նոյնն[ե] էր՝ իբրև մարդկօրէն ասելով[զ]. Ո՞ւր եդիք զՂազարոս[է] [1], իսկ աստուածաբար զնա յարուցանելով:

*Երանելոյն Կիւրղի Երուսաղէմացւոյ եպիսկոպոսի, որ ի՝ Տէ՛ր, ո՞ հաւատաց, ի բանէն՝ Պարծանք սրբութեան:*

Վասն այսորիկ առ յանձն զդատապարտութիւն, զի լուծցէ զվճիռ դատաստանի զառաջ|նոյ դատապարտութեանն: Եւ վասն այսորիկ թաղեցաւ, զի երկիրն, որ ընկալաւ զանէծս զառաջինս, փոխանակ նզովիցն զաւրհնութիւն ընկալցի: Առ ժամանակ մի մեղացն պատսպարան զտերև թզենոյն կարկատեալ զգենուին. վասն այնորիկ Յիսուս ի վախճանի նշանացն ամենայնի զթզենին դնէր. զի իբրև դիմեալ գայր ի ժամանակի չարչարանացն, նզովեաց զթզենին՝ ոչ զամենայն թզենի, այլ ըզմինն միայն առ օրինակէ, և ասէ. Այսուհետև ամենայն

166v. ոք ի քէն պտուղ մի՛ ճաշակեսցէ[2]: Արդ, լուծ ‖ եալ լիցի, ասէ, այսուհետև վճիռ դատապարտութեան և անցցէ պատիժ պատուհասից: Արդ, որովհետև զթզենին առին արկին զիւրեամբ, եկն ի ժամա(նա)կի, յորում ոչ էր ժամ պտղոց. իսկ ո՞վ է, որ ոչ գիտէ, եթէ ի ժամանակս ձմերայնոյ պտուղ ի թզենոյ ոչ գտանի, բայց միայն տերևով զարդարեալ կայ. արդ, զոր ամենեքեան գիտեն՝ Քրիստոս ո՞չ գիտէր. նա գիտէր և գայր պահանջել, ոչ եթէ չգիտէր, զի գտցէ. այլ զսաստ նզովիցն տերևովն չափ կամէր առնել, և ոչ պտղովն:

* Տիմոթէոս, եր. 111.

ա) և ոչ այդ  բ) և ոչ յետ Աբրահամու  գ) և ոչ այդ· դ) զՂազարոս  ե) նոյն  զ) մարդկաւրէն  է) զՂազարոս եդիք

1) Յովհ. ԺԱ, 34.  2) Մարկ. ԺԱ, 14. Համեմ. Մատթ. ԻԱ, 19.



|*Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ՝ ի Պարունակաց է:*

Իսկ եթէ դարձեալ ասիցէ. Ո՞ւր եդիք զՂազար[1], մարդկապէս վասն տեսատեսին եթէ՝ Ո՞վ մերձեցաւ յիս[2], և կամ՝ Զի՞ խնդրէք[3], և՝ Զի՞ զինէն ասիցեն մարդիկ, զՈրդւոյ մարդոյ[4], և կամ թե՝ Մանուկն աճէր և զօրանայր, կամ՝ Յառաջանայր աճմամբ և իմաստութեամբ[5], և կամ՝ Յառաջ քան զգիտել մանկանն զհայր և զմայր[6], ո՛չ տեսանես ի սոյն իսկ պատճառաց զառաւել գիտութիւնն. զի ի մարմնոյ և ի մարդկութենէ զպատմութիւնն: ‖ Զի որքան ի Հին կտակարանսն յերեւաց Աստուծոյ 167r. Հօր՝ խոնարհեալ առ ի հաւանութիւն մարդկան, ըստ անգիտութեան ասացեալս. բայց ոչ գոլով անգէտ Աստուծոյ զայս, եկեալ սուրբ Բանն ելից, կատարելով զասացեալսն. Հայր իմ գործէ, և ես գործեմ[7]: Քանզի որպէս հարցանէրն Յիսուս՝ զյառաջագիտութիւն ունելով, և ինքն Քրիստոս յօրէնսն հարցանէր. Ես ինքն եւ միշտ, և ոչ այլ ոք[8]: Քանզի որ ասացն Մովսիսի. Զի՞նչ է այդ, որ ի ձեռին քում է[9], նա ասաց, որ տեսանէին թե՝ Ես եմ Որ Էնն[10], և՝ Ո՞ւր եդիք զՂազարէ: Ոչ աւետ|արանն անգէտ է և ոչ Հին կտակարանքն անգէտ էին. քանզի՝ Ո՞ւր եդիք զՂազարն, ասէ՝ յանդիմանեալ կամեցեալ, որ ոչ զհաւատար հաւատոյ Սովմանիտեցոյն ունէին. զի թեպէտ նա առ մարդ ունէր, իսկ Մարթայեանքն ունէին առ Աստուած. եթե ասէ՝ Ո՞ յիս մերձեցաւ, զի ընքէնէ նա խոստովանեսցի, զի մի՛ վասն ընքեան ինքն կացցէ վկայ Որդին Աստուծոյ, այլ զի յայլոց խոստովանեսցի: Եւ թե ասիցէ. Ունի՞ք նկանակս ընդ ձեզ[11], զի զսակաւութիւն նկանակացն յայլոց նշանակեսցի. վասն որոյ առնելոց էր զնշա ‖ նագործութիւնն ի հինգ նկանակէն՝ զհինգ հազարս 167v. յագեցուցանելով արս: Եւ թե ասիցէ՝ Զի՞ խնդրէք, զի ցուցցէ զխնդրօղսն պատրեալս՝ զՅիսուս խնդրել, զբժիշկն թարգմանեալ և զՓրկիչն. զի յորժամ տեսցեն զսա՝

1) Յովհ. ԺԱ, 34.  2) Ղուկ. Ը, 45. Մկ. Ե. 30.  3) Յովհ. ԺԸ, 4.  4) Մատթ. ԺԶ, 13.  5) Ղուկ. Բ, 52. Համեմ. Ա, 80.  6) Ես. Ը, 4.  7) Յովհ. Ե, 17.  8) Համեմ. Երկ Օր. ԼԲ, 39. Ես. ԽԵ, 5.  9) Ելք Դ, 2.  10) Ելք Գ. 14.  11) Համեմ. Մատթ. ԺԵ, 34. Մրկ. Զ. 38. Ը, 5.

ի սորա փրկութենէն մերժեալ գտցին։ Որպէս վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ուսուցաք ոչ անմասն յառաջգիտութեան գոլով. քանզի որ ասէր զՄարթայեանսն՝ Ո՞ւր եդիք զնա, մօտ էր ի գերեզմանն, և մօտ եղեալն վասն մօտաւորացն հարցանէր. որ ի կողմանց|Գալիլէացւոց ի հեռաստանէ ցուցեալ յինքենէ թէ՝ Ղազարոս մեռաւ[1], մաւտ եղեալ ի տեղին՝ տգիտանայր. այլ կամէր ցուցանել, զի զայն առնէր, և ոչ ոք կատարելապէս նմա հաւատայր, զի ցուցցէ նա մեզ զիւր խնայումն և զբազում մարդասիրութիւնն։

ա) զԱստուածութեանն  բ) իբրու թէ  գ) կերպարանս  դ) ոչ դիւրաւ  ե) այլ ի ձեռն այնոցիկ  զ) զաստուածային ի մարդկան  է) գեղեցկութեամբն ոչ զարդարեալ  ը) ի պղծութեանց  թ) լաւ է ցուցի  ժ) չարութեանն  ժա) ոք ի չարութեան  ժբ) յեքոնիաս  ժգ) եթէ այլ  ժդ) ի չարութեան  ժե) ըստ նմա են  ժզ) ասացելոցն  ժէ) ամաչեսցէ ոք  ժը) կերակրոյս  ժթ) կատարեալ  ի) կենաց  իա) արքայութիւն  իբ) կեալ մարդոյն

1) Հռոմ. ԺԴ, 17.  2) Համա Մատթ. Դ, 4. Ղուկ. Դ, 4.



յարութեանն զուգահրեշտակ[ա] մեզ ցուցանելով զկեանս. զի կերակուր առ ի հրեշտակս[բ] ոչ գոյ. բաւական հաւատն է ի բաց թաւթափեալ[գ] յայսպիսի սպասաւորութենէ մարդոյն՝ այն, որ ըստ նմանութեան հրեշտակաց կեցցէ. ուրում վայել է մատուցանել զփառս՝ Հօր, Արարչին, և էակից Որդւոյն և համա|գոյակից Հոգոյն Սրբոյ, որ զմեզ դասակցեաց անմահութեան, Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով, այժմ և սկսեալքն և որ զկնի, և յաւիտեանս ամէն[դ]։

---

## ԲԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ.

**Երբ պարտ է մարմնացելոյ Բանին եւ մարդացելոյ Տեառն մերոյ՝ Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, վասն փրկութեան արարածոց կամաւորութեամբ գալ ի չարչարանս, եւ ո՛չ ա(ել) երկիւղ ի մահուանէ, եւ ո՛չ արեան քիրտն լինել, եւ ո՛չ ի հրեշտակէ զօրանալ:**

*Երանելոյն Ներսիսի, հետեւողի առաքելոց, եպիսկոպոսի Ղազրոնի Գալիլէացւոց՝ ի բանէն, որ զսուրբնին:*

‖ Այսպէս զՅիսուս ըստ երկուց խորհրդոց այլայլեն 186v.
և այլաձև մեկնեն՝ և Նիկողիտացիքն և Մարկիոն։ Իսկ որ զտասներորդ վիճակ զեպիսկոպոսութեան յառաքելոցն ընկալեալ՝ ուսոյց զայն, որ յօրինաց և ի մարգարէիցն քարոզեցաւ, Աստուած, իբր ոչ եթէ Հայր է Յիսուսի Քրիստոսի. քանզի զսա գիտացի, իսկ նա անգիտելի է՝ ասէ։ Եւ ի վերայ այսոցիկ ևս զՂուկա աւետարանն կրճատեալ, և որ ինչ միանգամ վասն ծննդեան Տեառն գրեալ է՝ ի

ա) Տէր, այլ յամենայն բայս, որ ելանէ բերանոյ Աստուծոյ. այլ և յարութեան զուգահրեշտակ  բ) առ հրեշտակս  գ) թաւթափել  դ) չ. ուրում վայել է—ամէն։

բաց հատին, և ի վարդապետական բանիցն Տեառն բազում ինչ ի բաց հանեալ։ Եւ յայնոցիկ, որ զաւետարանն ընձեռեցին առաքելոցն՝ զիւր աշակերտսն հաւանեցոյց. ո՛չ կատարեալ աւետարան, այլ հատած ինչ փոքր աւետարան ընձեռեաց նոցա։ Նոյնպէս և զառաքելոյն Պօղոսի զԹուղթսն՝ էր ինչ որ հատակոտորեաց, ի բաց բարձեալ՝ յայտնապէս համարձակեցաւ և կրճատեաց զԳիրս Սուրբս։ Քանզի Եբիոնացիքն, որ ըստ Մատթէոսի աւետարանն է՝ այնու միայն վարեցեալք. և Մարկիոն, որ ըստ Ղուկային կրճատեաց՝ յայնմանէ, որ պ(ա)հին առ
**187r.** նոսա, և զոր ընկալաւն՝ յայնմանէ հայ ‖ հոյութիւն խօսեցեալ։

Իսկ որ զՅիսուսն զատուցանեին ի Քրիստոսէ, և անչարչարելի կալ մնալ Քրիստոսին ասեն, և կրեալ զչարչարանս Յիսուսին՝ զըստ Մարկոսին պարծին ունել զաւետարանն։

Իսկ որք ի Վաղնտինայն՝ ըստ Յովհաննուն աւետարանին յաճապէս* վարին, և յայնքան անցին յանդգնութիւնս, զի և աւետարան մի՛ գոցի առ նոսա առանց հայհոյութեան. զի առանց ամենայն երկիւղի առանձին մատեան շարարկութեան յարմարեցին։ Բայց այն աւետարանն, որ յառաքելոցն աւանդեցաւ և պահեցաւ,|այն է ճշմարիտ, ո՛չ աւելի քան զյառաջասացեալսն և ո՛չ նուազ. զի բարեփառ եպիսկոպոսքն ամբողջ, առանց յաւելուածոյ և նուազութեան՝ զգրաւորական պատմութիւնն պահեցին, և պահեալքն ի նոցանէ ո՛չ յաւելուած ունին և ո՛չ պակասութիւն. զի ո՛չ աւելի քան զայն, որ էնն, և ո՛չ դարձեալ նուազ մարթ է գոլ աւետարանացն, ո՛չ ըստ թուոյ և ո՛չ ըստ չափոյ։ Քանզի սիւն և հաստատութիւն եկեղեցոյ աւետարանն է, և հոգի և կենդանութիւն, յիրաւի ի չորս ունելն մասունս. զի Բանն Աստուած
**187v.** երևեալ մարդկան՝ ետ զքառակերպեան աւետարանն. ‖ և միով հոգով շարունակեալ է, այլ ո՛չ ունի հաստատութիւն բանն, որ ի ձեռն հրեշտակաց կամ զօրութեանց եղանիլ աշխարհի, բայց միայն ի ձեռն Միածնին։ Հայր արար զարարածս. զի և կարօտ ինչ ո՛չ էր Աստուած արարածական զօրութեանն, այլ ո՛չ եթէ յումեքէ հարցափորձեալ լինի, զի գեր ի վերոյ ամենայնի է և ամենազօր. որ և յաղթողին յաղթեաց և զյաղթեցեալ մարդն ի բաց արձակեաց։ Քանզի միշտ նոյն ինքն Բանն Աստուած հզօրն հոգով գիտութեան և կատարել|ութեան երևեալ, և ո՛չ հոգով անգիտութեան և պակասութեան. քանզի զի՞արդ ի մի գոլ կարէր կատարելութիւն և պակասութիւն, գիտութիւն և անգիտութիւն, ճշմարտութիւն և մոլորութիւն, կարողութիւն և անկարութիւն. այլ նոքա այնքան յեղանջեն ի գաղտնի՝ ի ծածուկ բերելով յինքեանս զշնթփնթանս։ Այլ Որդին ի Հօրէ եկն իշխանական ճոխութեամբ, լրութեամբ զօրութեամբ։ Յումէ՞ երկնչէր, քանզի բարեգործող էր և Աստուած, ըստ որում Գիր ասէ. Կամիս չերկնչիլ յիշխանութենէ անտի, բարիս գործեա. ա ‖ պա եթե չար գործիս՝ երկի՛ր [1]։ Իսկ որք զընդդէմսն **188r.** այսոցիկ ասեն՝ անկար և անհզօր պատմեն զՏէրն, իբր թե ո՛չ կարացեալ գործել զբարի. և որ ո՛չ գործէ զբարի՝ ծառայ է մեղաց, ըստ Գրոց[2]։ Այլ մարդն յսկզբանն ազատ էր բարուք. քանզի ազատ է կամօք Աստուած, որ ստեղծ զմարդն ըստ նմանութեան իւրում. որպէս մարմին անկար է, այսպէս հոգիս յաւժար է՝ ի Տեառնէ վկայեալ[3]։ Այսինքն՝ կատարէ կարող յոր ինչ յօժարն է. և եթե զյօժարութիւնն հոգոյն խառնեսցէ ոք մարմնոյն, հարկ է կարաւղին իշխել և տիրել|տկարին, և ընկլանիլ մարմնոյն ի զօրութենէ հոգոյն, և գոլ այսպիսումն ո՛չ ևս մարմնական, այլ հոգևորական, ի ձեռն հոգոյն հասարակութեան։ Արդ, ուր հոգին Հօր է, անդ ո՛չ անկարութիւն մարմնոյն, այլ յաւժարութիւն հոգոյն. ընկղմեալ է անկարութիւն մարմնոյն ի կարողութենէ հոգոյն։ Որպէս ապականութեան ընդունակ է մարմինս, այսպէս և անապականութեան. այլ սատանայ իբր զի ապստամբ էր՝ զազգս մարդկան աւազակաբար կալեալ, տիրեաց, պակոյց զսիրտ մարդկան և ընդ երկիւղիւ իւրով փակեաց։ ‖ Այլ Բանն **188v.** Աստուծոյ մարդ եղեալ՝ յաղթեաց նմա և ետ ի կոխան հաւատացելոց իւրոց, և եբարձ զերկիւղ նորա, և եդ զահ նոցա ի վերայ նորա, և ետ իշխանութիւն առանց երկիւղի գնալ ի վերայ վիշապին և կոխել զաւիւծն[4], ըստ որում ասէ մարգարէն. Հանցէ ի ճշմարտութիւն զիրա-

* Յաճախապէս ?



[1] Հռով. ԺԳ, 3 և 4. [2] Հմմտ. Հռով. Զ, 16 չ. [3] Մատթ. ԻԶ, 41. Մրկ. ԺԴ, 38. [4] Հմմտ. Սաղմ. Ղ, 13.

ւունս[1]։ Զի թեպէտ Ադամ յաղթահարեցաւ և զարկաւ ի ձեռն յանցանացն, Որդին Աստուծոյ մատեաւ և յաղթեաց՝ կապեաց զհզաւրն և փրկեաց զստեղծուածս իւր։ Ապա թե ոչ յաղ|թեաց հակառակօղին՝ ոչ հերքեցաւ թըշնամին, իբր թե ոչ յաղթելոյ մահու, ըստ նոցա բանին, որ թագաւորեաց յԱդամայ մինչև ի Մովսէս. այլ յաղթող զաւրութիւնն աստուածութեամբն երևեցաւ, Որդին Աստուծոյ, կապեաց զհզօրն և խափանեաց զմահ[2]։

Իսկ Մարկիոնացիքն անչափ անկան ընդ երկիւղիւ դիւաց, որպէս և ոչ ի հեթանոսաց ոք։ Քանզի որքան զինքն մեծ ունի զոք՝ ընդ այլոյ իշխանութեամբ և երկիւղիւ է, ոչ լոկ ըստ փառաւորութեան չէ թագաւոր, այլ և ոչ ըստ հեզնութեան։ ‖ **189r.** Զայս յառաջագոյն ցուցաք, եթե ուր քաջութիւն է, անդ ոչ է վատութիւն, և ուր համարձակութիւն է՝ անդ ոչ է երկիւղ։ Քանզի յորժամ անբաժանապէս զմիաւորութիւնն ասասցես, լուծեալ լինի երկաբաժ ստորագրութիւնն։ Ապա զիա՞րդ յամենահաս գիտութիւնն տգիտութիւն լինէր. զի թե աւրէնքն յանգիտութենէ և ի նուազութենէ տուեալ լինէին, զիա՞րդ ի նմա ճառք, որ վասն Քրիստոսի, զսատանայական անգիտութիւնն լուծանել կարէին և հզաւրին յաղ|թել. քանզի ոչ ի նուազէն և ոչ ի նմանոյն հզաւրն յաղթեալ լինի, այլ յայնմանէ, որ առաւելն քան զամենայն է՝ Բանն Աստուծոյ, որ յաղթեաց հզօրին ե առ յաւարի զգանձս նորա։ Հզօր վասն այնորիկ ասի սատանայ, զի զարհուրեցուցանէ և երկեցուցանէ աւազակաբար զմարդիկ։ Իսկ որ լիութեամբ զկեանս, և զիշխանութիւն յինքեան ունի. քանզի երկիւղ և զարհուրումն և ախտ, և որ ինչ այսպիսիքս են, ըստ մեզ լինին՝ ըստ մարմնականս։ Իսկ ի վերայ հոգեկանացս, որ տարածեալ ուն ‖ **189v.** ին զլոյսն՝ ոչ այսպիսիքս հետևեցին աղէտքս. զի ոչ Աստուած յեղելոցն է, այլ եղեալքն յԱստուծոյ։ Քանզի ամենայն ինչ ի միոջէ և ի միոյն Աստուծոյ է։ Որպէս մահու ընդունակ է մարմինս մեր, նոյնպէս և կենաց, և այսոքիկ միմեանց տեղի տան, և երկոքին ոչ կան միան միմեանց ի միասին, այլ արտաքս մղեալ հանէ միւսն ի միւսէն, և յարեցելոյն ի բաց բարձեալ լինի միւսն։ Ի սկզբանն

1) Ես. ԽԹ, 3. 2) Հմմտ Համ. Ե, 14 չ.



մահն զօրացեալ մեղօքն ի բաց եհան զկեանս մարդոյն. իսկ զկնի կեանքն զօրացեալ ան|մեղութեամբ՝ արտաքս ընկեցին զմահ. զի թե մահն մեռագործեաց, ընդէ՞ր կեանքն ոչ կենագործեցին։ Այլ զի կենագործեաց՝ ըմբռնեաց զմահն, և ոչ ըմբռնեցաւ ի նմանէն. զի ոչ էր վաճառեալ ընդ մեղաւք։ Արդ, եթե մարմինս տկար է, հոգիս յօժար է, որպէս ասաց Տէրն, և եթե խառնեսցի յօժարութիւն ընդ տկարութեանն, յաղթողանայ հզօրն, և ընկղմի տկարն ի զօրութեանն. ոչ ևս տկար գոլ, այլ բոլորովին զօրաւոր։ Իսկ մարմնացեալ Բանն Աստուած՝ ի բաց բառ‖նալով **190r.** զանգիտութիւնն, ետ նոցա զգիտութիւն իւր։

*Նորին Իրանոսի՝ ի բանէն, որ ընդդէմ Կողարբոսի եւ նորին համախոհաց. որք ըստ անկատարելութեանն եւ ախտից յինքնդարձութեան, եւ տըրտմել երկնչել Քրիստոսի։*

Յումէ երկնչէր, որ հզաւրն էր և արարիչ ամենայնի. զի սուրբ առաքեալքն ցուցանէին զՔրիստոս խաչեցեալն ի Գրոց՝ սա գոլ Քրիստոս զՈրդին Աստուծոյ։ Իսկ որք հերձուն և բաժանեն զմի Քրիստոս՝ զՅորոբովամու զպատուհասն կրեցին։ Վասն զի են ոմանք, որ ասեն զՅիսուս |աման Քրիստոսի եղանիլ և զՔրիստոս ի վերուստ իբրև զաղաւնի իջանել ի Յիսուսն. քանզի լոկ ի մարդկանէ, այլ և յայնցանէ, որ յերկինս իշխանութիւնքն են, ըմբռնել զնա կարել. և գոլ որդի զՅիսուսն և հայր զՔրիստոսն և Քրիստոսի հայր զԱստուած։ Իսկ այլք դարձեալ կարծեաւք ասեն չարչարանս նմա, իբր զի բնութեամբ անչարչարելի է. զՅիսուս չարչարեալ ասեն և զՔրիստոս անչարչարելի մնացեալ. և զայն ի սատանայէ առեալ ըդկարծիսն՝ առ յեղծանել զհաւատ եկեղեցւոյ։ Այլ Յովհաննէս զմի և նոյն գիտէր զԲանն Աստուծոյ՝ զնա գոլ Միածին, ‖ **190v.** զմարմնացեալն զՅիսուս Քրիստոս՝ զՏէրն[1], Նոյնպէս և Մատթէոս զմի և զնոյնն Քրիստոս Յիսուս գիտէ՝ զմարդկութեան ծնունդն, որ ի Կուսէն պատմէ. զոր խոստացաւ Աստուած Դաւթի հաստուցանել յաթոռ նորա, զոր նախկին Աբրահամու խոստացաւ. Այս է գիր ծնընդեան Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրա-

1) Հմմտ Յովհ. Ա, 14.

համու[1]։ Ո՛չ ասաց եթէ՝ Գիրք ծննդեան Յիսուսի, և
լռեաց, այլ ի նմին ասաց զՔրիստոս, առ ի գիտել, եթե
Յիսուս է Քրիստոս և Քրիստոս է Բանն, որ ի Հօրէ՝ խոս-
տացեալն Աբրահամու։ Եւ ապա, զի ազատեսցէ|զմիտս
մարդկան ի կարծեաց, յայտնէ զ՚ ի Հոգւոյն յղացումն,
ասէ. Կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա
ընդ·մեզ Աստուած[2]. երեելագոյնս նշանակեալ ընդ մեզ
Աստուածն զծնեալն ի կուսէն փրկիչ աշխարհի։ Այլ ո՛չ
որպէս նոքայն դիւաբանեն, եթէ Յիսուս այն, որ ի Մա-
րիամայն ծնեալ է, և Քրիստոս այն, որ ի վերուստ էջ։
Յառաջագոյն տեսեալ հոգւոյն զխորամանգսն և զգուշացեալ
ի զրպարտութենէ զլացողութեանն՝ ասէր. Յիսուսի Քր-
191r. րիստոսի ծնունդ ‖ նորա էր այսպէս[3]։ Եւ զի մի՛ զնա լոկ
մարդ կարծեսցուք եղանել՝ ասէ. Յառաջ խոստացաւ
Աստուած ի ձեռն մարգարէից իւրոց Գրովք Սրբովք վասն
Որդւոյն իւրոյ, եղելոյ ի զաւակէ Դաւթի[4]. ճշմարտեաց
զմի Հայրն և զմի Որդին և ասէ. Որ հաւատայ, եթե Յի-
սուս Քրիստոս՝ յԱստուծոյ է ծնեալ, և որ ո՛չ հաւատայ
և քակէ զՅիսուս ի Քրիստոսէ՝ չէ նա յԱստուծոյ[5]։ Արդ,
ի բաց որոշեն զՅիսուս ի Քրիստոսէ, զոր և անչարչարելի
ասեն և երկուս անձինս յայտնեն. քանզի ոմն չարչարե-
ցաւ, և ոմն անչարչարելի|մնաց, ոմն ծնաւ, և ոմն ծնեալն
էջ. ո՛չ մի, այլ երկուք ցուցանին։ Բայց մի է ծնեալն և
չարչարեալն Յիսուս Քրիստոս, և նոյն ինքն Միածին Որ-
դին Աստուծոյ, զոր ետ Հայր վասն անբաւ մարդասիրու-
թեանն իւրոյ յաշխարհ[6]։ Եւ զի գիտէր Միածին Որդին
զբաժանմունս չար վարդապետացն և զխորամանգ խար-
դաղութիւնս նոցա, պատուէր տայր հաւատացելոցն իւրոց
ի սուտ մարգարեիցն, որ շրջին հանդերձիւք ոչխարաց, և
ի ներքոյ են գայլք յափշտակողք, որպէս ասէրն. Ի պտղոյ
191v. նոցա ծանիջիք զնոսա[7]։ Արդ, պտուղ նոցա բա ‖ ժան-
մունս յայտնէ. այլ զՔրիստոսն ասեն և այլ զՅիսուսն։
Իսկ Պօղոս Քրիստոս զայլ ոք ո՛չ գիտէ, բայց զխաչե-
ցեալն և զչարչարեալն՝ զմեռեալն և զյարուցեալն, զոր և
մարդ իսկ ասէ[8]։ Նոյնպէս և այլ առաքեալքն ցուցանեն

[1] Մատթ. Ա, 1. [2] Ա, 23. [3] Ա, 18. [4] Հռոմ. Ա, 2—3. [5] Ա, Յովհ. Ե, 1. հմմտ. Դ, 3. [6] Հմմտ. Յովհ. Գ, 16. [7] Մատթ. Է, 15—16. [8] Ա. Կորնթ. Ե, 6 հմմտ. Գաղ. Զ, 13. Ա. Տիմ. Բ, 5.



ի Գրոց՝ տանն Իսրայելի զսա զօլ Քրիստոս, զսա զօլ
Որդի Աստուծոյ՝ զԲանն իսկ, եղեալն մարդ ի սուրբ Կու-
սէն. բնութեամբ անտեսանելին տեսանելի եղև՝ ի միոջէ
և ի նմին Հօրէ, յաղթեալ և պարտեալ զԹշնամին մարդ-
կան, և շնորհեաց յաղթութիւն մարդկան։ Մատակարարք
բանին զԲանն ասացին Քրիստոս, զեղեալն մարմին՝
զմիաւորութիւնն քարոզեցին։ Զի Բանն մարմին եղև և
Որդին Աստուծոյ որդի մարդոյ. մաքուրն մաքրապէս
զմաքուրն բացեալ արգանդ, զի միշտ նոյն ինքն Բանն
Աստուծոյ միաւորակի եղեալն մարմին։ Այլ չարքն չա-
րաղանդքն՝ ներհակքն ուղղութեան, ստութիւն ի ներքս
ծածկեալ Թաքուցին ի Գիրս Սուրբս, զի անջատեալ ասա-
ցին զՅիսուս ի Քրիստոսէ և երկուս անձինս երևեցուցին։
Այլ մեք ուսեալք յԱստուածային Գրոց, եթե մի և նոյն է
Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ, որ ի ձեռն ‖ չարչա- 192r.
րանաց իւրոց հաշտեցոյց զԱրարիչն ընդ արարածս։

Երանելոյն Եփրեմի, եպիսկոպոսի Եդէսիեայ՝ Խո-
րին Ասորոյ, ուստի՝ Վասն սգաւորաց եւ յարու-
թեան եւ դատաստանի, ի բանէն՝ Որ հանապազ ա-
նարգէ զՈւռհայ։

Ցաղօթս կայր ի Գեթսեմանի՝ ո՛չ վասն իւր, այլ առ
ի լնուլ զպարտս իւրաքանչիւր իրաւականութենէ Հօր. և
յորժամ տեսանէր սատանայ զզօրութիւնն Քրիստոսի, դո-
ղայր և սոսկայր, և հանապազ դողացուցանէր զնա ահ նո-
րա։ Եւ զի ասէր|սատանայ ի փորձանսն՝ Ա՛րկ զքեզ աս-
տի ի վայր, զի հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն
քո պահել զքեզ[1], պատճառէր փորձիչն. այլ հրամանաց
նորա եին պաշտօնեայք. հրեշտակք զիմ՚րդ ունին զնա ի
վեր. որ զամենայն արարածս բանիւ հրամանաւ իւրով
ունի ի վեր՝ ի հրեշտակ ապաստան լինէր. և ո՛չ երբէք.
բայց ինքն ինքեամբ խորտակէր զչարն, և հրեշտակք
ապա մատեան և պաշտեին զնա. ո՛չ ըստ բաւականի պաշ-
տել զնա, քանզի ո՛չ ոք բաւականապէս կարէ պաշտել
զնա, ‖ թեպէտ խոնարհութեամբ երևեցաւ։ Այլ զի մեզ 192v.
եղեն պատճառք ապականութեան մարդկան, և մեղօքն

[1] Մատթ. Դ, 6. Ղուկ. Դ, 9—10.

յաղթողացաւ վիշապն առաջին և եկուլ զամենեսեան, վասն այնորիկ Տէրն մարմնով երևեալ՝ նմանութեամբ մարմնոյ մեղաց, և ի մարտի վիշապին թողացուցանէր զլար կարթին, զի երևեսցի յոխորդութիւն վիշապին։ Որպէս և Յոբ նախապատումն եղեալ, ասէր եթե՝ Կապեաց դանդանաւանտ ի կզակս նորա և շրօշակ յանգունս նորա, և ասէ թե՝ Որ առ մարդկան խորամանգ է, առ իս որպէս արջառ|խոտ ուտէ, և որ մարդկան բռնաւորն է՝ իմ կոխան է ոտից, և որ ի վերայ մարդկան յաղթողն է, այժմ առ իս որպէս ձագ կապեալ է[1]։

## Սրբոյն մեծի Լուսաւորչին Գրիգորի՝ ի Վարդապետութենէն, ի չարչարմանց բանէն*։

Ապա առնու այնուհետև զյառաջադիր խորհուրդ չարչարանացն Յիսուս կատարել[ա]. վասն որոյ բազում անգամ գուշակէ[բ], եթե մեռանելոց է[գ]։ Եւ վասն մինր[դ] արդեւք գայցէ ի մահ[ե]. մի՞թէ պարտական իցէ[զ] մահու։ Այլ մարգարէն ասէ[է]. Անաւրէնութիւն ոչ[ը] գործեաց, և ոչ **193r.** գտաւ || նենգութիւն ի բերան նորա[2]. զոր ինքն[թ] իսկ ասէր. Ո՞վ ի ձէնջ յանդիմանեսցէ[ժ] վասն մեղաց[3]։ Իսկ ըստ օրինաց ինչ ոչ[ժա] պարտական մահու, այլ ասէ. Եկի կատարել զօրէնսն[ժբ][4]. որում առաքեալն իսկ[ժգ] վկայէ եթե՝ Կատարած օրինացն Քրիստոս է[5]։ Իսկ բռնաւորաց[ժդ] արդեւք ի հարկէ ոչ[ժա] մեռանիցի, այլ ասէ. Անձամբ իմով դնեմ զանձն իմ, և ոչ ոք հանէ յինէն. անձամբ, ասէ, զանձն իմ դնեմ, զի միւսանգամ առից զնա[6]։ Իսկ ընդէ՞ր կամիցի զանձն դնել անպարտակ|անն մահու. Ես եմ, ասէ, հովիւ քաջ, որ ի վերայ խաշանց[ժե] մեռանիմ[7]. յորո՞ց խաշանց արդեւք. ի հարթուցելոցն, ի փախուցելոցն և[ժզ] գազանակուր եղելոցն, զորոց մարգարէն

* Ըզանթանգիղոս, 1909. եր. 227.

ա) կատարել յԵրուսաղէմ բ) գուշակեաց գ) մեռանելոց է և յերիր աւուր յառնելոց դ) ո՞յր ե) ի մահն զ) ինչ իցէ է) ասէ թէ ը) ինչ ոչ թ) և ինքն ժ) յանդիմանեսցէ զիս ժա) չ· ժբ) Կատարել եկի զօրէնս ժգ) և առաքեալ ժդ) ի բռնաւորաց ժե) խաշանց իմոց ժզ) ի

1) Յոբ. Խ, 21. Համմ. 19. 10. 24. 2) Ես. ԾԳ, 9. 3) Յովհ. Ը, 46. 5) Մատթ. Ե, 17. 4) Հռոմ. Ժ, 4. 6) Համմ. Յովհ. Ժ, 12, 17. 7) Յովհ. Ժ, 11, 15



յառաջագոյն[ա] ասաց. Ամենեքեան[բ] իբրև ոչխարք մոլորեալք, այր[գ] ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. Տէր[դ] մատնեաց զնա առ մեղս, և յանաւրէնութենէ ժողովրդեանն[ե] ի մահ վարեցաւ[1]։ Վասն որոյ քահանայապետն տիրասպան ազգին յակամայ[զ] մարգարէացաւ, ասէ[է]. Լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, և մի ամենայն ժողովուրդս[ը] կորիցէ[2]. || բայց նա ոչ ասի[թ] ի **193v.** վերայ ազգին միայն, այլ զի[ժ] զամենայն որդիսն Աստուծոյ՝ զցրուեալսն ի բաժանել ազգացն, ժողովեսցէ ի մի։ Վկայեաց և Պաւղոս և ասէ[է]. Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ. զի մինչդեռ հեթանոսքն եաք[ժա], Քրիստոս վասն մեր մեռաւ[3], եթե՝[ժբ] Ի ժամանակի ի վերայ ամբարշտաց մեռաւ[4]։ Եւ արդ, եկեալ աշակերտաւքն ի լեառն Ձիթաստանեաց, զի կատարեսցի մարգարէութիւնն[ժգ], որ ասէ. Եկեսցէ հասցէ Տէր Աստուած մեր, և ամենայն սուրբք ընդ նմա, և կացցեն ոտք նորա յաւուր այնմիկ ի վերայ լերինն Ձիթենեաց՝ հանդէպ Երուսաղեմի, յարևելից կուսէ[5].|և տօնական[ժդ] աւուրն օրինականացն[ժե] գայ աշակերտաւքն կատարել զօրէնսն և յայտնել զխորհուրդ[ժզ] հոգևորական տաւնին, և յառաջ քան զչարչարանսն զփրկութիւնագործ զմարմինն[ժէ] իւր և զարիւնն[ժը] պարգևէ աշակերտացն։ Տեսանե՞ս, զի կամաւ, և ոչ ի բռնութենէ չարչարի Որդին Աստուծոյ, որ յառաջագոյն քան զչարչարանսն[ժթ] ճաշակեալ լինի։ Յետ այսորիկ աղօթս առնէր[ի] խորհրդիւ ի լերինն առ Հայր, ոչ վասն իւր զանգիտելով[իա], այլ զի ցուցցէ, եթէ միակամ ընդ Հօր || զառաջի եդեալսն գործեսցէ[իբ]. **194r.** վասն որոյ բազում անգամ ասացեալ յառաջագոյն, եթե ոչինչ յանձնէ[իգ] խօսիմ և ոչ յանձնէ ինչ գործեմ, այլ Հայրն, որ բնակեալ է յիս[իդ][6]. մանաւանդ թե լնուլ[իե] զմարգարեականն,

ա) յառաջագոյն մարգարէն բ) Ամենեքին գ) և այր ամենայն դ) և Տէր ե) ի մեղս մեր և յանօրէնութեանցն ժողովրդեան իմոյ զ) քահանայապետ ազգին տիրասպանուաց ակամայ է) թէ ը) ազգս թ) ասէ ժ) զի և ժա) մեղաւորքն էաք ժբ) և թէ ժգ) զմարգարէին ժդ) ի տօնական ժե) օրինականաց ժզ) զխորհուրդս ժէ) զմարմին ժը) զարիւն ժթ) ըզ. չարչարելն ի) առնէ իա) ինչ զանգիտելոյ իբ) գործիցէ իգ) թէ ոչ յանձնէ ինչ իդ) Հայր, որ բնակեալն է յիս՝ նա գործէ։ իե) մանաւանդ լնու

1) Ես. ԾԳ, 6—7. 2) Յովհ. ԺԱ, 50. 3) Հռոմ. Ե,8. 4) Ե, 6. 5) Զաք. ԺԴ. 5. 4. 6) Յովհ. ԺԴ, 10. Համմ Ը, 28.

եթե՝ Փոխանակ սիրոյ իմոյ մատնեին զիս, այլ ես յաղօթս կայի[1]. և յայտ արարեալ աշակերտացն զմիակամութիւնըն[ա] ընդ Հօր, և ապա իջանէ ի լեռնէն՝ փութացեալ վասն անհաւատիցն դնել զանձն։

*Երանելեացն ՅԺԸ. սուրբ հարցն ի Նիկիայ ժողովոյն՝ յԵրախայից վարդապետութեն|էն, ի հինգերորդ գլխոյն:*

Արդ, ընթերցեալ ի վախճանի աւետարանացն, ազդէ վախճանն զ'ի մարդկութեան գործս և զիրս Տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ, Փրկչին մերոյ. զի ի սկզբան աւետարանին լուարուք՝ զիարդ ի Կուսէն իբր զմարդ ծնաւ, և զկնի այնորիկ ընթերցեալ եղև ձեզ սակաւ ինչ յաստուածազան և ի փառաւոր գործոց նորա. իսկ ի կատարածի ընթերցուածոցն հինգերորդի լուարուք և զյաղագս կրից մահու նորա. բայց ուսեալք լինիջիք և յետ այսորիկ յերկինս վերանալոյ մարդկութեան նորա։ Մեք անդուստ առնումք սկիզբն ‖ 194v. զյառաջգիտութեանն և զճըշմարտութեանն, այլ և զմիւսոյ գեղեցիկ վարուց զհոգեւորականի կենացս զառհաւատչեայ ընկալեալ յանձինս՝ ըզժառանգութեան փառաց հանդերձելոյ յանվախճան յաւիտենին։ Աստուած ելով Քրիստոս՝ մարդ եղև, զի զսուգս և զողբս մարդկայինս ի ձեռն հողմակիր մարմնոյն ապրեցուսցէ և փրկեսցէ զսա յընբռնողէն մոլորութեան և մեղաց. քանզի ոչ կամեցաւ Տէր իբրև զՏէր ի վերայ յարձակիլ, իբր թե զօրութեամբ իւրոյ աստուածութեանն քակել և խափանել զզօր|ութիւնն զայն, որ զաւրացեալ շահեալ ունեին մեզօքն. այլ իբրև զմարդ ի դուրս գոլ և յառաջ անցանել կամեցաւ, զի զիշխանին մեղաց զզօրութիւնն տկարացուսցէ՝ ի կարութենէ մարդկան յաղթահարեալ, իսկ զմարդիկ ուսուսցէ. զի կարէ մարդկային բնութեամբս հերքել զամենայն զօրութիւն մեղաց և զչարութիւն դաւաճանողաց։ Եւ մարդ եղեալ Տէրն, և էր դարձեալ Աստուած, որպէս էրն յառաջ քան զմարդանալն, որպէս և է Աստուած և Տէր ամենեցուն և թագաւոր յաւիտենից և արարիչ. բայց վասն զի իբրև մարդ երևե-

ա) զմիակամութիւնն իւր.
1) Սաղմ. ՃԸ, 4.



ցաւ և իբրև մարդ ի ‖ կենցաղիս յայսմիկ վարեցաւ, 195r. պարտ էր նմա մեռանիլ իբրև զմարդ, զի մի ինչ թողցէ յորմէ կամաւք յանձն էառ՝ ի տկարութենէ մարդկանացու բնութեանս մերոյ։ Եւ այլազգ դարձեալ գիտել պարտ է, զի հարկաւորապէս մեռաւ, զի մի կարծեսցի նոյն ինքն մարդկութիւն Փրկչին երկնչիլ ի մահուանէ. այլ առաւել յանցանէ, յորոց ինքն զչարչարանսն կրեաց, ըստ տկարութեան մարդկութեան սովաւ ուսուսցէ զմարդիկ։ Արդ, օրինակ տացէ ի նա հաւատացելոց կենաց աշխարհիս այսորիկ|ոչինչ հոգ տանել, իբր զի սակաւ է և դժնդակ է և յոյժ տրտմագին, և քամահել զմարմնական մահու՝ վասն հանդերձելոց գեղեցիկ յաւիտենական կենացն և վասն ի նա Քրիստոսի համբերեցելոյ յուսոյն հանդերձելոյ անապականի և փառաւոր երանութեանն. և որպէս զիարդ իւրաքանչիւր ոք ի հաւատացելոցն իւրով ըստ յանձին առաքինութեանն արութեամբն քամահիցէ զմարմնական մահուն, սովաւ քակտեսցէ և խափանեսցէ զքաջալերութիւնն և զսպառնումն և զխրոխտանս՝ զայն, որ ‖ զիշխանութիւն մահուն ունէր, որպէս զի և զմրցական ընթացեալ՝ 195v. տարցի զընդդէմ թշնամոյն յաղթութիւն, որ է յերկինս պսակ փառաց հրեշտակաց։

*Երանելոյն Ագաթան(գ)եղեայ Հռոմայեցւոյ, ատենական դպ(ը)ի մեծի արքային Տրդատայ, որ զԳիրս սրբոյն Գրիգորի մատենագրեաց, ի բանէն, որ զլեռնակեաց անապատասէր վարուց ծննազեաց սրբոյն Գրիգորի պատմէ*:*

Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւնս[ա] կանոն աշակ|երտելոցն դնել, և[բ] մանաւանդ յուշ առնելով տէրունականն[գ] զմիոյն զմիայնին[դ] զիմաստնոյն Աստուծոյ. քանզի ասէ. Սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել[1]. ուր և[ե] բազում անգամ ժողովեալ[զ] զաշակերտսն ուրոյն, և աննիազական անձամբ[է] օրինակ կատարելոցն լինէր. յորժամ ի Թաբաւրական լե-

* Ագաթանգեղոս, եր. 444.
ա) առաքինութիւն   բ) չ.   գ) զտէրունականն   դ) զմիայնոյն   ե) Որոյ   զ) առեալ   է) անձամբն
1) Գործք. Ա, 1.

րինն զաւետեացն զերանութիւնն[ա] տայր, կամ յոր[բ] ի նմին լերինն զկեանսնական[գ] աղօթսն առնէր, մինչդեռ **196r** աշակերտքն ի Տիբերական ծովուն նաւէին։ ‖ Եւ դարձեալ՝ յաւուր[դ] Բաղարջակերացն յօրինական տօնին զգիշերական աղօթսն[ե] երիցս անգամ ի Ջիթաստանեաց լերինն առանձին[զ] մատուցանէր։ Ուստի յայտ է[է] և առանց հետևելոյ[ը], եթէ ոչ վասն անձին Ամենատէրն զայն առնէր[թ], այլ համաշխարհի յուսումն զայն առնէր՝[ժ] արէն[ժա] աւրինակ հնազանդեցելոցն[ժբ]. վասն որոյ ասէրն[ժգ] իսկ. Արթուն կացէք և աղօթս արարէք[ժդ], զի մի մտջիք[ժե] ի փորձութիւն[1]։ Իսկ արդ, եթէ թեթևագոյն արուեստից պակասագոյն|ի գիտութենէն[ժզ] ազգք երկրածնաց, ո՜րչափ ևս առաւել այնմ արուեստի տգէտք են[ժէ] որ ընդ աստուածախօսս[ժը] կատարի բան, որում և երանելին Պօղոս ամենեցուն տգիտանալ ասէ. վասն որոյ և զամենակեցոյց Հոգին ի թիկունս հասանել անմռունչ հեծութեամբ բարեխաւս գիտէ[2]։ Իսկ արդ, յորժամ լսիցեմք եթէ՝ Սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել, ապաքէն առնել՝ զի ուսուցէ, ոչ զի[ժթ] պարգևեսցի՝ իմանալի է. և բարեխօսելն՝ որ ինչ վասն սրբոցն[ի], և բարեխաւսելն[իա] **196v.** Հոգոյն Սրբոյ՝ ‖ առ ի վարդապետելոյ մեզ, զի և մեք[իբ] միմեանց բարեխաւս իցեմք, ոչ[իգ] եթէ առ բարձրագոյնն[իդ] ոք Միածնին կամ Հոգոյն Սրբոյ բարեխօսելն գիտելի է. քանզի մի պատիւ[իե] է աստուածականն, և ոչ բազում[իզ]։

Նրանելոյն Աթանասի եպիսկոպոսի Աղէքսանդրու՝ ի բանէն, որ-յաղագս խաչին։

Մատնի Տէրն, և մատնելով ոչ զանգիտեաց և ոչ զարհուրեցաւ ի մահուանէ, այլ յաւէտ մերկացաւ առ նա և հալածէր զփախուցեալ օձն, զի ոչ իբրև|մեռանելով

ա) զերանութիւն  բ) և կամ յորժամ  գ) զկանոնական  դ) յաւուրս  ե) զգիշերոյն աղօթս  զ) առանձինն  է) Ուստի և յայտ իսկ է  ը) վեհերելոյ  թ) չ. զայն առնէր  ժ) գործէր  ժա) որ է  ժբ) հնազանդելոց  ժգ) և ասէրն  ժդ) յաղօթս կացէք  ժե) մտանիցէք  ժզ) ի գիտութենէ են  ժէ) ո՜րչափ այնմ արուեստի որ համարիցի անգիտանալ  ժը) աստուածախօսսն  ժթ) և ոչ եթէ զի  ի) բարեխօսելն նորա վասն սրբոց  իա) բարեխօսել  իբ) զի ընդ  իգ) և ոչ  իդ) բարձրագոյն  իե) միապատիւ  իզ) բազմարար

1) Մատթ. ԻԶ, 41. Մկ. ԺԴ, 38. Ղուկ. ԻԲ, 40.  2) Հռոմ. Ը, 26.



Տէրն, այլ իբրև զմահ հալածելով, և այսպէս իսկ զԳիղատոս ապաբանեալ՝* ոչինչ էր, եթէ ոչ դատեցեալն զօլ Աստուած, զի և դատապարտեալ ի Գիղատոսէ՝ տեսլեամբ երևեալ լինէր նորին կնոջն. զի լռութեամբն զօրութիւնն հիացի, իսկ հարցկութեամբն ծանիցի, եթէ ոչ զմարդ դատիմ, այլ զԱստուած։ Վասն որոյ երկուցեալ դատօղն ի դատիցելոյն և յաւէտ ինքն դատապարտեալ երկիւղիւ դատեցելոյն. քանզի դատելով զՏէրն՝ ինքն զարհուրէր, վասն ‖ որոյ 'լուացեալ զձեռն՝ ասէր. Անպարտ եմ ես յա- **197r** րենէ յայսմանէ[1]։

Նորին՝ ի ծնունդն եւ ի չարչարանսն։

Զի և փրկութիւն զիմրդ լինէր, եթէ ոչ յԱստուծոյ պատկերին եկեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Արդ, ի ձեռն հրեշտակաց ոչ էր հնար փրկել, քանզի նոքա ոչ են իսկ պատկեր, և ոչ էր հնար հրեշտակաց զփրկութեան գործ գործել, բայց միայն Բանին Աստուծոյ փրկել, որ արար զմարդն ի պատկեր Աստուծոյ, որ յերևելն մարմնով զդևսն ամենայն հալածականս առնէր ի մարդկանէ, և ինքն ոչ էր փրկեալ ընդ երկ|իւղիւ ուրուք, այլ զամենայն արարածս ընդ իւրով երկիւղիւն փրկեալս ունէր. վասն զի զօրութիւն էր, վասն այնորիկ նուաճէր ընդ ընքեամբ զօրութեամբ Հօր իւրոյ յաստուածեղէն զալստեանըն իւրոյ զգոյսս ամենայն, և հանէր յաղթութիւն զիբաւունս[2]։ Քանզի ոչ եթէ ի ծնանելն ի Կուսէն ըլկեալ ինչ լինէր, և կամ յորժամ ի մէջ մարդկան էր՝ առնոյր ինչ յումեքէ, այլ ինքն կենագործէր զամենայն, որպէս ի սկզբանց նոր յաւիտենից։ Արդ, յորժամ ասիցեն աւետարանիչքն, եթէ ծնաւ ի կուսէ, կեր և արբ, ‖ ոչ եթէ այլոյ **197v.** ուրուք էր մարմինն, այլ նորուն Տեառն մեր. զի նոյն ինքն եղև մարդ և ճշմարտութեամբ մարմին զգեցաւ, և ոչ կերպարանաւք։ Այլ և ցուցանէր զփառս աստուածութեանն ի յինքեան՝ սաստէր ի վերայ դիւացն, և ոչ կարեին հանդուրժել, այլ ի փախուստ դառնային. քանզի հզաւր էր Տէրն, և ոչ տկարանայր բան զօրութեանն Աստուծոյ, այլ, և ոչ մարմնոյն մարթ էր տկարանալ, վասն զի ոչ էր այլ ուրուք մարմին, այլ նորուն մարմինն և զօրութիւն։

* Լուսանցքում՝ պատասխանեալ.

1) Մատթ. ԻԷ, 24.  2) Համա. Մատթ. ԺԲ, 20.

Վասն այնորիկ անվայելուչ էր նմա փախչել ի մահուանէ և ընդ երկիւղիւ արարածոց անգանել, այլ առաւել յանձն առնուլ, զի ջնջեսցէ զմահ և բարձցէ զերկիւղ նորա ի մարդկանէ։ Վասն այնորիկ ոչ էր տկարութեամբ մահն Տեառն, այլ զօրութեամբ. զի որ զամենեցունց տկարութիւն բառնայր՝ ինքն զիա՞րդ տկարանայր. այլ որպէս քաղցիւն և ծարաւովն և մահուամբն զմարդկութիւնն ստուգէր, նոյնպէս և նշանօք և զօրութեամբ զաստուածութիւնն յայտ առնէր։

Երանելոյն Կիւրղի Երուսաղեմի եպիսկոպոսի
198r. || ի մեկնութենէ ընթերցուածոցն. Տէ՛ր, ո՞վ հաւատաց. ի բանէն՝ Պարծանք սրբութեան։

Ո՛չ բանիւք յանցեաւ Քրիստոս, ոչ գործովք մեղաւ, ոչ խորհրդովք նենգեաց, զի՝ Մեղս, ասէ, ոչ արար և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա[1]. որ ընդ հայհոյելն ուրուք չհայհոյէր, որ ընդ չարչարելն ուրուք չսպառնայր. որ եկն ի տեղի չարչարանաց ոչ ակամայ կամաւք, այլ կամօք կամաւորութեան։ Զի թէ ոք հրաժարէր և ասէր. Քա՛ւ քեզ, Տէր, մի՛ եղիցի քեզ այդ, սաստէր նոցա՝ Յետս երթ, զի ոչ խորհիս զԱստուծոյ, այլ զմարդկան[2]։ Իսկ արդ, կամի՞ս գիտել դու, եթե կամօք կամակարութեամբ եկն ի չարչարանաց տեղին. այլ ակամա մեռանին, և ոչ գիտեն իսկ։ Իսկ սա յառաջագոյն ասէր վասն չարչարանացն. Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և Որդի Մարդոյ մատնեսցի ի խաչ ելանել[3]։ Բայց գիտե՞ս դու, թէ ընդէ՞ր ոչ խուսէր ի մահուանէ անտի Մարդասէրն. զի մի՛ միանգամայն տիեզերք աշխարհի կորիցեն։ Եւ դարձեալ հաստատեաց զերեսս իւր՝ դէմ եդեալ գալ յԵրուսաղէմ. եթէ փառս իւր համարէր զխաչն Յիսուս, լո՛ւր դու նմա, զի
198v. ասէր, և մի՛ յինէն համարիս ուս || անել։ Մատնէր զնա Յուդայ՝ զրկող եղեալ առ տանուտէրն, որ արդեւք էլ ի սեղանոյ անտի և զաւրհնութեան բաժակն առեալ էր, և փոխանակ ուտելոյն և ըմպելոյն՝ զարիւն արդար կամէր հեղուլ. Որ եկեր զհաց նորա յաճախեաց ի վերայ նորա առնել զխաբէութիւն[4]. այն ինչ անդէն ձեռքն կարկա-

¹) Հմմտ. Սաղմ. ԼԱ, 2. Ա. Պետր. Բ, 21. ²) Մատթ. ԺԶ, 22—23. ³) Մատթ Ի, 18. Մկ. Ժ, 33. Ղուկ. ԺԸ, 31—33. ⁴) Սաղմ. Խ, 10. Յովհ. ԺԳ, 18.



ռեալ զաւրհնութիւնն առնուին, և անդէն առ նմին վասն արծաթոյ մատնութիւն մահու պատրաստէր. և թեպէտ յանդիմ(ան)եցաւ և լուաւ թէ՝ Դու ասացեր[1], դարձեալ անդրէն ի նոյն ելանէր.|ապա ասէ Յիսուս. Եկն եհաս ժամ, զի փառաւորեսցի Որդի Մարդոյ[2]։ Իսկ արդ, Յիսայի սղոցել չամաչէր, և Քրիստոս ի վերայ աշխարհի մեռանել ամաչէ՞ր. Այժմ փառաւորեցաւ Որդի Մարդոյ,[3] ասէ. իբրև ոչ թէ յառաջ չունէր զփառսն, զի փառաւորեալ է փառօք յառաջ քան զարարածս[3], այլ փառաւորեալ էր յառաջ իբրև զԱստուած, բայց այժմ առաւել փառաւորեցաւ. զի զհամբերութեան պսակն յանձն իւր առնուլ հաւանեցաւ. ոչ բռնադատութեամբ ինչ թող յիւրմէ զկենդանութիւնն և ոչ բռնա || զբաւսութեամբ ինչ զե- 199r.
նաւ. զի լո՛ւր դու, զի՞նչ ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ և իշխանութիւն ունիմ առնուլ յիս[4]. կամաւք թոյլ տամ թշնամոյն. զի թե ես ոչ կամէի, այս ոչ լինէր, որ լինին։ Այլ սա աւանիկ կամօք կամակարութեամբ եկն ի տեղի չարչարանացն. խնդալով գայր ի տեղի չարչարանացն՝ քաջութեամբ. ժմբտելով գայր ի տեղի պսակացն, ուրախութեամբ գայր ի փրկութիւն ամենայն մարդկան. չէր ինչ ամաչեցեալ յերկնից, զի զփրկութիւն բարձեալ բերէր ամենայն արարածոց իւրոց. զի ոչ եթե մարդ ոք էր| դուզնաքեայ, որ չարչարեցաւն, այլ Աստուած, որ մարմին զգեցաւ և զհամբերութեան պսակն առեալ՝ ճգնութեամբ պատերազմէր։

Ի նոյն բանէ.

Զի որպէ՞ս պարտ և պատշաճ էր ինձ զօրացուցանել զիմ աշակերտսն, և թե որ ի վերայ ճշմարտութեանն մա՞հն էր, և ես զանգիտեալ խուսափէի. զի ես ինձէն ասէի թե՝ Որ սիրէ զանձն իւր կորուսանէ զնա[5]. արդ, եթե կենասէր լեալ էի, ապաքէն ոչ առնէի զոր ուսուցանէին։ Արդ, ինքն Աստուած իսկ էր, և ի վերայ մարդկան այսց անցից յանձն առնու, զի առ յապա մարդիկ ի վերայ || 199v.
մարդկան չարչարանս յանձն առնուլ մի՛ ամաւթ համարեսցին։

¹) Մատթ. ԻԶ, 25. ²) Յովհ. ԺԳ, 31. Հմմտ. ԺԲ, 23. ³) Հմմտ. Յովհ. ԺԷ, 5. ⁴) Յովհ. Ժ, 18. ⁵) Մատթ. Ժ, 39. Մկ. Ը, 35. Ղուկ. Թ, 24. ԺԷ, 32.

*Երանելւոյն Եպիփանու Կիպրացւոյ, եպիսկոպոսի Կոստանդեայ քաղաքի՝ ի պարունական խօսիցն, ի բանէն, որ զՂուկիանոսացն։*

Ինքն իսկ Փրկիչն ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ և առնուլ զնա[1], և՝ Ես եմ հովիւ քաջ, որ դնեմ զանձն իմ ի վերայ ոչխարաց[2]. և՝ Անձն իմ խռովեալ է, ասէ, և զի՞նչ ասացից. իբր յերկուանալով ասէ. Զի՞նչ ասացից, Հայր, ապրեցո՛յ զիս ի ժամէս յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս[3]. զի|ցուցցէ, եթե կամաւ նորա աստուածութիւն նորա յայս եկն. բայց խռովեցաւ, զի տեսիլ ճշմարտութեան մարմնով իւրով գալստեանն մի՛ պակաս երևեսցի. քանզի ոչ կարծեօք էր մարմնով գալուստն։ Այլ և վասն նմանութեան թագաւորի մեծի՝ ունելով պատերազմ առ կրսերագոյն քան զինքն, և ծանուցեալ, թէ նա հրաժարէ և ի փախուստ դառնայ, և ապականէ յետ փախստին բազում գաւառ հնազանդելոց իւրոց. իսկ իւր իմաստութեամբն պատճառ իցէ թի- 200r. կունս շրջել և փախչել, մինչև նա ‖ առցէ զքաջալերումն՝ կարծելով, թե մեծ թագաւորն ի յերկիւղէ ի փախուստ դարձաւ, և հալածեսցէ զնա. և դարձցի թագաւորն իւրով զօրութեամբն և զամենայն ընդ ձեռամբ ըմբռնեսցէ՝ զտկարագոյնն և զընդդիմացեալս։ Սոյնպէս և Տէրն մեր ոչ երկնչէր ի մահուանէ, որ յառաջ քան զգալն իւր ի չարչարանս նշանակեաց ի ճանապարհորդութեան թէ՝ Պարտ է Որդւոյ Մարդոյ մատնել, ի խաչ ելանել և յերիր աւուր յառնել[4]։ Եւ ի Պետրոսի յասելն թե՝ Քաւ լիցի, Տէր, ընկալեալ ի նմա|նէ զցասումն, թե՝ Յետս երթ իմ, սատանայ, զի ոչ խորհիս դու զԱստուծոյ, այլ զմարդկան[5]։

Իսկ զիա՞րդ սա զկնի աղօթս առնէ՝ զանց առնել զբաժակն, զի մի՛ արբցէ, որ ասել՝ յառաջ քան զժամ մահուն. գէթ վասն կարծմանն զնա ոչ կարէր աղօթել անցուցանել զինքեամբ զբաժակն, այլ յառաջ կոչէ ի ձեռն այսպիսի դիմաց զկրտսերագոյն ընդդիմակացն. զի նորա կարծելով փախուցեալ և երկուցեալ զՓրկիչն՝ մահապարտ

1) Յովհ. Ժ, 18. 2) Յովհ. Ժ, 11. 3) Յովհ. ԺԲ, 27. 4) Ղուկ. ԻԴ, 7. Համտ. Մատթ. ԺԶ, 21. ԺԷ, 21. Ի, 18. Մկ. Թ, 30. Ժ. 33 եւն. 5) Մատթ. ԺԶ, 22—23.



ստիցէ որք ի մահ զնա ածեն, որ լիցի ի մահուանէ նորա փրկութիւն և անմահութիւն։

‖ *Երանելւոյն Գրիգորի Աստուածաբանի Նազազացւոյ, ուստի Աղքատութեան, ի բանէն՝ Ա՛րք եղ(բ)արք։* 200v.

Բարեաւք է աղօթք ի տքնութիւն, և հաւանեցուսցէ զքեզ Աստուած տքնել նախ քան զչարչարանսն և աղաւթելն։

Նորին՝ յերրորդ ճառէն, զժ. բանն լուծանէ, ի բանէն՝ Վասն զի քեզ ընդ խորհրդոցն*։

Եւթներորդ ասասցի իջանելն ի[ա] յերկնէ Որդւոյ, ոչ զի արասցէ զկամս իւր, այլ զԱռաքչին։ Արդ, եթէ ի ստորինս[բ] իջելոյն յինքենէ[գ] այսոքիկ ասացեալ էին, ասէաք թերևս արդեօք՝ իբր[դ] ի մարդոյ տպաւոր|եալ[ե] զբանն, որ ըստ Փրկչին իմանի. քանզի նորա կամելն ոչ ընդդէմ Աստուծոյ է՝ յԱստուծոյ բովանդակն, այլ իբրև զմեզ մարդկային[զ] ախորժակացս, որ ոչ զհետ երթայ աստուածայնոյն[է], այլ ընդդէմ կայ, որպէս բազում ուրեք[ը], և մարտնչի, զի զայնոսիկ այսպէս իմասցուք[թ]. Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս. սակայն ոչ որպէս ես կամիմ, այլ քո զօրասցի[ժ] կամքդ[1]։ Իբր[ժա] ոչ եթե կարողութիւն է[ժբ], կամ ոչ կարողութիւն՝ զանգիտանալ[ժգ] ի դէպ էր, և ոչ կամացն հակառակ ի ներքս ածել կամս, ‖ այլ զի առաջին է բանս[ժդ], որ էջն, և ոչ որ առաւն. այսպէս հանդիպեսցուք, իբրև ոչ[ժե] եթե Հօր, այլ որպէս թե ոչ իցէ՝ բանս է, զի լինիցի այսպէս և իմն ժողովումն. Ո՛չ զի արարից զկամս իմ[2]. զի ոչ իսկ[ա] են իմն ի քումէդ[ժզ] բաժանեալ, այլ հասարակաց իմ և քոյ են, որպէս մի Աստուածու- 201r.

* Համտ. Տ. 46=4146. p. 63. v.

ա) չ. բ) ոչ ի ստորինս գ) յինքենէ դ) ասեաք թերևս արդեւք իբրեւ ե) տպաւորել զ) այլ ըստ մեզ իբրեւ մարդկային է) ոչ ամենայն իրուք զհետ երթա աստուածայնւոյն ը) ուրուք թ) իմասցուք այսպէս ժ) զօրասցին ժա) իբրև ժբ) իցէ ժգ) այն անգիտելի ժդ) առաջին է բանս այս ժե) իբրեւ ոչ եթե առանձին ինչ իցէ Որդւոյ կամքն քան ժզ) ի քումմէդ

1) Մատթ. ԻԶ, 39. Մկ. ԺԴ, 36. Ղուկ. ԻԲ, 42. 2) Յովհ. Զ, 38.

թիւն, նոյնպէս և կամք, վասն զի յոլովք յայսպէս սասցելոցն ի հաւասարէն ասին։

**Նորին՝ առ ի յերկրորդ հարցմանէն լուծմանն *,**

Այսպիսի իմն ինձ երևի, և՝ Աստուած Աստուած, հայեաց յիս, և՝ Ընդէ՞ր թողեր զիս[1]. քանզի ոչ ինքն թողաւ՝ կամ ի Հաւրէ, կամ յիւրմէ աստուածութենէն, որպէս թուի ոմանց, իբրև զարհուրեալ ի չարչարանացն, և յաղագս այնորիկ ամփոփեցաւ ի չարչարողէն[ա]. քանզի ո՞ ծնանելոյն ի սուրբ Կուսէն զիւր մարմինն[բ] հարկ արար, այլ յինքեան[գ], որպէս ասացին, տրպաւորէ զմեզ. վասն զի մեք թողեալք և անտես եղեալք, և փրկեալք չարչարանաւք ի չարչարանաց. զի[դ] զօրօրինակ զյիմարութիւնն մեր, և զմեղսն ընտանեցուց ‖ անէ,
201v. որ ի կարգի[ե] Սաղմոսին ասելով. քանզի յայտնապէս ի Քրիստոս ԻԱ. Սաղմոսն վերաբերեալ լինի։

Երանելոյն Յովհաննու, եպիսկոպոսին Երուսաղեմի՝ ի Կենազրութենէն, ի բանէն՝ Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս։

Ոչինչ աննմանք են եկեղեցոյ վարդապետք մաւր մանգասիրի, որ ամենայն աշխատութեան և ամենայն վտանգի համբերէ յաղագս սիրոյ մանկանն սննդեանն։ Զի զօրօրինակ նա ի ստինն ամբարելով զկաթնն՝ զառանց աշխատութեան կերակուրն|սիրելոյն ընձեռէ, սոյնպէս և եկեղեցոյ վարդապետք ստինս մտացն առաջի դնելով մանկանց եկեղեցոյ՝ փափագանաւք ձգել զկաթն բանին աղաչէ։ Եւ զօրօրինակ մայր յետ որ ի կաթանէն կերակուր սննդեանն և զդժուարամանրելի զհացն կակղացուցանէ, և զբանջարոց կերակուր համեմօքն անուշացուցանելով՝ հրով կատարէ, սպասաւոր կենաց
202r. իւրոց մանգանն լինի, նոյնպէս և վարդապետք յետ վարդապետութեանն բանիցն բանիւ ‖ Հոգոյն Սրբոյ լուծանէ զանազան և ազգի ազգի մեկնութեամբք՝ ի մի

* Նոյն. p. 57 v.

ա) ի չարչարաւղէն բ) զծնանելոյն ի սուրբնոս սկիզբն և ի խաչն ելանելոյ գ) ընքեան դ) և ե) ի կարգին է

1) Մատթ. ԻԷ, 46. Մկ. ԺԵ, 34.



խառնումն ածեալ, և անուշացուցանէ զբանն, որ ի նմանէն ծնանին մանգունք եկեղեցոյ։ Յաղագս որոյ և մեք, սիրելիք, յառաջագոյն ժամանեալ աւուրցն՝ դիւրաստին բանիւք իբրև կաթամբ զձեզ կերակրեցաք։ Իսկ այժմ առ մեծագոյն և վարդապետութեանն տէրութիւն ամբառնամք, Հոգոյն Սրբոյ անոյշ ձեզ բան վարդապետութեան համեմատելով։ Եւ է մեզ առաջիկայ ի վերայ Գրոց սեղանոյն հաց բանին այսպիսի. ընդէ՞ր|Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ յաղագս ամենեցուն եկեալ ընդունել զչարչարանս և մեռանել, Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս[1]. վասն զի բազումք ոչ իմանան զդիտաւորութիւն իմաստութեանն, և ի ծածկեալ գանձ բանին ոչ հայելով՝ երկչոտութեան իմն իրս պատմեն զնմանէ։ Այլ եկայք և մեք, սիրելիք, առ այժմ իբրև տղայք ընդ նմա խաւսեցուք և ասասցուք ցնա՝ ոչ իբր կատարեալք, այլ իբր տղայք. Ե՞ր աղագաւ, Տէր գոլով, ի չարչարանս յաղագս մեր ի խաչ ելանել՝ երկչոտութեան աղօթս ‖ 202v.
ասես. Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ այս բաժակս. եթե զքեզ խոնարհեցուցեր, զկերպարանս ծառայի առնլով ոչ ուրուք քեզ արարեալ, և այժմ զայն աղաւթես և ասես. Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս, և սակայն ճեպեալ փութացիր ըմպել զբաժակդ զայդ, քանզի ասեիր. Մկրտութիւն ունիմ մկրտել և բաժակ ըմպել, և որպէ՞ս ճեպիմ, մինչև արբից[2]։ Եւ արդ, որ փութայիրդ և ճեպեիրդ ըմպել, եկեալ հրաժարե՞ս և ասես. Հա՛յր, եթե կարողութիւն է, բաժակս այս ան|ցցէ. միթէ անգէտ եիր, եթե հանդերձեալ ես վասն մեր մահու համբերել. զի և դու իսկ ասեիր թե՝ Պարտ է Որդոյ մարդոյ մատնիլ և խաչիլ և յերրորդ աւուր յառնել[3]։ Եւ ընդէ՞ր այժմ մերձ եկեալ ի խաչն՝ հրաժարես. Եթե կարողութիւն է՝ բաժակս անցցէ. եթե զայդ ախորժեիր, ընդէ՞ր աշակերտին քում Պետրոսի, որ խափանէրն, սաստեիր, յորժամ ասեիրն. Պարտ է Որդոյ Մարդոյ խաչիլ և յերրորդ յաւուր յառնել. և Պետրոս ասէր. Քաւ լիցի քեզ, Տէր. մի՛ լիցի քեզ այդ. որում սաստե(լով) ‖ ասացեր. Ե՛րթ յետս իմ, սատանայ, 203r.
գայթակղութիւն իմ ես դու ինձ. զի ոչ խորհիս դու զԱս-

1) Մատթ. ԻՁ, 39. Մկ. ԺԴ, 36. Ղուկ. ԻԲ, 42. 2) Ղուկ. ԺԲ, 50, հմմտ. Մատթ. Ի, 22—23. Մկ. Ժ, 38—39. 3) Ղուկ. ԻԴ. 7 եւն.

տուածոյն, այլ զմարդկանս[1]: Եւ արդ, եթե նմա սատեցեր յայնժամ, իբր մարդկօրէն ինձ խօսողի, ընդէ՞ր այժմ հայցես, զոր նա յայնժամ խափանէրն, և ասես՝ Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս: Զքեզ ստացող երևելեացս, և ո՛չ երևելեացս միայն՝ ուսանիմք զոլ. զի և ի հիւանդս մերձեցուցանելով զձեռն բժշկեցեր և զմեռելոց զլուծեալ պնտեցեր բանիւ, և քղանցիւք հանդերձիցդ|զաղբիւր արեանն ցամաքեցուցեր, ի հինգ հացէ զհինգ հազար ժողովրդեան կերակրեցեր, հողմու և ծովու սաստեցեր, և ամենեքեան քեզ հնազանդեցան դողալով: Այդքան սքանչելեաց գործաւնեայ և մահու լուծի՛չ, այժմ ի մահուանէ երկնչի՞ս, և ասես. Հա՛յր, եթե հնար է, անցցէ բաժակս: Եթե դու երկնչիս ի մահուանէ, զիա՞րդ ասեիր. Ես եմ կեանք և յարութիւն[2], վասն զի կեանք և յարութիւն ո՛չ երկնչի ի մահուանէ: Եւ զի՞նչ է զոր ասեսդ. Հա՛յր, եթե կր. անց. բաժակս.
203v. անգէ՞տ ես, որ գիտես զամենայն՝ ‖ նախ քան զամենայնն լինել. անգիտանա՞ս, եթե կարութիւն է կամ անկարութիւն անցանել բաժակին. և զիա՞րդ ասես. Ո՛չ ոք գիտէ զՀայր, եթե ո՛չ Որդի[3]. և արդ, զՀայր գիտես, քան զոր ո՛չ ոք է մեծ, իսկ բաժակդ, եթե կարողութիւն է անցանել՝ ո՞չ գիտես: Զիա՞րդ և դու, Պաւղո՛ս, ասես եթե՝ Ո՛չ է արարած աներևոյթ առաջի նորա, այլ ամենայն մերկապարանոցաւ առաջի աչաց նորա է, առ որ մեր բանքս են[4]: Վասն զի ասեիր այսպէս. Կենդանի է Բանն Աստուծոյ և զաւրաւոր և հատու քան զամենայն սուր երկսայրի և անցանէ մինչև յորոշումն շնչոյ և ոգոց և յաւդից և ուղղոց, և քննողական խորհրդոց և մտածութեան սրտից[5], և ոչինչ է ստացուած աներևոյթ առաջի նորա, այլ ամենայն մերկ և բաց պարանոցաւ աչաց նորա է, զորմէ մեր բանքս են: Արդ եթե ամենայն մերկ և բաց պարանոցաւն աչաց նորա է, առ որ բանդ է, զիա՞րդ իբրև այժմ անգիտանալով ասեն. Հա՛յր, եթե հնար է անցանել բաժակին. եթե ո՛չ իցէ ծածկեալ խորհուրդ բանիցդ, ո՛չ վայել էր քեզ բանդ այդ. քանզի
204r. Աստուած ես՝ Աստուծոյ Որդի և Բան իմաստ ‖ ութեան, զաւրութիւն, լոյս, արեգակն արդարութեան, աղբիւր անմահութեան, կեանք յաւիտենականք, յարութիւն մեր մեռելութեանս մեզօք, և ասես. Հա՛յր, եթե կարողու-

1) Մատթ. ԺԶ, 21—23. 2) Յովհ. ԺԱ, 25. 3) Մատթ. ԺԱ, 27. Ղուկ. Ժ, 22. 4) Եբր. Դ, 13. 5) Եբր. Դ, 12.



թիւն է անցանել բաժակիս. ո՛, զիա՞րդ դժուարահասանելի է բանս և դժուար որսալի և դժուար որոշելի. ո՛վ, զիա՞րդ նեղ և անձուկ առ բազումս ի մարդկանէ. ուստի մեզ ըղխորհուրդս բանի քո, վասն զի քոյ եմք և ի քեզ հաւատացաք: Մի՛ բարձրասցի հայհոյութեամբ հսկայն Եւնոմիոս և մի՛ թշնամանեսցէ զբանակ Տեառն Իսրայելի. նա զմեզ թշ|նամանէ, և ի քեզ, Տէ՛ր, հասանեն լուտանքն. զարթո՛յ որ կանս ի սրտի մերում միտքս՝ իբրև հեզոյն Դաւթի. տո՛ւր մեզ բան բարի, զի նովաւ պարսեալ զգլուխ ամբարշտութեան նոցա՝ լուծցուք, զի ծանիցէ ամենայն բանակս այսօր, թե դու միայն ես Տէր ի վերայ ամենայն երկրի: Ցոլովք են ի վերայ ժողովք հերձուածողաց, դովին այդուիկ բանիւ պատերազմին. զի՞նչ ասելով. տեսանես՝ զիա՞րդ երկնչիմ, տեսանես, զի աղօթեմ առ Հայր, ասելով՝ Եթե կարողութիւն է, բաժակս այս անցցէ: Այժմ Եւնոմիոս զու ‖ արձանայ, այժմ Արիոս հրճուի, որպիսիս 204v.
գտեալ նիւտս բանից հայհոյութեան, և հակառակին ճշմարտութեանն շըշնջելով: Այլ մի՛ ուրախանայք, ամենայն այլազգիք, վասն զի խորտակեցաւ լուծն հարկանողացն զմեզ. Ընդ մեզ Աստուած, գիտասցո՛ւք հեթանոսք և պարծեցարո՛ւք, և հզօրացեալքդ պարտեսջի՛ք. զի թեպէտ զօրանայք, դարձեալ պարտեսջի՛ք. քանզի զոր խորհեցայք խորհուրդ՝ ցրուեսցէ Տէր[1]. զի բերան Տեառն խօսեցաւ զայս: Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս. ո՛վ բաժակ, կենօք և անմահութեամբ լցեալ,|զոր առնլով Եւնոմիոս և Արիոս, իւրեանց չար հաւատովքն պղտորեցին և ընկերաց իւրեանց արբուցին զխոտորումն. որք զքաղցրն խառնումն նորին մօրն դառն զոլ կարծեցին, և ո՛չ յաւաղական բանէն երկեան, զոր ասէն Էսայիաս. Վա՛յ, որ արբուցանէ ընկերի իւրում խոտորումն պղտոր[2]. Վա՛յ, որ ասէ զքաղցրն դառն և զդառնն քաղցր, որք դն(իցեն) զլոյսն խաւար և զխաւարն լոյս. վա՛յ որ իմաստնոցն յնքեանցն և առաջի իւրեանց հանճարեղացըն[3]: ‖ Մեք, սիրելի՛ք, զբաժակն Տեառն մերոյ առնլով, 205r.
որ ի նմանէ լցեալ վարդապետութիւնն փափագանօք արասցուք անձին. Հա՛յր, եթէ կարողութիւն է, անցցէ բաժակս այս. ո՛չ որպէս դուք կարծես, ո՛վ Արիոս, եթե երկնչի Տէրն և զարհուրի ի մահուանէ՝ զայդ ասելով. քան

1) Հմմտ. Ես. Ը, 9—10. 2) Ամբ. Բ, 15. 3) Ես. Ե, 20, 21.

որպէ՞ս ար(դ)եօք երկնչէր, որ իշխանութիւն ունէր մեռանել և ոչ մեռանել, որպէս և ասէր. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ դարձեալ առնուլ զնա[1]. վասն զի, թե հարցեալ յումեքէ լինէր, բարիոք արդեւք ասէիր նմա զարհուրիլ.|իսկ այժմ ինքն ասէր. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ[1], ոչ հարկիմ յումեքէ. ապա թե ոչ, չասեր՝ իշխանութիւն ունիմ անձին իմոյ դնել և առնուլ. այլ որպէս զիս ինքն թափեաց՝ զկերպարանս ծառայի առնլով[2], ոչ ուրուք ինձ հարկ արարեալ, ես զիմ մարմինս ինձէն շինեցի. քանզի իմաստութիւն շինեաց իւր տուն[3]. Նոյն օրինակ կարեմ և լուծանել զիմ մարմինս մահուամբ, և կենաւք վերստին յարուցանել. ես եմ, որ ասեմ. Քակեցէք զտաճարս զայս, և զերիս աւուրս կանգնեմ զսա[4]։ Որպէս զի ոչ երկնչելով
**205v.** և զարհուրելով ի ‖ մահուանէ՝ ասէ. Հա՛յր, եթե կարողութիւն է անցանել բաժակիս, այլ ծածկեալ բան իմաստուն առաջի արկանեմ. զայս բանս առաջի արկանելով բանսարկուին՝ պարտ է ինձ բանիւք այսոքիւք զնա որսալ։ Ետես զիս սատանայ բազում նշանս արարեալ. զի ի հիւանդս մերձեցուցանելով զձեռն՝ բժշկեցի, զգունդս դիւացն փախուցի բանիւ, զմեռելոցն բազմութիւնս յարուցի բանիւ, զլուծեալ զծնունդս բանիւ պնդեցի. հողմոց և ծովուց սաստեցի, և ամենեքեան հնազանդեցան դողալով. և ի նոցունց իր|աց տեսեալ՝ զիս Որդի Աստուծոյ կարծեաց։ Եթե ես խաչեցայց, նա կորնչի. եթե ես իջից ի սանդարամետս, զնիգս նորա զերկաթեղէնս խորտակեցից և զդրունս պղնձիս փշրեցից[5]. և զայս ամենայն զմտաւ ածելով՝ զարհուրեալ փախչի. կալ մնալ բազմապատիւ զաւրութեան խաչին իմոյ ոչ կարէ։ Եւ արդ, զի՞նչ առնեմ. իբրև զիմաստուն ձկնորս՝ կարծեցուցանեմ զերկչոտութիւն, վստահացուցանեմ զարհուրելովս ի մահուանէ և ասեմ. Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս.
**206r.** զի ‖ և նա յայդպիսի նուաստ բանից իմոց կարծեսցէ մարդ, զարհուրեալ և փախուցեալ ի մահուանէ, ճեպեսցէ կանգնել ի մէջ երկրի զփայտն՝ հաստատել զխորհուրդս խաչին, որպէս կարծեն՝ հակառակ ինձ։ Պարտ է ինձ, իբրև զիմաստուն ձկնորս՝ հնարել ընդդէմ նորա ամենևին

1) Յովհ. Ժ, 18. 2) Հմմտ. Փիլիպ. Բ, 7. 3) Առակք Թ, 1. 4) Յովհ. Բ, 19. հմմտ. Մատթ. ԻԶ, 61. Մկ. ԺԴ, 58. 5) Հմմտ. Ես. ԽԵ, 2.



վասն ամենեցուն փրկութեան. զի թե մեքենեաց հակառակ Ադամա կորստեանն, առաւել ևս արուեստեցից վասն ամենեցուն կենաց. բանիւք նենգութեամբն խաբեաց զԱդամ, բանիւք|աստուածունօք խաբեցից զնենգաւորն. Հա՛յր, եթե կար. անց. բաժակս։ Եթե ոչ ձկնորսն, յորժամ ընկեսցէ զկարթն ի ծով, երբեմն թողացուցանէ զկարթն և երբեմն իբրև փախուցեալ զորդն ցուցանէ՝ ձեռամբ ձգելով, ձկունքն ոչ յարձակին ի վերայ. շուրջ եդի կարթիս իմոյ աստուածութեանս զորդն մարմնոյն, կախեցի զկարթն ծածկաբար որդամբ մարմնոյս ի խորս աշխարհիս այսորիկ. եթե ոչ որդն իբրև զորդն շարժիցի, զոր պարտ է ինձ որսալ՝ ոչ յարձակի ի վերայ։ Արդ, պարտ է և արժան ‖ է ինձ իբրև զորդն ձևանալ և խաւսել. վասն **206v.**
զի՝ Ես որդն եմ, և ոչ եմ մարդ[1]. Նա ի վերայ դիմեսցի և մերձեսցի ի կարթն, և ձգեցից յինէն, և գտցի զգրեալսն Յոբայ՝ Ածցես զվիշապն կարթիւ[2]. եղէց իբրև զկարթ փախուցեալ ի մահուանէ և ասացից. Տրտում է անձն իմ մինչև ի մահ[3]. ասացից. Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս։ Լսելով զբանս զայս՝ խնդա և ուրախ լինի, և ճեպի զհակառակ ինձ գործել. զի յորժամ լսէ. Հա՛յր, եթե կարողութիւն է անցանել բաժակիս,| զուարճանա, և զի՞նչ ասէ յինքեան. և սա մարդ է. կլի զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ և զհայրապետս և զմարգարէս, կլից և զսա. զի ահա իբրև մարդ զարհուրի, մարդ է, կլից զսա. կլցէ զիս իբրև զմարդ, և գտցէ յորովայնի իւրում զիս իբրև զԱստուած գործեալ։ Հա՛յր, եթէ հնար է, անցցէ բաժակս. կլցէ իբրև զանգուած մարմնոյ, և գտցէ իբրև զանշէջ կայծակն զաստուածութիւնս, որ դժնդակապէս ի ներքս այրեսցէ. քանզի՝ Հուր եկի արկանել յերկիր[4]. խաւսեցայ իբրև ‖ զգառն, ոչ կամիմ, եթե տեսցէ **207r.**
նա փայլատակեալ զսուսեր աստուածութեանն, զի մի՛ փախիցէ գայլն. կլցէ զիս իբրև զգառն, և ի ներքոյ երեքսայր սրով խոցեցից զնա. զի ոչ եկի խաղաղութիւն արկանել նմա, այլ սուր[4]. խաւսեցայ իբրև զգառն, ոչ կամիմ, եթե տեսցէ զծածկեալ հովիւս զԱստուած ի գառին մարմինս. ոչ ախորժեմ յայտնել զհովիւս, զի մի՛ փախիցէ գայլն, այլ խաւսեցայ իբրև զգառն, որ ոչ ունիցի հովիւ,

1) Սաղմ. ԻԱ, 7. 2) Յոբ. Խ, 20. 3) Մկ. ԺԴ, 34. Մատթ. ԻԶ, 38. 4) Ղուկ. ԺԲ, 49.

զի եղիցի՝ Իբրև զմարդ առանց օգնականի[1]. կլցէ զիս իբրև զգառն, և ի ներքոյ հովիւս բրով խորտակեցից. ծամեսցէ զիս իբրև զհատ մանանխոյ, և գտցէ զդժնդակութիւն աստուածութեանս, որ դժնդակապէս զնա չարչարեսցէ. ծամեսցէ զիս իբրև զմարդ, և գտցէ զկարծր վէմ, որ յոգնապէս զնորա զատամունսն փշրեսցէ, զի ուսցի մի ևս ծամել զմարդիկ, և լցցի գրեալն. Աստուած խորտակեսցէ զատամունս նորա ի բերանս նորա[2]։ 207v. ‖ Հայր, եթէ կարողութիւն է, անցցէ բաժակս. եթէ գիտէր, որպիսի է բաժակս, յորմէ ես պատճառեմ հրաժարելովս, նա արդեւք անցանել. վասն զի հակառակ նորա է, նմայ է խոցոտիչ և իմոյն փրկութիւն։ Յորժամ կլցէ, յայնժամ գիտասցէ զոր եկուլն, յայնժամ տեսցէ վասն իմ զարեգակն խաւարեալ, յայնժամ դառնասցի և գտցէ զգրեալն. Դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահելն քեզ[3]։ Մի գայթակղեսցեն զքեզ բանքս այսոքիկ. իմաստութեամբ ասեմք, անսայ|ցէք և տեսէք զկատարումն բանիս, և յայնժամ զարմասջիք ընդ իմաստութիւնս բանիս. կարծէ յիմարութիւն լինել զարուեստ իմ, և ոչ գիտէ թէ՝ Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ[4]. վարկանի ի բանիցս տկար զիս գոլով, և ոչ ճանաչէ եթէ՝ Տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ[4]. ոչ գիտէ նա, թէ ես ըմպեմ զբաժակն, և նա ըմպեսցէ և թմբրեսցի, և իմքն զար(թ)իցեն։ Այժմ զուարճանայ՝ լսելով զայսպիսի բանս 208r. խոնարհութեամբ. բայց յորժամ կլանիցէ ‖ զիս, յայնժամ տեսցէ, զի վէմք պատառին, և զշիրիմս և զգերեզմանս բացեալ, և զինքն երգիծեալ, և զմեռեալսն ի բաց վազեալս[5] և յերկինս խայտացեալս. յայնժամ զղջասցի և ողբասցէ որովք այժմ զուարճանայր բանիւք. ոչ գիտէ, եթէ զոր հաստատէ՝ զորոգայթն իւր կազմէ, և ինքն անկանի, ըստ գրեցելոյն. Գուբն, զոր փորեաց և պեղեաց՝ ի նոյն անկցին[6]. ոչ գիտէ, եթէ զոր հանդերձեալն է կազմել զխաչն՝ ինձ առագաստ է և նմա խաչ, ինձ հարսնար|ան և նմա մահ. ո՜ բաժակ՝ սատանայի խոցոտիչ, մեղաց խուսող, մեղաւորաց հաշտարան, անմահութեան աղբիւր. բաժակ՝ կենաց գործօնեայ. Սակայն ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Ծանեաւ թշուառականն, եթէ

1) Սաղմ. ՁԷ, 5. 2) Սաղմ. ԾԷ, 7. 3) Ես. ԺԴ, 9. 4) Ա. Կորնթ. Ա, 25. 5) Հմմտ. Մատթ. ԻԷ, 51—52. 6) Սաղմ. Է, 16.



որքան ինչ ասացին եղև. լուաւ յինէն յասելն. Գոհանամք զքէն, Հայր, զի յամենայն ժամ լուար ինձ, և ես գիտէի, եթէ յամենայն լսես ինձ[1]. այժմ յաղաչելս իմում անցանել բաժակին, ‖ Թոյլ լիցի յիրս խաչին՝ զաղօթից իմոց զկատարումն յերկուանալի առնես, և ասեմ. Բայց ոչ որպէս 208v. ես կամիմ, այլ որպէս դու. Հաւրն իմոյ ընձեռեմ զիշխանութիւն՝ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ առնուլ զնա. Թաքուցանեմ զաստուածութեանս իմոյ զպատիւ, տերևօք բանիցս ծածկեմ զաստուածական բանս աստուածութեանս՝ բանիւք մարդկայնովք, և ասեմ. Բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դուդ։ Ո՛չ դիտէ կոյրն, եթէ իմ կամք և Հաւրն մի են, և զոր ունի Հայր՝ իմ է[2], և՝ Ես և Հայր|իմ մի եմք[3]. սակայն՝ ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու. կախեցից զհատ ցորենոյն, և յորժամ կլցէ զիս, տեսցէ զինքն յերեքկին լարոյն դառնապէս խեղդեալ։ Այլ թերևս ասիցէ ոք արդեւք ի լսողացն. և արդ Քրիստոս խաղ արար զսատանայ, և կամ արժա՞ն իցէ նմա խաղալ. առ որ ասեմք. ընթերցի՛ր զԳիրս, և գտցես՝ զնոյն ինքն Հայրն, որ ասէր Մովսիսի. Տեսե՞ր, որքա՜ն խաղացի Եգիպտացովքն[4]. նոյնպէս և Տէր խաղաց Սատանայիւ դիւօքն։ Վասն զի պարտ և ար ‖ ժան էր նմա 209r. իբրև անմտի խաբեալ լինել, որ մեծաբանէրն և ասէրն. Զօրութեամբ արարից և իմաստութեամբ ձեռաց իմոց բարձից զսահմանս հեթանոսաց, և զաշխարհս բովանդակ իբրև զբոյն առից և իբրև զմնացեալ ձուս բարձից, և ոչ ոք իցէ, որ ընդդէմ ասիցէ ինչ ինձ[5]։ Արդ, պարտ էր նմա խաղ լինել և դիւաց նորա, զի ցուցցէ զայնպիսի պանծացեալսն քան զմանգունս ևս անմտագոյնս, յաղագս որոյ ոչ ճանաչէին զոր առնէինն. Զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդ|եօք զՏէրն փառաց ի խաչ հանէին[6]։ Զայնէ և մարգարէն յաղագս վիշապին այնորիկ, և զի խաղ լինելոց էր՝ ասէր. Զվիշապն, զոր ստեղծեր, խաղալ նովաւ[7]։ Այլ զի մի յաւէտ երկայնելով զբանս՝ կարծիցեմք խափանել որք զկնի մեր կամին պայծառագոյնս զիմաստ Գրոցն ընձեռել, աստանօր լռութեամբ զբանս մեր անփոփեմք. վասն զի յառաջ մատեալք ասելոյն զայս զգլուխ, ոչ իբր

1) Յովհ. ԺԱ, 41—42. 2) Յովհ. ԺԶ, 15. 3) Յովհ. Ժ, 30. 4) Ել. Ժ. 2. 5) Հմմտ. Ես. Ժ, 13—14. 6) Ա. Կորնթ. Բ, 8. 7) Սաղմ. ՃԴ. 26.

կարողք անկարօտաբար ասել, այլ ըստ մերում կարողութեան ասել ‖ և պատճառս տալ ուսումնասիրացն. քանզի՝ Տուր պատճառս իմաստնոյն, և իմաստնագոյն լիցի[1]։ Եւ դուք, սիրելի՛ք, ի Գրոց ընտրելով՝ ի հաւասարութիւն յառաջասացելոցդ մեծապէս պիտացուցէք զդժուարատեսանելի միտսդ. զի ո՛չ երկչոտութեան աղագաւ Տէր մեր, որպէս ասացաք, աղաւթեաց բաժակին անցանել, այլ աստուածային իմն տնօրէնութիւն. զի իմոց սուղ բանիցս և յիմաստիցդ և ի ձերոց աշխատութեանցդ փառք Քրիստոսի վերառաքեսց|ին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

209v.

Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի, եպիսկոպոսի Կոստանդնուպօլսի՝ ի մեկնութենէ Եսայեա մարգարէի, ի բանէն՝ Եւ բղխեսցէ։

Ամաչեսցեն հերձուածողքն, որ հրայերէն կամեին տեսանել զսուրբ Գիրս. Հոգի խորհրդոյ և զաւրութեան, հոգի գիտութեան և աստուածպաշտութեան, և այլք երկիւղ ես յաւելուն, եթե՝ Լցցէ զնա հոգի երկիւղիւ Աստուծոյ[3]. Ակիւղաս եթե՝ Հաստատեսցի նա երկիւղիւն Տեառն. Սիմաքոս և Թէ‖ոդիտոն եթե՝ Հաստատեսցի երկիւղիւն Տեառն։ Եւ արդ, ընդէ՞ր լնուցու Հոգւոյն զԱստուած՝ գրեսցուք. եթէ ի Հաւրէ երկնչեսցի, որպէս և դուք հայհոյէք, Հոգւոյն ես զի՞նչ կարաւտէր, զոր դուքդ իսկ ասէք, թե փոքր է քան զնա. այլ վասն մեր յիւր շնչական և ի մարմնական մարմինն ընդունի զհոգին՝ զիմաստութեանն և զհանճարոյ, և զգիտութեան և զաստուածպաշտութեան, զի մեզ ինքեամբք ցուցցէ զօրինակն, եթե մեք կարաւտ եմք այնպիսի պարգեաց Հոգոյն Սրբոյ Աստուծոյ, և ո՛չ նմա, որ Տէրն,|կարաւտ ինչ իցէ Հոգի ընդունելոյ. այլ նմա երևելով՝ մեզ լիցի երախտիք։ Զի որպէս մարդն լինելով՝ ո՛չ եթե կարաւտ ինչ էր, և վասն այնորիկ եղև մարդ, այլ զի ի մարդ լինել արասցէ զմարդիկ որդիս Աստուծոյ, նոյնպէս և յընդունել զՀոգին ո՛չ եթե իբրև զկարօտ ոք ընկալաւ, այլ զի կարօտելոց ինքեամբ բաշխեսցէ զպարգևս Հոգւոյն։ Զի թէ ամենայն ինչ Հօր նորա է[4], որպէս և ասէն իսկ. Ամենայն ինչ, որ

210r.

1) Հռովմ. Ը, 9. 2) Ես ԺԱ, 2. 3) ԺԱ, 3. 4) Յովհ. ԺԶ, 15.



իմ է՝ քո է, և որ քոյ է՝ իմ է, յայտ է, թե և Հոգին Հօր նորա բնակից է։ Եւ որպէս զանձն եդ վասն խաշանց իւրոց, նոյնպէս և զՀոգին զիւր ‖ բնակիցն ետ կենդանութիւն աշխարհի՝ կամօք Հօր և Նորին իսկ Հոգոյն Սրբոյ։ 210v.
Եւ ո՛չ ասէ, եթե մասամբ ինչ ընկալաւ զՀոգին, այլ ամենևին ասէ՝ Լցցէ զնա Հոգի Տեառն. զի որպէս չէ ոք բաւական Հաւր, բայց միայն անձն Որդոյ, և ո՛չ Որդւոյ, եթե ո՛չ ծոց Հօր, նոյնպէս և ո՛չ Հոգոյն Սրբոյ, եթե ո՛չ Որդի, որ Նորին բնակիցն իսկ է։ Հոգի, ասէ, իմաստութեան և աստուածպաշտութիան, և հանճարոյ և խորհրդոյ, և գիտութեան և երկիւղի. Տեառն. զի ուր երկիւղ Տեառն է, անդ ամենայն ինչ է։ Զի որ եցոյց յանձին զՀոգին հանդերձ|ամենայն պարգևաւք, յայն սակս եցոյց, զի յերկիւղ աստուածպաշտութեան մերձեցուսցէ զմեզ. զի զանձնէ ո՛չ երբեք ասաց, եթե ես երկեայ ի քէն, այլ թե ես սիրեցի զքեզ. քանզի Որդոյ սէր վայել է, և ո՛չ երկիւղ։

Նորին Յովհաննու՝ ի Սաղմոսաց մեկնութենէն, ԺԵ. Սաղմոսէն՝ Պահեա զիս, Աստուած իմ[1]։

Որչափ ինչ մարմնեղէն դիմաւք ասեն Գիրք զՔրիստոսէ, վասն մերոյ վարդապետութեան ասեն, ո՛չ վասն բնութեան աստուածութեանն. քանզի եղեալ Որդին Աստուծոյ մարդ՝ զամենայն ինչ ըստ մերում բնութեանս ասէ և խօսի, և ‖ իւրով մարմնոյն առնէ պատասխանի։ 211r.

Նորին Յովհաննու(ու)՝ ի Մեկնութենէ աւետարանին Մատթէոսի գլխոյն, ի բանէն՝ Իբրև եկ Յիսուս ի կողմանս Փիլիպպեցւոց, որ կոչի Կեսա(րա)ցոց[2]։

Յայնժամ ասէ ցաշակերտսն. Եթե ոք կամիցի զկնի իմ գալ, ի բաց ուրասցի զանձն իւր և առցէ զխաչ իւր, և եկեսցէ զհետ իմ[3]։ Յայնժամ,—Երբ. յորժամ Պետրոս ասաց. Քաւ լիցի, մի՛ լիցի քեզ, և լուաւ՝ Ե՛րթ յետս, սատանայ[4]. իսկ աստ յաճախագոյնս արկեալ ի կիր՝ ո՛չ միայն յինքն հարկանէ զբանն, թե պարտ է մեռանել, այլ ի նոսա. քանզի այնպիսի|են շնորհք իւրացն, զի և առ ձեզ

1) Սաղմ. ԺԵ, 1. 2) Մատթ ԺԶ, 13. 3) Մատթ. ԺԶ, 24. 4) ԺԶ, 22—23.

խել, ասէ. չկամելն մեռանել կարի դժնդակութիւն է, և
հանապազ նմա պատրաստական կալ՝ կարի լաւութիւն է։
Եւ թուի թե՝ մի ինչ իցէ, զոր ասացն, այլ երեք բանք
են. եթե՝ ուրասցի զանձն իւր, և թե՝ առցէ զխաչ իւր,
և թե՝ եկեսցէ զկնի իմ։ Եւ իբրև երկեցոյց (ահ)աւորաւքն,
ապա և բարկութեան ճառիւքն մխիթարեաց. զի՝ Գալոց
է Որդի Մարդոյ փառօք Հաւր իւրոյ, հանդերձ հրեշտա-
կաւք իւրովք, և յայնժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ
գործս իւր[1]։ Տեսանե՞ս, որպէս մի փառքն են Հօր և Որ-
211v. դոյ, և եթե փառք մի իցեն, || ապա և կարի յայտ իցէ,
եթե և տէրութիւնն մի իցեն։

Ամէն ասեմ ձեզ*, զի են ոմանք ի սոցանէ, որք մի՛
ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ
արքայութեամբ և փառօք իւրովք[2]։ Քանզի բազում ինչ
զվշտացն ճառեաց, և զմահուանէ և զչարչարանաց իւրոց
յայտնէր և ցուցանէր նոցա, զի մի՛ այնուհետև ընդ իւ-
րեանց և մի՛ ընդ նորա մահն տրտմեսցին։ Եւ արդ՝ ա-
ռեալ զգլխաւորսն, հանէ ի լեառն մի բարձր առանձինն,
և յայլակերպս եղև առաջի նոցա, և լուսաւորեցան[ա] երեսք
նորա|իբրև զարեգակն, և հանդերձ նորա եղև սպիտակ
իբրև[բ] զլոյս, և երևեցան նոցա Մովսէս և Եղիա, որ խօ-
սէին ընդ նմա[3]։ Զնոսա, որք երկու իրաւք պայծառա-
գոյն քան զայլսն էին ի հնումն, ածէ ի մէնջ։ Եւ միւս ևս
պատճառէ՝ ասելով[գ], զի դու ուսանիցիս, եթե մահու և
կենացն Տէր է, և զվերինսն և զներքինս առհասարակ
ունի ընդ իշխանութեամբ. վասն այնորիկ զմինն վախ-
ճանեալ և զմիւսն չև ևս այնպիսի ինչ չարչարեալ ի մէջ
212r. ածէ։ Եւ զհինգերորդ պատճառսն աւետարանչին յայտն ||-
եալ է[դ], զի մխիթարեսցէ զՊետրոս և զայլսն, որք ի չար-
չարանացն զանգիտեին, և զարթուցանէ[ե] զմիտս նոցա։
Եւ եկեալ Մովսիսեանցն՝[զ] չկային, ասէ, լուռ, այլ խաւ-
սէին վասն փառաց, զոր կատարելոցն էր յԵրուսաղէմ,

* Հմմտ. Յովհաննու Ոսկեբերանի՝ Յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք Գ. Վենետիկ, 1826, եր. 3, որտեղից այս մի պատառիկը քաղուածօրէն բերած է։ Դնում ենք կարևոր տարբերութիւնները միայն։

ա) փայլեցին բ) հանդերձք նորա եղեն որպէս գ) պատճառ է ասել դ) աւետարանիչն իսկ յայտ առնէ՝ զխաչին փառաւորութիւնն ե) զարթուցանիցէ զ) եւ եկեալքն

1) Մատթ. ԺԶ, 27. 2) ԺԶ, 28. 3) ԺԷ, 1—3.



այսինքն՝ զչարչարանսն և զխաչն, զոր միշտ փառս կոչէ.
Ահա ամպ մի լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա, ձայն
եղև յամպոյն և ասէ. Դայ է Որդի իմ սիրելի, ընդ որ
հաճեցայ, դմա լուարո՛ւք[1]. և իբրև բարբառն եկն, նոքա
անհետ լինէին։ Եւ զի՞նչ ասիցէ բարբառն. Դայ է Որդի
իմ սիրելի. և եթե սի|րելիս իցէ, զի՞ այդչափ զանգիտես,
Պետրէ, պարտ և պատշաճ էր քեզ յանձնէ իսկ ի վաղուց
հետէ և զաւրութեանն գիտակ լինել և առ յարութեանն
հաստատուն. բայց քանզի չառեր ի միտ, գոնեայ ի Հաւր
բարբառոյն քաջալերեա՛ց. զի եթե զաւրաւոր իցէ Աս-
տուած, որպէս և է իսկ, կարի իսկ յայտ է, եթե և Որ-
դին այնպիսի է։ Եւ արդ մի՛ ինչ զանգիտեր ի չարչարա-
նացն. ապա եթե չև ինչ վստահ լինիցիս, գեթ զայն ած-
ջի՛ր զմտաւ, զի և՛ Որդի և սիրելի Որդի. Դա է, ասէ, սի-
րելի իմ Որդի. եթե սիրելի իցէ, ապա չէ || պարտ զան- 212v.
գիտել, քանզի ո՛չ ոք սիրեսցէ զՈրդի և տարապարտ երաշ-
խի տայցէ։ Եւ արդ, մի՛ ինչ խռովիցիս. զի թեպէտ և
բիւրապատիկ սիրիցես, ո՛չ այնչափ ինչ սիրեսցես, որչափ
ծնօղն ինչ սիրեսցէ. ընդ որ հաճեցայդ, ասէ, որ զի ծնաւն
սիրէ. այլ զի հաւասար նորին է ամենայնիւ, և համակամ,
համատիպ, և այնու իսկ երևի կրկին սէրն, մանաւանդ թե
երեքկին իսկ. զի Որդի է, և սիրելի Որդի, և ընդ նա և
եթ է հաճեալ. և զի՞նչ է՝ ընդ նայն հաճեալ, որպէս զի
ասիցէ, թե ի նա հանգուցեալ եմ, և վասն այնոր|իկ ամե-
նայնիւ նորին զուգական և նորին համեմատ և ընդ նմին
միաբան, և կամք նորա՝ և Հօրն. և կա մշտնջենաւոր մի
Որդի ընդ միւս Ծնօղին. Դմա, ասէ, լուեսջիք. որպէս զի
և ի խաչ կամիցէ ելանել, մի՛ ինչ ընդդէմ դառնայցէք։
Եւ իբրև լուան զայս, ասէ, անգան ի վերայ երեսաց
իւրեանց և երկեան յոյժ, և մատուցեալ Յիսուս՝ բուռն
եհար զնոցանէն և ասէ. Մի՛ երկնչիք. ամբարձին զաչս իւ-
րեանց, և ո՛չ զոք տեսին, բայց միայն զՅիսուս[2]. զմտաւ-
ած, զի ի խաչ ելանելոց էր Քրիստոս, վասն իւր ուրախ
էր և վասն խաչահան || ուացն տրտում էր։ Նոյնպէս և մեզ 213r.
պարտ է լինել. որչափ զրկիցիմք, զզրկիչսն աշխարհեսցուք.
զի մեզ անդի բազում բարութիւնք են, և նոցա հակառակն։

1) Մատթ. ԺԷ, 5. 2) ԺԷ, 7—8.

### Նորին, ի բանէն՝ Իբրեւ ելանէր յԵրուսաղէմ*։

Յայնժամ մատեան որդիքն Զեբեդեայ և խնդրեին զգահերէց գլխաւորութիւնն. կամիմք, ասեն, զի մի ընդ աջմէ քումմէ, և մի ընդ ահեկէ նստիցիմք։—Կարէ՞ք, ասէ, զբաժակն ըմպել[1], և մկրտութիւն կոչել՝զմահն. զի ցուցցէ՝ որչափ սրբութիւն լինելոց է ի չարչարանացն նորա ամենայն աշխարհի. և նոքա ասեն. Կար|եմք. առ յաւժարութեանն վաղվաղակի յանձն առնուին. և չև ևս իմացան զոր[ա] ասացն, այլ ակն՝ունեին լինել զոր խնդրեինն։ Իսկ նա զի՞նչ. Զբաժակն ըմպիցէք և զմկրտութիւնն, զոր ես մկրտելոց եմ, մկրտեսջիք. բայց նստուցանել ընդ աջմէ և ահեկէ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ ի Հօրէ իմէ[2]։ Յայնժամ տասունքն բարկացան ի վերայ երկուցն. և առ այն զի՞նչ Քրիստոս. կոչեաց զնոսա առ ինքն և ասէ. Հեթանոսաց իշխանք ուրեանց տիրեն[3],
213v. և առ իս որ կրտսերն է, նա է երեց. և զի ոչ վայրա‖պար ինչ ասեմք զայս, արդեամբքն իսկ, զոր առնիցեմք և չարչարիցեմք[բ], առնուցուք օրինակ զբանիցդ, զի ես[գ] մեծամեծս ալարի. զի Թագաւոր եմ վերին զօրութեանցն, յանձն առի լինել մարդ և արհամարհել և Թշնամանել, և չհամարեցայ զայն ամենայն[դ] բաւական, այլ և ի մահ ես եկի. վասն որոյ և ասեր իսկ, եթե որպէս՝ Որդի Մարդոյ ոչ եկն պաշտօն յումեքէ առնուլ, այլ պաշտել և տալ զանձն իւր փրկութիւն փոխանակ բազմաց[ե][4]։ Եւ ընդ որպիսեա՞ց ուրուք. ընդ Թշնամեաց և ընդ ատելեացն Աստուծոյ. դու Թե խո|նարհեսցիս[զ], ասէ, վասն քո խոնարհիս, իսկ ես ոչ վասն իմ ինչ, այլ վասն քո։ Եւ արդ, մի՞ ինչ կասկածեսցիս, եթե պատիւ բառնալոց է[է] վասն խոնարհութեանն. զի որչափ խոնարհիս, ոչ այնչափ ինչ կարիցես իջանել, որչափ ինչ Տէրն քո էջ. այլ սակայն իջանելն Նորա ելանել ամենեցուն եղև և փառաց Նորա ես

* Հմմտ. Նոյն՝ Յաւետարանագիրն Մատթէոս, եր. 42—49, որտեղից այս ամբողջ կտորը քաղուածօրէն յառաջ է բերած։ Դնում ենք մի քանի համեմատաբար կարեւոր տարբերութիւններ։

ա) իմանային զոր ինչ բ) առնիցեմ և չարչարիցեմ գ) ես ես դ) միայն ե) փրկանս ընդ բազմաց զ) եթէ խոնարհիս է) Եւ արդ մի՞ կարծիցես, եթե զպատիւն բառնայցես

1) Հմմտ. Մատթ. Ի, 20—22. 2) Ի, 23. 3) Հմմտ. Ի, 24—27. 4) Ի, 28.



առաւել յայտնութիւն։ Զի մինչև մարդն լինէր՝[ա] ի հրեշտակացն և եթ ճանաչիւր. իսկ յորժամ մարդն եղև և ի խաչ ել, ոչ միայն ի փառացն չնուազեաց, այլ և ‖ մեւսն 214r.
ևս ի վերայ Նորին՝ առ ի յաշխարհս[բ] ճանաչելոյ։

### Նորին Յովհաննու՝ ի Մեկնութենէ Առաքելոյն, յԵբրա(յե)ցոց Թղթոյն, ի բանէն՝ Հաւատովք արար զատիկն[1].

Եւ որ ոք ասէր, թե և Քրիստոս տրտմէր և հոգայր և որպէս մարդ կայր յաղօթս, ոչ դանդաղեի ասել, եթե Քրիստոս վասն աշխարհի կայր յաղօթս և վասն անհաւատիցն տրտմէր և հոգայր, և ոչ վասն անձին ինչ։ Քրիստոս ոչ կարաւտանայր Հօր, այլ ճոխութեամբ առնէր զինչ կամէր։ Դու նախ զայն խոստովանեայ, թե չկարօ|տանայր Հօր, ապա և ես ցուցից քեզ, եթե յաղօթսն կալ զիջանելով էր ըստ մեզ։ Որպէս ոք ի վարդապետաց, յորժամ զանուն գրոյն ըստ տղայական բարբառոյն ասիցէ, չասես թե չգիտաց. յորժամ հարցանիցէ, թե՝ ո՞ւր է այս նիշ գիր, չասես եթե՝ անտեղեակ է։ Ոչ առ կարաւտութեան ինչ կայր յաղօթս, այլ վասն զմեզ յորդորելոյ ի հանապազորդ յաղօթսն. առ մերոյ օրինակի էր ամենայն խոնարհութիւն Նորա, ‖ և զիւր ինչ հայցուածս լնոյր ի
Հաւրէ, զի չէր ինչ Նմա հարկ ի խաչ ելանելն. եթե չէր 214v.
կամեցեալ, ոչ էր խաչեալ, այլ կամեցեալ փրկել զմեզ՝ ինքնական կամօք խաչեցաւ։

### Երանելոյն Եւսեբի եպիսկոպոսի Եմ․ացոյ՝ ի խօսիցն, որ յԵրուսաղէմ, վասն Հաւատոց՝ ի Չարչարանաց Ճառէն, ի բանէն՝ Իսկ զչարչարանացն լռել ինչ պարտիցիմ։

Գրեալ է՝ Յետ պատառոյն եմուտ սատանայ[2]. ոչ եթե հացն զաւրացոյց ի Նմա զկամս Թշնամոյն, այլ շըրհնքն յանդիմանեցին զանարժանն իբ|րև զչար արժանաւոր. երթեալ մատնէր այնուհետև ի չար որս՝ յանձին կորուստ, և ոչ ևս լսէր, թե մի՛ արասցես, այլ թե՝ Զոր առնելոց ես արա վաղվաղակի[2]. պատրաստ ես ամենայնի ամենեւին։ Եւ ոչ էր Յիսուս մարմնով աստ ի ներքս, այլ

ա) մարդ լեալ բ) յաշխարհէ

1) Եբր. ԺԱ, 28. 2) Յովհ. ԺԳ, 27.

արտաքոյ· փութայր մտանել այսր, զի հաստատեսցէ, կանգնեսցէ նշանակ յաղթութեան, զի աստ խայտառակեալ կշտամբեսցէ զթշնամին և սկիզբն փրկութեան արասցէ **215r.** աշխարհի· աշակերտքն արգելուին, և նա ո՛չ անս ‖ այր, թեպէտ և բազում անգամ խօսս տայր, ո՛չ զանգիտեալ կամ երկուցեալ, այլ ժամանակի սպասեալ· ո՛չ զի զժամանակս խտրեսցէ, այլ զի խորհուրդն, յորում ժամանակս կատարեսցի՝ զատիկ ընդ պատկի, զենումն ընդ զենման. զի զառնն փոխանակ ոչխարաց մատնիցի, արիւն ընդ արեան, փայտ փոխանակ փայտի: Մինչ ոչն սպանանեին՝ խայտայր· յորժամ իմացաւ, ժամանակն արգուլին, և ո՛չ անսայր· մի՛ ինչ զանգիտել և մի՛ ինչ խռովել ընդ ճառս չարչարանացն. մի՛ 'ումեք|ասել, որպէս Պետրոսն ասաց թէ՝ Քա՛ւ լիցի քեզ, Տէր· զի մի լուիցէ թէ՝ Ե՛րթ յետս, սատանայ[1]· զի որ ընդ չարչարանս Քրիստոսի դժկամակ լինի, զմահն սատանայի ո՛չ կամի: Մատնիչքն ելեալ ի խնդիր իբրև զմատնիչ, և նա երթեալ կայր կազմ՝ ո՛չ ի զանխուլ տեղիս, այլ զոր և մատնիչն ճարտար գիտէր· առ ձեզ է տեղին, և զի՞նչ ինչ այն, որ ո՛չ առ ձեզ իցէ· և մօտ ի տեղին, զոր դուքն այլում ցուցանէք, եկեալ հասանէր մատնիչն· բազում ամբոխ ունել եկեալ որդին **215v.** սատանայի իւրով հարբն՝ չարութեամբ: Քանզի նա առ ‖ Ադամ իբրև զբարեկամ մատեաւ, և մատուցանէր իբրև զգործ թշնամոյ· իբրև զմարդ խաբեաց, պատրեաց և յաղթեաց, և սա զնենգութիւնն համբուրելովն թաքուցանէր, այլ յանդիմանեալ կշտամբէր· Համբուրելո՞վ, ասէ, եկիր մատնել[2]· չհրաժարեմ, արա՛յ զոր կամիսդ· դու քեզէն եղեր պատճառ չարեաց· զայս առ մատնիչն, և յունօղսն ասէ· Զո՞ խնդրէք·—ԶՅիսուս Նազօրացի·—Ես եմ[3], ասէ· չհրաժարեմ, չփախչիմ, քանզի յայդ եկի և ի սոյն ծնեալ եմ. և ընդ բարբառելն|զարկան առհասարակ մատնչաւն հանդերձ զգետնի, զի յայտնի լիցի, թե կամաւ եկն յունել· զի եթե բարբառոյն չհանդուրժեցին, զիա՞րդ կարեին ակամայ ունել: Լային դստերքն Երուսաղեմի ի դէպ ժամանակի, և ո՛չ գիտեին՝ զո՞ արժան է լալ· Լացէք, ասէ, զձեզ և զորդիս ձեր[4], մի՛ զիս· զի ես զոր ինչ կամեցայ՝ զայն կատարեմ: Ճառէ ոք զմեր փրկութենէն ուրախութեամբ

1) Մատթ. ԺԶ, 22—23. 2) Ղուկ. ԻԲ, 48· 3) Յովհ. ԺԸ, 4—5· 4) Ղուկ. ԻԳ, 28·



ելեալ Յիսուս երթայր ի մէջ երկուց աւազակաց, զի կատարեսցէ զայն, թէ՝ Ընդ (ան)օրէնս համար ‖ եսցի[1]. **216r.** երախտաւորն ընդ աւազակս, անմեղն ընդ մեղաւորս՝ բարիոք և գեղեցիկ եին խառնուրդքն, և աւր խաչելութեանն՝ աւր յանցանացն Ադամայ: Ի վեցերորդ աւուրն ստեղծաւ Ադամ, ի նմին աւուր յանցեաւ. հնազանդ եղև Յիսուս կրել զչարչարանս, զի յորում ժամու պարտեցաք, ի նմին և յաղթեսցուք: Փայտ ի դրախտին՝ փայտ խաչի· անդ կին, որով մեղք մտին յաշխարհ, և աստ կոյս, որ կայր և լսէր՝ Սա մայր քո[2]: Զգեաց Ադամ յայսմ աւուր չարաչար զձեռն իւր,|պարզեաց և Յիսուս գեղեցիկ զսուրբ բազուկն. Ադամ մերձեցաւ ի ծառն և փայտն չարաչար, և Յիսուս բևեռեաց զոտս և զձեռս ի խաչին· բարիոք Ադամ առ ցանկութեանն ճաշակեաց զպտուղ ծառոյն, և Քրիստոս ճաշակեաց զքացախ և զլեղի դառնութեան: Ադամ լուաւ եթէ՝ Փուշ և տատասկ բերցէ քեզ երկիր[3], և Յիսուս պսակ ի փշոց ընկալաւ. Ադամ ընկալաւ անէծս, և Յիսուս աւրհնեալ ընդ այլոց անիծից՝ կախեցաւ իբրև զանիծեալ զփայտէ· իրք կարևորք, զի ուսցուք, թե որպէս մարդիկ մեռանին, և որպէս Աստուած կամօք, ‖ **216v,** և ո՛չ ակամա մեռանի: Որ ընդ բնութեան կարեօք եին՝ նոցա բարձքըն խորտակեցան, զի ըստ բնութեանն նոյնպէս և զմահն կրեցին. իսկ որ իշխանութիւն ունէր դնել զանձնն, և նա ո՛չ էր ըստ բնութեան կարեօք· որպէս ի կուսէն կամաւ, և ո՛չ ակամայ՝ առ մարմին, նոյնպէս ի խաչին կամաւ, և ո՛չ ակամայ՝ արար որոշումն իւր հոգոյն ի մարմնոյն. Հա՛յր, ասէ, ի ձեռն քո աւանդեմ զհոգի իմ[4]: Եւ ո՛չ ամբարըշտացն, զոր վերն ի վայրն պարսաւեն՝ այն են զարմանք, զի կամաւ և ո՛չ ակամայ մեռանի, այլ եթե|ցաւոց բռնութեամբ, կամ այլ ուրուք հարկաւ. իսկ որ ինքն հրաման տացէ մահու, 'յորժամ ինքն կամաւ արձակէ զհոգին, և արդ, իցէ՞ արդեւք Միածին յամենայնի· զի որպէս ի Հօրէ միայն ծնաւ և ի Կուսէ ըստ մարմնոյ ծննդեանն, նոյնպէս և ի մահուանն միայն՝ կամաւ, և ո՛չ ակամա մեռաւ:

1) Մարկ. ԺԵ, 28. Ես. ԾԳ, 12. 2) Յովհ. ԺԹ, 27· 3) Ծնն. Գ, 18. 4) Ղուկ. ԻԳ, 46·

**Նորին Եւսեբի, առ որ ասենն եթե՝ Ընդէ՞ր Քրիստոս մարմնով երեւեալ. ի բանէն՝ Մի՛ ոք ասիցէ, եթե ընդէ՞ր եկն Քրիստոս։**

*Մի՛ զերախտաւորութիւն մարդասիրութեանն ապախտ*
217r. *համարել. մի՛ զի վասն մեր անսայ լինել մարդ՝ ար ‖ համարհիցեմք զընութիւն աստուածականս։ Հայիս ի ծառայական կերպարանս, այլ տե՛ս զնորին զաստուածագործ զսքանչելիսն. հայիս ի մեռեալն, այլ տե՛ս նորին յարուցեալ զմեռեալն չորեքաւրեայ. հայիս քաղցեալ, այլ տե՛ս նորին յագեցուցեալ զբանակս հազարաւորս։ Հայիս, որ չոգաւն ի հարսանիսն, այլ տե՛ս նորին փոխեալ զջուրն ի գինի՝ իբրեւ զԱստուած. հայիս ննջեալ ի նաւին, այլ տե՛ս նորին սաստեալ ալեացն եւ կարկափեցուցեալ. հայիս ընդ այն, որ| յերկրին գնայր, այլ զարմացի՛ր ընդ նորին, զի ի վերայ ալեացն շրջէր։ Հայիս ընդ այն, որ ետ հարկս, այլ տե՛ս զայն, որում ծոմն հարկատու լինէր իբրեւ Տեառն. հայիս ընդ մկրտելն ի Յովհաննու, այլ լո՛ւր՝ որ ինչ Յովհաննէս զնմանէն, եթե՝ Որ ի վերուստ եկեալ է, նա ի վեր է քան զամենայն[1]. ո՛չ քան զիս միայն, այլ եւ քան զամենայն. ո՛չ քան զհրեշտակս եւ զհրեշտակապետս միայն, այլ եւ քան զամենայն երեւելիս եւ աներեւոյթս։ Լսես, եթե ծնաւ իբրեւ զմանուկ, այլ եւ զայն իմացի՛ր, զի ի Հոււէ*
217v. *եւ կուսական ծնունդն. ‖ Եւ թեպէտ եւ խանձարրապատ եղե եւ ի մսուր եդաւ, այլ աստղն իբրեւ Տեառն յերկնից զուշակէր։ Եւ թեպէտ ի Հերովդէէ խնդրեցաւ սպանանել, այլ եւ ի մոգուցն առնոյր պատարագս եւ երկրպագութիւնս։ Եւ թեպէտ աճէր եւ զարգանայր հասակաւ իբրեւ զմարդ, այլ մտեալ յիւր տաճարն՝ ուսուցանէր զվարդապետսն օրինաց իբրեւ զԱստուած։ Եւ թեպէտ գայր առնուլ կնիք ի Յովհաննէ, այլ լսէր ի նմանէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ ի՞ս գաս[2]։ Եւ թեպէտ եւ մտանէր ի տունն մեղաւորաց, այլ ոչ|ինչ առյարէր ի նա պղծութիւնքն՝ առ ամենասուրբն։ Եւ թեպէտ եւ մերձեցաւ ի կինն մեղաւոր, ոչինչ հպեցաւ առ նա մեղքն, այլ եւ բազմապատիկ ի մեղացն առնէր հալածականս ի մեղաւորացն զօրութիւն նորա։ Եւ թեպէտ ունեին եւ կապեին, զի կանխասացն կատարեսցի, կամեցաւ, եւ կալան. յա-*

1) Յովհ. Գ, 31. 2) Մատթ. Գ, 14.



*ժարեցաւ, եւ կալան եւ ածին. վկայէ բարբառն, որով յետս երթալոյն վարկան զգետնի. ո՛չ եթե յերկինս ելին եւ կալան, այլ ինքն կամեցաւ եւ եկն յերկիր ի կալանս. կալան՝ ո՛չ իբրեւ ‖ զպարտեալ եւ զյաղթեալ, այլ զինքնակամն յօ-* 218r.
*ժարեալ՝ ըստ յառաջագոյն ասացելոցն։ Կալեալն յաղթէր, կապեալն ունէր. հարկանեին, զի զոր ինքն ասաց կատարեսցեն. խաչեին՝ զկամեցեալն, խաչեին՝ զյօժարեալն, որ բանիւք եւ արդեամբք յառաջագոյն գուշակեալ։ Հայեին ի խաչն խաչհանուն[ք]ն, դղրդեին ամենայն արարածք, երկինք սգային, արեգակն խաւարէր, աւդք մթանային, երկիր շարժէր, վէմք պատառեին, գերեզմանք բանային, մե|ռեալք յառնեին, հոգին զվարագոյրն պատառէր եւ վերանայր։*

**Պիտակ այսմ խորհրդոյս երանելին Կիւրեղ Աղեքսանդ(ր)ացի եպիսկոպոսի, զոր գրէր առ Թէոդորիտոն հերձող Կիւրոս քաղաքի՝ ԲԺ.ան գլխոյն նզովիցն եւթներորդ բանն, հանդերձ մեկնութեամբն. գտցե(ս) յիւրում տեղւոջ։ Զուգակցէ ի նոյն խորհուրդն երանելւոյն Փիլիքսիանոսի՝ Նարբոկայ եպիսկոպոսի, նախագրեալն ի խորհուրդն, եթե ո՛չ յախտիցն ընկալաւ Քրիստոս յերեւելն մարմնով՝ ԻԵ. բանէն, որ ունի զայս ինչ. Վասն զի ամենայն խառնինք հոգեւորք։**

*Երանելւոյն Յովհաննու ‖ Մայրագոմեցոյ՝ ի հաւատոյ բանէն։* 218v.

*Զամենայն կեանս մարմնականս՝ ի ցաւղակերպ իջիցն մինչեւ ի նստելն ընդ աջմէ Հաւր, ամենակար զաւրութեամբն է տեսանել՝ ըստ Աստուածային Գրոց, եւ ո՛չ տկարութեամբ, որպէս եւ ասէ մարգարէն. Եթե տկարանայցէ ինչ առաջի տեացորդաց ժողովրդեանս այսմիկ, եւ թե առաջի իմ տկարանայցէ[1]։ Քրիստոս Աստուծոյ զօրութիւն՝[2] զօրութիւն Աստուծոյ եղեւ, ի փրկութիւն ամենայն հաւատ(աց)ելոց. զօրութիւն Բարձրելոյն հովանի եղեւ ի վերայ Կուսին՝ Աստուծոյ զօրութեանն երեւեցելոյ|մարմնով. երգեին հրեշտակք՝ որոյ յառաջ քան զարեւ էր[3], հրաշապէս եւ սքանչելի յամենայն երկրի[4]. որում հովիւքն երկրպագողք, մոգք պատարագաբերք, որոյ փախուստն զե-*

1) Զաք. Ը, 6. 2) Հմմտ. Ա. Կորնթ. Ա, 24. 3) Հմմտ. Սաղմ. ՀԱ, 17. 4) Հմմտ. Սաղմ. Ը. 10.

գիպտական աստուածսն առհասարակ տապալեաց, զՀե-
րովդէս տղայակոտորութեամբն՝ յորդիսն Նորա, և զնոյն ինքն
որդնատրոր դառն ախտիւ սատակեաց։ Նշդեհանալովն ի
Նազարեթ և պանդխտանալովն ի Կապփառնաումն՝ զմար-
219r գարէութիւնս ‖ լնոյր. մկրտելովն Յորդանան զվերնակա-
մարն երկնից փեռեկէր. Հոգին Սուրբ աղաւնակերպ երև-
մամբն պիտառոցէր, Հայր ի վերուստ վկայէր. Դու ես
Որդի իմ սիրելի[1]։ Ի վերայ Կարապետին հրամանք Աս-
տուածութեանն բարձրանային՝ գոչել, աղաղակել և զա-
մենայն տարերքս լցուցանել աւետեաւք գալստեան Որ-
դոյն, զորոյ զէական փառսն զաստուածավայելուչսն յեր-
կիր երևեցոյց։ Եւ Մովսէս աւետարանէր Իսրայելի ի Նա
դաւանմամբն և|ասէր. Տէր Աստուած ի միջի քում՝[2] մեծ
և հզօր. յերկնից լսելի եղև բարբառ Նորա, և յերկրի
եցոյց քեզ զՀայր իւր մեծ։ Ըստ այսմ դիմաց և զաւրու-
թեան են կարգք տնաւրէնութեանն Քրիստոսի և ի փոր-
ձանսն սատանայի, յոր եռամարտիկ բանազինութեամբ
զԴիապաւղոսն. և յառնելն զջուրն գինի և յագեցուցանել
զխումբս ժողովրդոցն դոնիւ հացիւքն. և ի գնալն ի վե-
րայ ծովուն, ի սաստել ալեացն, ի սաստել դիւացն, ի
բժշկել զհիւանդս, ի կենագործել զմեռեալս, և յամենայն
219v. գործսն, զոր ‖ արարն, ասէ աւետարանագիրն թէ՝ Իշխա-
նութեամբ էր բանն Նորա[3]. վասն որոյ և ասէ իսկ. Թէև
ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք[4]։
Արդ, ըստ տեսակին և ըստ տարրական գոյացութեանն
հաւաստեաւ գիտեմք՝ և ճշմարիտ մարդ է. և վասն Հօր
և Հոգոյն սքանչելեացն, զոր արար, հաւատամք, եթե նոյն
ինքնն և Աստուած ճշմարիտ է. ամենայն գործք Նորա
զօրութեամբ են։ Բայց զայն ինչ, որ ոչ աստուածութեանն
պատշաճի և ոչ մարդկութեան Նորին,|զայն ո՞ւմ աւյարե-
ցուք, զո՞ արասցուք պարտ. քանզի արենաքիրտն լինել
արտաքոյ է ամենայն բնութեանց, ո՞ մարթի հաւատալ.
քանզի Աստուած և մարդ և եթ գիտեմք զՔրիստոս, և այլ
ոչինչ, և այս ոչ յԱստուած յարի և ոչ ի մարդութիւն, ոչ
ի նշանս և ոչ ի կարիս և ոչ ի հաւատոյ լրութիւնս։ Ահա
Նախ Դաւիթ իսկ Հոգովն Սրբով յայտնէ զերկիւղէն, թե

1) Մկ Ա, 11. Ղուկ. Գ, 22. Հմմտ. Մատթ. Գ, 17. 2) Երկ. Օր. Զ, 15։ 3) Ղուկ. Դ, 32. Հմմտ. Մատթ. Է, 29. Մկ. Ա, 22. 4) Յովհ Ժ, 38.



պարսաւանաց մասն՝ ասելով ցԱստուած. Ատեցեր զայնո-
սիկ, որ պահեն զերկիւղ ունայն[1]. և Յովհաննէս ասէ. Որ
երկնչի՝ ոչ է կատարեալ[2]. ‖ և Եսայիաս ասէ. Յիշեա զինչ 220r.
ոք էիր, և երկեար ի մահկանացուէ մարդոյ[3]։ Արդ, զպար-
սաւ երկիւղի և զանկատարելութեան մեք ի վերայ Քրիս-
տոսի ոչ դնեմք, բայց միայն գովութիւն։ Նոյնպէս և վասն
տրտմութեան տեսցուք, եթե ոչ վասն իւր ըմբռնելոյն ի
զբաժակ մահուն տրտմեցաւ, այլ եթե վասն անհաւատից
կորստեան. առաքեալ ասէ թե՝ Որ ըստ Աստուծոյ տրտ-
մութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղ-
ջանալոյ գործէ. իսկ որ ըստ աշխարհիս տրտմութիւն՝ մահ
գործէ[4]։ Արդ, յայտ է. եթե վասն իւր տրտմեցաւ՝|մահա-
ծին է տրտմութիւնն, իսկ եթե վասն աշխարհի տրտմե-
ցաւ՝ կենսածին. անզեղջագործ փրկութեամբ եհատ զամե-
նայն արտօսր յերեսաց ամենայն. վասն այնորիկ ասէ
սուրբն Գրիգոր. Ցանգալի եղև մահ մահուամբ Աստուծոյ
մերոյ։ Վասն այնորիկ ասէ մարգարէն. Պատուական է
առաջի Տեառն մահ սրբոց իւրոց[5]. վասն քաջութեան և
առանց երկիւղի մեռանելոյ ասաց զմահ սրբոց յաչս Տեա-
ռըն պատուական. եթե սրբոց այնքան փառաւորութիւն
գործեաց առանց երկիւղի մեռանելն, որչափ ևս առաւել
Որդոյն Աստուծոյ մեծ վայելուչ էր, ‖ և յաւէտ պատուա- 220v.
կան յաչս Հօր՝ քաջութեամբ, առանց երկիւղի մեռանելն։
Այսուհետև զքաջութիւնն Քրիստոսի պատմեսցուք և զեր-
կիւղէ և զանզգիտելոյ մի՛ ճառեսցուք, զի մի՛ հաւասարեալ
գտցուք Սիմոնի և Սամոստացոյն, և նոցին նմանեաց։
Ահաւանիկ երկեան աշակերտքն ի նաւին, և Տէրն անզգու-
նեաց զնոսա, վասն զի չև ևս առեալ էին զՀոգին Սուրբ
լրութեան, ասէր. Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, սա-
կաւահաւատք[6]։ Եւ Պետրոս առանց երկիւղի գնայր ի վե-
րայ ջուրցն, և ի դիզանել փորձչին զկոհակաձև ալիսն ի
վերայ Նորա՝ երկեաւ, և ընդ երկնչելն ապա սկսաւ ըն-
կղմել. զի երկիւղն մերկ արար զնա ի հաւատոցն. վասն
այնորիկ եպերեաց զնա Տէրն և ասէ. Թերահաւատ, ըն-
դէ՞ր երկմտեցեր[7]։ Արդ, յայտնի է, զի երկիւղ ի թերա-
հաւատութենէ է, և ոչ ի հաւատոց, և որ չեն ի հաւա-

1) Սաղմ. Լ, 7. 2) Ա. Յովհ. Դ, 18. 3) Ես. ԾԱ, 12. 4) Բ. Կորնթ. Է. 10. 5) Սաղմ. ՃԺԵ, 15. 6) Մկ. Դ, 40 Մատթ. Ը, 21. 7) Մատթ. ԺԴ, 31.

տոց՝ հեռի են յԱստուծոյ, և որ հեռի է յԱստուծոյ՝ մերձ է ի Բելիար։ Ապա ուրեմն հեռի է ի Քրիստոսէ երկիւղ, զի ամենեւին Աստուած է և տուող հաւատոց և յաղթող յամենայնի։ Այսպէս ‖ **221r.** ամենայաղթ զօրութեամբն պատմեն օրէնք և մարգարէք և կենդանատուր աւետարանն, և առաքեալքն և հարքն՝ զամենայն գործսն Քրիստոսի, զոր արար ի նշանս և զոր կատարեաց ի փրկութիւն մարդկան, և երկիւղ, որ զամենայն արութիւնս քաջութեանց մեղկեալ լուծանէ՝ ոչ ասացին ունել նմա։

Երանելոյն Սեբերիանոսի սորական եպիսկոպոսի, ի բանէ աւետարանին՝ Հայր. եթե հնար է, անցցէ բաժակս այս յինէն[1], ի ճառէն՝ Յորժամ մեզ, եղբարք, վասն ողորմութեան քարոզեն օրէնքն. յորժամ վասն աղքատսիրութեան եւ հիւրընկալութեան*։

|Եւ արդ, եկեսցուք ի բանն. Հայր, ասէ, եթէ հնար ինչ իցէ, անցցէ յինէն բաժակս։ Բազում խնդրով[ա] լի է բանս և սաստիկ ախտ[բ] բերէ հերձուածողացն՝ ոչ առ ի չարաչար ասելոյն[գ], այլ ի չարաչար իմանալոյ զայն՝ եթե հնար ինչ[դ] իցէ։ Ոմանք անվրէպ իմն առանց անցանելոյ հրամանս կարծեցին ի համբառնալ ի մարմնեղէն, որ է բաշխ և բախտ[ե] և յառասպելանուն ծննդեանն հարկէ, թե այնպէս իւրաքանչիւր ումեք բաշխել[զ] ինչ իցէ ի ծննդենէն[է]։ Եւ ոմանք այլազգ ‖ **221v.** թշնամանեն զպատիւ Միածնին. ծառայաբար իմն հնազանդութիւն[ը] կցեցին յՈրդւոյ[թ] Հօր. քանզի ընդ իշխանութեամբ Հօր էր, ասեն[ժ], վասն այնորիկ ի կիր[գ] արկանէ զայսպիսի[ժա] պաղատանս։ Ո՞ր բան պատշաճ իցէ[ժբ] մեզ խնդիրս[ժգ] լուծանելոյ. որ միտք բաւական իցեն բա[գ] զմահնաշունչ հերձուածողացն[ժդ] առասպելս առեղծանել. չմարթի այլ ուստեք, եթե ոչ

* Տես Ձեռ. № 510 p. 305 Տպ. Վենետիկ. 1850. եր. 164.

ա) խնդրօք  բ) բազում սաստիկ ախտս  գ) ինչ ասելոյ  դ) չ.  ե) ի մարմինչն, որ է բախտ և բաշխ  զ) բաշխեալ  է) ի ծննդենէ  ը) հնազանդութիւն իմն  թ) որդւոյն  ժ) ասեն, Հօր էր  ժա) զայնպիսի  ժբ) է  ժգ) զխնդիրս  ժդ) զբազմահնարունչ հերձուածողաց

¹) Մատթ. ԻԶ, 39. համմ. Մկ. ԺԴ, 36. Ղուկ ԻԲ, 42.



անդստին ի ճշմարտութենէն առաւել։ Ա՛ն, առ աստուածեղէն ի բարձրութիւնս իսկ[ա] ընթասցուք, անդ՝ ի վերին Կենարարին տնտեսու|թիւնսն[բ], որ զամենայնն[գ] առնէ և զբնաւ բարբառի, ոչ միայն ըստ պատուոյն, որ նմա վայել է, այլ ըստ տնօրէնութեանն[դ], որ մեզ պատշաճ է։ Եւ զի կարճառօտ[ե] կտրեցից, և քանզի միշտ համառօտս սիրեմ հասանել[զ] և զբազումս սակաւուք առնուլ, յառաջագոյն գիտէր Կենարարն, եթե կարի կարեւոր են չարչարանքն. յառաջագոյն ճանաչէր, եթե ի փրկութիւն աշխարհի հաստատի խաչն, մահ կշտամբի և յարութիւն մատա(կա)րարի, և այնպէս գիտէր, մինչև յառ ‖ **222r.** աջագոյն ասէր աշակերտացն. Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի մեղաւորաց[է], և ձաղեսցեն զնա և խաչեսցեն, և յերիր աւուր յարիցէ[1]։ Այս բարբառ Աստուծոյ է, որ յառա(ջա)գոյն գիտէ զհանդերձեալսն. Աստուծոյ, որ նախ զփորձն գիտէ զիրացն[ը] Աստուծոյ, որ զմարդկեղէն իրս մատակարարիցէ։ Անդրէն ձայնատու լինի նմա առ այս Պետրոս՝ զնդացեալ խնայեալ ի մարմինն. Քա՛ւ լիցի, ասէ, Տէր, մի՛ լիցի քեզ այդ. և առ այն զի՞նչ Կենարարն. զայրանայ[թ] ընդ տարաժամ զօ|ւթըն, եպերէ զնա՝ անժամխնամն[ժ]. Յետս երթ, ասէ[ժա], յինէն, սատանայ. զի ոչ խորհիս զԱստուծոյ[ժբ], այլ զմարդկան[2]։ Բարիոք[ժգ] պատահէ բանին, և դու քննեա, և դէտակն ի վերայ դիցես. զի եթե լոկ ի բանիցն[ժդ] ծառաեսցես, բազում ինչ խրախ տես[ժե] զԿենարարին՝ ոչ միայն տկարութիւն, այլ[ժզ] ասասանդութիւն խորհրդոց բամբասես։ Ո՛ Տէր բարերար, Պետրոս յարաժամ[ժէ] ըղձանայր թե՝ Քա՛ւ լիցի քեզ, Տէր, մի՛[ժը] ի խաչ ելանիցես, և դու նախատեիր, և արդ, դու զնո՞յն աղաչես, որում մեղադիրն լինեիր, որ ոչ այս միայն ոչ վայել է[ժթ], ‖ **222v.** այլ և ոչ մարդոյ հաստատնոյ։ Ո՞վ զովիցէ զզօրավարն[ի], որ յա-

ա) յաստուածեղէն բարձունս  բ) տնտեսութիւն  գ) զամենայն  դ) այլ և ըստ տնտեսութեանն  ե) կարճառօտս  զ) հատանել  է) ի ձեռս մեղաւորաց  ը) որ կանխէ քան զփորձ իրացն  թ) զայրանայր  ժ) եպերէր զանժամ խնամսն  ժա) չ.  ժբ) դու զԱստուծոյ  ժգ) բարւոք  ժդ) թէ լոկ բանիցն  ժե) զբազում ինչ խախտես  ժզ) այլ և  ժէ) յորժամ Պետրոս  ժը) լիցի, զի մի  ժթ) որ ոչ այս միայն չվայելէր  ի) զոչէ զզօրաւոր

¹) Համմ. Մատթ. Ի, 18. Մկ. Ժ, 33. Ղուկ. Թ, 44. Մատթ. ԺԶ, 21.  ²) Մատթ. ԺԶ, 22—23.

ռաջ քան զպատերազմ բազում ինչ խոստանայցէ[ա] և մեծաւ համարձակութեամբ զթշնամիսն գոռասցէ[բ], և ի խառնուրդս ճակատուն[գ] ի փախուստ դառնայցէ, և վատութեամբ զօրութիւնն աղարտեսցէ[դ]։ Մինչչև եկեալ Քրիստոս[ե] ի չարչարանս՝ զայն, որ քաւէրն զնա ի չարչարանացն, ասէր. Ե՛րթ յետս[զ] յինէն, սատանայ, զի ոչ խորհիս դու զԱստուծոյ, այլ զմարդկան. և որ անարժանս զայսպիսի[է] խորհուրդս Աստուծոյ համարէր՝ ինքն իւր արդեօք զայն[ը] ընտանեցուցանէր և աղօթս վասն այնր[թ] առնէր։|Ո՜ հաստատութեանն[ժ], մանաւանդ եթէ ամբարհաւաճութեամբ[ժա] այնոցիկ, որ լոկ բանիցն ծառայեն[ժբ] և զամենայն յախուռն յանդգնիցին[ժգ], և զաստուածականսն այլ ընդ այլ ժպրհին[ժդ] մեկնել, և զայն չկամիցին դիտել[ժե], եթէ լոկ զբանն[ժզ] ընդունելով՝ ոչ միայն քան զՀայր խոնարհագոյն ցուցանեն զնա, որպէս փութանն, այլ և քան զբազումս[ժէ] իմաստունս և զարդարսն[ժը] նուազագոյնս, և եթէ բնաւ չունիցի իսկ[ժթ] զհաստատութիւն մարդկան։ Ո՞ ոք իմաստուն կամ արդար, կամ այլ
228r. ոք[ի] ի մարդկանէ՝ քաջութիւն վկայեաց[իա], ուրանայ ‖ ցէ զանձինն[իբ] առաքինութիւն և թշնամանեսցէ[իգ] զխոստացեալ և զյառաջագոյն խրոխտեալ զզօրութիւնն[իդ]։ Նոյնպէս և[իե] վատթար և ապաժամանակեայ է, որ[իզ] մինչև զայլս խիզախեալ և յանձին[իէ] ունել և զայլ խորհել՝ ի փորձոյ[իը] իւրացն զանգիտեսցէ[իթ]. ո՛ր մահ սպառնայր մահու, այլ զյայրութիւնն աւետիս[լ] տայր, ինքն զիա՞րդ էր, զի զանգիտէր ի խաչէն։

Զայս ամենայն ասացի առ ի յանդիմանութիւն այնոցիկ, որ[լա] բանիցն ծառայեն[լբ], և զճշմարտութիւնն վաճառեսցեն[լգ]։ Եւ արդ, զի՞նչ|յայտ ընդդէմ հակառակու-

ա) խոստանայ բ) ընդդէմ թշնամեացն գոռայցէ գ) ի խառնուրդս ճակատուցն դ) աղարտիցէ ե) Քրիստոսի զ) չ. է) անարժան այսպիսի ը) զնոյն թ) վասն այնորիկ ժ) Ո՜հ անմտութեանն ժա) ամբարհաւաճութեանն ժբ) ծառայեսցեն ժգ) յանդգնեսցին ժդ) այլ ընդ այլոյ ժպրհիցեն ժե) գիտել ժզ) զբանս ժէ) զբազում ժը) արդարս ժթ) և թէ բնաւ իսկ չունի ի) ոք ամենեւին իա) ի քաջութիւնս վկայեալ իբ) զանձին իգ) թշնամանիցէ իդ) զառաջագոյն խրոխտացեալ զօրութիւնն իե) Ո՛ այնպէս իզ) ապաժաման կայցէ իէ) զայլ խիզախել և յանձն իը) և ի փորձոյ իթ) զանգիտել լ) և զյայրութեան աւետիսն լա) որք լբ) ծառայիցեն, և զՏէրն թշնամանիցեն լգ) վաճառիցեն



թիւն[ա] բանիցն կամիցի առնել, յորժամ ճշմարտութիւն անձինն[բ] միաբան գտանիցի հանապազ։ Եւ զի՞նչ իսկ բնաւ միաբանութիւն ճշմարտութեանն առ կռիւ բանիցն իմանայցի[գ]. բանքն արդարև կռուին իսկ ընդ միմեանս, բայց միաբանութիւն աստուածեղէն պատգամացն կա մա հաստատուն։ Եւ արդ, զլուծումն խնդրոյս[դ], որ առաջիկայս է[ե], ինձ աշխատասէր բարուք պարտ է ասել, և ձեզ ուսումնասէր մտօք լսել։ Յորժամ Տէրն ի խաչելութեանն[զ] մերձեցաւ ի կատարումն ամենայն տնտեսութեանն, ‖ յառաջագոյն գիտէր երանելին և միայն հզօր 228v.
և թագաւոր[է] թագաւորաց և տէր[ը] տերանց, եթէ բազում հերձուածողք յառնեն ընդդէմ ճշմարտութեանն[թ] և որոշեսցեն զաստուածեղէն զչարչարանսն, և աւտարոտի ինչ գործս[ժ] ստաբանիցեն։ Եւ մանաւանդ անուանակիցք մոլորութեանն՝ զՄանինէացոցն ասեմ աշակերտաց, որ[ժա] յանդգնեցան ասել, թէ ստուեր իմն և առաչօք ցնորք եին Քրիստոսի չարչարանքն, որպէս թէ ոչ մարմին առ իսկ[ժբ], և խաչն կերպարանաւք էր և մարմինն ստուեր ինչ և նմանութիւն, և ամենայն իսկ մա|տակարարեալքն կերպարանեօք[ժդ] և հովանի և ցնորք և առաչօք եին, վասն այնպիսի հերձուածական[ժե] մոլորութեանն, զի[ժզ] յառաջագոյն կարկեցուցանիցէ[ժէ] զբերանս հերձուածողացն[ժը] և յայտ արասցէ, թէ զայս մարմին, որ ընդ բազում կարեաւք մտանէ, ագեցաւ[ժթ]։ Որ զանգիտես ի չարչարանաց, որ դողաս ի բռնութենէ մահու, որ խռովիս և տրտմիս ընդ վախճան[ի] կենաց՝ Այժմ, ասէ, անձն իմ խռովեալ է[1], և դարձեալ. Տրտում է անձն իմ[իա] մինչև ի մահ[2]. և դարձեալ. Հայր, եթէ հնար ինչ իցէ, անցցէ բաժակս ‖ այս յինէն[իբ][3]։ Միտ դիր հաստատութեամբ[իգ], 229r.

ա) հակառակութեան բ) ճշմարտութիւնն անձին գ) իմացի դ) խնդրոցս ե) առաջի կայ զ) ի խաչելութիւն է) հզօրն, թագաւորն ը) տէրն թ) ընդդէմ ճշմարտութեանն յառնելոց են ժ) չարչարանսն, և օտար զգործս ժա) զմանինեցւոց աշակերտացն ասեմ, որ և ժբ) թէ և ոչ մարմին իսկ առ ժգ) ինչ էր ժդ) կերպարանօք ժե) հերձուածողական ժզ) զմանիքեցւոց աշակերտացն ասեմ, զի ժէ) կարկեսցէ ժը) հերձուածողաց ժթ) զգեցաւ ի) որ դողայս ընդ վախճան իա) եթէ անձն իմ տրտում է իբ) եթէ հնար ինչ իցէ, հայր, անցցէ յինէն բաժակս իգ) չ. Միտ դիր հաստատութեամբ

1) Յովհ. ԺԲ, 27. 2) Մատթ. ԻԶ, 38. Մկ ԺԴ, 34. 3) Մատթ. ԻԶ, 39

եթե ստուերք և ցնորք առաջօք էր[ա], ընդէ՞ր խռովէր, և՞[բ] եթե կերպարան ինչ իրքն էին, որ գործէինն[գ], վասն է՞ր զանգիտէր. քանզի ի ստուերէ ոք չերկնչին[դ], և ոչ ի լոկ կերպարանաց խռովի։ Կամի՞ս, զի[ե] ի պատմութենէ իմեքէ ցուցից հաստատագոյն զճշմարտութիւնն. մտին հրեշտակք ի Սոդոմ, մարդիկ եին[զ] երեսօք, և հրեշտակք եին բնութեամբ. յանդգնեցան Սոդոմացիքն բռնադատել զնոսա իբրև զարս յաղտեղութիւն և յանարժան[է] խարդաւանու|թիւն. և՞[ը] արդ, զի՞նչ գործեն հրեշտակքն. քանզի գիտեին հրեշտակքն[թ], թե չունէին մարմին, որ ընդ բնութեամբ մտանեին[ժ], չխռովեցան, այլ կաց մնաց բնութիւն հրեշտակացն առանց խռովութեան և չկրեաց ինչ աղմուկ ի բքոյ կարեաց մարմնոց[ժ]. բայց Ղովտ, քանզի արդեւք արս[ժա] համարէր, խռովեցաւ, թե գուցէ բռնադատութիւն[ժբ] ինչ կրեսցեն, աղաչէր զկատաղեալսն։

Ցես սղի*։

Եւ զայս ամենայն առ ո՞ր եղև ասել. զի չիք ինչ
224v. հաղորդութիւն առաջին ճառիս[ժգ] ընդ այժմուս, այլ զի ցուցից, թե ուր կերպար || անք են, անդ երկիւղ չիք, և ուր ճշմարտութիւն է, անդ ստուեր չիք[ժդ]։ Բայց զի[ժե] ամենեին յայտ արասցէ[ժզ] կենարարն, թե յո՞ր սակս առաց զբանն և կորեսցէ[ժէ] զմիտս հերձուածողացն, և տնկեսցէ[ժը] զկրաւնն ճշմարտութեանն՝ ասէ ցառաքեալսն. Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար է. նա զտկարութիւն մարմնոյն իւրում[ժթ] համարի, և դու զաստուածութեամբ[ի] նորա ընկենուս զկարիս[իա]. այլ թե ոչ փութաս[իբ] զտանել զմիտս բանիդ[իգ], զտանիցես թշնամանեալ զՔրիստոս[իդ]։

Ցես սղի**։

Զի[իե] ճշմարտութիւն ոչ|երբեք արատի։ Եւ արդ, եթե մեկնութեանն միտ չդնես[իզ], այլ բանիցն[իէ] և եթ

* Եր. 168.
** Եր. 169.

ա) և առաջօք և ցնորք էին  բ) չ  գ) գործէին  դ) չերկնչի  ե) զի և  զ) երեւէին  է) յանարժանից  ը) իսկ  թ) մտանիցէ  ժ) մարմնոյ  ժա) քանզի արս արդարս  ժբ) բնութիւն  ժգ) առաջին ճառին  ժդ) և ուր ստոյգ մարմին. անդ երկիւղ և տրտմութիւն  ժե) բնութիւն զի  ժզ) առնիցէ  ժէ) կորեաց  ժը) տնկեաց  ժթ) իւր  ի) զաստուածութեամբն  իա) զկարիսն  իբ) փութացիս  իգ) բանին  իդ) զտանիս իսկ թշնամանեալ զՏէրն  իե) քանզի  իզ) չգնիցես  իէ) բանից



ծառայեսցես, զտանիցես զՔրիստոս վատասրտեալ և յոյժ խոնարհագոյնս[ա] բարբառեալ՝ ոչ միայն քան զիւր պատիւն, այլ և[բ] քան զառաքելոցն արութիւն. զի Քրիստոս ասէ. Այժմ ոգիս[գ] խռովեալ է. և Պաւղոս յորժամ[դ] չոգաւ ի կողմանս Պաղեստինացոց[ե], եկն անդ մարգարէ մի, որում անուն էր Ագաբոս[զ], և ասէ. Այսպէս ասէ Հոգին Սուրբ. զայրն զայն, որոյ գաւտիս է[է], կապեսցեն Հրեայքն և տարցեն յԵրուսաղէմ[ը]. և իբրև արգելուին եղբ||-
225r արքն ամենեքեան զՊաւղոս և աղաչեին չերթալ յԵրուսաղէմ, պատասխանի ետ արութեանն բարբառովն, մանաւանդ եթե քաջութեան և առաքինութեան ոգով՝ չկամեցուցիչսն. Զի՞ գործէք, զի կապանաց, այլ և մեռանելոյ պատրաստ իմք[թ] վասն անուանն Քրիստոսի։ Պաւղոս այնչափ վստահութեամբ, 'այնպիսի խրոխտանօք, այնչափ համարձակութեամբ, ձայնատու լինի մահու, և առ ոտն հարկանէ և խշրէ[ժ] զարհաւիրս մահու, և Պաւղոսի Տէրն ասէր. Այժմ ոգիս խռովեալ[ժա]. և[ժբ] Պօղոսի սիրտն ճմլէր, իսկ Քրիստոս ոգւոյն|չափ խռովէ՞ր[ժգ] արդեւք։ Պաւղոս և պարծէր եւս[ժբ] ի նեղութիւնսն. Ո՛չ այսչափ միայն, ասէ[ժբ], այլ և պարծիմք եւս ի նեղութիւնս. քանզի գիտեմք, եթե նեղութիւն համբերութեան գործէ[ժդ][2]. և Պօղոսի Տէրն ասէ[ժե]. Տրտում է անձն[ժզ] իմ մինչև ի մահ. զի՞նչ տրտմութիւնն[ժէ] պարծանաց իցէ. Պաւղոս պարծանս համարէր զչարչարանս, և որ զայն[ժը] զօրացուցանէրն՝ Քրիստոս, տրտմութի՞ւն ինչ արդեւք զտանեսութիւնն հաշուէր։

Ցես սղի*։

Քանզի ոչ եթե նմա ինչ[ժթ] մնաս չարչարանքն գործէին, այլ զայլս զայթակղեցուցանեին։ || Ցաղօթս կացէք, 225v.

* Եր. 17!

ա) նուաստագոյն  բ) պատիւ, նա և  գ) ոգի իմ  դ) իբրև  ե) պաղեստինացւոց  զ) մի Ագաբոս անուն  է) գօտիս այս իցէ, այսպէս  ը) հրեայք յԵրուսաղէմ  թ) պատասխանի տայր արութեան բարբառով, մանաւանդ եթէ արութեան և առաքելութեան ոգւով ասէր ցկամեցուցիչսն զի՞նչ գործէք, զի՞ լայք և ճմլեցուցանէք զսիրտս ի ներքս, զի ես ոչ միայն կապանաց, այլ և մեռանել պատրաստ եմ  ժ) և արհամարհէ և խշրէ  ժա) եթէ այժմ ոգի իմ խռովեալ է  ժբ) չ  ժգ) ոգով չափ խռովեալ էր  ժդ) նեղութիւնք զհամբերութիւն գործեն  ժե) և Քրիստոս Տէրն Պաւղոսի ասէր  ժզ) ոգի  ժէ) նմանութիւն  ժը) զնոյն

[1]) Գործք ԻԱ, 11.  [2]) Հռոմ. Ե, 3.

զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն. չասաց թե՝[ա] մի՛ մտանիցեմք ի փորձութիւն, այլ զի մի՛ մտանիցէք ի ձեզ խնայեմք, այլ[բ] ո՛չ եթե զանձն կամիմ ապրեցուցանել ի չարչարանաց[գ]. գիտեմ զհանդերձեալսն, չեմ անտեղեակ տնտեսութեանն, որ կատարելոցն եմ.[դ] չեմ երախտ բարերարութեանն, որ ծաղկելոցն են[ե] ամենայն մարդկան. այլ[զ] յառաջ քան զդէմս իրացն[է], որ երեւինդ, գայթակղեցուցանեն զձեզ, ասեմ ձեր բանիւ, եթե հնա՞ր ինչ իցէ անցանել չարչարանացն*։ Ո՛չ եթե բռնութիւն[ը]|ինչ անվրէպ և առանց անցանելոյ և սահման անհրաժեշտ յայտ առնիցէ[թ], որպէս ոմանք կարծեցին։ Եւ կամիս հաստատութեամբ ուսանել, և[ժ] չկայր ինչ հարկ և սահման ի վերայ ի վերուստ[ժա] կենարարին, այլ իւր իսկ ամենիմաստ[ժբ] տնտեսութիւն է, և իւրովք կամօք զամենայնն[ժգ] կատարէ։ Լո՛ւր հաստատութեամբ՝ զիա՞րդ ինքնին Տէրն իսկ լուծանէ[ժդ] զկարծիս հարկին և յայտ առնէ զիւր կամացն ճոխութիւն, ասէ[ժե]. Ո՛չ ոք առնու զհոգի[ժզ] իմ յինէն. իշխանութիւն ունիմ դնել
226r. զհոգի[ժէ] իմ, և իշխա‖նութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա[2]. և դարձեալ՝ Քակեցէք ինձ[ժը] զտաճարդ և յերիս աւուրս կանգնեմ[ժթ] զդա[3]։ Եւ եթե իշխանութիւն ունիս, ընդէ՞ր ի կիր արկանիցես զայդպիսի բանսդ[ի]. եթե հնար ինչ իցէ[իա], ասես, անցցէ յինէն բաժակս[իբ]. վասն ձեր, ասէ, տկարացդ[իգ], և ո՛չ իմ, որ հզօրս և ամենազօրս եմ, և յամենայն տկարութենէ ի վեր, և բարձրացեալ[իդ]։

Ցես սղի**։

Բայց ընդէ՞ր իսկ զչարչարանսն բաժակ կոչէ[իե]. առնուլ[իզ] ընծայի ասէ ի[իէ] միւս և այլ խնդիր, եթե

* Յաջորդող մօտ երկու տող բաց է թողած։
** Եր. 172. անմիջական շարունակութիւն է նախընթացի։

ա) եթէ զի  բ) խնայեմ, և  գ) զանձն ինչ կամիմ ի չարչարանացն ապրեցուցանել  դ) կատարելոց է  ե) է  զ) այլ զի  է) զդէպս իրացդ  ը) բնութեանս  թ) առնել  ժ) ունել, եթէ  ժա) իվերուստ ի վերայ  ժբ) ամէնիմաց  ժգ) զամենայն  ժդ) տէրն յառաջագոյն եղեալ  ժե) յայտ արար զիւրոց կամացն զճոխութիւնն  ժզ) ասէ, զոգի  ժէ) ես դնել զոգի  ժը) եթէ քակեցէք  ժթ) և ես յերիր աւուր յարուցից  ի) ընդէ՞ր արկանես զայդպիսի բան  իա) է  իբ) բաժակս  իգ) ասեմ տկարաց  իդ) բարձր  իե) անուանեաց զչարչարանսն բաժակ  իզ) Առնու  իէ) չ.

1) Մկ. ԺԴ, 38. հմմտ. Մատթ. ԻԶ, 41.  2) Յովհ. Ժ, 18.  3) Յովհ. Բ, 19.



զչարչարանսն|բաժակ ընդէ՞ր կոչէ[ա]. այս է, և[բ] սովորութիւն է միշտ Գրոց, զխրատ, որ յԱստուծոյ գայցէ ի վերայ յանցաւորաց՝ բաժակ կոչել։ Լե՛ր[գ] իմաստուն լսող, մի՛ յառաջագոյն յափշտակել զբանն[դ], այլ անսալ ճ̃ալ[ե] մտացն. քանզի* և առաքեալքն զրպարտեցան յոմանց[զ], որպէս թե անպիտան ինչ խօսեցան. լո՛ւր[է] Պաւղոսի, որ[ը] կրեաց զզրպարտութիւն ի քարոզութեանն[թ]. Միթէ որպէս հայհոյիմքն, ասէ, և որպէս համբաւեննն[ժ] զմէնջ ոմանք ասել՝[ժա] արասցո՛ւք չարիս[ժբ], զի եկեսցէ բարին[ժգ], որոց դատաստանն յիրաւի է[1]. զի զոր ո՛չ լուանն[ժդ] իբրև զլուեալ ‖ բամբասեցին[ժե]. 226v. զի զոր ո՛չ լուանն ի վարդապետաց՝[ժզ] յառաջ բերեն։ Այլ որ առաջիկայս է՝ յայս[ժէ] եկեսցուք։ Առանձին բարք են միշտ Գրոց՝ զխրատս և զպատիժս, որ ի վերայ մեղաւորաց գայցեն, բաժակ անուանել. այլ մի՛ վաղվաղակի խծբծիցէ[ժը] զբանս թշնամիք և լրտեսք և ասիցէ[ժթ]. միթէ և Քրիստոս մեղաւ, զի զպատիժն մեղաւորացն կրեաց[ի]. քա՛ւ լիցի զայն ասել. նա չպարտէր[իա] ինչ պատիժս, այլ[իբ] մեք ընդ պատժաւք[իգ] էաք, և վասն պատժապարտացս[իդ] յանձին կալաւ զմահ։

Ցես սղի**։

|Նմին իրի իսկ երանելին Դաւիթ[իե] զվրէժսն, որ ի վերայ մեղաւորացն[իզ] գայցեն, դրոշմեալ՝ ասէ. Բաժակ ի ձեռին Տեառն, անապակ գինով լի խառնեալ. արբցեն մեղաւորք[իէ] երկրի[2]։ Եւ դարձեալ յորժամ Աստուած իսկ սպառնայր պատիժս[իը], ասէր ցԵրեմիայ. Ա՛ռ բաժակ, խառնեա և տո՛ւր[իթ] ամենայն ազգաց և Երուսաղեմի. ա-

* Այստեղ ևս 4 տող բաց է թողած։
** Եր. 173.

ա) կոչեաց  բ) Այս, ասէ  գ) Միթէ զիր հաստատութեամբ և լեր  դ) զբանս  ե) և մնալ  զ) չ  է) և լո՛ւր  ը) ո՛րքան  թ) զրպարտութիւն ի քարոզութիւնն  ժ) համբաւեն  ժա) ասել եթէ  ժբ) զչարիս  ժգ) եկեսցեն բարիք  ժդ) որ ոչ լուան  ժե) բամբասեն  ժզ) լուան ի վարդապետաց զրպարտութիւն վարդապետացն  ժէ) որ ինչ առաջիս կայ յայն  ժը) խծբծեսցէ  ժթ) ասասցէ  ի) զպատիժս մեղաւորաց կրիցէ  իա) ոչ պարտ էր  իբ) ո՛ն անդր. փորձաւոր. այլ  իգ) պատժով  իդ) վասն մեր պատապարտելոցս ընդ մեզօք և պատժապարտացս ընդ ասնՔանօք  իե) և երանելւոյն Դաւթայ  իզ) մեղաւորաց  իէ) ամենայն մեղաւորք  իը) պատիժս հեթանոսաց  իթ) խառնեալ և տո՛ւր ըմպել

1) Հռոմ. Գ, 8.  2) Սաղմ. ՀԴ, Ը.

տասցես ցնոսա. Արբէք և արբեցարուք և Թմբրեցարուք[1]. Զի՞նչ իցէ Թմբրեցարուքն. ի Թմբրութիւն ածէ զբազումս Աստուծոյ խրատն[ա] և բազում անգամ և ի հիացութիւն
227r. իսկ, ման ‖ աւանդ յորժամ տեսանիցեն զարդարսն[բ] ընդ մեղաւորս ըմբռնեալ, որպէս և այժմ իսկ եպերեն յամենայն երկրի, Թէ ընդէ՞ր քահանայք կոտորեցան[գ] ի սեղանս. վասն է՞ր սուրբ կուսանքն ի Սկանս մատնեցան. յե՞ր սակս այնչափ և այսպիսի[դ] չարիք գործեցան. ընդէ՞ր ոչ պաշտպանեաց Աստուած իւրոցն։ Եւ քանզի այսպիսի[ե] վիշտք ի Թմբրութիւն ածեն և ի մտաց հիացութիւն, և[զ] յիրաւի ասէ, Թե արբէք և յիմարեցարուք և Թմբրեցարուք[զ] և գեխեցարուք։ Դարձեալ և Կենարարն, յորժամ յառ|աջագոյն ճառեաց զչարչարանաց[է] իւրոց առ Ցակոբոս և Ցովհաննէս[ը]. Կարէ՞ք, ասէր[թ], ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ[2], փոխանակ ասելոյ Թե՝[զ] կարէ՞ք զչարչարանսն[ժ] կրել, զոր ես կրելոց եմ, և նոքա ասեն. Այո։ Բայց երանելին Դաւիթ ի միւսում վայրի յայտնի իսկ եցոյց, եԹե մահ, որ վասն աստուածպաշտուԹեան ի վերայ գայցէ՝[ժա] բաժակ կոչէ[ժբ]. Զի՞նչ, ասէ[զ], տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի, զոր ետ ինձ[3]. իբրև կարի[ժգ] շնորհակալ ծառայ, ետես բղխեալ շուրջանակի զերախտիսն Աստուծոյ, խնդրէ և ինքնն[ժդ]
227v. ‖ սակաւ ինչ տրիտուր տալ՝ մտադիւրութիւն[ժե] ընդ անբաւ երախտեացն. որպէս աղքատ, յորժամ զմեծատունն[ժզ] ի վանս տանիցի, ի վարանս մտանէ, Թե զի՞նչ կազմած կարիցէ[ժէ] յուրախութիւն մեծատանն առնել։

Ցես սղի *։

Իսկ[զ] իբրև յամենայնէ չքաւորեցաւ, մի ինչ միայն եգիտ, և[ժը] ոչ եԹե ըստ Աստուծոյ բարերարուԹեանն, այլ ըստ նորա յաւժարութեանն արժանի է. Բաժակ փըր-

* Եր. 174.

ա) այն խրատ բ) զարդարս գ) կոտորեցան քահանայքն դ) այնքան ե) այնպիսի զ) չ. է) զչարչարանացն ը) Յակոբայ և Յոհաննու թ) ասէ ժ) զչարչարանս ժա) գայցէ ի վերայ ժբ) կոչի ժգ) Եւ իբրև զկարի ժդ) ինքն ժե) մտադիւրութեամբ ժզ) որպէս և աղքատ առ զմեծատուն ժէ) կարասցէ ժը) և այն

[1]) Երեմ. ԻԵ, 15 և 37. [2]) Մատթ. Ի, 22. Մկ. Ժ, 38. [3]) Սաղմ. ՃԺԵ, 12.



կուԹեան ընկալա[1], ասէ[ա]. եԹե կարացից[բ]. վասն աստուածպաշտուԹեանն չարչարանս ընդունել[գ], եԹէ ձեռնհաս եղէց վասն Աստուծոյ մեռանել. Բաժակ փրկուԹեան ընկալայ[դ], և զանուն Տեառն կարդացից[2]։ Եւ զի՞նչ էր[ե] բանն յայտնի, այլ զօղեալ և զեղչեալ՝ յաջորդօքն մեկնէ. բաժ(ակ) փրկուԹեան ընկ(ալ)այց և զանուն Տեառն կարդացից. ածէ զնովիմբ և ասէ[զ]. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց[2]։

Ցես սղի *։

Եւ այլուր բազում հարուածովք վէրս ի վերայ եդեալ՝ արկին[է] ի բանտ և պնդեցին զոտսն ի կոճեղս[ը]. այլ առաքինի նահատակն աստուածպաշտուԹեանն և որ ընդ նմայն էր՝ ‖ Սիղաս[թ], յաղԹեին սգաստուԹեամբ[ժ] 228r.
վշտացն, պարտեին առաքինուԹեամբ զչարչարանսն։ Եւ զայս բարւոք[ժա] ինձ նշանակեալ, որ զպատմութիւնն գրեաց՝ ի հասարակ գիշերի, ասէ[ժբ], Պօղոս և Շիղա[ժգ] աւրհնէին զԱստուած[3], ոչ Թե** աղաւԹս մատուցանեին Աստուծոյ, այլ Թէ՝ աւրհնէին. զի աղօԹք Թերևս առ նեղուԹեան[ժդ] սրտին լինիցի, իսկ աւրհնուԹիւնն առ խնդուԹեանն մտացն[ժե]։ ԱւրհնուԹիւն ոգոց բերկրեցելոց նշանակ եին.[ժզ]. սուրբքն, որ[ժէ] կամեին զոգոց ցնծուԹիւնս յայտ առնելով[ժը] ոչ աղօԹս մատուցան|եին, իբրև զնեղեալս, այլ աւրհնեին իբր զընդարձակեալս[ժթ]։ Պաւղոս և Սիւղուիանոս[ի], որ բնուԹեամբ մարդիկ եին, առաքինի ոգիս ի չարչարանսն ցուցանեին, և Քրիստոս, որ Թագաւորն էր սրբոցն, անկարծուԹեան[իա] բանս պատշաճեա. որ վասն տեսչուԹեան են ասացեալ՝ ի քակտումն պատուոյ նորա առնել։ Ա՛ն

* Եր. 170.

** Այստեղ 4 տող բաց է Թողած.

ա) ընկալայց։ Զի՞նչ յայտ բաժակն իցէ։ բ) կարացից, ասէ գ) կրել դ) ընկալայց ե) Եւ քանզի չէր զ) զնովիմբ, եԹէ է) բազում հարուածս ի վերայ եդեալ՝ արկին զնա ը) ի կոճեղ թ) ընդ նմա էր Շիղաս ժ) զգաստուԹեամբ ժա) բարւոք ժբ) ասէ ի հասարակ գիշերի ժգ) Շիղաս ժդ) առ նեղուԹիւն ժե) լինին, և օրհնուԹիւն առ խնդուԹիւն սրտից (դարձեալ 2 |, տող բաց է Թողած)։ ժզ) ոգւոց բերկրելոց նշանակ է. ժէ) որք ժը) զոգւոյն ցնծուԹիւն յայտ առնել ժթ) ընդարձակեալք ի) Շիղաս իա) Թագաւոր է սրբոց, անկածուԹեան

[1]) Սաղմ. ՃԺԵ, 13. [2]) ՃԺԵ, 15. [3]) Գործք ԺԶ, 25.

անդր, ի բաց[ա] յայնպիսի մտաց. մի՛ ոք Թշնամանեսցէ
զորբութիւնն[բ]. մի ոք զրպարտեսցէ զաստուածային բան-
սըն[գ]. մի՛ ոք ամբարշտութիւն ջանայցէ[դ] ի բանից կենա-
րարին կազմել, և անկարծութիւն տնտեսութիւնն[ե] հա-
228v. մարել: || Այլ պահանջէ ի մէնջ լսողն զկարգն. բարւոք
ասէ, ուսուցանէր, և[զ] տնտեսութեան իսկ բանք էին.
այլ և զաւրութեան[է] տնտեսութեանն մեկնեալ. ընդէ՞ր
բնաւ ի կիր արկանես[ը] զայնպիսի բանս. վասն Է՞ր ասաց.
Եթէ հնար ինչ իցէ անցանել բաժակիս[թ], Եթէ հնար ինչ
իցէ, եղբա՛րք, ո՛չ զհրամանաց ինչ հարկ մուծանէ, և ո՛չ
առասպել[ժ] անուն ծննդեանն[ժա], և ո՛չ վատասրտութեան
բանք[ժբ] են, և ո՛չ զանգիտել ինչ ասողին բամբասի այ-
նու, այլ մարդկեղէն տնտեսութեանն կեր|պարանք, և խնա-
յելոյ յայնոսիկ, որ գայթագղելոց[ժգ] էին. քանզի գիտէր,
եթե չարչարանքն զբազումս կարող է գայթագղեցուցա-
նել[ժդ], մանաւանդ զայնոսիկ, որ խորհրդոյ տնտեսու-
թեանն[ժե] չէին ական, ըստ այնմ եթե՝ Քարոզեսցուք
զխաչելեալն Քրիստոս[ժզ], Հրէից գայթակղութիւն և Հե-
թանոսաց յիմարութիւն[1]: Արդ առեալ զզէմս մարդկան,
որ զամենայն ինչ իմաստութեամբ մատակարարէ:

Ցես սղի*:

Բայց թէ ընդէ՞ր բաժակն չարչարանք կոչին[ժէ],
229r. քանզի չէ ինչ նման || բաժակ մահու. զի խրատքն, որ ի
վերայ պայցեն, խիստ իմն և անհնարին և դժուարին
թուին[ժը]: Նմանագոյն[ժթ] Աստուածեղէն Գիրք զվիշտս[ի] բա-
ժակ անուանեն, զի յայտ լիցի, եթե Աստուած ո՛չ իբրև զխիստ
դատաւոր տանջէ և ո՛չ յանխնա կոտորէ, այլ իբրև զբժիշկ
զցաւսն բժշկէն[իա], և իբրև զանդեղայս[իբ] սաստիկ մաղձոյ
տա ի ներքս զխրատ[իգ]: Եւ արդ, փրկութեան բաժակն[իդ]
խրատուցն առ ճաշակել դառն է և առ բժշկելն օգտակար[իե].

* Եր. 175.

ա) ի բաց լեր բ) զորբութիւնս գ) զաստուածեղէն բանս
դ) ջանասցէ ե) անկածութիւն զտնտեսութիւնն զ) ուսուցեր. արդարև
է) զզօրութիւն իսկ ը) բնաւ իսկ արկ ի կիր թ) անցցէ յինէն բա-
ժակս այս ժ) զառասպել ժա) զծննդեան ժբ) ինչ բանք
ժգ) գայթակղեցելոցն ժդ) կարեն գայթակղեցուցանել, և ժե) խոր-
հրրդոց տնտեսութեան ժզ) մեք քարոզեսցուք զՔրիստոս ի խաչ
ելեալ ժէ) ընդէ՞ր իսկ բաժակ չարչարանքն կոչեցան ժը) լինին
ժթ) Նմանագոյնս ի) զվիշտան իա) զցաւս բժշկէ. իբ) զան-
դեղեայ իգ) զխրատսն իդ) բաժակ իե) բժշկել օգտակար է
1) Ա. Կորնթ. Ա, 23.



յանդիման կացուցան|էր Բանն զբարերարն Աստուած՝
բաժակաւն խրատիչ և բարերար իբրև զհայր, և տանջիչ
և պատժիչ իբրև զթագաւոր. ո՛չ իբրև զԹշնամի հարկանէ,
այլ իբրև զբժիշկ կսկծեցուցանէ: Զոր օրինակ, յորժամ
բժիշկ[ա] զերկաթսն ի գործ արկանէ և խարանս ի մար-
մինս դնիցէ[բ], ո՛չ այնու ընդ մարդոյն կռուի, այլ ընդ
ցաւսն մարտնչի. Նոյնպէս և Աստուած, յորժամ ածէ
զխրատն՝[գ] ո՛չ զիւր սահղծուածն պատժէ, այլ զմեղսն
սրբէ:

Ցես սղի:

Եթե չէ խառն ընդ արդարութեանն և ի ձեռն բա-
զում իրաց հաւան || եցուցեալ զանձինս յաղագս մեծամե- 229v.
ծացն և աստուածազան գործոցն՝ փառաւորացն ի վերայ
երկրի Փրկչին, ի ձեռն որոյ ծանօթ եղև գոլ ճշմարիտ
Աստուած, յորոց իրաց հիացեալք հաւատացին ի նա:
Բայց այսպէս ընտանեբար մտերմութեամբ հաւատացին
ի նա, մինչ զի յաղագս անուան նորա և ի նոյն խոստո-
վանութեան ի մահ զանձինս մատնել ճշմարտութեամբ
թշնամեաց. զի նա իսկ և ի նոցունց իսկ հաւատոց ի նա
բազում քարոզք աւետարանիչք ամենայն աշխարհի եղեն՝
յաղագս Քրիստոսի աստուածութեանն և ի նմա մարդա-
սէր փրկութիւնն: Իսկ ի խաչին մահն Քրիստոսի խոր-
հուրդ էր աստուածեղէն՝ յԱստուած ծածկեալ յաւիտեանցն
և ի դարուցն, զոր ի վերջնում դարի, մանաւանդ և
յըստ մեզ՝ յայտնեալ լինի այնոցիկ, որ մտերիմ ընտա-
նութեամբ յԱստուածն ուսանին:

*Երանելոյն Յուլիայ, եպիսկոպոսին Հռոմայ, ի թղթոյն, որ առ Պրոսդոկիոն*:*

Իսկ մեզ վայել է պահել զաստուածային աւանդու-
թիւնն, և մի՛ զմարդկային հակաբանութիւն. քանզի ո՛չ
ի հակաբան || ութիւն[դ] հաւատացաք, այլ յաստուածայ-
նոց բանիցն առ մեզ բերեցելոցն վկայութիւն[ե] առաքե- 230r.
լոցն, որք տեսեալ զգերաբնական փառս[զ] Տեառն մերոյ

* Տիմոթէոս, եր. 265.

ա) բժիշկն բ) ի մարմինն դնէ գ) զխրատն ածէ դ) ի
հակաբանութեանցն ե) վկայութեամբ երանելեաց զ) զփառս

և զերկնային զվկայութիւնն[ա] լուեալ՝ արտաքս քարոզեցին[բ] աշխարհի զԱստուած[գ] մարմնացեալ, զԲանն մարմին եղեալ՝ հոգի կենագործ զՏէր[դ] մեր Յիսուս Քրիստոս, անհայր ըստ յերկրէ ծնելութեանն[ե]. վասն զի Աստուած յերկնուստ իջեալ էր, ոչ մարդ ի մարդկանէ սերման[զ] բուսեալ. որդի[է] մարդոյ կոչեցեալ, իսկ Աստուծոյ իշխանութիւն ցուցանելով, երկնայնոցն[ը] հարստ|ելով, աթոռ երկնային ունելով, ի հրեշտակաց երկրպագելով[թ]. Նախ Սրբոյ Հոգոյն փառաւորելոյ[ժ] որոց մոռացեալ զվաղն[ժա] հասուցեալ մեծ վտանգ՝ Երանեալ[ժբ], ասէ, որ ոչ գայթագղեսցի յիս[1]. և գայթագղեսցի[ժգ], որ վասն մարմնոյ և սորա կրիցն փոխեաց[ժդ] զՓրկիչն, և զմարդն ի Թերէ Աստուծոյ ախորժէ։ Քանզի մարդ[ժե] ասելով զծնիցեալն, մարդ զխաչեալն՝[ժզ] մարդ ի Թերէ Աստուծոյ փոփոխեցաւ, ոչ կարացեալ գտանել ի յերկնուստ առ ի յԱստուծոյ փրկութիւն։ Քանզի ցածուցանէ[ժէ] որ ‖ 280v. կրեացն, կեցուցանէ որ ի կնոջէ ծնաւն՝[ժը] ի ձեռն ծննդեանն արագ զկնի[ժթ], զի կենդանութիւն պտ(ղ)աբերեաց աշխարհի. իսկ ի ձեռն առն, զի այս յայտ եղև՝ զայրն ի ծառայութիւն[ի] իւրոյն եած կենդանութեան, և մահուամբ զմահն քակեալ և փոխաբերեալ առ ի յարութեանն[իա] կենդանութիւն։ Ապա ուրեմն, եթե Աստուծոյ ապրեցուցանելն,[իբ] և նորոգելն զաշխարհս[իգ] ոչ միւսոյ ուրումն է[իդ]. իսկ ապրեցուցանէ ծնեալն և խաչեալն[իե]. ոչ մարդ էր, զոր ծնաւն Մարիամ, և ոչ մարդ, զոր խաչեցին Հրեայքն, այլ զԱստուած[իզ], ծնից|եալն ի կնոջէ՝ Աստուած խաչեալ[իէ] ի Հրեիցն։

Նորին՝ յաղագս աստուածային մարմնաւորութեանն*,

Զի փրկութիւնն[իը] մեզ առթէ աւետարանն, եղբարք,

* Տիմոթէոս, եր. 266.

ա) վկայութիւնն բ) պատմեցին գ) զԱստուածն դ) կենագործակ զՏէրն ե) ծնելութեան զ) ի մարդկայնւոց սերմանց է) և Որդի ը) անուամբ իւրով զաշխարհ կեցուցանելով, երկնայնւոցն թ) երկրպագեալ ժ) փառաւորեալ ժա) մոռանալ զվաղն ժբ) երանեալ է ժգ) գայթագղի ժդ) փոխէ ժե) մարդն ժզ) զխաչեցեալն ժէ) կեցուցանէ ժը) ի կնոջէն ծնաւ ժթ) զկինն ի) ի ձեռն, զի այր յարս եղև՝ զայրն ի հաւատարութիւն իա) առ յարութեան իբ) Ապ՛ ուրեմն եթ՛ ապրեցուցանելն Աստուծոյ իգ) զաշխարհ իդ) չ. իե) ծնիցեալն և խաչեցեալն իզ) խաչեցինն Հրեայք, այլ Աստուած իէ) խաչեցեալն իը) Զփրկութիւն

1) Համա. Մատթ. ԺԱ, 6.



յորմէ ուսանիմք զԱստուած[ա] եկեալ յաշխարհ, և զմարդկային իսկ փոխարկեալս[բ] ի փառս աստուածականս՝ յերկնային բարձրութիւնն[գ], յերկնային թագաւորութիւնն[դ], յերանութեան կենդանութիւնն և յարարած կազմելով[ե] Նոր։ Քանզի որք ի Քրիստոս[զ] Նոր արարած, և ամենեքեան հաւատացեալք ի Քրիստոս նմանին Քրիստոսի, և տեսանելով ‖ 281r. զնորա փառսն՝ ձևակցեմք[է] նմա. Քանզի փոխաձևացուցէ, ասէ, զմարմին խոնարհութեան[ը] մերոյ կերպակից մարմնոյ փառաց իւրոց՝ ըստ ներգործութեան, որ ի կարել զնա և հնազանդեցուցանել նմա զամենայնն[թ] [1]։ Մի ոք այսուհետև ի մարմնական ձևումն[ժ] և ի մարմնականի ախտակրութեան գայթագղեսցի և մարդ[ժա] սակս այսոցիկ զՔրիստոս կարծիցէ[ժբ], զի մեզ փրկութիւնն[ժգ] կորուսցէ. քանզի մարդ ոչ ապրեցուցէ[ժդ] զաշխարհ, մարդոյ ախտակրութիւն ոչ սր|բէ զ՛ ի նայն մկրտեալսն[ժե]. Ամենեքեան իսկ ի Քրիստոս մկրտիմք՝ ի մահն[2], հաւատովք[ժզ], եթե Քրիստոսի մահն կենդանութեան հաւակ է, զմեր մահն փոխարկելով առ յարութիւն. Քանզի խափանէ զմահ Քրիստոս, իսկ լուսաւորէ զկենդանութիւն և զանապականութիւն, որպէս և գրեալ է[3]. և ոչ ոք ի մարդկանէ խափանել կարէ զմահ և ոչ լուսաւորել զկենդանութիւն[ժէ], որպէս և Դաւիթ ասէ. Ո՞վ է մարդ, որ կեցցէ, և ոչ տեսցէ զմահ, կամ[ժը] փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց[4]։ Իսկ որ զինքն փրկել չկարէ՝[ժթ] ո՞րբ զայլսն ապրեցուցանէ[ի]. ‖ 281v. և որ զմի ոք զաւրել առ ի յապրեցուցանել ոչ կարէ[իա], ո՞րբ զաշխարհս[իբ] կարէ ապրեցուցանել։ Եւ վասն զի բնական են[իգ] ի մարդ մեղք, հետևանայ և մահ. Թագաւորեաց[իդ], ասէ, մահ յԱդամա մինչև ցՄովսէս և առ ոչ մեղուցեալսն՝ նըմանութեամբ զանցաւորութեամբն[իե] Ադամա[5]. քանզի

ա) զԱստուածն բ) իբր փոխարկեալ գ) բարձրութիւն դ) թագաւորութիւն ե) կենդանութիւն և արարած կազմեալով զ) որ ոք ի Քրիստոսի է) ձևակցեմք ը) խոնարհութեանս թ) զամենայն ժ) ի մարմնականի ձևում ժա) մի մարդ ժբ) կարծեսցէ ժգ) զի մի զփրկութիւնս ժդ) ոչ ապրեցուցանէ ժե) զ՛ ի նոյնն մկրտեալս ժզ) ի Քրիստոսի մահն մկրտիմք, հաւատալով ժէ) կենդանութիւն ժը) և ժթ) ոչ կարէ. ի) ապրեցուցէ իա) ապրեցուցանել ոչ զաւրէ իբ) զաշխարհ իգ) բնական իդ) թագաւորեաց իսկ իե) զանցաւորութեանն

1) Փիլիպ. Գ, 21. 2) Հռոմ. Զ, 3. 3) Բ. Տիմ. Ա, 10. 4) Սաղմ. ՁԸ, 49. 5) Հռոմ. Դ, 14.

յորմէ աւրէ[ա] մեղաւ Ադամ, և մեղուցեալն ծնաւ[բ] ըստ նմանութեան իւրում, յայնմանէ մու սահման Աստուծոյ զամենեցուն՝ ասելով. Երկիր երկիր[գ], և յերկիր տարագնասցես[1]։ Զմահ Մովսէս ոչ կարէ լուծանել[դ], այլ և|ի մահ ինքն[ե] գրաւեցաւ, և ամենեքեան, որ[զ] ընդ թագաւորաւ և ընդ օրինաւ՝ թագաւորեցան մահուամբ։ Իսկ Քրիստոս և Քրիստոսի շնորհքն[է] սկիզբն եւ կենդանութեանն[ը][2]. քանզի հոգի կենդանածնական տա[թ] Քրիստոսի հաւատն՝ զոր յետ յարութեանն փչեաց եւ[ժ] Հոգի Սուրբ։ Իսկ Հոգին[ժա] Սուրբ Աստուծոյ պարգև[ժբ] է, և ոչ մարդոյ։

Հաւատասցուք այսուհետև արժանապէս ի Քրիստոս, իբրև[ժգ] յՈրդի Աստուծոյ մարմնով երևեալ՝ Տէր մարգարէից, Տէր հրեշտակաց, վասն որոյ հնազանդին[ժդ] նմա
282r. երկնայինքն և երկրայինք և սորերկր||եայք[ժե]։ Քանզի ոչ եթե միայն[ժզ] հնազանդին երկնային պետութիւնքն[ժէ] և իշխանութիւնք և զօրութիւնք[ժը], այլ Աստուծոյ և ամենայն ծունր կրկնի՝[ժթ] երկնայնոցն և երկրայնոցս[ի] և սանդարամետականաց, և ամենայն լեզու խոստովան լիցի, թե[իա] Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր[3]։ Քանզի Քրիստոս Աստուած ելով, ի մարմնի երևելով[իբ], և խօսեցաւ իբրև զԱստուած[իգ] և գործեաց զամենայն իբրև[իդ] զԱստուած. Որդի ելով Աստուծոյ ճշմարիտ, ինքն աւրինադրեաց և ասաց. Ես ասեմ ձեզ[4], և հրաման տալով հողմոց և օդոց ան|մաքրից[իե], իսկ մարդիկ աւընդունելով[իզ] և Աստուծոյ զօրութիւն՝ ոչ օրինադրեցեն յինքեանց անձամբ[իէ], և ոչ հրամայեցեն։ Վասն այնորիկ[իը] Պաւղոս ասէ. Ասեմ ոչ ես[իթ][5]. ի Քրիստոսէ բերելով զհրամանն, ոչ յիւրմէ, և ոչ[լ] խորհրդակցէ յիւրմէն, ոչ

ա) ասէ բ) մեղուցեալ ծնաւ զմեզ գ) եիր դ) Մովսէս զմահն լուծանել ոչ կարէր ե) ինքն մահուամբ զ) որք է) շնորհն ը) կենդանութեանն թ) կենածական տայ ժ) փչեալ էր ժա) Հոգի ժբ) պատկեր ժգ) որպէս ժդ) հնազանդի ժե) ստորերկրիք ժզ) ոչ մարդոյ ժէ) պետութիւնք ժը) կաքութիւնք ժթ) ամեն ծունր խոնարհի ի) երկրայնոց իա) ամեն լեզու խոստովանեսցէ, եթե իբ) երևեցաւ իգ) իբր Աստուած, իդ) իբր իե) հողմոց և ծովու և հոգւոց և անմաքրոց իզ) Աստուած աւընդունելով իէ) յինքեանց իը) այսորիկ իթ) ոչ ես, այլ Տէրն լ) ուր

1) Ծնն. Գ, 19. 2) Հմմտ. Հռոմ. Է, 25. 3) Փիլիպ. Բ, 10—11. 4) Մատթ, Ե, 22. ևյն. 5) Հմմտ. Ա. Կորնթ. Է, 10.



իբրև[ա] զիւր ինչ խորհրդակցէ, այլ զոգին[բ] տուեալ նմա ի Քրիստոսէ, ասելով. Բայց թուիմ ես[գ] Հոգի Աստուծոյ ունելով[դ][1]. և դարձեալ՝ Եթէ զփորձ ինչ խնդրէք զիս խօսաւղին[ե] Քրիստոսի[2]։

Որ ոք ասէ*, եթե Քրիստոս մարդ էր, Աստուած ունելով յինքեան՝ ամբարշտէ[զ], մի ի ծառայիցն առնելով[է] և զճշմարտութիւն աստուածութեան նորա || փոխարկելով 282v.
իբրև զԱստուած գործեցելոց[ը], ոչ իբր Աստուած ելոյ ճշմարիտ[թ]. և զփրկականն մեր երկրպագութիւն անգոսնէ՝ երկրպագօղացս[ժ] զՔրիստոս. վասն զի Աստուած է, և վասն զի ոչ Աստուած բնակէր[ժա] ի նմա, և ոչ զԱստուծոյ[ժբ]։ Զի՞նչ արդեւք Տէր, կամ զի՞նչ ծառայ, կամ[ժգ] զի՞նչ փրկիչ, զի՞նչ ապրեցուցիչ, զի՞նչ ոգի կենդանարար[ժդ], որպէս է Քրիստոս ըստ առաքելոյ, և անձն կենդանի, որպէս[ժե] Ադամ. զի՞նչ հողական[ժզ] և յերկնուստն, գտեալն ձևով իբրև զմարդ՝ սակս մարմնոյն, որ ի Կուսէն[ժէ], իսկ զօրութեամբ ելով Աստուած, սակս Հոգոյն, որ ի վերուստ, որ է ի վերայ ամենեցուն|Աստուած[ժը][3]. որում փառք յաւիտեանս։

## Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսին Աղեքսանդրու, որ ի Տօնականէն՝ ի յերրորդ գլխոյն, որ առ Դէոկղետիանոս *։

Տեսանիցէք զկենդանութիւնս[ժթ] ձեր կախեալ առաջի աչաց ձերոց։ Ո՞վ արդեօք իցէ այն[ի], եթե ոչ ասօղն. Ես եմ կենդանութիւն[4]. ինքն էր[իա], որ ի Հրեիցն անհաւատացեալ, և ի դահճացն մերկացեալ[իբ] և ի զինաւորացն[իգ] բաժանեալ։

* Տես էջ 268. «Նորին» վերնագրով բաժանած առանձին հատուած է այս։

** Տես. յաջորդ հատուածների հետ Ձեռ. Հ. 540, թ. 124 v.

ա) իբր բ) այդ զհոգին գ) և ես դ) ունել ե) փորձ խնդրէք զիս խաւսողին զ) ամպարիշտ է է) առնելով զՏէրն ը) իբր Աստուածագործեցելոյ թ) ճշմարտի ժ) երկրպագուացս ժա) բնակէ ժբ) ոչ զզայ ժգ) չ. ժդ) կենարար ժե) որպէս է ժզ) հողականն ժէ) ի Կուսէ ժը) Հոգւոյն որ յերկնուստ, որ էր ի վերայ իւր ժթ) զկենդանութիւն ի) այս իա) է իբ) մերկացուցեալ իգ) ի զինուորացն

1) Ա. Կորնթ. Է, 40 2) Բ. Կորնթ. ԺԳ, 3. 3) Հռոմ. Թ, 5. 4) Հմմտ. Յովհ, ԺԱ, 25. ԺԴ, 6.

Նորին, ի յԵրրորդ Տաւնականէն։

233r. Քանզի կենդանութիւն ելով՝ մեռանի [ա], զի զմեզ‖ կենդանացուսցէ [բ]. բան ելով՝ ի մարմնի եղև, զի զմարմնականս բանիւ խրատեսցէ. զի այսուիկ ի տօն զմեզ կոչեսցէ [գ] ասելով. Եթէ ոք ծարաւի է, եկեսցէ առ իս և արբցէ [1]։

Նորին Գ. Դիոկղիտանէ։

Քանզի ոչ ևս ոչ ժողովուրդ Աստուծոյ [2], ոչ [դ] ազգ սուրբ, այլ իշխանք Սոդոմաեցոց [ե] և ժողովուրդք [զ] Գոմորացոց անուանին, յաղթելով այսոցիկ և Սոդոմայեցոցն [է] չարութեան, որպէս [ը] մարգարէն ասէ. Արդարացաւ Սոդոմ ի քէն [4]. քանզի Սոդոմայականքն ի հրեշտակսն յանցեան [թ],|իսկ այսոքիկ [ժ] զՏէրն և զԱստուածն [ժա] և զթագաւորն ամենեցուն [ժբ], և զամենեցուն հրեշտակաց Տէրն խողխողեալ [ժգ] ձեռնարկեցին, ոչ գիտելով, եթե կենդանութիւն ի նոցանէ խողխողեալն Քրիստոսէ [ժդ]. իսկ մեռանն որ [ժե] նենգեցին, Հրեայքն՝ Տեառնն [ժզ]։

Նորին ի ԺԱ. Տօնականէն։

Ընդէ՞ր պանձացան ազգք [ժէ] և ժողովուրդք խորհեցան ունայնս [ժը] [5]. քանզի ունայն [ժթ] խորհուրդ Հրէիցն՝ մատնօղացն զմահ [ի] զկենդանութենէն և խորհօղացն անբանս զԲանէն Հօր։

Նորին, որ յաղագս խաչին։

Քանզի և այս ոչ նոցա, այլ կախեցելոյ Փրկչին 233v. գործ. ‖ քանզի կախեցեալ իբրև զմարդ՝ զիշխանութիւնս հալածէր և զբանսարկուն ժամանէր։

ա) գոլով մեռաւ   բ) կենագործեսցէ   գ) կենագործեսցէ. աղբիւր գոլով ծարաւեցու զմիրն ծարաւ, զի այսուիկ և ի տաւնն զմեզ յառաջ կոչեսցէ   դ) և ոչ   ե) Սոդոմացւոց   զ) ժողովուրդ   է) յայսոսիկ և սոդովմականացն   ը) որպէս և   թ) սոդովմականք ի հրեշտակս յանդգնեցան   ժ) սոքա   ժա) զԱստուած   ժբ) ամենայնի   ժգ) հրեշտակացն Տէր սպանանել   ժդ) կենդանութիւն է սպանեալն ի նոցանէ Քրիստոս   ժե) մեռան, որք   ժզ) զՏէր   ժէ) պանծացան ազգք   ժը) ժողովուրդք պարապեցին ունայնս   ժթ) ունայն էր   ի) մահ

1) Յովհ. Է, 37.   2) Հմմտ. Ովսէ Ա, 9, 10 եւն.   3) Ես. Ա, 10.   4) Հմմտ. Եզ ԺԶ, 48, 51—52.   5) Սաղմ. Բ, 1.



Յետ այլոց։

Զենաւ՝ ոչ յայլ մասն, այլ ի կողմն, ուստի հոսեցաւ արիւն և ջուր. զի և վասն զի նախկինն ի ձեռն կողիցն ստեղծելոյ ի ներքս եմուտ խաբեութիւնն, այսպէս կողիւք երկրորդին Ադամա լուացումն և մաքրութիւն. առաջնումն եղիցի ի լուացումն արեամբն, իսկ մաքրութիւն ջրովն, և այս ոչ ըստ կամաց պատահէր բանսարկուին. քանզի զոր երկնչէրն եղանել մահ՝ մեռաւ Տէրն, և նա կողոպտ|եցաւ. կարծեցեալ ունել զՔրիստոս մահուն՝ յաւետ ինքն ցուցաւ մեռեալ, որ պարծեցեալ մարդ դալմանեալ, և արար ճանաչել, թէ Աստուած է։ Քանզի համանգամայն մեռաւ, արարածս անարեգակն եղև, իսկ վարագոյր տաճարին ցելաւ, երկիր սասանեցաւ, վէմք հերձան, զինուորքն հանդերձ դռնատեսօքն դժոխոց դաւղեսցին. յոր էր տեսանել ոչ մարդ, այլ ճշմարտապէս Աստուած ի մարմնի. սակս որոյ և տեսօղքն ասեին. Ճշմարիտ սա է Որդին Աստուծոյ [1]։ Քանզի բազում‖ շիրիմք 234r. բացան, և յարեան որ ի նոսա մեռեալքն։

Նորին, ի բանէն, որ զԱրիանոսաց *։

